Հ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ
IX–XI
Դ. ԱՐԵՐՈՒՄ

9(47.925)
Հ-42

Հ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ
IX–XI
ԴԱՐԵՐՈՒՄ



1275



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1959

Սույն աշխատությունը ընդգրկում է հայ ժողովրդի միջնադարյան պատմության կարևոր շրջաններից մեկը՝ իր բոլոր կողմերով։ Նրանում տրված է արաբական տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած պայքարը և Հայաստանի անկախության վերականգնման պատմությունը, զարգացող ֆեոդալիզմի ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական պայմանների ու դասակարգային հակասությունների վերլուծությունը։ Աշխատությունում առանձին գլուխ է նվիրված դարաշրջանի կուլտուրային։

Գիրքը նախատեսվում է ընթերցողների լայն շրջանների համար։

Ա327

АМАЯК АВЕТИСОВИЧ АРУТЮНЯН

АРМЕНИЯ В IX—XI ВЕКАХ

(На армянском языке)
Армянское государственное издательство
(Айпетрат), Ереван, 1959

Նվիրում եմ կնոջս՝

ԹԵՐԵԶԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ հիշատակին։

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Յոթերորդ դարի կեսերից Առաջավոր Ասիայի և Հայաստանի պատմության համար սկսվում է մի նոր շրջան, երբ իրենց տիրապետությունն են հաստատում արաբները: Արաբական մեծ անապատի ցեղերի տիրապետությունը չատ ծանր է լինում ինչպես Առաջավոր Ասիայի, նույնպես և հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական կյանքի համար: Արաբները հաստատելով իրենց արյունոտ տիրապետությունը Հայաստանում, ժողովրդին ենթարկում են անխնա հալածանքների, թալանի, բռնություններին, կոտորածների ու գերեվարության: Արաբների այս արյունոտ տիրապետությունը Հայաստանում տևում է մինչև 9-րդ դարի երկրորդ կեսը:

Արաբների ծանր հարվածներից հետո, 9-րդ դարի սկզբներից, Հայաստանը նորից սկսում է վերակենդանանալ: Այդ վերակենդանացման կենտրոնները հետզհետե դառնում են Այրարատը, Վասպուրականը և Սյունիքը:

Արաբներն իրենց տիրապետության երկու հարյուր տարվա ընթացքում վարում են այնպիսի հաղթականություն, որի հետևանքով ոչ միայն խայխայվում է երկրի տնտեսական կյանքը, այլև 8-րդ դարում ծանր հարված են ստանում հայ նախարարությունները: Նրանց մեծ մասը ոչնչանում է, հրապարակի վրա մնում են թվով իիչ նախարարական տներ: Նրանք, շնորհիվ 8—9-րդ դարերի, ժողովրդա-ազատագրական

ապստամբությունների, ոչ միայն կարողանում են պաշտպանել իրենց գոյությունը, այլև ուժեղանալով ձեռք են բերում իմքնավարություն: Այս իշխանական տներն էին, որոնք աստիճանաբար հզորանալով, 9-րդ դարի վերջին հատորդում, օգտագործելով ժողովրդական մասսաների ըմբոստություններն ու ապստամբություններ, վերականգնում էն երկրի անկախությունը: Այս իշխանություններից կարևոր և առաջնակարգ դիրք էր գրավում Բագրատունիների Այրարատ-Շիրակի թագավորությունը:

Բագրատունիների թագավորությունն իր հիմնման սկզբում մեծ ջանք էր գործադրում համախմբել երկրի մնացած իշխանությունները և ստեղծել ուժեղ կենտրոնացած պետություն: Սակայն ֆեոդալական ներքին երկպառակությունների, արյունահեղ կռիվների և արաբա-բյուզանդական պետությունների ջլատող հաղթականության հետևանքով չեն կարողանում հայ իշխանների հաղթական միությունը երկարատև դարձնել:

Հայաստանի հաղթական կյանքի վերականգնումը, որ տեղի է ունենում 9-րդ դարի վերջին հատորդում, կանգ է առնում 11-րդ դարի 40-ական թվականներին՝ Բյուզանդիայի վարած ագրեսիվ հաղթականության և սելջուկների արշավանքների պատճառով: Այնուհետև Հայաստանի հաղթական տնտեսական դրությունը գնալով ավելի է վատանում:

Հայ ժողովրդի 9—11-րդ դարերի պատմությունը, որի ուսումնասիրմանն է նվիրված սույն աշխատությունը, կազմում է ամփոփ, իմքնուրույն մի շրջան, որը մեծ դեր է խաղացել հայ ժողովրդի միջին դարերի պատմության մեջ: Հետևաբար միջին դարերի այս շրջանի պատմության ուսումնասիրությունը ավելի քան արժանի է ուշադրության:

Հայ ժողովրդի 9—11-րդ դարերի պատմությունն առաջին անգամ ուսումնասիրել և ընդարձակ կերպով շարադրել է Միքայել Չամչյանը, իսկ ավելի ուշ, նոր ժամանակներում գրված աշխատություններում մասնակի հարցերի ընդգրկումով անդրադարձել են և ուրիշները: Դրանցից միայն Լեոն է ավելի ընդարձակ շարադրել իր «Հայոց պատմություն» աշխատության երկրորդ հատորի առաջին գրքում: Սակայն թե Չամչյանի և թե Լեոյի աշխատությունները խիստ թերի են. նրանք միայն շոշափում են հաղթական և կրոնական անցքերը, աշխարհաքաղաքական կյանքը, դասակարգային հարաբերությունները և նույնիսկ կուլտուրայի որոշ ճյուղեր: Ուստի մեր սույն մենագրությունով ցանկանում ենք մասամբ լրացնել այդ բացը, որը մի փորձ է, ավելի ամփոփ կերպով տալու հայ ժողովրդի 9—11-րդ դարերի պատմությունն իր բոլոր կողմերով:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Ներքին պայմաններ

Հայաստանի ֆեոդալական և ռազմական ուժերը 9-րդ դարի առաջին կեսում աստիճանաբար վերակենդանանալով Բագրատունիների, Արծրունիների և Սյունյաց իշխանների գլխավորությամբ, ձգտում էին ինքնուրույնության։ Այդ ձգտումներն ավելի են ուժեղանում 840-ական թվականներին։

850—852 թվականներին Հայաստանում բռնկվում է ժողովրդա-ազատագրական ապստամբություն, արաբական ծանրը լուծը թոթափելու համար։ Այդ ապստամբությունը երկրի կենտրոնական մասերում պարտություն է կրում, և նորաստեղծ հայ ֆեոդալական տների և նրանց ռազմական ուժերի մի մասը ստանում է ծանր հարված։ Բայց և այնպես արաբական ռազմական ուժերը Հայաստանում նույնպես ստանում են լուրջ հարված, և խալիֆաթը ստիպված է լինում բռնել զիջումների ճանապարհը՝ տալով Հայաստանին ինքնավարության իրավունք։

850—852 թվականների ապստամբությունից հետո երկրի տնտեսական կյանքը սկսում է ավելի արագ զարգանալ։ Արհեստի, առևտրի և գյուղատնտեսության զարգացման շնորհիվ երկրում կուտակվում են ավելի շատ նյութական միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ավելացնել հայկական մշտական ռազմական ուժերի թիվը և վերականգնել պետությունը։

Սակայն հայ ֆեոդալների որոշ մասը օգտագործելով այդ հանգամանքները, ձգտում էր մի կողմից ընդարձակել իր կալվածները, իսկ մյուս կողմից իր գավառում կամ նահանգում ստեղծել տեղական անջատ-անջատ իշխանություններ։ Բայց ժողովուրդը, առանձնապես քաղաքային բնակչությունը, ձգտում էր բագրատունիների գլխավորությամբ երկրում ստեղծել մեկ միասնական պետություն՝ արտաքին թշնամիների դեմ ավելի հաջող պայքարելու և անկախությունը պահպանելու համար։

Կենտրոնաձիգ և կենտրոնախույս ուժերի պայքարն ավելի է բորբոքվում 9-րդ դարի երկրորդ կեսում, սակայն կենտրոնաձիգ ուժերը լայն օժանդակություն ստանալով ժողովրդական մասսաների կողմից, 870-ական թվականներին դուրս են գալիս հաղթանակով։ Երկրի ռազմական ուժերի ավելացումը ժողովրդական մասսաների հաշվին, ֆեոդալական տների աստիճանաբար համախմբվածությունը և տնտեսական կյանքի զարգացումը ճանապարհ են հարթում Հայկական պետության վերականգնման համար։

Օտարածին քաղաքական նպատակներ պայմանները

Արաբական խալիֆաթը Հարուն-ալ-Ռաշիդ խալիֆի ժամանակ (786—809) հասնելով իր հզորության բարձրագույն աստիճանին, նրա իշխանության վերջին տարիներից սկսած բռնում է իր թուլացման ու քայքայման ճանապարհը։ Խալիֆների արքունիքը գնալով ավելի է տարվում շվայտությամբ ու հեշտասիրությամբ։ Խալիֆների երբեմնի հզորությունը թուլանում է, և նրանք այլևս ահ ու սարսափ չէին ազդում հպատակ ժողովուրդների վրա։ 9-րդ դարը արաբական խալիֆաթի տիրապետության տակ ընկճված ժողովուրդների զարթոնքի դարաշրջանն էր, խալիֆաթը այդ զարթոնքի առաջ տեղի էր տալիս։ Արաբական պետության ղեկավարությունն ու պաշտպանությունն անցել էր վարձկան թուրքական ցեղերի զինվորների ու զորավարների ձեռքը, որոնք խալիֆների գահը խաղալիք էին դարձրել իրենց ձեռքին։

Վ. Ի. Լենինը մեջ է բերում Հոբսոնի մտքերը, որ «Տնտեսական պարազիտիզմը» և «կախյալ ժողովուրդներից զորք կազմելը»[1] հին կայսրությունների ուժի թուլացման պատճառն են դառնում։ Այս հանգամանքները վերաբերում են նաև խալիֆաթին։ Այսպիսով, մի կողմից տնտեսական պարազիտիզմը և վարձկան բանակի առկայությունը, մյուս կողմից ֆեոդալիզմի աստիճանական զարգացումն ու նրա վերջնական հաղթանակն Արաբիայում՝ 9-րդ դարում սաստկացնում են շահագործումը ոչ միայն հպատակ ժողովուրդների, այլև արաբների նկատմամբ, որի հետևանքով միջագետքում աշխատավոր ժողովուրդը և սեամորթ զենջիները ապստամբություն են բարձրացնում, որը ընդգրկել էր Բաղդադից մինչև Բասրա քաղաքը, իսկ հպատակ ժողովուրդներն էլ իրենց հերթին բարձրացնում են ազատագրական ապստամբություններ Ատրպատականում, Հայաստանում, Վրաստանում և այլ երկրներում, որոնք հիմքից ցնցում են խալիֆաթի տիրապետությունն ու դնում նրան քայքայման և վիջումների անելու ուղու վրա։ Բացի այդ, 9-րդ դարում խալիֆաթի ներսում սկսվում են գահակալական կռիվներ և միաժամանակ ֆեոդալիզմի զարգացման հետևանքով սուր բնույթ է ստանում կենտրոնախույս ուժերի պայքարը։ Հեռավոր երկրների ու մարզերի փոխարքաները, էմիրները ձգտում են ինքնուրույնության և չեն ենթարկվում կենտրոնին, խալիֆները ստիպված են լինում սրանց նկատմամբ նույնպես բռնել վիջումների ճանապարհը, թույլ տալով նրանց դառնալու ինքնուրույն։

Բյուզանդական կայսրությունն իր հերթին օգտվելով խալիֆաթի ծանր դրությունից, պատերազմ է սկսում նրա դեմ և մի շարք փայլուն հաղթանակներ է տանում Դամասկոսի մոտ։ Այդ հաղթանակները մեծ ծավալ են ստանում հատկապես Մակեդոնական դինաստիայի հաղթանակից հետո (867)։ Արաբական խալիֆաթը հպատակ ժողովուրդների ռազմական ուժերն օգտագործելու նպատակով բռնում է վիջումների ուղին։ Հայերն օգտագործելով այդ հանգամանքը, բագրատունիների գլխավորությամբ ձեռնամուխ են լինում իրենց կորցրած անկախությունը վերականգնելու գործին։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 372, Երևան, 1951։

Բագրատունիների ուժեղացումը

Բագրատունիները շատ վաղուց են հանդես եկել հայոց պատմության մեջ, դեռևս Արտաշիսյան դինաստիայի ժամանակ և ազդեցիկ դիրք են ձեռք բերում նախարարների մեջ Արշակունիների շրջանում, իսկ վերջինիս վերացումից հետո սկսում են առաջնակարգ դեր խաղալ երկրի քաղաքական կյանքում, հետզհետե ձեռք բերելով Հայաստանի իշխանի, սպարապետի, մարզպանի, կյուրապաղատի և ոստիկանի պաշտոններ։ 9-րդ դարում Բագրատունիների դերն ավելի է մեծանում Հայաստանում, որովհետև նրանց մրցակից տոհմը՝ Մամիկոնյանները հայ ավատականության (նախարարության) հետ վերանում են քաղաքական ասպարեզից, որպես հայ ռազմական ուժերի կազմակերպող և արաբների դեմ տեղի ունեցած ապստամբությունների գլխավորող տուն։ Այդ պատճառով էլ խալիֆաթի հարվածներն առաջին հերթին տեղում են այդ տոհմի վրա։ Մինչդեռ Բագրատունիները, սկսած Աշոտ կույրից, բոնում են խալիֆաթի հետ լեզու գտնելու և նրա հովանավորությունը օգտագործելու դիվանագիտական ուղին։

Արաբական զորավար Բուղայի ասպատակությունները Էրմինիայում տևում են չորս տարի (852—856)։ Նա խալիֆի հրամանով Սմբատ Բագրատունու մեծ որդի Աշոտին նշանակում է երկրի կառավարիչ և իր բանակով հեռանում Հայաստանից, առանց իր միսիան ի կատար ածելու, այսինքն, Էրմինիայի 850—852 թթ. ապստամբությունը լրիվ ճնշելու։ Ճիշտ է, նա մի շարք հայ իշխանների ձերբակալում ու որոշ հարված է հասցնում նրանց զորքերին և, ինչպես նշում է Թովմա Արծրունին, վերացնում երկրից մեծամեծներին. «Բարձումն յաշխարհէս մեծամեծացն Հայոց...»[1], բայց վերջ ի վերջո նա չի կարողանում ընկճել Հայաստանի ռազմական ոգին։ Սմբատ սպարապետի ձերբակալումից հետո, Բագրատունիների կալվածներում մնում են նրա երեք որդիներ՝ Աշոտը, Մուշեղը և Աբասը, վասպուրականում երկար պայքարից հետո իշխանությունը իր ձեռքն է վերցնում Գուրգեն-Ապու-Պելեը։ Իրենց կալվածներն ու իրավունքները կարողացել էին պահպանել նաև Սպերի, Տայքի, Սյունյաց և այլ իշխանները։ Ինչպես երևում է, թեև Բուղան ծանր հարված էր հասցրել երկրին, բայց և այնպես Հայաստանի երեք խոշոր իշխանական տները՝ Բագրատունի, Արծրունի, Սյունի, երկրում Բուղայի վերադարձից հետո պահպանում են իրենց դիրքերը։

Արաբական խալիֆաթը 856 թվականից ստիպված է լինում փոխել իր քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ և բռնել խաղաղության ու զիջումների ուղին։ Այդ նահանջը հետևանք էր հայերի ազատագրական կռիվների ու պատերազմների։ Խալիֆաթը այժմ ստիպված էր ոչ միայն իր զորքերը դուրս բերել Հայաստանից, այլև կարիք էր զգում հայերի համակրության ու նրանց ռազմական ուժերի օգնությանն, որպեսզի կրկին անգամ այդ երկիրը դարձնի Բյուզանդիայի դեմ պլացդարմ։

Բուղայի վերադարձից հետո, 856 թվականին ոստիկանի պաշտոնով Հայաստան է գալիս Մահմեդ Իբն-Խալիդ ալ-Շայբանին, որն իր հետ բերել էր երկրում խաղաղություն ստեղծելու, խախտված կարգը վերականգնելու, բերդերում, ամրոցներում ու երկրի անառիկ վայրերում ամրացած կովողներին ներում շնորհելու և ժողովրդին իր աշխատանքին վերադարձնելու խալիֆի հրամանները։

Բուղայի կողմից Սամարա[1] աքսորված ու բանտարկված հայ իշխանները, զինվորներն ու տանուտերները հետզհետե արդարանալով կամ կրոնափոխ լինելով, 857—859 թվականներին վերադառնում են իրենց տեղերը։ Իշխանների մեծ մասի վերադարձը տեղի է ունենում 858 թվականի ապրիլին։ Նույն թվականի ամռան ընթացքում վերադառնում են գրեթե բոլորը։ Չեն վերադառնում Հովնան Խութեցին, որին գլխատում են իբրև 850—852 թվականների ապստամբության առաջնորդի, Ստեփանոս Կոնը, Գրիգոր Արծրունին, որոնց գլխատում են կրոնափոխությունը մերժելու համար և Սմբատ սպարապետն ու նրա քույրը՝ Արծրունյաց տիկին Հռիփսիմեն, որոնք նույնպես մահմեդական կրոնը չընդունելով, մեռնում

[1] Թովմա Արծրունի, Պատմ. տանն Արծրունեաց, էջ 309, 1917։

[1] 836 թվականից խալիֆներն իրենց անապահով զգալով Բաղդադում, աթոռը տեղափոխում են Բաղդադից հարավ 80 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Սամարա քաղաքը։

են բանտում[1]: Հայ պատմիչներն աշխատում են Սմբատին արդարացնել պատմության դատաստանի առաջ, տալով նրան «խոստովանող» անուն, իբրև թե նա Սամարայում զղջացել էր իր կատարած սխալը, որ միացել էր Բուղայի հետ, սակայն այդ արդեն ուշացած զղջում էր, որովհետև նա փաստորեն իր գործելակերպով նպաստել էր Բուղայի գործի հաջողությանը: Հայ իշխաններից Սամարայի բանտում է մնում և այնտեղից փախուստի միջոցով ազատվում նաև Գրիգոր Մամիկոնյանը: Սամարայում երկար է մնում Աշոտ Արծրունին, Բուղայի ամենակատաղի թշնամիներից մեկը, որը Հայաստան է վերադառնում միայն 868 թվականին:

Արաբա-բյուզանդական պատերազմների հետագա ընթացքը ստիպում է խալիֆաթին է՛լ ավելի մեղմացնել իր քաղաքականությունը Հայաստանում: Խալիֆաթը նախարարներին և 850—852 թվականների ժողովրդա-ազատագրական ապստամբությանը մասնակցած ակտիվ գործիչներից շատերին աքսորից վերադարձնելուց հետո թեթևացնում է նաև հարկերը: Բյուզանդական կայսրության դեմ պատնեշ ստեղծելու համար Հայաստանին տալիս է ինքնավարություն, իսկ Հայաստանն էլ օգտվելով այդ քաղաքական նպաստավոր պայմաններից, ձգտում է վերականգնել իր անկախությունը:

Հայաստանին տրվելիք ինքնավարության իրավունքն արաբական խալիֆաթն սկսում է գործադրել Մութավաքիլ խալիֆի սպանությունից հետո: 862 թվի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ոստիկանի պաշտոնով Հայաստան է գալիս Ալի-Իբն-Յահյա ալ-Արմանին, ծագումով հայ, որն իր հետ բերում է Աշոտ Բագրատունուն իշխանաց իշխանի տիտղոս շնորհելու ու էրմենիայի կառավարիչ նշանակելու և այդ երկրների հարկերը հավաքելու մասին խալիֆի հրամանը: Իշխանաց իշխանի կոչումը ազգային տիտղոս չէր, որ խալիֆաթը շնորհում էր Բագրատունյաց բազմաճյուղ տոհմին, այլ մի նոր քաղաքական արտոնություն՝ իշխելու երկրի մյուս իշխանների և իշխանությունների վրա, իսկ էրմենիայի

1 Թովմա, էջ 337:

ընդհանուր կառավարիչ նշանակելը և հարկերի հավաքման իրավունքը արդեն ինքնավարության ձեռք բերում էր նշանակում:

Որ իշխանաց իշխանի իրավունքը մի սովորական տիտղոս չէր, այլ առանձին իշխանական մի նոր և ավելի լայն իրավունք, այդ երևում է Հովհաննես կաթողիկոսի հետևյալ ուշագրավ տեղեկությունից. «Ապա ոստիկան ոմն ի Հայս առաքեալ, որ Ալի արմանի անուանիւր՝ ըստ հրամանի ամիրապետին իշխան իշխանացս Հայոց զնա կացուցանէր, բազում զգեստիւք և արքունական պատուով ճոխացուցեալ՝ ի նա հաւատալով զսակս Հայոց և զամենայն բեկար արքունի: Եւ այսպես պատուականագոյն և առաջին նա գտեալ եղև քան զամենայն նախարարութիւնս Հայոց. և ամենեքեան դաշինս ընդ նման դնէին՝ որպէս արդարև ընդ թագաւորական զարմի»[1]:

(«Ապա Ալի Արմանի անունով մի ոստիկան է ուղարկվում Հայաստան. ամիրապետի հրամանով նրան կարգում է Հայաստանի իշխանաց իշխան, բազմաթիվ զգեստներով արքունական պատվով հարստացնելով, ու մեծարելով նրան վստահեց Հայաստանում կարգ ու կանոնի պահպանում և արքունական հարկերը և բեկյարը (հավաքելու): Այսպիսով, նա դարձավ հայոց բոլոր նախարարներից պատվավոր և առաջին: Բոլորը նրա հետ էին դաշինք կնքում որպես իսկական թագավորազարմի»):

Իսկ Թովմա Արծրունին ավելացնելով ասում է. «Բայց քանզի հաւատացեալ էր վերակացութիւն աշխարհիս Հայոց Աշոտի, որ իշխանաց իշխան՝ ձեռն ի գործ արկեալ նուաճել զիշխանս Հայոց, զՎրաց և զԱղուանից, որ եղև իսկ»[2]:

(«Բայց որովհետև վստահված էր Հայաստանի իշխանությունը Աշոտին, որ իշխանաց իշխանն էր, սա ձեռնարկեց ենթարկել Հայոց, Վրաց և Աղվանից իշխաններին, որը իրոք կատարվեց»):

1 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտացւոյ Պատմութիւն Հայոց, էջ 133, Թիֆլիս, 1914:

2 Թովմա, էջ 335:

Այսպես, Աշոտի կառավարման իրավունքը տարածվում է Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի վրա, այդ երկրների իշխանները նույնպես պետք է ենթարկվեին Բագրատունյաց իշխանին:

Սակայն, չնայած խալիֆաթի այդ ղիջումներին, այնուամենայնիվ, Մանազկերտի Կայսիկները դեռևս շարունակում էին իրենց հողերը ընդարձակել ի հաշիվ Բագրատունիների:

Ասողիկի ասելով Աշոտը նոր էր ստացել իշխանաց իշխանի իրավունքը, կարգավորել երկրի կառավարման գործը, իր եղբայր Աբասին էլ նշանակել զորքերի հրամանատար— սպարապետ, երբ Կայսիկ Սևադայի որդի Ջահապը նույն խալիֆաթի թելադրությամբ 863 թվականին 80.000-անոց բանակով հարձակվում է Արշարունիքի վրա: Սրա դեմ Աշոտի հրամանով դուրս է գալիս Աբաս սպարապետն իր 40.000 զորքով և Կաղզվանի մոտ, Արաքսի ձորում, տված ճակատամարտում ջարդում է թշնամուն, իսկ Ջահապը, նույն Ասողիկի ասելով, տալով մեծամեծ զոհեր, փախուստի դիմելով, հազիվ ազատվում է[1]: Այսպիսով, հայկական նորաստեղծ բանակը ցույց է տալիս իր հզորությունը: Պատերազմի դաշտը կոչվում է Քառասունք, որովհետև 40.000 հայ զինվորները քաջաբար ջարդում են իրենցից երկու անգամ ավելի թշնամուն:

856 թվականից սկսած արաբա-բյուզանդական պատերազմները գնալով ավելի սպառնալիք էին դառնում խալիֆաթի համար: 863 թվականին Հայաստանի ոստիկան Ալի Իբն-Յահյա ալ-Արմանին առանձին զորամասով դուրս է գալիս Հայաստանի վրա արշավող բյուզանդական զորամասերի դեմ: Նփրկերտի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ոստիկանի զորքը ջարդվում է և ինքն էլ սպանվում է պատերազմի դաշտում: Արաբական խալիֆաթի կրած պարտությունը գնալով դառնում է իրականություն: Բաղդադի — Սամարայի խալիֆների երբեմնի հզորությունը գնալով էլ ավելի է թուլանում: Իսկ թուրքական վարձկան զորքերը, որոնք մի ժամանակ նպաստում էին խալիֆների ուժեղացմանը, այժմ դարձել էին նրանց թուլացնողները, որովհետև նրանց զորավարները արքունիքում ձեռք էին բերել այնպիսի մեծ ազդեցություն, որ խալիֆների արքայական գահը դարձրել էին իրենց կամքին ենթակա:

Թուրքական զորավարների դավադրության հետևանքով 861 թվականին իր որդու ձեռքով սպանվում է արյունարբու Մութավաքիլ խալիֆը, որից հետո խալիֆների արքայական գահը ավելի քան տասը տարի դառնում է արյունահեղ դավերի առարկա և տասը տարվա ընթացքում իրար հաջորդում են հինգ խալիֆներ:

Հայաստանն օգտվելով արաբական խալիֆաթի ծանր և խառնակ վիճակից ու ձեռք բերած իր արտոնություններից, կարճ ժամանակվա ընթացքում բուժում է Բուղայի կողմից ստացած վերքերը և տնտեսապես ու քաղաքականապես ամրապնդվում է: Արաբական խալիֆաթի անհաջողությունները հատկապես լավ է օգտագործում Հայաստանի կառավարիչ Աշոտ Բագրատունին: Նա փաստորեն հաշվի չէր առնում խալիֆաթի ոստիկանին, որը ավելի շուտ լրտեսի ու ներքին խռովություններ առաջ բերելու ֆունկցիա էր կատարում: Եթե արաբա-բյուզանդական 7-ամյա կռիվները (856—863) 862 թվականին Բագրատունյաց իշխանությանը բերում են իշխանաց իշխանի տիտղոսը և երկրին՝ ինքնավարություն, ապա հետագա գահակալական արյունոտ կռիվներն Արաբիայում ուղիներ էին բաց անում դեպի երկրի վերջնական անկախությունն ու արաբական լծի թոթափումը: Բայց հայ ժողովրդի և Բագրատունյաց տոհմի ձգտումների իրականացման համար կային լուրջ դժվարություններ, որոնք արդյունք էին մի կողմից երկրի ֆեոդալական լարված ներքին մրցության ու պայքարի, իսկ մյուս կողմից, արտաքին երկու հզոր պետությունների՝ խալիֆաթի և Բյուզանդիայի վարած խորամանկ երկրականության քաղաքականության: Այս բոլոր խոչընդոտները հարթելու և անսայթաք առաջ շարժվելու համար պահանջվում էր մեծ աշխատանք ու հմուտ դիվանագիտություն, որին արդեն ձեռնամուխ էին եղել հայերը Աշոտ Բագրատունու գլխավորությամբ:

Բագրատունյաց տոհմի վերելքին առանձնապես խոչըն-

[1] Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, էջ 110, Պետերբուրգ, 1885:

դուռ էին հանդիսանում Արծրունիները, իսկ այս տոհմի ֆեոդալների միջև ներքին կռիվներ հրահրելու և նրանց Բագրատունիներին հակադրելու գործում մեծ դեր էին խաղում խալիֆաթը և Հայաստանում նրա ոստիկանները։ 858 թվականին գերությունից ազատվում և Հայաստան է վերադառնում Աշոտ Արծրունու որդի Գրիգորը, որին կոչում էին Դերենիկ։ Սա Հայաստան է գալիս խալիֆի հրամանով,[1] ըստ որի պիտի տեր դառնար Վասպուրականի իշխանությանը։ Գրիգոր-Դերենիկից մի տարի առաջ, այսինքն՝ 857 թվականին, Աբասյաների կալիֆայից Վասպուրական էր վերադարձել Աշոտ Արծրունու եղբայր Գուրգենը։ Իսկ ինքը՝ Աշոտ Արծրունին, ինչպես նշել ենք, Հայաստան է վերադառնում 868 թվականին։ Վերոհիշյալ իշխաններից յուրաքանչյուրը ձգտում էր ձեռք բերել Վասպուրականի իշխանությունը, բայց այդ երկրամասի կառավարումը արաբական զորավար Բուղան ստիպված հանձնել էր Գուրգեն Ապու-Պելճին, որը ձեռք էր բերել պայքարի գնով։ Ուստի Արծրունյաց ֆեոդալների միջև արյունալի կռիվները դառնում են անխուսափելի։ Վերոհիշյալ իշխաններից Աշոտ Արծրունու երկու եղբայրները՝ Գրիգորը (859) և Գուրգենը (860), մեռնում են իրենց վերադարձից մի տարի հետո, հետևաբար Վասպուրականում ֆեոդալական վեճերը մնում էին Գուրգեն Ապու-Պելճի և Գրիգոր-Դերենիկի միջև։ Վասպուրականի վեճերին ակտիվ միջամտում էր Հայաստանի կառավարիչ Աշոտ Բագրատունին։

Գուրգեն Ապու-Պելճը հաշվի առնելով, որ ներքին արյունահեղ կռիվների հետևանքով երկիրը կարող է տուժել, ուստի Վասպուրականի իշխանությունը զիջում է Գրիգոր-Դերենիկին, իսկ ինքը պատրաստվում է մեկնել Բյուզանդիա, բայց հանկարծ ձերբակալվում է Աշոտ Բագրատունու կողմից և հանձնվում Ատրպատականի արաբական կառավարչին՝ բանտարկելու համար։ Դրանից հետո Գուրգեն Ապու-Պելճի կյանքը դառնում է արկածային։ (Գուրգենի արկածային կյանքի մասին մանրամասն գրել է Շապուհ Բագրատունին[2], որից

[1] Թովմա, էջ 328։

[2] «Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ», էջ 6—36, Էջմիածին, 1921։

օգտվել է Թովմա Արծրունին, իսկ վերջինի հաղորդած տեղեկությունների հիման վրա վիպասան Ծերենցը գրել է իր վեպը՝ «Երկունք Թ դարու»։ Հետևաբար Խութեցի Հովհաննից հետո, «Երկունք»-ի երկրորդ հերոսն ահա այս Արծրունյաց իշխան Ապու-Պելճն է։ Ուստի վիպասան Ծերենցի վեպի երկու հերոսներն էլ պատմական անձնավորություններ են)։

Գուրգեն Ապու-Պելճին շուտով հաջողվում է փախչել Ատրպատականի կառավարչի բանտից և վերադառնալ Վասպուրական։ Գրիգոր-Դերենիկը զորքով դուրս է գալիս նրա դեմ, բռնում ու բանտարկում է Հադամակերտի բերդում, որտեղից նորից փախչում և ապաստան է գտնում մի վանքում, որի վանահայրը նրան մատնելով Գրիգոր-Դերենիկին, վերջինին դարձյալ հանձնում է Ատրպատականի կառավարչին բանտարկելու համար։ Աշոտ Բագրատունին և Զաքարիա կաթողիկոսը հաշվի առնելով Գուրգենի վայելած ժողովրդականությունը, ստիպված են լինում միջամտել Վասպուրականի գործերին և հաշտեցնել Արծրունի ժառանգներին։ Գուրգեն Ապու-Պելճը բաժին ստանալով Մարգաստան գավառը, հաշտվում է Գրիգոր-Դերենիկի հետ։ Բայց կասկածելով վերջինիս և Աշոտ Բագրատունուց, լքում է իր կալվածքները և բռնում թափառական կյանքի ուղին։ Նա իր թափառումների ժամանակ աշխատում է անցնել Բյուզանդիա, որին դեմ էր իշխանաց իշխանը, որովհետև նա, հաշվի առնելով որոշ քաղաքական հանգամանքներ, տակավին շարունակում էր հաշտ ու խաղաղ լինել արաբական խալիֆաթի հետ և հետու մնալ Բյուզանդիայից։ Մինչդեռ Գուրգենը ձգտում էր անցնել կայսրության սահմանները և ծառայության մտնել Միքայել կայսրի մոտ, որն այդ ժամանակ շրջապատված էր Մամիկոնյան տան գործիչներով, իսկ Գուրգեն Ապու-Պելճը այդ տոհմի իշխանների հետ մոտ էր, որովհետև նրա մայրը Բագրևանդ գավառի Քուրդիկ իշխանի քույրն էր։ Մամիկոնյան այս իշխանը վաղուց էր անցել Բյուզանդիա և Կ. Պոլսի արքունիքում ձեռք էր բերել մեծ հռչակ։ Մամիկոնյան Քուրդիկ իշխանի ուղուն էր հետևում նաև Գուրգեն Ապու-Պելճը, որի ձգտումներին դեմ էր Աշոտ Բագրատունին։ Վերջինիս համար շատ պարզ էր, որ հայկական ռազմական որոշ ուժեր բյուզանդացիների հետ

միասին կովելով արաբների դեմ, փաստորեն վարկաբեկ էին անում Հայաստանում հայ քաղաքական գործիչներին։ Ահա թե ինչու Աշոտը չէր ցանկանում, որ Գուրգենը գնար Բյուզանդիա և կռվեր արաբների դեմ։ Այդ էր պատճառը, որ Աշոտն ամեն կերպ աշխատում էր խանգարել հայ իշխանների անցումը դեպի Բյուզանդիա և դրանով էլ ձգտում էր վստահություն ցույց տալ խալիֆաթին։

Մենք արդեն նշել ենք, որ Բագրևանդ գավառի Քուրդիկ իշխանի որդի Գրիգորը չի ազատվում աքսորից։ Նա Սամարայի բանտից փախչում և վերադառնում է Հայաստան ավելի ուշ։ Բայց խալիֆը հրամայել էր Մահմեդ ոստիկանին՝ բռնել նրան։ Գրիգորին ձերբակալելու գործը հանձնարարվում է Աշոտ Բագրատունուն։ Հայ պատմիչների ասելով, Գրիգորը դեռ իր կալվածքը՝ Բագրևանդը չհասած մահանում է, իսկ Աշոտ Բագրատունին կարել է տալիս մեռած Գրիգորի գլուխը և ոստիկանի միջոցով ուղարկում խալիֆին, պատճառաբանելով, որ նրան բռնել է Բյուզանդիա փախչելու ճանապարհին[1]։ Սակայն հայ աղբյուրների մի մասը այդ փաստը չի հաստատում։ Բայց մի բան պարզ է, որ արաբներին սիրաշահելու համար Աշոտ Բագրատունին կարող էր դիմել նման քայլի, մանավանդ որ Մամիկոնյան տոհմն այնքան էր թուլացել, որ Աշոտը մինչև անգամ կարող էր նաև կենդանի Գրիգորի գլուխը կտրել և ուղարկել խալիֆին։

Հայ պատմիչներից Վարդանը հայտնում է, որ Աշոտ Բագրատունին դրա դիմաց ստանում է Բագրևանդ գավառը և 70.000 արծաթ, ապա ավելացնում է. «եւ յայսմ հետէ բարձաւ ի Հայոց աշխարհէն ազգն Մամիկոնէից»[2]։ Իսկապես, Քուրդիկի որդի Գրիգորի մահով էլ դադարում է Մամիկոնյան տոհմը Հայաստանում քաղաքական դեր խաղալուց, դրանով էլ վերջանում է հայ ավատականության խոշոր տոհմերից մեկը։ Բայց այդ տոհմի մնացորդներն ապաստան գտնելով Բյուզանդական պետության մեջ, 9-րդ դարում մեծ դեր են խաղում Բյուզանդական արքունիքում։

1 «Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն Տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 111։

2 Նույն տեղը։

Սակայն Աշոտը նման ձևով չէր կարող վերաբերվել Արծրունյաց և Սյունյաց իշխանների հետ։ Նա մի անգամ փորձ է անում զենքով հնազանդության մեջ պահել Գրիգոր-Դերենիկ իշխանին, մատնվում է ահնաջողության, որովհետև Գուրգեն Ապու-Պելճը, որ Վասպուրականից դուրս թափառական կյանք էր վարում, անմիջապես իր զորքով օգնության է հասնում Գրիգոր-Դերենիկին Տարոնի կողմից։ Աշոտ Բագրատունին ստիպված է լինում հաշտվել Արծրունյաց իշխանի հետ և իր 17-ամյա աղջկան՝ Սոփուն ամուսնացնել Գրիգոր-Դերենիկի հետ։ Իսկ մյուս աղջկանն էլ կնության է տալիս Վասակ Կովակերի եղբայր Վահանին, որն Արծրունյաց տոհմի ազդեցիկ իշխաններից էր։ Ահա այս ճանապարհով իշխանաց իշխանն իր պապի՝ Աշոտ Մսակերի նման Արծրունյաց ազդեցիկ տոհմին կապում է Բագրատունիների հետ, սանձահարելով նրանց ֆեոդալական ինքնուրույն ձգտումները։

Աշոտ Բագրատունու քաղաքական ձգտումներին Արծրունիներից հետո խոչընդոտ էր հարուցում նաև Սյունյաց իշխանությունը։ Նա խնամիական կապի միջոցով աշխատում է կարգավորել նաև Սյունյաց և Բագրատունյաց իշխանությունների քաղաքական հարաբերությունները։ Աշոտն իր Մարիամ աղջկանը ամուսնացնում է Սյունյաց Գրիգոր Սուփանի որդի Վասակ Գարուռի հետ, որի իշխանությունը Սյունիքում հաստատել էր խալիֆաթը։ Այդ եղանակով Սյունյաց իշխանությունն էլ ավելի սերտ կերպով է կապվում Բագրատունյաց իշխանության հետ։

Այնուհետև Աշոտ իշխանաց իշխանը ձգտում էր տիրանալ Տարոնին, ուր իշխում էին իր հորեղբոր՝ Բագրատ Բագրատունու որդիներ՝ Աշոտը և Դավիթը։ Դավթի որդի Աշոտն ամուսնացել էր Շապուհ Բագրատունու աղջկա հետ, որով հարավի Բագրատունիները կապվել էին Միջնաշխարհի Բագրատունիների հետ։ Այսպիսով, Աշոտ Բագրատունին ամրապնդում է իր դիրքերը շրջապատի հետ, խալիֆաթին էլ կանոնավոր հարկերը վճարելով, ձեռք է բերում վստահություն։ Այնուհետև տասը տարի Աշոտը խաղաղ կառավարում է երկիրը և ապատում նոր առիթների՝ թագը ստանալու ու երկրի անկախությունը վերջնականապես վերականգնելու համար։

Սակայն թագ կրելու ձգտող տոհմերի թիվը շատ էր Հայաստանում, նրանք հեշտությամբ իրենց դիրքերը չէին ուզում զիջել Բագրատունյաց տոհմին: Ուստի Աշոտ Բագրատունու առջև դեռևս կային լուրջ դժվարություններ: Հայաստանում մեկ միասնական պետություն ստեղծելու համար հայ ժողովրդից պահանջվում էր մեծ ջանքեր գործադրել, իսկ Բագրատունյաց տոհմը և շահագրգռված դասերն այդ ուղղությամբ դեռևս շատ պետք է մաքառեին:

Անկախության վերականգնումը

Աշոտ Բագրատունու կառավարման խաղաղ շրջանը տևում է մինչև 871 թվականը: Շուտով Մերձավոր Արևելքի քաղաքական հորիզոնի վրա մութ ամպեր են կախվում: 871 թվականից նորից վերսկսվում է արաբա-բյուզանդական պատերազմները, 875 թվականին ընդհատվում է, ապա վերսկսվելով տևում է մինչև 878 թվականը: Բյուզանդիայի մղած կռիվները դերազանցապես ուղղված էին Մելիտինեի էմիրի և պավլիկյանների դեմ:

Երբ խալիֆաթը տեսնում է, որ Հայաստանում քաղաքական դրությունը լարվում է և իր շահերը ոտնատակ են լինում, անմիջապես դիմում է Շայբանի տոհմին, որը վաղուց հաստատվել էր Ամիդում ու նրա շրջակայքում և սահմանակից էր Հայաստանին: Այս տոհմի միջոցով էր, որ 8—9 դարերում արաբական խալիֆաթը ճնշում էր հայերի ապստամբությունները: Մահմեդ խալիֆն 871 թ. այդ տոհմից Հիսեին նշանակում է Հայաստանի ոստիկան, որը միաժամանակ պիտի զնկավարեր երկրի ռազմական ուժերը: Նոր ոստիկանը հենվելով իր 15000 զորքի վրա, անմիջապես պատերազմ է սկսում Աշոտ Արծրունու դեմ, որը գերությունից նոր էր վերադարձել: Հիսեի նպատակն էր հեռթականությամբ իրեն ենթարկել հայ իշխանություններին: Բայց որոշ հանգամանքներ հաշվի առնելով, շուտով հաշտվում է նրանց հետ: Երկրի ներսում պատրաստություն էր տեսնում նաև Աշոտ Բագրատունին:

Նա ամեն կերպ աշխատում էր երկրի ներքին ռազմական ուժերը միացնել ու դուրս բերել արաբների դեմ: Աշոտ Արծրունին ընդամենը էր տրամադրվել Գուրգեն-Ապու-Պելճի

նկատմամբ, որը երկար թափառումներից հետո հաստատվել էր Անձևյաց գավառում, ամուսնանալով այդ գավառի այրի իշխանուհու հետ: Աշոտ Արծրունին պահանջում էր Գուրգենից, որ Անձևյաց գավառի մի մասը զիջի իր որդի Գրիգոր-Դերենիկին: Աշոտ իշխանաց իշխանը հաշտեցնում է նրանց, երկրի ռազմական ուժերը ուղղում է Հայաստանում հաստատված մահմեդական իշխանությունների և ոստիկանի դեմ: Այնուհետև Աշոտ Արծրունին պայքարի մեջ է մտնում ութմանիկենրի հետ, որոնք գրավել էին Վարագա վանքը և բանտարկել վանահորը: Սակայն հաշվի առնելով Հիսեի սպառնալիքները, հաշտվում և նրանց հետ միասին պայքարի են դուրս գալիս ոստիկանի դեմ: Բայց որոշ նկատառումներով վերջինի հետ էլ հաշտվում են Աշոտ Բագրատունու միջնորդությամբ, և Աշոտն ու Գրիգոր-Դերենիկը, այսինքն՝ հայրն ու որդին, ստիպված են լինում ոստիկանին հարկ վճարել:

Հիսե ոստիկանը հաստատվել էր Պարտավում: Հաջորդ տարին՝ 872 թվականին, Յամանիկին թողնում է Պարտավ քաղաքի քաղաքապետ, ինքը մեկնում Միջագետք: Յամանիկը շուտով ապստամբում է նրա դեմ: Այդ հանգամանքը ստիպում է Հիսեին ետ վերադառնալ և ճնշել ապստամբությունը: Բայց մի ամբողջ տարի կռվելուց հետո ստիպված է լինում թողնել Պարտավի պաշարումը և հեռանալ դեպի Ասորիք: Յամանիկի ըմբոստությունը տևում է 13 ամիս, որի ընթացքում նա աշխատում էր իրեն ենթարկել նաև Հայաստանը: Հիսեն Հայաստանից հեռանում է 873 թվականին և 879—880 թվականներին կռիվներ մղում Միջագետքում, իսկ նրա փոխարեն որպես ոստիկան Հայաստան է գալիս Մահմեդ Իբն-Խալիդը, որին Դաւտավանում դիմավորում են Գրիգոր-Դերենիկ Արծրունին իր զքահմբով, Մոկաց իշխան Մուշեղը, Տարոնի Աշոտ Կյուրապաղատը և Ապահունիքի Աբլբաս կայսիկը: Աշոտ իշխանաց իշխանն ինքն անձամբ չի դիմավորում նոր ոստիկանին, այլ ուղարկում է իր եղբայր Շապուհին: Այս արդեն ցույց է տալիս, որ նա իր արժանապատվությունից ցածր էր համարում ոստիկանին դիմավորելը, երբ նրա ռազմական մեծ ուժի առաջ անընդհատ զիջումներ էր կատարում խալիֆաթը:

Նոր ոստիկանը դիմավորողներով ու մեծ շքախմբով ուղեվորվում է դեպի Դվին։ Դատավանում եղած ժամանակ ոստիկանը և Կայսիկ Աբլբարը մշակել էին մի դավադրական գաղտնի ծրագիր, ըստ որի պետք է արագ ղինաթափ աներին Հայաստանի ռազմական ուժերը և բանտարկեին բոլոր իշխաններին, առաջին հերթին Աշոտ Բագրատունուն։ Նրանք միաժամանակ գաղտնի բանակցություններ էին մտել Պարտավի Յամանիկի հետ, որն իբր չի ենթարկվում նոր ոստիկանին և հանկարծակի պիտի հարձակվի Հայաստանի վրա։ Սակայն Աշոտ Բագրատունին հանգիստ չէր նստել, նա իր հեռատես քաղաքականությամբ կռահել էր նոր ոստիկանի մտադրությունը, ուստի և նախօրոք իր ձեռքն էր վերցրել երկրի բոլոր կոմունիկացիաները, կարևոր բերդերն ու ամրոցները, ճանապարհներն ու կամուրջները, ձորերն ու կիրճերը և իր մարդկանց միջոցով կարողացել էր նույնիսկ ձեռք գցել Յամանիկին ուղարկած նամակներից մեկը, ուր շարադրված էր դավադրության ծրագիրը։ Նա միաժամանակ կազմ ու պատրաստ պահում էր 40.000-անոց բանակը։

Արաբ զավթիչները շուտով ձեռնամուխ են լինում իրենց դավադրական գործերին։ Նրանց գլխավոր նպատակն էր, մի կողմից, ջլատել երկրի ռազմական ուժերը, դուրս բերել մեկը մյուսի դեմ, իսկ մյուս կողմից ծանրացնել Հայաստանի հարկերը։ Արաբ զավթիչներին հաջողվում է Դրիգոր-Դերենիկ Արծրունուն թշնամացնել Տարոնի իշխան Աշոտ Կյուրապաղատի հետ։ Նրանք հավատիացրել էին Արծրունյաց իշխաններին, թե Տարոնի կառավարիչը ձգտում է գրավել Վասպուրականի իշխանությունը։ Անհեռատես Գրիգոր-Դերենիկը հավատում է արաբ դավադիրներին, ձերբակալել է տալիս Աշոտ Կյուրապաղատին։ Իսկ նույն ժամանակ Գրիգոր-Դերենիկին էլ բանտարկում է Վասպուրականի Սևանի բերդատեր Հասաննիկ իշխանը։ Վերոհիշյալ հանգամանքները ստիպում են Աշոտ Բագրատունուն զբաղվել երկրի իշխանների ներքին և իր փեսա Գրիգոր-Դերենիկին բանտից ազատելու գործերով։ Այս եղանակով արաբ զավթիչները դարձյալ ներքին երկպառակություններ են սերմանում հայ ֆեոդալական դասակարգի միջև։

Բայց Աշոտ Բագրատունուն հաջողվում է խաղաղեցնել երկիրը և իր փեսա Գրիգոր-Դերենիկին ազատել բանտից։

Աշոտ իշխանաց իշխանը հետամուտ լինելով իր դիվանագիտական նուրբ քաղաքականությանը, սկզբում փորձ է անում մեծամեծ նվերներով ներկայանալ ոստիկանին և մեղմել լարված դրությունը։ Բայց հաշվի առնելով շիկացած մթնոլորտը, դիմում է ավելի լուրջ միջոցների, մանավանդ որ ժողովուրդը ծանր հարկերի պատճառով ոտքի էր կանգնել ու պահանջում էր իշխաններից՝ զենքի միջոցով վերականգնել անկախությունը և վերջ տալ ծանր հարկերին։ Ժողովուրդն իր պայքարով ստիպում է Աշոտ Բագրատունուն լինել ավելի վճռական, թողնել դիվանագիտական հին ուղին և զենքով լուծել երկրի անկախության հարցը։ Արդեն նրա եղբայր Աբաս սպարապետը 40.000 զորքով կազմ ու պատրաստ սպասում էր երկրի իշխանաց իշխանի հրամանին։ Աբասը ստանալով կռվի հրամանը, անմիջապես շրջապատում է Դվին քաղաքը, ապա ներս է մտնում ոստիկանի պալատն ու նրան ցույց տալի Յամանիկին ուղարկած դավադրական նամակը, բռնում է ոստիկանի թևից, դուրս է քաշում պալատից, նստեցնում է ջորու վրա և արտաքսում է Հայաստանից։ Այսպիսով, հաղթանակը շատ հաստատուն էր, և կարևորն այն էր, որ կատարվել էր առանց մի կաթիլ արյուն թափելու։ Այնուհետև Աշոտ Բագրատունին ոդևորված ոստիկանի դեմ տարած իր հաղթանակով, կռիվներ է սկսում Կայսիկ Աբլբարի դեմ և պաշարում նրա կենտրոն Մանազկերտ քաղաքը, որպեսզի պատժի խորամանկ Կայսիկին, որը ձգտում էր զավթել Բագրատունյաց տիրույթները։ Բայց շուտով լուր է ստանում, որ Աշոտ Կյուրապաղատը ազատվելով բանտից, ձերբակալել է իր փեսա Գրիգոր-Դերենիկին։ Ուստի թողնելով Մանազկերտի պաշարումը, գնում է փեսային օգնության։ Այդպիսով, թեև Կայսիկ Աբլբարը լուրջ հարված չի ստանում, բայց արդեն զգում է իր հակառակորդի ուժը։ Չնայած Խալիդ ոստիկանը աքսորվել էր, Կայսիկներն էլ հարված էին ստացել, բայց դեռ Հայաստանի դեմ դավադրական գործողություններ էր շարունակում Պարտավի Յամանիկը[1]։

[1] Տես Թովմա Արծրունի, էջ 363։

Հայաստանի միասնության ձգտող ռազմական ուժերն Աշոտ Բագրատունու գլխավորությամբ 880-ական թվականներին վերջ ի վերջո ընկճում են ոչ միայն Պարտավի Յամանիկի դավադրական գործողությունները, այլև սանձահարում Մանազկերտի ամբարտավան էմիրին, հայ խռովարար իշխաններին և դուրս են գալիս ֆեոդալական ներքին պայքարից ու արտաքին դժվարություններից լիակատար հաղթանակով: Հայաստանի միասնական ռազմական ուժերի հզորացումն էլ ավելի են բարձրացնում երկրի ընդհանուր կառավարիչ Աշոտ իշխանաց իշխանի հեղինակությունը, դարձնելով նրան Հայաստանի լիակատար կառավարիչ: Այդպիսով, Հայաստանը 9-րդ դարի երկրորդ կեսին Բագրատունյաց տոհմի գլխավորությամբ կանգնում է վաղուց կորցրած անկախությունը վերականգնելու ուղու վրա և հասնում է հաջողության:

Համաձայն հայկական աղբյուրների, հայ իշխանները տեսնելով Աշոտ Բագրատունու մեծացումն ու հզորացումը, որոշում են նրան դարձնել թագավոր և «...քաջատոհմիկ պերճութիւն իշխանացն և նախարարացն Հայոց՝ խորհուրդ միաբանական առեալ՝ թագաւորեցուցանել զնա ի վերայ ինքեանց, զկուցանեն ամիրապետին ի ձեռն ոստիկանին Յիւսէի՝ որդւոյն Շեխայ»[1]: Իսկ Ստեփանոս Օրբելյանն ավելացնում է «...Ապա յայնմ ժամանակի խորհուրդ ի միջ առեալ... Գրիգորի Սուփանայ և Վասակայ իշխանիկ... տէրանցն Սիւնեաց, ընդ Գրիգորի Դերենիկ... որ էր իշխան տանն Արծրունեաց, և ընդ այլ իշխանաց Հայոց, խնդրեն յամիրապետէն Ամիր-Ահմատայ և կացուցանեն զԱշոտ Բագրատունի թագաւոր Հայոց. որ և նորոգապէս զարդարեցաւ աշխարհս Հայոց ի շինութիւնս և ի խոր խաղաղութիւնս»[2]: Իշխանների այս խորհուրդը հրավիրել էր Գևորգ երկրորդ կաթողիկոսը (876—896) հետևյալ իշխանների մասնակցությամբ. Սյունիքից ներկա են եղել Գրիգոր Սուփանը և Վասակ Իշխանիկը, Վասպուրականից՝ Գրիգոր-Դերենիկը, Վասպուրականի Աղբակից՝ Գագիկ Արծրունին, Անձևացյաց երկրից՝ Գուրգեն-Ապու-Պալեը, Մոկսից՝ իշխան Մուշեղը և այլն: Իշխաններն իրենց այդ որոշումը ոստիկանի միջոցով հաղորդում են Մուտամիդ խալիֆին, որը ստիպված է լինում ընդունել ոչ միայն հայ իշխանների պահանջը՝ Աշոտին ճանաչել որպես Հայաստանի թագավոր, այլև ուղարկել թագ ու ծիրանի, որովհետև խալիֆաթն արդեն լուրջ երկյուղ էր կրում Հայաստանի հզորացումից, մանավանդ խալիդ ոստիկանի աքսորումից հետո: Նրան մնում էր բռնել միայն հայերին պիրաշահելու ուղին: Իսկ եթե սրան ավելացնենք նաև այն, որ անգործության չէր մատնվել նաև Բյուզանդական կայսրության քաղաքականությունը, որը ձգտում էր արաբա-բյուզանդական հակամարտության օրբիտի մեջ առնել հայերին և օգտագործել նրանց իր նպատակների համար, ապա պարզ կլինի, որ խալիֆաթը վախենալով, պետք է անկախություն տար Հայաստանին, որպեսզի հայերը չօգտագործվեն Բյուզանդական կայսրության կողմից: Տարոնի իշխան Աշոտ Բագրատունուն կայսրության կողմից կյուրապաղատության տիտղոսի շնորհումը հենց այդ քաղաքականությունն իրականացնելու մի նմուշն էր: Մուտամիդ խալիֆի ժամանակ փաստորեն խալիֆաթից կիսակախ էին դարձել մի շարք երկրներ ու մարզեր, օրինակ՝ Պարսկաստանը Յակուբ Սաֆարի գլխավորությամբ, Եգիպտոսը՝ Ամիր-Թուլանի և այլն: Նույնիսկ Ատրպատականի ոստիկանն աշխատում էր անկախանալ: Այստեղից էլ շատ պարզ է, որ եթե խալիֆաթը բռներ համառության ուղին և չճանաչեր Հայաստանի անկախությունը, Աշոտին թագ ու ծիրանի չուղարկեր, ապա Հայաստանը կարող էր ապստամբել և անկախանալ, այն ժամանակ նա կզրկվեր այդ երկրի ռազմական ուժերից ու տնտեսական միջոցներից:

Մուտամիդ խալիֆը ճանաչելով Աշոտ Բագրատունուն իբրև Հայաստանի թագավոր, արքայական թագն ու ծիրանին ուղարկում է Շայբանի տոհմից Հիսեի որդի Ահմեդի միջոցով, իսկ ըստ հայ աղբյուրների, ուղղակի բերել է ինքը՝ Հիսեն[1]: Հայոց կաթողիկոս Գևորգն էլ հայ, վրաց և աղվան իշխանների ներկայությամբ 885 թ. ապրիլին Շիրակավանում կամ

[1] Հովհ. կաթ., էջ 138—139:

[2] Պատմութիւն նահանգին Սիւնեաց, էջ 175, 1910:

[1] Հովհաննես կաթ., էջ 140:

Երազդավորսում նրան օծում է թագավոր։ Իր հերթին Բյուզանդական կայսր Վասիլ (Բարսեղ) Առաջինը, Մակեդոնական դինաստիայի հիմնադիրը, իր շահերն ի նկատի ունենալով, նույնպես ճանաչում է Աշոտի թագավորությունը, կնքում դաշինք, իր ուղարկած նամակում «սիրելի որդի» անվանելով[1] նրան։ Բայց դրանով միայն հայկական պետականության հիմքն չ դրվում, ինչպես Ասողիկն է ասում, հայերի երրորդ հարստությանը։ Սակայն Հայաստանը դեռևս շարունակում էր հարկ վճարել խալիֆաթին Ատրպատականի ոստիկանների միջոցով, որոնք նույնիսկ խալիֆների անունից հաճախ միջամտում էին երկրի ներքին գործերին։

Այսպիսով, 429 թվականից հայ ժողովուրդը կորցնելով իր անկախությունը, ավելի քան 450 տարի ենթակա լինելով պարսկա-բյուզանդական և արաբական զավթիչների դիշատիչ կողոպտմանը, այնուամենայնիվ շնորհիվ իր դարավոր պայքարի՝ վերստին ձեռք է բերում իր անկախությունը։

Այսպիսով, երկար դարերի որոնումներն ու ապստամբությունները ապարդյուն չեն անցնում։ Հայերը հասնում են իրենց նպատակին, երկիրը վերականգնում է իր անկախությունը։ Հայաստանը թևակոխում է իր պատմության մի նոր դարաշրջան, որը խոշոր նշանակություն է ունենում նրա կյանքում։ Իսկ այն հանգամանքը, որ արքայական թագն ու ծիրանին բերում է Շաւքանի տոհմի ներկայացուցիչը, պակաս նշանակություն չուներ Հայաստանի համար։ Հայտնի էր, որ դարեր շարունակ Հյուսիսային Միջագետքում և Ադձնյաց նահանգում հաստատված այդ տունը հենվելով արաբական կենտրոնական կառավարության ուժերի վրա, կատաղի թշնամություն էր հանդես բերում Հայաստանի նկատմամբ։ Այժմ ստիպված էր ոչ միայն հրաժարվել պայքարից, այլև ընդել հաշտության ու կոմպրոմիսների ուղին։

Աշոտ Բագրատունու թագավորության թվականը, որը միաժամանակ հանդիսանում էր Բագրատունյաց դինաստիայի հիմնադրման թվականը, որոշ չէ, եղած տեղեկություննե-

[1] Ասողիկ, էջ 145։

րը հակասական են։ Հայ պատմիչների մի մասը՝ Ստեփանոս Օրբելյանը (տես էջ 175), Կիրակոս Գանձակեցին (տես էջ 78)[1], Թովմա Արծրունին (տես էջ 370) և Սամվել Անեցին (տես էջ 95)[2], Աշոտի թագավորության ժամանակը ուղղակի համարում են 334 (885) թվականը, իսկ պատմիչների մի մասը, հատկապես Ասողիկը (տես էջ 110, 157, 159) և Վարդանը (տես էջ 117) համարում են 336 (887) թվականը։ Բայց քանի որ նույն հայ պատմիչները նշում են, որ Աշոտը գործ է ունեցել Վասիլ Առաջինի հետ և նա նույնպես վավերացրել է նրա թագավորությունը թագ ու ծիրանիով (տես Մխիթար Այրիվանեցի, էջ 55)[3], Կիրակոս Գանձակեցի (էջ 18), Ասողիկ (էջ 145), Վարդան (էջ 117), իսկ հայտնի է, որ Վասիլը մահացել է 886 թվականին։ Ուստի ճիշտ են այն աղբյուրները, որոնք նրա թագավորության թվականը համարում են 885 թիվը։ Թովմա Արծրունին գտնում է, որ Աշոտ Բագրատունու մահը տեղի է ունեցել 339 (890) թվականին, բայց քանի որ պատմիչների մեծ մասը, բացի Թովմայից, նրա թագավորության տևողությունը հինգ տարի է հաշվում, պարզ է, որ նա թագավորել է 885 թվականից, և Բյուզանդական կայսր Վասիլը մի տարվա ընթացքում կարող էր շնորհավորել նրա թագավորությունը թագ ու ծիրանիով։ Այս առումով էլ պետք է մերժել պատմաբան Լեոյի այն պնդումը, թե Աշոտ Բագրատունին թագավորել է 887—889 թթ.[4]։ Բոլոր պատմիչները, բացի Թովմայից, միաբերան վկայում են, որ Աշոտը թագավորել է հինգ տարի և ոչ թե երեք։ Իսկ Թովմայի ասելով, Աշոտը որպես իշխան, իշխել է հինգ տարի, իշխանաց իշխան՝ 25 տարի և թագավոր՝ 4 տարի (տես էջ 370)։ Թովմա Արծրունու հաղորդած այս տվյալները համոզիչ չեն, մյուս եղած տեղեկությունների համաձայն, Աշոտ Բագրատունին նստել է իբրև իշխան յոթ տարի (855—862), իշխանաց իշխան՝ 23 տարի (862—885) և թագավոր՝ հինգ տարի (885—890),

[1] Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1909։

[2] «Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893։

[3] «Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց», Մոսկվա, 1860։

[4] Լեո, Հայոց պատմություն, 2-րդ հատոր, էջ 520, Երևան, 1947։

ընդամենը 35 տարի, որից իշխան և իշխանաց իշխան՝ 30 և թագավոր՝ 5 տարի, ինչպես ճիշտ են նշում պատմիչները։

Այսպիսով, Բագրատունյաց դինաստիայի հիմնադրումը տեղի է ունեցել 885 թվականին, և այս թվականը միաժամանակ հանդիսանում է Բագրատունյաց թագավորության իրավաբանական ձևավորման ժամանակաշրջանը, որովհետև Հայաստանը 850—852 թվականներին, մի կողմ թողած Բուղայի արշավանքի շրջանը, արդեն ձեռք էր բերել իր անկախությունը, իսկ Աշոտ Բագրատունու թագավորության ժամանակ միայն իրավաբանական հիմնավորում է ստանում։ Աշոտի թագավորության կառավարման իրավունքը նախկին ձևով տարածվում էր ամբողջ Էրմենիայի վրա։ «Յորում աւուր ընդարձակեալ մեծին Աշոտի,— գրում է Վարդանը,— ի Վիրս և յԱղուանս և զկովկասայինան հնազանդեալ»[1]։

Մենք արդեն նշել ենք, որ արաբ դավադիրների երրորդ անդամ Պարտավի Յամանիկը թշնամություն էր նյութում Հայաստանի դեմ։ Նա խիստ զայրացել էր, որ Աշոտը ձեռք էր բերել թագավորական իրավունք և կանգ չէր առնում ոչ մի միջոցի առաջ վրդովելու Հայաստանի քաղաքական խաղաղ կյանքը։ Նախ Հեր և Զարևանդ գավառների էմիրներին թշնամացնում է Գրիգոր-Դերենիկ Արծրունի իշխանի հետ և ապա 885 թ. աշնանը կազմակերպում է նրա սպանությունը։ Գրիգոր-Դերենիկի սպանողները միաժամանակ սուտ լուրեր են տարածում, թե այդ սպանության մեջ խառն է եղել նաև Աշոտ թագավորը։ Դրանով դավադիրները ցանկանում էին թշնամացնել երկրի երկու խոշոր իշխանական տոհմերին իրար հետ, ջլատել նրանց ռազմական ուժերը և տիրել Հայաստանին։ Սակայն դավադիրները հաջողություն չեն ունենում, Աշոտը կարողանում է ցրել անհիմն կասկածանքները և վերացնել երկու տոհմերի միջև խմորվող թշնամությունը։

Ըստ Թովմա Արծրունու[2], Գրիգոր-Դերենիկը սպանվել է Հեր քաղաքի կառավարիչ Աբլբերսի կազմակերպած դավադրության հետևանքով, իսկ ըստ Հովհաննես կաթողիկոսի[3], Արծրունյաց իշխանին սպանել են Հեր և Զարևանդ գավառների արաբ մեծամեծները, որոնց հետ նա ուներ հողային վեճեր և ձգտում էր հին Պարսկահայք նահանգը վերցնել իր հովանավորության տակ՝ իրենց արաբ էմիրներով։ Մեր կարծիքով այս վերջին տեսակետն ավելի հավանական է, այսինքն՝ Հեր քաղաքապետի հետ միացել են նաև Զարևանդի էմիրները և Պարտավի Յամանիկի թելադրությամբ սպանել են Դերենիկին։

9-րդ դարում ուժեղանում է նաև վրացական Տայք-Կղարջքի իշխանությունը, որը Թբիլիսիի Իսահակ էմիրի անկումից հետո, աստիճանաբար շարժվելով դեպի Թբիլիսի, վրաց Բագրատունյաց հզոր թագավորության հիմքն է դնում։ Ինչպես նշեցինք, հայ և վրաց Բագրատունիների հզորացմանը մեծ չափով նպաստում է Թբիլիսիի արաբական էմիրության անկումը Բուղայի ձեռքով, 853 թվականին։ Այդ էմիրությունը վտանգավոր էր ոչ միայն Վրաստանի, այլև Հայաստանի իշխանությունների ընդարձակման ու հզորացման համար, ինչպես ճիշտ մատնացույց է արել Մարկվարդը[1]։ Թբիլիսիի արաբական էմիրության անկումից հետո Տայք-Կղարջքի բագրատունիները Հայաստանի կառավարիչ, հետո թագավոր Աշոտի և ապա նրա որդի Սմբատ Առաջինի օգնությամբ տիրում են Վրաստանի մեծագույն մասին Թբիլիսի կենտրոնով։ Իսկ Դավթի որդի Ատներսեհն այնքան է հզորանում, որ 899 թվականին ձեռք է բերում թագավորության աստիճան։ Այդ նույն ժամանակաշրջանում Աղվանքի Բագրատունիները նույնպես ձեռք են բերում թագ կրելու իրավունք, հանձինս Բագրատունի Համամ Արևելցու։

Հայ աղբյուրներում հիշատակվում են, որ Աղվանից թագավորության վերանորոգողը հանդիսացել է Բագրատունի Համամ-Հովհաննես իշխանը[2]։ Մխիթար Այրիվանեցին նշում է. «Համամ, որ և Յոհաննէս Բագրատունի...» (էջ 55), Հովհաննես կաթողիկոսը նրան անվանում է «Մեծ իշխանն Արեվելից Համամ» (էջ 170), իսկ Մովսես Կաղանկատվացին

[1] Վարդան, էջ 116—117 և Հովհ. կաթ., էջ 140։

[2] Թովմա, էջ 365։

[3] Հովհ. կաթ., էջ 141։

[1] «Վրաց Բագրատունյաց ծագումը», էջ 138—139, Վիեննա, 1913։

[2] «Արարատ» ամսագիր, 1897, ապրիլ, Վաղարշապատ։

դրում է. «Ապա բարեպաշտն Համամ նոյնպէս զկործանեալ թագաւորութիւն տանն Աղուանից նորոգէր, որպէս Աշոտ Բագրատունի զՀայոց թագաւորութիւն»[1]: Այստեղից էլ պարզ է, որ Աղվանից նոր թագավորության հիմնադիրն է եղել Համամ Բագրատունին և պատմիչների մոտ հիշատակված «Արեվելից թագաւոր Համամ»-ը, վերոհիշյալ Համամն է:

Այդպիսով, 9-րդ դարում Բագրատունյաց տոհմը Հայաստանում հզորանալով, վրաց Բագրատունիների հետ միասին պայքար էր մղում արաբական խալիֆաթի ու նրա ոստիկանների դեմ: Հայ և վրաց Բագրատունիները տեղացիների հետ միասին ծավալելով միասնական պատերազմական գործողություններ արաբական խալիֆաթի, նրա տեղական էմիրությունների ու ոստիկանների, ինչպես նաև խազարների և լեռնականների արշավանքների դեմ, ունենում են լուրջ հաջողություններ: Հայ Բագրատունիները հարյուր տարվա ընթացքում իրենց տիրապետության սահմանները հասցնում են Տավրոսյան լեռնաշղթայից, Անձևյաց, Մոկաց, Սասունի և Տարոնի գավառներից մինչև Գուգարքն ու Գարդմանը, Կարինից մինչև Արցախ: Իսկ Բագրատունյաց մանր ինքնուրույն դինաստիաների առաջացումը հետևանք էր մի կողմից ֆեոդալական հարաբերությունների ուժեղ զարգացման, որ սկսվել էր 9-րդ դարի սկզբից, իսկ մյուս կողմից Բյուզանդական կայսրության նենգ ու խարդախ քաղաքականության, որովհետև նրա համար ձեռնտու չէր Հայաստանում Բագրատունիների գլխավորությամբ միասնական ուժեղ պետության ստեղծումը: Կայսրությունն իր այդ նենգ ծրագիրը կենսագործում էր խազարների և կովկասյան լեռնականների միջոցով, որոնց հետ վաղուց քաղաքական կապեր ուներ: Այդ կիսաբարբարոսական ցեղերն ու ժողովուրդները, որոնք գործիք էին դարձել կայսրության ձեռքին, նրա դրդումով հաճախ արշավում էին դեպի Անդրկովկաս, ասպատակում երկիրը և ջլատում ուժերը: Այդ ճանապարհով Բյուզանդիան իր ազդեցությունն էր տարածում Սև ծովի ափերի վրա, սկսած Սուխումիից մինչև Տրապիզոն: Վերջ ի վերջո կայսրությանը հաջողվում է օգտագործել Անդրկովկասի ֆեոդալական կենտրոնախույս տարրերի ձգտումները և ստեղծել Տայքի Բագրատունյաց կյուրապալատությունը, կտրելով Տայքը Վրաստանից և Հայաստանից:

Բագրատունյաց տոհմի ներկայացուցիչների գործունեությունը 9-րդ դարում ավելի ընդարձակ ծավալ է ստանում, որի կենտրոնը հանդիսանում էին Դվինն ու Շիրակը, որտեղից էլ նրանք տարածվում են Հայաստանի մի շարք մարզեր, ցանկանալով այդ մարզերը միավորել մեկ պետության սահմանների մեջ, որպեսզի հնարավոր լիներ պայքարել արաբա-բյուզանդական ագրեսորների դեմ և պահպանել երկրի անկախությունը: Բագրատունյաց տոհմի քաղաքական գործիչներն իրենց այդ ծրագիրը կարողանում են կենսագործել միայն կիսով չափ, որովհետև նրանց գլխավոր հենարաններից մեկը՝ քաղաքային դասը, դեռևս թույլ էր, չուներ անհրաժեշտ նյութական և ռազմական բազա, որպիսին նոր էր ստեղծվում: Իսկ մյուս հենարանը՝ նոր առաջացող ազնվականությունը, նույնպես իրենից կարևոր ուժ չէր ներկայացնում, այնինչ ֆեոդալական կենտրոնախույս հին ուժերը, հաճախ ընդվզելով և ըմբոստանալով, խանգարում էին մեկ միասնական կենտրոնացած պետություն ստեղծելու գործը: Եթե սրանց վրա ավելացնենք նաև այն, որ արաբա-բյուզանդական քաղաքականությունն էլ իր հերթին նպաստում էր այդ կենտրոնախույս ուժերի ընդվզմանը, այն ժամանակ հարցը ավելի պարզ կլինի, թե ինչո՞ւ դժվար էր միասնական պետության ստեղծումը Հայաստանում: Արաբա-բյուզանդական պետություններն իրենց գիշատիչ քաղաքականությամբ խանգարում էին Բագրատունիների ձգտումներին: Արաբական նենգ ու դավադիր խալիֆները արագությամբ թագեր էին բաշխում ոչ միայն Բագրատունյաց տոհմի կենտրոնախույս շահագիռներին, այլև մյուս հայ իշխանական տներին, իսկ բյուզանդական նենգ ու խարդախ կայսրները ևս իրենց հերթին ողջունում ու վավերացնում էին ստացված թագերը: Այդ բոլորի նպատակն էր խանգարել և թույլ չտալ, որ Հայաս-

[1] «Մովսէսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», էջ 383, Թիֆլիս, 1912:

տանում ստեղծվի միասնական պետություն: Սակայն Բագրատունիների ձգտումները հասցնում են Հայաստանի անկախության վերականգնմանը և արաբական ծանր լծի վերջնական թոթափմանը, մի լուծ, որ 200 տարուց ավելի կապարի նման ծանրացել էր հայ ժողովրդի ուսերին ու կաշկանդում էր նրա տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքի զարգացումը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՑՔԱՐ ՀԱՑԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ

1. ԱՇՈՏ ԱՌԱՋԻՆԸ ԵՎ ՆՐԱ ՎԱՐԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի քաղաքական կյանքը Աշոտ Առաջինի թագավորության ժամանակ (885—890) հիմնականում անցնում է խաղաղ: Նա թագավորությանն է ենթարկում նաև Վանանդի, Դուգարքի, Ուտիքի իշխաններին և աստիճանաբար տիրապետության սահմաններն ընդարձակում է: Բագրատունյաց նորաստեղծ թագավորությունը իր ռազմական ուժով ևս է մղում նաև Վրաստանի և Աղվանքի վրա կատարած կովկասյան լեռնականների արշավանքները: Այնուհետև Աշոտ Առաջինը հաշվի առնելով, որ Հայաստանի մայրաքաղաք Դվինում դեռևս նըստում էր արաբական խալիֆաթի ոստիկանը, որը լրտեսի դեր էր կատարում երկրում, ստիպված է լինում իր աթոռը տեղափոխել ու հաստատել Ախուրյան գետի (Արևմտյան Արփաչայի) վրա կառուցված Բագարան քաղաքում (հին Երվանդակերտ): Ապա վերանորոգում և վերականգնում է հին Արշակունիների ժամանակվա պետական ու վարչական կարգերը, բանակը և արքունի գործակալությունները: Աշոտ Առաջինն իր վարած քաղաքականությամբ շարունակում և իր շուրջն է համախմբված պահում Արծրունյաց և Սյունյաց իշխաններին, մինչև անգամ Արծրունյաց իշխանների օգնությամբ իր

ազդեցության տակ է վերցնում հին Պարսկահայք նահանգի Հեր և Ջարեվանդ գավառների արաբ էմիրներին։ Այդ հանգամանքը որոշ չափով սրում է Բագրատունիների հարաբերությունները Աբբասյանների էմիրության հետ, բայց Աշոտ Առաջինը խաղաղության դաշինք է կնքում Սաջյան էմիրի հետ և կարգավորում երկու երկրների քաղաքական ու տնտեսական հարաբերությունները։ Այնուհետև նա կարգավորում է Հայաստանի և մյուս հարևան երկրների հարաբերությունները, հատկապես խաղաղության ու միաբանության դաշինք է կնքում եգերացոց թագավորի հետ։

Բագրատունիները որպեսզի կարողանային էլ ավելի օգտագործել արաբա-բյուզանդական հակասություններն իրենց երկրի դիրքի ամրապնդման համար, մի կողմից մեղմ հարաբերություններ էին պահպանում խալիֆաթի հետ, իսկ մյուս կողմից առևտրական ու դիվանագիտական պայմանագրեր կնքելով բյուզանդական Լևոն Վեցերորդ Իմաստասեր կայսրի (886—912) հետ, դրանով ապահովում ու ամրապնդում էին Հայաստանի քաղաքական վիճակը և առևտրական կապերը ինչպես կայսրության, նույնպես և խալիֆաթի հետ։ Հովհաննես պատմագրի վկայությամբ Աշոտ Առաջինի ժամանակ Հայաստանում զարգանում են երկրագործությունը, անասնապահությունը, արհեստը, առևտուրը և քաղաքները։ Այսպիսով, երկիրը բռնում է իր քաղաքական, տնտեսական ու կուլտուրական կյանքի զարգացման ճանապարհը։

Մինչ Աշոտ Առաջինը զբաղված էր իր երկրի ներքին ու արտաքին գործերով, Վանանդի և Գուգարքի հայ իշխաններն արհամարհելով կենտրոնական կառավարությանը, ապստամբում են նրա դեմ։ Թագավորն ստիպված է լինում Վանանդ ուղարկել իր եղբայր Աբաս սպարապետին, իսկ Գուգարք՝ իր որդի դահաժառանգ Սմբատին։ Աբասն ու Սմբատը թեև կարճ ժամանակվա ընթացքում ճնշում են այդ շրջանների ապստամբությունները, սակայն ստիպված են լինում երկար ժամանակ մնալ այդ գավառներում՝ ապստամբներին հնազանդության մեջ պահելու համար։ Ինչպես տեսնում ենք, Բագրատունյաց միասնական պետությունը դեռ չամրապնդված, նրա դեմ ֆեոդալական ներքին տարրերն սկսում են ընդվզել։

Թեև այդ ընդվզումները ճնշվում են, բայց և այնպես նրանք երկար ժամանակ գործիք են դառնում խալիֆաթի Աբբասյանների էմիրների և բյուզանդական կայսրների ձեռքին։

Միքայել Չամչյանը, հենվելով հունական աղբյուրների վրա, նշում է, որ Աշոտ Առաջինն իր երկրի ներքին կյանքը կարգավորելուց, ըմբոստությունները ճնշելուց հետո գնում է Արևմտյան Հայաստան, ապա այնտեղից անցնում է Կ. Պոլիս՝ նոր կայսր Լևոն Վեցերորդին այցելելու նպատակով[1]։ Բայց հայ աղբյուրներում նման փաստ չկա։ Հովհաննես կաթողիկոսը, որը ժամանակակիցն էր Աշոտ թագավորին, նման դեպք չէր կարող աչքաթող անել։ Պարզ է, որ, եթե Աշոտ թագավորն անձամբ այցելության գնար կայսրին, խալիֆը և նրա Հայաստանի ոստիկանը չէին կարող անտարբեր մնալ, իսկ Աշոտի նման զգույշ քաղաքականություն վարող մի անձնավորության, երբեք նման կասկածի տեղիք չէր տա։ Հովհաննես կաթողիկոսը խոսելով Աշոտի մահվան մասին, նշում է, որ նա Շիրակի շրջանում ճամփորդելիս, Բագարանի մոտ հիվանդանում և մահանում է, երբեք չի հիշատակում Կ. Պոլիս գնալը։ Պետք է ենթադրել, որ բյուզանդական աղբյուրներում հիշված դեպքը վերաբերվում է Աշոտ Երկրորդի Բյուզանդիա մեկնելուն, որը շփոթված է Աշոտ Առաջինի հետ։

Բագրատունյաց պետության հիմնադիր Աշոտ Առաջինը մահանում է 890 թվականին՝ 61 տարեկան հասակում, 35 տարի Հայաստանը կառավարելուց հետո, թողնելով իր ժառանգներին բավականին մեծ և ուժեղ մի պետություն, որի սահմանների մեջ ընդգրկված էր Հայաստանի մեծագույն մասը։

Սակայն հզորացող և ամրապնդվող Բագրատունյաց թագավորությունը միաժամանակ օգնում, օժանդակում էր հայ իշխաններին և հոգևորականներին՝ շահագործելու գյուղացիներին և ճնշելու նրանց դժգոհություններն ու ապստամբությունները։

[1] «Պատմութիւն Հայոց», երկրորդ հատոր, էջ 706, Վենետիկ, 1785։

2. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐՆ Ա.ՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԱՐԱՔ ԷՄԻՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Հայկական հողերի միավորումը

Թագաժառանգ Սմբատը հոր մահը լսելով, անմիջապես Գուգարքից վերադառնում է Շիրակավան, ուր ժամանել էր նաև Գևորգ կաթողիկոսը: Վանանդի ապստամբությունը ճնշող Աբաս սպարապետը, օգտվելով եղբոր մահվանից, Ատրպատականի էմիրի դրդմամբ, փորձ է անում հափշտակել գահը: Վրաց Աղբուղասհ իշխանապետը նույնպես եկել էր Շիրակավան Սմբատին մխիթարելու և համոզելու, որպեսզի իշխանությունը շուտով իր ձեռքը վերցնի ու գործի անցնի: Բայց Աղբուղասհը վերադարձի ժամանակ Կարսում հանդիպում է Աբասին և վերջինի կողմից ձերբակալվում ու բանտարկվում է Կարսի բերդում, այն պատճառաբանությամբ, որ, իբր թե նա, այսինքն Աղբուղասհը, Սմբատին գրգռել է իր դեմ: Աղբուղասհի այս բանտարկությունը ստիպում է Սմբատին մեծ բանակով հարձակվել Վանանդի վրա: Աբասն իր բանակով դուրս է գալիս Սմբատի դեմ, և տեղի է ունենում արյունահեղ ճակատամարտ, Գևորգ կաթողիկոսը միջամտելով հաշտեցնում է այն պայմանով, որ ազատ արձակվի Աղբուղասհ իշխանապետը: Բայց Աբասը պայմանագանց է լինում և Աղբուղասհին ազատ չի արձակում, այդ պատճառով Սմբատը նորից մեծ բանակով հարձակվում է Կարսի վրա և պաշարում ու ստիպում Աբասին ազատ արձակել իշխանապետ Աղբուղասհին: Այդ նույն ժամանակ Ատրպատականի ոստիկան Մահմեդ Ափշինը, որը հաջորդել էր Հիսեին, Մուսամիդ-Բիլլահ խալիֆից բերում է Սմբատին թագ, ծիրանի, ոսկեկուռ զգեստ, նժույգ և մեծամեծ նվերներ: Թագադրությունը տեղի է ունենում Շիրակավանում 891 թվականին Գևորգ կաթողիկոսի ձեռքով, հայ մեծամեծների, վրաց իշխանապետ Աղբուղասհի, Սյունյաց Աշոտ իշխանի, Արծրունյաց Գագիկ Աբումրվանի ներկայությամբ:

Աբաս սպարապետն իր պարտությունը մասամբ վերադրելով Գևորգ կաթողիկոսին, փորձ է անում զրպարտել նրան և հանել տալ կաթողիկոսությունից, բայց այդ գործում նույնպես հաջողություն չի ունենում: Շուտով Աբասը մահանում է:

Սմբատ թագավորը սպարապետության պաշտոնը անմիջապես հանձնում է իր եղբայր Շապուհին և ներքին կռիվներից դուրս է գալիս հաղթանակով: Նա իր դիրքերն ավելի է ամրապնդում խալիֆաթից թագ ստանալու և իշխանների կողմից ջերմ ընդունելություն գտնելու շնորհիվ: Սմբատ Առաջինի թագավորությունը վավերացնում է նաև բյուզանդական կայսրությունը: Սմբատը իր հոր նման աշխատում է Կ. Պոլսի արքունիքի հետ ևս բարեկամական հարաբերություններ հաստատել: Այդ նպատակով, նվերներով հատուկ դեսպանություն է առաքում Կ. Պոլիս Լևոն վեցերորդ կայսրի մոտ, որը մեծ հարգանքով ընդունում է Հայոց թագավորի դեսպաններին և վավերացնում ու հաստատում է Աշոտ Առաջինի կնքել տված առևտրական և դիվանագիտական պայմանագրերը, ապա մեծամեծ նվերներով ետ է վերադարձնում հայկական դեսպանությունը:

Հայ-բյուզանդական հարաբերությունների ամրապնդումը և հայկական պետության աստիճանական հզորացումը ձեռնտու չէր Ատրպատականի Սաջյան էմիրությանը: Ափշինն էմիրն Աբաս սպարապետի խռովությամբ չկարողանալով վնաս հասցնել հայկական կենտրոնական կառավարությանը, այժմ ինքն է պատրաստվում հարձակվելու Հայաստանի վրա: Բայց Սմբատը շուտով կանխում է թշնամու մտադրությունը և 60.000 զորքով շարժվում է դեպի Փայտակարանի Ռոտակաց գավառը, որը գտնվում էր Ատրպատականի սահմանապահին: Այնուհետև այնտեղից նվերներով դեսպան է ուղարկում Ափշինի մոտ և հավաստիացնում է, որ Բյուզանդիայի հետ վերահաստատված պայմանագրերը միայն առևտրական նպատակներ են հետապնդում, և բյուզանդացիները լայն առևտուր պիտի ծավալեն արաբական երկրների ու տիրապետությունների հետ: Սաջյանների էմիրը վախենալով Սմբատի ուժից, ստիպված զիջում է իր դիրքերը, կեղծ բարեկամական տեսակցություն ունենալով նրա հետ: Դրանով ժամանակավորապես կարգավորվում է Հայաստանի և Ատրպատականի կոնֆլիկտը:

Սմբատ Առաջինն Ափշինին հանգստացնելուց հետո, բանակով շարժվում է Դվինի վրա, որովհետև այնտեղի Մահմեդ

և Ումա արաբ էմիրները չէին ճանաչում նրա իշխանությունը։ Նա երկար պաշարումից հետո 892 թվականի ապրիլի 21-ին գրավում է Դվինն քաղաքը, իսկ երկու էմիրներին էլ փախուստի ճանապարհին ձերբակալելով ուղարկում է Բյուզանդիա՝ Լևոն Վեցերորդ կայսրին։ Բագրատունյաց թագավորը դրանով աշխատում է սրել արաբա-բյուզանդական հարաբերությունները և օգտագործել նրանց հակասությունները իր դիրքերն ամրապնդելու համար։ Այնուհետև նա իր տիրապետությունն ընդարձակում է նաև Հայաստանի հյուսիսային կողմերում, ապա գրավում է Կարինը և նրա շրջակայքը։

Հայաստանի և Ծաղր-պատականի արաբական էմիրությանց պայքարի սկիզբը

Սմբատ Առաջինը Դվինի արաբ էմիրներին հաղթելուց, երկրի հյուսիս-արևմտյան կողմերում իր տիրապետություններն ընդարձակելուց ու ամրապնդելուց հետո, երբ իրեն բավականին ուժեղ է զգում, փորձ է անում ազատվել Աբբասյանների ոստիկանի միջնորդությունից, որպեսզի հնարավորություն ունենա ուղղակի կապվել խալիֆի հետ։ 9-րդ դարի երկրորդ կեսին արաբական խալիֆաթը թեև Հայաստանին շնորհել էր ինքնավարություն և դարեվերջին էլ անկախություն, բայց էմիրներին պարտավոր էր հարկ վճարել, այն էլ Աբբասյանների արաբական ոստիկանի միջոցով, որը միաժամանակ Հայաստանի վրա հսկողի դեր էր ստանձնել խալիֆաթի կողմից։ Բագրատունյաց թագավորի նպատակն էր, նախ՝ ազատվել այդ միջնորդ օղակից և հարկն ուղղակի ուղարկել արքունի գանձարանը, որովհետև Աբբասյանների արաբական ոստիկանը պակաս հարստություն չէր կուտակում Հայաստանի հաշվին, և ապա՝ հետագայում ազատվել նաև խալիֆաթի հարկատվական վասալական կախվածությունից։

Սմբատ Առաջինի տարած հաղթանակները և նրա մտադրությունները ազատվելու միջնորդ օղակից, անշուշտ, ձեռնտու չէր Աբբասյանների Ափշին ոստիկանին։ Նա անմիջապես զորահավաք է կատարում, բայց հայերին խաբելու համար սկզբում լուր է տարածում, թե գնում է դեպի արևելյան կողմերը, սակայն գաղտնի հարձակվում է Հայաստանի վրա, այժմյան Ջուլֆա-Նախիջևանով շարժվում է դեպի Դվին-քաղաքը, մի այնպիսի ժամանակ, երբ Հայաստանը պատերազմի ոչ մի պատրաստություն չէր տեսել։ Սմբատ Առաջինը ստիպված է լինում դուրս գալ Դվինից ու շարժվել դեպի Արագածի լեռնալանջերը։ Նա այնտեղից լուր է ուղարկում հայ իշխաններին, հյուսիսային ցեղերին և հարևան երկրներին, որ օգնության հասնեն։ Գևորգ կաթողիկոսը նորից հանդես է գալիս հաշտարարի դերում, որին ոստիկանն ընդունում է պատվով և հավանություն տալիս նրա խաղաղության առաջարկին, պայմանով, որ Սմբատ Առաջինն անձամբ ներկայանար Դվին՝ բանակցություններ վարելու համար։ Կաթողիկոսն անմիջապես մեկնում է թագավորի մոտ, նրան Դվին բերելու համար, սակայն Սմբատն ու իշխանները և զորքը հասկացել էին նենգավոր ոստիկանի մտադրությունները։ Այդ պատճառով՝ նախ մերժում են կաթողիկոսի խնդիրը և, երկրորդ՝ խորհուրդ են տալիս նրան, որ չներկայանա վտանգավոր թշնամուն։ Բայց միամիտ և անհեռատես կաթողիկոսը չի համաձայնվում թագավորի ու իշխանների խորհրդին, անմիջապես վերադառնում է Դվին՝ ոստիկանի մոտ, և վերջինի կողմից ձերբակալվում ու շղթայակապ նետվում է բանտ։ Դրանից հետո Ափշին ոստիկանը զորքով 894 թվականին շարժվում է դեպի Արագածոտն գավառի Դողս գյուղը և պատրաստվում պատերազմի։ Երեք օրից հետո տեղի է ունենում ճակատամարտը։ Հայկական զորքերը ջարդում են թշնամուն, որը ստիպված է լինում հաշտություն խնդրել, մի պայմանով, որ հարկն իրեն՝ Ափշինի միջոցով ուղարկեն խալիֆաթի գանձարանը։ Հայերը մերժելով այդ պայմանը, ավելի մեծ ջարդ տալով նրա բանակին, ստիպում են հեռանալ Հայաստանի սահմաններից։ Նենգավոր թշնամին նահանջի ժամանակ իր հետ տանում է նաև բանտարկված կաթողիկոսին մինչև Փայտակարան քաղաքը և նրան ազատ է արձակում միայն մեծ փրկանք վերցնելով։ Այդպիսով, Աբբասյանների ոստիկանի առաջին արշավանքը մատնվում է անհաջողության։

Հայ իշխանները թեև արտաքին թշնամու դեմ հանդես են գալիս միասնաբար, սակայն, արտաքին վտանգը անցնելուց հետո, նորից առաջ են բերում ներքին խռովություններ ու երկպառակություններ։ Հայ ֆեոդալական կենտրոնախույս

տները ոչ միայն պայքարում էին Բագրատունիների դեմ իրենց կալվածքները ընդարձակելու և թագավորական իրավունքը ձեռք բերելու համար, այլև յուրաքանչյուր տոհմի ներսում, առանձին ֆեոդալ իշխանները նույնպես իրենց անձնական հողերն ու իրավունքները ձեռք բերելու համար, ձգտում էին ինքնուրույնության: Այդ տեսակետից տիպիկ օրինակ են տալիս Վասպուրականի Արծրունյաց իշխանները: Արծրունյաց Դերենիկ իշխանի երեք որդիները, որոնք Գագիկ Աբումրվանի խնամակալության տակ էին, մեծանալով ձգտում էին ինքնուրույն կերպով իշխել իրենց երկրներում: Այդ պատճառով երկիրը բաժանում են իրար մեջ: Մեծ որդի Աշոտը ստանում է Վասպուրականի կենտրոնական մասը, Գագիկը՝ Ռշտունիքը և Դուրգենը՝ Աղբակը, իրենց շրջաններով: Աշոտ Արծրունին իր ֆեոդալական ձգտումների մեջ ավելի առաջ գնալով, դիմում է Ափշինն ոստիկանին և խընդրում, որ նրա կողմից իրեն շնորհվի թագավորական աստիճան: Այդ նույն նպատակով նենգավոր ոստիկանին դիմում է նաև Գրիգոր Սուփան Սյունյաց իշխանը: Բայց խորամանկ թշնամին հաշվի առնելով քաղաքական աննպաստ պայմանները և Բագրատունյաց թագավորության հզորությունը, նվերներ վերցնելով և փոխադարձ նվերներ տալով, առանց թագավորական աստիճանի, ետ է վերադարձնում նրանց իրենց տեղերը: Սյունյաց իշխան Սուփանն որոշ հանգամանքներ հաշվի առնելով հաշտվում է Սմբատ թագավորի հետ, բայց Աշոտ Արծրունին՝ ոչ: Գագիկ Աբումրվանը տեսնելով Արծրունյաց իշխանների վտանգավոր խաղերը, Սմբատից ոգևորվելով երեքին էլ ձերբակալում է: Աշոտին բանտարկում է Նկան ամրոցում, Գագիկին՝ Սևան և Դուրգենին՝ Կոտուր բերդերում, և ինքը տեր է դառնում ամբողջ Վասպուրականին: Մնացած իշխանները Մոկաց և Անձևյաց տերերի օգնությամբ, թեև փորձ են անում ետ դրավել Վասպուրականը Գագիկ Աբումրվանից, բայց հաջողություն չեն ունենում և ստիպված են լինում ապաստան գտնել Տարոնում, իսկ Գագիկ Աբումրվանը տիրում է նաև Մոկսին և Անձևյաց երկրին:

Տարոնի Դուրգեն Բագրատունի իշխանի դրությունը նույնպես ծանր էր, որի մոտ էին ապաստանել Վասպուրա-

կանի ֆեոդալները: Այդ ժամանակ Հյուսիսային Միջագետքի և Ասորիքի փոխարքա Ահմադը, որը բավականաչափ ուժեղացել էր, աչք ուներ նաև Հայաստանի վրա: Արաբական այս նոր նվաճողն ստիճանաբար գրավում է Աղձնիքն ու Սասունը և մտնում է նաև Տարոնը: Վտանգավոր այս նոր թշնամու դեմ իր զորքով դուրս է գալիս Դավիթ Կյուրապաղատի հաջորդ Դուրգեն իշխանը, որը, սակայն ընկնում է կռվի դաշտում և Տարոնը անցնում է թշնամու ձեռքը: Այսպիսով, Հայաստանին սպառնում էր արևելքից Սաջյան էմիրությունը, հարավից՝ Հյուսիսային Միջագետքի ու Սիրիայի փոխարքա Ահմադը: Ինչպես տեսնում ենք, հայ իշխանները փոխանակ միաբանելու և երկիրը արտաքին թշնամիներից պաշտպանելու, ավելի շուտ զբաղված էին իրար ձեռքից կալվածքներն ու պաշտոնները հափշտակելով և գյուղացիներին կողոպտելով: Ահմադը Տարոնի գավթումից հետո այնքան էր անբարտավանացել, որ սպառնում էր ամբողջ Հայաստանին: Այդ հանգամանքը ստիպում է հայերին Սմբատ Առաջինի գլխավորությամբ դուրս գալ վտանգավոր այս նոր թշնամու դեմ: Թագավորի և աշխարհազորականների բանակին միանում են մի շարք իշխաններ իրենց զորքերով, որոնց թվում և Վասպուրականի տեր Գագիկ Աբումրվանը: Սմբատը դեսպանի միջոցով պահանջում է Ահմադից ետ քաշվել Տարոնից, հանձնելով այն Դավիթ Կյուրապաղատի փոքր որդի Աշոտին: Երբ Ահմադը մերժում է հայ թագավորի առաջարկությունը, Սմբատը անմիջապես, ըստ Հովհաննես կաթողիկոսի, 60 հազարանոց[1], և ըստ Թովմայի, հարյուր հազարանոց[2] բանակով, շարժվում է դեպի Տարոն:

Վասպուրականի կառավարիչ Աբումրվանը, որն իր իշխանությունը ձեռք էր բերել Բագրատունյաց թագավորի օգնությամբ, գաղտնի բանակցությունների մեջ է մտնում Հայաստանի այս նոր թշնամու հետ, որը խոստանում է թագավորական իրավունք շնորհել Վասպուրականին, եթե նա դավաճանություն կազմակերպի հայկական բանակի և թագավորի դեմ: Գագիկ Աբումրվանը փաստորեն կաշառվում է Ահմադի

1 Հովհաննես կաթողիկոս, էջ 174:
2 Թովմա Արծրունի, էջ 381:

ված թագավորության խոստումով, և հայկական բանակը դեպի Տարոն առաջնորդելիս, տանում է սխալ ուղիներով, քարքարոտ ու մացառոտ և անջրդի վայրերով։ Երկար թափառեցնելուց հետո, Ապահունյաց գավառի Թուխ գյուղի մոտ հանդիպեցնում է Բշնամուն։ Հայկական զորքը թեև հոգնել էր երկար ճանապարհներ անցնելով, բայց և այնպես հերոսաբար կռվում է Բշնամու դեմ և լուրջ հարված է տալիս նրան։ Դավաճան Գագիկ Աբումրվանը զգալով, որ Ահմադի բանակը կարող է հիմնովին ջախջախվել, իր զորքով փախուստի է դիմում, իսկ հայկական բանակն առանց պարտվելու և Բշնամուն մահացու հարված տալու, ստիպված է լինում թողնել Թուխի ճակատամարտը, ետ է քաշվում և ամրանում Բագրեվանդում։

Հայկական բանակի ետ քաշումը Թուխի ճակատամարտից և Աբումրվանի դավաճանությունը լավ տպավորություն չեն թողնում երկրում և առաջ են բերում ներքին նոր խռովություններ։ Ատրպատականի ոստիկան Ափշինը, որը մի քանի անգամ փորձ էր արել գրավելու Հայաստանը, բայց հաջողություն չէր ունեցել և Դոդս ավանի ճակատամարտից հետո խոստացել էր այլևս Հայաստան չմտնել, սակայն, հաշվի առնելով հայ իշխանների խռովությունները ու դավաճանությունները, Ահմադի հարձակումները հարավից, դրժում է իր ուխտը, և կրկին անգամ փորձեր է կատարում գրավել Հայաստանը։

892 թվականին խալիֆ է դառնում Ահմեդ Աբուլ-Աբբաս էլ-Մուկտադիդը, որի ժամանակ (892—902) ֆեոդալիզմն Արաբիայում ավելի արագ քայլեր էր անում և նպաստում տեղական էմիրների ու փոխարքա կառավարիչների ինքնուրույն ձգտումներին։ Խալիֆաթի արքունիքը թույլ լինելով, խուսափում էր պատերազմներից ու ներքին երկպառակություններից։ Այդ պատճառով խալիֆը թույլ էր տալիս փոխարքաներին ու ոստիկաններին տեղերում ձեռք բերել ինքնավարություններ։ Այդպիսի ինքնավարության ձգտողներից էին նաև Հյուսիսային Միջագետքի ու Ասորիքի փոխարքա Ահմադը և Ատրպատականի Սաջյանների էմիրները, որոնք աշխատում էին Հայաստանը գործիք դարձնել իրենց ձեռքին, օգ-

տագործելով այդ երկրի ֆեոդալական ներքին երկպառակությունները։

Հայ խռովարար իշխաններից Գագիկ Աբումրվանն Ահմադից հետո աշխատում է մոտենալ նաև Սաջյան Ափշինին, վասպուրականում իրեն անկախ իշխան հռչակելու դիտավորությամբ, բայց շուտով սպանվում է Վասպուրականի իշխանների կողմից։ Այդ սպանությանը խառն էր նաև Բագրատունյաց թագավոր Սմբատ Առաջինը։

Աբումրվանի սպանությունից հետո Սևան բերդում բանտարկված Գագիկը, որ նախօրոք ազատվել էր, անմիջապես ազատել է տալիս իր երկու եղբայրներին Նկանի և Կոտուրի ամրոցներից, ապա երեքով միասին իրենց ձեռքն են վերցնում Վասպուրականի կառավարումը։ Սմբատ Առաջինը շատ զոհ է մնում Գագիկ Աբումրվանի սպանությունից, երեք եղբայրներին մատուցում է հարգանք ու պատիվ, տալով Աշոտին Վասպուրականի իշխանությունը, Գագիկին՝ Վասպուրականի զորքերի հրամանատարությունը, իսկ Գուրգենին՝ մարզպանությունը։ Դրանով միաժամանակ խաղաղվում է Վասպուրականը և դադարում են ֆեոդալական ներքին երկպառակությունները։

Երբ Սմբատն զբաղված էր Վասպուրականի և Տարոնի գործերով, ուխտադրուժ Ափշին ոստիկանը մեծ բանակով հարձակվել էր Ուտյաց և Գուգարաց նահանգների վրա, այդ վայրերի հայ, վրացի և աղվան իշխաններին իր կողմը գրավելու համար, սակայն հաջողություն չէր ունեցել։ Այդ նահանգներից ոստիկանի զորքը արշավում է դեպի Վանանդ գավառը, նպատակ ունենալով հարձակվել թագավորի վրա, որին այդ ընթացքում լքել էին մի շարք հայ իշխաններ, հաղթել ու գերի վերցնել նրան և դրանով էլ վերջ տալ Բագրատունյաց թագավորությանը Հայաստանում։ Սմբատը հաշվի առնելով թշնամու մեծ ուժը, իր ընտանիքն արքունի գանձերով և մի գունդ կայազորով թողնում է Կարսի բերդում. Գնդունյան Հասան զորավարի գլխավորությամբ, որն այդ ժամանակ վարում էր արքունի տան հազարապետի պաշտոնը, իսկ ինքը բանակի մեծ մասով շարժվում է դեպի Տայք՝

ամուր վայրերը, սպասելով քաղաքական նպաստավոր պայմաններին։

Ափշին ոստիկանն երկար ժամանակ պաշարում է Կարսի բերդը։ Հասան բերդապահը տեսնելով, որ քիչ զորքերով և ուտելիքի պաշարի բացակայության պատճառով, հնարավոր չէ բերդի երկար պաշտպանությունը, մանավանդ որ թշնամու անընդհատ հարձակումներն անհանդիստ էին անում հայ բերդապահներին, 896 թվականին ստիպված պայմանագիր է կնքում և անձնատուր լինում։ Պայմանագրում նշված էր, որ բերդում եղածները բոլորն էլ անխոչոր ազատ պետք է արձակվեն։ Կարսի բերդի անկումից հետո, նենգավոր թշնամին բերդի բնակիչներին ու բերդապահներին ազատ է արձակում, բայց թագուհուն, թագավորահարսին, իշխանուհիներին, Հասան Գնդունուն և արքունի գանձերը իր հետ Դվին է տանում, ապա վախենալով, Դվինից տեղափոխվում է Պարտավ քաղաքը։

Սմբատը Կարսի ծանր դրության լուրը առնելով, Տայքից շտապ գալիս է օգնության, բայց արդեն ուշացած։ Սմբատը ստիպված է լինում բանակով հաստատվել Երասխաձորում, Կաղզվանի բերդում և այնտեղից դեսպանների միջոցով բանակցություններ է սկսում Ափշին ոստիկանի հետ։ Այդ բանակցությունները վերջանում են նրանով, որ Բագրատունյաց թագավորը պարտավորվում է մեծ որդի Աշոտին, իր եղբայր Սահակի որդի Սմբատին պատանդ տալ, իսկ եղբոր՝ սպարապետ Շապուհի աղջկան, որպես կին ուղարկել Ափշինի հարեմը։

Հայաստանի թագավորը նենգավոր թշնամու հետ նման պայմանագիր է կնքում այն պատճառով, որովհետև հույս չուներ, որ կարող էր կազմել հայ իշխանների միաբանությունը և միացյալ ուժերով հակահարված տալ թշնամուն։ Նրան ամենից լավ օգնում և օժանդակում էր վրաց Ատրներսեհ իշխանը, սակայն այդ ուժը դեռ այնքան մեծ չէր ոստիկանին հաղթելու համար։ Սպարապետ Շապուհը պատանդներին և իր աղջկան, համաձայն կնքած պայմանագրի, տանում է Պարտավ՝ Ափշինին, որը վերջինի կողմից լավ ընդունելություն է գտնում։ Ոստիկանը ազատ է արձակում գերիներին,

շքեղ հարսանիք է կատարում։ Այսպիսով, Ափշինի երկրորդ արշավանքը դեպի Հայաստան վերջանում է մանանակի՝ հաղթանակով։ Քաղաքական այս դեպքերը տեղի էին ունեցել 896—897 թվականներին։

Ափշինը թեև Սմբատի հետ զինադադար էր կնքել, բայց Ատրպատական վերադառնալուց հետո, նորից շարունակում է իր դավերը Հայաստանի դեմ։ Նա հերթականությամբ իր մոտ էր կանչում Արծրունյաց Գրիգոր Դերենիկի երեք որդիներին, նրանց իրար հետ գժտեցնելու և Բագրատունյաց թագավորության դեմ դուրս բերելու դիտավորությամբ։ Բայց անհաջողության է մատնվում և ստիպված նրանց դեմ զորք է ուղարկում, որպեսզի զենքի ուժով ստիպի Արծրունյաց զարմերին՝ դուրս գան Բագրատունյաց թագավորի դեմ։ Սակայն Ափշինի այս ձեռնարկումը նույնպես ձախողվում է, որովհետև նրա զորքը հանդիպում է ժողովրդի ուժեղ դիմադրությանը և չի կարողանում որևէ վնաս պատճառել Վասպուրականին։ Թշնամին ստիպված երկրի այդ մասից զորքերը ետ է քաշում։

Ատրպատականի արաբ ոստիկանի հետ կնքած պայմանագրից դժգոհ էր ինքը Սմբատ Ա-ը, որովհետև այդ պատիվ չէր բերում երկրին։ Նա հյուսիսային կողմից իր թիկունքն ավելի ամրապնդելու և հայ-վրացական ռազմական ուժերն էլ ավելի համախմբելու համար վրաց Ատրներսեհ իշխանապետին, որ դժվարին մոմենտներին օգնել էր իրեն, 899 թ. թագ տալով, հռչակում է թագավոր։ Այդ ակտով իրավական տեսակետից, վերջնականապես ձևակերպվում է նաև վրաց Բագրատունյաց թագավորությունը, մի իշխանություն, որ վաղուց էր հաստատվել Վրաստանում։

Սմբատ Առաջինի կողմից Ատրներսեհին թագ տալը մեծ պայրույթ է առաջ բերում մի քանի հայ իշխանների մեջ, որոնք պահանջում են, որ իրենց ևս թագի պատիվ շնորհվի, բայց մերժում ստանալուց հետո Ափշինի միջոցով դավադրություն են կազմակերպում Սմբատի դեմ, մանավանդ որ Ատրներսեհին թագավոր հռչակելը ոստիկանի կամքով չէր և նա դեմ էր Ատրներսեհ իշխանին նման իրավունքի շնորհմանը։ Ուստի Ափշին ոստիկանն օգտվելով հայ իշխանների խոռ-

վություններից, նորից խախտում է զինադադարը և մեծ բանակով հարձակվում է Անդրկովկասի և հատկապես Թբիլիսիի վրա, նպատակ ունենալով պատժել Ատրներսեհ թագավորին, որ առանց իր գիտության թագ էր ստացել Սմբատ Ա-ից: Նա սկզբում արշավում է դեպի Թբիլիսի, ապա ճանապարհը փոխելով՝ հանկարծակի հարձակվում է Հայաստանի վրա և մտնում Շիրակ գավառը, նպատակ ունենալով գերի վերցնել Սմբատին: Բայց վերջինս, իր սովորության համաձայն, ապաստանում է Տայքի անառիկ վայրերում և ուր մեծ թվով զորք է հավաքում: Նենգավոր թշնամին երկյուղ կրելով դրանից, դեսպանություն է ուղարկում նրա մոտ, առաջարկելով հաստատել բարեկամական հարաբերություններ ու նոր զինադադար, որի համար իր որդի Դևստաին էլ ուղարկում է որպես պատանդ: Ապա իր ներքինապետին զորքով թողնում է Հայաստանում, ինքը 899 թվականին վերադառնում է Ատրպատական, ավելի մեծ բանակով վերադառնալու դիտավորությամբ: Դրանով էլ վերջանում է Ափշինի երրորդ արշավանքը, որը նույնպես հաջողություն չի ունենում: Հայաստանում մնացած ներքինապետը տեսակցություն է ունենում Սմբատ Առաջինի հետ Անիում, դավաճանում է ոստիկանին ու անցնում հայոց թագավորի կողմը, իսկ Ափշինն էլ չկարողանալով հավաքել անհրաժեշտ քանակությամբ նոր ուժեր, ստիպված է լինում հաշտվել եղած վիճակի հետ և փոխանակել գերիներին ու պատանդներին: Այդ նոր պայմանով թագաժառանգ Աշոտը և Մուշեղի կինը, որ եգերացոց թագավորի աղջիկն էր, ազատվում են պատանդությունից: Չնայած դրան, այնուամենայնիվ, 899 թվականի աշնանն Ափշին ոստիկանը Հայաստանին տիրելու, երկիրն արյունով ողողելու, դավաճան ներքինապետին պատժելու և Հայաստանի թագավորին գերի վերցնելու նպատակով, պատրաստվում է նոր և ավելի մեծ բանակով հարձակվել Հայաստանի վրա: Բայց նրա բանակում շուտով ժանտախտ հիվանդություն է տարածվում, մի շարք զինվորների հետ ինքն էլ է մահանում, այդպիսով Հայաստանը ազատվում է այդ արյունարբու թշնամու նոր հարձակումներից:

Ափշին ոստիկանին հաջորդում է նրա եղբայր Յուսուֆը

(899), որը ավելի դաժան էր, քան եղբայրը: Բայց նա իր դիրքերը թույլ համարելով, միաժամանակ հանգիստ չթողնում Հայաստանը, միայն բավարարվում է հայ իշխանների մեջ ինտրիգներ սերմանելով:

Հայկական պետությանց ամրապնդումը

Ափշինի վերջին արշավանքի ժամանակ, ֆեոդալական ներքին կռիվների հետևանքով, Վասպուրականի իշխանների հետ թշնամացել էր ուրացող Հասան Արծրունին և ամրացել Սևանի (Վասպուրականում) բերդում: Նա կապված լինելով Ափշին ոստիկանի հետ, միշտ վերջինին դրդում էր յուրայինների դեմ: 899 թվականի վերջին Հասան Արծրունին մի զորագնդով շարժվում է դեպի Պղվանք գյուղը, Աշոտ Արծրունուն բռնելու նպատակով, բայց ինքն է ընկնում իր հակառակորդի ձեռքը: Աշոտ իշխանը այդ համարելով հարմար առիթ, հարձակվում է Հասանի Սևան ամրոցի վրա և պաշարում այն, պահանջելով բերդապահներից հանձնել ամրոցը, խոստանալով ազատ արձակել Հասան իշխանին: Արծրունյաց իշխանների ֆեոդալական այս ներքին կռիվներին վերջ տալու համար, Սմբատ թագավորը Վասպուրական է ուղարկում Հովհաննես կաթողիկոսին (897—929): Նրա միջնորդությամբ Սևանի բերդապահները թեև վայր են դնում զենքը և անձնատուր լինում, սակայն Աշոտը Հասան իշխանին չի ազատում և միայն կաթողիկոսի հանդիմանությունից հետո է արձակում, այն էլ կուրացնելուց հետո: Վերոհիշյալ հանդամանքները ցույց են տալիս, որ Հայաստանում տակավին ուժեղ էին կենտրոնախույս ներքին ուժերը և թույլ էր կենտրոնացած պետությունը, որի ամրապնդման համար շատ ջանքեր պիտի գործադրեին Բագրատունի թագավորները: Իսկ Վասպուրականի ֆեոդալական կռիվներն ոչ միայն խանգարում էին Հայաստանի խաղաղ կարգը, այլև ջլատում էին երկրի ռազմական ուժերը, վնաս պատճառում տնտեսությանը և նպաստում արտաքին ագրեսիային: Ֆեոդալական այդ անվերջ կռիվները հետևանք էին երկրի կենտրոնական իշխանության և ռազմական ուժերի թուլության:

8—9-րդ դարերում Հայաստանում հաստատված արաբական էմիրությունները, որոնց գլխավորները գտնվում էին

Դվինի շրջակայքում և Ապահունյաց գավառում, նույնպես ենթակա էին Բագրատունի թագավորներին։ Ապահունիքում իշխում էին Աբգուռահմանի որդիները, որոնք կայսիկ տոհմից էին։ Սրանք խրախուսվելով Ատրպատականի ոստիկանից, չէին ենթարկվում Բագրատունի թագավորներին և մշտապես թշնամություն էին ցուցաբերում հայերի նկատմամբ, իսկ հայ թագավորին էլ հարկ չէին վճարում։ Բագրատունյաց գահակալն օգտվելով Ափշինի մահվանից և նրա հաջորդ Յուսուֆ ոստիկանի թուլությունից, 902 թվականին Վասպուրականի Աշոտ Արծրունու, Գրիգոր Մոկացու և Ատոմ Անձևյաց իշխանների զորքերի օգնությամբ հարձակվում է Ապահունիքի վրա, ջարդում է կայսիկներին և ստիպում նրանց ոչ միայն ենթարկվել ու հարկ վճարել, այլև Հայոց թագավորին զիջել մի շարք գավառներ ու քաղաքներ։ Այդ հաղթանակից հետո, Սմբատ Առաջինի ժամանակ (890—914) Հայաստանի սահմանները նորից հարավից հասնում են մինչև Աղձնիք, այդպիսով Բագրատունյաց թագավորության սահմանները ձգվում էին Հյուսիսային Միջագետքից մինչև Վրաստան, Տայքից մինչև Ատրպատական։

Այն ժամանակ, երբ հայկական բանակը ջարդում էր արաբական էմիրություններին հարավում և միավորում էր երկրի հողերը, Սյունյաց Սմբատ իշխանը Յուսուֆի դրդումով, ընկնելով անհատական նեղ շահերի հետևից, ըմբոստանում է Սմբատ թագավորի դեմ և փորձում է դուրս գալ նրա գերիշխանությունից, դառնալ ինքնուրույն թագակիր իշխան և հարկ վճարել խալիֆաթին Ատրպատականի ոստիկանի միջոցով։ Այսպիսով, Հայաստանում առաջին անգամ լուրջ անջատողական ձգտումներ են առաջ բերում Սյունյաց իշխանները։ Այդ պատճառով Սմբատ թագավորն այս անգամ ստիպված է լինում իր բանակն ուղղել դեպի Սյունիք։ Սմբատ Սյունին իր զորքերով դուրս է գալիս թագավորական բանակի դեմ, բայց Աշոտ Արծրունու միջնորդությամբ նորից ենթարկվում է նրան և պարտավորվում հարկ վճարել։ Սակայն Սմբատ Առաջինի կողմից հովանավորյալ Աշոտ Արծրունի իշխանը երկար չի ապրում, նա հիվանդանում և 29 տարեկան հասակում մեռնում է Նախիջևանում 904 թվականին։ Դրանից հետո Սմբատ

տի համաձայնությամբ Վասպուրականի իշխանության գլուխ է կանգնում նրա եղբայր փառամոլ Գագիկը, որն իր փոքր եղբայր Գուրգենի հետ բաժանում է Արծրունյաց իշխանությունը, միաժամանակ ճանաչելով Բագրատունիների սուվերեն իրավունքը։ Այս դեպքերի ընթացքում Սմբատը կուրացնում է իր եղբայրներ՝ սպարապետ Շապուհին և Դավթին, որոնք աշխատում էին Յուսուֆ ոստիկանի թելադրությամբ՝ խռովություններ բարձրացնել Հայաստանում։ Նա սպարապետության պաշտոնը հանձնում է Շապուհի որդի Աշոտին, որը հետագայում հայտնի է դառնում «բռնավոր» անունով։ Ինչպես տեսնում ենք, ֆեոդալական ներքին կռիվները տեղի են ունենում նաև Բագրատունիների տոհմի ներսում։ Դա ֆեոդալիզմի զարգացման ու մասնատվածության արդյունք էր, որը սկսում է ավելի ուժեղանալ 10-րդ դարում։ Վերոհիշյալ ֆեոդալական ներքին կռիվները ոչ միայն թուլացնում էին կենտրոնական պետության դիրքերը Հայաստանում, այլև լուրջ վնաս պատճառում գյուղացիությանը։ Ֆեոդալական ներքին կռիվների հետևանքով թալանվում ու կողոպտվում էին գյուղացիները, իսկ երկրի էկոնոմիկան ստանում էր ծանր հարված։

Թեև Հայաստանը կառավարվում էր բնիկ թագավորներով, սակայն, ինչպես նշել ենք, նա հարկ էր վճարում խալիֆաթին, այն էլ Ատրպատականի ոստիկանության միջոցով։ Իսկ երբ ոստիկան է դառնում Յուսուֆը, Սմբատն օգտվելով նրա թուլությունից, աշխատում է իր կապը կտրել Ատրպատականի էմիրությունից և հարկն ուղղակի արքունիք ուղարկել։ Նա 899 թվականին մեծամեծ նվերներով դեսպանություն է ուղարկում Մուտադիդ բիլլահ (892—902) խալիֆի մոտ և պահանջում, որ այսուհետև Հայաստանի հարկն անմիջապես արքունի գանձարան գնա, որպեսզի ազատվի Ատրպատականի միջնորդ օղակից։ Խալիֆն ընդունում է Հայաստանի իրավացի պահանջը և նույն դեսպանության միջոցով էլ նվերներ, արքայական ոսկի թագ ու զգեստներ է ուղարկում Հայոց թագավորին։ Դրանով Հայոց արքունիքն առաջին լուրջ քայլն է անում՝ ազատվելու խալիֆաթի հարկատվությունից։ Բայց հայ Բագրատունիների վարած այս նոր քաղաքականությունը

խիստ զայրացնում է Յուսուֆ ոստիկանին, որովհետև Ատրպատականի արաբական էմիրները Հայաստանի հարկերից մեծ գումարներ էին հափշտակում ու հարստանում: Այդ պատճառով Յուսուֆը 899 թվականի խոր աշնանը ըմբոստանում է խալիֆաթի դեմ և բանակով հարձակվում է Հայաստանի վրա: Խալիֆը հրամայում է Սմբատին և մյուս հպատակներին, պատերազմի դուրս գալ ապստամբի դեմ: Յուսուֆն իր բանակը Փայտակարանի և Ուտիքի վրայով մղտցընում է Հայաստան և հասնում մինչև Դվինն ու Շիրակը: Սակայն հանդիպելով հայկական բանակի ու ժողովրդի լուրջ դիմադրությանը, ստիպված է լինում հաշտություն կնքել և վերադառնալ Ատրպատական: Դրանով էլ այս նոր ոստիկանի առաջին արշավանքը դեպի Հայաստան նույնպես մատնվում է անհաջողության, ինչպես որ անհաջողության էին մատնվել նրա նախորդ Ափշինի երեք (892, 896/97 և 899 թվականների) արշավանքները: Այնուհետև Յուսուֆը մոտ 10 տարի (899—909) հանգիստ է թողնում Հայաստանը, որովհետև Մուտադիդ բիլլահ խալիֆի հաջորդ Մուկդաֆի բիլլահը (902—908) շարունակում է իր հոր քաղաքականությունը. վատ էր տրամադրված դեպի Ատրպատականի ոստիկանությունը: Հայաստանի խաղաղությունը չի վրդովում, երկիրը շարունակում է տնտեսապես զարգանալ:

Այդ ընթացքում, ինչպես նշել ենք, Սմբատ Առաջինը զբաղվում է երկրի ներքին գործերով, այսինքն՝ Հասանի և Աշոտի, կայսիկների ու Սմբատ Սյունիի միջև տեղի ունեցած դեպքերով, և նրա իշխանությունը ավելի է ընդարձակվում ու ամրապնդվում, իր մեջ ընդգրկելով համարյա ամբողջ Հայաստանը, իր մի շարք վասալ թագավորներով ու իշխաններով: Նա միաժամանակ որոշ չափով կարգավորում է պետական ապարատը, վարչական-կառավարման կարգը, հարկատվությունը և իշխանների ու թագավորի վասալական փոխհարաբերությունները, տևական դարձնելու հայ ֆեոդալական միությունը:

Սմբատ Առաջինի իշխանության սկզբնական շրջանը համեմատաբար խաղաղ է անցնում: Զարգանում է երկրի

տնտեսական կյանքը, հատկապես երկրագործությունն ու անասնապահությունը: Աշխուժանում են քաղաքները, առևտուրն ու արհեստները, ինչպես ժամանակակից պատմագիր Հովհաննես Դրասխանակերտցին է վկայում[1], որոշ չափով բարգավաճում է երկիրը և Հայաստանը 10-րդ դարի առաջին տասնամյակում ապրում է տնտեսական վերելքի ժամանակաշրջան:

Ներքին խռովությունները Հայաստանում և Վասպուրականի թագավորության հիմնումը

Բագրատունիների արքունիքը, երկրի ներքին գործերը կարգավորելուն զուգընթաց, բարեկամական և խաղաղասիրական քաղաքականություն էր վարում Բյուզանդիայի և խալիֆաթի հետ: Նա Լևոն Վեցերորդ կայսրի հետ հաստատում է քաղաքական և առևտրական հարաբերություններ: 908 թվականին Մուկդաֆի բիլլահ խալիֆին հաջորդում է Մուկտադիրը, որի ժամանակ խալիֆաթի վերաբերմունքը փոխվում է Հայաստանի նկատմամբ, այդ պատճառով Յուսուֆը կարողանում է համոզել Բաղդադի արքունիքին, թե Հայաստանի թագավորին ինքնագլուխ թողնելը կարող է վտանգ սպառնալ խալիֆաթին: Այդ եղանակով նա ոչ միայն ազատվում է երեք տարվա բանտարկությունից, այլև վերականգնում է նախկին կարգը, այսինքն՝ Հայաստանի հարկը նորից Ատրպատականի ոստիկանի միջոցով ուղարկվի արքունի գանձարանը: Իսկ Սմբատ թագավորը դրանից առաջ, ավելի քան հինգ տարի, հարկ չէր վճարել խալիֆաթին: Այդպիսով, 909 թվականին, Յուսուֆը իր ձեռքերը ազատ է արձակում դեպի Հայաստան:

Այդ ժամանակ որոշ սառնություն ու տարաձայնություններ էին առաջացել Սմբատ Առաջինի և Աբուսերսեհ թագավորի միջև եգերացոց Կոստանդին թագավորի հետ ունեցած հողային վեճերի պատճառով: Այդ հանգամանքը չէր բխում երկու ժողովուրդների տնտեսական և քաղաքական պահանջներից, դրանով նրանք ջլատում էին երկու երկրների ուժերը և նպաստավոր պայմաններ են ստեղծում Յուսուֆի համար, որը փորձում էր Հայաստանը իրեն ենթարկել: Իսկ հայ իշխանների մի մասն էլ փոխանակ համախմբվելու և թշնա-

1 Հովհաննես կաթողիկոս, էջ 198—199:

մու դեմ կռվելու, իրենց անձնական շահերը նկատի ունենալով, սկսում են մոտիկություն ցուցաբերել Ատրպատականի ոստիկանի նկատմամբ: Իշխաններն ավելի են զայրանում ու հուզվում թագավորի նկատմամբ, երբ խալիֆը չվճարված հարկերի համար կրկնապատկում է երկրի հարկը:

Սմբատ Առաջինը խուսափելով նոր կռիվներից, ստիպված է լինում համաձայնվել խալիֆաթի հարկը տալ և հրամայում է երկրի բոլոր իշխաններին, որ տասանորդը կրկնապատիկ վճարեն: Այդ նոր հրամանից իշխանները խիստ դժգոհում են և որոշում մնջտեղից վերացնել Սմբատ Առաջինին, որպեսզի Յուսուֆի թշնամությունը վերանա: Դավադրության խորհրդի գլուխն է անցնում Հասան իշխանը, որը թագավորական տերության հրամանատարն ու իշխանն էր: Այս դեպքը երկրում առաջ է բերում զայրույթ: Թագավորի կողմնակիցները ժողովրդի օգնությամբ հարձակվում են դավադիրների վրա, հաղթում ու ձերբակալում նրանց: Սմբատ թագավորը դավադիրներից մի քանիսին պատժում, մի մասին էլ աքսորում է:

Սմբատ Առաջինը ներքին դավադրությունը ճնշելուց հետո, հույս ուներ, որ արտաքին թշնամիները այլևս Հայաստանի վրա չեն հարձակվի: Բայց Արծրունյաց Գագիկ իշխանը հետամուտ լինելով ֆեոդալական կենտրոնախույս ձգտումներին, աշխատում էր Վասպուրականում ստեղծել ինքնուրույն ֆեոդալական անջատ թագավորություն: Այդպիսով, Վասպուրականի իշխանը նոր դժգոհություններ է առաջացնում Հայաստանում: Նախիջևանի շրջանը, որ գտնվում էր Վասպուրականի ու Սյունիքի սահմանների վրա, դարձել էր կռվախնձոր Արծրունյաց և Սյունյաց ֆեոդալական իշխանությունների միջև: Այդ վեճերին միջամտում է Սմբատը: Նա Նախիջևանը և նրա շրջակայքը թագավորական հրամանով հանձնում է Սյունյաց Սահակ իշխանին, խոստանալով Գագիկ Արծրունուն բավարարել ուրիշ կալվածներով, սակայն իր խոստումը չի կատարում, որը, անշուշտ, անզգույշ քայլ էր Սմբատի կողմից: Այդ պատճառով փառամոլ Գագիկը լքում ու դավաճանում է երկրի միաբանությանը և 908 թվականին դիմում է Յուսուֆին: Հայաստանի այդ ոխերիմ թշնամին վաղուց էր

սպասում նման հարմար առիթի, հայ ռազմական ուժերը ջլատելու և առանձին-առանձին ջարդելու համար: Նենգավոր թշնամին անմիջապես բավարարում է Գագիկ Արծրունու պահանջը և թագ է շնորհում նրան ու հռչակում Վասպուրականի թագավոր և մեծամեծ նվերներ տալով վերադարձնում է իր երկիրը: Այդպիսով, 908 թ. հիմք է դրվում Վասպուրականի Արծրունյաց թագավորությանը:

Ֆեոդալիզմի զարգացման հետևանքով ուժեղանում էին ֆեոդալական տները Հայաստանում և ձգտում տեղերում ստեղծել ինքնուրույն, անջատ-անջատ ֆեոդալական թագավորություններ: Այդ ձգտումներից մեկը հանդիսանում է Արծրունյաց թագավորության հիմնումը: Այդ միջոցներով խալիֆաթը և նրա ոստիկանները ձգտում էին էլ ավելի խորացնել հայ ֆեոդալների դժգոհությունները թագավորի դեմ և խափանել Հայաստանի միավորումը Բագրատունիների գլխավորությամբ:

Թովմա Արծրունին աշխատում է արդարացնել Գագիկին, որ Սմբատը Գագիկի նկատմամբ ճիշտ չի վարվել: Պետք է ընդունել, որ իրոք Սմբատի վարած քաղաքականությունը Գագիկի նկատմամբ եղել է անզգույշ, մանավանդ չբավարարելով նրան խոստացած հողերով, սակայն այդ չի արդարացնում Արծրունյաց իշխանին, բռնել դավաճանության ուղին, ջլատել երկրի ռազմական ուժերը և հնարավորություն տալ ագրեսորին Հայաստանի վրա հարձակվելու: Արծրունյաց տոհմը, որ շարունակ հետամուտ էր արքայական թագին, վերջապես հասնում է իր նպատակին: Գագիկ իշխանը (908—937) Արծրունյաց տեղական նշանակություն ունեցող նոր թագավորության հիմնադիրը հանդիսանալով, միաժամանակ երկրի քաղաքական ֆեոդալական մասնատվածության հիմք է դնում: Այսպիսով, Հայաստանում ստեղծվում է երկու թագավորություն՝ Բագրատունյաց և Արծրունյաց: Իսկ Գագիկ Արծրունու դավաճանությունից հետո Սյունյաց, Սիսականի, Մոկաց և Անձևյաց իշխանների միջև նույնպես սկսվել էին ֆեոդալական ներքին կռիվներ, որոնք իրենց հերթին ավելի էին թուլացնում երկրի ռազմական ուժերը և ճանապարհ հարթում արտաքին նվաճողի համար:

Յուսուֆի հարձակումները Հայաստանի վրա

Յուսուֆ ոստիկանն օգտագործելով Գագիկ Արծրունու դավաճանությունը, հայ իշխանների ներքին խռովությունները, 909 թվականին, երկրորդ անգամ, ավելի մեծ բանակով, հարձակվում է Հայաստանի վրա: Սմբատը փորձում է Հովհաննես 6-րդ կաթողիկոսի միջնորդությամբ մեծամեծ նվերներով կանխել Բշնամու հարձակումը և վերականգնել զինադադարը: Յուսուֆն լսդունում է նվերներն ու խոստանում չմտնել Հայաստան: Բայց շուտով դրժում է իր ուխտը և Գագիկ Արծրունուն առաջ գցած, մտնում է Հայաստան: Կաթողիկոսը նորից նվերներով ներկայանում է նրան, Յուսուֆը նվերները վերցնում է, կաթողիկոսին բանտարկում ու բանակն ուղղում է դեպի Սյունիք՝ այնտեղի իշխաններին պատժելու համար, որոնք հավատարիմ էին մնացել Բագրատունյաց թագավորին: Սյունյաց Սմբատ իշխանը չդիմանալով Բշնամու մեծ ուժին, ընտանիքը թողնում է Երնջակի ամուր բերդում, ինքը անցնում Վասպուրական: Սյունիքի պաշտպանության համար տեղում մնում են Բաբկենը, Վասակը և Գրիգոր Սուփանը իրենց զորքերով, որոնք նույնպես չեն կարողանում դիմադրել: Իշխանների անմիաբանության հետևանքով ժողովուրդը չի կարողանում ավելի ակտիվ կերպով պաշտպանել հայրենի երկիրը, այդ պատճառով Սյունիքը գրավում է Բշնամին, քանդում գյուղերն ու ավանները, կոտորում ու գերեվարում բնակչության մի մասին: Այնուհետև Յուսուֆը հաստատվում է Դվինում և իր հրոսակներով ասպատակում երկրի կենտրոնական գավառները: Գրիգոր Սուփանը նեղն ընկնելով անձնատուր է լինում Բշնամուն, որը դիտավորյալ կերպով ազատ է արձակում նրան: Գրիգոր Սուփանի օրինակին է հետևում նաև Վասակ Սյունին, բայց սրան անմիջապես բանտարկել է տալիս: Յուսուֆը Հայաստանից անվերջ հարկեր էր պահանջում, չնայած, որ 60 հազար դահեկան (180000 ոսկի ռուբլի) արդեն վերցրել էր: Այդ ժամանակ Հովհաննես կաթողիկոսը Դվինում դեռևս բանտարկված էր, ոստիկանը նրան ազատ արձակելու համար միշտ փրկագին էր պահանջում և միայն բաց է թողնում այն պայմանով, որ նա շրջի երկրի գավառները, հավաքել տա հարկերը և մուծի Յուսուֆի գանձարանը: Այդ ճանապարհով կաթողիկոսը մի կերպ ազատվում է նենգավոր Բշնամու ճիրաններից ու գնում Դուգարքի կողմերը:

910 թվականին անձնատուր եղած իշխանների թվումն էր նաև Բագրատունի Աշոտ սպարապետը, Սմբատի եղբոր որդին, որը իբրև թե աշխատում էր սիրաշահել Բշնամուն, որպեսզի նա երկիրը քարուքանդ չանի և ժողովրդին չկոտորի: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ նա Գագիկ Արծրունու պես դավաճանել էր թագավորին և անցել Բշնամու կողմը, մեծ հույս ունենալով, որ այդ ճանապարհով կարող է ձեռք բերել Բագրատունյաց գահը: Յուսուֆի կեղեքումների հետևանքով ժողովուրդը գտնվում էր ծանր վիճակում և ցաք ու ցրիվ պայքարում էր Բշնամու գերազանց ուժերի դեմ, իսկ իշխաններից շատերը փոխանակ պատերազմի դաշտում կրելու, անձնատուր էին լինում Բշնամուն: Յուսուֆը երկրի ֆեոդալական կազմի ղգալի մասին իր ցանցի մեջ վերցնելով, սկզբնական շրջանում աշխատում է սիրաշահել հայ իշխանների փառասիրությունը, մինչև որ ձեռք է բերում նրանց դանձերը, բերդերը և գաղտնիքները, իսկ վերջում սկսում է խիստ վարվել նաև այդ իշխանների հետ:

Ծանր հարկերի գանձումը, երկրի կենտրոնական գավառների և Սյունիքի ավերումը ոտքի են հանում ժողովրդին և երկրի տարբեր գավառներում ուժեղ պայքար է ծավալվում արաբական հրոսակների դեմ: Յուսուֆը, Գագիկ Արծրունու և Աշոտ սպարապետի զորքերի օգնությամբ, արդեն Դվինից շարժվում էր դեպի հյուսիս, Սմբատի թագավորական զորքերին և ժողովրդին վերջնական հարված տալու համար: Հայկական բանակը, որ բաղկացած էր չորս զորամասերից, թագավորի որդիներ՝ Աշոտի և Մուշեղի հրամանատարության տակ հյուսիսից շարժվելով դեպի հարավ, Նիգ (Ապարանի) գավառի Զկնավաճառ վայրում հանդիպում է Բշնամու բանակին և տալիս է կատաղի ճակատամարտ ու լուրջ հարված հասցնում նրան: Բայց կռվի վճռական պահին, հայկական բանակում գտնվող Սևորդիների (ոստիկանների) գունդը դավաճանելով, դուրս է գալիս կռվի դաշտից և դիմում փախուստի: Դրա հետևանքով հայկական բանակում

իր որդի Աշոտին ուղարկում է դեպի հյուսիս՝ օգնության դիմելու Վրաստանին և կաղմակերպի Գուգարքի ուժերը, ապա լուր է ուղարկում երկրի մյուս իշխաններին ու ժողովրդին՝ բոլորից օգնություն է խնդրում: Բայց երկրում ստեղծված երկպառակությունները գնալով խորանում են և Սմբատի գործադրած բոլոր ջանքերը՝ հայ ռազմական ուժերի համախմբման գործում, անցնում են ապարդյուն: Այդ մասին ժամանակակից պատմագիր Հովհաննես կաթողիկոսը գրում է.

«Եւ ոմանք ի հարկէ, և այլք ոմանք առանց հարկի պատճառանաց՝ մերձաւորք և հեռաւորք յաւէտ հեռի եղեն ի նմանէ արդեամբք և խորհրդեամբք, և ծանեան զօտարս քան զնա: Եւ զորս նոյն սիրէր բարեկամութեամբ՝ քեցեալ ի բաց բերան ի նմանէ, խառնեալք ընդ Թշնամիսն»[1]:

(«Եվ ոմանք սոխակված, իսկ մի մասն էլ առանց որևէ պատճառի, թե մերձավորները և թե հեռավորները մշտապես հեռու կանգնեցին նրանից թե գործով և թե մտքով ու ավելի օտարներին ճանաչեցին քան նրան: Նվ որոնց նա բարեկամությամբ սիրում էր, հեռացած նրանից՝ միացան նրա Թշնամիների հետ»):

Այսպես, Սմբատին չի հաջողվում համախմբել երկրի ռազմական բոլոր ուժերը: Յուսուֆը տեսնելով, որ Սմբատը չի կարողանում անհրաժեշտ քանակությամբ զորք հավաքել, 913 թվականին վաղ գարնանը հարձակվում է նրա բանակի վրա, որը տեղի տալով, ամրանում է Կապույտ բերդում (Հին Արտագերս): Թշնամին պաշարում է այն, սկսվում են կատաղի կռիվներ: Հայ ռազմիկներն, ոգևորված թագավորի առնական ձայնով, քաջի նման կռվում են ու բերդի պարիսպների տակ մեծ ջարդ են տալիս Թշնամուն: Հատկապես լավ են կռվում աշխարհազորականները: Բերդը մնում է կանգուն: Յուսուֆ ոստիկանը շփոթվում է այս կատաղի դիմադրությունից ու կրած զոհերից և դիմում է մի նոր խորամանկության: Նա իր կողմում գտնվող հայ զորքերին և բնակիչներին հավաքում և դասավորում է ճակատի առաջին գծի վրա, թաքցնելով իր հրոսակները հայերի թիկունքում, բայց դրանով դրությունը չի փոխվում, հայերի անվրեպ նետերը ռազմաճակատի թիկունքում նույնպես գետին էին գլորում Թշնամու զինվորներին: Այդ պատճառով Յուսուֆը ստիպված է լինում դիմել բերդի երկարատև պաշարմանը: Հայկական զորքը մոտ մի տարի կապույտ բերդում թագավորի հետ մնում է պաշարման մեջ, բայց թագավորը հաշվի առնելով, որ փաստորեն հայերը կըռվում են հայերի դեմ և այդ պատճառով շատ անմեղ մարդիկ են զոհ գնում, միաժամանակ նեղվելով սովից, բանակցությունների մեջ է մտնում Թշնամու հետ՝ անձնատուր լինելու համար, պայմանով, որ բերդապահներն ու ինքը ազատ արձակվեն: Թշնամին համաձայնվում է: Բերդն անձնատուր է լինում: Այդպիսով, Կապույտ բերդը մի տարի հերոսական դիմադրություն ցույց տալուց հետո ընկնում է Թշնամու ձեռքը:

Կապույտ բերդի անկումից հետո Գագիկ Արծրունին տեսնելով, որ իր գործը նույնպես վատ պիտի վերջանա, իր զորամասով զաղտնի փախչում է Վասպուրական ու Թշնամական դիրք բռնում Յուսուֆի հանդեպ: Ոստիկանը կասկածելով, որ Գագիկի փախուստը Սմբատ թագավորի հետ միաբանելու հետևանք կարող է լինել, երդմնազանց է լինում և, թագավորը դեռ Շիրակ չհասած, կարգադրում է ձերբակալել և բանտարկել նրան Դվինի զնդանում: Այնուհետև Թշնամին անխնա կողոպտում է Կապույտ բերդը, շատ մարդ կոտորում և տեր դառնում Հայաստանի մի մասին:

Երնջակի բերդը այդ ժամանակ դեռ կանգուն էր մնացել, ուր ապավինել էին մի շարք ազնվականներ իրենց զորքերով ու ընտանիքներով: Այդ բերդի պաշտպանները երբեմն վայր էին իջնում և հարձակվում այժմյան Նախիջևան-Ջուլֆա ճանապարհով դեպի Ատրպատական գնացող Յուսուֆի քարավանների վրա և մեծ վնաս հասցնում Թշնամուն, որոնք իրենց հետ տանում էին Հայաստանի կողոպուտը, ավարը ու գերիները: Այդ պատճառով Յուսուֆը երկրի կենտրոնական գավառները կողոպտելուց հետո, շարժվում է դեպի այդ բերդը, իր հետ տանելով նաև շղթայակապ Սմբատ թագավորին, որին մոտ մեկ տարի տանջել էին Դվինի զնդանում: Գազազած Թշնամին շղթայված թագավորին հանձնում է իր դահիճներին չարչարելու, որպեսզի բերդապահներն ընկճվեն և անձնատուր լինեն: Ինչքան որ դահիճները չարչարում էին արի

[1] Հովհաննես կաթողիկոս, էջ 234:

թագավորին, այնքան բերդապահներն իրենց հայրենիքի սիրուն ավելի ոգևորված էին կռվում ու ջարդում թշնամու հրոսակներին, իսկ թագավորն իր արիությամբ քաջություն էր ներշնչում կռվողներին: Կատաղած թշնամին Սմբատ թագավորին չարչարելուց՝ լեզուն, ոտքերը, ձեռքերը կտրելուց, աքցաններով մսերը պոկելուց հետո գլխատում և դիակը խաչել է տալիս Դվինի պարսպից ու թույլ չի տալիս որ թաղեն: Այսպես է վերջանում Սմբատ թագավորի կյանքը, որի իշխանության 24 տարիները անցնում են պատերազմների մեջ և այդ պատերազմների հետևանքով հայ Արշակունիների թագավորության շրջանի հայկական հողերն Սմբատն ընդգրկում է իր պետության սահմանների մեջ: Հայաստանի սահմաններից դուրս է քշում բազմաթիվ արաբ էմիրների և զարկ է տալիս երկրի անտեսական ու ռազմական կյանքին, բայց հանդիպելով ֆեոդալական իշխանությունների կենտրոնախույս ուժերի ձգտումներին, ընկնում է պայքարի ընթացքում:

Սմբատ թագավորի մահով երնջակի բերդը անմիջապես չի ընկնում: Նրա հերոս պաշտպանները հանուն իրենց հայրենիքի ազատության, արիացած՝ վրեժ էին լուծում թշնամու զորքերից: Թշնամին էլ ավելի է ուժեղացնում բերդի պաշարումը և զոհերի մեծ գնով, գիշերը, գաղտագողի մտնում է բերդը և գրավում այն: Բնակիչների մեծ մասին անխնա կոտորում է, մնում են միայն մի քանի իշխանների կանայք, նրանց էլ գերի տանելով, բանտարկում է Դվինում: Ասողիկն ասելով Սմբատի մահվանից և երնջակի բերդի անկումից հետո, երկիրը 7 տարի մնում է անիշխանության մեջ. «անիշխան լեալ երկիրս ամս եօթն»[1]: Այդ անիշխանությունը պետք է հաշվել 915—922 թվականների ժամանակաշրջանը, որովհետև Կապույտ բերդի անկումը և Սմբատ թագավորի մահը Երնջակի բերդի պարիսպների տակ տեղի է ունեցել 914 թ. վերջերին:

Սմբատի մահվանից հետո Յուսուֆ ոստիկանը տիրում է Հայաստանի զգալի մասին: Հայ իշխանների մի մասն իր փոքրիկ զինվորական գնդերով թափառական կյանք է վարում երկրի անառիկ վայրերում, բերդերում ու ամրոցներում և

1 Ասողիկ, էջ 169:

երբեմն էլ դիմադրում էր Թշնամուն, իսկ մի մասն էլ փտում էր Դվինի զնդանում կամ թև սողում Թշնամու ոտքերի տակ, ինչպիսին էր Աշոտ սպարապետը: Իսկ հակառակորդի հրոսակները տարածվել էին երկրով մեկ, ասպատակում էին գյուղերն ու քաղաքները, անխնա կոտորում էին անպաշտպան ժողովրդին, որի մի մասը նույնպես ստիպված էր ամրանալ երկրի անառիկ վայրերում: Թշնամու թալանի ու ավերման հետևանքով երկրի տնտեսական կյանքը համարյա կանգ է առնում, քայքայվում են արդյունագործությունը, առևտուրը, գյուղատնտեսությունը և գյուղերի ու քաղաքների զգալի մասը դառնում են ավերակ ու անմարդաբնակ, ինչպես ասում է Հովհաննես պատմագիրը. «...Իբրև զերկիր, որ ոչ անց մարդ ընդ նա և ոչ բնակեցաւ ի նմա որդի մարդոյ՝ այնպէս զապատան անապատ առնէին»[1]: Իր հերթին Ասողիկը գրում է. «Յորում ժամանակի անապատ և աւերակ եղև երկիրս Հայոց. քաղաքաց քակիլ և աւանաց աւերիլ, ցիր և ցան յայլալեզուս և յօտար ազգս բնակիչաց աշխարհիս»[2]: Յուսուֆը թեև այդ 7 տարիների ընթացքում չի մնում Հայաստանում, բայց նա իր տեղակալների ու զորավարների միջոցով շարունակում էր երկրի ավերումը, որի հետևանքով 917—918 թվականներին տեղի է ունենում մեծ սով, որը մարդկային մեծ զոհեր է տանում:

Վերոհիշյալ ծանր աղետը Հայաստանում ժողովրդի մեջ առաջ է բերում խորը դժգոհություն: Երկրի տարբեր մասերում ժողովրդից կազմակերպվում են կռվող ջոկատներ՝ Թշնամու դեմ պայքարելու և միաժամանակ ստիպելու իշխաններին, որ նրանք ևս դուրս գան պաշտպանեն հայրենիքը: Ժողովրդական մասսաների հերոսական դիմադրությունը Թշնամուն պայքարի է կոչում Սմբատ թագավորի մեծ որդի Թագաժառանգ Աշոտին:

1 Հովհաննես կաթ., էջ 257:
2 Ասողիկ, էջ 168:

Աշոտ Երկրորդը արաբական զորքերի ժամանակավորապես դուրս մղումը Հայաստանից

Սմբատ Առաջինի ավագ որդի Աշոտը, որ գտնվում էր Գուգարքի կողմերում, ըստ Ասողիկի «Քաջապինդ արիութեան իւրոյ երկաթ անուանեցաւ»[1] երը լսում է հոր եղեռնական մահը և երկրի ծանր վիճակը, անմիջապես քաջ կռվողներից կազմում է մի զորամաս՝ իր եղբայր Աբասի հետ, ապա հարձակվում է Շիրակի վրա և ջարդ ու փշուր անում այնտեղ գտնված արաբական կայազորին։ Դրանից հետո արագ կերպով հարձակվում է Բագրեւանդ գավառում գտնվող արաբական մի ուրիշ զորագնդի վրա և հիմնովին ջարդում ու ցրում է, իսկ նրա հրամանատարին բռնելով կախել է տալիս բերդի պարսպից։ Ժողովուրդը ամենուրեք նրան օգնում էր իր զորական ջոկատներով։ Ապա վերադառնում է նորից Շիրակ։ Այնուհետև շարժվում է Գուգարքի կողմերը և ջարդում նաև այնտեղի արաբական զորագնդերին ու մտնում Թբիլիսի քաղաքը և վերցնում արաբներից մեծ քանակությամբ գերիներ, որպեսզի հայ գերիների հետ փոխանակի։ Այնտեղից վերադառնում է Տաշիրք գավառը և հարձակվում է Աղստևի ձորում եղած արաբական մի ուրիշ զորաբանակի վրա, դարձյալ ջարդում է ու ցրում, ձեռք բերելով մեծ ավար։ Դրանից հետո վերադառնում է Շիրակ ու Արշարունիք, հետո գնում է նորից դեպի հյուսիս ու միաժամանակ հանգստանում է աբխազների Գուրգեն իշխանի մոտ, որի աղջկա հետ քաղաքական նպատակով ամուսնացնում է իր եղբայր Աբասին։ Աշոտ Երկրորդի այս հաղթական կռիվներից ոգևորված Սյունյաց իշխանները, Վասպուրականից Սմբատը, Գուգարքից Սահակը, հավաքելով իրենց զորքերը, իրենց հերթին հարձակումներ են սկսում արաբների վրա։ Նրանք հատկապես հարձակվում են Դվինի վրա, որպեսզի ազատեն իրենց հարազատներին, բայց հաջողություններ չեն ունենում։ Սակայն, չնայած դրան, Սյունյաց իշխանները, Աշոտ Երկրորդի նման, իրենց անընդհատ հարձակումներով Սյունիքում և այլ գավառներում լուրջ հարված են հասցնում թշնամուն։ Երբեմն էլ կարում էին Դվին-Ատրպատական տանող ճանապարհը և մեծ վնաս պատճառում Յուսուֆի հրոսակներին։ Դրանով լուծում էին երկրի և իրենց բնտանիքների վրեժը։

Գագիկ Արծրունին իր հերթին, Յուսուֆից բաժանվելուց հետո, ժողովրդական մասսաների օգնությամբ, ազատագրական պայքար է ծավալում Վասպուրականում։ Նա իր գնդերը հավաքելով, իր եղբայր Գուրգենի հետ, ժողովրդական ջոկատների ակտիվ մասնակցությամբ, երկար ժամանակ արաբ պավթիչների դեմ կռվելուց հետո, միաժամանակ ամրանում է Մոկաց և Կորդվաց ամուր վայրերում։ Այսպիսով, իրենց ունեցվածքից զրկված, ժողովրդական մասսաների զայրույթից ղգացված հայ իշխանները երեք կողմից արաբներին հարվածների տակ են առնում, ծավալելով ազատագրական մեծ պատերազմ, որին ավելի ակտիվորեն էին մասնակցում հայ շինականները։

Աշոտ Երկրորդն իր պայքարով ոգևորում է հայ իշխանների մի մասին և զորքին։ Ազատագրական պայքարը ծավալվում է երկրի մի շարք նահանգներում ու գավառներում։ Աշոտ Երկրորդը կարճ ժամանակվա ընթացքում բազմաթիվ քաղաքներ ու բերդեր, որոնք գրավել էին թշնամու զորքերի բնակավայրեր, մաքրում է թշնամիներից, իսկ նրանց զորավարներից շատերին բռնելով, կախել է տալիս բերդերի պարիսպներից։ Աշոտ Երկրորդի այս սխրագործությունները բարձրացնում են նրա համբավը երկրում։ Այդ պատճառով մի շարք իշխաններ, վրաց Ատրներսեհ թագավորի գլխավորությամբ, հավաքվում և Աշոտին հռչակում են թագավոր, առանց խալիֆաթի համաձայնության։ Այդ ակտին համաձայն էին նաև Վասպուրականի իշխանները Գագիկ թագավորի գլխավորությամբ։ Աշոտ Երկրորդը թեև 915 թվականին հռչակվում է թագավոր, բայց քանի որ նա խալիֆից թագ չէր ստացել, այդ պատճառով պատմիչները մինչև 922 թվականը համարել են անիշխանության տարիներ։ Այսպիսով, հայ իշխաններն աստիճանաբար նորից համախմբվում են Բագրատունիների շուրջը։ Յուսուֆին հավատարիմ է մնում

[1] Ասողիկ, էջ 169։

միայն նահատակ Սմբատ Առաջինի եղբոր որդի Աշոտ սպարապետ՝ բոնավոր կոչեցյալը, որովհետև նրանից ստացել էր Հայաստանի թագը, որին երկար ժամանակ հետամուտ էր նա։

Սակայն չնայած այդ բոլորին, այնուամենայնիվ, թշնամու զորքերը տակավին գտնվում էին երկրի կենտրոնական մասերում, հատկապես Դվինի ու Նախիջևանի շրջաններում և մահ ու սարսափ էին տարածում։ Դեպքերին ականատես պատմագիր Հովհաննես կաթողիկոսը հաղորդում է, որ թշնամին հավասարապես, անխնա հալածում էր թե՛ ռամիկներին և թե՛ ոչ ռամիկներին. նրանք, որոնք չէին կարող փախչել, ահխտիր սրի էին քաշում. ավազանին հազիվ կարողացել էր ապաստան գտնել լեռներում, ձորերում, քարանձավներում, անապատներում, բերդերում և ամրոցներում, իսկ ռամիկները բոլիկ և մերկանդամ, թափառական, սոված-ծարավ ձմեռը ցրտից, ամառը շոգից մաշվում ու մեռնում էին։ Նրանք, որոնք ընկնում էին թշնամու ձեռքը, կամ սպանվում, կամ վաճառվում և կամ թե բանտ էին նետվում ու տուգանքի ենթարկվում[1]։

Յուսուֆի ճոր հարձակումները

Աշոտ երկաթի հաղթությունները 914—915 թվականներին կրում էին ժամանակավոր բնույթ։ Բացի Արծրունյաց ու Սյունյաց իշխաններից, մնացած իշխանները նորից տատանվում և առաջ են բերում անմիաբանություն, թողնում են իրենց նոր թագավորին։ Այդ հանգամանքից օգտվելով, Յուսուֆն երրորդ անգամ հարձակվում է Հայաստանի վրա և իր արյունռուշտ հրոսակներին հրամայում է, որ ամայացնեն երկիրը։ Այս նոր ասպատակությունները տևում են մոտ 7 տարի (915—922)։ Աշոտ երկրորդը ստիպված է լինում անվերջ զբաղվել կռիվներով և իր կյանքը անց է կացնում պատերազմների մեջ։ Թշնամու գաղանություններն ու վրեժխնդրությունն ավելի են բորբոքվում, և Յուսուֆն այս անգամ իր մղած կռիվներին տալիս է մոլեռանդ կրոնական բնույթ, բորբոքում է մոլեռանդ արաբների ֆանատիկոսությունն ու ընչաքաղցությունը։ Նրանք

1 Հովհաննես կաթողիկոս, էջ 246—247։

հայ անմեղ կանանց, երեխաների ու ծերերի նկատմամբ գործադրում են չտեսնված վայրագություններ։ Նախքան մարդկանց սպանելը, ենթարկում էին տանջանքի, ոմանց կուրծքը ճեղքելով սիրտն էին հանում, ոմանց ձեռքերն ու ոտքերը և լեզուն կտրում, ոմանց մեջքից կխում երկու մասի բաժանում, ոմանցից էլ պահանջում էին կրոնափոխ լինել, իսկ հրաժարվողներին անխնա տանջելուց հետո գլխատում էին։ Այսպես, կրոնափոխ չլինելու պատճառով գլխատում են Միքայել Գուգարեցուն, պատանի Դավիթ և Գուրգեն Գնունիներին, Աղվանից Սևորդաց իշխաններին։ Անվերջ կռիվների, կոտորածների և գերեվարության հետևանքով պակասում է աշխատավոր ձեռքը, գյուղացիական գոյակարգը, որ կրթքով էր պաշտպանում իր հարազատ հայրենիքը, միշտ զենքի տակ լինելով, չի կարողանում զբաղվել մշակությամբ, իսկ հողածն էլ ենթարկվում էր թալանի ու կողոպտման։ Այդ պատճառով կանգ են առնում երկրագործությունը, անասնապահությունը և արհեստն ու վաճառականությունը։ Այս բոլորի պատճառով 917—918 թթ. սկսվում է մեծ սով, որի ընթացքում մարդիկ իրար միս էին ուտում, իսկ դրա հետևանքով 919 թ. առաջ է գալիս ժանտախտ հիվանդությունը, որը հնձում էր անպաշտպան ժողովրդին։ Նույնիսկ մարդ չկար, որ մեռածներին թաղեր, մեռածների մարմինները հոտում էին՝ ավելի մեծացնում մահացողների թիվը։ Հայ ժողովրդի այդ ծանր վիճակը այսպես է նկարագրել դեպքերին ականատես Հովհաննես կաթողիկոսը.

«Եւ զբազում զաշխարհս իբրև զանապատ՝ անկոխ անջրդի ցուցեալ տապալէին. և գրեթէ իբրև զերկիր, որ ոչ անց մարդ ընդ նա և ոչ բնակեցաւ ի նմա որդի մարդոյ՝ այնպէս զապատան անապատ առնէին։ Եւ վասն ընդ միմեանս բախելոյ բազում ճապաղիս արեան հեղեալ՝ դիակամբք լնուին զերեսս երկրի մերոյ, և առհասարակ յաւարի առեալ կապուտ բազում՝ խաղաղացուցանէին չինքեանս ըստ իւրաքանչիւր աշխարհաց կշիռ։ Եւ այսպէս անմարդացեալ և անդաւակացեալ, խոպանացեալ և անշքեղացեալ այնուհետև աւանք և շէնք մեր եղեն իբրև զանդաստան մացառախիտ. և ցամաքեցան բոզբոջք բուսոց արտավարաց և արօտից. և քաղաքք մեր կործա-

նեցան առ ի չգոյէ բնակչաց, և երկրագործք մեր սպառեցան... երկրագործք մեր բազմայորդորք էին ի վաստակս ձեռաց իւրեանց, իսկ այժմ լքեալք և ընդարմացեալք շտեալք. յայնժամ շտեմարանք զեղեալք, իսկ այժմ դատարկացեալք և ամայեցեալք. անդ հօտք արօտականք ծաղկաւէտք խայտացեալ, ասա խամրեալ և յոյժ պակասեալ. յայնժամ դաշտք պարարտութեամբ լցեալ, իսկ այժմ տխրութեամբ. անդ և հովիտք բազմացուցեալ ցորեան, ասա կարկտիւ և չար ուղխիւք հեղեղեալ. յայնժամ անձրևք խաղցունք և շահեկանք...»:

«...Ապա և սովն ևս ի վերայ սաստկացեալ զօրանայր ուժգնապէս...: Սուրն անողորմ պատերազմացն որ միշտ ի մեզ բղխէր զհոտ մահու՝ մինչև յոթն ամ ձգեալ ընդհրկարեցաւ. և վասն այսորիկ մնացեալքս պանդխտեցաք ի վրանս Կեդարու, և թափրացաք և ունայնացաք ի սաացուածոց և ի բոլոր պարենի ոռճկաց և ի չգոյէ կերակրոց...: Սկիզբն առնոյր սովն կորստական և սպականէին առհասարակ Այրարատեան աշխարհիս ծնունդք և քաղաքս և ի դիւղս և յագարակս՝ իբրև զդիակունս գունատեալս և լքեալս դանդաչէին...: Եւ կէաք ի խոտաբուտ կեանս ի հարկէ սովոյն բերեալք՝ զմոլեխինդն և կամ զայլս ոմանս վնասակար բանջարս ըստ դիպաց իմն ճարակեալ՝ յապականութիւն մահու հասանէին. զի վասնզ սովոյն հասարակ շարժէր ի կարօտութիւն զամենեսեան ինչ ի կերակուր նոցա բերել: Իսկ ոմանք զսիրելի որդեակս իւրեանց ընդ սակաւիկ ինչ ոռճկաց թշնամեացն վաճառեալ ի տագնապէ վտանգին՝ ոչ չիշեցան նոցա աղէկոտոր խնամք ծնողականաց»[1]:

(«Եվ շատ երկրներ անապատի նման անկոխ, անջրդի, դաշտերով՝ կործանում էին. և համարիր այնպիսի երկիր, որ ոչ այնտեղ մարդ է եղել, և ոչ էլ մարդկային սերունդ է բնակվել, այնպես որ շենը անապատ դարձրին: Եվ միմյանց բախվելու պատճառով մեծ արյունահեղություն եղավ, դիակներով լցրին մեր երկրի երեսը և ընդհանրապես ավարելով մեծ քանակությամբ կողոպուտ տարավ յուրաքանչյուրն ուղիղ

1 Հովհաննես կաթողիկոս, էջ 257—262:

իր երկիրը: Եվ այսպես՝ անմարդացան, անզավակացան, խոպանացան, անշքեղացան այնուհետև մեր ավաններն ու շենները եղան մացառախիտ անդաստաններ, չորացան արտերի ու արոտների բուսական բողբոջները, իսկ մեր քաղաքները կործանվեցին՝ բնակիչներ չլինելու հետևանքով, և մեր երկրագործները վերջացան...: Մեր երկրագործները, որ չափազանց ջանասեր էին իրենց գործի մեջ, այժմ լքված են ընդարմացած և իրենց կորցրած: Այնժամ շտեմարանները լցված էին, իսկ այժմ դատարկված և ամայացած, այնտեղ արածող հոտերը ծաղկավետ արոտներում խայտում էին, իսկ այստեղ խամրած են և պակասած: Այնժամ դաշտերը առատությամբ էին լցված, իսկ այժմ՝ տխրությամբ, այնտեղ և հովիտները ածեցնում են ցորեն, այստեղ կարկուտով և չար հոսանքով է հեղեղված, այնժամ տեղում էին քաղցր ու օգտակար անձրևներ...»:

«... Ապա սրա վրա ավելանում է սաստիկ սովը և դաժան պատերազմների սուրը, որ մեզանում տարածում էր մահվան հոտը և որը տևեց յոթ տարի, այդ պատճառով կենդանի մնացածներս պանդխտեցինք Կեդարի վրանները և ղըրկվեցինք ու դատարկվեցինք ստացվածքից ու ամեն պարենից, ուտելիքից: Սկսվեց կորստաբեր սովը, ոչնչանում էին ընդհանրապես Այրարատյան երկրի բնակիչները քաղաքներում, գյուղերում, շեներում, իբրև դիակներ (մարդիկ) գունաթափված, լքված երերվում էին...: Մի մասն էլ սովից խոտաբուտ կյանք վարելով, մոլեխինդ և կամ այլ վնասակար բանջարներ պատահած ուտելով, մեռնում էին, որովհետև սովի նեղությունը նրանց մեջ ցանկությունն էր շարժում, ամեն ինչ կերակուր համարել: Իսկ մի մասն էլ իրենց սիրասուն որդիներին սակավ ուտելիքի դիմաց վաճառում էին թշնամիներին ծանր նեղության պատճառով և չհիշեցին նրանք իրենց ծնողական աղեկոտոր խնամքները»):

Այս ընդարձակ մեջբերումը պարզ ցույց է տալիս հայ ժողովրդի կրած տառապանքները, որոնք առաջ էին բերել արաբական զավթիչները: Եթե այս բոլորին ավելացնենք նաև ավազակների կողոպուտը, որոնք այդ ժամանակ հանդես էին գալիս մեծ խմբերով և իրենց հերթին թալանում տները,

ղեցիներն ու վանքերը, պարզ կլինի երկրի ու ժողովրդի կեղեքման ծանր վիճակը, որ ստեղծել էին հայ ֆեոդալական տներն իրենց կենտրոնախույս ձգտումների պատճառով։ Ինչպես ճիշտ կերպով մատնանշել է ժամանակակից պատմագիր Հովհաննեսը, որ «Թագաւորք մեր և պետք և իշխանք»[1] իրար դեմ էին կռվում և կոտորում միմյանց։ Իսկ Աշոտ Երկրորդը թափառում էր երկրի տարբեր մասերում, լքված իր իշխաններից, իր փոքրաթիվ զորքով ծանր մարտեր էր մղում Թշնամու մեծ ուժերի դեմ։

Հայաստանի մեծ մասի գրավումը Ատրպատականի ոստիկան Յուսուֆի կողմից ցնցում է Բյուզանդական արքունիքը, որովհետև Հայաստանի կորուստը մեծ վնաս էր իրեն՝ կայսրության համար, մանավանդ որ նրա սահմաններն արևելքից վտանգի տակ կլիներին այդ նոր Թշնամու կողմից։ Այդ պատճառով Բյուզանդիան ուշադրություն է դարձնում Հայաստանի վրա։ Հովհաննես կաթողիկոսը, որ այդ ժամանակ գտնվում էր վրաց արքունիքում, 919 թվականին մի գրություն է ստանում Բյուզանդական պատրիարք Նիկոդայոս Առաջինից։ Ըստ այդ գրության, Կոստանդին ծիրանածին (Պորփիրոգեն 913—959) կայսրը խոստանում է օգնել հայերին և կաթողիկոսին ու Աշոտ Երկրորդին Կ. Պոլիս է կանչում բանակցությունների համար։ Պատրիարքը միաժամանակ խորհուրդ է տալիս հայոց կաթողիկոսին, որ նա համախմբի ոչ միայն հայ իշխաններին, այլև վրաց ու աբխազաց թագավորներին ու իշխաններին և նրանց դուրս բերի ընդհանուր Թշնամու դեմ։ Այնուհետև կաթողիկոսը վրաց Ատրներսեհ թագավորի և Աբխազաց Գուրգեն իշխանի հետ խորհրդակցելուց հետո հատուկ նամակ է գրում հայ իշխաններին, որ նրանք վերջ տան իրենց ներքին արյունոտ երկպառակություններին և դուրս գան պայքարի։

Այդ ժամանակ Գագիկ Արծրունին իր եղբայր Գուրգենի հետ Մոկաց և Կորդվաց լեռներում գլխավորելով ժողովրդի պայքարը ոչ միայն փրկել էր Վասպուրականը, այլև լուրջ ջարդ էր տալիս Յուսուֆի հրոսակներին, որոնք փորձ էին կա-

1 Հովհ. կաթ., էջ 258։

տարում ասպատակելու Վասպուրականը։ Սյունյաց Սմբատ իշխանն էլ ապաստանել էր իր երկրի լեռնային մասերում և հարվածում էր Թշնամուն։ Աշոտ Երկրորդը երկրի այս ու այն կողմը թափառելով, թեև իր փոքրաթիվ խմբերով ծանր մարտեր էր մղում արաբական զորամասերի դեմ, բայց վճռական հարված չէր կարողանում հասցնել։ Դավաճան Աշոտ սպարապետ-բռնավորը Յուսուֆի մոտից չէր հեռանում։ Վերջինս 915—919 թվականներին գերազանցորեն մնում է Դվինում։

Հովհաննես կաթողիկոսը նամակներ է փոխանակում բյուզանդական պատրիարքի հետ՝ իրենց մտքերը պարզելու համար։ Նա այդ ժամանակ գնում է Տարոնի կողմերը։ 919 թվականին մի հատուկ նամակ է՝ ուղարկում կայսրին ու խնդրում նրանից միաբանություն և օգնություն։ Նա նույնիսկ փորձեր է կատարում համախմբել նաև այդ կողմերի հայ իշխաններին։ Կաթողիկոսը կայսրին ուղարկած նամակում նշում է, որ Թշնամին վերջ ի վերջո սպառնում է նաև Կայսրությանը։ Կոստանդին կայսրը կաթողիկոսի նամակն ստանալուց հետո անմիջապես Հայաստան է ուղարկում Թեոդորոս Վասիլիոսին, որը Տարոնում տեսակցություն է ունենում Հովհաննես կաթողիկոսի, իսկ Շիրակ գավառի մի ամուր վայրում Աշոտ Երկրորդի հետ։ Այդ տեսակցություններից հետո Բագրատունի Թագավորը անմիջապես մեկնում է Բյուզանդիոն, իսկ կաթողիկոսը շարժվում է շատ դանդաղ և վերջումն էլ կանգ է առնում Դերջան գավառում ու չի գնում Կ. Պոլիս, նորից կրոնադավանաբանական վեճեր առաջ չբերելու համար։ Այնուհետև վերադառնում է իշխաններին համախմբելու նպատակով։ Բայց 920 թվականի գարնանը նորից իշխաններին գրտնում է անմիաբանության մեջ։ Կաթողիկոսին հաջողվում է համոզել վրաց Ատրներսեհ թագավորին, որ նա Աբխազաց Գուրգեն իշխանի հետ միասին դուրս գա Յուսուֆի դեմ։ Նա նորից նամակներ է գրում հայ իշխաններին, որպեսզի վերջ տան արյունոտ խռովություններին և միասին դուրս գան օտար զավթիչների դեմ։ Յուսուֆը դեռ շարունակում էր իր չար ու դժոխային գործերը։ Նա նույն 920 թվականի վաղ գարնանը նորից իր հրոսակների գլուխն անցած հարձակվում է Վասպուրականի վրա, նպատակ ունենալով մինչև Աշոտ

Երկրորդի վերադառնալը, ծունկի բերել Գագիկ Արծրունուն: Սա սկզբում ամբողջ բնակչությամբ և զորքերով ապաստան է գտնում լեռներում, բայց վերջում Ատոմ Անձևյաց և Գրիգոր Մոկաց իշխանների օգնությամբ, համախմբելով Վասպուրականի հարավի գավառների բոլոր կռվող ուժերին, լուրջ ջարդ է տալիս Թշնամու հրոսակներին ու ետ շպրտում Վասպուրականից: Յուսուֆն իր այս անհաջող արշավանքից հետո ստիպված վերադառնում է Ատրպատական, որովհետև արդեն լուրջ երկյուղ էր կրում: Նա իր հետ է տանում նաև Աշոտ սպարապետին, նրա մորը և երկու քույրերին, որպես պատանդ, իր փոխարեն թողնելով տեղակալներ: Այդ տեղակալները թույլ էին, այդ պատճառով հայ իշխանները նորից վերադառնում են իրենց գավառները: Գագիկ Արծրունին ոչ միայն տիրում է ամբողջ Վասպուրականին, այլև գրավում Արտազը, Կոգովիտը, ուրիշ գավառներ ու միացնում իր թագավորությանը: Գագիկ Արծրունին իր այս պայքարով ոտքի է հանում նաև երկրի մյուս մասերի կռվող ժողովրդին:

Աշոտ Երկրորդի Բյուզանդիայում վարած բանակցությունները ավարտվում են հաջողությամբ, և մի գունդ օգնական զորքով 920 թվականի գարնանը վերադառնում է Հայաստան, իր թուլացած թագավորությունը ամրապնդելու և թշնամուն երկրից դուրս բերելու համար: Աշոտ Երկրորդի Բյուզանդիոն գնալն ու վերադառնալը մեր կարծիքով տեղի է ունեցել 919 թվականի աշնանը և 920 թվականի գարնանը: Նենգավոր Յուսուֆը հաշվի առնելով, որ ինքը մենակ չի կարող կռվել հայ և բյուզանդական զորքերի դեմ, մանավանդ որ երկրի հարավային մասում Գագիկ Արծրունին լուրջ վտանգ էր դարձել, Հայաստանում նոր, ներքին երկպառակություններ ստեղծելու համար մի կողմից իր մոտ պատանդ եղած Աշոտ սպարապետին է թագ տալիս, պաշտոնական թագավոր հռչակում ու ուղարկում Հայաստան, իսկ մյուս կողմից նվերներ ուղարկելով Գագիկ Արծրունուն, նրան նույնպես Հայաստանի թագավոր է հռչակում: Այս եղանակով նա աշխատում է Աշոտ սպարապետին կռվեցնել Աշոտ Երկրորդի, իսկ Գագիկ Արծրունուն էլ երկու Աշոտների հետ, որպեսզի դրանով թուլացնի նրանց ռազմական ուժերը, ինչպես նման բան արել

էր 10 տարի առաջ՝ Հայաստանը տիրելու համար: Բայց այս անգամ Արծրունյաց տերը պատմությունից դասեր վերցնելով, ներքին խռովություններ առաջ չի բերում և ոչ էլ ձգտում ամբողջ Հայաստանի վրա իշխել: Նրա նպատակն էր՝ համաձայնվել Բագրատունիների հետ, պահպանել իր ձեռք բերած ինքնուրույնությունը միայն Վասպուրականում, ապահովել իր՝ տեղական նշանակություն ունեցող թագավորությունը: Ուստի այս անգամ խաղալիք չի դառնում Յուսուֆի ձեռքին: Իսկ Աշոտ Սպարապետն իրոք որ գործիք է դառնում Թշնամու ձեռքին և 920 թ. առաջ է բերում ներքին նորանոր կռիվներ: Սակայն երբ Աշոտ Երկրորդը Կ. Պոլսից վերադառնում է Հայաստան, հայ իշխանների մեծ մասն այս անգամ օգնում են նրան, որը պատրաստվում է մեծ պատերազմի ինչպես Յուսուֆի, նույնպես և Աշոտ սպարապետի դեմ: Սկզբում կռվում էր Աշոտ սպարապետի հետ, բայց այդ կռիվները երկար չեն տևում, որովհետև կաթողիկոսը շուտով վրա է հասնում և հաշտեցնում երկու թագակիր Աշոտներին ու վերջ է տալիս ներքին գահակալական կռիվներին: Պայմանը սովորական էր. Աշոտ Երկրորդը պետք է իշխեր Շիրակում արքայից արքայի իրավունքով, իսկ Աշոտ սպարապետը՝ Դվինում, միայն թագ կրելու իրավունքով: Ինչպես տեսնում ենք, թագակիր արքաների թիվը գնալով շատանում է երկրում: Այդպիսով, 920 թվականից սկսած որոշ չափով վերջ է տրվում ներքին ու արտաքին կռիվներին, երկիրը մի փոքր խաղաղ կյանք է ապրում, մանավանդ որ Յուսուֆը 920—923 թվականներին խալիֆի կողմից բանտարկվում է, որովհետև նա իր գործունեության մեջ այնքան էր հեռու գնացել, որ այլևս չէր ճանաչում խալիֆաթի տիրապետությունը և դարձել էր ինքնուրույն մի իշխան: Խալիֆը իր տիրապետությունը Ատրպատականում վերականգնելու համար, 920 թվականին մեծ բանակ է ուղարկում այնտեղ, հաղթում ըմբոստ Յուսուֆին, ձերբակալել տալիս ու բանտարկում Բաղդադում, ավելի քան երեք տարի, իսկ Ատրպատականի ոստիկանության պաշտոնը հանձնում է նրա օգնական Ըսբուքին (Սբուկին): Սա վարում է խաղաղասիրական քաղաքականություն և Աշոտ Երկրորդի հետ կնքում է խաղաղության պայմանագիր,

Հայոց թագավորին շնորհում է շահնշահ տիտղոսը, բայց կռիվներ է մղում Վասպուրականում Գագիկ Արծրունու դեմ: Սակայն շուտով Աշոտ երկրորդի միջամտությամբ հաշտվում է նրա հետ և Գագիկ Արծրունին դրանից հետո նվիրվում է շինարարական աշխատանքի:

Աշոտ Երկրորդի վերջին հաղթական կռիվները և Բագրատունյաց թագավորության գիրքերի ամրապնդումը

Մուկտադիր Բիլլահ խալիֆի տիրապետությունը շատ թույլ էր, նրա դեմ մշտապես տեղի էին ունենում խռովություններ և ապստամբություններ: Ապստամբվել էին անապատի վաչկատուն արաբները և Թուրքմենստանի բնակիչները, որոնք նույնիսկ սպառնում էին Բաղդադ մայրաքաղաքին: Խալիֆաթի այդ ծանր դրության ժամանակ Յուսուֆը կարողանում է սիրաշահել խալիֆին և ոչ միայն ազատվել բանտից, այլև ձեռք է բերում հրամանատարի պաշտոն արեվելյան թուրքերի դեմ կռվելու համար: Թե երբ է բանտարկվել և ազատվել Յուսուֆը, դա դժվար է որոշել: Օրմանյանը նրա ազատման թիվը համարում է 926 թ.[1], բայց մեր կարծիքով ավելի հավանական է, ինչպես նշել ենք, նա բանտարկվել է 920—923 թթ. շրջանում:

Յուսուֆ ոստիկանի բանտարկության ժամանակ, հատկապես 922 թ. Աշոտ երկրորդի դեմ նորից գլուխ են բարձրացնում Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների հայ ֆեոդալները, նպատակ ունենալով դառնալ տեղերում ինքնուրույն թագավորներ: Նրանց ապստամբությունները այս անգամ հրահրել էր Բյուզանդիան, որովհետև Աշոտը 920 թ. Բյուզանդական զորքերի օգնությամբ վերականգնելով իր իշխանությունը, զորքերին ետ ուղարկելուց հետո, այլևս հաշվի չէր նստում կայսրության հետ: Առաջին անգամ ապստամբություն են բարձրացնում Գուգարքի Վասակ և Աշոտ Գնթունի իշխանները, որոնք Սմբատ Առաջինի ժամանակից իշխում էին այնտեղ: Այս իշխանների նպատակն էր՝ անջատվել Բագրատուններից և դառնալ ինքնուրույն: Աշոտ երկրորդն իր եղբայր Աբասի հետ ճնշում է այդ խռովությունը և պատժում

[1] «Ազգապատում», էջ 1057, կ. Պոլիս, 1912:

ապստամբներին: Դրանից օգտվելով՝ Դվինի Աշոտ սպարապետը, խախտելով 920 թ. կնքած պայմանագիրը, ոստիկանի զորքերի օգնությամբ հարձակվում է Աշոտ երկրորդի տիրապետությունների վրա ու գրավում Վաղարշապատ քաղաքը: Թագավորը Գուգարքից վերադառնալով ջարդում է Աշոտ Բրոնավորի զորքերին և ետ գրավում իր հողերը: Բայց Դվինը չի կարողանում գրավել:

Այնուհետև, նա հաշվի առնելով, որ երկրի հյուսիս-արեվելյան հայ իշխանների մեջ ազդեցիկ դիրք և ռազմական մեծ ուժ ուներ Գարդմանա Սահակ Սևադա իշխանը, քաղաքական նպատակներով ամուսնանում է նրա դուստր Սահականուշի հետ, որպեսզի նրա ռազմական ուժերն օգտագործի և իր դիրքերը երկրում ավելի ամրապնդի: Աշոտ երկրորդը Սահակ Սևադայի զորքերի օգնությամբ նորից հարձակվում է Դվինի վրա. կաթողիկոսն երրորդ անգամ աշխատում է հաշտեցնել երկու գահակալներին, բայց դարձյալ հաջողություն չի գրտնում, իսկ Աշոտ երկրորդն էլ չի կարողանում Դվինը գրավել ու ետ է քաշվում: Սակայն Գուգարքի Գուրգեն իշխանի օգնությամբ վերստին սկսում է պատերազմը Աշոտ սպարապետի դեմ՝ Դվինը գրավելու համար, բայց այս անգամ կաթողիկոսին հաջողվում է հաշտեցնել գահակալներին և կասեցնել արյունահեղ պատերազմը, որի պատճառով երկիրը տվել էր շատ զոհեր: Այսպիսով, Աշոտ երկրորդը միաժամանակ ձեռք է քաշում Դվինից: Այս դեպքերից հետո Բագրատունյաց թագավորի դեմ ապստամբում է Ուտյաց նահանգի Մովսես իշխանը, Աշոտն իր աներ Սահակ Սևադայի հետ դուրս է գալիս ապստամբի դեմ՝ հաղթում, ապա ձերբակալելով կուրացնում է նրան, իսկ Ուտիքի կառավարումը հանձնում է իշխան Յլիկ-Ամրամին: Այդ նույն ժամանակ Աշոտ երկրորդի եղբայր Աբասը Գուգարքի Գուրգեն իշխանի հետ միասին դավադրություն է կազմակերպում արքայի դեմ, որը հաղիվ կարողանում է ազատվել: Բայց դրանով երկրում ծայր են առնում նոր և ավելի վտանգավոր խռովություններ ու թշնամություններ, որոնք վերին աստիճանի ծանր են նստում Հայաստանի վրա:

Աշոտ երկրորդը զգալով, որ այդ ճանապարհով հնարավոր չէ ամրապնդել կենտրոնական պետությունը, ուստի նախ

ճանաչում է Գագիկ Արծրունու թագավորությունը Վասպուրականի նահանգում, ապա հենվելով վերջինի ու վրաց Ատրներսեհի վրա, բռնում է իշխաններին իրենց իրավունքներից, այսինքն՝ ինքնուրույնություններից զրկելու քաղաքականությունը։ Այդ պատճառով Սյունյաց Վասակ իշխանը կասկածելով Աշոտ Երկրորդից, դիմում է կաթողիկոսին և նրա միջնորդությամբ ապահովության պայմանագիր է կնքում, սակայն արքային համոզում են, որ Վասակ իշխանը կապ է ունեցել Դվինի Աշոտ սպարապետի հետ, այդ հողի վրա թագավորը նրան ձերբակալում ու բանտարկում է Կայան բերդում։ Աշոտ Երկրորդի վարած կենտրոնաձիգ այդ քաղաքականությունը, որ միակ ճիշտ ուղին էր երկրի փրկության համար, ձեռնտու չէր նաև նրա աներ Սահակ Սևադային, որովհետև նա որպես ինքնուրույն իշխան, նույնպես պիտի տուժեր այդ քաղաքականությունից և, Վասակ Սյունեցու բանտարկությունը պատրվակ բռնելով, ապստամբում է իր փեսա Աշոտի դեմ և Ախայան գյուղի մոտ արքայի զնդերի դեմ տալիս է ճակատամարտ. բայց մեծամեծների միջնորդությամբ շուտով հաշտություն է կնքում։ Այնուհետև Աշոտ Երկրորդն այդ դեպքից անմիջապես հետո հինգերորդ անգամ հարձակվում է Դվինի վրա և այս անգամ ճնշում է նենգավոր Աշոտ Շապուհյանին և ստիպում, որ ճանաչի իր իշխանությունը և թողնի Դվինը, որովհետև նա կապ էր ունեցել Սահակ Սևադայի հետ ու հրահրել էր նրան ապստամբության։ Դրանից հետո Աշոտ սպարապետը թողնում է Դվինը և բնակություն հաստատում Բագարանում։ Այդպիսով, Աշոտ Բռնավորը, որը Յուսուֆի հետ միացած 10 տարուց ավելի է, ինչ դավեր էր լարում երկրում, մեկուսանում, զրկվում է իր հեղինակությունից ու կուչ գալիս Բագարանում։

Այնուհետև Աշոտ Երկրորդը միանում է վրաց Ատրներսեհ թագավորի հետ և շարժվում Գուգարքի ապստամբ իշխան Գուրգենի վրա, որին օգնում էր դավադիր Աբասը։ Գուրգենի ապստամբությունը հազիվ էր զսպվել, երբ նորից ապստամբություն է բարձրացնում Սահակ Սևադան, ազատում է Կայան բերդում բանտարկված Վասակ իշխանին և հարձակվում արքայի հողերի վրա։ Աշոտ Երկրորդը շուտով վրա է հասնում, հարձակվում է ապստամբի զորքերի վրա, հաղթում, ապա ձերբակալելով Սահակ Սևադային և նրա որդի Գրիգորին, առանց հետևանքների մասին խորհելու, որպես պատիժ, կուրացնում նրանց և ազատ է արձակում։ Քաղաքական այս դեպքերն որոշ չափով սրում են թագավորի և կաթողիկոսի հարաբերությունները, որովհետև վերջինս կողմ չէր Աշոտ Երկրորդի՝ իշխանների նկատմամբ գործադրած դաժանություններին։ Այսպիսով, Աշոտ Երկրորդին հաջողվում է ճնշել բոլոր խռովարար տարրերին և ժամանակավորապես ամրապնդել կենտրոնական իշխանությունը։ Բայց Աշոտ Երկաթը հաշվի առնելով Անդրկովկասում և Հայաստանում ստեղծված ծանր դրությունը և այն, որ թագակիրները շատացել էին, մանավանդ որ Գագիկ Արծրունին երեք անգամ թագ էր ստացել խալիֆաթից և իր թագավորության նկատմամբ ոչ մի ոտնձգություն չէր արել, ընդհակառակը, միշտ համակրել ու օգնել էր իրեն, ուստի վերջնականապես ճանաչում է նրա թագավորությունը Վասպուրականի վրա, ուղարկելով նրան թագ ու ծիրանի և նվերներ, իսկ իրեն էլ հայտարարում է շահնշահ, այսինքն՝ արքայից արքա։ Այդ իրավունքը խալիֆի անունով հաստատում է բանտարկված Յուսուֆի փոխանորդ Ըսբուք ոստիկանը համապատասխան հրամանով և թագ ու ծիրանիով, համաձայն նրանց միջև կնքված պայմանագրի։

Աշոտ Երկրորդը դեռ նոր էր ամրապնդել իր թագավորությունը և իրեն հայտարարել արքայից արքա, երբ աչքերից զուրկ Սահակ Սևադա իշխանի գրգռմամբ ապստամբվում է Ուտիքի ընդհանուր կառավարիչ Ցլիկ-Ամրամը, որին, ինչպես տեսանք, Ուտիքի կառավարիչ էր նշանակել Աշոտը։ Այս ապստամբությունը թեև ճնշվում է, սակայն ապստամբ իշխանին հաջողվում է փախչել և իրեն միացնել արքայից դժգոհ մի շարք իշխանների ու ավազակների և նախապատրաստել նոր ապստամբություն։ Աշոտ Երկրորդը տեսնելով, որ իր զորքերով հնարավոր չէ ճնշել այս նոր ապստամբությունը, դնում է եգերացոց Կոստանդին թագավորի մոտ պայմանագիր կնքելու, որպեսզի վրաց Ատրներսեհի հետ միասնաբար պայքարեն ներքին և արտաքին թշնամիների դեմ։ Բայց վերադարձի ճանապարհին Կուր գետի շրջաններում, խիտ ան-

տառների մոտ, հավանաբար այժմյան Շամշադինի շրջանում, անզգուշության հետևանքով թակարդի մեջ է ընկնում Յլիկ-Ամրամի (Ուժեղ Ամրամ) գնդերի կողմից։ Աշոտ Երկրորդն իր և եգերացոց գնդերով Տավուշի ձորում դիշերում է մի հին ավերակ բերդում, առանց վայրն ուսումնասիրելու։ Դիշերը շրջապատվում է ապստամբների կողմից։ Աշոտ թագավորը տեսնելով, որ դրությունը ծանր է, մանավանդ որ եգերական գնդի հրամանատարները գաղտնի բանակցություններ են վարում ապստամբների հետ իրեն Թշնամիներին հանձնելու համար, անմիջապես վերցնում է իր հավատարիմ զորքերին, հանկարծակի հարձակվում է ձորի անցքը փակող զորքի վրա, ճեղքում է պաշարումը և սրընթաց գնում է մինչև Կաքավաքար բերդը։ Այս դեպքից հետո պատմագիր Հովհաննեսի ասելով, այլևս նրան բախտը չի ժպտում, և նրա մղած ներքին կռիվները մատնվում են անհաջողության, որովհետև նրա՝ Աշոտ Թագավորի, բնավորությունը փոխվել էր, ասում է պատմագիրը, իսկ դա ցույց է տալիս, որ նա իրեն նվիրել է զեխ ու ցոփ կյանքի։

Ինչպես գիտենք, 923 թվականի սկզբին, Յուսուֆ ոստիկանը ազատվում է բանտից և խալիֆաթի մի զորաբանակի գլուխն անցած, ճնշում է Թափառաշրջիկ արաբների, Ասորիքի և Թուրքմենիայի ապստամբությունները և ըմբոստությունները։ Այնուհետև հարձակվում է Կորդվաց աշխարհի վրա, Վասպուրականի Թագավոր Գագիկից իր վրեժը լուծելու համար։ Արծրունյաց տերն իմանալով Թշնամու մտադրությունները, նախօրոք իր գանձերն ու ընտանիքը ուղարկում է Կոգովիտ ու Ծաղկոտն գավառները, իսկ ինքն ու Գուրգեն եղբայրը պատրաստվում են դիմադրել վտանգավոր Թշնամուն, որ կրկին անգամ երևում է հայկական հորիզոնի վրա։ Թեև Անձևյաց Ատոմ իշխանը հպատակվել էր Յուսուֆին, բայց Գագիկն իր սպառնալիքներով ստիպում է Թշնամուն հեռանալ Վասպուրականից և ձեռք քաշել երկրի այդ մասը կողոպտելուց։ Ոստիկանը վախենալով Վասպուրականի ռազմական ուժերից, որոշ գումար հարկ վերցնելով, հեռանում է այնտեղից ու գնում Ատրպատական։ Նա նախ ձեռք է բերում իր իշխանությունը, ապա տեր է դառնում իր նախորդ, մա-

հացած Ըսբուք ոստիկանի հարստությանը, որը սակայն չէր կարող բավարարել նրա ագահությունը։ Ուստի Յուսուֆը հաշվի առնելով Աշոտ Երկրորդի դեմ տեղի ունեցած ապստամբությունները, նրա կրած պարտությունը Յլիկ-Ամրամից, մի նոր արշավանք է կազմակերպում դեպի երկրի կենտրոնական գավառները և հյուսիս-արևելյան մարզերը, կրկին անգամ կողոպտելու համար։ Այդ նպատակով 923 թվականին իր օգնական Նըսր էմիրին, որը նույնպես կոչվում էր Սբուկ, բանակ տալով ուղարկում է Հայաստան։

Արաբական այս նոր ոստիկանը դեռ չէր հասել Նախիջևան, երբ Հայաստանը նորից հանդես է բերում ներքին թուլություն ու կազմալուծություն, չկարողանալով կազմակերպել անհրաժեշտ դիմադրություն օտար զավթիչների դեմ։ Այդ ներքին կազմալուծությունն ու նոր խռովությունը առաջին հերթին հանդես են բերում Սյունյաց իշխանները։ Նրանք փոխանակ Արծրունիների նման միասին դուրս գալու պայքարի, ընդհակառակը, բռնում են իրար դավաճանելու ուղին և լքում ժողովրդին։ Այսպես, օրինակ, Սյունյաց իշխաններից Բաբկենը դիմում է ոստիկանին, որ իր եղբայր Սահակի փոխարեն իրեն նշանակի Սիսականի կառավարիչ։ Նըսրը Սահակին իր մոտ է կանչում, ապա նրան տանում է իր հետ Դվին և բանտարկում։ Թշնամին Նախիջևանն ու Դվինը գրավում է առանց լուրջ կռվի, որովհետև դիմադրության առանձին փորձեր տեղի չեն ունենում։ Այդ էլ ցույց է տալիս հայ ռազմական ուժերի կազմալուծությունը վերոհիշյալ վայրերում։

Նըսր ոստիկանը սկզբում ցանկանում էր կաթողիկոսի հետ «լավ» հարաբերություններ հաստատել, նրան օգտագործելու նպատակով, բայց վերջում հաշվի առնելով վանքերի հարստությունները, որոշում է գրավել ինչպես վանքերի, այնպես էլ հայրապետանոցի հարստությունները։ Այդ նպատակով նա Դվինից մի զորամաս է ուղարկում դեպի Այրիվանք, որը ենթարկում են կողոպտման, իսկ անպաշտպան միաբանների մի մասին կոտորում և մի մասին էլ Դվին տանելով բանտարկում են։ Ոստիկանը միաժամանակ հրաման է տալիս կաթողիկոսին բռնեն ու բանտարկեն։ Վերջինս, որ նախօ-

րոք Այրիվանքից մեկնել էր Սևանա կղզին, ապա այնտեղից էլ Արագածոտն գավառի Բյուրական գյուղը, Այրիվանքի աղետի և իր բանտարկության հրամանի լուրը ստանում է Բյուրականում: Նա անմիջապես հեռանում է այնտեղից ու գնում Բագարան՝ Աշոտ Բռնավորի մոտ: Այդ ժամանակ Աշոտ Երկրորդը կաքավաքար բերդից տեղափոխվում է Սևանա կղզին և ամրանում այնտեղ:

Այրիվանքի կողոպուտից հետո ոստիկանն իր հրոսակներին ուղարկում է դեպի հարուստ Բյուրական ավանը, որն ունենալով լավ ամրություններ, թալանի ու կողոպուտի չէր ենթարկվել: Թեև կաթողիկոսը հեռացել էր այնտեղից, բայց ավանի բնակչությունը տեղի հոգևորականների հետ փակում է դարպասները և դիմում ինքնապաշտպանության: Արաբները սկզբում չեն կարողանում գրավել ավանը և ստիպված են լինում դիմել պաշարման: Արաբ հրոսակների գործադրած բոլոր ջանքերը անցնում են ապարդյուն. նրանք տալիս են մեծամեծ զոհեր, բայց ամրոցը գրավել չեն կարողանում: Մի բուռն խիզախ բյուրականցիներ ոչ միայն հերոսաբար դիմադրում են, այլև վարկաբեկում են անբարոյական ոստիկանի հրոսակներին և ամբոխահար հայ իշխաններին, որոնք փակված իրենց բերդերում կամ թե կուչ եկած թշնամու առաջ, երկիրն ու բնակչությունը թողել էին անպաշտպան վիճակում: Սակայն ամրոցում գտնվում են դավաճաններ և ուրացողներ, որոնք ցույց են տալիս թշնամուն ամրոցի գաղտնի անցքերը և բաց են անում դարպասները: Այդ պատճառով թշնամուն հաջողվում է մտնել ամրոցը և արյունահեղ կռիվներից հետո միայն կարողանում է գրավել ավանը, այն էլ զոհերի մեծ գնով: Կատաղած արաբները Բյուրականում եղած բոլոր տղամարդկանց, թվով 200 հոգու կոտորում, կանանց ու երեխաներին գերեվարում, իսկ եկեղեցիներն ու տները անխընա կողոպտում են: Գերիների մեծ մասին, կրոնը չուրանալու համար, նույնպես սպանում են, որոնց թվում և Սահակ եպիսկոպոսին, որը գլխավորում էր Բյուրականի հերոսական պաշտպանությունը:

Բյուրականի կոտորածն, ըստ Օրմանյանի, տեղի է ունե-

ցել 926 թվականին, բայց ավելի շուտ Բյուրականի գրավումը տեղի է ունեցել 923 թվականի գարնանը:

Նրսր ոստիկանը հայկական վանքերի հարստության մի մասը ձեռք բերելուց հետո վերադառնում է Ատրպատական՝ այն Յուսուֆին հանձնելու և այնտեղ հանդես եկած ապստամբությունը ճնշելու համար, որովհետև Յուսուֆը զբաղված էր կռիվներով Ատրպատականի հարավ-արևելքում: Նրսրը Հայաստանում տեղակալ է թողնում Բեշիր (Բըշր) զորավարին, որին հրամայում է իր սկսած գործը շարունակել և Աշոտ Երկրորդին գերի վերցնել: Նա Բեշիրին է հանձնում նաև բանտարկված Սյունյաց Բաբկեն և Սահակ իշխաններին:

Դվինից ոչ հեռու, Այրիվանքի մոտ գտնվող երբեմնի հին հայկական թագավորների ամառանոց Գառնի բերդը, մազազ գավառում, տակավին մնացել էր կանգուն, թշնամին չէր կարողացել գրավել ու կողոպտել այն, իր բնական ու արհեստական անառիկ պատնեշների պատճառով: Գառնիում պահված էր մեծ հարստություն: 10-րդ դարի առաջին քառորդում այդ ամրոցի պաշտպանությունը հանձնված էր Գևորգ անունով մի իշխանի:

Նրսր ոստիկանի վերադարձից հետո Բեշիրը մի առանձին զորաբանակով շարժվում է դեպի այդ հինավուրց ամրոցը: Նա իր բանակը դնում է Գեղա լեռան ստորոտում, որպեսզի վաղ առավոտյան հանկարծակի հարձակվի այդ ամրոցի վրա, գրավի և կողոպտի այն: Նենգավոր թշնամու այդ մտադրությունը իմանում է ամրոցը պահպանող Գևորգ իշխանը, որը նախօրոք դուրս էր եկել Սևանա կղզուց՝ Աշոտ Երկրորդի մոտից: Նա իր փոքրիկ գնդով, դիշերը ջահերով գաղտնի, հարձակվում է թշնամու ճամբարի վրա, մատնում է խուճապի, ապա մեծ ջարդ տալով քշում է դեպի Դվին: Գևորգ իշխանի այս հաջողությունը նախ ոտքի է հանում հայ աշխատավոր ժողովրդին, և ապա մի քանի հայ իշխանների, միասնական ազատագրական պայքար ծավալելու օտարերկրյա զավթիչների դեմ: Բեշիրը պարտությունից կատաղած նախ իր զայրույթը թափում է Դվինի շրջակայքի ժողովրդի վրա, ապա մեծ բանակով շարժվում դեպի Սևանա կղզին, Աշոտ Երկրորդին գերի վերցնելու և այդ կղզում եղած հարըս-

տութիւնները գրավելու մտադրութեամբ: Սակայն կղզին գրավել նա չի կարողանում: Բեշիրը իր այդ երկրորդ անհաջողութեունից սաստիկ զայրացած, կողոպտում է շրջապատի հայ բնակչութեանը և հազարավոր անմեղ մարդկանց, երեխաների, կանանց և ծերերի, իրար կապած բերում է կղզու դիմաց ու ցամաքաբերդի կողմից լիճն է թափում, որպեսզի կապույտ բերդի նման անձնատուր անել տա Աշոտ թագավորին: Բայց այդ միջոցով նույնպես չի կարողանում ազդել կղզու պաշտպանների վրա, այլ միայն ավելացնում էատելութեունն ու վրեժխնդրութեունը: Կղզու պաշտպաններն երբեմն նավակներով դուրս էին գալիս կղզուց, հարվածներ հասցնում թշնամուն և վերադառնում կղզին: Այդպիսով, արաբական մեծ բանակը երկար ժամանակ զբաղվում է կղզու գրավումով: Բեշիրը փորձ է անում լաստերով և ցամաքաբերդի կողմից լիճը հող լցնելով զորքը մտցնել կղզին, բայց դարձյալ հաջողութեուն չի ունենում: Նրա հրոսակները մեծ զոհեր տալով ետ էին քաշվում, իսկ կղզին մնում է անառիկ: Կղզու գրավումը ձգձգվում է և թշնամին ստիպված է լինում պաշարել այն:

Այդ ընթացքում Նըսր ոստիկանը Ատրպատականից վերադառնում է դեպի Դվին և ինքն էլ զորքով հարձակվում է Սյունիքի վրա: Բայց կասկածելով Սմբատ իշխանի ռազմական ուժերից, նվերներ վերցնելով հաշտութեուն է կնքում: Բաբկեն և Սահակ իշխաններից էլ մեծ փրկանք վերցնելով, նրանց նույնպես ազատ է արձակում: Նըսրը նպատակ ուներ այդ հաղանակով Սյունիքի իշխանութեունը հակադրել Բագրատունիներին, որովհետև Վասպուրականից արդեն ձեռք էր քաշել: Նըսր ոստիկանի բացակայութեան ժամանակ Հովհաննես կաթողիկոսը աշխատում էր Դվինի հայրապետանոցը ազատել ոստիկանի հանկերից, բայց երբ Նըսրը վերադառնում է հույսը կորում է: Կաթողիկոսը միաժամանակ հաշվի առնելով այն, որ իր հարաբերութեունները վատացել էին Աշոտ Երկրորդի հետ, որոշում է գնալ Վասպուրական Գագիկ Արծրունու մոտ, որ այն ժամանակ անհամեմատ ուժեղ էր և միշտ ձգտում էր կաթողիկոսական աթոռը տեղափոխել Վասպուրական: Այդպիսով, կաթողիկոսը երկրի ծանր օրերին լքում է ոչ միայն ժողովրդին, այլև Դվինի հայրապետանոցը

և նրա հարուստ գանձերն ու կալվածները: Դրանից հետո կաթողիկոսական աթոռը միաժամանակ փոխադրվում է Աղթամարի կղզին: Կաթողիկոսական աթոռի հաստատումն Աղթամարում, անշուշտ, արդյունք էր Այրարատ-Շիրակի Բագրատունյաց թագավորութեյան խառնակ ու ծանր վիճակի: Հայտնի է, որ Յուսուֆի հռչակած Աշոտ Շապուհյանի ձևական թագավորութեյունը, որը կուչ էր եկել Բագարանում, ոչ ուժ ուներ և ոչ էլ ազդեցութեյուն, որպեսզի կարողանար երկրում դեր խաղալ: Աշոտ Երկաթը, լքված յուրայիններից, հուսահատված ապաստան էր գտել Սևանա կղզում և գտնվում էր Բեշիրի սպառնալիքի տակ: Այդ պատճառով Գագիկ Արծրունին առաջնութեյուն է ձեռք բերում կաթողիկոսական աթոռն Աղթամարը տեղափոխելու և հետագայումն էլ այնտեղ պահպանելու համար:

Աշոտ Երկաթը Սևանա կղզին էր մտել մի նպատակով, որպեսզի ցույց տա հայ իշխաններին, որ միևնույն է, իրեն լքելով, բայց և այնպես արաբական ոստիկաններից ստացած իրենց թագերն ու ինքնավարութեյունները կրում են ժամանակավոր բնույթ, թշնամին հարմար պահին նրանց պիտի զրկի իրենց այդ իրավունքներից ու կալվածներից: Սակայն հաշվի առնելով, որ այդ միջոցով կարող է երկիրը կորստյան մատնել, մանավանդ որ Սյունյաց իշխաններն արդեն ծոմակի էին նկել թշնամու առաջ, միաժամանակ տեսնելով ժողովրդական մասսաների հուզմունքը և Գևորգ իշխանի Բեշիրի դեմ տարած հաղթանակը, որը ուժի էր հանել բոլորին հարազատ հողը պաշտպանելու համար, որոշում է դուրս գալ կղզուց և գլխավորել ազատագրական պայքարը: Նորից զարթնում է պայքարի ոգին նրա մեջ: Նա կապ է ստեղծում Գևորգ իշխանի և ժողովրդական կռվող խմբերի ու Գագիկ Արծրունու հետ, կոչ է անում նրանց ելնել պայքարի: Այնուհետև Աշոտ Երկրորդը պատրաստվում է դուրս գալ կղզուց և լճափին ճակատամարտ տալ թշնամուն:

Աշոտ Երկրորդը, որ նախօրոք կապ էր ստեղծել Գևորգ իշխանի հետ, որպեսզի նա իրեն օգնի Սևանի ափին ճակատամարտ տալու ժամանակ, լցված վրեժի ցասմամբ, 923 թվականի մի հարմար օր իր մոտ եղած փոքրաթիվ զորքով և

10 նավերով դուրս է գալիս կղզուց, անձնատուր լինելու պատրվակով, բայց նավերում քողարկված զորքով հանկարծակի հարձակվում է լճափին գտնվող թշնամու վրա, որ եկել էր իրեն գերի վերցնելու։ Դրանով լճափին տեղի է ունենում ուժեղ ճակատամարտ, ուր փոքրաթիվ հայ զինվորները կատարյալ ջարդ են տալիս թշնամուն։ Բիշիրի բանակի մի մասը խեղդվում է լճում, իսկ մի մասը կոտորվում լճափին։ Արաբական զորավարն իր ջարդված բանակի մնացորդներով բըռնում է նահանջի ճանապարհը։ Այնուհետև Աշոտ Երկրորդը նորից հագնում է արքայական զգեստը և հեծնում արքայական նժույգը, անցնում է հայկական բանակի գլուխը և հետապնդում նահանջող թշնամուն, որն աշխատում էր իր վրեժը լուծել ճանապարհին՝ Գեղա ամրոցը գրավելով։ Սակայն Գևորգ իշխանը իր փոքրաթիվ քաջերով դուրս է գալիս բերդից և հարձակվում է Բիշիրի ջարդված բանակի մնացորդների վրա, ինքն անձամբ կռվի է բռնվում Բիշիրի հետ և գետին տապալում նրան, արաբները պարտվում են և դիմում փախուստի։ Հայերը հետապնդում են նահանջող թշնամուն մինչև Դվինի պարիսպները։ Այսպիսով, արաբական հրոսակները լուրջ ջարդ կրելով Սևանի ափին թագավորի զորքերից և Գեղա լեռան ստորոտում Գևորգ իշխանի զորամասերից, փախչում և կուչ են գալիս Դվինի պարիսպների հետևում։ Իսկ երբ հայկական բանակը մեծաքանակ մոտենում էր մայրաքաղաքին, Ներսե ոստիկանը դուրս է գալիս Դվինից ու խալիֆի անունից խնդրում արքային հաշտություն կնքել։ Աշոտ Երկրորդը թեև երդվել էր, որ մինչև վերջին հագարացուն չվռնդի Հայաստանից, սուրը պատյան չպիտի դնի, սակայն հաշվի առնելով երկրի ծանր վիճակը, ստիպված է լինում պայմանագիր կնքել ոստիկանի հետ։ Ըստ այդ պայմանագրի արաբներին էին մնում Դվինից դեպի Նախիջևան ընկնող տարածությունները. այնտեղ իշխող արաբ էմիրները պետք է ճանաչեին Աշոտ Երկրորդի սուվերեն իրավունքը, իսկ խալիֆն էլ պետք է վավերացներ նրա արքայից արքայի իրավունքը ամբողջ Հայաստանի վրա։ Ապա Աշոտը հաղթական կերպով վերադառնում է Շիրակավան-Երազգավորս, որովհետև հին մայրաքաղաքը Բագարանը պատկանում էր Աշոտ Բռնավորին։

Շուտով խալիֆաթը, համաձայն Դվինի պայմանագրի, նույն 923 թվականին Աշոտ Երկրորդին ուղարկում է թագ ու ծիրանի, արքայից արքայի տիտղոսով։ Այսպիսով, Աշոտ Երկրորդը, թեև 915 թվականից սկսած թափառական թագավոր էր երկրում, իրավական ձևակերպում է ստանում միայն 923 թվականին, այդ պատճառով էլ հայ պատմագիրները կոիվների այդ էպոխան համարում են անիշխանության շրջան։ Իր հերթին Աշոտ Երկրորդը, ինչպես նշել ենք, պաշտոնապես ճանաչում է Գագիկ Արծրունուն Վասպուրականի թագավոր, ինչպես նաև արաբական էմիրությունների ինքնուրույնությունները։ Բայց հայ և արաբ ինքնուրույն իշխանությունները պարտավոր էին ճանաչել Բագրատունիների արքայից արքայի սուվերեն իրավունքը։

923 թվականի Սևանի հաղթական ճակատամարտը փոխում է հայ-արաբական լարված քաղաքական հարաբերությունները հօգուտ հայերի։ Արաբների կրած ծանր հարվածները Սևանի ափին և Գեղա լեռան ստորոտում, ստիպում են արաբական խալիֆաթի Ատրպատականի ոստիկաններին փոխել իրենց մտադրությունները և բռնել նրա կառավարիչներին սիրաշահելու, առհասարակ Հայաստանից ձեռք քաշելու քաղաքականության ուղին, որովհետև վերջ ի վերջո բոլոր տեսակի քաղաքական փոթորիկները վերջանում են հայերի հաղթանակներով ու Բագրատունիների թագավորության ամրապնդմամով, այն էլ արքայից արքայի տիտղոսով։ Ճիշտ է, Բագրատունիները չէին խառնվում արաբական էմիրությունների և Վասպուրականի Արծրունյաց թագավորության ներքին գործերին, բայց և այնպես նրանք արտաքին հարցերում չունեին վճռական դեր։ Այդպիսով, երկարամյա այն պայքարը, որ մղում էին Բագրատունիների թագավորների և Ատրպատականի արաբական էմիրների միջև, վերջանում է Սևանի ճակատամարտով արաբների լիակատար պարտությամբ։ Սակայն Բագրատունիներն էլ չեն կարողանում գլուխ բերել իրենց ծրագիրը, այսինքն՝ Հայաստանում ստեղծել մեկ միասնական ուժեղ պետություն, որովհետև նրանց այդ ձգտումները հանդիպում են ներքին և արտաքին թշնամիների կատաղի դիմադրության, որի հետևանքով Բագրատունյաց թագավորները

իրենց հերթին բռնում են զիջումների ճանապարհը և թույլ են տալիս, որ աստիճանաբար առաջ գան մի շարք տեղական ինքնուրույն թագավորություններ։ Բագրատունիների Դվին-Շիրակյան թագավորությունը դրանց վրա միայն կարողանում է պահպանել ձևական սուվերեն իրավունք։ Բայց հայ-արաբական պայքարը վերջանում է հայերի հաղթանակով ու հայկական պետության ամրապնդումով։

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԵՎ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԸ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 920—950-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հայկական պետության ամրապնդումը

Նըսր և Բիշիր ոստիկանների արշավանքներով ու կրած պարտություններով 923 թ. վերանում է արաբական խալիֆաթի տիրապետության երկարամյա դաժան լուծը։

Ճիշտ է, Հայաստանը 885 թ. ձեռք էր բերել անկախություն, բայց մինչև 923 թ., մոտ 38 տարի, ոչ միայն պարտավոր էր ճանաչել խալիֆաթի տիրապետությունը, այլ պարտավոր էր որոշ գումար հարկ վճարել։ Այդ 38 տարիներից 14-ը (909-923 թթ.), ինչպես տեսանք, հանդիսանում են երկարամյա կռիվների ու ներքին պայքարի տարիներ, որոնք վերջացան Բագրատունիների մասնակի հաղթանակով։ Սակայն այդ հաղթանակը արդյունք էր ոչ միայն հայ ժողովրդի ուժերի ու նրա պայքարի, ինչպես ցույց ենք տվել վերևում, այլև 920-ական թվականներին ստեղծված արտաքին նպաստավոր պայմանների։ Պատմաբան Լեոն Հայաստանի ազատագրումը վերագրում է միայն արտաքին հանգամանքներին[1], որը ոչ միայն ճիշտ չէ, այլև մեղանչում է պատմական փաստերի առաջ։

1 Լեո, Հայոց պատմություն, 2-րդ հատ. էջ 589, Երևան, 1947։

920-ական թվականներին արաբական խալիֆաթի քայքայումը հասել էր այն աստիճանին, որ նա այլևս չէր կարող ճնշել որևէ ապստամբություն։ Այդ թուլացումը 10-րդ դարի երկրորդ քառորդին հասել էր այն դրության, որ այլևս նրան հարկ չէին վճարում մի շարք երկրներ ու մարզեր, իսկ բազմաթիվ նահանգներ ու փոխարքայություններ ուղղակի բռնել էին անկախության ուղին։ Արաբական արքունիքը դարձել էր գահակալական կռիվների բույն, իսկ երկիրը փոխարքաների ու զորավարների արյունահեղ պայքարի թատերաբեմ։ Նույնիսկ բուն Միջագետքում, խալիֆաթի արքունիքին շատ մոտիկ առաջանում են կիսանկախ իշխանություններ։ Մոսուլում հիմնված և հետզհետե հզորացող Համդանյան դինաստիան վտանգ էր սպառնում Բաղդադին, արևմուտքում հիմնված ֆաթիմյան դինաստիան տիրել էր Եգիպտոսին և Սիրիային, իսկ արևելքում՝ Կասպից ծովի հարավային մարզերում, այժմյան Մազանդարայում, ձևակերպվում է պարսկական Բուվեյհյան պետությունը, որն իր տիրապետության սահմաններն արևմտյան կողմից հասցրել էր մինչև Բաղդադ և իր ձեռքին խաղալիք էր դարձրել խալիֆներին։ Պարսկական այս նոր պետությունն էր, որ մեծ հարված էր հասցնում Աթաբատականի արաբական էմիրությանը և այդ պետության դեմ մղած կռիվների ժամանակ է, որ սպանվում է Յուսուֆը, Հայաստանն ազատվում է այդ վտանգավոր թշնամուց։ Ահա այն քաղաքական նպաստավոր պայմանները, որոնց շնորհիվ Հայաստանն ու Վրաստանն ամրապնդում են իրենց դիրքերը։

Սակայն խալիֆաթի թուլացումով չէր վերջանում արտաքին վտանգը։ Հայաստանը շարունակում էր մնալ որպես բուֆեր երկիր։ Այժմ էլ իր հզորությամբ հանդես է գալիս Բյուզանդիան, որին քայքայվող խալիֆաթից առաջացած մանր իշխանություններն ու ֆեոդալական փոքրիկ պետություններն ի վիճակի չէին դիմադրել։ Մոտավորապես մի դար Բյուզանդական կայսրությունը սիստեմատիկ նվաճումներ է կատարում, որոնց շնորհիվ նա հասնում է իր զարգացման ու ընդարձակման բարձրագույն աստիճանին։ Այդ նվաճումների ընթացքում «Քրիստոնյա» Բյուզանդիան «Քրիստոնյա» Հա-

յաստանի հարավ-արևմտյան կողմերից ևս խլում է մի շարք գավառներ ու մարզեր։

Ռոմանոս Լեկաբենոսի օրով մակեդոնական դինաստիան մի շարք հաղթանակներ է տանում Արևելքում արաբների դեմ (920—942 թթ.) և 22 տարվա պայքարի ընթացքում կայսրության արևելյան սահմանները, որոնք արաբները հասցրել էին Հալիս (Ալիս) գետին, հետզհետե ետ մղելով, նորից հզորում է Եփրատ գետով, վերականգնելով հին հռոմեական փառքը։ Ռոմանոս Լեկաբենոսի խոշոր հաղթանակներից մեկը Մելիտինեի արաբական էմիրության գրավումն էր։ Այդտեղի արաբ էմիր Աբու-Խաֆան ոչ միայն ստիպված է լինում դուրս գալ խալիֆաթի տիրապետության սիստեմից, այլև միանում է կայսրության հետ և դուրս է գալիս արաբների դեմ, մի հանգամանք, որ բացառիկ նշանակություն էր մահմեդական աշխարհում։ Դրանով վերջ է դրվում մի էմիրության, որը տարիներ շարունակ պլացդարմ էր դարձել խալիֆաթի ձեռքին՝ Փոքր Ասիայի վրա հարձակվելու համար։ Այնուհետև Ռոմանոսը կրկին անգամ իր զորագնդերն ուղղում է դեպի Արևելք և հերթական անգամ գրավում է Ամիդը (Դիարբեքիրը), Արզնը, Դարանը և Մծբինը։ Սրա գրաված բնակելի վայրերի թիվը հասնում է մեկ հազարի։ Բյուզանդական կայսրության այս հաղթական կռիվները հանդիսանում էին այն պատճառներից մեկը, որ արաբական խալիֆաթը և նրա էմիրներն այլևս ուշադրություն չէին դարձնում Հայաստանի վրա, որի պատճառով էլ երկիրն Աշոտ Երկրորդի թագավորության վերջին և Աբասի իշխանության տարիներին ապրում է խաղաղ վիճակ, ժողովուրդը անցնում է շինարարական աշխատանքի։

Բյուզանդական կայսրությունն իր այդ նվաճումների ժամանակ անտարբեր չէր Հայաստանի նկատմամբ։ Դեռ Լևոն Իմաստասերի օրոք կայսրությունը ձգտում էր իրեն ենթարկել Տարոնը, ուր իշխում էր Բագրատունիների ճյուղերից մեկը։ Տարոնի Բագրատունի կառավարիչները, վախենալով բյուզանդական ագրեսիայից, աշխատում էին մոտիկ հարաբերություններ մշակել կայսրության հետ։ Օրինակ, Գրիգորիս Բագրատունին դիվանագիտական կապ ստեղծելով Կ. Պոլսի արքունիքի հետ նրանից ստանում է նվերներ, իսկ ինքն էլ

իր հերթին փոխադարձ թանկագին իրեր է ուղարկում: Դրանով Տարոնի կառավարիչները մի տեսակ վասալական կախման մեջ են ընկնում կայսրությունից: Բայց դա կրում էր ձևական բնույթ, մինչև որ վերոհիշյալ Գրիգորիսի որդի Բագրատը Ռոմանոսի կայսրության ժամանակ (919—944) մեկնում է Կ. Պոլիս, հայտնում իր հպատակությունը և ստանում է պատրիկության տիտղոս: Ապա ամուսնանում է կայսրի ազգականուհիներից մեկի հետ և վերադառնում Տարոն: Ահա այս պատրվակով կայսրությունն աստիճանաբար իր ազդեցության մոտեցնում էր Հայաստանին: Բայց դրանով դեռ կայսրությունը Տարոն գավառի տերը չէր դարձել: Բագրատի օրինակին հետևում էր նաև Տարոնի մի այլ իշխան՝ Թոռնիկ անունով, որը Բագրատի հորեղբոր որդին էր: Սա մահանում է Կ. Պոլսում և մահից առաջ կայսրության ճնշման հետևանքով, Տարոնում իր ունեցած փոքրիկ կալվածքը կտակում է կայսրությանը: Այդ եղանակով կայսրությունն աստիճանաբար հայկական հողերը իր ձեռքն է գցում: Իսկապես, Բյուզանդիան այդ փոքրիկ կալվածները Տարոնում իր ձեռքում պահպանելու անվան տակ Ռոմանոսի դևխավորությամբ մեծ բանակ է ուղարկում Հայաստան: Այդ բանակը պաշարում է Խլաթը և ստիպում է քաղաքացիներին հաշտության պայմանագիր կնքել ու անձնատուր լինել: Այնուհետև գրավում է Բաղեշն (Բիթլիսը) ու նրա շրջակայքը, իսկ Ռոմանոսի եղբայր Թեոփիլն էլ գրավում է Երզնկան ու Կարինը: Իսկ ավելի ուշ Բասեն գավառը գրավելուց հետո միացնում են Տայքի կյուրապաղատությանը: Ճիշտ է, Հայաստանի վերոհիշյալ վայրերը պատկանում էին մահմեդական էմիրներին, բայց նրանք ճանաչում էին Բագրատունիների սուվերենությունը: Ինչպես տեսնում ենք, կայսրությունն օգտվելով խալիֆաթի և Բագրատունիների թուլությունից, նվաճում է Հայաստանի հարավարևմտյան շրջանները և ծանր հարված է հասցնում Բագրատուններին, որոնք չեն կարողանում պահպանել իրենց սուվերեն իրավունքն այդ մարզերի վրա: Այդպիսով, արաբական խալիֆաթից հետո, 10-րդ դարի կեսերից Հայաստանի նկատմամբ ագրեսիվ քաղաքականություն էր վարում Բյուզանդական կայսրությունը:

***

Սևանի ճակատամարտից հետո երկիրը խաղաղվում է, Աշոտ Երկրորդը հաշտվում է իր եղբայր Աբասի ու Աշոտ Բրոնավորի հետ և մոտ վեց տարի (923—929) խաղաղ կառավարում է Հայաստանը, ձեռք քաշելով Հայաստանում մեկ միասնական պետություն ստեղծելու մտքից, որովհետև ինչպես իր, նույնպես և իր նախորդների ջանքերն այդ ուղղությամբ անցնում են ապարդյուն: Հետևաբար թե՛ ինքը, թե՛ իր հաջորդները ստիպված են լինում հրաժարվել այդ քաղաքականությունից և բավականանալ իրենց տոհմական կալվածներով, բայց միաժամանակ աշխատում են իրենց սուվերեն իրավունքը տարածել մյուս իշխանությունների վրա: Այդ էր պատճառը, որ Աբասը պայքարի դուրս չի գալիս Բյուզանդիայի դեմ, թեև կռվելու համար ուներ մեծ ուժեր: 923 թ. սկսած, շուրջ մեկ դար երկիրը դադարում է ներքին և արտաքին ծանր արյունահեղ կռիվներից ու պատերազմներից և բռնում է իր տնտեսական ու կուլտուրական կյանքի զարգացման ուղին:

Աբաս թագավոր և նրա վարած քաղաքականությունը

Աշոտ Երկրորդն իշխում է 14 տարի (915—929), այդ տարիներից 8-ը անցնում են կռիվների ու փոթորիկների պայմաններում, իսկ 6-ը խաղաղության: Նա անժառանգ մնալով, հայ ավագանու և Գագիկ Արծրունու խորհրդով գահը հանձնում է եղբայր Աբասին: Հայ և օտար աղբյուրները Աբասի թագավորության շրջանի մասին տեղեկություններ քիչ են հաղորդում: Հովհաննես կաթողիկոսի և Թովմա Արծրունու աշխատությունները գրեթե վերջանում են Աշոտ Երկրորդի մահով, ավելի շուտ Սևանի ճակատամարտով և նրանց հաբակից դեպքերով: Իսկ 10-րդ դարի երկրորդ կեսի և 11-13-րդ դարերի պատմիչները շատ քիչ վկայություններ են հաղորդում 10-րդ դարի երկրորդ քառորդի մասին: Դա էլ ցույց է տալիս, որ Աբասի թագավորության տարիներն անցել են խաղաղ: Միաժամանակ ոչ մի վկայությամբ կամ փաստով չի հաստատվում, որ Աբասի թագավորությունը վավերացված լիներ խալիֆի կամ նրա ոստիկանների կողմից: Դա էլ ցույց է տալիս խալիֆաթի ընկած վիճակը և Աբբասյան դինաստիայի

քայքայումը։ 930 թ. Պարսկաստանը Մարտավիկ պարսիկի գլխավորությամբ ապստամբում և դառնում է ինքնուրույն, նույնիսկ սպառնում խալիֆաթին։ Ներքինապետ Մունեսը ապստամբում է Մուկտադիր խալիֆի դեմ, թեև 932 թ. խալիֆ է դառնում նրա եղբայր Կադրը Բիլլահը (932—934)։ Բայց սրա թուլությունից օգտվելով, մի շարք կառավարիչ-ոստիկաններ ապստամբելով դառնում են անկախ, խալիֆին մնում էր միայն Բաղդադը, ուր տեր ու տիրակալն էին էմիրյուլյուննեբը, որոնք խալիֆին փակել էին հարեմում։ Միջազգային այս նոր իրադրությունները հնարավորություն են տալիս հայերին աղատ տնօրինելու իրենց գործերը Հայաստանում։

Աբասը պատմությունից շատ դասեր ու փորձառություններ էր ձեռք բերել, ուսոի իր քաջության ու ռազմական ունակության հետ միացնում է նաև դիվանագիտությունը, որը չուներ իր եղբայր Աշոտ Երկաթը։ Նա բռնում է հայ իշխաններին սիրաշահելու քաղաքականության կուրսը, վերջ տալով նախորդ թագավորների միահեծան-կենտրոնական պետություն ստեղծելու քաղաքականությանը, մանավանդ որ նման պետություն ստեղծելու, ինչպես նշել ենք, ոչ մի ներքին ու արտաքին պայմաններ չկային։ Նա բավականանում է միայն նրանով, որ իր ձևական, բարոյական սուվերեն իրավունքը պահպանվի հայ իշխանությունների և արաբ էմիրությունների վրա։ Նա առաջին հերթին ճանաչում է Արծրունյաց Գագիկ թագավորի իրավունքները Վասպուրականի վրա, որովհետև, ինչպես նշել ենք, նա արդեն բավարարվել էր Վասպուրականի թագավորության տիտղոսով և այլևս նոր ոտնձգություններ հանդես չէր բերում Հայաստանի թագավորության տիտղոսի համար։ Աբասի գործերին ավելի նպաստում էր այն հանգամանքը, որ Աշոտ Շապուհյանը, որ առաջ նստում էր Դվինում, իսկ հետո Բագարանում, որպես հակաթոռ Շիրակին, մահանում է առանց ժառանգի։ Այդ պատճառով Աշոտ Շապուհյանի նորելուկ թագավորության հողերը նույնպես անցնում են Աբասին։ Այդպիսով, վերջանում են Բագրատունիների տոհմի ներքին երկպառակությունները։ Սյունյաց և երկրի մյուս իշխանները ապահովելով իրենց կալվածներն ու տանուտիրական իրավունքները արաբական էմիրությունների ոտնձգություններից

և Բագրատունիների վարած կենտրոնաձիգ քաղաքականությունից, միաժամանակ պատմությունից դաս վերցնելով, նույնպես ենթարկվում են Աբասին։ Պետք է նշել, որ Բագրատունիների թագավորությունն էլ ուժեղացել էր։ Վերջինի հետ սերտ բարեկամական ու դաշնակցային կապ է ստեղծում նաև Արծրունյաց Գագիկ թագավորը։ Այդպիսով, հայ ռազմական ուժերը համախմբվում են։ Աբաս թագավորը միաժամանակ հաշվի առնելով, որ իրենց տոհմի բոլոր սպարապետները ապստամբել են թագավորների դեմ, այդ պատճառով փոխում է եղած կարգը՝ սպարապետության պաշտոնը հանձնելով իշխանական ուրիշ տոհմերի, ինչպես այդ գոյություն ուներ Արշակունիների ժամանակ։ Նա սպարապետության պաշտոնը հանձնում է Գևորգ իշխանին, որը բոլոր հայ իշխաններից ավելի հավատարիմ էր ծառայել բագրատունյաց գահին։

Թովմա Արծրունու ասելով, երբ արաբական խալիֆաթի գրությունը ծանր էր, դրանից օգտվելով Նախիջևանի արար էմիրը հարձակվում է Գողթնի և ապա Դվինի վրա ու գրավում այն, հասնելով մինչև Արագածոտն գավառը, որոնք պատկանում էին Շիրակի թագավորությանը։ Աբասն անպատրաստ դուրս է գալիս ոստիկանի դեմ, բայց պարտվում և փախչում է Վրաստան։ Սակայն շուտով վրա է հասնում Գագիկ Արծրունին իր բանակով, Խորվիրապի մոտ ջարդում է թշնամու զորքին ու քշում դեպի Նախիջևան։ Դրանով Աբասի իշխանությունը վերականգնվում է իր բոլոր հողերի վրա։ Դրանից քիչ անց, 937 թվականին մահանում է Գագիկ Արծրունին, 29 տարի թագավորելուց հետո։ Աբասի համաձայնությամբ նրան հաջորդում է ավագ որդի Աշոտ-Դերենիկը, որն իշխում է մինչև 954 թվականը։

Աբասը հաշվի առնելով, որ Դվինն ու Շիրակը մոտ են արաբական ոստիկանների նստավայրերին, գահը Երազգավորից տեղափոխում է սպարապետության նստավայր Կարս և այդ քաղաքը դարձնում է երկրի վարչական կենտրոն, ուր շինել է տալիս հոյակապ պալատ, բերդ և եկեղեցի, որոնք մինչև այսօր էլ կանգուն են։ Մինչ Բագրատունյաց թագավորը զբաղված էր իր մայրաքաղաքի ու ավերակ երկրի վերաշինությամբ, բյուզանդական կայսրության դրդումով Աբխա-

դիայի անբարտավան Բեր թագավորը, կովկասյան լեռնականների գլուխն անցած, հարձակվում է Հայաստանի վրա, պատճառաբանելով, որ գալիս է Կարսի նորակառույց եկեղեցին օծի քաղկեդոնական դավանանքով։ Այդ ժամանակ Բյուզանդիայի ազդեցությունը մեծ էր Սև ծովի ափերի, Տայքի և կովկասյան լեռնականների վրա, իսկ Աբասն էլ հաշվի չէր նստում կայսրության հետ։ Ուստի վերջինս Բերի միջոցով աշխատում էր ազդել Աբասի քաղաքականության վրա։ Հայերը դեսպան են ուղարկում Բերի մոտ, որ ետ քաշվի իր երկիրը և անհիմն կերպով նոր արյունահեղության պատճառ չդառնա։ Թշնամին մերժում է հայերի առաջարկը, և Աբասը ստիպված է լինում Գևորգ սպարապետի հետ զորքով դուրս գալ ասպատակի դեմ։ Ճակատամարտը տեղի է ունենում Կուր գետի ափին, հայկական բանակը ջարդում է թշնամուն ու շահում ճակատամարտը։ Բերը գերի է ընկնում, նրան բերում են Կարս, ցույց են տալիս եկեղեցին, ապա կուրացնում և փրկանք վերցնելով վերադարձնում են իր երկիրը, պայմանով, որ այլևս Հայաստանի վրա արշավանք չկատարի։ Դրանով էլ խաղաղվում է երկիրը. «Յաւուրս սորա եղև խաղաղութիւն աշխարհիս Հայոց,— գրում է Սամվել Անեցին,— զի եբարձ զխռովարար աւազակսն»[1]։

Արտաքին այս նոր թշնամուն երկրի սահմաններից դուրս քշելուց հետո Հայաստանի բնակչությունը կրկին անգամ զբաղվում է շինարարությամբ։ Վերաշինում են ավերակ քաղաքներն ու գյուղերը, դղյակները, ջրանցքներն ու ճանապարհներն իրենց կամուրջներով, ամայացած դաշտերը վերըստին մշակվում են, զարգանում են արհեստն ու առևտուրը։ Աբասը Ատրպատականի ոստիկանների հետ դաշինք կնքելով, մի կողմից պահպանում է խաղաղությունը, իսկ մյուս կողմից կատարում է գերիների փոխանակություն, որով հազարավոր տարագիրներ վերադառնում են իրենց հայրենիքը և լծվում երկրի ընդհանուր շինարարական գործին։ Այդ է պատճառը, որ Ասողիկը գրում է. «...խաղաղության և շինութեան պատճառ եղեալ աշխարհիս Հայոց, ըստ քաղցր բարուց իւրոց և ըստ քաջազօր զօրութեանն...»[1]։

1 Սամվել Անեցի, էջ 99։

Բագրատունյաց այս չորրորդ թագավորը թեև լուրջ հաջողություններ ուներ, բայց նա ոչ մի փորձ չի անում կաթողիկոսությունը Վասպուրականից փոխադրելու և ոչ էլ հակաթոռ ստեղծելու։ Նա աշխատում է Գագիկ Արծրունու և նրա հաջորդների հետ պահպանել քաղաքական լավ հարաբերություններ, իսկ դա էլ կազմում էր Աբասի վարած քաղաքականության հիմքը։ Սակայն երբ Վասպուրականի—Աղթամարի վերջին կաթողիկոս Անանիան (946—968) թողնում է Վասպուրականը և անցնում Այրարատյան աշխարհը, Արծրունիները Աղթամարում հակաթոռ են ստեղծում։ Ինչպես երևում է, Աբասը դժգոհության ոչ մի տեղիք չի տվել կաթողիկոսության վայրի կապակցությամբ և շարունակել է իր քաղաքական լավ հարաբերությունները Աշոտ-Երեմիկի հետ։

Ինչպես գիտենք, Աբասի ժամանակ խալիֆաթի և կայսրության քաղաքական հարաբերությունները լարված էին, նրանց միջև մղվում էին կռիվներ, իսկ այդ ընթացքում Բյուզանդական մասում եղած հայերի նկատմամբ նորից սկսում են կրոնական հալածանքներ, որի հետևանքով փոքր Հայքից մեծ քանակությամբ հայեր գաղթում են դեպի Շիրակ ու Այրարատ, որովհետև երկրում ստեղծվել էր ֆիզիկական գոյության ապահով դրություն։ Այսպիսով, Աշոտ Երկրորդից հետո Բագրատունյաց պետությունը մտնում է իր ինքնուրույնության մի նոր շրջան. այդ իսկական ինքնուրույնության ամուր հիմքը դրվում է Աբասի իշխանության ժամանակ (929—953)։

2. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՏՈՒՄԸ ԵՎ ՎԱՍԱԼ ՆՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ

Աշոտ Երորդի հաջողությունները. Անիի Հայաստանի մայրաքաղաք

Պատմագիր Ասողիկի ասելով Աբասին հաջորդում է նրա որդի Աշոտ Երրորդը (953—977)[1] Ողորմած մականունով։ Սա դեռ նոր էր անցել իշխանության գլուխ, երբ կովկասյան լեռնարնակ ցեղերը սկսում են կրկին անգամ ասպատակել

1 Ասողիկ, էջ 171։

երկրի հյուսիսային սահմանները: Աշոտ Երրորդը[1], Գևորգ իշխանի որդի Դոռի հետ, որը այդ ժամանակ սպարապետն էր, հայկական բանակով դուրս է գալիս այդ ցեղերի դեմ և երեք տարվա (հավանաբար 955—958 թվականներին) կռիվներից հետո նրանց ետ է շպրտում Հայաստանի սահմաններից: 959 թվականին Հայաստանի վրա է հարձակվում Միջագետքի արաբ էմիր Համտունը, որը ընդվզել էր խալիֆաթի դեմ և հարկ էր պահանջում Հայաստանից: Աշոտ Երրորդը Դոռի հետ այս անգամ արդեն երկրի ռազմական բոլոր ուժերով դուրս է գալիս այս նոր թշնամու բանակի դեմ, ջարդում է նրան և ետ մղում Հայաստանի հարավային սահմաններից, իսկ Համտունին բռնելով գլխատում է: Այս վերջին դեպքերը պատճառ են դառնում, որ խալիֆը Աշոտին ուղարկի թագ ու ծիրանի, «Շահի-Արմենն» տիտղոսով և մեծամեծ նվերներով: Աշոտ Երրորդը, ըստ Ուռհայեցու[2], ոչ միայն ողորմած էր, այլև «կորովի և այր պատերազմաց», որի հետևանքով նրա հեղինակությունն այնքան էր բարձրացել, որ երկրի իշխանները միաբանում ու դիմում են Անանիա կաթողիկոսին, որպեսզի նա Հայոց շահնշահին թագավոր օծի: Ահա իշխանների այդ պահանջի հիման վրա Անանիա կաթողիկոսը, Ուռհայեցու ասելով, 961 թ. Անի քաղաքում, երկրի բոլոր իշխանների, զորքի, 40 եպիսկոպոսների, Աղվանից Փիլիպոս թագավորի և Հովհաննես կաթողիկոսի ներկայությամբ Աշոտ Երրորդին մեծ հանդիսավորությամբ օծում է թագավոր: Այդ նույն թվականին էլ Անին դառնում է Բագրատունիների և Հայաստանի մշտական մայրաքաղաք, և գահը Կարսից տեղափոխվում է այնտեղ (Ըստ Սամվել Անեցու, Աշոտի թագադրության օծումը տեղի է ունեցել 964 թվականին[3], բայց մեզ ավելի հավանական է թվում Ուռհայեցու տեղեկությունը: Առհասարակ Սամվել Անեցու մոտ 2 կամ 3 տարվա թվերի տարբերություն է նկատվում, որը ճիշտ չէ): Թագադրումից հետո Աշոտ Երրորդի հեղինակությունն ու

1 Լևո, Հայոց պատմություն, հատոր Բ, էջ 559, համարում է չորրորդ, երրորդ համարելով Աշոտ Շապուհյանին, որը ճիշտ չէ:

2 Ուռհայեցի, էջ 3—4:

3 Սամվել Անեցի, էջ 100:

հզորությունն ավելի է բարձրանում երկրում: Անանիա կաթողիկոսի մահից հետո Անիում ընտրվում է հայոց ընդհանուր կաթողիկոս, որը նստում էր Անիի մոտ գտնվող Արգինա գյուղում: Դրանով էլ կաթողիկոսական աթոռը վասպուրականաղթամարից տեղափոխվում է Այրարատ: Հայաստանում կազմակերպում է հայկական մշտական բանակ, որի թիվը հասնում էր 90000-ի:

Վաճառքի և Սյունիքի վասալ թագավորությունների հիմնումը

Աշոտ Երրորդի ժամանակ երկրի տնտեսական կյանքը զարգանում էր, արագ էին զարգանում նաև ֆեոդալական հարաբերությունները և չնայած Բագրատունիների կենտրոնացած պետության ուժեղացմանը, աշխատանքային երկրի ֆեոդալական տարրերն իրենց հողային կալվածներն ընդարձակելու, գյուղացիության նկատմամբ եղած իրենց իրավունքները ամրապնդելու և տեղերում ինքնիշխան սուվերեն իրավունքներ ձեռք բերելու համար, վասպուրականի Արծրունիների նման, աշխատում էին ստեղծել նոր թագավորական իշխանություններ: Ահա այդ է պատճառը, որ Հայաստանի այդ խաղաղ դրությունը շուտով վրդովվում է: Աշոտ Երրորդը, երբ մայրաքաղաքը փոխադրում է Անի, կարսում կառավարիչ է նշանակում իր եղբայր Մուշեղին, որը նույնպես ձգտում էր դառնալ ինքնիշխան: Բյուզանդիայի դրդումով 962 թվականին ապստամբում է եղբոր դեմ և իրեն հռչակում թագավոր: Աշոտ թագավորը ներքին խռովություններից խուսափելու համար ստիպված է լինում ճանաչել նրան որպես Կարսի թագավոր, պայմանով, որ ենթարկվի իրեն: Այդպիսով, Բագրատունյաց Անիի թագավորությունն ավելի է մասնատվում և հիմք է դրվում Կարսի կամ Վանանդի թագավորությանը: Մուշեղը իշխում է մինչև 984 թվականը և կենտրոնական իշխանության դեմ ոչ մի անգամ չի ընդվզում:

Մուշեղի օրինակին է հետևում նաև Սյունյաց գահերեց իշխան Սմբատը: Սա 970 թվականին Սյունիքն անջատում է Բագրատունյաց Անիի թագավորությունից և հիմնում Սյունյաց թագավորությունը, միաժամանակ ճանաչելով Բագրատունիների սուվերեն իրավունքը: Աշոտ Երրորդը ստիպված է լինում ճանաչել նաև այս թագավորության անջատումը: Վե-

րոհիշյալ Թագավորության կենտրոնը սկզբում հանդիսանում էր Սիսիանը, իսկ հետո դառնում է Կապանը: Պատմիչների ասելով, Սյունյաց Թագավորությունն իր զարգացման ամենաբարձր աստիճանին է հասնում Վասակ Թագավորի ժամանակ (998—1040): Պատմական Հայաստանի Սյունյաց նահանգը միշտ էլ ունեցել է խիտ բնակչություն, դա երևում է նրա տված զորքի քանակից[1]: Սյունյաց Թագավորությունը 11—12-րդ դարերում, ըստ Ստեփանոս Օրբելյանի, ունեցել է 48 վանք, 43 բերդ-ամրոց և հազարից ավելի բնակատեղի: Բայց չի հիշվում որևէ մի քաղաք:

Հայաստանի կենտրոնացած պետության այս մասնատվածությունը ցույց է տալիս ոչ միայն կենտրոնախույս ուժերի ուժեղացումը, այլև այդ պետության տնտեսական և ռազմական բազայի թուլությունը և նրա կախվածությունը խոշոր իշխանական տոհմերից:

Ֆեոդալական ներքին պայքարը Վասպուրականում

Թեև Աբասի և նրա որդի Աշոտի ժամանակաշրջանում Բագրատունյաց Թագավորության մեջ տիրում է երկարամյա խաղաղություն, բայց Վասպուրականում չի պահպանվում այդ: 10-րդ դարի երկրորդ կեսում տնտեսական կյանքը և ֆեոդալական հարաբերությունները մեծ չափով զարգանում են նաև Վասպուրականում: Այստեղ ֆեոդալական մասնատվածության տենդենցները նույնիսկ ավելի ուժեղ էին արտահայտվում, քան երկրի մյուս մասերում: Արծրունյաց Թագավորությունը Գագիկի մահվանից հետո չի կարողանում պահպանել իր ռազմական ուժերը և դժվարանում է Վասպուրականի շրջանակներում ապահովել ֆեոդալական միավորումը ու սանձահարել իշխանների ապակենտրոնացած տրամադրությունները: Ֆեոդալական կենտրոնախույս ձգտումները Վասպուրականում գնալով դառնում են լուրջ ուժ, որի հետևանքով այդ Թագավորությունը 10-րդ դարի երկրորդ կեսում բաժանվում է առանձին, մանր, կիսաանկախ իշխանությունների: Ֆեոդալական ներքին կռիվները և մասնատվածության տենդենցներն ավելի ուժեղանում են Աշոտ-Դերենիկի իշխանության ժամանակ: Սա առանց լուրջ պատճառի պաշտոնազուրկ է անում սպարապետ Ապլխարիպ Հավնունուն, որը զայրանալով այդ դեպքից, Վասպուրականի Թագավորին մատնում է Հեր (Խոյ) ու Ջարևանդ (Սալմաստ) գավառների արաբ ոստիկան Արլհաճի ձեռքը, որի հետ հողային վեճեր ունեին Վասպուրականի Թագավորները: Արաբական այդ ոստիկանը հանկարծակի հարձակվում է Վասպուրականի վրա, հաղթում և գերի վերցնում Դերենիկ Թագավորին ու իր ծառաների առաջ ծաղր ու ծանակի ենթարկում նրան: Այս դեպքը վատ է ազդում Ապլխարիպ Հավնունու վրա, մանավանդ որ նրան նախատում է ժողովուրդը: Այս պատճառով նա ոչ միայն ետ է կանգնում իր դավաճանական քայլից, այլ հորդորում է Թագավորին, որ փախչի և ինքն էլ իր մի խումբ քաջերով դիմավորում է գերությունից փախչող Դերենիկին, ապա բերում է Վասպուրական և հաստատում իր գահի վրա: Բայց նա շուտով մահանում է և նրան հաջորդում է իր եղբայր Աբուսահլ Համազասպը (954—972), որը Աշոտ-Դերենիկի նման բարեկամական հարաբերություններ է պահպանում Բագրատունիների հետ: Իսկ սրա մահից հետո Վասպուրականի Թագավորությունը բաժանվում է իր երեք որդիների միջև: Վասպուրականի՝ Վան-Տոսպի, ու շրջակայքի վրա իշխում է Աշոտ-Սահակը, Անձևյաց երկրում՝ Գուրգեն-Խաչիկը, իսկ Ռշտունիքում՝ Սենեքերիմ-Հովհաննեսը: Սակայն Թագավորական իրավունքը սկզբում վերապահված էր Աշոտ-Սահակին (972—983), ապա Գուրգեն-Խաչիկին (983—1003), որի մահվանից հետո բովանդակ Վասպուրականի վրա իշխում է Ռշտունիքի կառավարիչ Սենեքերիմ-Հովհաննեսը (1003—1021): Այս բոլոր Թագավորները բարեկամական քաղաքականություն են պահպանում Բագրատունիների հետ:

Հայտնի է, որ Մամիկոնյան տոհմի վերացումից հետո Բագրատունիների դեմ մրցող միակ իշխանությունը հանդիսանում էր Վասպուրականի Արծրունյաց Թագավորությունը: Սակայն այս տոհմն էլ Գագիկ-Խաչիկի ժամանակ (908—937) պատմությունից դուրս դասեր վերցնելով, շուտով համաձայնության է գալիս Բագրատունիների հետ և բավարարվում Վասպուրականի Թագավորությունով: Այնուհետև, ինչպես տե-

[1] Տե՛ս Հ. Դ. Ալիշան, «Այրարատ», էջ 430, Վենետիկ, 1890:

սանք, մնացած բոլոր թագավորները Բագրատունիների հետ պահպանում են քաղաքական լավ հարաբերություններ: Ուտի և Վասպուրականն էլ ընդհանուր Հայաստանի հետ միասին բռնում է տնտեսական և կուլտուրական զարգացման ուղին, կառուցվում են Վարագի, Աղթամարի և ներկա հուշարձաններ: Վասպուրականի թագավորությունը ընդգրկում էր ընդարձակ տերիտորիա, նրա սահմանները ձգվում էին Նախիջևանից մինչև Տավրոսյան լեռների արևելյան շրջանները, Վանա լճից մինչև Կապուտան (Ուրմիո լիճը): Այդ երկրովն էր անցնում քարավանային առևտրի հարավային ճյուղը, որի վրա գտնվում էին Խոյն ու Սալմաստը, Վանն ու Բերկրին և Արճեշն ու Մանազկերտը: Այս քաղաքները միաժամանակ առևտրական մեծ կապեր ունեին Հայաստանի մայրաքաղաք Անիի հետ: Իշխող դասակարգերի ու առևտրա-վաշխառուական դասի ձեռքին կուտակվում էր մեծ քանակությամբ հարստություն, իսկ 11-րդ դարի առաջին քառորդին, Սենեքերիմ թագավորի ժամանակ այդ իշխանության սահմաններում կար 10 քաղաք, 4000 գյուղ ու ավան, 72 բերդ ու ամրոց, 115 վանք ու սրբավայր և մեկ միլիոն ու կեսից ավելի բնակչություն:

Շինարարության զարգացումը

Պատմական աղբյուրները վկայում են, որ Աշոտ Երրորդի ժամանակ Հայաստանում ծավալվում է շինարարությունը: 10-րդ դարի առաջին քառորդից սկսված համեմատաբար խաղաղ շրջանը և տնտեսական վերելքը հնարավորություն են ընձեռում քաղաքներում և երկրի տարբեր վայրերում զանազան բնույթի շինարարություն ծավալել (բերդեր, ամրոցներ, դղյակներ, վանքեր, կամուրջներ): Ինչպես իր ժամանակի պատմիչները, այնպես էլ պահպանված հնություններն ու պեղումները վկայում են, որ այդ ժամանակաշրջանում կառուցվել են նաև ճարտարապետորեն ձևավորված հոյակապ շենքեր:

Աշոտ Երրորդն առանձնապես մեծ ուշադրություն է դարձնում Անիի վրա: Նա մայրաքաղաքը Կարսից տեղափոխեց Անի, որովհետև այդ ամրոցը հանդիսանում էր Շիրակի ամենամեծ և ամուր կենտրոնը: Անիի դերը չէին կարող կատարել ոչ Բագարանը, ոչ Երազգավորսը և ոչ էլ Կարսը, ուր հերթական

նությամբ տեղափոխվում էին Բագրատունիների արքայական գահերը: Անին մինչև մայրաքաղաք դառնալը, ըստ հայ պատմագիրների, մի անառիկ ամրոց էր, հաստատված Ախուրյան գետի և արևելյան կողմից նրա մեջ թափվող Ծաղկոցաձորի վտակի եռանկյան վրա: Բացի բնական պատնեշներից, թագավորը 964 թ. կառուցել է տալիս քաղաքի պարիսպը, որով դառնում է էլ ավելի անառիկ: Իսկ բերդի արևմտյան և արևելյան փոքրիկ ձորերում ապրող բնակչությունը հիմք է կազմում ապագա մեծ քաղաքի: Այնուհետև Աշոտ Երրորդը միջնաբերդի արևելյան ժայռոտ մասերը հարթելով, այնտեղ շինել է տալիս եկեղեցի, բնակելի շենքեր, արքունի պալատի մի մասը և ջրմուղը: Այդպիսով, Անին աստիճանաբար դառնում է երկրի մայրաքաղաքը՝ Դվինի փոխարեն: Վերջ ի վերջո այդ քաղաքի մոտ գտնվող Արգինա գյուղումն էլ հաստատվում է կաթողիկոսական աթոռը՝ Աղթամարի փոխարեն:

Հայ-բյուզանդական հարաբերությունները

Աշոտ Երրորդն իր ներքին գործերում մշտապես վարում էր խաղաղասիրական քաղաքականություն, նույնիսկ չէր դիմադրում երկրի քաղաքական մասնատմանը, պահպանելով պետության սուվերեն իրավունքը: Նա գրեթե նույն քաղաքականությունն է վարում նաև արտաքին աշխարհի հետ: Բայց լինելով խաղաղասեր, նա միաժամանակ կարող էր պաշտպանել իր երկիրը: Հայտնի է, որ նա ուներ ռազմական մեծ ուժ և օժտված էր ռազմական ու վարչական ունակություններով: Ինչպես գիտենք, նա ճնշում է մի շարք խռովություններ ու ետ է մղում մի շարք ասպատակություններ: Բագրատունիների քաղաքականությունը խալիֆաթի և նրա տեղական ոստիկանների հետ ընդհանրապես եղել է խաղաղասիրական, մանավանդ 10-րդ դարում: Խաղաղասիրական քաղաքականություն էր վարվում երկրի ներքին վասալ թագավորների, ինչպես և Վրաստանի, Աղվանքի, Աբխազիայի, Տայքի և Բյուզանդիայի նկատմամբ:

920—970 թվականներին, ավելի քան 50 տարի, հայ-բյուզանդական քաղաքական հարաբերությունները խաղաղասիրական և բարեկամական էին, որովհետև Բյուզանդիան հիմնականում զբաղված էր հյուսիսային Միջագետքում ու Սիրիա-

յում արաբների դեմ մղած կռիվներով, իսկ Հայաստանն իր ներքին գործերով։

Փոկասի սպանությունից հետո, 969 թվականին Բյուզանդական գահը անցնում է Հովհաննես Ձմշկիկի ձեռքը (969—976), որից սարսափում էր արաբական Արևելքը։ Հայ պատմագիրները կոչում են Կուրկուաս։

Հովհաննես Ձմշկիկ կայսրի ժամանակ Կիևյան իշխանության 60 հազարանոց բանակը Սվյատոսլավի գլխավորությամբ հարձակվում է բյուզանդական պետության տիրապետությունների վրա՝ Բուլղարիայի, ապա մտնում է Թրակիա և սպառնում Բյուզանդիային։ 971 թվականին Ձմշկիկը մեծ բանակի գլուխն անցած անցնում է Բալկանյան մեծ լեռնաշղթան և պաշարում մեծ Պերեսլավլա բուլղարական մայրաքաղաքը և գրավում այն ապրիլի 23-ին զոհերի մեծ գնով, որովհետև ռուսները հերոսական դիմադրություն էին ցույց տալիս։ Ռուսները, Սվյատոսլավի գլխավորությամբ, հաշվի առնելով հետագա դժվարությունները, կնքում են պայմանագիր և ետ քաշվում դեպի իրենց երկիրը։

Կիևյան ռուսների այս արշավանքը ժամանակավորապես կայսրության ուշադրությունն Արևելքից փոխադրում է դեպի Արևմուտք։ Բայց այս հարձակումը ետ մղելուց հետո կրկին անգամ վերադառնում է դեպի Արևելք՝ արաբական աշխարհը, որի դեմ կռվելու ժամանակ կայսրության առաջավոր ուժերը կազմում էին բյուզանդականացած հայերը։ Փոքր Հայքը դարեր շարունակ գտնվելով կայսրության տիրապետության տակ, այնտեղ հայերը թեև ընդունել էին Քաղկեդոնի դավանանքը, բայց և այնպես պահպանում էին իրենց ինքնուրույնությունը։

Հովհաննես Ձմշկիկը, նախքան կայսր դառնալը, 963 թվականին գրավում է Սիրիայի մեծ մասը, Հալեպ մայրաքաղաքով, որը պատկանում էր Աղձնիքի Համտուն էմիրի թոռ Սեյֆ Եդուլահին։ Սա թեև ժամանակավորապես կարողանում է իր մայրաքաղաքն ու երկիրն ետ գրավել, սակայն նրա արշավանքները դեպի Կիլիկիա լավ արդյունք չեն տալիս։ Բյուզանդիան 965 թ. վերջնականապես գրավում է Կիլիկիան, որտեղից մահմեդական բնակչության մի մասը գաղթում է Սիրիա, մի մասն էլ ձուլվում է տեղացիների հետ։ Արաբ էմիրների

հողերի մեծ մասն անցնում է հայ իշխանների ու զորավարների ձեռքը, ուստի հայերը, սկսած 10-րդ դարի երկրորդ կեսից, բնակություն են հաստատում նաև Կիլիկիայում։

Հովհաննես Ձմշկիկ կայսրը իր դիրքերը ամրապնդելուց անմիջապես հետո իր ուշադրությունը դարձնում է Արևելքի վրա, նպատակ ունենալով գրավել Բաղդադը և վերջ տալ արաբական մեռնող խալիֆաթին։ Նա նախքան պատերազմ սկսելը, վերջ է տալիս Փոքր Հայքում դեռևս իրենց գոյությունը պահպանող պավլիկյաններին, նրանց անխտիր տեղափոխելով Թրակիա, որոնք իրենց մտքերն ու գաղափարները տարածում էին Հայաստանի թե՛ արևելյան, և թե՛ արևմտյան մասերում։ Նրանք աշխատում էին թոնդրակյանների հետ միասին կազմակերպել հայ աշխատավոր մասսաներին և դուրս բերել նրանց թե՛ բյուզանդական, և թե՛ հայ տիրողների ու շահագործողների դեմ։ Այս դեպքերից առաջ բյուզանդական մի զորաբանակ, որը գործում էր Արևելքում, 970 թ. գրավում է Մանազկերտի բերդը, որը համարվում էր արաբական աշխարհի ամուր պատնեշներից մեկը, ընդդեմ «քրիստոնյա» աշխարհի։ Պատմական այդ դեպքը արաբական մատենագիրներից Աբուլ-Ֆեդան մեծ վշտով է արձանագրում իր «Ժամանակագրության» մեջ։ Նա ցավում է, որ ամեն բան թողնում են բյուզանդացիներին, արաբական երկրները մնացել էին անպաշտպան։ Դրանից հետո 973 թ. Ձմշկիկի զորավարներից Մլեհը լուրջ հարված տալով արաբներին, գրավում է Մելիտինեն, Նիփկերտը և Ամիդը։ Բայց շուտով արաբները ջարդում են բյուզանդական բանակը, ինքը Մլեհը և ուրիշ 40 զորավարներ գերի են ընկնում, տարվում են Բաղդադ և գլխատվում։ Զորավար Մլեհը մահից առաջ մի նամակ է գրում Ձմշկիկ կայսրին, որ իր վրեժը լուծի։ Այնուհետև արաբները ետ են գրավում իրենց կորցրած մարզերն ու քաղաքները։

Հովհաննես Ձմշկիկը, որն արդեն պատերազմի լուրջ պատրաստություններ էր տեսել, ստանալով Մլեհի նամակը, որ Մ. Ուռհայեցին բերում է իր աշխատության մեջ[1], արագացնում է արևելյան իր նոր արշավանքը։ 974 թվականի վաղ գար-

[1] Մ. Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 16—17, Վաղարշապատ, 1898։

նանը բյուզանդական մեծ բանակի գլուխն անցած Հովհաննես Զմշկիկը շարժվում է դեպի Արևելք, ահ ու սարսափ տարածելով արաբական աշխարհի վրա: Նրա այս արշավանքի մասին ավելի մանրամասն տեղեկություններ է հաղորդում Մատթեոս Ուռհայեցին իր «Ժամանակագրության» մեջ: Նա միաժամանակ մեջ է բերում Զմշկիկի նամակն ուղղված հայոց թագավոր Աշոտ Երրորդին[1]:

Պատմական ստույգ տեղեկություններից երևում է, որ բյուզանդական բանակը դեպի Արևելք շարժվելիս, նախ մոտենում է Հայաստանի սահմաններին, ապա վերջում էլ մրտնում է Տարոն գավառը և բանակ դնում Մուշ քաղաքի մոտ գտնվող Այծյաց բերդում, իսկ ըստ Ուռհայեցու՝ «կամեցաւ զմուտն յաշխարհն Հայոց առնել»[2]: Ուռհայեցու ասելով, հայ մեծամեծները հավաքվելով Անիում՝ Աշոտ Բագրատունու մոտ, ժողով են գումարում, ապա հավաքելով իրենց բոլոր ռազմական ուժերը, թվով 80000 հոգի, Աշոտ Երրորդի գլխավորությամբ շարժվում են դեպի երկրի հարավը, դիմադրելու կայսերական բանակին: Բայց կանգ են առնում Տուրուբերան նահանգի Հարք գավառում. «Յայնժամ ամենայն թագաւորացունքն Հայոց՝ ազատքն և իշխանքն և ամենայն մեծամեծքն աշխարհաց տանն արևելից ժողով արարին առ թագաւորն Հայոց Աշոտ Բագրատունի. թագաւորն կապանին Փիլիպպէ և թագաւորն Աղուանից Գուրգէն, Աբաս Կարուց տէրն և Սիւնէքեցիքն վասպուրականիս տէրն և Գուրգէն Անձևացեաց տէրն և բովանդակ ամենայն տունն Սասունու (Սասնու). և բանակ հարեալ ի Հարքայ գաւառին արք իբրև ութսուն հազար»[3]:

Այդ բանը հայերը բյուզանդական կայսրին դիմավորելու համար էին արել, թե դիմադրելու, պատմիչներն ուղղակի վկայություն չեն տալիս: Հայ բանասերներն ու պատմաբանները, որոնց թվում նաև Լեոն[4], գտնում են, որ դիմավորելու

1 Մ. Ուռհայեցի, ժամանակագրություն, էջ 17—18, Վաղարշապատ, 1898:

2 Նույն էջերը:

3 Մ. Ուռհայեցի, էջ 17:

4 Լեո, Հայոց պատմություն, հատ. Բ. էջ 607, Երևան, 1947:

համար են գնացել: Բայց դա ճիշտ չէ: Ուռհայեցու այն վկայությունը, թե՝ «կամեցաւ զմուտն յաշխարհն Հայոց առնել», պարզ ցույց է տալիս, որ կայսրի նպատակն է եղել հասնելով Տարոնում, գրավել երկրի հարավ-արևմտյան մասերն արաբ էմիրներից ու տեղական հայ իշխաններից, որոնց թվում և Մանազկերտը, որը ետ էին գրավել արաբները Մլեհի պարտությունից հետո: Այնուհետև սպառնալ Վասպուրականին և Բագրատունիների երկրներին, ստիպել նրանց հնազանդվել իրեն, Հայաստանը դարձնել իր ձեռքին որպես պատվար, Արևելքում իր նվաճումներն առաջ տանելու համար, ապա նոր արշավել Միջագետքի վրա:

Սակայն Զմշկիկ կայսրը դեսպանների միջոցով ստուգելով հայերի զինվածությունն ու մտադրությունը, երկյուղ կրելով հայկական 80000-անոց բանակից, ստիպված է լինում բանակցությունների մեջ մտնել Բագրատունյաց թագավորի հետ, որը կանգնած էր հայ ռազմական ուժերի գլուխը, և կնքել պայմանագիր: Հայերի կողմից բանակցություններ էր վարում Աշոտ թագավորի դեսպանությունը, որի մեջ մտնում էին Սմբատ իշխան թոռնեցին, Վահե Իմաստասեր (փիլիսոփա) վարդապետը (Պանտալեոն բժիշկ) և մի շարք եպիսկոպոսներ ու վարդապետներ: Ըստ կնքած պայմանագրի, հայերը հանձն են առնում տալ 10000 օգնական զորք, իրենց ուտելիքով և հագուստով[1], իսկ կայսերական զորքերն էլ պիտի հեռանան Հայաստանից: Կայսրը վավերացնելով վերոհիշյալ պայմանագիրը, մեծամեծ նվերներով հայ դեսպանությունը ետ է վերադարձնում: Դրանով էլ վերջանում է հայ-բյուզանդական կոնֆլիկտը: Զմշկիկ կայսրը հայերի հետ այս պայմանագիրը կնքում է այն պատճառով, որ հայերը մեծ ուժով էին հանդես եկել և, ինչպես Ուռհայեցին է ասում, իր զորքը Այծյաց բերդի մոտ առաջին գիշերը լուրջ հարված էր կրել Սասունի հեռահար զորքի կողմից[2], հակառակ դեպքում, բյուզանդական բանակը, որը մտել էր Հայաստան, առանց ագրեսիայի դուրս չէր գա, մինչև չգրավեր ամբողջ Հայաստանը, կամ գոնե նրա հարավ-արևմտյան գավառները:

1 Ուռհայեցի, էջ 18:

2 Նույն էջը:

Բյուզանդական բանակը հեռանալով Հայաստանից մրտնում է Հյուսիսային Միջագետք և կատարում մեծ նվաճումներ, մոտ 300 բնակավայրեր կարճ ժամանակամիջոցում անցնում են բյուզանդական կայսրության ձեռքը, որոնց թվում Ամիդը, Մծբինը և Եդեսիան: Ապա մեծ ավարով վերադառնում է մայրաքաղաք, առանց Բաղդադը գրավելու: Իսկ հաջորդ՝ 975 թ. մեծ հաղթանակներ է տանում Սիրիայում ու վերստին վերականգնում է հին Հռոմի տիրապետությունները:

Աշոտ Բագրատունին իր հարաբերությունները Չմշկիկ կայսրի հետ ավարտելուց հետո, այսինքն՝ բյուզանդական վտանգը հեռացնելուց հետո, վերադառնում է Շիրակ և չորս տարի ևս խաղաղ կառավարում է երկիրը: Մահանում է 977 թվականին, 24 տարի թագավորելուց հետո:

Աշոտ Երրորդին հաջորդում է նրա մեծ որդի Սմբատ Երկրորդը (977—990) շահնշահի տիտղոսով, բայց Վարդան պատմիչի ասելով, նա հայտնի է եղել «տիեզերակալ» մականունով[1], որը անշուշտ թյուրիմացություն է, որովհետև նա երբեք նման գործ չի կատարել: Սրա թագավորության սկզբին նրա երկու եղբայրները՝ Գագիկն ու Գուրգենը, հեռանում են Շիրակից: Վերջինս շուտով նշանակվում է Տաշիրք գավառի կառավարիչ և իրեն թագավոր է հռչակում 982 թվականին: Սմբատը ոչ միայն չի դիմադրում պետության այդ նոր անդամահատությանը, այլև հատուկ արքայական հրովարտակով թագավորական տիտղոս է շնորհում Գուրգենին: Դրանով հիմք է դրվում Տաշիր-Զորագետի Բագրատունյաց թագավորությանը, որը հայտնի է նաև Կյուրիկյան անունով, որովհետև Գուրգենը կոչվել է նաև Կյուրիկե: Այս թագավորությունը բռնում էր հին Գուգարաց աշխարհի մեծ մասը, այդ պատճառով էլ կոչվել է նաև Գուգարքի կամ Լոռիի թագավորություն:

Բյուզանդական կայսրությունը և Տայքը

Բյուզանդական գահը Հովհաննես Չմշկիկից հետո անցնում է Վասիլ Երկրորդ (976—1025) Բուլղարասպանին, որը վարում էր դաժան քաղաքականություն, մանավանդ Փո-

[1] «Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն Տիեզերական», էջ 122, Մոսկվա, 1861:

քըր Ասիայում: Սրա դեմ ապստամբություն է բարձրացնում Վարդ Սկլերոսը, որին օգնում էին հայերը, Փոքր Ասիայի աշխատավորական տարրերը և նույնիսկ որոշ արաբական էմիրներ: Ապստամբությունը տևում է երկու տարի: Վարդ Սկլերոսը տիրում է Փոքր Ասիայի մեծագույն մասին՝ Կեսարիա մայրաքաղաքով: Վասիլը կայսերական բանակը հանձնում է Ներքինի Նիկեփոր Փոկասին, բայց կայսերական բանակը լուրջ պարտություն է կրում Վարդ Սկլերոսից: Այն ժամանակ Նիկեփոր Փոկասը դիմում է Տայքի Դավիթ Կյուրապապատին և խնդրում նրանից օգնություն: Բանակցությունները վարում է Տայք նահանգի Աթոս լեռան վրա գտնվող վանքի ճգնավոր Թոռնիկ աբեղան, որը մի ժամանակ զինվորական էր եղել Դավիթ Կյուրապապատի մոտ: Փոկասը կայսրի անունից խոստանում է Դավիթ Կյուրապապատին տալ թագավորական իրավունք և Խաղտոյատիճ կղեսուրոն, Չարմայրին, Կարին, Բասեն, Մարդաղին, Հարք և Ապահունիք գավառները: Դավիթ Կյուրապապատը դրա դիմաց պարտավոր է տալ 12 հազարանոց զորք: Բանակցությունները ավարտվում են հաջողությամբ: Դավիթը 12000 զինվորներ, որոնց մի մասը կազմում են հայերը, ուղարկում է Փոքր Ասիա: Այս օգնական զորքով Փոկասը ուժեղացնում է կայսերական բանակը, և երկու հակառակորդների միջև նորից սկսվում է կռիվ: Գլխավոր ճակատամարտը տեղի է ունենում Հալիս գետի ափին, ուր Վարդ Սկլերոսը պարտվում և թողնում է իր բանակը հաղթողի ձեռքին, իսկ ինքը փախչում է արաբների մոտ: Այսպիսով, երեք տարվա (976—979) ներքին կռիվները վերջանում են Վասիլի կայսերական բանակի հաղթանակով, իսկ Դավիթ Կյուրապապատն էլ ստանում է վերը նշված բոլոր գավառները և թագավորական իրավունքը: Այդ միավորմամբ ներով Տայքի պետությունն իր տերիտորիայով, համեմատած Շիրակ-Այրարատյան և վրացական թագավորությունների հետ առանձին-առանձին, ավելի մեծ է լինում: Դրանով միաժամանակ Շիրակի Բագրատունյաց թագավորությունը փաստորեն արևմուտքից ու հարավից շրջապատվում է Տայքի պետության հողերով: Այդ պատճառով էլ Տայքի Դավիթ Կյուրապապատի դերն Անդրկովկասում շատ է մեծանում:

Նույնիսկ խառնվում է Հայաստանի ներքին գործերին ու ֆեոդալական պայքարին։ Այսպես, օրինակ, Կարսի թագավոր Մուշեղը ըմբոստանում է Սմբատ Երկրորդի դեմ և աշխատում է իր ձեռքը վերցնել Անիի թագավորությունը, բայց Սմբատին հաջողվում է ոչ միայն հաղթել իր հակառակորդին, այլև գրավել նրա հողերի մի մասը, Շատիկ բերդով։ Մուշեղը դիմում է Տայքի Դավիթ Կյուրապալատի օգնությանը, վերջինս զորքով Մուշեղի հետ գալիս է Շիրակ, Սմբատը նեղվելով երկու կողմից, ստիպված է լինում գրաված հողերը Շատիկ բերդով ետ վերադարձնել Մուշեղին ու կնքել խաղաղության պայմանագիր[1]։ Բյուզանդական կայսրությունն իր հովանավորությանը ենթակա Տայքի միջոցով աշխատում է իր ազդեցությունը տարածել նաև Հայաստանի և Վրաստանի վրա։ Տվյալ դեպքում Կարսի թագավորությունը դառնում է առաջին զոհը։ Մուշեղի և Սմբատի վերոհիշյալ կոնֆլիկտը հավանաբար տեղի է ունեցել 980—981 թվականներին։

Հայաստանի քաղաքական դրությունը 980-ական թվականներին

Բայց Կարսի Մուշեղ թագավորը դրանով չի բավարարվում, նա Պարսկաստանի Աբլհաճ ոստիկանին գրգռում է Շիրակի Բագրատունիների դեմ, իսկ ոստիկանը օգտվելով նպաստավոր դրությունից, 982 թ. հարձակվում է Հայաստանի վրա, գրավում է Դվինը և հասնում մինչև Անի քաղաքի սահմանները, ճանապարհին կողոպտելով և ավերելով Հոռոմոսի վանքը. Սմբատը հազիվ ազատվում է վտանգից։ Սակայն ոստիկանի դեմ շուտով դուրս է գալիս Գողթնի Աբուտալուխ էմիրը, որին պատկանում էր Դվինը։ Աբլհաճը պարտվելով դուրս է քշվում երկրից և երկար թափառելուց հետո խեղդամահ է լինում Օլթիում։ Աբուտալուխը կաթողիկոսի միջնորդությամբ թեև խաղաղության պայմանագիր է կնքում Սմբատ Երկրորդի հետ, բայց հարձակվում է Վասպուրականի վրա։ Աշոտ-Սահակը, սպարապետ Ապլղարիպի և Գրիգոր ու Տիգրան իշխանների գլխավորությամբ զորք է ուղարկում Թշնամու դեմ, բայց Վասպուրականի բանակը պարտվում է և ամրանում Ճուաշ գա-

[1] Ասողիկ, էջ 188։

վառի Բակյար բերդում։ Թշնամին պաշարելով բերդը, խոստանում է ազատ արձակել բոլորին, եթե զինաթափվեն ու անձնատուր լինեն։ Սակայն, երբ հանձնվում է բերդը, Աբուտալուխը դրժում է իր պայմանը, բերդապահ զորքի մի մասին կոտորում է, իսկ իշխաններից մեծ գումար փրկանք վերցնելով ազատ է արձակում։ Դրանով Վասպուրականի ռազմական ուժերը որոշ վնաս են կրում։ Այդ պատճառով Սմբատ Երկրորդը չեղյալ է հայտարարում Աբուտալուխի հետ կնքած պայմանագիրը, իր զորքով օգնում է նրա թշնամի Սալարի էմիրին և հռչակում ոստիկան։ Պատմագիրները թեև այս դեպքի, ինչպես նաև Աբուտալուխի հետ կնքած պայմանագիրը դրժելու և իր քրոջ աղջկա հետ ամուսնանալու համար խիստ մեղադրում են Սմբատին, բայց պետք է ընդգծել, որ եթե երկրորդ խնդրում պատմագիրները ճիշտ են, ապա առաջինում՝ ոչ, որովհետև Սմբատը, իբրև երկրի ընդհանուր սուվերեն, պետք է պատժեր անբարեսավան էմիրին, Վասպուրականի վրա հարձակվելու և նրա ռազմական ուժերին վնաս պատճառելու համար։ Սակայն այդ դեպքից մի քանի տարի անց, մի ուրիշ Աբլհաճ Ատրպատականի էմիրը, նույնպես հարձակվում է Հայաստանի վրա և գրավում Դվինը և հայերից հարկ է պահանջում։ Սմբատը սրան նվերներ տալով ետ է դարձնում։ Բայց նա հաջորդ տարին Հեր քաղաքի Ալևորի դրդումով հարձակվում է Վասպուրականի վրա, Հայաստանի այդ մասը կողոպտելու համար, բայց շուտով մահանում է, և ժողովուրդն ազատվում է այդ նոր նվաճողից։ Իսկ Աբուտալուխը օգտվելով դրանից, անմիջապես ետ է գրավում Դվինը և կաթողիկոսի միջնորդությամբ մի նոր պայմանագիր է կնքում Սմբատի հետ։

Այդ ընթացքում ծանր օրեր էր ապրում նաև Տարոնը, որը գտնվում էր Բյուզանդիայի ազդեցության տակ։ 10-րդ դարի վերջին քառորդում Հայաստանի հարավային մասերում հանդես են գալիս նաև բրդական ցեղերի առանձին միավորումներ։ 959 թ. բրդական մի ցեղ, Հասանվեհի գլխավորությամբ պարսկական Քրդիստանում հիմք է դնում մի առանձին քրդական էմիրության։ Դրանից հետո 984 թ. Մերվանյան քրդական մի ուրիշ ցեղ, Բաաի գլխավորությամբ,

Հայաստանի հարավային մարզերում հիմք է դնում մի նոր քրդական էմիրություն։ Անշուշտ քրդական այս էմիրությունները նույնպես վայելում են արաբական խալիֆաթի հովանավորությունը և արդեն դարձել էին մահմեդական։ Բաժի էմիրությունը սկզբում հաստատվում է Աղձնիքում, հին Շայբանի էմիրության տերիտորիայի հյուսիսային մասում, Ամիդ (Դիարբեքիր) և Նփրկերտ (Մուֆարղին) կենտրոններով։ Քրդական այս նոր էմիրությունն իր տիրապետությունը աստիճանաբար տարածում է նաև Տուրուբերան նահանգի որոշ մարզերի վրա, որոնք ընկած էին Վանա լճի հարավ և արևմտյան մասերում։ Հայաստանի այս շրջաններում 10-րդ դարի երրորդ քառորդում Աշոտ Երրորդի հարվածների տակ արդեն վերացել էր Ապահունիքի Կայսիկների արաբական էմիրությունը։ Սակայն Սմբատ Երկրորդի թագավորության թուլության ժամանակ Ամիդի և Նփրկերտի էմիր Բաժը ձեռք է բերում Կայսիկների էմիրության հողերի մի մասը՝ Խլաթ, Մանազկերտ և Արճեշ կենտրոններով։

11-րդ դարի սկզբին քրդական մի իշխանություն էլ հանդես է գալիս Հայաստանի հյուսիս-արևելյան մասում և Աղվանից աշխարհում։ Այդ Շեդադյան էմիրությունն էր, որի մի ճյուղը 10-րդ դարի վերջին արդեն հաստատվել էր Դվին քաղաքում։ Այսպիսով, 10-րդ դարի վերջին և 11-րդ դարի առաջին քառորդում սկսվում է քրդերի տեղաշարժը դեպի Հայաստան, որոնք առանց կռվի ու պայքարի բնակություն են հաստատում Փոքր Ասիա գաղթած հայերի հողերի վրա, հատկապես Վասպուրական նահանգում, որի վերջին թագավոր Սենեքերիմը գաղթելով Սեբաստիա, իր հետ տանում է մեծ քանակությամբ բնակչություն։ Ահա, քրդական այս էմիրներից Ամիդի, Նփրկերտի ու Խլաթի արաբական էմիր Բատն էր, որ նախ վերաշինում է Մանազկերտի բերդը և ապա հարձակվում է Տարոնի վրա. «...Սրով և զերութեամբ անմարդացոյց զգաւառն Տարօնոյ,— գրում է Ասողիկը,— յաւարի առեալ զքաղաքն Մուշ, խողոպեալ զքահանայս յեկեղեցւոջն որ սուրբ Փրկիչ անուանի...»[1]։ Բյուզանդիան ոչ մի օգնություն ցույց չ՛

[1] Ասողիկ, էջ 192։

տալիս իրեն ենթակա այդ գավառին։ Արաբական էմիրներն օգտվելով հայկական միասնական ուժերի բացակայությունից, նորից հարձակումներ են գործում Հայաստանի վրա, որոնք Սմբատ Երկրորդի ռազմական ունակությունների և ուժերի պակասության արդյունքն էին։ Այնպես որ, իրոք նրան տրված «Տիեզերակալ» մականունը թյուրիմացություն է։

984 թ. մահանում է Կարսի Մուշեղ թագավորը և նրան հաջորդում է որդի Աբասը (984—1029)։ Ասողիկը նրան անվանում է «այր շքեղ, լի հանճարով և իմաստուն»[1]։ Սա վերացնում է ավազակությունը Վանանդի թագավորությունում, որ մեծ չափերի էր հասնում այդ ժամանակ։ Նա կազմակերպում է կանոնավոր բանակ, որի հեծելազորային մասում մտցնում է միասնական տարազ՝ կարմիր զգեստներ, ապա ստիպում է իշխաններին, որ հետևեն ժողովրդի կենցաղին և այնուհետև, Արշարունյաց գավառի Շիրիմի վանքը շրջապատում է պարիսպներով։ Նա իր այդ կազմակերպած բանակով մշտապես մասնակցում էր հայ և վրաց թագավորների՝ արաբական էմիրների դեմ մղած պատերազմներին։

Սմբատ Երկրորդի թագավորության վերջին տարիներին Փոքր Ասիան նորից ալեկոծվում է։ Վասիլ Երկրորդի կրած պարտությունը, որը տեղի էր ունեցել 986 թ. բուլղարների թագավոր Սամվելի բանակի կողմից, առիթ է հանդիսանում Վարդ Փոկասի կողմից բարձրացող մի նոր ապստամբության։ Շուտով հանդես է գալիս նաև Վարդ Սկլերոսը, որը բանտարկված էր Բաղդադում։ Լսելով Վասիլ կայսրի պարտության մասին, Սկլերոսը խնդրում է, որ իրեն ազատեն կայսրի դեմ կռվելու համար և նա ազատվում է Խլաթի ու Նփրկերտի էմիր Բատի միջնորդությամբ։ Սա կանգնելով վերջինի զորքերի գլուխը, նորից դուրս է գալիս իր վաղեմի թշնամի Վարդ Փոկասի դեմ, որը 987 թ. իրեն կայսր էր հայտարարել Փոքր Ասիայում։ Բայց Փոկասը անմիջապես բանակցություններ է սկսում Վարդ Սկլերոսի հետ միասին կռվելու իրենց ընդհանուր թշնամու՝ կայսեր դեմ։ Այդ բանակցությունների ընթաց-

[1] Ասողիկ, էջ 186։

քում Վարդ Փոկասը ձերբակալում է Վարդ Սկլերոսին և բանտարկում։ Ասպարեզը դարձյալ մնում է Փոկասին, որի հետ միացել էին Տայքի Դավիթ Կյուրապաղատը և Տարոնի կառավարիչներ՝ Գրիգորիսն ու Բագարատը։ Վարդ Փոկասի այս նոր ապստամբությունը տևում է մոտ երկու տարի։ Վասիլը շուտով դաշնակցում է Կիևյան ռուսների մեծ իշխան Վլադիմիրի հետ, որը 988 թ. ընդունելով քրիստոնեությունը, ամուսնացել էր կայսրի քրոջ՝ Աննայի հետ։ Բյուզանդիան իր այս նոր դաշնակցի զորքերի օգնությամբ կարող էր կռվել ոչ միայն ապստամբ Փոկասի, այլև բուլղարների դեմ։ Սակայն, երբ Վարդ Փոկասը պատրաստվում էր կռվելու, հանկարծամահ է լինում։ Նրա բանակը ցրվում է, իսկ մահացած Փոկասի կարված գլուխը տանում են կայսրին։ Վարդ Փոկասի մահվանից հետո նրա կինը ազատ է արձակում Վարդ Սկլերոսին, որպեսզի նա ամուսնու և իր վրեժը լուծի կայսրից։ Բայց Վասիլը հաշտվում է սրա հետ և կայսրությունն ազատվում է ապստամբներից։ Այնուհետև կայսրը դաժան դատաստան է տեսնում Վարդ Փոկասին միացած բոլոր զորավարների ու իշխանների հետ։ Միաժամանակ հատուկ բանակ է ուղարկում դեպի Տայք, պատժելու Դավիթ Կյուրապաղատին, բայց վերջինս շուտով հայտնում է իր հպատակությունը, որի հետևանքով ներում է ստանում մի պայմանով, որ նրա մահվանից հետո Տայքի թագավորությունը տրվի կայսրությանը, քանի որ ինքը ժառանգ չուներ։ Դավիթ Կյուրապաղատը հաշվի առնելով, որ ուրիշ ելք չկա, մանավանդ որ ժառանգ էլ չուներ, ստիպված համաձայնվում է այդ պայմանին և տալիս է իր կտակը։ Դրանով հիմք է դրվում բյուզանդական կայսրության լուրջ ագրեսիային դեպի Անդրկովկաս։

Բագրատունյաց Գագիկ իշխանը երկար թափառելուց հետո Սմբատի իշխանության վերջին տարիներին բնակություն է հաստատում Անիում։ Բայց երկու եղբայրների միջև եղած թշնամությունը շարունակվում էր։ Գագիկը չէր ցանկանում Սալարի էմիրին օգնել։ Այս վիճաբանության ժամանակ, 990 թ. հանկարծամահ է լինում Սմբատը և նույն օրը իշխանության գլուխը կանգնում է Գագիկ Առաջինը։ Սմբատին հա-

վանաբար թունավորել են։ Այդ ուղղությամբ ուղղակի վկայություններ չկան, բայց Ասողիկի հետևյալ աղոտ տեղեկությունից պարզ երևում է, որ թունավորողը եղել է Գագիկը։ Երբ պատմագիրը խոսում է Գագիկի գործերի մասին, վերջում ավելացնում է. «Աւաղ միում չարին, որ արգել զբան գովեստի պատմութեան իմոյ»[1]։ Այդ չարը, որ թույլ չի տվել գովաբանել, այն է, որ իրոք Սմբատին սպանողը եղել է Գագիկ Առաջինը։ Դա միաժամանակ պատճառաբանվում է նրանով, որ երկու եղբայրների միջև սկզբից ևեթ եղել է թշնամություն։ Թագավորը թույլ էր և չէր կարող բավարարել հայ ավագանու պահանջները, նրան հարկավոր էր ռազմատենչ գործիչ և նա Սմբատին փոխարինեց Գագիկով։ Բացի այդ, երբ Սմբատին թաղում են, ժողովրդի մեջ սկսվում է պտտվել այն զրույցը, որ Սմբատը մեռած չէ, այլ դեղի—թույնի ազդեցության տակ քնած է գերեզմանում։ Գագիկը ստիպված է լինում բաց անել գերեզմանը, ցույց տալով քաղաքացիներին ու զինվորներին, որ նա մեռած է։ Այս բոլորը մեզ բերում են այն համոզման, որ Սմբատը մեռել է թունավորման միջոցով, իսկ թունավորումը կազմակերպել է հայ ավագանին Գագիկ Առաջինի գլխավորությամբ։

3. ՊԱՅՔԱՐ ԿԵՆՏՐՈՆԱՅԱԾ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳԱԳԻԿ ԱՌԱՋԻՆԻ ՕՐՈՔ

Հայաստանում առաջացած մանր իշխանությունները

Գագիկ Առաջինն Անիում իշխանների ու մեծամեծների ներկայությամբ Արշարունի Խաչիկ կաթողիկոսի կողմից պաշտոնապես օծվում է թագավոր։ Նա իշխում է ավելի քան 30 (990—1020) տարի։ Գագիկ Առաջինը Բագրատունյաց թագավորների ամենախոշորագույն դեմքերից է, օժտված պետական-վարչական, դիվանագիտական ու ռազմական մեծ ունակություններով։ Վաստիվերացու ասելով, նա «...այր հզօր և յաղթող ի պատերազմի»[2]։ Սրա թագավորության սկզբնա-

[1] Ասողիկ, էջ 256։

[2] Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ, էջ 8, Թիֆլիս, 1912։

կան շրջանում Հայաստանն իրենից մեկ միասնական պետություն չէր ներկայացնում։ Աշոտ Երրորդի և Սմբատ Երկրորդի օրոք հետզհետե Բագրատունյաց Շիրակ-Այրարատյան թագավորությունից անջատվել էին մի շարք նահանգներ ու մարզեր և կազմել տեղական ինքնուրույն, հայկական թագավորություններ ու արաբական էմիրություններ, որոնք ավելի ինքնուրույն են դառնում Սմբատ Երկրորդի թագավորության շրջանում։ Հայ ավատական թագավորությունների թիվը, բացի Բագրատունիների Անիի թագավորությունից, հաշվում են հինգ, որոնք առաջանում են երեք նախարարական տոհմերից։ Վասպուրականում իշխում էին Արծրունիները, Սյունիքում՝ սյունյաց իշխանները, մնացածները՝ Կարսի, Ջորագետի և Խաչենի թագավորությունները սերվում էին Բագրատունյաց տոհմից։ Բագրատունյաց Անիում նստող Շիրակ-Այրարատի թագավորները, որոնք վերոհիշյալ հինգ թագավորությունների վրա ունեին սուվերեն իրավունք և այդ պատճառով էլ կոչվում են շահնշահեր, արքայից-արքաներ, հայ մեծամեծների ներկայությամբ, կաթողիկոսի կողմից, օծվում էին որպես թագավորներ, իսկ մյուսները նման իրավունք չունեին։

Վասպուրականում, ինչպես ասացինք, իշխում էին Արուսահլի երեք որդիները։ Աշոտ-Սահակը՝ բուն Վասպուրականի թագավորը, մահանում է 990 թ. և նրա թագավորությունը գրավում են նրա եղբայրներ Անձևյաց Գուրգեն և Ռշտունյաց Սևենքերիմ իշխանները, իսկ երբ 1003 թ. մեռնում է նաև Գուրգենը, Սևենքերիմը դառնում է ամբողջ Վասպուրականի թագավոր և իշխում է մինչև 1021 թ.։

Սմբատի մահվանից հետո Սյունիքում թագավոր է դառնում Վասակը, որն ունեցել է նաև Սահակ անուն։ Սա իշխում է երկար ժամանակ (998—1040), որի օրոք Սյունիքի թագավորությունը հասնում է իր բարձր զարգացմանը։ Բայց Վասակը անժառանգ մնալով գահն անցնում է քեռորդի Սմբատին։ Վասակի աղջիկ Կադրամիդը Գագիկ Առաջինի կինն էր, որը շինարար լինելով հանդերձ, որոշ չափով նպաստել է նաև Սյունյաց և Բագրատունյաց թագավորությունների միջև ստեղծված երկարամյա խաղաղությանը։

Աբասը շարունակում էր մնալ որպես Կարսի թագավոր,

իսկ Լոռիում Գուրգենից հետո շատ ավելի երկար իշխում է Դավիթ Անհողին (989—1048), որն իր հոր իշխանության սահմանները հասցնում է մինչև Օրբելը։ Խաչենի թագավորությունը անժառանգ մնալով բաժանվում է Դանձակի էմիրության և Շիրակ-Այրարատի թագավորության միջև։

Հայաստանի հյուսիսային և հյուսիս-արևմտյան կողմերում տարածվում է Տայքի թագավորությունը, Դավիթ Կյուրապաղատի գլխավորությամբ, որը մեծ դիրք ուներ։ Այդ թագավորությունը տարածվում էր Վրաստանի, Բյուզանդիայի ու Հայաստանի սահմանագլխին։ Վրաց թագավորն այդ ընթացքում մահանում է, և նրան հաջորդում է որդի Գուրգենը։ Արթաղների թագավորությունը Թևտասի մերժումից հետո հանձնվում է Սմբատին։ Աղվանքի թագավորությունը շարունակվում էր Բագրատունյաց շառավիղների միջոցով։ Բացի այդ թագավորություններից, Հայաստանում և Անդրկովկասում կային նաև արաբ էմիրություններ, որոնց մեջ հայտնի էին Դանձակի, Դվինի, Նախիջևանի, Դողբնի, Խոյ-Սալմաստի, Մանազկերտի և Խլաթ-Նփրկերտի էմիրությունները։ Բյուզանդական կայսրությունը իր գերիշխանությանն էր ենթարկել ամբողջ Փոքր Հայքը, Մեծ Հայքից Ջորրորդ Հայքը և Բարձր Հայքի ու Տուրուբերան նահանգների մեծագույն մասը։

9—10-րդ դարերում Հայաստանում կազմակերպված այս վասալ պետությունները, որոնք ֆեոդալական բնույթ ունեին, երբեմն կռիվներ էին մղում իրար դեմ՝ կալվածների և իրավունքների ընդարձակման համար։ Բագրատունիների Շիրակ-Այրարատյան թագավորությունը, ինչպես տեսանք, իր սկզբնավորման օրից (885) փորձ էր կատարում իր տիրապետությանը ենթարկել ամբողջ Հայաստանը, բայց նրա այդ քաղաքական ձգտումներն իրենց նպատակին չեն հասնում և ֆեոդալ այդ միությունը գլուխ չի գալիս, որովհետև միասնական պետություն ստեղծվելու համար երկրում դեռևս չէր ստեղծվել անհրաժեշտ տնտեսական և սոցիալական բազա։

Պահլավունիների տոհմը

Սմբատ Երկրորդի և Գագիկ Առաջինի ժամանակ սպարապետության պաշտոնն անցնում է Պահլավունիների ձեռ-

քը, որոնք այդ ժամանակներում խոշոր դեր էին խաղացել երկրի կյանքում: Անհրաժեշտ ենք համարում որոշ տեղեկություններ տալ այդ տոհմի մասին: Պահլավունիների տոհմի մասին անցյալում տեղեկություններ չկան, նրանց քաղաքական գործունեությունը հանդես է եկել 10-րդ դարում: Պատմահայր Մովսես Խորենացին Պահլավունիներին համարում է Պարթևների բնաշխարհ Բահլ գավառի տիրողներ, որոնք հետագայում բաժանվում են երեք ճյուղի՝ Կարենի Պահլավունիներ, Սուրենի Պահլավունիներ և Ասպահապետի Պահլավունիներ[1]: Առաջին և երկրորդ ճյուղերից դարերի ընթացքում առանձին անձնավորություններ տարբեր առիթներով ու պատճառներով եկել են Հայաստան: Սուրենյան Պահլավունիներից էր դավաճան Անակ իշխանը, որը ըստ հայ ավանդության 251 թվականին սպանում է հայոց թագավոր Խոսրով Առաջինին: Այս Անակ իշխանի որդին էր Գրիգոր Լուսավորիչը, որը այդ տոհմի հիմքն է դնում Հայաստանում և դառնում կաթողիկոս, որը ժառանգաբար շարունակվում է մինչև Սահակ Պարթևը: Կարենյան Պահլավունիների ցեղից Սասանյան Արտաշիրի կոտորածի ժամանակ աղատվում և Միջին Ասիա է փախչում Պերոզամատ պատանին: Սրա որդի Կամսարը փախչում է Հայաստան և ընդունում է քրիստոնեություն, իսկ մյուս որդին՝ Արշավիրը, ձեռք է բերում Երասխաձորի գավառը որպես կալվածք և մտնում է հայ նախարարների կազմի մեջ: Մովսես Խորենացու ասելով՝ Հայաստանի այդ գավառն Արշավիրի անունով կոչվում է Արշարունի[2], իսկ նախարարությունը՝ Արշավիրի հոր՝ Կամսարի անունով կոչվում է Կամսարական: Հինգերորդ դարում Սահակ Պարթևի թոռ, Վարդան Մամիկոնյանի դուստր Վարդանուշը ամուսնանում է Արշավիր Կամսարականի հետ: Ահա այս առիթով էլ Լուսավորչի տոհմը կապվում է Կամսարականների և Պահլավունիների հետ: 8-րդ դարի վերջին Կամսարականների քաղաքական դերը Հայաստանում վերջանում է: Նրանք իրենց կալվածները ծախում են Բագրատունիներին, իսկ իրենք գնում

1 «Սրբոյ Հօրն մերոյ Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», գիրք Բ, գլ. Դ, Թիֆլիս, 1913:

2 Գիրք Բ, գլ. Դ:

են դեպի Նիգ (Ապարան) գավառը և նոր կալվածներ ձեռք բերում այդ գավառի հարավ-արևմտյան մասերում. բայց մոտ երկու դար մնում են անհայտության մեջ և երևան են գալիս միայն 10-րդ դարի երկրորդ կեսին: Սակայն այս անգամ ոչ թե Կամսարական, այլ իրենց ավելի հին նախնիների՝ Պահլավունիների անունով: Թե ինչո՞ւ Կամսարականները իրենց երկրորդ վերածննդից հետո կոչվում են Պահլավունի և ոչ թե պահպանում իրենց տոհմի հին՝ Կամսարական անունը, այդ հարցին ուղղակի պատասխան տալը դժվար է, բայց մի բան պարզ է, որ 8—10-րդ դարերում Կամսարականների բեմնի հզոր նախարարությունն այնքան էր ընկել, որ այլևս պատիվ չէր բերում նրանց երկրորդ վերածննդին նորից կոչվել Կամսարական, մանավանդ որ նրանք ունեին իրենց ավելի հին և հեղինակավոր Պահլավունի անունը, մի տոհմ, որ իր քաղաքական միսիան վաղուց էր ավարտել Իրանում:

Գրիգոր Մագիստրոսն իրենց տոհմի, այսինքն՝ Կամսարականների երկրորդ վերածննդի նախահայրը համարում է Արտակին[1]: Մեր կարծիքով այս Արտակն է, որ ծախել է իրենց կալվածները Բագրատունիներին և 787—790 թթ. ընթացքում անցել Նիգ գավառը: Այս Արտակի որդին էր Ապուղամրը, որի անունով Անիում եղել է եկեղեցի, այն էլ Միջնաբերդում: Իսկ սրա որդին է եղել Գրիգոր Համզեն, որի օրոք սկսվում է այդ տոհմի վերելքը: Սա արդեն ուներ մեծ իշխանի տիտղոս: Որ Պահլավունիները 10-րդ դարի երկրորդ կեսին սկսել են քաղաքական լուրջ դեր խաղալ Հայաստանում, դա երևում է Անիում թողած նրանց շինքերից: Այսպես օրինակ, Անիի արևմտյան մասում Ծաղկոցաձորի վրա գտնվում է Ապուղամրենց եկեղեցին, բուն քաղաքում Առաքելոց և ս. Փրկիչի եկեղեցիները, ինչպես նաև տոհմական դամբարանը: Գրիգոր Համզեի ավագ որդի Վահրամը, որը ծնվել էր 967 թվականին, ապրում էր Անիում, ուներ իր առանձին դղյակը Ախուրյանի ափին, Անիից 7 կիլոմետր հեռու: Նա 986 թ. կառուցել է տվել Մարմաշենի հոյակապ վանքը, իսկ ինքը կոչվել է իշխանաց իշխան ու երկար ժամանակ վարել է սպարապե-

1 «Գրիգոր Մագիստրոսի Թղթերը» առաջաբանով և ծանոթություններով, աշխատասիրեց Կ. Կոստանյանց, էջ 40, Ալեքսանդրապոլ, 1910:

տության պաշտոնը։ Երկրորդ որդին՝ Վասակ Հոլումը, նույնպես կոչվում էր իշխանաց իշխան և քաջ զորավար էր։ Սա մայրաքաղաքում չէր ապրում, այլ իր Բջնիի բերդում, ուր կառուցել էր մի շարք շենքեր։ Սպանվել է 1021 թվականին։ Սրա որդին էր հայտնի Գրիգոր Մագիստրոսը։ Երրորդ որդին էր Ապլղարիպը կամ Տիգրանը, որն արքունիքում վարում էր մարզպանի պաշտոնը և շինել է տվել ս. Գրիգիչ եկեղեցին։

1029 թ. Մարմաշենի վանքի արձանագրության մեջ Վահրամը առաջին անգամ իրեն անվանում է «որդի Գրիգորի իշխանի Հայոց Մեծաց ի ցեղին Պահլավունի և զարմից սրբոյն Գրիգորի Հայոց Լուսավորչի»[1]։ Ինչպես տեսնում ենք, Պահլավունիների երկու խոշոր գործիչներն իրենց անվանում են Պահլավունի, կապելով իրենց տունը Պահլավունիների և Գրիգոր Լուսավորչի տոհմի հետ։ Բայց ճիշտ են մատնանշել Օրմանյանը[2] և Կոստանյանը[3], որ Պահլավունիները սերված են Կամսարականներից։ Պահլավունիների այս տոհմն էր, հանձինս Վահրամի, որ մեծ օգնություն էր ցույց տալիս Գագիկ Առաջինին հայ կենտրոնախույս տարրերի և արտաքին թշնամիների դեմ հաջող պայքարելու գործում։

Գագիկ Առաջինի ներքին քաղաքականությունը

Գագիկ Առաջինի ներքին քաղաքականության նպատակն էր մի կողմից ուժեղացնել երկրի ռազմական ուժերը և ստեղծել ամուր բանակ, իսկ մյուս կողմից իր սուվերեն իրավունքը տարածել ու պահպանել երկրի հայ, արաբ մանր իշխանությունների — թագավորությունների վրա և սանձահարել նրանց կենտրոնախույս ձգտումները։ Գագիկի թագավորության շրջանում Սյունյաց, Խաչենի և Փառիսոսի իշխանությունները հետամուտ լինելով իրենց կենտրոնախույս ձգտումներին, ըմբոստանում են արքայից արքայի դեմ, բայց արքան մեծ բանակով մտնում է ըմբոստների երկրները և, ինչպես Ասողիկն է ասում, գրավում է մի շարք ամրոցներ ու բերդեր Սյունիքի Վայոց Ձորում, Խաչենում ու Փառիսոսում. «Եւ տիրեաց նա յոլով բերդից և գաւառաց ի սահմանացն Վա-

[1] Հ. Դ. Ալիշան, Շիրակ, էջ 148, Վենետիկ, 1888։

[2] «Ազգապատում», էջ 1150—1151, Կ. Պոլիս, 1912։

[3] «Թղթերը», առաջաբան, էջ ԺԴ։

յոց ձորոյ, Խաչենոյ և Փառիսոսոյ՝ առաւել քան զեղբայր իւր»[1]։ Գագիկի՝ արքայից արքայի, դեմ ըմբոստանում է նաև Գուգարքի իշխանությունը։ 989 թ. Գուրգեն իշխանի մահվանից հետո նրան հաջորդում է իր որդի Դավիթ Անհողինը, որը այդ փոքրիկ տեղական իշխանությունն այնքան է մեծացնում Հայաստանի հյուսիսային մասում, որ քաղաքական խոշոր դեր էր խաղում։ Նա իր պետության կենտրոնն ընտրում է Շամշուլդե բերդը, որը պատկանում էր Բագրատունյաց թագավորությանը։ Ապա նա գրավում է Դմանիք քաղաքը և վրացիների հետ միասին լուրջ հարված է տալիս Թբիլիսիի արաբական էմիրին։ Գուգարաց իշխանության սահմանները ավելի շատ են ընդարձակվում արևելյան կողմից ի հաշիվ Ուտյաց նահանգի։ Այդ ժամանակ Գանձակում հաստատվել էր Դվինի քուրդ Շադդադյան էմիրությունից մի ճյուղ, Փառլու էմիրի գլխավորությամբ, որը իր երկու եղբայրների օգնությամբ սպանում է Գանձակի էմիրին և իր ձեռքն է վերցնում իշխանությունը։ Սա պայքարի է դուրս գալիս Դավիթ Անհողինի դեմ, բայց առաջին իսկ ընդհարման ժամանակ պարտվում և բռնում է փախուստի ճանապարհը։

Այնուհետև Դավիթը ջարդում է նաև իր դեմ ըմբոստացող Գագ գավառի հայ իշխանին։ Քաղաքականապես և ռազմականապես ուժեղացող Դավիթ Անհողին իրեն միանգամայն անկախ է հայտարարում, դուրս գալով Գագիկ Բագրատունու իրավասությունից։ Վերջինս 1001 թվականին մեծ բանակով դուրս է գալիս ըմբոստի դեմ և ընկճում է նրան։ Այնուհետև իր բանակով երեք ամիս շրջում է նրա երկիրը և պատժում բոլոր ըմբոստներին։ Այսպիսով, Գագիկ Առաջինը առանց բարեկամական խտրության, անխտիր ճնշում է երկրի կենտրոնախույս տարրերին, թե՛ Սյունիքի Վայոց Ձորում, թե՛ Խաչենում, և թե՛ Լոռիում։ Դավիթ Անհողինը պարտվելով ու զրկվելով իր հողերից, թափառական կյանք է վարում, այդ պատճառով էլ կոչվել է «Անհողին»։ Բայց վերջում ստիպված է լինում ենթարկվել Անի-Այրարատյան թագավորությանը, ստանում է իր հողերն ու իշխանությունը։ Այս պատժիչ արշավանքից հե-

[1] Ասողիկ, էջ 256։

ատո Գագիկ Բագրատունու հեղինակությունն այնքան է մեծանում, որ երկրի բոլոր մանր ու մեծ թագավորները ոչ միայն ենթարկվում են նրան, այլև անխոհեր ճանաչում են նրա սուվերեն իրավունքը: Գագիկ Առաջինը դաժան կերպով ճնշում է նաև գյուղացիական ընդվզումներն ու դժգոհությունները:

Գագիկ Ա-ի արտաքին քաղաքականությունը

Գագիկ Առաջինի ժամանակ Հայաստանի և Անդրկովկասի գլխավոր թշնամին հանդիսանում էր Ատրպատականի էմիրությունը: Այստեղ իշխում էր Աբլհաճի որդի Մամլոնն, որը խիստ թշնամական դիրք էր բռնել Հայաստանի և Վրաստանի հանդեպ: Ինչպես գիտենք, Բյուզանդական Վասիլ կայսրը Ապահունյաց գավառը հանձնել էր Տայքի Դավիթ Կյուրապաղատին, այդ պատճառով Մանազկերտի բերդը կովախնձոր էր դարձել Տայքի և արաբական էմիրությունների միջև, մանավանդ որ արաբական տեղական էմիրները Մանազկերտի բերդը և Խլաթը երկար ժամանակ համարում էին իրենց սեփականությունը: Դավիթ Կյուրապաղատը օգտվելով Մանազկերտի տեր քուրդ Բատ էմիրի մահվանից, անմիջապես գրավում է Մանազկերտի բերդը, գաղթեցնում մահմեդական բնակիչներին, իսկ նրանց տեղ բնակեցնում է հայերին ու վրացիներին: Այս դեպքը խիստ զայրույթ է պատճառում արաբական էմիրներին: Ատրպատականի էմիր Մամլոն ուլտիմատում է ներկայացնում Դավիթ Կյուրապաղատին, որ նա ետ վերադարձնի բերդը, հակառակ դեպքում կպատերազմի: Դավիթը մերժելով Մամլոնի ապօրինի պահանջը, ընդունում է նրա պատերազմի մարտահրավերը: Մամլոն մեծ բանակով թավրիզից շարժվում է դեպի Հայաստան և կանգ է առնում Ծաղկոտն գավառում: Նրա դեմ դուրս են գալիս Անդրկովկասի բոլոր ռազմական ուժերը Դավիթ Կյուրապաղատի, Անիի Գագիկի, Կարսի Աբասի և վրաց Բագրատի գլխավորությամբ: Սրանք իրենց կռվող ուժերով հավաքվում են Բագրեւանդ գավառի Վաղարշակերտ քաղաքում: Ատրպատականի էմիրը վախենալով իր հակառակորդների մեծ ուժերից, գիշերով հեռանում է Ծաղկոտն գավառից՝ ճանապարհին կողոպտելով և այրելով հայկական գյուղերը:

Դրանից հետո Տայքի Դավիթ և մյուս երկրների թագավորները իրենց զորքերով ետ են գնում: Մամլոն էմիրն օգտագործելով այդ հանգամանքը, 998 թ. նորից պատերազմ է հայտարարում Դավիթ Կյուրապաղատին և ավելի մեծ բանակով, որի թիվը հասնում էր 100.000-ի, շարժվում է դեպի հայկական բարձրավանդակ, նպատակ ունենալով գրավել Հայաստանը և Վրաստանը: Այդ մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում Մատթեոս Ուռհայեցին: Նա գրում է.

«Արդ ի սոցա աւուրս զօրաժողով արարեալ անօրէն և պիղծ բռնակալն Պարսից Մամլան, ամիրապետն անօրինաց և ժանդաբարու գազանութեամբն իւրով իբրեւ զարիւնարբու վիշապ յարձակեալ գայր ի վերայ հաւատացելոցն... և խորհեցաւ կոտորած մեծ ածել ի վերայ աշխարհին Հայոց: Եւ գայր խաղայր ահագին և անհամար բազմութեամբ և ելից զլերինս զդաշտս զօրօք իւրովք. և յահէ անօրինին սասանեալ դողայր ամենայն երկիր, և սրով և հրով գերեաց զբազում տեղիս... և գայր հասանէր այսքան բազմութեամբն յԱպահունեաց գավառին, յերկիրն Դավիթ Կյուրաղապատին՝ վրաց իշխանին»[1]:

(«Սրա օրոք զորաժողով հայտարարեց պարսից անօրէն ու պիղծ բռնակալ Մամլանը. անօրէնների ամիրապետ իր ծանրաբարո գազանությամբ իբրև արյունարբու վիշապ հարձակվեց եկավ հավատացյալների վրա... և մտածեց մեծ կոտորած սարքել Հայաստանում: Եվ շարժվեց եկավ ահագին ու անհամար բազմությամբ և իր զորքերը ցրեց լեռներն ու դաշտերը. անօրենի ահից սասանված դողում էր ամբողջ երկիրը, սրով ու հրով գերեց բազմաթիվ վայրեր... և այսքան բազմությամբ եկավ հասավ Ապահունյաց գավառը՝ Դավիթ Կյուրապաղատ վրաց իշխանի երկիրը»):

Թշնամու այս նոր հարձակման առաջն առնելու համար Անդրկովկասի եղբայրական ժողովուրդները, հատկապես հայերն ու վրացիները, իրենց ռազմական ուժերով նորից միասնաբար դուրս են գալիս նրա դեմ: Հայկական բանակը, որի թիվը հասնում էր 6000-ի, գլխավորում էր տաղանդավոր զորավար Վահրամ Պահլավունին, իր որդի Սմբատ Մագիստրոսի և Աշոտ մարզպանի հետ: Վրաց զորքերը, որոնց թիվը դարձյալ հասնում էր 6000-ի, գլխավորում էր Ջոջիկ իշխանաց իշ-

[1] Ուռհայեցի, էջ 34—35:

ֆանի որդի Փերսը, իսկ Տայքի բանակի հրամանատարն էր Դաբրիել զորավարը: Ինչպես տեսնում ենք, այս անգամ թագավորները հանդես չեն գալիս, այլ նրանց զորավարները, որոնք իրենց միացյալ բանակը սկզբում հավաքում են Սուկավ լեռան մոտ, ապա շարժվելով դեպի Ապահունիք, կանգ են առնում Ծմբո գյուղի մոտ, որովհետև Թշնամին, որ դուրս էր եկել իր մայրաքաղաք Թավրիզից, Վասպուրականի վրայով մտել էր Ապահունյաց գավառը և բանակ դրել նույն գյուղի արվարձանում՝ պատրաստվելով պատերազմի: Հայ-վրացական միացյալ բանակը թեև թվով պակաս էր Թշնամուց, բայց օժտված էր մարտունակությամբ և հայրենասիրությամբ: Երկու հակառակորդ բանակները երկար ժամանակ կանգնած են մնում դեմ առ դեմ և ոչ մեկը չի համարձակվում հարձակվել մյուսի վրա, մինչև որ Թշնամին խախտում է չեզոքությունը և 999 թվականին սկսում պատերազմը: Հայ-վրացական բանակը լուներ միասնական մի ընդհանուր հրամանատար, ամեն մի զորամաս ինքնավար էր և գործում էր իր հրամանատարի հրամաններով: Սա թեև մինուս էր, բայց վնաս չի բերում դաշնակիցներին, որովհետև յուրաքանչյուր զորամաս կռվում էր քաջությամբ, ցուցաբերելով նվիրված հայրենասիրություն: Վահրամ Պահլավունին, որը իր զորամասով իր վրա էր վերցրել ճակատամարտի ծանրությունը, ոչ միայն ցույց էր տալիս տաղանդավոր զորավարի իր հատկությունը, այլև իր զորամասի հերոսական դիմադրությամբ ետ էր մղում Թշնամու բոլոր գրոհները: Առյուծի նման էին կռվում նաև վրացիները: Թշնամու բանակը գնալով թուլանում է և Ծմբո գյուղի մեծ ճակատամարտում լուրջ կերպով ջարդվում է ու ցրվելով բռնում է նահանջի ճանապարհը: Հայ-վրացական զորաբանակները սրընթաց հետապնդում են նահանջող Թշնամուն մինչև Արճեշ քաղաքի դարպասները: Անթարտավան Մամլունն ամոթահար ու կորագլուխ ետ է վերադառնում դեպի իր երկիրը:

«Եւ այնժամ գՀետ մտեալ ամենայն զօրօքն՝ արարին զգօսն անօրինացն փախստական սաստիկ կոտորածով,— գրում է Ուռհայեցին,— առին անթիւ և անհամար գերութիւն և

աւար ոսկւոյ և արծաթոյ: Եւ անօրէնն Մամլան գնաց ամօթով յաշխարհն իւր...»[1]:

(«Եվ այնժամ ամբողջ զորքով հետամուտ լինելով անօրենների զորքերին, սաստիկ կոտորածով փախուստի մատնեցին, վերցրին անթիվ ու անհամար գերի և ոսկի ու արծաթ: Իսկ անօրեն Մամլանը գլխակոր վերադարձավ իր երկիրը»):

Այսպիսով, Ծմբո գյուղի ճակատամարտը վերջանում է հայերի ու վրացիների լիակատար հաղթանակով: Թշնամին, որ ծրագրել էր գրավել Հայաստանն ու Վրաստանը և ենթարկել ծանր հարկատվության, ոչ միայն չի կարողանում կենսագործել իր պլանները, այլև հանդիպելով հայ-վրաց ժողովուրդների միացյալ և ամրակուռ զորքերի հերոսական դիմադրությանը, կրում է ծանր պարտություն, թողնելով հաղթողների ձեռքում մեծ ավար ու գերիներ:

1000 թվականին մահանում է Դավիթ Կյուրապաղատը, որի մահը մեծ վնաս էր բերում Անդրկովկասի ժողովուրդների համար: Նախ, որ նրանք զրկվում էին ռազմական մի մեծ ուժից և, երկրորդ՝ նրա երկիրը միացվում էր կայսրությանը[2], համաձայն Դավիթ Կյուրապաղատի կայսրին տված կտակի: Բյուզանդական կայսր Վասիլ Երկրորդը, որ այդ թվականին գտնվում էր Կիլիկիայում, լսելով Դավիթի մահը, անձամբ մեկնում է Տայք «իր կալվածները» տնօրինելու համար:

Վասիլ Երկրորդը քաղաքական նպատակներով, այսինքն՝ օգտագործելու համար, ճանապարհին ընդունում և լսում է Սեբաստիայի հայ բնակիչների գանգատներն ու նրանց պահանջները բավարարում է: Երզնկայում նրան է դիմում նաև Նփրկերտի և Խլաթի քուրդ էմիրը (Բատի քեւորդին) և ստանում է մագիստրոսի աստիճան: Այնուհետև կայսրը կարգադրում է Զորրորդ Հայքի և Տարոնի իր զորքերին հարկ եղած դեպքում օգնել էմիրին: Կայսրը իր բանակով հասնելով Տայք, կանգ է առնում Հավճիկ քաղաքում, ուր նրան են ներկայանում երկրի ազնվականները, արխազների թագավորն իր հոր հետ և վրաց թագավորը: Արխազների արքային տալիս է կյուրապաղատի, իսկ հորը մագիստրոսի տիտղոս և վերադարձնում

1 Ուռհայեցի, էջ 37:
2 Ասողիկ, էջ 275:

խրենց տեղերը: Այս դեպքից դժգոհ է մնում վրաց թագավորը: Այդ ընթացքում բյուզանդական զորքերը խոտի համար կռիվ են սկսում տեղացիների հետ, որը շուտով վեր է ածվում մեծ պատերազմի: Կռվի ընթացքում սպանվում են Տայքի մի քանի աչքի ընկնող իշխաններ ու զորականներ: Բայց այդ խռովությունը, որ խոտի առիթով առաջ էին բերել տայեցիները, շուտով ճնշվում է բյուզանդական բանակի կողմից, կայսրը գրավում է Դավթի ամբողջ տիրապետությունը՝ համաձայն նրա «տված կտակի»: Դրանով Տայքը, Բասենը և Ապահունիքը անցնում են կայսրության ձեռքը, իսկ Անիի Բագրատունյաց թագավորությունը սահմանակից էր դառնում Բյուզանդիային: Դա ձեռնտու չէր ոչ միայն Վրաստանին, այլև Հայաստանին, որովհետև դրանով սկիզբ էր դրվում նաև Անդրկովկասի և Հայաստանի նոր օկուպացիային:

Կայսրը Տայքի ազնվականների այն մասին, որը ուներ Բյուզանդական օրիենտացիա, թողնում է տեղում և նշանակում համապատասխան պաշտոնների, դժգոհներին տեղահան է անում և քշում է դեպի Փոքր Ասիա ու Կ. Պոլիս, իսկ «հանցավորներին» մահապատժի է ենթարկում:

Ըստ Արիստակես Լաստիվերտցու, կայսրը Տայքի վարչական և դատական գործերը հանձնում է բյուզանդական պաշտոնյաներին. «Եւ կացուցանէ ի վերայ նոցա գործակալս և դատաւորս վերակացուս»[1]: Սա ցույց է տալիս, որ Տայքը դառնում է կայսրության անբաժանելի մի մասը: Այնուհետև կայսրը Տայքից ուղևորվում է դեպի Վանա լճի ափերը: Վանանդի թագավորության սահմաններում նրան դիմավորում է Կարսի Աբաս թագավորը, որից հետո նրան ներկայանում է Վասպուրականի Սենեքերիմ թագավորն իր եղբոր՝ Գուրգենի հետ: Կայսրը սրանց սիրաշահելու համար բոլորին էլ մեծամեծ նվերներ, զարդեր, ձիեր ու ջորիներ է շնորհում: Ապա Մանազկերտից վերադառնում է Բագրեւանդ և բանակ դնում Վաղարշակերտ քաղաքի մոտ, մեծ դաշտում, սպասելով Գագիկ Բագրատունու այցելությանը: Սակայն Բագրատունյաց արքա-

[1] «Պատմութիւն Արիստակէս վարդապետի Լաստիվերտցւոյ», էջ 5, Թիֆլիս, 1912:

յից արքան այցելության չի գնում բյուզանդական զորոշ կայսրին, նախ նրա համար, որ դժգոհ էր Տայքի անեքսիայից և, երկրորդ՝ իր համար որպես թագավորի, փոքրոգություն էր համարում, «իբրև փոքրութիւն համարեալ զգնալն իւր առնա»,— գրում է Ասողիկը[1]: Իսկ այդ ցույց է տալիս Անիի թագավորության հզորությունը և Գագիկ Առաջինի հեղինակության մեծացումը: Հայ իշխաններից Աբուսահլը բագրեւանդում չարախոսում է Գագիկի հասցեին, սակայն կայսրը հաշվի չի առնում այդ: Ապա նա կասկածելով Գագիկի և վրաց թագավորի ռազմական ուժերից, թողնում է Բագրեւանդը, Կարինի վրայով վերադառնում է իր մայրաքաղաքը: Կայսրի վերադարձից հետո Գագիկ Առաջինը չի մոռանում իր քրոջ որդի Աբուսահլի չարախոսությունը և պատժում է նրան:

Վասիլ կայսրի վերադարձից հետո վրաց Գուրգեն թագավորը Գագիկի համաձայնությամբ փորձ է կատարում Տայքը դարս բերել Բյուզանդիայի գերիշխանության տակից: Նա իր բանակով հարձակվում է Տայքի վրա և հասնում մինչև Մանազկերտ, սակայն սրա մերվանի ձորն ու գրավում է Տայքի մի մասը: Սակայն սրա դեմ դուրս է գալիս բյուզանդական զորավար Կանիկլ Մանդիստրոսը և կատեցնում է հակառակորդի հաղթարշավը: Սկսվում են պատերազմական գործողությունները, որոնք տևում են մինչև 1001 թ. վերջը, բայց վերջում հաշտվում են և երկու երկրների սահմանները մնում են անփոփոխ: Գուրգենն իր զորքերը դուրս է բերում Տայքից, իսկ կայսրությունն էլ խոստանում է նոր անեքսիաներ չկատարել Անդրկովկասում: Դրանից հետո ավելի քան 20 տարի Հայաստանն ու Վրաստանը մնում են թե՛ ներքին երկպառակություններից, և թե՛ արտաքին արշավանքներից:

Այդ տարիներին Հայաստանի տնտեսական կյանքը ավելի է զարգանում և Բագրատունյաց պետությունը տնտեսապես ու քաղաքականապես հասնում է իր զարգացման բարձրագույն աստիճանին: Հայ-վրացա-աբխազական և աղվանական միությունն ավելի է ամրապնդվում: Արտաքին թշնամիները երկյուղ կրելով այդ միության հզորությունից, ստիպված են լի-

[1] Ասողիկ, էջ 177—178:

նում բարեկամական հարաբերություններ հաստատել Գագիկ Առաջինի հետ։ Նա արաբներից ստացել է արքայից արքայի տիտղոս, որը ճանաչում էին Հայաստանի բոլոր մեծ ու փոքր իշխանները։ Նրա հրամանները պարտադիր էին երկրի բոլոր իշխանների համար։ Նա չեզոք դիրք է բռնում բյուզանդա-բուլղարական պատերազմների ժամանակ և ոչ մի անգամ չի օգնում կայսրությանը։ Դրանով նա իր համակրանքն էր արտահայտում բուլղարների նկատմամբ։ Հայաստանը տնտեսապես այնքան էր հզորացել, որ Արևելքի և Միջերկրականի երկրների միջև միջնորդի դեր էր խաղում։ Հայ պատմիչների ասելով Աշոտ Գ-ի, Սմբատ Բ-ի և Գագիկ Առաջինի ժամանակ կուլտուրական ու շինարարական աշխատանքներն էլ ավելի են ընդարձակվում, բացվում են նորանոր դպրոցներ և կառուցվում շատ վանքեր ու եկեղեցիներ, որոնք մի կողմից դառնում են երկրի կուլտուրական օջախներ, իսկ մյուս կողմից շահագործող հիմնարկություններ։ Անին գնալով դառնում է Հայաստանի և Միջերկրական Արևելքի նշանավոր քաղաքներից մեկը։ Գագիկ Առաջինի թագավորական իշխանության հեղինակությունը շատ էր բարձրացել երկրում, նա յուրաքանչյուր քայլափոխում աշխատում էր միջամտել ֆեոդալական թագավորությունների ներքին գործերին, տարածել իր քաղաքական ազդեցությունը նրանց վրա և դրանով ամրապնդել պետությունը Հայաստանում, միաժամանակ պահպանելով սուվերենի և վասալի փոխհարաբերություններ։ Սակայն 1020 թվականներից խախտվում է երկրի հարյուրամյա համեմատաբար խաղաղության շրջանը և սկսվում է փոթորիկների մի նոր ժամանակաշրջան։

Այսպիսով, ամփոփելով երրորդ գլուխը, եզրակացնում ենք, որ հայ ժողովուրդը մոտ հարյուր տարվա ընթացքում, չնայած ներքին և արտաքին աննպաստ պայմաններին, ոչ միայն կարողանում է պահպանել իր անկախությունը, այլև զգալի չափով զարգացնում է տնտեսությունն ու կուլտուրան, և Հայաստանը կարևոր դեր է խաղում այդ ժամանակի միջազգային տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքում։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ 9—11-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

1. ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ԿԱԽՎԱԾԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ, ԵՐԱԽԻԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՅԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆեոդալական կախվածատիրությունը և Ֆեոդալական երարխիան

9-րդ դարում ֆեոդալական հասարակարգը Հայաստանում թևակոխում է ֆեոդալիզմի զարգացման ժամանակաշրջանը, որը կապվում է նախորդ շրջանի ֆեոդալական տնտեսության ընդերքում արտադրողական ուժերի զարգացման և նյութական միջոցների կուտակման հետ, ինչպես նաև արաբական տիրապետության վերջին շրջանի առևտրա-վաշխառուական կապիտալի գործունեության լայն ծավալի, որն ավելի մեծ թափով էր սկսվել ծավալվել 9-րդ դարի երկրորդ կեսին։ Վերոհիշյալ պայմանների հետևանքով կատարվում է արհեստի վերջնական բաժանումը գյուղատնտեսությունից, այսինքն, Հայաստանում վերջնականապես ավարտվում է աշխատանքի հասարակական երկրորդ մեծ բաժանումը, առաջանում են միջնադարյան Հայաստանի մի շարք նոր քաղաքներ։ Արհեստավորները և առևտրականները համակենտրոնանում են քաղաքներում, երկրում ստեղծվում է ներքին շուկա։ Ֆեոդալիզմի այս պերիոդիզացիան Հայաստանում տևում է 9-րդ դարից մինչև 13-րդ դարի վերջը։

որը հանդիսանում է ֆեոդալիզմի զարգացման դարաշրջան, մի դարաշրջան, երբ Հայաստանը, ինչպես տեսանք, բռնում է իր տնտեսական-քաղաքական ու կուլտուրական կյանքի զարգացման ճանապարհը: Վերոհիշյալ դարաշրջանում կազմակերպված ֆեոդալիզմի բնորոշ առանձնահատկությունը Հայաստանի ֆեոդալական քաղաքի բաժանումն էր գյուղից, որի պատճառով և տեղի էր ունենում արտադրողական ուժերի ավելի արագ զարգացում, կատարվում է ներքին և արտաքին լայն առևտուր, ուժեղանում է գյուղացիության կախյալ վիճակը, ավելի է սրվում դասակարգային պայքարը, հանձինս ժողովրդական մասսաների շարժման: Ֆեոդալիզմի զարգացման այս շրջանում արդեն ֆեոդալական հասարակարգի ներսում քայքայման ու վերածննդի համար նախապայմաններ են ստեղծվում:

Արաբական խալիֆաթը, ինչպես նշել ենք, վարում էր Հայաստանի հողատեր ֆեոդալներին թուլացնելու ու նրանց հողերը բռնագրավելու քաղաքականություն և միաժամանակ աշխատում էր մեծ չափերով դուրս կորզել երկրի նյութական միջոցները, վարում էր հայ նախարարներին բնաջնջելու և հողը պետականացնելու քաղաքականություն: Եթե այդ քաղաքականությունը սկզբում դնում էր հօգուտ արաբների, ապա վերջում, երբ ֆեոդալիզմի զարգացման հետևանքով աստիճանաբար քայքայվում ու թուլանում էր խալիֆաթը, այդ քաղաքականությունն այլևս օգուտ չէր բերում նրանց: Խալիֆաթի նպատակն էր Հայաստանը նվաճել նաև տնտեսապես: Բայց դրան խոչընդոտ էին հանդիսանում երկրի մեծ ու փոքր նախարարները իրենց ռազմական ուժերով: Արաբական միապետական խալիֆաթը չէր կարող հանդուրժել զարգացած ֆեոդալական կազմ ունեցող նախարարական այն սիստեմը, որ գոյություն ուներ Հայաստանում, մանավանդ որ այդ նախարարական կազմը 7-րդ դարի վերջին քառորդում, հատկապես արաբա-բյուզանդական կռիվների ընթացքում, իր բռնած դիրքով և ապստամբություններով, խալիֆաթի նկատմամբ ցույց էր տվել անհնազանդության մի շարք դեպքեր:

Սասանյան Իրանն իր էքսպանսիայի ընթացքում իր ազդեցությունն ու քաղաքականությունը Հայաստանում ամրա-

պնդելու համար հնարավոր էր գտնում պահպանել հայ նախարարական կարգը, նրանց վաղեմի արտոնյալ իրավունքները և աշխատում էր հայ ֆեոդալներին կապել Տիզբոնի արքունիքի և պաշտոնական հետ, այնինչ արաբները հայ նախարարներին հաշվի չէին առնում, այդ պատճառով հողատեր հայ իշխանները երկյուղ կրելով, որ կարող են զրկվել իրենց հողից ու հարստություններից, մեծ մասամբ թշնամանում էին արաբների հետ, իսկ խալիֆաթը դրա համար բռնում էր նախարարական տոհմերին ուղղակի ոչնչացնելու և նրանց հողերը զավթելու քաղաքականության ուղին. խալիֆաթը ձգտում էր տեղացի ֆեոդալներին փոխարինել արաբ էմիր-կալվածատերերով: Օմարի (634—644) հին սկզբունքը—օրենքը, որը արգելում էր արաբներին գրաված երկրներում հողային սեփականություն ունենալ, փոխվում է Օսմանի-Օթմանի (644—656) ժամանակ, այսինքն, արաբ նվաճողները կարող են գրաված երկրներում ձեռք բերել հողային տարածություններ: Հետևաբար, քանի որ 650 թ. արաբներն արդեն տիրել էին Հայաստանին, համաձայն Օսմանի նոր օրենքի, արաբ իշխողները կարող էին Հայաստանում հող ունենալ:

Արաբական խալիֆաթի հողային հարաբերությունների և հարկերի մասին արժեքավոր տեղեկություններ է տալիս Աբու-Յուսուֆ-Յակուբին իր Հողային հարկի գիրքը («Քիթաբ-էլ-խարաջ») աշխատության մեջ: Ըստ Աբու-Յուսուֆ-Յակուբի «Քիթաբ-էլ-խարաջ»-ի տեղեկությունների, հողը բաժանվում էր երկու մասի՝ զիմի և խարաջի: Զիմի հողերը պատկանում էին մուսուլմաններին և մշակվում էին տեղացիների կողմից, իսկ խարաջի հողերը պատկանում էին արաբներին հպատակություն հայտնած ժողովուրդներին: Այսպիսի հողային սիստեմ էին ուզում մտցնել արաբները նաև Հայաստանում: Բալաձորի վկայության համաձայն Հաբիբ-Իբն-Մասլաման Մուսավիա փոխարքայի կարգադրությամբ 1000 հոգուց բաղկացած մի պահակախումբ է տեղափոխվում Կարին, որին շնորհում է իրենց տեղերից փախած հայ իշխանների լքյալ հողերը[1]: Ըստ

[1] «Արաբացի մատենագրեր. Հայաստանի մասին», էջ 37—38, Վիեննա, 1919:

այդ վկայության, հողերը մշակվում էին տեղի բնակիչների միջոցով։ Խալիֆաթը հովանավորում էր արաբ այն էմիրներին, որոնք բռնագրավում էին հայ իշխանների հողերը և հեռացնում նրանց իրենց սեփականություններից։ Այսպես, Բերկրիի Գնունիներին հեռացնում են արաբ Ութմանիկները, Կամսարականներին՝ Ջահապի տոհմի էմիրները։ Խալիֆաթը, թեև ընդհանուր առմամբ, ինչպես ասված է, հայ հոգևորականների նկատմամբ վարում էր մեղմ քաղաքականություն, բայց հաճախ նրանց նկատմամբ էլ էր գործադրում որոշ բռնություններ ու բռնագրավումներ։ Հայաստանի մի շարք քաղաքներում՝ Ամիդում, Մանազկերտում, Բերկրիում, Արզնում, Դաստվանում, Կարինում, Դվինում և Նախիջևանում, առաջ են գալիս խոշոր հողատեր արաբ էմիրներ։ Սրանք գրավում էին հայ նախարարների հողերն իրենց գյուղերով ու շինականներով։

Արաբական խալիֆները իրավական տեսակետից տեր էին դառնում գրաված երկրների հողերին, բայց միաժամանակ արաբական օրենքներով սահմանված էր, որ գրաված երկրների կալվածատերերի հողերը, առանց պատճառի, իրավունք չունեին բռնագրավել։ Թեև այս օրենքը գոյություն ուներ, այնուամենայնիվ խալիֆներն ու նրա տեղական պաշտոնյաները տեղի-անտեղի բռնագրավում էին հայ նախարարների հողերը և որպես «Կատյա» (ավատ) նվիրում էին արաբ էմիրներին ու զինվորականներին։ Այդ ճանապարհով 8—9-րդ դարերում Հայաստանի հողային ֆոնդի զգալի մասը անցնում է արաբների ձեռքը, և դրանով էլ երկրում առաջ է գալիս պայմանական հողատիրություն։

Արաբական խալիֆաթի վարած վերոհիշյալ քաղաքականությանը հայ իշխանները ոչ միայն դիմադրում էին, այլև սիստեմատիկ ապստամբություններ էին բարձրացնում, որոնք ճնշելուց հետո արաբները բնաջնջում էին հայ նախարարներին ու նրանց զորքերին։ Բնաջնջման մեթոդները հանդիսանում էին բանտը, աքսորը և կոտորածը։ Հայ իշխանների հողերը բռնագրավելու խնդրում նախարարներին միմյանց հետ անտեղի կռվեցնելն ու իրենց պաշտոններից և կալվածներից հեռացնելը կազմում էին խալիֆաթի վարած քաղաքականության անկյունաքարը։ Արաբական խալիֆաթի այս քաղաքականու-

թյունից ամենից շատ տուժում էին մանր կալվածատերերը։ Նրանք չդիմանալով ծանր հարկերին, վաճառում էին իրենց հողերը, որոնց մեծ մասը անցնում էր արաբ էմիրների ձեռքը։ Թեև 8-րդ դարի վերջին և 9-րդ դարի սկզբին խալիֆաթին հաջողվել էր ի հաշիվ հայ նախարարների ժառանգական հողատիրության Հայաստանում ստեղծել որոշ չափով պայմանական հողատիրություն, բայց 9—10-րդ դարերում հայ իշխանները նորից վերականգնում են իրենց ժառանգական հողային իրավունքները։

Բագրատունիների թագավորության շրջանում (9—10-րդ դարերում) հողի սեփականության դերագույն իրավունքը նույնպես պատկանում էր Բագրատունի թագավորներին, բայց 10-րդ դարի կեսերից այդ իրավունքը որոշ չափով խախտվում է, որովհետև նրանց ենթակա վասալ իշխանությունները փաստորեն հանդիսանում էին իրենց հողերի ժառանգական տերերը։ Թագավորից կամ թե խոշոր ֆեոդալից կախման մեջ գտնվող վասալն իրավունք ուներ իրեն ենթակա հողերի վրա հիմնել գյուղեր, կառուցել ջրանցքներ, բերդեր, ամրոցներ և դղյակներ։ Թագավորը կարող էր դրավել իր վասալի հողերը միայն այն ժամանակ, երբ նա կատարում էր քաղաքական ծանր հանցանք։

Արաբական խալիֆաթի լուծը թոթափելուց հետո Հայաստանում հետզհետե վերականգնվում են հայ իշխանությունները, այն էլ ավելի ուժեղացած կերպով, բայց քանակով ավելի պակաս։ 9—10-րդ դարերում իրենց կալվածներով ու խաղացած դերով հայտնի են հետևյալ հայ ֆեոդալ-իշխանական տները՝ Բագրատունի, Արծրունի, Սյունի, Անձևաց, Մոկաց, Ջանարքի, Խաչենի, Ուտիքի, Գուգարքի, Գարդմանի, Մարզպետունի և Պահլավունի։ Աշոտ Առաջինի ժամանակ Բագրատունիների սեփական կալվածները կազմում էին Բագարանի, Շիրակի, Վանանդի, Անիի, Արագածոտնի, Այրարատի (մինչև Երևան) գավառները և Տայքի ու Գուգարքի որոշ մասերը։ Բագրատունիներն իրենց նորանոր գրավումներով (Գեղարքունիք, Կոգովիտ) ավելի են ընդարձակում իրենց կալվածները։ Արծրունիներն սկզբում կալվածներ ունեին միայն Աղբակում, բայց Գագիկ իշխանի ժամանակ տիրում են Վասպուրական

նահանգի մեծագույն մասին: Սրանք և Բագրատունիներն իրենց վասալներով պայքար էին մղում Խոյ-Սալմաստի, Բերկրիի, Մանազկերտ-Խլաթի և Բաղեշի համար, ուր իշխում էին արաբական էմիրությունները: Սյունիքում իշխում էին Սյունյաց իշխանության երկու ճյուղերը: Մոկսի և Անձևաց իշխանները հանդիսանում էին Արծրունիների վասալները, իսկ վերը նշված Ջանարքի, Խաչենի, Ուտիքի, Գուգարքի, Գարդմանի, Մարզպետունի և Պահլավունի իշխանական տները հանդիսանում էին Բագրատունիների վասալները: Աղվանքի իշխանություններին վտանգ էին սպառնում Ատրպատականի արաբական էմիրությունները: Նրանք հենվում էին Բագրատունիների վրա և պայքարում իրենց թշնամիների դեմ:

Արաբական խալիֆաթի տիրապետության ժամանակ ֆեոդալական երարխիան Հայաստանում որոշ փոփոխության է ենթարկվում: Հայ նախարարությունները տեղի են տալիս իշխանությունների առաջ: Հայ նախարարական կարգը քայքայվում է 8-րդ դարում: Բայց 9—10-րդ դարերում արաբ-բյուզանդական ազդեցության տակ երկրում աստիճանաբար առաջանում են դասային նոր հարաբերություններ, վասալական նոր կախվածություններ, իսկ տեղական իրավունքներին զուգընթաց սկսվում են գործել նաև մահմեդական և հռոմեական օրենքները: Հայաստանի ֆեոդալական երարխիան արաբական խալիֆաթի տիրապետության վերջին շրջանում ընդունում է մի նոր կերպարանք և նոր ձև: Ջախջախված ու թուլացած հին ֆեոդալների մնացորդները, ինչպես նաև նոր առաջացածները իրենց գոյությունը սկսում են պահպանել միայն հզորացող Բագրատունի, Արծրունի և Սյունի իշխանությունների հովանավորության ներքո: Վերոհիշյալ երեք նախարարական տոհմերը ոչ միայն կարողանում են 8-րդ դարի ահարկու փոթորիկներից դուրս գալ ապահով, այլև տնտեսական ու ռազմական տեսակետից այնքան են ուժեղանում, որ սկսում են երկրում ղեկավար դեր խաղալ: Այս տոհմերը գնալով աստիճանաբար դառնում են ինքնուրույն իշխանություններ, թագավորություններ, համապատասխան վասալ իշխաններով: Վերոհիշյալ երեք տոհմերից Բագրատունիները, ինչպես տեսանք,

երկրում ձեռք են բերում գերիշխող դիրք և թագավորական իրավունք: Այդ պատճառով էլ 9—11-րդ դարերում ֆեոդալական երարխիան Հայաստանում գլխավորում էին Բագրատունյաց արքայից արքաները: Այսպիսով, ֆեոդալական երարխիայի առաջին աստիճանում գտնվում էին Բագրատունիները, որպես երկրի ընդհանուր սուվերեններ: Ֆեոդալական երարխիայի երկրորդ աստիճանը, դա Բագրատունիների գերիշխանությունը ճանաչող Արծրունի, Սյունի թագավորներն էին, Վանանդի, Զորագետի, Աղվանքի և Արցախի տերերն իրենց վասալներով, ինչպես նաև Հայաստանում հաստատված արաբական էմիրները: Ֆեոդալական երարխիայի երրորդ աստիճանը Բագրատունիներին անմիջապես ենթակա վասալ իշխանություններն էին՝ Մարզպետունի, Պահլավունի և այլն: Իսկ ֆեոդալական երարխիայի չորրորդ աստիճանը ազատներն ու մանր հողատերերն էին, որոնցից էլ կազմվում էր «աղատադունդ» հեծյալ զորքը[1]:

Բագրատունիներին ենթակա վասալները պարտավոր էին հարկ վճարել արքունիքին: Թովմա Արծրունին պատմում է, որ Ապահունիքի արաբ էմիր Աբդուռահմանի որդիներն ապըստամբելով, հրաժարվում են հարկ տալ Սմբատ Առաջինին[2]: Աբդուռահմանի որդիների օրինակին է հետևում Սյունյաց Սմբատ իշխանը[3]: Թեև հայ հին մատենագիրների մոտ տեղեկություններ չկան հայ նախարարների կողմից Արշակունիներին հարկ վճարելու մասին, բայց մի բան պարզ է, որ Բագրատունիների ժամանակ նրանք հարկ են վճարել: Սակայն հայ իշխանները հաճախ հրաժարվում էին հարկերը վճարելուց և երբեմն ապստամբում էին: Այս շրջանի աշխարհիկ ֆեոդալների մի մասը, հատկապես խոշոր ֆեոդալները, արաբական էմիրների նման, ինչպես ասված է, բնակություն էր հաստատում քաղաքներում, մասնակցում էր քաղաքների կառավարմանը, տնտեսական ու հասարակական գործարքներին ու նպաստում նրանց զարգացմանը: Դրանով էլ այս շրջանի ֆեոդալական

---

1 Թովմա, էջ 221, 222, 387, 426, 448 և այլն:

2 Նույն տեղը, էջ 394:

3 Նույն տեղը, էջ 397—398:

սիստեմը մասամբ տարբերվում էր հին հայ նախարարական սիստեմից։

Աշխարհիկ ֆեոդալներին զուգընթաց մեծ չափով զարգանում է նաև եկեղեցական-վանքային հողատիրությունը, հատկապես Բագրատունիների, Արծրունիների, Սյունիների և Պահլավունիների տիրույթներում։ 9—11-րդ դարերում կառուցվում են մի շարք հոգևոր շենքեր, որոնցից հայտնի են Սևանի, Տաթևի, Սանահին-Հաղպատի, Աղթամարի, Նարեկա, Վարագա, Դարևանի, Արգինայի, Բջնիի, Կեչառիսի և այլ վանքերն ու եկեղեցիները, որոնք հանդիսանում էին խոշոր կալվածատիրական հաստատություններ։ Հոգևոր այդ կենտրոններն իրենց կալվածների մեծ մասը ձեռք են բերում նվիրատվության ճանապարհով։ Դա երևում է վանքերի ու եկեղեցիների պատերի վրա թողած վիմագիր արձանագրություններից ու պատմիչների վկայություններից։ Սյունյաց իշխան Սուփանը 901 թվականի Մաքենացոց վանքի պատին գրել տված արձանագրության մեջ ասում է.

«Ես Սուփան, Սիւնեաց իշխան, շինեցի զՄաքենոցաց եկեղեցիս, և անխնայաբար զարդարեցի պատուական սպասուք և աստուածային կտակարանաւք, և եռոտ զսեփական տեղն մեր ի սա, որ բսա անուան եկեղեցւոյս Աստուածածին ասի, ամենայն սահմանաւք՝ լերամբ և դաշտիւ, և եռու որս ձկանց, զԲողաշէն, սեղանոյն և եւթն հարիւր դրամ ի Դեղձանագետոյ զապալէն, երկու հարիւր դրամ ի Կաթկայ, երեք հարիւր յիսուն յԱնմիտէն, որ լինի ՌՄՄ (1250) դրամ...»[1]։

Իսկ Բագրատունի Աշոտ թագավորի որդի Շապուհն իր 903 թ. Վանանի թողած արձանագրության մեջ ասում է.

«Եւ եռու (Վանանի եկեղեցուն—Հ. Հ.) հինդ գեղոց սահման՝ Կոթաքարն, Աղաբոյ վանայ Շաւառնահողն, Գետամէջն, Կթանոցն, Գետավանայց ծովն, երկու հարիւր վաթսուն դրամ ի Կոթաքարէն, հինգհարիւր երեսուն ի Բրտենեացն, վեց հարիւր վաթսուն յԱղաբոյ վանացն ծովէ, իննհարիւր իննսուն ի Կարբին գետերէն, և ի նաւերէն»[2]։

[1] «Վիմական Տարեգիր», էջ 6։

[2] Նույնը, էջ 6։

Պատմագիր Ստեփանոս Օրբելյանն իր աշխատության 42-րդ գլխում նշում է, որ Տաթևի վանքի կառուցումից հետո Սյունյաց Սմբատ իշխանը շրջապատի գյուղերն իրենց հողերով ու ջրերով նվիրում է վանքին[1]։ Վերոհիշյալ փաստերը ցույց են տալիս, որ վանքերն ու եկեղեցիները ոչ միայն նվիրատվությամբ ձեռք են բերում հողային ընդարձակ տարածություններ, այլև դառնում են խոշոր կալվածատերեր և մրցում են աշխարհիկ շատ կալվածատերերի հետ։ Հենց ինքը՝ Տաթևի վանքը, Սյունյաց աշխարհի 47 գյուղերում հողամասեր է ունեցել։

Մատթեոս Ուռհայեցու ասելով Պետրոս Արշարունի Գուագարձ կաթողիկոսի օրոք (1019—1058) կաթողիկոսարանին հարկատու էին «...հինդ հարիւր գեղ անուանի և մեծանիստ և շահաւէտ ընտիր ընտիր...»[2]։ Նույն Ուռհայեցու վկայությամբ Արծն քաղաքի քորեպիսկոպոս Դավթուկը ունեցել է մեծ հարբստություն, անասուններ և հողամասեր. «Այլ զոսկւոյ և զարծաթոյ և զդիպակաց աւելորդ է ասել, վասն զի ոչ արկանի ընդ գրով,— գրում է Ուռհայեցին,— բայց զայս բազում անգամ լուեալ է մեր ի բազմաց յաղագս քորեպիսկոպոսին՝ որ ասէին Դավթուկ, եթե զգանձատունն նորա Աբրեհիմն էառ և քառասուն ուղտ բարձան զգանձարանն նորա, ութ հարիւր վեցկի եզանց ելանէին ի տանէ նորա»[3]։ Ինչպես տեսնում ենք, Դավթուկի գանձարանից սելջուկյան զորավար Իբրահիմը տարել է 40 ուղտի բեռ գանձ ու հարստություն և նրա տնից դուրս է եկել աշխատանքի 800 լուծ վեցկի։ Անշուշտ, Ուռհայեցու վերոհիշյալ տվյալները չափազանցված են Դավթուկ քորեպիսկոպոսի ունեցվածքի, մանավանդ 800 վեցկիի մասին։ Ակադ. Հ. Մանանդյանի ասելով մեկ վեցկուն լծում են վեց լուծ եզ, այսինքն 9600 եզ է աշխատել Դավթուկի համար[4], մի բան, որ հնարավոր չէր այդ ժամանակ։ Մեզ թվում է Մանանդյանի բացատրությունը, որ վեցկուն անպայման պիտի

[1] Օրբելյան, էջ 229—230։

[2] Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, էջ 153։

[3] Ուռհայեցի, էջ 103։

[4] Հ. Մանանդյան, «Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում», էջ 39, Երևան, 1940։

լծեին վեց զույգ եզ, ճիշտ չէ. վեցկին մի զույգ եզով էլ վարում էր և հավանական է, որ այդ ունեցվածքը եղած լինի հոգևոր թեմինը կամ վանքինը, որի ղեկավարն էր Դավթուկը։ Այս փաստերը կրկին անգամ ապացուցում են եկեղեցիների և վանքերի ոչ միայն հարստությունները, այլև խոշոր կալվածներ ունենալու հանգամանքը։ Վանքերի ու եկեղեցիների հողերը չէին օտարացվում, մինչդեռ աշխարհիկ ֆեոդալների կալվածները տրոհվում էին տոհմի անդամների միջև և երբեմն էլ վաճառքի հանվում ու անցնում ձեռքից-ձեռք։ Վանքապատկան հողերն ընդարձակվում էին նաև գնումների ճանապարհով ի հաշիվ աշխարհիկ մանր կալվածատերերի հողերի։ Թե՛ վանքերը, և թե՛ աշխարհիկ ֆեոդալները պատեհ առիթներով հափշտակում էին նաև ազատ-հայրենատեր գյուղական համայնքների հողակտորները։ Այդ պատճառով էլ գյուղացիները ծառս էին լինում նաև վանքերի դեմ։ Վանքերի, եկեղեցիների ու հոգևորականների կալվածները տարածվում էին երկրի տարբեր գավառներում և աշխարհիկ ֆեոդալների նման նրանք էլ շահագործում էին գյուղացիներին։ Հոգևորականները Բագրատունիների ժամանակ նույնպես կազմում էին առանձին դաս ու երարխիա՝ իրենց կաթողիկոսով, եպիսկոպոսներով, թեմական առաջնորդներով, վանահայրերով և արեղաներով։

Գյուղացիության իրավա-քաղաքական դրությունը

9-րդ դարի երկրորդ կեսից սկսած ֆեոդալական տնտեսության աճմանը զուգընթաց աստիճանաբար մանր հայրենատեր-գյուղացիների մի մասը զրկվում է իր հողերից և անձնական կախման մեջ ընկնում ֆեոդալ-իշխաններից։ Բագրատունիների ժամանակ երկրի ազգաբնակության աշխատավոր մասը, ըստ բնակության վայրի, բաժանվում էր երկու խմբի՝ գյուղաբնակներ և քաղաքաբնակներ։ Գյուղաբնակները ավելի մեծ թիվ էին կազմում և տակավին մեծ մասամբ պահպանում էին իրենց շինական դասի — համայնքի իրավունքը։ Բայց մի մասն արդեն կորցրել էր նախկին ազատ իրավունքը և ենթարկվում էր աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներին, որպես կախյալ և ճորտ գյուղացիներ։ Ֆեոդալ-կալվածատերերի իշխանությունը ենթակա ճորտ գյուղացիների վրա ան-

սահմանափակ էր։ Կալվածատերերը միայն իրավունք չունեին գյուղացիներին սպանել և առանց հողի վաճառել ու նվիրել։

«Ֆեոդալական հասարակարգում արտադրական հարաբերությունների հիմքը ֆեոդալի սեփականությունն է արտադրության միջոցների նկատմամբ և ոչ լրիվ սեփականություն արտադրության աշխատողի՝ ճորտի նկատմամբ, որին ֆեոդալն արդեն չի կարող սպանել, բայց որին նա կարող է վաճառել, գնել։ Ֆեոդալական սեփականության կողքին գոյություն ունի գյուղացու և արհեստավորի միանձնյա սեփականություն արտադրության գործիքների և իր մասնավոր տնտեսության նրա կատմամբ, սեփականություն, որ հիմնված է անձնական աշխատանքի վրա»[1]։

Սակայն այդ սահմանափակումները ևս շատ հաճախ անտեսվում էին։ Գյուղացիների բողոքները ֆեոդալ կալվածատերերի դեմ համարվում էին բողոք ամբողջ պետական կամ իշխանական կարգի դեմ, և դրա համար խիստ պատժվում էին։ Սակայն ճորտերը վաճառվելիս կամ նվիրվելիս, նրանք չէին զրկվում իրենց տնից, անասուններից, ինվենտար-գործիքներից և հողակտորից։ Ֆեոդալ-կալվածատերերը գյուղացի-ճորտի ունեցվածքը երկու դեպքում միայն իրավունք ունեին բռնագրավելու՝ մեկ, երբ ճորտը չուներ ժառանգ և մյուսը, երբ նա փախուստի էր դիմում։ Շինական դասի մի փոքր մասը թեև ճորտացվում է, բայց նրա անդամները միասին ապրելով պահպանում էին իրենց համայնական վիճակը և իրենց հարաբերությունները ֆեոդալ-կալվածատերերի հետ պահպանում էին ազատ շինականների նման՝ իրենց գյուղապետների միջոցով։ Իսկ շինական դասի ճնշող մեծամասնությունը, թեև ֆեոդալ-իշխաններին ենթակա էր, կատարում էր նրանց նկատմամբ որոշակի ֆեոդալական պարտավորություններ, բայց իրավապես ազատ էր, որոնցից շատերը «հայրենատեր» գյուղացիներ էին ու տակավին պահպանում էին իրենց շինական դասի իրավունքները։ Այնուամենայնիվ երկրի կառավա-

---

1 Կարլ Մարքս, Ընտիր երկեր, երկու հատորով, հատ. 1, Երևան, 1941, էջ 99։

րիչ ֆեոդալ-իշխաններն ու թագավորները կարող էին ազատ շինականներին իրենց գյուղերով, հողերով ու ջրերով նվիրել հավատարիմ իշխաններին ու վանքերին: Շինական դասը նույնպես նախորդ դարաշրջանների նման, ինչպես ճորտացման ենթակա գյուղացիները, իր հարաբերությունները ֆեոդալ-կալվածատեր իշխան-կառավարիչների հետ պահպանում էր գյուղապետների միջոցով: Այդ գյուղապետները մինչև 9-րդ դարը հայտնի էին «դասապետք շինականաց», «գեղջաւագ», «աւագ շենին» և «գյուղապետ» անուններով, իսկ 9—13-րդ դարերում հայտնի են դառնում «գյուղական» և 13—19-րդ դարերին «ռայիս» (ռես) անուններով: «Դասապետների», «գյուղականների» և «ռեսների» վրա էին դրվում հարկերի հավաքումը և գյուղական համայնքի դատական իրավունքը: Որ «դասապետների» կամ թե «գեղջադագների» վրա էր դրվել հարկերի հավաքումը, դա երևում է Ագվանից Վաչագան թագավորի սահմանած կանոնների հետևյալ հատվածից. «...Աւագ շէնին կալցէ զմարդոյ եղն և յերեցն տացէ»[1] կամ թե 768 թ. Պարտավի ժողովի կանոնների 12-րդից. «Գեղջ աւագ, որ յաղագս արքունի հարկաց զդուռն եկեղեցւոյ փակիլ տայ...»[2]: Նույնը պետք է ասել նաև «գյուղականի» պարտականության մասին. «Եւ է այս գեղ ազատ յամենայն հարկէ ի պատրոնաց ի ձեռնաւորաց, ի գիւղականաց...»[3]:

Այս փաստերը ցույց են տալիս, որ գյուղական համայնքը կառավարվում էր գյուղապետների միջոցով և նրանց գլխավոր պարտականությունն էր հարկերի հավաքումը: Այդ գյուղապետները թեև ընտրվում էին համայնքի կողմից, բայց նրանք պատասխանատու էին նաև կալվածատերերի առաջ:

Ֆեոդալ-կալվածատեր իշխաններն իրենց կամայականություններով ու կեղեքումներով ազգատացման դուռն էին հասցրել շինականներին: Այս փաստը նույնիսկ ստիպված է եղել արձանագրելու այդ նույն իշխանների շահերի արտահայտիչ, ժամանակակից պատմիչ Արիստակես Լաստիվերտցին, նա գրում է.

[1] «Կանոնագիրք Հայոց», էջ 195, Թիֆլիս, 1914:
[2] Նույնը, էջ 172:
[3] «Վիճական Տարեգիր», էջ 51:

«Իշխանք սորա գողակից եղեն գողոց, վրիժագործք և արծաթոյ ծառայք. դատաւորք սորա կաշառառուք և վասն կաշառաց գողանային զիրաւունս. և դատաստան որբոց ոչ առնէին, և չիրաւունս այրեաց ոչ խոնարհէին: Վաշխից և տոկոսեաց օրէնք եղան. և ցորենոյ բազմապատկութիւն, որով երկիր պղծի և արգելու զարգանդ առ ի տալոյ զպտուղ ի ժամու իւրում առ ի կերակուր մարդկան: Որ խաբէր զընկերն՝ պարծէր իմաստուն գոլ, և որ յափշտակէր՝ ասէր, ես հզոր եմ: Զտունս տնանկից աղքատացն, և զսահմանս անդաստանաց նոցա յափշտակէին մեծատունքն...»[1]:

(«Սրա իշխանները գողերին գողակից են, վրեժ առնող և արծաթի ծառայող են. սրա դատավորները կաշառակեր են և կաշառի համար արդարությունը ծածկողներ են, որբերի դատաստան չէին անում և այրիների իրավունքը չէին ընդունում: Սահմանել էին վաշխի և տոկոսների համար օրենքներ և ցորենի փոխատվության համար բազմապատկություն էին սահմանել, որով երկիրը պղծվում և արգելում է իր արգանդին, որ ժամանակին պտուղ տա ու կերակրի մարդկանց: Ով ընկերին խաբում էր՝ պարծենում էր, որ իմաստուն է, և ով հափշտակում էր՝ ասում էր,— Ես հզոր եմ: Մեծատուններն իրենց հարևան աղքատների տներն ու նրանց անդաստանների սահմանները հափշտակում էին...»):

Այս սանձարձակ կողոպուտն ու կեղեքումներն ի նկատի առնելով է, որ հետագայում Մխիթար Գոշը իր կազմած «Դատաստանագրքում» ստիպված է եղել զգուշացնելու ֆեոդալ-կալվածատերերին: Նա գրում է.

«Ի տարեմուտս ըստ կարի ծառայեսցէ և յաւուրս տօնից: Մի լիցի չէք ու չէք[2] բազում, այլ չիք լիցին անիրաւ սովորութիւնքն, զի և սահմանդ բազում և յաւելորդ սովորութեանց եղև: Առանց դատաստանի մի տուգանեսցի, այլ ըստ կարի լիցի թէ յանցաւոր ի տէրունիան գտցի. իսկ յայլս յանցաւոր գտեալ, դատաւորք վճարեսցի»[3]:

[1] «Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ», էջ 79—80, Թիֆլիս, 1912:
[2] Չէք ու չէք նշանակում է խլել, հարստահարել, կեղեքել:
[3] «Մխիթար Գոշի Դատաստանագիրք Հայոց», էջ 316—317:

(«Թե տարեմուտն և թե տոն օրերին ըստ ցանկության թող ծառային։ Խիստ չպետք է ճնշել, կողոպտել, որպեսզի չլինեն և չառաջանան անիրավ սովորություններ, որովհետև սահմանումը (կանոնը) շատ և ավելորդ սովորությունների հետևանքով առաջացավ։ Առանց դատաստանի չպետք է տուգանել։ Եթե տիրոջ հանդեպ հանցանք է գործում, պատիժը լինում է (ըստ տիրոջ ցանկության), իսկ այլ դեպքերում հանցավոր դռնվելիս, դատավորներով պետք է պատժվի»)։

«Եւ եթէ աւելի քան զօրէնն անդթաբար հրամայիցէ գործել և այնու վնաս մահու հասցէ ի տերանց ընդ հարկիւ անկելոց, պարտապան լիցի արեան դատաստանի գերագունից տէրանց»[1]։

(«Իսկ եթե օրենքից դուրս անգութ կերպով հրամայի աշխատել և սրանով մահվան վնաս հասնի՝ տերերի կողմից ծանր աշխատանքի տակ ընկածներին, արյան (համար) պատասխանատու է գերագույն տերերի դատաստանին»)։

Դատաստանագրքի այս հոդվածներով հեղինակը նպատակ է ունեցել, որ կարգավորվի եղած ծանր դրությունը, որպեսզի գյուղացիական ապստամբությունները կանխվեն։ Հայկական հին օրենքների համաձայն քաղաքների, գյուղերի և ավանների ու բերդերի բնակիչների միջև եղել են տարբերություններ։ Այդ երևույթն ավելի է խորացել Բագրատունիների ժամանակ և հետագայում տեղ է գտել Դոշի «Դատաստանագրքում»։

«Արք քաղաքացիք առաւել քան զղեղջուկս պատուիցին և զեղջկաց նմանապէս առավել պատիւ լիցի քան բնակչաց ագարակի. սոյնպէս լիցի բերդի բնակչաց և աւանի, զի կարգ առաջնոցն է մերոյ թագաւորացն այդոքիկ»[2]։

(«Արք քաղաքացիներին կարգ ու պատիվ ավելի լինի, քան գյուղացիներին և գյուղացիներին նմանապես առավել պատիվ ու հարգ լինի, քան ագարակների, բերդերի և ավանների բնակիչներին, որովհետև մեր թագավորների սահմանած կարգը հնում այդպես է եղել»)։

[1] «Մխիթարայ Դոշի Դատաստանագիրք Հայոց», էջ 330։

[2] Նույնը, էջ 318։

Մխիթար Դոշի «Դատաստանագրքում» տեղ գտած վերոհիշյալ հոդվածը, որը օրենքի ուժ է ունեցել բագրատունիների ժամանակ, պարզ ցույց է տալիս, որ քաղաքի բնակիչները սոցիալական-իրավական տեսակետից ավելի բարձր են դասվել, քան գյուղաբնակները։ Գեղջուկներ ասելով պիտի հասկանալ գյուղական համայնքի ազատ անդամներ, որոնք թեև ենթակա էին ֆեոդալ-կալվածատերերին, բայց իրենց սոցիալական-իրավական դրությամբ ավելի բարձր էին կանգնած ագարակների, բերդերի և ավանների բնակիչներից, որոնք իսկապես բառիս լայն իմաստով հանդիսանում էին կախյալներ։ Այսպիսով, 9—11-րդ դարերում Հայաստանի գյուղացիությունը իրավական տեսակետից բաժանվում էր երկու խմբի՝ կախյալ և ճորտ գյուղացիների (ագարակների, դաստակերտների, ավանների ու բերդերի բնակիչներ), որոնց կարելի էր վաճառել ու նվիրել, և ազատ գյուղացիների, որոնք դեռ հայրենատերեր էին և չէին զրկվել իրենց հողերից։ Ազատ գյուղացիները հանդիսանում էին գյուղական համայնքի անդամներ, որոնք կազմում էին գյուղական բնակչության մեծ մասը, իրենց «գյուղական» ղեկավարներով։ Իսկ ճորտերի թիվը սահմանափակ է եղել. ճորտական վիճակ է ունեցել Հայաստանի գյուղացիության որոշ մասը[1]։

Ֆեոդալ-կալվածատիրոջ տիրապետությունը գյուղացու վրա հիմնված էր արտատնտեսական հարկադրանքի վրա։ Այդ կատարվում էր գյուղացիությանը հողին ամրացնելով, հողատիրոջ համար հարկեր և պարհակներ պահանջելով։ Ֆեոդալ-կալվածատերը, ինչպես գրում է Կ. Մարքսը, գյուղացու հավելյալ արդյունքը յուրացնում է renta-ի երեք ձևերով՝ կո-

[1] Խիստ վիճելի ենք համարում ընկ. Ս. Պողոսյանի այն դրույթը, թե Հայաստանում 9-րդ դարից սկսել էր գյուղացիության ճորտացումը և որի պրոցեսն ավարտվում է Զաքարյանների ժամանակ (Տե՛ս, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում, էջ 343—344, Երևան, 1956)։ Մեր սույն մենագրությունը վաղուց պատրաստ էր, երբ լույս տեսավ ընկ. Պողոսյանի աշխատությունը, այդ պատճառով չենք կարող մանրամասն քննության առնել։ Միայն նշում ենք, որ Հայաստանում, նույնիսկ Զաքարյանների շրջանում ճորտատիրությունը համատարած երևույթ չի եղել։

ռով. բահրայով և դրամով[1]: Բագրատունիների ժամանակ վերոհիշյալ երեք ձևերն էլ գործադրվում էին Հայաստանում, բայց տիրապետողը բահրան էր, որը մեծ չափերի էր հասել. գյուղացին հազիվ քարշ էր տալիս իր գոյությունը, որովհետև նրա հաշվին էին ապրում ոչ միայն աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներն ու պետական պաշտոնյաները, այլև քաղաքների բնակչության վերնախավը:

«Գյուղացու վրա էր ծանրանում,— գրում է Էնգելսը,— հասարակության շերտերի ամբողջ կառուցվածքը — իշխանները, պաշտոնյաները, ազնվականությունը, քահանաները, պատրիկները և քաղաքացիները: Արդյոք նա կպատկաներ որևէ իշխանի, թե կայսերահպատակ որևէ ազատ ասպետի, որևէ եպիսկոպոսի, թե վանքի կամ որևէ քաղաքի, դա միևնույն է,— ամենուրեք նրա հետ վարվում էին իբրև մի առարկայի հետ, իբրև մի բեռնատար կենդանու հետ և նույնիսկ ավելի վատթար ձևով... իր ժամանակի մեծ մասը նա պիտի նվիրեր այն աշխատանքին, որ նա պարտավոր էր կատարել իր տիրոջ կալվածքներում, իսկ մի քանի ազատ ժամերում իր համար կատարած աշխատանքի արդյունքից նա պարտավոր էր վճարել տասանորդ, հողավարձ, բահրա, ռազմական տուրքեր, տեղական և պետական հարկեր»[2]:

Այս բոլորը միանգամայն համապատասխանում են Հայաստանի Բագրատունյաց շրջանի գյուղացիության այն մասի իրավա-քաղաքական և տնտեսական դրությանը, որը ճորտացված էր:

Բագրատունիների ժամանակ Հայաստանը 913 թ. սկսած ազատվում է խալիֆաթին հարկ տալու պարտականությունից: Անշուշտ, հայկական պետականության վերականգնումով հայ աշխատավորական մասսաներն ազատագրվել էին արտաքին ծանր հարկերից, ապահովվել էր նրանց կյանքը, գույքը, անձեռնմխելիությունը, ազատվել էին ազգային-կրոնական հա-

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 3, երկրորդ մաս, էջ 327—341, Երևան, 1949:

[2] Ֆ. Էնգելս, Գերմանական գյուղացիական պատերազմը, էջ 42—43, Երևան, 1934:

լածանքներից ու գերեվարումներից, որոնցից զուրկ էին նրանք արաբական տիրապետության շրջանում և նրանք մղվում էին դեպի խաղաղ աշխատանքը: Բայց և այնպես դրանով չի թեթևանում շահագործումը և չի թեթևանում հայ գյուղացիության — շինական դասի պարտականությունները ֆեոդալ-իշխանների նկատմամբ: Նա նախ ենթտա պիտի վճարեր ֆեոդալ-իշխանին ու վանքերին՝ բահրայով, դրամով և կոռով: Աղբյուրները ցույց են տալիս, որ 9—11-րդ դարերում թեև տիրապետողը հանդիսանում էր բահրան, բայց գործածական են եղել նաև կոռն ու դրամական ռենտաները: Սակայն թե այդ բերքի որ մասն են կազմել, դժվար է որոշել, հավանաբար պետական և իշխանական հարկերը միասին կազմել են բերքի 1/5 մասը: Երկրորդ, գյուղացին պարտավոր էր հարկ վճարել նաև եկեղեցուն, որը կազմել է բերքի 1/10-ը, այսինքն տասանորդ: Պաշտոնական այս հարկերի վրա ավելանում է նաև քաղաքի վերնախավի շահագործումը, որը, ինչպես գրում է Արիստակես Լաստիվերտցին, մեծ չափերի էր հասնում 11-րդ դարում:

Գյուղացիների պարտականություններն իրենց տերերի նկատմամբ բազմատեսակ էին, իսկ ճորտերին՝ ավելի էին: Նրանք պետք է մշակեին նաև տերերի արտերը, այգիները, բրնձի դաշտերը, հավաքեին խաղողը, բամբակը: Տերերի կամ իշխանների մոտ տեղի ունեցած ամեն մի ուրախ կամ տխուր դեպքերի առթիվ բոլոր գյուղացիները (ճորտ և ազատ) պարտավոր էին ներկայանալ իրենց նվերներով: Այնուհետև, գյուղացիները պետք է տերերի համար կառուցեին դղյակներ, պալատներ, վանքեր, ճանապարհներ, կամուրջներ, ջրանցքներ իրենց պարհակների միջոցով: Գյուղացիներն իրենց ծանր դրությունից ազատվելու համար շատ հաճախ գնում էին քաղաքները, որովհետև քաղաքները հանդիսանում էին գյուղացիների համար ապրուստ հայթայթելու վայրեր և ապաստարաններ:

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔՆԵՐ

Գյուղատնտեսության զարգացումը

Հարյուրամյա համեմատաբար խաղաղ ժամանակաշրջանը, որը սկսվում է 10-րդ դարի քսանական թվականներից, խոշոր նշանակություն է ունենում առաջին հերթին գյուղատնտեսության զարգացման համար։

10-րդ դարից սկսած ավելի արագ են զարգանում արտադրողական ուժերը, հողի մշակման ձևերը բարելավվում են, ոռոգման ցանցը ընդարձակվում է, ավելանում է փայտե գութանների օգտագործումը, հողը պարարտացվում է օգտակար նյութերով, գոմաղբով։ Բամբակի, բրնձի, կտավհատի, խաղողի, պտղատու այգիների մշակումը լայն չափերի է հասնում հացահատիկային կուլտուրաների մշակմանը զուգընթաց։ Այգարատյան հովակավոր դաշտը ծածկված է եղել խաղողի ու պտղատու այգիներով և բամբակի ու բրնձի արտերով։ Խաղողի մշակույթը մեծ զարկ է ստանում նաև Վանի ու Տարոնի շրջաններում։

Հացահատիկային և մյուս կուլտուրաների մշակույթների զարգացման համար մեծ նշանակություն են ունեցել ջրանցքները, որոնք մեծ քանակությամբ կառուցվել են այս շրջանում։ Ժամանակակից պատմագիրների տեղեկություններից երևում է, որ 1031 թ. կառուցվել է Երևանի առուն՝ քաղաքի այգիները և շրջակայքը ոռոգելու համար։ Բավականին թվով ջրանցքներ են կառուցվել Այգարատյան դաշտում։ 10-րդ դարում մի շարք ջրանցքներ են շինվել ու վերանորոգվել նաև Վասպուրականում և Սյունիքում։ Վանի և Ոստանի շրջանում հանդիպում են մի շարք ջրանցքներ ու առուներ ոռոգման համար։ Թովմա Արծրունին ասում է, որ Ոստանի շուրջը զարդարվում են «ծառովք պտղաբերովք սաղարթեալ և այգեկոփ բազմութեամբք»[1]։ Սմբատ Բ-ի ժամանակ կառուցվում է Անիի ջրանցքը՝ պարտեզներ և այգիներ ոռոգելու համար։ Խաղողի և պտղատու այգիներ մեծ չափով տարածվում էին Այգարատյան դաշտում, Սյունիքի ձորերում, Բագրեւանդում, Վանի հովտում, Տարոնում, Մուշարդինի, Սղերդի և Ամիդի շրջակայքում։ Թելատու բույսեր՝ բամբակ, վուշ, կանեփ տարածված էին Արաքսի և Արածանիի հովիտներում։ Մեծ տարածություն էր գրավում բանջարա-բոստանային մշակությունը։

Գյուղացիները հողը մշակում էին նոադաշտային սիստեմով, այսինքն, հողի երկու երրորդը մշակում էին, իսկ մեկ երրորդը թողնում էին խոզան՝ հանգստանալու համար։ Հողամշակման այս ձևը տիրապետող է դառնում Բագրատունիների շրջանում։ Հողամշակման գործիքները որոշ չափով կատարելագործվում են։ Նահապետական արորի հետ միասին մեծ քանակությամբ օգտագործվում է փայտե գութանը երկաթե խոփով, որը բարձրացնում է բերքատվությունը։

Շնորհիվ ոռոգման ցանցի ընդարձակման, գութանի և պարարտանյութերի օգտագործման, ինչպես նաև երկրում ստեղծված համեմատաբար երկարամյա խաղաղության, զարգանում են երկրագործության մշակույթը՝ առանձնապես մեծ զարկ է ստանում հացահատիկների և խաղողի մշակույթը։ Պատմագիրների ասելով, մեծատունների շտեմարանները լցվում են հացահատիկներով, կարասները՝ գինիով, իսկ մառանները՝ պտուղների կախաններով։ Զարգանում է նաև շերամապահությունը, որը նպաստում է թթենու տնկարանների ընդարձակմանը։ Այդ բոլորն ստեղծում էին աշխատավորները, բայց վայելում էին տերերը։

Երկրագործությունից ոչ պակաս զարգանում էր նաև անասնապահությունը։ Անասունների բուծման և բազմացման մեջ կարևոր տեղ են գրավում խաշնարածությունը, խոշոր եղջերավոր անասնապահությունը և ձիաբուծությունը։ Հայաստանի լեռնային ու նախալեռնային շրջանները, ինչպես և Ալպյան արոտավայրերը, հնարավորություն էին տալիս զարգացնելու անասնապահությունը։ Այս շրջանում կաթնամթերքի և բրդի մշակությունը մեծ չափերի էր հասնում։ Հայաստանի տնտեսական կյանքի, հատկապես գյուղատնտեսության զարգացման մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում ժամանակակից պատմիչ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին.

«...եւ սեպհականեալ զերկիր՝ տնկեցին այգիս և արմա-

[1] Թովմա, էջ 475։

տացուցին բուրաստանս ձիթենեաց և պարտիզաց. հերկեցին հերկս արտաքոյ փշոց և կթեցին պտուղս հարիւրաւորս. զեղան շտեմարանք ցորենոյ ի ժամանակի լրութեան՝ հնձոց. լցան գուբք գինւոյ ի կութս այգեստանեայց և լերինք ցնծութիւն զգեցան, զի բազմացան ի նմա արօտականք անդեայք արջառոց և հօտք ոչխարաց։ Եւ գլխաւոր նախարարք մեր յապահովացեալք և հանգուցեալք ի հինից ասպատակաց՝ շինէին եկեղեցիս վիմարդ, հաստահեղոյս ձուլեալ կրով՝ ի մենաստանս և յաւանս և յագարակս»[1]։

(«...Սեփականելով երկիրը՝ հողում տնկվում են այգիներ և աճեցնում ձիթենիների ու պարտեզների բուրաստաններ, փշերից մաքրված հերկում են արտերը և հավաքում պտուղ հարյուրապատիկ, հունձքը վերջանալուց հետո լիքը լցվում են ցորենի շտեմարանները և այգեկութից հետո՝ գինու հորերը (գուբերը), լեռները ցնծության մեջ են, որովհետև նրանց վրա շատանում են արածող տավարների նախիրները և ոչխարների հոտերը։ Եվ մեր գլխավոր նախարարներն ասպատակների հարձակումներից ապահովված լինելով հանգստանում էին մենաստաններում, ավաններում և ագարակներում շինում էին քարաշեն, հաստահեղույս կրաձույլ եկեղեցիներ»)։

Որ 9—11-րդ դարերում Հայաստանի տնտեսական ու կուլտուրական կյանքը զգալի զարգացում է ապրել, դա երևում է նաև նույն դարաշրջանի պատմագիր Ստեփաննոս Ասողիկ Տարոնեցու հետևյալ վկայությունից.

«Յաւուրս սորա (Սմբատ Ա-ի 890—914 Հ. Հ.։) և յիշխանութեան հօր իւրոյ (Աշոտ Ա-ի 856—890) էր շինութիւն և խաղաղութիւն յաշխարհիս Հայոց... Եւ այսպէս ագարակաց աւանացեալ և աւանաց քաղաքացեալ բազմամարդութեամբ և ընչեղութեամբ...»[2]։

(«Սրա (Սմբատ Ա-ի 890—914) և նրա հոր իշխանության (Աշոտ Ա-ի 856—890) օրով հայոց աշխարհում խաղաղություն և շինություն էր... Իրենց բազմամարդությամբ և ընչեղությամբ ագարակները դառել էին ավաններ և ավանները՝ քաղաքներ...»)։

[1] Հովհաննես կաթողիկոս, էջ 198—199։

[2] Ասողիկ, էջ 161։

Պատմիչների վերոհիշյալ վկայությունների մեջ, անշուշտ, չափազանցություններ կան, բայց և այնպես մեջ բերված փաստերը ցույց են տալիս, որ իրոք երկրի տնտեսական կյանքը, հատկապես գյուղատնտեսությունը, զարգացել է, բայց այդ բերքից գյուղացիությունը շատ քիչ էր օգտվում, այն հարկերի և զանազան գանձումների միջոցով լցվում էր ֆեոդալ-կալվածատերերի շտեմարանները։

Եվ իրոք, ինչպես նշել ենք նախորդ էջերում, թեև Հայաստանը ազատագրվում է արաբական տիրապետությունից ու նրան ծանր հարկեր տալուց և ձեռք է բերում պետականություն, բայց չի թեթևանում աշխատավորության շահագործումը՝ հարկատվությունն ու ֆեոդալ-իշխանների, եկեղեցու նկատմամբ բազմաթիվ բնույթի պարտավորությունների կատարումը, ընդհակառակը, նրանց ճորտացման ու կախյալ վիճակի մեջ դնելուն զուգընթաց գնալով ավելի է ծանրանում։ Բերքի 1/5 մասը տրվում էր պետությանը, իշխաններին, 1/10 մասը՝ եկեղեցուն։ Բացի այս բոլորից, տերերը, վաշխառուները, պաշտոնյաները, դատավորները աշխատավոր գյուղացիությանը կեղեքում էին բազմաթիվ կամայականություններ թույլ տալու միջոցով։ Տերերը հարկ ու բահրայի գանձման միջոցով յուրացնելով աշխատավոր գյուղացիության բերքի մեծ մասը, միաժամանակ պարհակի ու կոռի միջոցով իրենց համար կառուցել էին տալիս դղյակներ, ամրոցներ, վանքեր, իսկ իրենք հանգստանում էին մենաստաններում, ավաններում, ագարակներում, վայելելով նրանց աշխատանքի արդյունքը։

Գյուղատնտեսության, հատկապես երկրագործության զարգացմանը զուգընթաց հողը, ինչպես նշել ենք, ֆեոդալական հասարակարգում հանդիսանում էր հիմնական արտադրության միջոցը, որը աստիճանաբար կուտակվում էր փոքրաթիվ իշխանների, վանքերի ու եկեղեցիների ձեռքը։ Երկրի հողային ֆոնդի մեծ մասին թեև տիրում էին իշխանները, բայց և այնպես նրանք չէին զբաղվում հողերի մշակությամբ և ինքնուրույն տնտեսություն վարելով, այլ հանձնում էին իրենց ենթակա գյուղացիներին մշակելու և դրա դիմաց ստանում հարկ բնամթերքով ու դրամով, իսկ վանքերն ու եկեղեցիները մեծ

մասամբ իրենք էին մշակում իրենց հողերը գյուղացիների կոռային աշխատանքի միջոցով և շատ հաճախ նոր ձեռք բերած հողերի վրայից հեռացնում էին հայրենատեր գյուղացիներին։ Գյուղատնտեսության զարգացմամբ էլ պայմանավորված էր արհեստի, առևտրի, ներքին և արտաքին շուկաների ու քաղաքների զարգացումը։

Քաղաքների առաջացումը և նրանց ընդհանուր բնութագիրը

Հայաստանը, ինչպես ասել ենք, 9-րդ դարի երկրորդ կեսից աստիճանաբար ազատագրվելով արաբական խալիֆաթի ծանր լծից, բռնում է իր անկախության ու վերածննդի ճանապարհը։ Նա այլևս հարկ չէր ուղարկում երկրից դուրս, և երկրի ամբողջ արտադրանքը մնում էր ներսում, մի հանգամանք, որը նպաստում էր արտադրողական ուժերի զարգացմանը և վերարտադրության ծավալմանը։ Երկրի տնտեսական կյանքի և առանձնապես քաղաքների արհեստի և առևտրի զարգացման համար աղղակները հանդիսացել են հետևյալ կարևոր հանգամանքները. հայ ժողովրդի անկախության վերականգնումը, արտաքին պետության հարկատվության դադարեցումը և երկրում երկարամյա խաղաղության ստեղծումը։ Քաղաքներն առաջանում ու զարգանում են արտադրողական ուժերի ու տեխնիկայի զարգացման և բնակչության աճման հիման վրա։ Դրանցով էլ պայմանավորվում էր աշխատանքի հասարակական բաժանման խորացումը և արհեստի լրիվ ու վերջնական անջատումը երկրագործությունից։ Առանձնապես անջատվում են մետաղամշակման ու տեքստիլ արդյունագործական արհեստները։ Աշխատանքի հասարակական այս բաժանման խորացումը իր հերթին առաջացնում է ներքին շուկա և նպաստում քաղաքների զարգացմանը։ Այդ պրոցեսը ստեղծվել էր դեռ վաղ միջնադարի շրջանում։ Բայց այդ դարաշրջանին հատուկ էր ավելի խիստ բնատնտեսությունը և արհեստը հիմնականում միացած էր երկրագործության հետ։

Հայաստանի ֆեոդալական հասարակարգի պատմությունը 9-րդ դարի երկրորդ կեսին բևկման դար է ապրում։ 6—7-րդ դարերում արդեն ավարտվել էր ֆեոդալականացման պրոցեսը, ֆեոդալական հողատիրությունը տարածվում է երկրի մեծ

մասում։ 8-րդ դարում արաբների տիրապետության հետևանքով, ինչպես ասված է, այդ հարաբերությունները որոշ չափով ետ են մղվում։

Հայաստանի ֆեոդալիզմի պատմությունը 1—7-րդ դարերում կարելի է դիտել որպես ֆեոդալիզմի ձևավորման և հաստատման ժամանակաշրջան։ Ֆեոդալիզմի պատմության այդ վաղ ժամանակաշրջանի համար հատուկ է արտադրողական ուժերի թույլ զարգացումը. արտադրությունը կատարվում է սեփական սպառման համար, իսկ փոխանակությունը դեռևս շատ թույլ էր, ինչպես էնգելսն է ասում. «Միջին դարերի առաջին հարյուրամյակներում արտադրությունը գլխավորապես սեփական սպառման համար էր։ Ամենից առաջ այն բավարարում էր հենց սպառողի և նրա ընտանիքի կարիքները։ Իսկ այնտեղ, ուր, ինչպես երկրագործության մեջ, գոյություն ուներ անձնական կախումը, արտադրությունը բավարարում էր նաև ֆեոդալ տիրոջ կարիքները։ Հետևաբար այստեղ փոխանակություն գոյություն չուներ, և արդյունքները ապրանքի բնույթ չէին ստանում։ Գյուղացիական ընտանիքը ինքն էր արտադրում այն ամենը, ինչ որ հարկավոր էր իրեն—գործիքներ և հագուստ, ինչպես նաև սնունդ»[1]։

Սակայն վերոհիշյալ էտապում բնատնտեսությունը բոլորովին չէր բացառում առևտուրը Հայաստանում։ Սպառումից մնացած ավելցուկը կարող էին փոխանակել, իսկ այդ ավելցուկը շրջանառության ընթացքում դառնում էր ապրանք, թեև նա արտադրվել էր սպառման համար։ Բայց այդ փոխանակությունը չէր խախտում բնատնտեսությունը, որովհետև արհեստավորական աշխատանքը, ինչպես նշեցինք, միացած էր գյուղատնտեսական աշխատանքի հետ։ Առևտուրը հիմնականում տրանզիտային էր, ներքին ամենօրյա շուկա չկար, առևտուրն ու փոխանակությունը կենտրոնանում էին միայն առևտրաճառներում և մեծ քաղաքներում։

Բայց 9—13-րդ դարերի ժամանակաշրջանը Հայաստանում հանդիսանում է ֆեոդալիզմի զարգացման էտապը։ Այդ էտապում արդեն կազմավորված ֆեոդալիզմի առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ առաջանում է ֆեոդալական

[1] Маркс и Энгельс, Соч., том XIV, стр. 275.

քաղաքը կամ, ավելի շուտ, քաղաքը բաժանվում է գյուղից։ Ամիճանաբար զարգանում են ապրանքա-դրամային հարաբերությունները, որոնք գնալով խարխլում են ֆեոդալիզմի տնտեսական հիմքերը։ Անշուշտ, քաղաքներ գոյություն են ունեցել նաև միջնադարի վաղ շրջանում, սակայն նրանք գերազանցապես հանդիսանում էին որպես վարչական կենտրոններ, ռեզիդենցիաներ, տրանզիտային առևտրի կենտրոններ և բերդ-ամրոցներ։ Քաղաքները դեռևս ամբողջապես տնտեսական կատեգորիաներ չէին դարձել և տնտեսական տեսակետից նրանց մեծ մասը քիչ էր տարբերվում գյուղերից։ Այսպես էին, օրինակ, Նախիջևանը, Վաղարշապատը, Բագարանը, Բերկրին, Մանազկերտը, Կապանը և այլն։ Վաղ միջնադարի քաղաքներն ապրարային բնույթ էին կրում։ Քաղաք հասկացողությունը տնտեսական կատեգորիա է, հետևաբար քաղաքների առաջացումը նշանակում է արհեստ և արհեստավորական արդյունագործության բաժանում գյուղատնտեսությունից։ Իսկ դա միաժամանակ նշանակում է ապրանքային տնտեսության փոխանակման աճում և ներքին շուկայի զարգացում։

Հայաստանի տնտեսական կյանքի, առանձնապես նրա քաղաքների զարգացման ու ներքին շուկայական հարաբերությունների ստեղծման համար նշանակություն են ունենում նաև Հայաստանի վրայով անցնող միջազգային տրանզիտ առևտրի ճանապարհները։ 9-րդ դարի երկրորդ կեսին դեռևս ուժեղ կռիվներ էին շարունակվում Բյուզանդիայի և խալիֆաթի միջև։ Այդ կռիվները, ինչպես նաև բյուզանդական կայսրության կառուցած ամրություններն իր արևելյան սահմանների վրա՝ ընդդեմ խալիֆաթի, արգելք էին հանդիսանում Արևելքից Արևմուտք անցնող հարավային տրանզիտային առևտրական ուղու օգտագործմանը։ Հետևաբար ամբողջ առևտուրը Արևելքի և Արևմուտքի միջև գրեթե կատարվում էր Հայաստանի վրայով անցնող առևտրական ճանապարհով։ Այդ առևտրական ուղիների վրա ընկնող թե՛ Հայաստանի, և թե՛ Անդրկովկասի քաղաքները բռնում են իրենց զարգացման ճանապարհը։ Արաբական խալիֆաթի տիրապետության ժամանակ Հայաստանի երբեմնի զարգացած քաղաքները ոչ միայն

կորցրել էին իրենց տնտեսական նշանակությունը, այլև մեծ մասամբ վեր էին ածվել արաբական խալիֆաթի զորականների կամ ռազմաստրատեգիական ֆորպոստների և վարչական կենտրոնների։ Միայն երկրի հարավի մի քանի քաղաքներ և որոշ չափով էլ Դվինը, երբեմն զարգացման նշաններ էին ցույց տալիս, սակայն դա էլ չէր բխում երկրի տնտեսական կյանքի զարգացման ընթացքից։ Նշված քաղաքների որոշ զարգացումը կապված էր մեծ մասամբ դրսի առևտրականների, առանձնապես արաբների հետ, որոնք միայն միջնորդի դեր էին խաղում։ Այդ քաղաքները մի տեսակ օազիսներ էին երկրի քայքայված տնտեսության մեջ։ Այնինչ 9—11-րդ դարերի Հայաստանի քաղաքների և քաղաքային կյանքի զարգացումը կապված էր երկրի ներքին կյանքի զարգացման հետ։ Հայաստանի անկախության վերականգնումը, ավարառությունների և խալիֆաթի ծանր հարկերի վերացումը, երկրում խաղաղության ապահովումը նյութական նախադրյալներ են ստեղծում երկրի տնտեսական և առանձնապես արհեստի, առևտրի ու քաղաքների զարգացման համար։

8—9-րդ դարերում խալիֆաթի և Բյուզանդիայի երկարատև պատերազմների հետևանքով կանգ էր առել Արևելքի և Արևմուտքի միջև տեղի ունեցող առևտուրը։ Ճիշտ է մատնանշել Գուրկո-Կրյաժինը, որ պոնտական Տավրոսից մինչև Միջերկրական ծովն ընկած տերիտորիան դարձել էր հարատև պատերազմների ու կռիվների թատերաբեմ, որի հետևանքով էլ խանգարվում էր առևտուրը, պարզ է, որ միակ ճանապարհը հանդիսանում էր Հայաստանի վրայով անցնող միջազգային առևտրական ուղին[1]։ Աբուլի պոդոտան, ինչպես անվանում է պատմագիր Ղևոնդը[2], սկսվելով խալիֆաթի մայրաքաղաք Բաղդադից, որն արդեն միջազգային տնտեսական ու քաղաքական կենտրոն էր դարձել 9-րդ դարում, էրմենիայում ուներ մի քանի խոշոր կենտրոններ՝ Դվինը, հետագայում նաև Անին, Պարտավը և Բրիլիսին։ Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում Կարին-Տրապիզոն և Անկարայի գծով

[1] В. Гурко-Кряжин, «Прошлое и настоящее советской Армении». «Новый Восток», кн. 16—17, Москва, 1927, стр. 205—206.

[2] Ղևոնդ, էջ 140։

կապվում էր Բյուզանդիոնի և բյուզանդական երկրների հետ, ինչպես նաև Խլաթ-Ուրֆա գծով Դամասկոսի ու Միջերկրականի ափերի հետ: Բաղդադ-Մծբին ուղղությամբ անցնող գիծը Ամեդի (Դիարբեքիր) վրայով գնում էր դեպի Մուֆարղին-Բիթլիս (Բաղեշ), Դաւովան, ապա այնտեղից բաժանվում էր երկու ճյուղի, որոնցից մեկը Վանա լճի հարավային ափերով անցնում էր դեպի Ոստան, Վան, Բերկրի, Խոյ և Ատրպատականի, իսկ մյուսը Դաւովանից—Խլաթ, Մանազկերտ-Կարինի վրայով անցնում էր դեպի Տրապիզոն: Իսկ դրա հետ կապված Մանազկերտից մի ճյուղ էլ Արճեշ-Բագրեւանդով գնում էր դեպի Դվին, որտեղից մի ուղի Նախիջևան—Ջուլֆա-Մարանդ-Թավրիզ գծով գնում էր դեպի Պարսկաստան ու Արևելք, իսկ Ահարայի վրայով դեպի Արդաբիլ: Մի ուղի էլ Ջուլֆա-Խոյ գծով կապվում էր Բերկրիի գծին, իսկ մյուս կողմից գնում էր դեպի Դիլիման-Ուրմիա և Միյանդաբ: Դվինից առևտրական մի մեծ ուղի գնում էր դեպի Անի, որտեղից մի գծով՝ Կարս-Կարին ուղղությամբ, միանում էր Տրապիզոնին, իսկ մյուս գծով՝ Վրաստանին՝ Թբիլիսիին ու Սև ծովի հյուսիսային ափերին: Այնուհետև մի գլխավոր ուղի էլ Դվին-Երևան-Սևան ուղղությամբ կապվում էր Պարտավ՝ քաղաքի հետ և այնտեղից էլ Դերբենդի վրայով դեպի հարավային Ռուսաստանն ու Սկանդինավյան թերակղզին: Այսպիսով, 10—11-րդ դարերում Հայաստանի տնտեսական կյանքի, առանձնապես արհեստների, առևտրի ու քաղաքների զարգացման համար ստեղծվել էին անհրաժեշտ նախապայմաններ, որոնց շնորհիվ արհեստներն յայն չափով զարգանում են 9—10-րդ դարերում և աստիճանաբար կազմում քաղաքների հիմքը:

9-րդ դարի վերջերից Հայաստանի և Բյուզանդիայի միջև ստեղծված քաղաքական նորմալ հարաբերությունները նույնպես կարևոր ազդակ էին երկու երկրների միջև կատարվող առևտրի և քաղաքների զարգացման համար: Հայաստանը միաժամանակ դառնում էր միջնորդ Արաբիայի, Պարսկաստանի, Միջին Ասիայի, Հնդկաստանի, Չինաստանի և Բյուզանդիայի միջև կատարվող լայնածավալ քարավանային առևտրի

[1] Պրոֆ. Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, էջ 175—204, Երևան, 1936:

համար: Քաղաքների և քաղաքային կյանքի զարգացման համար խոշոր նշանակություն է ունենում, ինչպես ասել ենք, երկրում ստեղծված համեմատաբար հարյուրամյա խաղաղության ժամանակաշրջանը: 923 թ. սկսած, ավելի քան մի դար, Հայաստանը գրեթե չի ենթարկվում օտարերկրյա մեծ հարձակումների ու ծանր ավերածությունների և համեմատաբար ապրում է խաղաղ ժամանակաշրջան, մինչև 1020-ական թվականները:

Վերոհիշյալ նպաստավոր պայմանները հնարավորություն են տալիս Հայաստանի քաղաքների զարգացմանը և քաղաքատիպ վայրերի քաղաքայնացման պրոցեսին: Բագրատունյաց Հայաստանի նշանավոր արդյունագործական, առևտրական և կուլտուրական կենտրոնները հանդիսանում էին Անին, Դվինը, Կարսը, Նախիջևանը (իբրև վաճառաշահ քաղաքներ Հայաստանի միջնաշխարհում), իսկ Բերկրին, Վանը, Ամիդը, Մուֆարղինը, Բաղեշը (Բիթլիսը), Խլաթը, Մանազկերտը, Արճեշը, Կարինը, Արծնը և այլն որպես նշանավոր քաղաքներ Հայաստանի հարավում և արևմուտքում: Այդ քաղաքներից Անին, Դվինը, Կարսը, Արծնը, Խլաթը, Կարինը և Վանը դառնում էին միջազգային առևտրի նշանավոր կենտրոններ: Հայաստանի քաղաքների զարգացման մասին թեև սեղմ, բայց շատ ուշադրավ է Ասողիկի հետևյալ բնութագիրը.

«Եւ այսպէս ագարակաց աւանացեալ և աւանց քաղաքացեալ բազմամարդութեամբ և ընչեղութեամբ...»[1]:

Ասողիկի այս պնդումը, որ ագարակները ավաններ են դառնում և ավանները՝ քաղաքներ, ոչ միայն ճիշտ է, այլև նույնը հաստատում են հայկական մյուս, այնպես էլ օտար աղբյուրների տվյալները: Հովհաննես կաթողիկոսի մոտ հիշատակված է, որ Գառնին, Ավանը, Երևանը, Կողբը, Արուճը, Մրենը, Բագարանը, Երազգավորսը, Քարունջը և Թալինը դարձել էին գյուղաքաղաքներ ու քաղաքագյուղեր: Այս նույնպես հաստատում է Ասողիկի վկայությունը: Իսկ արաբական աշխարհագիրներից Իբն-Ֆակիհը իր «Գիրք երկիրների մասին» աշխատության մեջ նշում է, որ միայն Արաքսի հովտում եղել

[1] Ասողիկ, էջ 161:

են 1000 գյուղ ու քաղաք[1]: «Աշխարհագրական բառարանի» հեղինակ Յակուտին ասում է, որ Հայաստանն ունեցել է 18000 գյուղեր, մեծ ու փոքր գյուղաքաղաքներ[2]: Անշուշտ այս թվերը չափազանցված են, բայց մի բան պարզ է, որ Բագրատունիների ժամանակ Հայաստանն ունեցել է խիտ բնակչություն և մեծ թվով բնակավայրեր ու քաղաքներ:

Մեծ գովեստով են խոսում Հայաստանի քաղաքների մասին Արիստակես Լաստիվերտցին և Թովմա Արծրունին: Ըստ նրանց, նշանավոր են եղել «Շահաստան Դվինը», հռչակավոր Կարսը, որը հարստանում էր ծովից ու ցամաքից, «հռչակավոր և ականավոր Արծն» և «տիեզերահռչակ Անին»: «Տիեզերահռչակ» անվանումը ցույց է տալիս, որ Անին, իբրև քաղաք իր ժամանակի համար նշանավոր է եղել տիեզերքի, այսինքն՝ աշխարհի մասշտաբով: Հայաստանի տնտեսական վերելքի շրջանում, 10-րդ դարում Դվինից-Տրապիզոն տանող առևտրական ճանապարհի վրա հիմնվում են Անի, Կարս և Արծն քաղաքները, որոնք շատ շուտով վեր են ածվում մեծ քաղաքների:

Բագրատունիների հռչակավոր մայրաքաղաք Անին, որ սկզբնաղբյուրներում մինչև 10-րդ դարը հիշատակվում է միայն որպես բերդավան, 10-րդ դարում դառնում է քաղաք: 8-րդ դարի վերջին Աշոտ Բագրատունի իշխանը, Մսակեր մականունով, Շիրակի գավառն Անի բերդ-ավանով գնում է Կամսարականներից և իր ընտանիքով հաստատվում այնտեղ: Անին այդ ժամանակ մի փոքր ամրոց էր, բայց 961 թվականից, երբ այն դառնում է Բագրատունիների մայրաքաղաքը, աստիճանաբար մեծանում, ընդարձակվում է և Սմբատ Երկրորդի (977—990) ու Գագիկ Առաջինի (990—1020) օրոք վերածվում է ծաղկած շահաստան քաղաքի, բռնում է Դվինի տեղն ու դառնում երկրի մայրաքաղաքը: Անի քաղաքի պեղումները և այդ պեղումներից հայտնաբերված իրերի մանրամասն նկարագրությունը, ինչպես նաև քաղաքի մասնակի

[1] Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, էջ 6, Երևան, 1940:

[2] Նույն էջը:

պատմությունը իրենց աշխատություններում շարադրել են ակադեմիկոսներ Ն. Մառը, Հ. Օրբելին և ճարտարապետ Թորոս Թորամանյանը[1]:

Անին մայրաքաղաք դառնալուց հետո Աշոտ Գ-ը 964 թ. կառուցել է տալիս միջնաբերդի պարիսպը, իսկ 25 տարվա ընթացքում քաղաքն այնքան է մեծանում, որ Սմբատ Բ-ը ստիպված է լինում 989 թ. կառուցել տալ քաղաքի բուն պարիսպները, որոնց բարձրությունը 8—10 մետր է և երկարությունը՝ երկու ու կես կիլոմետր: Պարիսպները ձգվում էին հյուսիսային կողմից, Ծաղկոցաձորից մինչև Ախուրյան գետը: Քաղաքի զարգացումն ու մեծացումը մեծ չափերի է հասնում 11-րդ դարում ու դառնում է «տիեզերահռչակ». «Վասն զի էր Անի բազմամբոխ,— գրում է Մատթեոս Ուռհայեցին,— քաղաքն լցեալ բիւր բիւրուց արանց և կանանց, ծերոց և տղայոց, որ հիացումն արկանէր տեսողացն, զոր կարծեալ զօրացն բազմաց՝ եթէ մեծ մասն աշխարհիս Հայոց իցէ...»[2]:

Արհեստներից Անիում զարգացած էին՝ դարբնությունը, պղնձագործությունը, ոսկեգործությունը, կավագործության բոլոր տեսակները, մանածագործությունը: Անի քաղաքը նշանավոր էր նաև իր շինարար-վարպետներով ու զրուցչության արվեստով: Անի քաղաքում կային մեծ թվով իջևաններ, հյուրանոցներ, շուկաներ, շտեմարան-պահեստներ, ձիթհաններ և ջրաղացներ: Անին իր ժամանակ միջազգային մեծ քաղաքներից մեկն էր, իր 10 հազար տնով ու 100 հազարանոց բնակչությամբ:

9—11-րդ դարերի Հայաստանի մեծ քաղաքներից է Դվինը: Մենք արդեն ասել ենք, որ նա 9-րդ դարում դառնում է արհեստավորական ու առևտրական խոշոր կենտրոն, բայց Դվինն ավելի է զարգանում ու դառնում շահաստան քաղաք

[1] Н. Марр, Ани, Москва—Ленинград, 1934, Հ. Օրբելի, Անվանի ավերակները, Վաղարշապատ, 1911, Թ. Թորամանյան, Անի քաղաք թե ամրոց, Նյութեր Հայկական ճարտարապետության պատմության, Ա. հատ., էջ 323—352, Երևան, 1942:

[2] Մատթեոս Ուռհայեցի, «Ժամանակագրութիւն», էջ 147, Վաղարշապատ, 1898:

10—11-րդ դարերում և մեծ դեր է խաղում երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում:

Դվինը հիմնադրվել է 4-րդ դարում Արշակունիների խոսրով Բ թագավորի կողմից, որպես գահանիստ կենտրոն: Այնուհետև նա, սկսած 5-րդ դարի երկրորդ կեսից, դառնում է նշանավոր քաղաք երկրի կենտրոնում և մեծ դեր է խաղում պարսկական ու արաբական տիրապետությունների ժամանակ որպես մարզպանների ու ոստիկանների վարչական, տնտեսական, կուլտուրական ու կրոնական կենտրոն: Դվին քաղաքը, որ 863 և 893 թվականների երկրաշարժերի պատճառով վնասվել էր, շուտով վերանորոգվում է և նորից դառնում է արհեստավորա-արդյունագործության, ներքին ու միջազգային առևտրի խոշոր շահառատան կենտրոն, ուր մեծ չափերով զարգացած էր գործվածքեղենի, գորգի, մետաղագործության և կավագործության արհեստների արտադրանքը: Այդ մասին արաբական հեղինակներից Ալ-Իստահրին գրում է.

«Դվինը (Դաբիլը) Արդաբիլից մեծ է, այդ քաղաքը ծառայում է որպես Հայաստանի մայրաքաղաք, իսկ կառավարիչի պարտեզ նման է Առանի Բերդայի (Պարտավի) և Ադրբեջանի Արդաբիլի կառավարիչների պալատներին: Դվինի շուրջը կան պարիսպներ, այնտեղ շատ քրիստոնյաներ կան, քաղաքի մայր մզկիթը գտնվում է եկեղեցու կողքին: Այս քաղաքում պատրաստվում են բրդյա հագուստներ, գորգեր, բարձեր, բազմոցներ, ժապավեններ (դայթաններ) և հայկական արտադրության այլ առարկաներ: Հենց նրանց մոտ էլ արտադրվում էր «կրմզի» կոչված ներկը, որով ներկում են մահուդը: Ես իմացա, որ նա որդ է, իր շուրջը գործում է շերամի որդի պես, իսկ բացի դրանից, ես իմացա, որ այնտեղ շատ մետաքսյա կտորներ են պատրաստվում...: Քաղաքը մշտապես գտնվում էր քրիստոնյա ավագների ձեռքում, իսկ բնակչության մեծ մասը կազմում են քրիստոնյաները»[1]:

Ճիշտ է, մեջ բերված վկայությունը միայն վերաբերում է տեքստիլ արդյունագործությանը և ցույց է տալիս այդ արտա-

[1] Сборник материалов описания местностей и племен Кавказа, выпуск 29, Тифлис, 1901, стр. 19—20.

դրանքի զարգացումը, բայց դրանից ավելի զարգացած էին մետաղամշակման արհեստները, առանձնապես դարբնությունն ու զինագործությունը: Վերոհիշյալ վկայությունը միաժամանակ կարևոր է այն տեսակետից, որ Դվին քաղաքի կառավարումը գտնված է եղել քրիստոնյա ավագների ձեռքում, այսինքն՝ ոստիկանից ու թագավորից բացի, քաղաքն ունեցել է իր ավագների խորհուրդը՝ քաղաքային վարչությունը, կազմված քրիստոնյաներից և այդ վարչության միջոցով էլ կառավարվել է քաղաքը: Անշուշտ, այդ վարչության կազմի մեջ, բացի ֆեոդալ-ազնվականներից, մտել են նաև առևտրա-վաճառականների ու արհեստավորների ներկայացուցիչները: Նշված վկայությունից պարզվում է, որ Դվին քաղաքի բնակչության մեծ մասը կազմել են հայերը, օտարազգիները (մահմեդականները) թվով շատ քիչ են եղել: Ալ-Իստահրիի այս վկայությունը Դվին քաղաքի տեքստիլ արդյունագործության զարգացման ու ավագների կողմից քաղաքի կառավարման մասին, հաստատում է նաև Իբն-Հաուքալը[1]:

Դվին քաղաքը միաժամանակ հանդիսանում էր առևտրական ճանապարհների հանգուցյակետը, ուր դրսի աշխարհից գալիս էին մեծ թվով քարավաններ:

Անի քաղաքից դեպի Արտանուջ տանող առևտրական ուղին վրա էր գտնվում Կարսը, որ նույնպես ըստ հայ մատենագիրների, մինչև 9-րդ դարի վերջը սովորական մի ամրոց էր «Ամուրն Կարուց» կամ «Կարուց բերդն» անունով: Կարսը վիր է ածվում մեծ քաղաքի հատկապես այն ժամանակ, երբ Բագրատունյաց Աբաս թագավորն իր աթոռը Երազգավորսից տեղափոխում է այնտեղ: Այնուհետև Կարսը դառնում է Վանանդի իշխանության կենտրոնը և ավելի է զարգանում: Այնտեղ են կենտրոնանում մեծ թվով արհեստավորներ ու առևտրականներ և 10—11-րդ դարերում դառնում է Հայաստանի մեծ քաղաքներից մեկը և ինչպես Արիստակես Լաստիվերացին է ասում «բազում ընչեղությամբ ի ծովէ և ի ցամաքէ ամբարեալ»[2]: Մեջբերումը ցույց է տալիս, որ Կարսը հարստանում էր ծովային և ցամաքային առևտրի միջոցով:

[1] Сборник материалов, выпуск 38, Тифлис, 1908, стр. 92.

[2] «Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերացւոյ», էջ 91:

Կարսից Տրապիզոն տանող բանուկ առևտրական ճանապարհի վրա, Կարին քաղաքի մոտ, գտնվում էր անպարիսպ Արծն բաղարը, որը հիմնադրվել է 9-րդ դարի վերջին: Իր հայրենի քաղաքի մասին Արիստակես Լաստիվերտցին գրում է.

«...Որ հոյակապ և ականավոր էր ամենայն աշխարհաց, իբրև զքաղաք որ ի վերայ լերինն կայցէ. և ծով և ցամաք երկնէր և առատանայր կրել ի սմա զօրութիւն իւր»[1]:

(«Հոյակապ և ականավոր էր բոլոր երկրներում, իբրև մի քաղաք որ կառուցված էր լեռան վրա, և ծովն ու ցամաքը երկնում էին և առատանում որպեսզի սա լցվի առատությամբ»):

Իսկ մի այլ տեղում Լաստիվերտցին ավելացնում է «Եւ ելեալ Հայրապետին գայ ի մեծանիստ և ի շահաստան քաղաքս մեր»[2]: Այնուհետև պատմիչ Արիստակես Լաստիվերտցին գրում է, թե ինչպես քաղաքի բնակիչների մեղքերի համար աստվածը նրանց գլխին պատուհաս է բերում: Նրա ասելով այս քաղաքում արծաթասիրությունն ավելի հարգի է եղել, քան աստվածասիրությունը, վաշխի տոկոսը մեծ չափերի էր հասել, տարածված էր նենգությունն ու խաբեությունը, գաշտառակերությունը, դատավորները դարձել են կաշառակերներ, ով խարում էր ընկերոջը պարծենում էր, որ ինքն իմաստուն է, ով հափշտակում էր, ասում էր, որ ես հզոր եմ, մեծատուննե-րը հափշտակում էին աղքատ ու տնանկ մարդկանց հողերն ու տները[3]: Մատթեոս Ուռհայեցին նույնպես գրում է, որ Արծն քաղաքը ունեցել է մեծ հարստություն, ոսկի և արծաթ. «Այլ զոսկւոյ և արծաթոյ և դիպակաց աւելորդ է ասել, վասն զի ոչ արկանի ընդ զրով...»[4]: Իսկ քաղաքի բազմամարդությանն մասին ասում է, երբ սելջուկ-թուրքերը գրավում են այն 150 հազար մարդ են կոտորում. «Սրոյ անցուցին զամենայն քաղաքն իբրև զբիւր հնգետասան»[5]: Լաստիվերտցին նույնիսկ նշում է Արծն քաղաքի վաճառափողոցները, նրբանցքները,

[1] «Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ», էջ 78, Թիֆլիս, 1912:

[2] Նույնը, էջ 63:

[3] Նույնը, էջ 79—80:

[4] Մ. Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 103, Վաղարշապատ, 1898:

[5] Նույն էջը:

ընդարձակ սրահները[1]: Արծն քաղաքում առևտուրն ավելի մեծ դեր է խաղացել, քան արհեստները, որովհետև աղբյուրներն արհեստների մասին քիչ են խոսում, բայց հաճախ կանգ են առնում առևտրի, վաճառականության ու վաշխառուների վրա: Արծն և երկրի մյուս քաղաքների զարգացման ու բազմամարդության մասին Արիստակես Լաստիվերտցու և Մատթեոս Ուռհայեցու վկայությունները հաստատում են նաև բյուզանդական պատմագիրներ Գեորգիոս Կեդրենոսը և Ատալիատացին[2]: Սրանց ասելով Արծնն անպարիսպ քաղաք էր, հարուստ ու բազմամարդ: Քաղաքում բացի հայերից, բնակություն էին հաստատել նաև ասորիներ և ուրիշ առևտրականներ, որոնք քաղաքում վաճառում էին Հնդկաստանից, Պարսկաստանից և ասիական այլ երկրներից բերած ապրանքները:

Պատմիչների վկայությամբ, սելջուկ-թուրքերը վեց ժամվա համառ ու կատաղի կռվից հետո գրավում են Արծն քաղաքը և հիմնահատակ կործանում: Բնակիչների մի մասին կոտորում են, ըստ Ուռհայեցու 150 հազար[3], (այդ անշուշտ չափազանցություն է) մի մասը փախուստի է դիմում և մի մասն էլ գերեվարվում է: Սելջուկ-թուրքերը քաղաքի հարստությունը, որպես ավար, տարել են 10 հազար տալղով: Արծն քաղաքի կործանումից հետո այլևս չի վերականգնվում, նրա գոյությունը տևում է մոտ 150 տարի:

Կարս-Տրապիզոն առևտրական ճանապարհի վրա էր գտնվում Կարին (Թեոդորուպոլիս) բաղարը, որը հիմնադրվել է 5-րդ դարում և հանդիսանում էր Արևմտյան Հայաստանի վարչական կենտրոնը: Այն 9—11-րդ դարերում, չնայած իր մոտ գտնվող Արծն քաղաքի առկայությանը, այնուամենայնիվ խիստ զարգանում է և դառնում մեծ քաղաք: Այստեղ զարգացած էր մետաղագործության, ոսկերչության, կաշեգործության արհեստները և առևտուրը: Ուներ մեծ շուկա ու բազմամարդ բնակչություն: Կեդրենոսի ասելով «Թեոդորուպոլիսը (Կարի-

[1] Արիստակես Լաստիվերտցի, էջ 84:

[2] Ակադ. Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, էջ 12, Երևան, 1940:

[3] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 103:

նը) նույնպես մեծ ու հզոր քաղաք էր և ուներ անառիկ շրջապարիսպ»[1]։

Վանա լճի արևմտյան ափին է գտնվում Խլաթ բաղաքը, որը 8—9-րդ դարերում հիշատակվում է որպես քաղաք։ 10—11-րդ դարերում ավելի մեծանում ու դառնում է արհեստների ու առևտրի խոշոր կենտրոններից մեկը և ուներ մեծ բնակչություն։ Այստեղ մուսեափիկը հրամանները ժողովրդին հաղորդել է հայերեն, արաբերեն և պարսկերեն լեզուներով, իսկ դա ցույց է տալիս, որ քաղաքում բացի հայերից, մեծ թիվ են կազմել նաև օտարազգիները։

Վանա լճի արևելյան ափին է գտնվում Հայաստանի հնագույն քաղաք Վանը, որը 9—11-րդ դարերում մեծանում ու դառնում է Վասպուրականի Արծրունիների տեղական նշանակություն ունեցող թագավորության կենտրոն, ուր մեծ չափերով զարգացած էին արհեստները, առանձնապես ոսկերչությունը, գինագործությունը, դարբնությունը, պղնձագործությունը, կտավագործությունը և հյուսնությունը։ Զարգացած էր նաև առևտուրը, քաղաքն ուներ մեծ շուկա և իջևաններ։

Հայաստանի հին քաղաքներից է Նախիջևանը (Նախճավանը), որը մեծ դեր է խաղացել Դվին-Թավրիզ առևտրական ճանապարհի վրա։ 9—11-րդ դարերում զարգանալով դառնում է արհեստների ու առևտրի կենտրոն ու վեր է ածվում կիսագրարային քաղաքի և որոշ դեր է խաղում երկրում։ 9—11-րդ դարերում զարգանում է նաև Վաղարշապատ քաղաքը Այրարատյան դաշտում։

Մանազկերտը Հայաստանի հին բնակավայրերից մեկն է, արաբական տիրապետության ժամանակ դառնում է էմիրության կենտրոն, ուր հավաքվում են արհեստավորներ, առևտրականներ, պաշտոնյաներ և աստիճանաբար զարգանալով 9—11-րդ դարերում դառնում է նշանավոր բերդաքաղաք։ Մանազկերտ քաղաքը ուներ ամուր պարիսպներ, այդ պատճառով սելջուկները Տուղրիլ բեկի գլխավորությամբ չեն կարո-

[1] Ակադ. Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, էջ 12։

դանում գրավել։ Որպես քաղաք մեծ զարգացում է ապրում նաև Արտաձուշը, դառնալով Տայք-Կղարջիքի իշխանության կենտրոն։

Մուֆարղինը (Հին Տիգրանակերտ) միջին դարերում հայտնի էր նաև Նփրկերտ ու Մարտիրապոլիս անուններով։ 9—11-րդ դարերում այս քաղաքում զարգացել էին մետաղամշակման արհեստները։ Նրա շրջակայքում կար երկաթի, պղնձի և կապարի հանքեր և այդ հումքերի հանույթի մի մասը մշակվում էր տեղում, զարգացած էր նաև կավագործությունը։ Գյուղատնտեսության ճյուղերից զարգացել էին խաղողագործությունը և գինեգործությունը։

Բաղեշը (Բիթլիսը), որ մինչև 9-րդ դարը մի բերդ էր, 9—11-րդ դարերում զարգանալով դառնում է արհեստա-առևտրական քաղաքներից մեկը Հայաստանի հարավում։ Այս շրջանում մեծ զարգացում են ապրում նաև Բերկրին, Առնեշը, Արծկեն, Արզն, Երզնկան, Խարբերդը։ Հայաստանի հին քաղաքներից էին Ամիդն ու Սեբաստիան, որոնք նույնպես նշված դարերում մեծ չափով զարգանում ու դառնում են արհեստավորական կենտրոններ։

Այս շրջանի քաղաքների մեջ յուրահատուկ տեղ է գրավում Աղթամար կղզին, ուր 10-րդ դարի առաջին կեսում Արծրունյաց Գագիկ թագավորը կատարում է մեծ շինարարություն և զարձնում այն ոչ միայն կարևոր ամրոց, այլև արհեստի ու ճարտարապետական արվեստի խոշոր կենտրոններից մեկը Հայաստանում։

9—11-րդ դարերում զարգանալով գյուղաքաղաքներ են դառնում մի շարք բերդ-ամրոցներ, գյուղեր ու ավաններ։ Այդ վայրերում նույնպես աստիճանաբար կենտրոնանում են արհեստավորներ, որոշ թվով մանր առևտրականներ և վարչական աշխատողներ։ Այդ տիպի քաղաքների մեջ կարևոր էին՝ Կապանը, Եղեգնիսը, Կոթը, Գառնին, Բջնին, Երևանը, Կողբը, Սուրմառին, Վաղարշակերտը, Մրենը, Թալինը, Արուճը, Բադարանը, Երազգավորսը, Վոռնը, Հերը (Խոյ), Սալմաստը,

Հադամակերտը, Ոստանը, Արզնը, Մուշը, Բալուն, Շիմշատը (Արշամոշատը), Կամախը, Խնուսը, Բաբերդը[1] և այլն։

5—9-րդ դարերում Հայաստանում քաղաքների մեջ ավելի զարգացած ու առաջնակարգ դիրք ունեին Դվինը, Կարինը և Մուֆարղինը, ավելի թույլ զարգացման նշաններ էին ցույց տալիս Վանը, Նախիջևանը և Վաղարշապատը, մյուսները համարյա մնում են իրենց ցածր աստիճանի վրա։ Բայց 9—10-րդ դարերում, ինչպես ասել ենք, թե՛ հին, և թե՛ նոր առաջացած քաղաքները բռնում են իրենց զարգացման ուղին։ Շարադրանքից միաժամանակ պարզ երևում է, որ 9—11-րդ դարերի Հայաստանի հին ու նոր քաղաքների մեծ մասն առաջացել է բերդ-ամրոցներից ու առևտրական ճանապարհների հանգույցավայրերում տեղի ունեցած տոնավաճառներից։ Անշուշտ, հին քաղաքների զարգացումը այժմ նույնպես ընթանում էր տնտեսական կատեգորիա դառնալու ուղիով։ Հայաստանի հին քաղաքները թեև փոքրացել ու կորցրել էին իրենց տնտեսական նշանակությունն արաբների տիրապետության շրջանում, բայց ունեին զգալի թվով բնակչություն իրենց քաղաքային արհեստավորներով։ Բերդ-ամրոց-ավաններից նրանք են դառնում քաղաքներ, որոնք դառնում էին միջազգային առևտրական ուղիների խաչավորման վրա և կամ թե դառնում են վարչական խոշոր կենտրոններ։ Այս շրջանում բերդի կամ ամրոցի շուրջը գնալով համախմբվում են արհեստավորները և աստիճանաբար հիմք են դնում նոր քաղաքների, հետո էլ առևտրականներն են կենտրոնանում նոր և հին քաղաքներում։ Անշուշտ, արհեստավորները վաղուց գոյություն ունեին Հայաստանում։ Նրանց մի մասը բնակվում էր հին քաղաքներում, մի մասն էլ ազատ թափառում էր որպես շրջիկ արհեստավորներ։ Ահա սրանք էին, որ բնակություն էին հաստատում բերդ-ամրոցների շուրջը ու հիմք դնում նոր քաղաքների։

Այսպիսով, 9—11-րդ դարերի Հայաստանի քաղաքներն իրենց բնույթով, բնակչության քանակով և երկրում խաղացած

[1] Հայաստանի քաղաքների մասին ավելի ընդարձակ տես Բարխեն Առաքելյանի «Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դարերում» շահնկան աշխատության առաջին մասը, Երևան, 1958։

իրենց տնտեսական ու քաղաքական դերով բաժանվում են երեք խմբի։ Առաջին խմբի մեջ մտնում են այն քաղաքները, որոնց բնակչության գլխավոր մասը կազմում են արհեստավորները, առևտրական-վաճառականները և վաշխառուները, երկրագործությամբ զբաղվող բնակչությունը վճռական դեր չէր խաղում այս խմբի քաղաքների կյանքում թե՛ իր արտադրանքով և թե՛ իր քանակով։ Այս տիպի քաղաքների բնույթը որոշվում է արհեստավորական զարգացած մեծ չափերի հասնող արտադրանքներով և առևտրի լայն զարգացումով, բնակչության ապրուստի միջոցները հիմնականում կազմում էին արհեստներից ու առևտրից ստացած եկամուտները, երկրագործությունը և անասնապահությունը որպես զբաղմունքի ու ապրուստի միջոցներ, երկրորդական դեր էին խաղում։ Առևտուրը կատարվում էր թե՛ ներքին և թե՛ արտաքին շուկաներում, մեծ չափերով զարգացած էր նաև վաշխառությունը։ Առաջին խմբի քաղաքների մեջ մտնում էին Դվինը, Անին, Կարսը, Արծնը, Կարինը, Խլաթը և Վանը, որոնց յուրաքանչյուրի բնակչության թիվը միջին հաշվով հասնում էր 50—100 հազարի։ Այս քաղաքներն իրենց արտադրանքներով ու առևտրով կապված էին միջազգային առևտրական կյանքի հետ և միաժամանակ հանդիսանում էին միջազգային առևտրի կենտրոններ։ Այս խմբի մեջ մտնող քաղաքները երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում խաղում էին որոշակի դեր իրենց ավագների խորհուրդներով։ Վերը նշված քաղաքները հայտնի էին նաև «շահաստան», «հռչակավոր», «մայրաքաղաք» անուններով և մեծ մասամբ հանդիսանում էին թագավորանիստ քաղաքներ ու վարչական խոշոր կենտրոններ։

Երկրորդ խմբի մեջ մտնող քաղաքներն իրենց բնույթով կիսաագրարային էին, ունեին միջին մեծություն, յուրաքանչյուր քաղաքի բնակչության թիվը շուրջ 10—50 հազարի է հասել։ Երկրորդ խմբի մեջ մտնող քաղաքները նույնպես հանդիսանում էին արհեստների ու առևտրի կենտրոններ, բայց և այնպես գյուղատնտեսական արտադրանքներն որպես ապրուստի միջոցներ, նույնպես մեծ դեր էին խաղում և համարյա հավասարազոր էին արհեստների ու առևտրի եկա-

մուտներին: Այս խմբի մեջ մտնում էին հետևյալ քաղաքները՝ Նախիջևան (Նախճավան), Վաղարշապատ, Բերկրին, Աղթամար, Արծկե, Արճեշ, Մանազկերտ, Բաղեշ (Բիթլիս), Մուֆարղին, Ամիդ, Խարբերդ, Սեբաստիա, Երզնկա և այլն: Այս քաղաքներից առավել աչքի էին ընկնում որպես արհեստավորա-առևտրական խոշոր կենտրոններ՝ Արճեշը, Մանազկերտը, Բաղեշը, Ամիդը և Սեբաստիան, որոնց արդյունագործական արտադրանքները նույնպես լայն տարածում էին գտնում ներքին և արտաքին շուկաներում: Նշված քաղաքների մեծ մասը նույնպես հանդիսանում էին հայկական իշխանությունների և արաբական էմիրությունների վարչական կենտրոններ:

Երրորդ խմբի քաղաքների մեջ մտնում էին փոքր տիպի գյուղաքաղաքներ կամ քաղաքագյուղեր, որոնց յուրաքանչյուրի բնակչության թիվը շուրջ 2000—10.000-ի է հասել: Այս խմբի քաղաքներում արհեստն ու առևտուրը երկրորդական նշանակություն ունեին, գլխավոր զբաղմունքը կազմում էր երկրագործությունն ու անասնապահությունը: Արհեստավորների արտադրանքները և առևտուրը սպասարկում էին նեղ շրջաններին: Այդ տիպի քաղաքներն ավելի շուտ բերդաքաղաքներն էին իրենց ազատարային բնույթով և հանդիսանում էին գավառական ու շրջանային վարչական կենտրոններ: Երրորդ խմբի մեջ մտնող քաղաքները գյուղերից տարբերվում էին միայն նրանով, որ ունեին պարիսպներ և հանդիսանում էին վարչական կենտրոններ: Երրորդ խմբի քաղաքների մեջ մրտնում էին՝ Կապանը, Եղեգնիսը, Կոթը, Գառնին, Բջնին, Երևանը, Սուրմարին, Վաղարշակերտը, Մրենը, Արուճը, Բագարանը, Երազգավորսը, Լոռեն, Հերը (Խոյը), Սալմաստը, Հադամակերտը, Ոստանը, Շիմշատը (Արշամոշատ), Արզնը, Մուշը, Բաղեշը, Կամախը, Խնուսը, Բաբերդը և այլն: Վերոհիշյալները լինելով ազատարային բնույթի քաղաքներ, հիմնականում կապվում էին գյուղերի հետ: Ինչպես տեսնում ենք, քաղաքների առաջացումը կապված էր նախ արհեստի և ապա առևտրի հետ: Առևտուրը վաղուց գոյություն ուներ, առևտրականները համարվում էին ինքնուրույն պրոֆեսիայի տեր մարդիկ, բայց շատ քիչ էին կապված տեղական արտադրության հետ, նրանք

ավելի շուտ գնորդներ էին փնտրում: Բայց երբ արհեստների զարգացման հետևանքով ստեղծվում է ներքին շուկա, այն ժամանակ առևտրա-վաճառականները սկսում են բնակություն հաստատել երկրի առավել աչքի ընկնող քաղաքներում և իրենց հերթին նպաստում նրանց զարգացմանը: Այսպիսով, վերոհիշյալ քաղաքները ոչ միայն դառնում են առևտրա-արդյունագործական կենտրոններ, այլև հարստության կուտակման վայրեր, ուր կենտրոնանում են նաև մեծ քանակությամբ արհեստավորներ, առևտրա-վաճառականներ, վաշխառուներ և գյուղից քաղաք փախչող ընչազուրկ մարդիկ:

Առհեսաներ.— 9—11-րդ դարերում Հայաստանի քաղաքներում երկրագործությունից անհամեմատ ավելի արագ են զարգանում արհեստներն ու արդյունագործությունը, իսկ գյուղերում զարգանում է անասնագործությունը: Անցած դարաշրջանների համեմատ այժմ առաջ են գալիս բազմաթիվ արհեստներ իրենց ճյուղավորումներով: Մինչև 9-րդ դարը արհեստը լրիվ չափով չէր անջատվել երկրագործությունից: Նախանյութի մշակումը գերազանցապես կատարվում էր դղյակներին և վանքերին կից արհեստանոցներում, որոնք հիմնականում բխում էին աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների նեղ կարիքներից: Սակայն այս շրջանում արհեստը ոչ միայն անջատվում է երկրագործությունից, այլև դուրս է գալիս իր նեղ շրջանակներից: Նոր առաջացող ու զարգացող քաղաքներում կուտակված ազգաբնակությունը, ինչպես նաև գյուղացիությունը, պահանջում են արհեստավորական արտադրանք, որի հետևանքով էլ ստեղծվում է ներքին շուկա, իսկ ներքին շուկայի ստեղծումն իր հերթին խթանում էր արհեստների զարգացմանը:

Արհեստների և արհեստավորական արտադրանքի զարգացման համար, ինչպես ասել ենք, 9—11-րդ դարերում երկրի ներսում մեծ չափով նյութական հնարավորություններ էին ստեղծել: Բագրատունիների ժամանակ մեծ չափով զարգացել էին անասնապահությունը, առանձնապես խաշնարածությունը և բամբակի մշակությունը, որոնք էլ կաշեգործությամբ և մանածագործությամբ զբաղվող արհեստավորների

ու նրանց արհեստների համար առատ հումքով էին մատակարարում։ Երկրի հարուստ հանքերի մշակումը իր հերթին խթանում էր մետաղամշակման արհեստների զարգացմանը, իսկ Հայաստանի հանքերի ու նրանց մշակման և օգտագործման մասին եղած տեղեկությունները հայտնի են շատ վաղուց։ Բայց հանքերի շահագործումը լայն մասշտաբով սկսում է կատարվել Բագրատունիների տիրապետության ժամանակ։ Հանքերի մշակման վայրերից հայտնի են Գյումուշխանայի արծաթի, Սպերի ոսկու, Սասունի և Ռշտունիքի երկաթի ու կապարի և Երզնկայի ու Գուգարքի պղնձի հանքավայրերը, որոնք էլ նպաստում էին երկաթամշակման արհեստների զարգացմանը։ Մանվածքային արդյունագործության համար կարևոր նշանակություն է ունեցել «Որդան կարմիր» ներկը, որի մասին, բացի հայկական աղբյուրներից, առատ տեղեկություններ են տալիս արաբ պատմագիրները, անվանելով այն «ալ քրմզի»։ Այս ներկը օգտագործում էին կտորներ ներկելու համար և նրանով ներկված կտորները մեծ պահանջ էին առաջացրել ոչ միայն ներքին, այլև արտաքին շուկաներում։ «Որդան կարմիր» ներկի գործածությունը Հայաստանում ունի շատ հին պատմություն։ Մետաքսեղեն գործվածքների արտադրությանը նյութ էր մատակարարում շերամապահությունը, որ նույնպես մեծ չափով զարգացել էր Հայաստանում 9—11-րդ դարերում։

Հայաստանի արհեստների մեջ կարևոր և առաջնակարգ տեղ են գրավում մետաղամշակությունը, քարագործությունը, փայտամշակությունը, կավագործությունը, տեքստիլ-արդյունագործությունը, դարբնությունը, ներկարարությունը, դերձակությունը, կաշեգործությունը, մագաղաթագործությունը, թամբագործությունը և այլն։ Արհեստների այս բոլոր տեսակներն իրենց հերթին բաժանվում էին առանձին ճյուղերի։ Օրինակ, մետաղամշակությունը բաժանվում էր դարբնության, զինագործության, պղնձագործության և ոսկերչության ճյուղերի, տեքստիլ-արդյունագործությունը բաժանվում էր բուրդ ու բամբակ գզողների, թել մանողների, ներկողների և հյուսողների։ Նշված արհեստները անհրաժեշտ ենք համարում շարադրել ավելի ընդարձակ։

Մետաղամշակություն.— Հայաստանի արհեստների մեջ կարևոր և առաջնակարգ տեղ է գրավում մետաղամշակությունը, այդ արհեստի միջոցով էր, որ հասարակությունը ձեռք է բերում իր համար ամենից անհրաժեշտ գործիքներն ու զենքերը։ Մետաղամշակման արհեստը զարգանալով բաժանվում է մի շարք ճյուղերի։ Մետաղների հանույթ կատարողները կոչվում էին «երկաթահատաք», «պղնձահատաք», «կապարահատաք» և «ոսկեհատաք»։ Բայց մետաղամշակման արհեստների մեջ գլխավոր տեղը բռնում է դարբնությունը։ Դարբիններն պատրաստում էին գութանի և արորի խոփեր, բահ, գերանդի, մանգաղ, մուրճ, կացին, ուրագ, սղոց, բրիչ, կռան, սայլի երկաթե մասեր և այլ տեսակի գործիքներ ու իրեր։ Այդ գործիքներից մեծ քանակությամբ հայտնաբերվել են Անիի և Դվինի պեղումներից։ Դարբնությունն ավելի զարգանալով ճյուղավորվում և առաջանում են փականագործությունը, այսինքն կողպեքների և այլ տեսակի փակերի պատրաստումը, պայտարությունը (նալբանդությունը), Անիում եղել է պայտարների փողոց, և այլն։

Զինագործություն.— Արհեստի այս ճյուղը շատ ավելի վաղ է անջատվել դարբնությունից և դարձել ինքնուրույն արհեստ։ Վ. Աբրահամյանի ուսումնասիրությունից պարզվում է, որ Հայաստանում օգտագործել են հետևյալ զենքեր ու պաշտպանության միջոցներ՝ նետ ու աղեղ, պարսատիկ, նիզակ (գեղարդ), տեգ, սուր, սվին, սակր, վաղր, մուրճ, վարոց (կոպալ կամ գուրզ), վահան, սաղավարտ և զրահ[1]։ Զինագործության գլխավոր կենտրոններ եղել են Դվինը, Անին, Վանը, Կարինը և Մուշ-Բաղինը։ Զենքերը պատրաստում էին ոչ միայն տեղական կարիքների, այլև արտահանելու համար։

Պղնձագործություն.— Դարբնությունից ավելի ուշ է անջատվել պղնձագործության արհեստը։ Պղնձագործներն օգտվելով երկրի հարուստ պղնձից, պատրաստում էին մեծ ու փոքր կաթսաներ, ափսեներ, ջրի ամաններ, սափորներ, թասեր, դավաթներ, կանթեղներ (աշտանակներ) և եկեղեցական

---

[1] Վ. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում 4—18-րդ դարերում, էջ 66—85, Երևան, 1956։

անոթներ՝ խաչեր, ջահեր, բուրվառներ, մոմկալներ, ծնծղաներ, սկիհներ ու բազմատեսակ այլ իրեր։ Ն. Մառի Անիում կատարած պեղումները երևան են հանել պղնձի ձուլարան,— պղնձե իրերի նյութական մնացորդներ շատ են հասել մեզ։ Պղնձագործության խոշոր կենտրոններ են եղել Անին, Վանը, Մուշարդինը և Երզնկան։

Ոսկերչություն.— Այս արհեստը շատ վաղուց է գոյություն ունեցել Հայաստանում, նույնիսկ Խալդ-ուրարտական դարաշրջանում։ Բայց այդ արհեստն ավելի է զարգանում 9—11-րդ դարերում, երբ պերճանքի առարկաների մեծ պահանջ էր զգացվում։ Այդ պահանջն առաջին հերթին առաջ են բերում քաղաքների մեծատուները։ Ոսկերիչները ոսկուց և արծաթից պատրաստում էին գոտիներ, ապարանջաններ, մատանիներ, գինդեր, վզնոցներ, մանյակներ, խաչեր և եկեղեցական ու պալատական այլ զարդեղեններ։ Այս արհեստը զարգացած էր վանքերին և դղյակներին կից եղած արհեստանոցներում, բայց բնակչության պահանջի հետևանքով տեղափոխվում է քաղաքները և ավելի է ձևավորվում որպես ինքնուրույն արհեստ։ Ոսկերչության արհեստի կենտրոններ են դառնում Դվինը, Անին, Արծնը, Կարինը և Վանը։ Դվինի պեղումներից դուրս է եկել մեծ քանակությամբ ոսկյա իրեղեններ։

Այսպիսով, մետաղամշակման բնագավառում արհեստի մասնագիտացման հետևանքով առաջանում են երկաթահատության, դարբնության, փականագործության, պայտարության, զինագործության, պղնձագործության և ոսկերչության արհեստները։

Քարագործություն.— Հայաստանը շատ հարուստ է իր տարբեր տեսակի քարերով, որոնք էլ նյութ են ծառայել շինարարության համար։ Կային հատուկ քարհատ արհեստավորներ, որոնք քար էին կտրում։ Քարհատները շինում էին ջրաղացի, ձիթհանքի քարեր, երկանքներ, գոտեր, գրատախտակներ և կատարում էին արձանագրությունների փորագրություններ ու քանդակներ։ Բայց քարհատները չէին կարող պատ շարել, այդ պատճառով էլ կային հատուկ որմնադիրներ, որոնց միջոցով կատարվում էր բազմատեսակ շինարարություններ։ Այնուհետև կային հատուկ կրի ու գաճի գործածության արհես-

տավորներ։ Այս արհեստները՝ որմնադրությունը, քարհատությունը և կրա-գաճագործությունը գոյություն են ունեցել հնագույն դարերից, բայց մեծ զարգացում են ապրել 9—11-րդ դարերում։ Այդ արհեստներից նյութական կուլտուրայի մնացորդներ ավելի շատ են հասել մեզ։

Փայտամշակություն.— Փայտամշակման արհեստը նույնպես վաղուց գոյություն է ունեցել, միայն նշված դարաշրջանում ավելի զարգանում և բաժանվում է մի շարք ճյուղերի։ Անտառի փայտ կտրողները փայտահատներ, տախտակ բաշողները՝ խզարներ կամ խիզարներ։ Այդպիսով, արհեստի մասնագիտացման հետևանքով հյուսնությունից անջատվում են փայտահատության ու խզարության արհեստները։ Փայտամշակման գլխավոր արհեստն առաղձագործությունն էր։ Առաղձագործները պատրաստում էին շենքերի ծածկը, դուռն ու լուսամուտները, պատշգամբները և փայտյա տներն ու տաղավարները։ Հյուսները փայտից պատրաստում էին երկրագործական գործիքներ՝ սայլ, գութան, արոր կամ մեծ ու փոքր մանգաղ (փոցխ)։ Երկրագործական այս գործիքները մեծ մասամբ պատրաստում էին գյուղական հյուսները։ Բայց 9—11-րդ դարերում քաղաքային հյուսները նույնպես պատրաստում էին սայլեր, կառքեր, անիվներ, եղաններ, լծասարքեր և այլն։ Հյուսները պատրաստում էին նաև տնային կահույք՝ պահարաններ, փեթակներ, սնդուկներ, մահճակալներ, խմորի և լվացքի տաշտեր, սեղաններ, աթոռներ, թախտեր, ճախարակներ, ջուլհակների դազգահներ, պնակներ, գդալներ, շերեփներ, փայտե խաչեր և այլ տեսակի առարկաներ։ Կային հյուսներ, որոնք Վանի և Սևանա լճերի համար պատրաստում էին նավեր և առաջանում է նավաշինություն։ Գրիգոր Նարեկացին իր «Մատյան ողբերգության» մեջ նկարագրում է Վանա լճի վրա հրդեհով բռնված նավը։ Այս դարերում զարգացած էր նաև փայտի գեղարվեստական փորագրությունը։ Այսպիսով, փայտամշակության արհեստը դարերի ընթացքում, առանձնապես նշված դարաշրջանում զարգանալով ճյուղավորվում և առաջանում են փայտահատության, առաղձագործության, երկրագործության գործիքների շինության, նավաշի-

ճարտարության ու փայտի գեղարվեստական փորագրության արհեստները:

Կավագործություն.— *Այս արհեստը անհիշելի դարերից գոյություն է ունեցել, բայց դարերի ընթացքում զարգանալով ճյուղավորվում է և 9—11-րդ դարերում հասնում է բարձր կատարելագործության: Կավագործության զարգացմանը մեծ չափերով նպաստել է Հայաստանի հարուստ կավը, որից պատրաստում էին բազմատեսակ ամանեղեններ, մեծ ու փոքր կրաններ, ափսեներ, ջրամաններ և այլ առարկաներ: Կավագործության արհեստը բաժանվում է չորս մասի՝ հասարակ ամանների արտադրություն, ներկած (չնարկած) ամանների արտադրություն, հախճապակյա ամանների արտադրություն և շինարարական խցեղենի՝ աղյուսի (հասարակ ու ներկված), կղմինդրի, ջրատար խողովակների արտադրություն: Կավագործության արհեստների կենտրոնները եղել են Դվինը, Անին, Վանը, Մուշարղինը: Դվինի և Անիի պեղումներից դուրս են եկել ներկված ամանեղենների ու հախճապակյա իրերի ընտիր տեսակներ:*

Ապակագործությունը կապված է կավագործության հետ և ունի հին պատմություն, բայց ավելի է կատարելագործվում 9—11-րդ դարերում: Հայաստանի ապակին ունի բազմազան գույներ և այդ արհեստի արտադրությունը տարածված էր մեծ քաղաքներում: Մետաղի, քարի և փայտի արհեստներից հետո ժողովրդական տնտեսության մեջ կարևոր տեղ է գրավել կավագործությունը, այդ պատճառով էլ ճյուղավորվել և մեծ զարկ է ստացել: Արևելքի երկրներ արտահանելու համար կարևոր էին ներկված ամանները և աղյուսը:

Տեխսիխ արդյունաբերություն.— *Ժողովրդական տնտեսության մեջ կարևոր դեր է խաղում նաև տեքստիլ արդյունաբերությունը, որը վաղուց գոյություն ուներ Հայաստանում: Բայց 9—11-րդ դարերում ավելի է զարգանում և վերջնականապես բաժանվում է երկրագործությունից ու բաժանվում է մի շարք ճյուղերի: Տեքստիլ արդյունագործությունը նույնպես համարվում էր առաջնակարգ արհեստներից: Այդ արհեստի համար որպես նյութ օգտագործում էին բուրդ, մազ, բամբակ, կանեփի և վուշի թել ու մետաքս, կտորներ պատրաստվում էին բարձր որակով, որոնցով բավարարվում էին թե՛ տեղական կարիքները և թե՛ արտահանում: Տեքստիլ արդյունագործությունը գնալով խիստ մասնագիտացվում է և առաջանում են հետևյալ արհեստները՝ գզրարություն — բուրդ ու բամբակ գզողներ, մանածագործություն — թել մանողներ, ոստայնություն — ջուլհակություն և այլն:*

Դվինում և մյուս քաղաքներում մեծ չափերով զարգացել էին «մարիզին» (marizin) կոչվող կտորի գործվածքը՝ նրանից պատրաստված հագուստը, մետաքսե դիպակներ, գլխի փաթաթաններ, սփռոցներ, բազմոցներ, բարձեր, բարձի երեսներ, սավաններ, ժապավեններ (դայթաններ), կերպաս, մահուդ, չիթ և այլ սպիտակեղեն: Այս արտադրանքների որոշ մասը արտահանվում էր: Տեքստիլ արդյունագործությունը Հայաստանի բոլոր քաղաքներում գոյություն ուներ, բայց ավելի զարգացած էին՝ Դվինում, Անիում, Կարինում, Խլաթում, Վանում, Բաղեշում, Մուշարղինում և Ամիդում: Ըստ ակադ. Հ. Մանանդյանի, Դվինի մարիզին, ծածկոցներ, բարձերի և բազմոցների երեսներ, բուլյոն, դիպակ վարագույրներ և այլ գործվածքներ[1] արտահանվում էին: Մետաքսից պատրաստում էին դիպակներ, բրդից՝ մահուդ:

Տեքստիլ արդյունագործության մեջ է մտնում նաև գորգագործությունը, որը համարվում էր ավելի բարձր արհեստ: Հայաստանի գորգերը մեծ հռչակ ունեին ներքին ու արտաքին շուկաներում իրենց բարձր որակով ու մեծությամբ: Գորգագործության արհեստի հետ էր կապվում նաև կապերտագործությունը և թաղիքագործությունը:

Տեքստիլ արդյունագործության հետ էր կապված նաև ներկարարությունը: Հայաստանը նշանավոր էր իր ներկերով, որոնց մեջ առաջնակարգ տեղը գրավում է «որդան կարմիր» ներկը, որի մասին արդեն խոսել ենք, տորոնը, թերթաքարերը և այլ ներկանյութեր, որոնցով ներկում էին կտորեղենները, գորգերը և կաշին:

Դերձակություն.— *Տեղում պատրաստված կտորներից ու*

[1] Ակադ. Հ. Մանանդյան, О торговле и городах Армении, стр. 160—161, Ереван, 1930.

դրսից բերած ընտիր գործվածքներից դերձակները պատրաստում էին քաղաքի մեծատունների ու ազնվական դասի համար հագուստներ։

Կաշեգործություն.— Այս արհեստը նույնպես վաղուց ի-յություն է ունեցել Հայաստանում, 9—11-րդ դարերում ոչ միայն զարգանում է, այլև մասնագիտացվում ու բաժանվում է մի քանի ճյուղերի՝ դաբաղության, կոշկակարության, թամբագործության, համեստագործության, մորթագործության, մուշտակագործության, կաոքերի և սայլերի կաշվե սարքերի և այլ իրերի պատրաստման։

Կաշվեգործության արհեստի ճյուղերից է նաև մագաղաթագործությունը (կաշիից թուղթ պատրաստելը)։ Այս արհեստն ավելի շուտ գոնվում էր վանքերին կից արհեստավորների ձեռքում։ Մագաղաթի արտադրության հետ միասին զարգացած էր գրքի արտադրությունը—գրչության արվեստը, գրքի ծաղկազարդումը և կազմարարությունը։ Բ. Առաքելյանն իր «Քաղաքները և արհեստները 9—13-րդ դարերում» աշխատության մեջ նշում է, որ 9—11-րդ դարերում Հայաստանում գոյություն են ունեցել 88 արհեստ[1]։

Վերոհիշյալ նշված արհեստներից ու նրանց ենթաճյուղերից բացի, կային նաև դեղորայքի, անուշահոտ յուղերի, շաքարի, օճառի, մոմագործության, ասեղնագործության, կողովի, մաղի, երաժշտական գործիքների, քիմիագործության (ալքիմիա) և այլ տեսակի իրերի պատրաստման արհեստների արտադրությունը։

9—11-րդ դարերում Հայաստանի արհեստների մեջ ամենազարգացածը եղել են մետաղամշակումը և տեքստիլ արդյունագործությունը։

Անիում և Հաղպատի այլ քաղաքներում, բացի արհեստներից, գոյություն են ունեցել նաև կալվածատեր-վաշխառուների աղյուսի, պղնձի և այլ ապրանքներ արտադրող խոշոր արդյունագործական ձեռնարկություններ։ Այդ արդյունագործական ձեռնարկություններում արհեստավորներից, աշակերտներից բացի, աշխատել են նաև զգալի քանակությամբ ընչազուրկ գյուղացիներ։

Անիի և Դվինի պեղումներից հայտնաբերված մետաղե և կավե իրերն ու ամանեղենները, որոնք պահվում են թանգարաններում, սովորական չեն, այլ բարձր որակի և գունավոր առարկաներ են։ Անիի պեղումների ժամանակ գտնվել են շքեղ տեսակի հախճապակե անոթներ, որոնք մեծ մասամբ պատրաստվել են Անիում։ Կարևոր ենք համարում այդ մասին մեջ բերել Անիի պեղումների մասնակից ակադ. Հ. Օրբելու հետևյալ տեղեկությունները.

«Զարմանալի են հախճապակյա ամաններն իրանց թափանցիկ կողերով և ուռուցիկ ու խոր գծած նկարներով, և ճենապակիից ամանները՝ իրանց հարուստ ու բազմազան ոսկեզօծ ու բազմերանգ նկարներով, նույնպես և ուռուցիկ ու ներս ընկած զարդարանքներով (օրնամենտ). դրանք գտնված են թագավորական ապարանքի պեղումներում։ Բնկորներից երևում է, որ ամանների մեծագույն մասը թափովի է և աչքի են ընկնում թափման (որ հինգ տեսակից ավելի է) բարձր կատարելությամբ, նույնպես և գեղարվեստորեն կատարված լինելովն ու ներկերի պայծառությամբ»[1]։

Ակադեմիկոս Հ. Օրբելու վերոհիշյալ աշխատության մեջ հիշատակվում են նաև պեղումների ժամանակ հայտնաբերված մետաղյա իրեր՝ սուր, պղնձե սկավառակ, նիզակի ծայրեր, պղնձե սափորներ, տեգ, արծաթե գավաթներ, երկաթե ճրագակալներ։ Նույնպիսի իրեր, հատկապես ոսկյա զարգեղեններ են գտնվել նաև Դվինի պեղումների ժամանակ։ Իսկ Մովսես Կաղանկատվացին գրում է, որ արհեստագործները հմուտ են «ոսկեգործութեան, արծաթահալութեան, երկաթահանութեան և պղնձագործութեան մեջ[2]։

Առևտուր.— Գյուղատնտեսական մշակույթի և արհեստի ու արդյունագործության զարգացումը խոշոր չափով խթանում է առևտրի զարգացմանը և ներքին շուկայի ստեղծմանը։ Առև-

[1] Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները 9—13-րդ դարերում Հայաստանում, էջ 349—351, Երևան, 1958։

[1] Հ. Օրբելի, Անվո ավերակները, հայկ. թարգմ., էջ 48—49, Վաղարշապատ, 1911։

[2] Մովսես Կաղանկատվացի, էջ 190։

տուրը բաժանվում էր երկու մասի՝ արտաքին և ներքին: Հայաստանը ինչպես հնում, նույնպես և Բագրատունիների շրջանում հանդիսանում էր միջազգային առևտրի վայրերից մեկը: Նրա վրայով էին տարվում Արևելքից Արևմուտք փոխադրվող ապրանքները: Հայաստանում միջազգային առևտրի կենտրոններ էին հանդիսանում Դվինն ու Անին, Կարինը և Արծնը: Արևելքից քարավաններով ապրանքներ բերողները նախ կանգ էին առնում Հայաստանում, ապա նոր անցնում էին դեպի Արևմտյան երկրները: Ապրանքների այդ փոխադրման գործում Հայաստանի վաճառականները, որոնք ունեին իրենց ընկերությունները, խոշոր դեր էին խաղում: Սակայն Հայաստանը, որպես տրանզիտ երկիր, լոկ ապրանքներ փոխադրող չի եղել, այլև իր արհեստավորական ու գյուղատնտեսական արտադրանքներով մասնակցել է միջազգային առևտրին:

Այսպես օրինակ, Տաբարին նշում է, որ Հայաստանը շատ հարուստ է եղել հացահատիկներով և ցորենի առևտուր է կատարել Բաղդադի հետ, իսկ ըստ Իբն-ալ-Ֆակիհի, Հայաստանից արտահանվել են փայտ[1], հատկապես ընկուզենի: Այնուհետև, ըստ արաբական աղբյուրների՝ Յակուբիի, Իստահրու, Իբն-Հաուքալի և ուրիշների, արտահանվել են ձկներ՝ Սևանա լճի իշխան և Վանա լճի տառեխ[2], նույնիսկ խալիֆաթը Հայաստանից հարկի դիմաց վերցրել է նաև աղ դրած ձուկ: Այնուհետև արտահանում էին բրդյա, բամբակյա և մետաքսյա գործվածքներ՝ մարիզի (marizi) կոչվող կտոր, մետաքսյա ծաղկազարդ ու ոսկեթել դիպակներ, մահուդ, գլխի փաթաթաններ, սփռոցներ, բազմոցներ, բարձեր, բարձի երեսներ, սավաններ, կերպաս, չիթ, սպիտակեղեն, ժապավեններ (ղայթաններ), վարագույրներ, բոզյուն (bozіun) կոչված մետաքսյա ծանր կտոր, ինչպես նաև գորգեր, կապերտներ: Հանքային հարստություններից էքսպորտի առարկա էին դարձել նաև երկաթը, պղինձը, պղնձեղենը, պղնձարջասպը, արճիճը, սնդիկը, ձյութը, զենքերը, գործիքները, աղը և բորակը: Այս ապրանքները արտահանվում էին ոչ միայն արևելյան երկրները՝ Ատրպատական, Միջին Ասիա, Արաբիա, այլև Բյուզանդիա: Բյուզանդական կայսրության ենթակա Տրապիզոնը, որը հանդիսանում էր միջազգային առևտրի մեծ ու ընդարձակ կենտրոն, լցվում էր հայկական արտադրանքներով: Իսկ Հայաստանի մետաքսյա քողերը և ժապավենները հռչակված էին Իրանի և Արաբիայի շուկաներում:

Հայաստանի արտադրանքներից էքսպորտի առարկա էին դարձել Դվինում, Անիում և այլ քաղաքներում պատրաստված հախճապակյա ամանեղենները, գունավոր անոթները և աղյուսը, ինչպես նաև պերճանքի առարկաները՝ արծաթեղեն և ոսկեղեն, ոսկեգույն և մետաքսյա թելերով զարդարված հագուստեղեն: Այդպիսի հագուստներ հայտնաբերվել են Անիի պեղումների ժամանակ: Այդ մասին Հ. Օրբելին գրում է.

«Գտնված է մետաքսյա ամբողջ հագուստ ոսկե բանվածքներով ու մետաքսով, և ոսկով նուրբ հյուսած քող և մետաքսյա ժապավենից գոտի...»[1]:

Արևելքի և հատկապես Բաղդադի շուկաներում, իբրև էքսպորտի առարկա, համբավ ունեին Հայաստանի «որդան կարմիր» ներկը, նրանով ներկված կտորները: Այնուհետև Հայաստանից արտահանվում էին նաև դեղեր, դեղաբույսեր, բուրդ, բամբակ, գինի, ձի, ջորի, ոչխար, չոր մրգեղեն և այլ ապրանքներ: Որ Հայաստանը Բագրատունիների ժամանակ խոշոր արհեստավորական և առևտրական արտադրանքի երկիր է եղել, այդ երևում է նաև Սմբատ Առաջինի կողմից Ատրպատականի ոստիկան Յուսուֆին տրված նվերներից, որի մասին տեղեկություններ է հաղորդում ժամանակակից պատմագիր Հովհաննես Դրասխանակերտցին: Մենք ենք բերում պատմագրի հաղորդածի համապատասխան հատվածները.

«Իսկ արքայի խրախ լեալ ի բարեձիր պարգևս նորա՝ ընկալեալ մեծաւ շնորհակալութեամբ, ոչ սակաւ ինչքան թէ բազմամասնաբար յիւրմէն ևս նմա ընծայէր բարեվայելուչ և չքնաղատես և երևելի զարդս հանդերձանաց, և նկարակերտ

---

1 Сборник материалов, выпуск 31, Тифлис, 1902, стр. 39.
2 Նույնը, выпуск 29, стр. 21 և выпуск 38, стр. 97.

1 Հ. Օրբելի, Անվո ավերակները, էջ 46, Վաղարշապատ, 1911:

կազմուածս բազմականաց կարմրութեամբ որդանց, և ըմբակըս և նուագս և կամար ի համակ ոսկւոյ՝ գործ Հռոմայական ճարտարաց, յերանգս գունակ գունակ ապակւոյ...»[1]: Կամ թե՝ «Իսկ արդ իբրև բացաւ պատրուակն՝ զեկուցաւ մեզ մոմբոումն և սպառնութիւնն վայրագն գաղանի Հագարացւոյն, ըստ բարոյականի կամեցողի արքային Սմբատայ և այլոց ևս նախարարացն սադրելոյ, զէմ եդեալ ևս տարադէմ գնացի ի Պարսս Աւարպատականի առ ոստիկանն դառնացող ընծայիւք և պատարագօք բազմօք յարքունի թանգարանաց երևելի ոսկեճամուկ զգեստուք և ի նկարակիրտ կանանց ոստայնանկութեանց բազում բազմականս կազմեալ, և բազում ձիս ու ջորիս ի զարդս և ի զէնս յարդարեալ, այլ և դանձս ոսկւոյ և արծաթոյ»[2]:

Մեջբերումներից երևում է, որ Սմբատ Առաջինն արքունի թանգարաններից Աւարպատականի ոստիկան Յուսուֆին որպես նվեր ուղարկել է բարեվայելուչ հանդերձանքներ, ոսկեկար զգեստներ, չքնաղատես ու երևելի զարդարանքներ, նկարազարդված շատ բազմոցներ, որով գործել էին նկարազարդող ոստայնակ կանայք, կարմիր որդանանիկ գործվածքներ, ըմպանակներ, գավաթներ, ոսկուց շինված գոտի (քամար), տեսակ-տեսակ գույներով ապակիներ, շատ ձիեր, ջորիներ, հարդարված զենքերով ու զարդերով, ինչպես և ոսկու ու արծաթի դանձեր: Իսկ սրանք էլ ապացուցում են, որ Հայաստանն այս շրջանում հանդիսացել է արժեքավոր արտադրանքների հայրենիք: Իսկ Հայաստանը բյուզանդական երկրներից, արաբական աշխարհից, Պարսկաստանից, Հնդկաստանից և Չինաստանից ներմուծում էր թանկագին քարեր, փղոսկր, հախճապակյա ընտիր ամաններ, համեմունքներ, մետաքս, նուրբ մետաքսյա գործվածքներ, անուշահոտ յուղեր և այլ տեսակի ապրանքներ:

Բացի արտաքին առևտրից, Բագրատունիների շրջանում մեծ ծավալ էր ստացել նաև ներքին առևտուրը: Ստեղծված քաղաքային շուկաներում մեծ չափով վաճառքի առարկա էին

[1] Հովհաննես կաթողիկոս, էջ 198:

[2] Նույնը, էջ 210:

դառնում գյուղացիների արտադրած մթերքները և արհեստավորական արտադրանքները: Միջնորդ առևտրականը փոխանակություն էր կատարում գյուղի և քաղաքի միջև: Արհեստի անջատումը երկրագործությունից գյուղացիների և արհեստավորների միջև նախադրյալներ է ստեղծում ապրանքային արտադրության զարգացման համար: Արհեստավորական արտադրանքներն սկզբում սպասարկում էին միայն ֆեոդալների կարիքները, իսկ հետո էլ շրջակայքի գյուղացիների համար, որով ստեղծվում է տեղական նեղ շուկա, որն էլ նպաստում է քաղաքների զարգացմանը: Քաղաքների շուկաներում միաժամանակ վաճառվում էր արհեստավորների ու գյուղացիների արտադրանքները, որոնք իրենց հերթին նպաստում էին ներքին շուկայի ծավալմանը: Քաղաքների շրջակայքի երկրագործական ու անասնապահական տնտեսությունները այլևս չեն կարող բավարարել քաղաքների բազմացած բնակչության կարիքները, ուստի և գյուղն իր արտադրած որոշ մթերքներ՝ ցորեն, ալյուր, անասուններ, թռչուններ, փայտ և բանջարեղեն է բերում քաղաք: Այդ նույն քաղաքի շուկայում վաճառվում է նաև արհեստավորական արտադրանքը՝ գյուղատնտեսական գործիքներ, հագուստներ, կտորեղեն, կավե ու պղնձե ամաններ և դրանով նպաստում էին ներքին շուկայի զարգացմանը: Որպեսզի դրսի աշխարհից բերված պերճանքի առարկաները կարողանար ձեռք բերել, ֆեոդալը նույնպես իր մոտ եղած հավելյալ պրոդուկտը վաճառում էր: Դրանով միաժամանակ սկիզբ է առնում գյուղի և քաղաքի հակադրությունը: Առևտրականները գյուղացու արտադրանքը ցածր գներով առնելով, վաճառում էին արհեստավորներին ավելի բարձր գներով, բարձր գներով էին վաճառում ազնվականներին նաև պերճանքի առարկաները ու յուրացնում ֆեոդալական հարկերի մի մասը և շահագործում գյուղացուն ու արհեստավորին, որով ուժեղանում էր շահագործումը գյուղում և քաղաքում: Իսկ վաշխառուներն էլ իրենց բարձր տոկոսներով էին շահագործում գյուղացիությանը և արհեստավորներին: Սելջուկների կողմից Անիի գրավման ու ավերման առիթով Արիստակես Լաստիվերտցին գրում է.

«Այս է բաժին անիրաւ քաղաքաց, որ շինեն զինքեանս

արեամբ օտարաց, և ի քրտնաց տնանկաց փարթամանան, և ի վաշխից և յանիրաւութեանց զտունս իւրեանց ամրացուցանեն. և ինքեանք զմիտս իւրեանց անողորմ ունելով առ աղքատս և տնանկս՝ միայն հեշտութեան և փափկութեան սպասեն, և ի գործոց աղտեղութեան ոչ խորշին, այլ միայն արբեալ լինին ի ցանկութեանցն որ զնոսա ըմբռնեալ ունի»[1]:

(«Այս է բաժին անիրավ քաղաքների, որոնք շինվում են օտարների արյունով և փարթամանում տնանկների քրտինքով և նրանց, ովքեր ամրացնում են իրենց տները վաշխառուությունով և անիրավությամբ և դեպի աղքատներն ու տնանկներն իրենց անողորմ մտքերն ունենալով՝ միայն հոգնություն ու փափկություն են սպասում և զաղրելի գործերից չեն խորշում, այլ միայն արբենում են այն ցանկություններով, որոնք բռնել են նրանց»):

Այսպես, Անիում կուտակված հարստությունը արհեստավորների քրտինքով էր ստեղծվել: Իսկ վաշխի տոկոսն այնքան մեծ է եղել, որ հորից անցել է որդուն և Գոշը ստիպված է եղել հատուկ հոդվածով զգուշացնել նրանց[2]: Ըստ Գոշի, տոկոսների դիմաց գրավ էին դնում հող, այգի, անասուն, հագուստ, զարդեղեն և այլն: 11-րդ դարում մանր արտադրողների դրությունն ավելի է ծանրանում, նրանց համար շատ դժվար էր իրենց ապրանքների վաճառումն ու հումքի հայթայթումը, դրա հետևանքով նրանց մի մասը կախման մեջ է ընկնում առևտրականներից ու վաշխառուներից: Նրանք երբեմն հումքն ապառիկ են տալիս: Այդ նույն երևույթը գոյություն ուներ նաև գյուղի տնայնագործների նկատմամբ: Այդպիսով առևտրա-վաշխառուական կապիտալը նույնպես շահագործում է մանր արտադրողներին: Ներքին առևտուրը սերտ կերպով կապված էր միջազգային առևտրի հետ: Ներքին և արտաքին առևտրի զարգացումը խոշոր չափով անդրադառնում էր արհեստների և գյուղատնտեսության զարգացման վրա: Այդ ժամանակից քաղաքը դառնում է գյուղը շահագործող:

«Եթե միջնադարում գյուղն է քաղաքականորեն շահագործում քաղաքին ամենուրեք,— գրում է Կ. Մարքսը,— որտեղ

[1] Արիստակես Լաստիվերցի, էջ 167:

[2] Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, հատված 6 և 47:

ֆեոդալիզմը չի բեկվել քաղաքների բացառիկ զարգացման հետևանքով, ինչպես Իտալիայում, ապա տնտեսապես քաղաքն է ամեն տեղ ու առանց բացառության գյուղին շահագործում իր մոնոպոլ գներով, իր հարկային սիստեմով, իր համքարային կարգով, իր վաճառականական անմիջական խաբեբայությամբ ու իր վաշխառուությամբ»[1]:

Համքարություններ.— Քաղաքներում համանման արհեստ ունեցող արհեստավորները բազմանալով, իրենց շահերը պաշտպանելու, ինչպես նաև միմյանց փոխադարձ օգնություն ցույց տալու համար միավորվում և կազմում էին իրենց համքարական միությունը: Մարքսն ու Էնգելսը համքարական միությունների առաջացումը հետևյալ կերպ են բնորոշում.

«Միավորված ավազակային ազնվականության դեմ միավորելու անհրաժեշտությունը, շուկայական ընդհանուր շենքերի պահանջը այն դարաշրջանում, երբ արդյունաբերողը միաժամանակ նաև վաճառական էր, ծաղկած քաղաքները ներհյուսող փաստական ճորտերի կոնկուրենցիայի աճումը, ամբողջ երկրի ֆեոդալական կարգը — այս բոլորն առաջ բերին համքարությունը»[2]:

Համքարական կազմակերպություններն ունեին իրենց կանոնադրությունը, որը մշակվում և ընդունվում էր վարպետների ընդհանուր ժողովում: Համքարական միությունները պարտավոր էին օգնել իրենց անդամներին հումքով ձեռք բերելու, պատրաստի ապրանքներ շուկա հանելու, վաճառելու և կարիքի դեպքում նյութական օգնություն ցույց տալու գործում: Միջնադարյան համքարական միությունների համար բնորոշ է մանր արտադրությունը, արհեստավորի նպատակը ոչ թե շահ ստանալն էր, այլ իր գոյությունը պահպանելու միջոցներ ձեռք բերելը: Համքարական միությունը հսկողություն էր սահմանում իր անդամների արտադրած ապրանքների որակի ու չափի վրա, որպեսզի վատորակ արտադրանք շուկա դուրս չբերեն, որովհետև դրանով համքարության պատիվը արատավորվում էր: Այնուհետև, համքարության միությունը որոշում

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3-րդ, երկրորդ մաս, էջ 339, Երևան, 1949:

[2] Маркс и Энгельс, Соч., т. IV, стр. 14—15, 1933.

էր աշխատանքի տևողությունը, արգելում էր գիշերային աշխատանքը, սահմանափակում էր ենթավարպետների ու աշակերտների թիվը, շատ հումք ձեռք բերելը, որպեսզի համքարական միության անդամների միջև մրցում տեղի չունենա։ Սահմանվում էր, որ ամեն մի արհեստավոր կարող է ունենալ մեկ արհեստանոց, որպեսզի պահպանվի համքարական արտադրության մանր բնույթը։ Համքարությունները սկզբում նպաստում էին տեխնիկայի զարգացմանը, իսկ հետո մրցակցություն տեղի չտալու համար արգելակում են։ Առհասարակ մանր արտադրության պահպանումը արգելում է տեխնիկայի զարգացումը, մանավանդ որ արհեստանոցում աշխատանքի լայն բաժանում չկար և համքարությունները դեմ էին գյուտերին, իսկ տեխնիկայի զարգացումը և մասնագիտացման աճը չէր փոխում արհեստի մանր բնույթը, այլ առաջացնում էր նոր համքարություններ։ Համքարությունները, որոնց մեջ մտնում էին նույն արհեստի բոլոր արհեստավորները, պարբերաբար ժողովներ էին գումարում, վարպետ էին ընտրում վարպետացուներից, որոնք երբեմն էլ վերջանում էին խնջույքով։

Համքարական կազմակերպությունները, եղբայրությունները ընտրում էին իրենց ղեկավար մարմինները։ Համքարական կազմակերպության գլուխ կանգնում էր ընտրովի նախագահը, ավագը, ինչպես Եվրոպայում մագիստրոսը։ Սա համքարական կազմակերպության անդամների հանդեպ ուներ դատ և դատաստան տեսնելու իրավունք։ Ընտրում էին հսկիչներ, որպեսզի համքարության անդամները չխախտեն կանոնադրությունը։ Դրա համար էլ համքարության միությունն ուներ նաև իր դատարանը։ Ինչպես նշել ենք, համքարական կազմակերպությունը միաժամանակ փոխադարձ օգնության կազմակերպություն էր։ Մուտքի վճարներով և նվիրատվության միջոցներով կազմվում էր դանձարկղ և այդ դանձարկղից օգնություն էր տրվում կարիքավորներին, հատկապես մահվան դեպքում։

Ն. Մառը նշում է, որ արհեստագործությունը Հայաստանում եղել է ժառանգական, արհեստավորները կազմում էին եղբայրություններ, որտեղ կիրառվել է ընտրական սկզբունք,

և որոնք հետո վերածվում են համքարությունների[1]։ Ն. Մառի այս ասածն հաստատվում է հետագա դարերում Հայաստանի քաղաքներում գոյություն ունեցող համքարությունների առկայությամբ[2]։

Ժնևի գրադարանում պահված և 1893 թ. հրատարակված Բյուզանդիայի համքարներին վերաբերվող մի կանոնադրքից երևում է, որ 10-րդ դարում Բյուզանդիայում գոյություն է ունեցել 22 ցեխ (համքարություն)։ Այս կանոնադրքը, որը վերաբերում է 10-րդ դարին, շատ արժեքավոր տեղեկություններ է տալիս Բյուզանդիայում գոյություն ունեցող ցեխերի կոլեգաների, ինչպես և նրանց գործունեության, իրավունքների ու պարտականությունների մասին։ Միաժամանակ նշվում են նրանց փոխհարաբերությունները ու պարտավորությունները պետության հանդեպ։ Այդ կանոնագիրքը, որը բաղկացած է 26 պարագրաֆից, մանրամասն կերպով տալիս է համքարությունների և առևտրական միությունների ներքին վիճակը, ինչպես նաև ցեխերի և ավագների ու նրանց պարտականությունների մասին տեղեկություններ։ Վերոհիշյալ կանոնագրքից երևում է, որ 10-րդ դարում Բյուզանդիայում արհեստավորները ոչ միայն ունեցել են իրենց կազմակերպությունները, այլև ունեցել են իրենց կանոնները ներքին կյանքի մասին։ Բյուզանդիայում գոյություն ունեցող արհեստավորական-համքարական կազմակերպությունների գոյության առկայությունը հաստատում է, որ այդ երկրի հետ տնտեսական, քաղաքական և կուլտուրական շատ սերտ կապ ունեցող Հայաստանում ևս, ինչպես նշել ենք, նույնպես ունեին իրենց համքարական կազմակերպությունները, մանավանդ որ 11-րդ դարի կեսերին Հայաստանի մի շարք քաղաքներ գտնվում էին Բյուզանդական կայսրության տիրապետության տակ։

---

[1] Н. Марр, Кавказский культурный мир и Армения, Петроград, 1915, стр 16—17.

[2] Тифлисские амкары, из записок Юрия Федоровича Ахвердова, Тифлис, 1883 և Егиазаров С. А. Исследования по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, Казань, 1841.

Եվրոպայի և Ասիայի պատմությունից հայտնի է, որ համքարական կազմակերպություններին քաղաքներում սովորաբար հատկացնում էին առանձին փողոցներ։ Անիում և Հայաստանի մյուս քաղաքներում նույնպես յուրաքանչյուր համանման արհեստ ունեցող վարպետներին հատկացված են եղել առանձին փողոց։ Այսպես, ակադ. Ն. Մառի պեղումներն ապացուցել են, որ դարբինները, ատաղձագործները, բամբակագործները, պղնձագործները, ջինագործները, ջուլհակները, կաշեգործները, թամբագործներն ունեցել են իրենց առանձին փողոցները։ Առանձին փողոց են ունեցել նաև բազազները[1]։ Անշուշտ, նույն ձևով փողոցներ են ունեցել նաև երկրի մյուս մեծ քաղաքների համքարությունները։

Բացի արհեստավորներից, հավանաբար Հայաստանի վաճառականները նույնպես ունեցել են իրենց առևտրական ընկերությունները, Եվրոպայի գիլդիաների նման, բայց ինչպես համքարական կազմակերպությունների, նույնպես և առևտրական ընկերությունների գոյության մասին շատ քիչ տեղեկություններ կան։ Սակայն մի բան պարզ է, որ հեռավոր երկրների հետ առևտուր կատարելը և երկրի ներսում լայն ապրանքաշրջանառության գործը կարգավորելը պահանջում էին վաճառականների միասնական գործունեություն, մանավանդ որ Հայաստանի վաճառականները ոչ միայն զբաղված էին երկրի արտադրանքի արտահանումով, այլև միջազգային ապրանքների փոխադրումով։ Այս բոլորը մեզ ենթադրել է տալիս, որ 9—11-րդ դարերում Հայաստանի վաճառականները նույնպես ունեցել են իրենց առևտրական ընկերությունները և նրանց ղեկավար մարմիններն ու նախագահները։

Քաղաքների կառավարումը.— Միջնադարյան քաղաքները սովորաբար կառավարվում էին ֆեոդալների կամ իշխանների կողմից նշանակված կառավարիչներով — քաղաքապետներով, իսկ մայրաքաղաքի կառավարիչը նշանակում էր թագավորը։ Այդ կառավարիչներն ունեին իրենց տրամադրության տակ պահակազորք և պաշտոնյաներ։

Աղբյուրների կցկտուր տեղեկություններից հայտնի է, որ Հայաստանի քաղաքներն իրենց որոշ կողմերով՝ թե՛ իրենց

[1] Վիմական տարեգիր, էջ 49, 54, 78 և այլն։

տիպով և թե՛ իրենց կառավարչական սիստեմով կրել են արաբական երկրների քաղաքների որոշ ազդեցություն։ Օրինակ, Անիի արձանագրություններից մեկում հիշատակվում է նույն քաղաքի կառավարիչ-պաշտոնյա Մութասիբի կամ Մուսայիպի մասին[1]։ Այս պաշտոնյան արաբական շրջանի Մութասիբն է, որին տրված էր քաղաքի կառավարման, հատկապես արհեստների, առևտրի, շուկաների, չափ ու կշիռների վրա հսկելու և հարկերը գանձելու իրավունքը։ Անշուշտ, նման իրավունք է ունեցել նաև Մութասիբ կամ Մուսայիպը Անիում։ Պարզ է, որ նման կառավարիչներ պետք է ունենային նաև Հայաստանի մյուս քաղաքները։

Սակայն, երբ քաղաքներն աստիճանաբար զարգանում են և քաղաքներում կուտակվում է մեծ բազմություն, այն ժամանակ քաղաքացիները, առանձնապես արհեստավորներն ու առևտրականները պայքար են մղում կառավարիչի դեմ՝ քաղաքի կառավարման իրավունքը ձեռք բերելու համար։ Քաղաքների բացառիկ զարգացման հետևանքով բարձրանում է նրանց բնակիչների դերն ու նշանակությունը երկրի հասարակական-քաղաքական ու տնտեսական կյանքում։ Նրանք ֆեոդալ-իշխանների դեմ պայքարելով աշխատում էին ոչ միայն ձեռք բերել իրենց քաղաքների կառավարման իրավունքը, այլև ազատագրվելու նրանց կառավարիչների կամայականություններից։ Հայաստանի մեծ քաղաքների բնակիչներն իրենց պայքարով ձեռք են բերում ինքնավարություններ, հանձինս ավագների խորհուրդների, որոնք, ըստ հայկական աղբյուրների, կոչվում են երիցաձի, իսկ նրա անդամները՝ գլխավորք խաղաքի։ Անի քաղաքի գլխավորների մասին խոսում է Արիստակես Լաստիվերտցին, որ նրանք որոշում են Դվինի էմիրին կանչել քաղաք և թույլ չտալ բյուզանդացիներին մտնել այնտեղ։ Անին ուներ ավագների խորհուրդ, որը կազմված էր արհեստավորների համքարական կազմակերպությունների և առևտրական ընկերությունների ներկայացուցիչներից, ինչպես նաև ազնվականներից ու հոգևորականներից։

Ավագների խորհրդի պարտականություններն էին՝ կառավարիչի հետ հարկերի բաշխումն ու գանձումը, հասարակական

[1] Վիմական տարեգիր, էջ 221։

նշանակություն ունեցող շինքերի կառուցումը, ջրանցքների և առուների հանումը, քաղաքի մաքրությունը, ֆինանսներէ կարգավորումը, արհեստների վրա հսկումը, պատերազմների ժամանակ օտարների հարձակումներից քաղաքի պաշտպանությունը, առհասարակ քաղաքի ռազմական ուժերի ղեկավարումը և այլն։ Քաղաքների բնակչությունը դինված էր, կատարում էր պահակային ու կայազորային ծառայություն և կռվում աշխարհազոր։ Երկրի ծանր դրության տարիներին ավագների խորհուրդը, առանձնապես նրա ներկայացուցիչների ցածր խավը, խոշոր դեր էին խաղում քաղաքը արտաքին նվաճողներից պաշտպանելու գործում։ Օրինակ, Կիրակոս Գանձակեցու ասելով, Անի քաղաքի գլխավորները չեն համաձայնել քաղաքը մոնղոլներին հանձնելուն. «Առաքեաց Ջարմագան նմա ասելոյ, եթե ոչ տաս ինձ քաղաքդ, ոչ կարես դնալ ի հնազանդութիւն,— գրում է Կիրակոս Գանձակեցին,— եւ որք գլխաւորքն էին ի քաղաքին՝ ոչ իշխեցին պատասխանի առնել պատգամին առանց հարցանելոյ զիշխանն Շահնշահ. քանզի ընդ իշխանութեամբ նորա էր քաղաքն։ Իսկ ամբոխ քաղաքին և ռամիկքն սպանին զպատգամատուրսն...»[1]։ Այս գլխավորները պետք է լինեին քաղաքի ինքնավար օրգանի՝ ավագների խորհրդի անդամները։ Ավագների խորհրդի գլուխը, որպես նախագահ, կանգնում էին հոգևորականների, աշնվականների կամ թե հարուստ վաճառականների ներկայացուցիչները։ Անի քաղաքի նման, ինչպես ասված է, ավագների խորհուրդ է ունեցել նաև Դվինը, այդ մասին մենք արդեն արաբական մատենագիր Իստահրիից մեջբերում կատարել ենք, որ «քաղաքը մշտապես գտնվում էր քրիստոնյա ավագների ձեռքում», այսինքն, Դվին քաղաքը նույնպես կառավարվել է ավագների խորհրդի կողմից։ Բայց Անիից ու Դվինից, քաղաքային ավագների խորհուրդներ են ունեցել նաև Հայաստանի մյուս քաղաքները, բայց նրանց մասին առայժմ տեղեկություններ չկան։

9—11-րդ դարերում պետությունը կամ իշխանությունները Հայաստանում քիչ էին խառնվում քաղաքների ներքին գործերին։ Այդ թողնվել էր կառավարչի և ավագների խորհրդի

[1] Կիրակոս Գանձակեցի, էջ 244—245։

անօրինությանը։ Այդպիսով, քաղաքները համեմատաբար վարում էին ինքնավար կյանք։ Բայց քաղաքային ավագների խորհուրդները վարում էին որոշակի դասակարգային քաղաքականություն՝ ճնշելու ցածր խավին։

Քաղաքների կառուցվածքը.— Բագրատունյաց Հայաստանի քաղաքներն իրենց կառուցվածքով նման էին ասիական երկրների, ինչպես և եվրոպայի միջին դարերի քաղաքներին։

Միջնադարյան Հայաստանի քաղաքներն ունեցել են յուրահատուկ կառուցվածք, նրանք նախ աչքի են ընկնում իրենց միջնաբերդով, որը համարվում է քաղաքի ամենաապահով վայրը։ Միջնաբերդը շրջապատված է եղել ամուր պարիսպներով (Անի, Մանազկերտ, Վան), իսկ որոշ քաղաքներ նաև ջրով լցված խրամատով (Դվին)։ Սովորաբար միջնաբերդը կառուցվում էր բնականորեն ամուր և անառիկ վայրում։ Քաղաքների միջնաբերդում էին գտնվում թագավորների և իշխանների պալատները։ Միջնաբերդերում իրավունք ունեին բնակություն հաստատելու միայն թագավորն՝ իր պալատականներով ու արքունի անդամներով (մայրաքաղաքում), մյուս քաղաքների միջնաբերդերում՝ իշխաններն ու աշնվականները և բարձր հոգևորականությունը։ Միջնաբերդերն աչքի էին ընկնում իրենց շքեղությամբ ու հոյակապ շենքերով։

Ն. Մառի և Թ. Թորամանյանի Անիում ու Կ. Դաֆադարյանի Դվինում կատարած պեղումներից ու հետազոտություններից պարզ երևում է, որ Անին և Դվինը, ինչպես և երկրի մյուս քաղաքները, իրենց կառուցվածքով նման են եղել Առաջավոր Ասիայի մեծ քաղաքներին։ Արևելքի, հատկապես Իրանի պատմության լավագույն մասնագետ ակադեմիկոս Վ. Բարտոլդն իր «Историко-географический обзор Ирана» (СПБ 1903) աշխատության մեջ[1] նշում է, որ Պարսկաստանի և Միջին Ասիայի քաղաքները բաղկացած են եղել երեք մասից՝ «կուխենդուզ»-ից, «շահրիստան»-ից և «ռաբադ»-ից։ «Կուխենդուզ»-ը միջնաբերդն է և կից է «շահրիստան»-ին, որը շրջապատված է ամուր պարիսպներով և հանդիսանում է բուն քաղաքը, ուր գտնվում են մայր մզկիթը և շուկաները։ «Շահրիս-

[1] Էջ 9, 29, 35 և այլն։

տան»-ի պարիսպներից դուրս ձգվում էր «ռաբադ»-ը, այսինքն՝ արվարձանը, որը նույնպես ունեցել է իր շուկան։ «Կուխենդուզ»-ում և «շահրիստան»-ում (շահաստանում) ապրում էին իշխող դասերը՝ ազնվականները, առևտրականները և հոգևորականություն, իսկ «ռաբադ»-ում բնակվում էին ռամիկ աշխատավորները, հատկապես գյուղից փախչող գյուղացիները։

Հայաստանի քաղաքներից Դվինն ու Անին իրենց ավերակներով պահպանել են մեծ քաղաքի տիպը և համապատասխանում են Բարտոլդի նկարագրած քաղաքների կառուցվածքին։ Ակադ. Ն. Մառի պեղումները և ճարտարապետ Թ. Թորամանյանի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Անին ունեցել է իր միջնաբերդը, շահաստանը[1] և արվարձանը։ Նույնն են ցույց տալիս նաև Դվինի պեղումները։ Անիի միջնաբերդում էին գտնվում Բագրատունիների երկհարկանի պալատը և ուրիշ շինություններ։ Միջնաբերդը շահաստանից անջատված է պարսպով։ Շահաստանում էին գտնվում մայր եկեղեցին, շուկաները, հյուրանոցները, պահեստները և վաճառականների, ազնվականների, հոգևորականների բնակելի տներն ու քաղաքի կառավարիչների ապարանքները։ Շահաստանը պաշտպանվում էր պարիսպներով, իսկ դուռն մոտ ունեցել է կրկնապատիկ պարիսպ։ Սակայն, Թորամանյանի ասելով, քաղաքի մեծ մասը կազմել է արվարձանը, որը ձգվել է շահաստանի պարսպից դուրս՝ դեպի հյուսիս։

«Անիի պարսպի հյուսիսային կողմը տարածված ընդարձակ դաշտավայրում,— գրում է Թ. Թորամանյանը,— քննական պատկեր մը շատ բան կբացատրե պարիսպեն դուրս ապրող ժողովրդի կյանքի և դիրքի վերաբերյալ։ Ավագ դռնեն մոտավորապես կես կիլոմետր հեռու դեպի հյուսիս մեծ քաղնիքի մը կիսականգուն մնացորդը, մեկ կիլոմետր ավելի անդին Հովիվի եկեղեցին, անկեց ավելի հեռուն դեպի հյուսիս դարձյալ մի ուրիշ մատուռի ու անոր կից գեղեցիկ մահարձանի մը մնացորդները պատահական կերպով աննպատակ չէին շինված։ Եթե մոտավորապես մեկ ու կես կիլոմետր դեպի հյուսիս կատրելի է այսպես բնակութեյանց, մատուռներու ու դամբարաններու մնացորդներ տեսնել, նույն բաները կարելի է տեսնել նաև դեպի արևելք, շատ քիչ ընդհատումներով մինչև Հոռոմոսի վանքը, և դեպի արևմուտք մինչև Անի գյուղի արևմտյան սահմանները»[1]։

Ինչպես տեսնում ենք, Անի քաղաքի արվարձանը շատ ավելի ընդարձակ է եղել և ունեցել է ավելի մեծ բնակչություն, քան ունեցել են շահաստանն ու միջնաբերդը միասին վերցրած։ Արաբական աղբյուրների համաձայն Պարտավը, Ռեյը և Մերվը ունեցել են մեկ փարսախից ավելի երկարություն ու լայնություն, այսինքն, բռնել են մոտավորապես 25—30 քառակուսի կիլոմետր տարածություն։ Ելնելով Թորամանյանի «Անի քաղաք թե ամրոց» աշխատությունից, որից կատարեցինք մեջբերում, պետք է ասել, որ Բագրատունյաց մայրաքաղաքն իր արվարձանով բռնել է վերոհիշյալ քաղաքների չափ տարածություն։ Նույն կառուցվածքն ու տարածությունն են ունեցել նաև Դվինը, Կարսը, Արծնը, Մանազկերտը, Խլաթը, Վանը։

Հայաստանի քաղաքների՝ «շահաստան» կոչվող մասում տեղավորված էր քաղաքի հիմնական բնակչությունը՝ առևտրականներ (իրենց խանութներով), վաճառականներ ու վաշխառուներ (իրենց պահեստներով, սեղանատներով), արհեստավորներ (իրենց դարդահներով ու համքարական կազմակերպություններով), մանր ազնվականներ (իրենց դրուժիններով), կաթողիկոս ու եպիսկոպոսներ (իրենց վանականներով ու վանքերով, եկեղեցիներով) և մեշչաններ (քաղքենիներ)։ Հայաստանի մի շարք քաղաքներ լինելով վարչական ու տնտեսական խոշոր կենտրոններ, դեպի իրենց են քաշել երկրի բնակչության զգալի մասը։ Շահաստանում տեղ չլինելու և որոշ մասն այնտեղ ապրելու իրավունք չունենալու պատճառով, ազգաբնակչության մի մասը բնակություն էր հաստատում պարիսպներից դուրս, արվարձանում, որը գնալով մեծանում ու ընդարձակ տարածություն էր գրավում։

[1] Արիստակես Լաստիվերտցի, էջ 63։

[1] «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», հատ. Ա, էջ 327, Երևան, 1942։

Արվարձանում ապրում էին քաղաքի բնակչության ավելի ցածր խավերը, գյուղից քաղաք փախչողները, քայքայվող և դաղգահ չունեցող արհեստավորները, մանր առևտրականները և ընչազուրկ մասսան։ Արվարձանի բնակիչները և գյուղացիները վտանգի դեպքում պաշտպանություն էին գտնում շահաստանի պարիսպների հետևում։

Քաղաքի բնակչության քանակը և սոցիալական կազմը

Մատենագրական տեղեկությունները ցույց են տալիս, որ Հայաստանի քաղաքների մի մասը 9—11-րդ դարերում ունեցել է բազմամարդ բնակչություն, մինչև հարյուր հազար բնակիչ։ Անին ունեցել է հարյուր հազարից ավելի բնակիչ, մինչդեռ նույն ժամանակի եվրոպայի մեծ քաղաքներն ունեցել են 15—20000 բնակիչ[1]։

Թովմա Արծրունին նկարագրելով 893 թ. Դվինի մեծ երկրաշարժը, գրում է, որ այդ երկրաշարժի հետևանքով Դվին քաղաքում մահացել են 70000 մարդ[2]։ Հայ պատմիչների և վիմական արձանագրությունների տվյալների համաձայն Անիում եղել են 10000 տուն և ապրել են մոտ 100000 բնակիչ[3], իսկ բյուզանդական աղբյուրներից Կեդրենոսը և հայ աղբյուրներից[4] Մ. Ուռհայեցին ցույց են տալիս, որ 1049 թ., սելջուկների երկրորդ արշավանքի ժամանակ Արծն քաղաքում սպանվել է ավելի քան 140000—150000 մարդ[5]։

9—11-րդ դարերում տնտեսական կյանքի վերելքը և քաղաքական խաղաղ պայմանները ոչ միայն նպաստում են քաղաքների զարգացմանը, այլև քաղաքներում ազգաբնակության մեծ թվով կուտակմանն ու երկրի հարստության կենտրոնացմանը։ Երկրի տնտեսական կյանքի աճող զարգացումը և նյութական միջոցների ու դրամի կուտակումը աղնվական-իշխանների, առևտրական-վաճառականների և եկեղեցիների ու վանքերի ձեռքին, մղում էին նրանց ոչ միայն դեպի ճոխ ու փարթամ կյանքը, այլև քաղաքներում նշանավոր շենքերի, բերդերի, վանքերի ու եկեղեցիների կառուցմանը։ Հատկապես աչքի են ընկնում քաղաքներում կառուցված շինությունները։ Հայաստանի թագավորները, իշխանները և վաճառական-առևտրականները մրցել են իրար հետ նշանավոր շենքերի՝ պալատներ, դղյակներ, պարիսպներ, կամուրջներ, վանքեր և եկեղեցիներ կառուցելու գործում։ Անշուշտ Բագրատունյաց հոյակապ մայրաքաղաքի, առանձնապես թագավորական պալատի, Կաթողիկեի, Հովիվի եկեղեցու, Գագկաշենի և այլ շենքերի կառուցումները պահանջել են մեծ քանակությամբ նյութական միջոցներ և աշխատող ձեռքեր։ Նման շենքեր կառուցվել են նաև Հայաստանի մյուս քաղաքներում։ Իրենց կառուցումներով հայտնի են նաև Կարսի, Զորագետի, Սյունիքի և Վասպուրականի թագավորությունները։ Նորակառույց և հին բնակավայրերում կուտակված է եղել բնակչության մեծ բազմություն և բնակիչները մասսայաբար շահագործվել են այդ շինությունները կառուցելիս։

Հայաստանի հին և նորակառույց քաղաքները դեպի իրենց էին քաշում գյուղի բնակչության՝ ընչազուրկների զգալի մասը, որը գալիս էր այդ վայրերում ապրուստի միջոցներ գտնելու համար։

Քաղաքների բնակչության մի մասը կազմված էր ազատ, մասնավորապես շրջիկ արհեստավորներից, որոնք գոյություն ունեին վարչական կենտրոններում՝ դղյակներին և վանքերին կից արհեստանոցներում։ Բայց քաղաքների բնակչության (արհեստավորների) որոշ մասը կազմում էին կախյալ գյուղացիները, որոնք իրենց տերերի տուրքերից ազատվելու համար փախչում էին քաղաքները. «Միջնադարյան ճորտերից կազմվեց առաջին քաղաքների քաղքենի բնակչությունը»[1]։

Արհեստավորներն արդեն աշխատում էին պատվիրա-

---

1 Կարլ Բրյուխեր, Ժողովրդական տնտեսության ծագումը, Բ. մաս, էջ 126—127, Վաղարշապատ, 1914։

2 Թովմա Արծրունի, էջ 372։

3 Հ. Օրբելի, Անվո ավերակները, էջ 26 և Թորոս Թորամանյան, Անի քաղաք քե ամրոց, (Նյութեր հայկական ճարտարապետության) հատ. Ա, էջ 323, Երևան, 1942։

4 Հ. Մանանդյան, «Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում», էջ 24։

5 Ուռհայեցի, ժամանակագրութիւն, էջ 103։

1 Маркс и Энгельс, Соч., т. V, стр. 484, 1929.

տուի, գնորդի և շուկայի համար։ Այստեղից էլ պարզ է, որ արհեստավորները պիտի կենտրոնանային այնպիսի վայրերում, որտեղ իրենց ապրանքները կարողանային ռեալիզացիայի ենթարկել։

Արհեստը միանգամից չէ, որ անջատվում է գյուղատնտեսությունից, այլ աստիճանաբար։ Քաղաքի արհեստավորները երկար ժամանակ պահպանում էին իրենց գյուղացիական գծերը. «Քաղաքային արհեստավորները, իհարկե, հենց սկզբից պետք է արտադրեին փոխանակման համար,— գրում է Ենգելսը։— Բայց նրանք ևս արտադրում էին իրենց հարկավոր առարկաների մեծ մասը. նրանք ունեին այգիներ և փոքր դաշտեր, իրենց անասուններն արածացնում էին համայնական անտառում, որը բացի դրանից, նրանց շինարարական նյութ և վառելիք էր հայթայթում, կանայք կտավհատի և բրդի թել էին մանում և այլն։ Արտադրությունը փոխանակման նպատակով,— ապրանքների արտադրությունը,— դեռ նոր էր ծագում։ Այստեղից էլ փոխանակության սահմանափակությունը, շուկաների սահմանափակությունը, արտադրության ձևերի կայունությունը, տեղական մենաշնորհումն արտաքին աշխարհից, արտադրողների տեղական կապը...»[1]։ Ուստի և գյուղը երկար ժամանակ սպասարկում էր իր արհեստավորական ապրանքների զգալի մասը։ Արհեստի զարգացման հետ շրջիկ առևտրական-վաճառականները նույնպես բնակություն էին հաստատում քաղաքներում, ներքին և արտաքին շուկաները կապվում են իրար հետ։

Արհեստավորները հանդիսանում էին քաղաքների հիմնական արտադրողները։ Նրանք միատարր չէին և տրոհվում էին երեք մասի՝ վարպետներ, վարպետացուներ և աշակերտներ, վարպետը շահագործում էր վարպետացուների ու աշակերտների աշխատանքը։ Յուրաքանչյուր արհեստավորի արհեստանոցում վարպետի հետ աշխատում էին վարպետացուներ (վարպետի օգնականներ) և աշակերտներ։ Վերջիններն իրենց քանակով ավելի մեծ թիվ էին կազմում։ Աշակերտների դրությունը շատ ծանր էր, նրանք աշխատում էին արևածագից մինչև մայրամուտ։ Սկզբնական շրջանում երեք-չորս տարի աշխա-

[1] Маркс и Энгельс, Соч., т. XIV, стр. 275

տում էին առանց աշխատավարձի, իսկ երբ ձեռք էին բերում ինքնուրույն աշխատանքի ունակություն, միայն այն ժամանակ նրանց տրվում էր չնչին աշխատավարձ։ Վատ էին աշակերտների ու վարպետացուների աշխատանքային պայմանները, որոնց հետևանքով հյուծվում էին նրանք։ Աշակերտները բացի արհեստանոցում աշխատելուց, աշխատում էին նաև վարպետի տանը, տունն էին մաքրում, ջուր բերում և այլն։ Ենթավարպետը վարպետ կարող էր դառնալ, երբ աշխատում էր վարպետի մոտ և վերջինս օգտվում էր նրա հավելյալ աշխատանքից։ Թեև տեղեկություններ չկան, բայց հավանականությունից դուրս չէ, որ եղել է պայքար ենթավարպետների ու վարպետների միջև։ Արհեստավորներն իրենց վերոհիշյալ երեք խմբերով, որոնք կազմում էին քաղաքների բնակչության հիմնական մասը, ապրում էին թե՛ շահաստանում, և թե՛ արվարձանում։

Արհեստավորներից հետո քաղաքների բնակչության կազմի մեջ ուրույն տեղ էին գրավում առևտրականները, վաճառականները, վաշխառուները և մեշչանական տարրերը։ Սրանք պատկանում էին շահագործող դասակարգին, իրենց ձեռքին էին պահում ներքին և արտաքին առևտուրը և մեծ դեր էին խաղում ավագների խորհուրդներում։ Բայց առևտրականների ցածր խավը և մեշչանները իրենց իրավունքներով ու տնտեսական կարողություններով շատ քիչ էին տարբերվում արհեստավորներից։ Առևտրական-վաճառականների ու վաշխառուների տներում աշխատում էին մեծ քանակությամբ տնային ծառայողներ։ Քաղաքներում իրենց շահագործմամբ ավելի աչքի էին ընկնում վաշխառուները։ Պատմագիր Արիստակես Լաստիվերտցին զայրույթով է խոսում Կարս և Արծն քաղաքների վաշխառուների մասին, որոնք մեծ տոկոսներ էին վերցնում. «վաշխից և տոկոսաց օրինք եդան, և ցորենոյ բազմապատկութիւն... Որ խաբէր զընկերն՝ պարծէր իմաստուն Գոլ, և որ յափշտակէր՝ ասէր, են հզօր եմ։ Ջտունս տնակից աղքատացն, և զսահմանս անդաստանաց նոցա յափշտակէին մեծատունքն...»[1]։

[1] Արիստակես Լաստիվերտցի, էջ 79—80։

Վաշխառուների տոկոսները քայքայում էին գյուղացիների, արհեստավորների ու նույնիսկ մանր ազնվականների տնտեսությունները, իսկ հարուստ մեծատուններն էլ, ինչպես երևում է Լաստիվերտցու վկայությունից, ուղղակի հափշտակում էին նրանց ունեցվածքը, մի հանգամանք, որ առաջ էր բերում երկրում ընչազուրկ մասսա։ Հասարակության այս խավն իր բնակությունն էր հաստատում գերազանցապես մեծ քաղաքներում և, արհեստավորներից ու առևտրականներից հետո, իր քանակությամբ ու դերով բոնում էր քաղաքների ազգաբնակության մեջ երրորդ տեղը։ Քաղաքների բնակչության ընչազուրկների մեծ մասը քաղաք էր եկել գյուղից, որի մի մասը կազմում էին գյուղացի ճորտերը և կախյալները։ Դրանք իրենց անձնական աղատությունը գտնում էին դեպի քաղաք փախչելով, ուր ապրուստի միջոցներ էին գտնում։ Այդ ընչազուրկ մասսայի որոշ մասն էլ առաջ էր եկել արհեստավորների ունեզրկումից։ Ընչազուրկները բնակվում էին քաղաքների արվարձաններում, նրանք աշխատում էին քաղաքների շինությունների վրա, վաճառականների, վաշխառուների ու առևտրականների խանութներում, պահեստներում, պետական ձեռնարկություններում և զբաղվում էին նաև բեռնակրությամբ, ջրկիրությամբ, քաղաքների փողոցները մաքրելով, փայտ կտրելով և այլ աշխատանքներով։

Բագրատունյաց Հայաստանի քաղաքների բնակչության որոշ մասը զբաղվում էր գյուղատնտեսությամբ, ուստի քաղաքների բնակչության մի մասը կազմում էին երկրագործներն ու անասնապահները։ Քաղաքների բնակիչներից շատերը արվարձաններում ունեցել են բանջարանոցներ, այգիներ, մարգագետիններ և հողագործության ու անասնապահության զբաղմունքի այլ միջոցներ։ Հողագործները, անասնապահները ապրում էին քաղաքների արվարձաններում, որոնք կազմում էին քաղաքների բնակչության չորրորդ խավը։

Բացի վերոհիշյալ սոցիալական չորս խավերից, քաղաքներում բնակություն էին հաստատում նաև իշխանները, կալվածատերերը, պաշտոնյաները և հոգևորականությունը։ Սրանք բոլորն էլ բնակվում էին շահաստանում։

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի քաղաքների զարգացումը, արհեստի ու արդյունաբերության վերելքը փոփոխություն են մտցնում երկրի ազգաբնակության դասակարգային կառուցվածքի մեջ, առաջացնելով երկրի ներսում սոցիալական նոր շերտ՝ քաղաքային դաս, հանձինս արհեստավորների ու առևտրականների, որոնց առկայությամբ ոչ միայն ավելի էին սրվում դասակարգային հակասությունները, այլև սեպ է խրվում ֆեոդալական հասարակության մեջ, ավելի սրելով նրա հակասությունները։

Ըստ հայ մատենագրական աղբյուրների, քաղաքների բնակչությունը, մի կողմ թողած իշխաններին, ազնվականներին ու հոգևորականներին, իր իրավական ու տնտեսական դրությամբ ավելի բարձր էր կանգնած գյուղացիությունից։ Դեռ իր ժամանակին հայոց Վաղարշակ թագավորը, ըստ պատմահայր Մ. Խորենացու ասելու Տրդատ Առաջինը, իրավական տարբերություն էր դրել քաղաքի և գյուղի բնակչության միջև։

«Հրաման տայ քաղաքացեաց մարդկան արգոյ և պատիւ լինել քան զգեղջկաց,— գրում է Մ. Խորենացին,— և գեղջկաց պատուել զքաղաքացիս որպէս զիշխանս. և քաղաքացեաց մի կարի առ գեղջկօքն պերճանալ, այլ եղբայրաբար վարիլ, վասն բարեկարգութեան և աննախանձոտ կենաց, որ է շինութեան և խաղաղութեան կենաց պատճառք»[1]։

(«Հրաման է տալիս, որ քաղաքացի մարդիկ առավել հարգ և պատիվ ունենան, քան թե գյուղացիները, որ գյուղացիները պատվեն քաղաքացիներին, ինչպես իշխանների և քաղաքացիները շատ չդոռոզանան գյուղացիների մոտ, այլ եղբայրաբար վարվեն, բարեկամության և աննախանձ կյանքի համար, որոնք պատճառ են կյանքի բախտավորության և խաղաղության և ուրիշ նման բաներ»)։

Այս նույն բանը հաստատում է նաև Հովհաննես Կաթողիկոսի մոտ եղած այն անուղղակի տեղեկությունը, որ Ներսես Գ. կաթողիկոսը Զվարթնոց եկեղեցին և նրա կից շինություններն ավարտելուց հետո այնտեղ բնակվողներին շնորհում է քաղաքացիների իրավունք. «Այլև կարգեալ կացուցա-

[1] Մովսես Խորենացի, Գիրք, Բ, գլ. Ը։

նէր ի նմա ամբոխութիւնս երդումարդաց ըստ պայմանի քաղաքականաց»,— գրում է Հովհաննես կաթողիկոսը[1]։

Քաղաքի և գյուղի բնակիչների իրավական անհավասարությունը այնքան մեծ է եղել, որ նույնիսկ հոդվածի կարգով տեղ է գտել Մխիթար Գոշի «Դատաստանագրքում», ուր ասված է, որ քաղաքացիներին պատիվ ավելի լինի, քան գեղջուկներին և գեղջուկներին էլ նմանապես առավել պատիվ լինի, քան ագարակների, բերդերի ու ավանների բնակիչներին, որովհետև մեր թագավորների սահմանած կարգը հնում այսպես է եղել[2]։

Մեջբերված վկայությունները ցույց են տալիս, որ քաղաքի բնակչությունն իր իրավական դրությամբ ավելի բարձր է դասվել գյուղացիներից։ Այստեղից էլ պարզ է, որ վերջիններս նեղն ընկած դեպքում պիտի փախչեին դեպի քաղաք։ Ճիշտ է, Հայաստանի քաղաքները, մանավանդ մեծերը, հանդիսանում էին թագավորությունների ու իշխանությունների վարչական կենտրոններ, բայց և այնպես, նրանք ազատ քաղաքներ էին և կարող էին ապաստանի վայրեր դառնալ փախուստի դիմած գյուղացիների համար։ Իսկ ինչ վերաբերվում է Գոշի մոտ եղած այն հիշատակությանը, որ հեղինակը գեղջուկներին առավելություն է տալիս ագարակների, բերդերի և ավանների բնակիչների նկատմամբ, հատուկ ուսումնասիրության նյութ է կազմում։ Բայց մեզ թվում է, որ գեղջուկները նախկին շինականներն են, իսկ ագարակների, բերդերի և ավանների բնակիչները նախկին կախյալ գյուղացիներն ու ճորտերն են։ Ահա սրանք էին, որ ամենից շատ փախչում էին դեպի քաղաքներ ազատություն ձեռք բերելու համար։ Այսպիսով, մեր կարծիքով հին շրջանի «անազատ»-ների դասը, այսինքն, ըստ ակադ. Հ. Մանանդյանի, ռամիկները[3] իրավական տեսակետից տրոհվում էին երեք կարգի՝ քաղաքային բնակիչներ, իրավապես ազատներ, գեղջուկներ, ազատ գյուղացիներ

[1] Հովհաննես կաթողիկոս, էջ 88։

[2] Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, մասն Բ, հատվ. Ա, էջ 318։

[3] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 148—214, Երևան, 1934։

և ագարակների, բերդերի ու ավանների բնակիչներ՝ կախյալներ և ճորտեր։

Հայաստանի քաղաքների և քաղաքային տնտեսության զարգացումը 10—11-րդ դարերում, ինչպես նշել ենք, ծնում է սոցիալական նոր հարաբերություններ և ներհակ, ընդդիմադիր նոր հոսանքներ, իսկ տնտեսությունը որոշ չափով բեկվում է դեպի դրամային ու ապրանքային արագ շրջանառություն, որը տարածվում է ամբողջ երկրում[1]։ Դա երևում է վիմական արձանագրությունների հաղորդած տեղեկություններից[2]։

Գյուղում, թեև շատ դանդաղ, քան քաղաքում, բայց նույնպես որոշ չափով զարգանում էր ապրանքա-դրամային տնտեսությունը, որովհետև գյուղն արդեն քաղաքին տալիս էր իր արտադրանքի որոշ մասը, պետական հարկերը հիմնականում ընկնում էին գյուղացիության վրա։ Ապրանքային դրամական տնտեսության զարգացման հետևանքով առաջանում է սակավահող և ընչազուրկ մասսա, որ փողով վարձվում է քաղաքների մեծահարուստների տներում, վանքային կալվածներում և ֆեոդալ-իշխանների անձնական տնտեսություններում, որով ավելի է ուժեղանում ընդվզումները, մանր ու մեծ ապստամբությունները։

Դրամական տնտեսության զարգացմանը զուգընթաց վաշխառուական կապիտալը ոչ միայն ուժեղանում է, այլև մեծ դեր է խաղում երկրում և իր տոկոսներով ծանրանում է աշխատավոր-ռամիկ ժողովրդի վրա։ Աշխատավոր ժողովրդի անողոք ու ծանր շահագործումը նկարագրել է ժամանակակից պատմագիր Արիստակես Լաստիվերտցին։ Նա նկարագրելով Արծն քաղաքի ավերումը 1049 թ. սելջուկ-թուրքերի կողմից, նշում է, որ Արծն քաղաքի իշխանները դարձել են գողերին ընկերակիցներ, վրեժ առնողներ և արծաթի ծառաներ, պատավորները դարձել են կաշառակերներ և իրավունքներ ու օրենքներ խարդախողներ, որբերի ու այրիների իրա-

[1] Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, էջ 34, Երևան, 1940 և Հայաստանը թուրք-թաթարական արշավանքների շրջանում, էջ 74—94, Երևան, 1922։

[2] «Վիմական տարեգիր», էջ 5, 6, 13 և այլն։

վունքներ ոտնահարողներ։ Վաշխի ու տոկոսների համար օրենքներ են դրել, ցորենի փոխատվության համար բազմապատկություն են սահմանել։ Ով որ ընկերոջը խաբում էր, պարծենում էր, որ իմաստուն է, ով որ թույլ և աղքատ մարդկանց տունն ու արտերը հափշտակում է, պարծենում էր, որ հզոր է[1]։ Ինչպես երևում է, անարդարությունների ու օրենքների խախտումները և հափշտակություններն ու խաբեությունները 11-րդ դարում Հայաստանում մեծ չափերի են հասել։

Մոտավորապես նույն ձևով է նկարագրում հեղինակը նաև Անի քաղաքի վաշխառուների մասին 1064 թ. սելջուկթուրքերի ավերումից առաջ։

«Այլ և ի ճարպոյ անիրաւութեան ի նմա գործելոցն տուչորեցաւ բարձրաշէն և գեղեցկայարմար ապարանքն, և եղև ամենայն բնակութիւնն իբրև հողաբլուր. և վաշխն և նենգութիւնն որ ի նմա՝ խափանեցաւ։

Այս է բաժին անիրաւ քաղաքաց, որ շինեն պինքեանս արեամբ օտարաց, և ի քրտանց տնանկաց փարթամանան, և ի վաշխից և յանիրաւութեանց զտունս իւրեանց ամրացուցանեն...»[2]։

(«Այլև նրա մեջ տեղի ունեցած անիրավության ճարպից այրվում է բարձրաշեն ու գեղեցկահարմար ապարանքը և բոլոր շինությունները նմանվեցան հողաբլուրի. այն վաշխն ու նենգությունը, որ գոյություն ունեին նրանց մեջ, վերացավ։

Այս է բաժինը անիրավ քաղաքների, որոնք շինվում են օտարների արյունով և փարթամանում աղքատների քրտինքով և իրենց տներն ամրացնում են վաշխով ու անիրավությամբ»)։

Աշխարհիկ ֆեոդալներից ու վաշխառու-վաճառականներից բացի, աշխատավոր մասսաներին անողոքաբար շահագործում էին նաև հոգևոր ֆեոդալները, որոնք նույնպես վանքերում մեծ հարստություն էին կուտակել վերոհիշյալ դարաշրջանում։ Հարկ ենք համարում մեջբերել պատմագիր Արիստակես Լաստիվերտցու վկայությունը լրիվ, որը ցույց է

[1] Արիստակես Լաստիվերտցի, էջ 79—80։
[2] Նույնը, էջ 166—167։

տալիս Արծն քաղաքի հին կյանքը ի հակադրություն նոր և անիրավ կյանքին։

«Արդ սա յառաջինսն՝ մինչդեռ բարեացն առատութեամբ պսակեալ էր, ամենայն ինչ ըստ մտի էր սորա. և նման իմն էր նորահարսն կնոջ, որ գեղոյն վայելչութեամբ և զարդուցն պայծառութեամբ՝ ցանկալի գոլ ամենեցուն։

Բայց յորմէ հետէ մտին յեկեղեցիս մեր Սեքարայիք և պիհռոնացիք, և արդարութեան օրէնքն յանիրաւութիւն դարձաւ, և յարդի եղև արծաթասիրութիւն քան զաստուածասիրութիւն... յայնժամ ամենայն համեստութիւն կարգաց զառածեալ՝ յանկարգութիւն դարձաւ։ Իշխանք սորա գողակիցք եղեն գողոց, վրիժագործք և արծաթոյ ծառայք, դատաւորք սորա կաշառառուք և վասն կաշառաց գողանային զիրաւունս...»[1]։

(«Արդ նախնիների ժամանակ, երբ բարքերի առատությամբ լցված էր ամեն ինչ ցանկացածի պես էր և նման էր այն նորահարս կնոջ, որ իր վայելչությամբ ու զեղեցկությամբ և պայծառ զարդերով ցանկալի էր լինում բոլորին։ Բայց երբ մեր եկեղեցիները մուտք են գործում սեքարացիներ և պիհռոնացիներ և արդարության օրենքը փոխվում է անիրավության, արծաթասիրությունն ավելի հարգի է լինում, քան աստվածասիրությունը... այն ժամանակ բոլոր համեստ կարգերը փոխվում և վերածվում են անկարգության։ Սրա (Արծն քաղաքի) իշխանները դառել են գողերին ընկերակիցներ, վրիժառուներ և արծաթի ծառաներ, դատավորները դառել են կաշառակերներ և կաշառի համար իրավունքները գողացողներ (խարդախողներ)»։

Վերոհիշյալ մեջբերումից երևում է, որ Արծն քաղաքի իշխող ու շահագործող դասակարգերը գնալով այլասերվել են։ Պատմագիրն իր կրոնա-բարոյական ու խրատական դատողություններով աշխատում է իր ժամանակվա վատ ու արծաթասեր բարքերին հակադրել հին «առաքինի» բարքերը, նպատակ ունենալով մեղմացնել դասակարգային պայքարը։ Դասակարգային պայքարի սրումը, որը մեծ ծավալ էր ստացել 11-րդ

[1] Արիստակես Լաստիվերտցի, էջ 78—79։

դարի առաջին կեսում, հետևանք էր ապրանքա-փողային տնտեսության զարգացման և կալվածատերերի ծանր շահագործման։

10—11-րդ դարերի Հայաստանի տնտեսական կյանքը և քաղաքների զարգացումը իր մի շարք կողմերով, բացի բնակչության մեծ քանակից ու կառուցվածքից, նման են եղել նաև Արևմտյան Եվրոպայի 12—15-րդ դարերի քաղաքներին։ Ընդհանուր պատմությունից հայտնի է, որ Արևմտյան Եվրոպայում ռեֆորմացիայից առաջ տնտեսական կյանքի զարգացման, քաղաքների աճման, արդյունագործական և դրամային տնտեսության զարգացման շնորհիվ խարխլվում էին ֆեոդալական հասարակարգի հիմքերը, իսկ այդ հանգամանքն էլ առաջ էր բերել դասակարգային սուր պայքար Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում։ Նույն պրոցեսն ավելի թույլ, բայց կատարվում էր նաև Հայաստանում Արևմտյան Եվրոպայից երեք դար առաջ, այսինքն՝ 10—11-րդ դարերում։

Վաշխառուական կապիտալի կեղեքումների սաստկացումը, քաղաքների զարգացման հետևանքով ֆեոդալ-կալվածատերերի ճաշակի ու պահանջի ավելացումը և այդ հողի վրա նրանց շահագործման խստացումը ոչ միայն ուժեղացրել էին գյուղացիության հողազրկումը, այլև աշխատավոր ժողովրդի աղքատացումը հասցրել էին մեծ չափերի։ Արիստակես Լաստիվերտցու վկայությունից պարզ երևում է, որ մեծատուններն էին հափշտակում էին ուրիշների ունեցվածքը, և քաղաքներ շենանում ու փարթամանում էին տնակների արյան ու քրտինքի միջոցով։ Հողազուրկ և ընչազուրկ մասսան կուտակվում էր մեծ քաղաքների արվարձաններում և հանդիսանում էր ամենից ավելի անհանգիստ տարրը։ Այդպիսով, 10—11-րդ դարերում Հայաստանում ուժեղանում է դասակարգային պայքարը և դրա ապացույցները հանդիսանում են գյուղացիական շարժումներն ու ապստամբությունները նույն դարերում։ Իսկ այդ գործում պակաս դեր չեն խաղացել մեծ քաղաքներում կուտակված այդ անհանգիստ տարրերը։

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ-ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳԸ 9—11-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Արքունիքը ու պալատականությունը

9—11-րդ դարերի Հայաստանի քաղաքական պատմության բնորոշ կողմն այն է, որ Բագրատունիները աշխատում էին, ինչպես նշել ենք, ամրապնդել միապետությունը և պահպանել երկրի անկախությունը, բայց նրանց այդ ձգտումները հանդիպում էին ֆեոդալական ներքին տարրերի և արքա-բյուզանդական պետությունների ուժեղ դիմադրությանը։ Սակայն, չնայած այդ պայքարին, այնուամենայնիվ, Բագրատուններին հաջողվում է որոշ կայուն պետական կարգ հաստատել երկրում և պաշտպանել ֆեոդալական իշխող դասակարգերի ու վաճառականների շահերը։

9-րդ դարի վերջերից Բագրատունիների հաստատած պետական կարգը Հայաստանում, ինչպես Արշակունիների ժամանակ, բացարձակ միապետական էր, պետության գլուխը կանգնում էր թագավորը, որպես միահեծան դեկավար։ Նա իր ձեռքին էր պահում քաղաքական և զինվորական իշխանությունը։ Թագավորությունը, ինչպես Արշակունիների մոտ, դինաստիական ու ժառանգական էր, թագը հաջորդաբար անցնում էր անդրանիկ որդուն։ Սկսած Աշոտ Առաջինից Հայաստանում վերականգնվում է Արշակունիների թագավորության ժամանակի գործող ժառանգական կարգը։ Այդ պատճառով թագավորների եղբայրները չէին հաշվում վերոհիշյալ կարգի հետ և թագավորի մահից հետո առաջ էին բերում ներքին կռիվներ։

Ինչպես նշել ենք, Բագրատունիները սկզբում ձեռք են բերում իշխանի, ապա իշխանաց իշխանի և հետո էլ թագավորի ու արքայից արքայի տիտղոսներ։ Նրանք ամեն կերպ աշխատում էին վերականգնել հին Արշակունիների պետական, վարչական և ծառայական կարգերը։ Նախ վերականգնվում են հայ ֆեոդալական կարգին հատուկ «գահերեցության» իրավունքը, այսինքն՝ «բարձ ու պատիվը»։ 1001 թ. վիմական մի արձանագրության մեջ կարդում ենք. «Ես Աշոտ իշխանաց իշխան, որդի Գեոր... առն քաջի և պատերազմողի, հաւատարիմ եղեալ

տանս Հայոց, առ բարձ և պատիւ ի Արգոյ Շահնշահէ և յորդոց...»[1]: Թովմա Արծրունին այդ մասին վկայութիւններ շատ ունի: Բայց կարևոր ենք համարում մի հատված մեջբերել: «Իբրև եհաս թագաւորն (Սմբատ Բագրատունին—Հ. Հ.) յաշխարհն իւր՝ ետ բերել պարգևս և պատիւս Աշոտի ըստ իշխանական յօրինուածի, և զԳագիկ ձգեալ ի պատիւ զօրավարութեան Հայոց մեծաց, ըստ օրինի թագաւորացն Յունաց՝ տալ առաջի նորա նշաւակս խաչազրօշս: Եւ Գուրգինի նորին եղբօրն զպատիւ մարզպանութեան գահակալութեան հաւատացեալ, ըստ կարգի բարձաբերձութեան թագաւորացն Հայոց, մանաւանդ մեծին Տրդատայ թագաւորի»[2]: Վերոհիշյալ վկայությունները հաստատուն կովաններ են ցույց տալու, որ Բագրատունի թագավորները վերականգնել են հին «գահերեցության» իրավունքը:

Այնուհետև, Բագրատունիները արքունիքին կից վերականգնում են հազարապետության ու սպարապետության պաշտոնները: Սպարապետության պաշտոնը, որը առաջ ժառանգաբար վարում էին Մամիկոնյան տոհմի իշխանները, այժմ Բագրատունիները պահպանում են իրենց ձեռքում, որպեսզի պետությունն ավելի ամուր լինի: Այդ պաշտոնը վարում էր թագավորի եղբայրը և կամ թագաժառանգը: Սակայն, այդ կարգը փոխվում է Աբասի ժամանակ: Սկզբում սպարապետության պաշտոնն անցնում է Մարզպետունիների, ապա Պահլավունիների ձեռքը: Այդ կարգը փոխվում է այն պատճառով, որ սպարապետները հենված լինելով իրենց զինվորական ուժի ու հեղինակության վրա, ապստամբություններ էին բարձրացնում թագավորների դեմ: Գրեթե բոլոր Բագրատունի սպարապետները, սկսած Աշոտ Ա-ի ժամանակվանից, անխուսափելի ապստամբություն են բարձրացրել: Այդ հանգամանքը ստիպում է Բագրատունի թագավորներին, որ նրանք սպարապետության պաշտոնը նորից հանձնեն արքունիքին հավատարիմ հայ իշխանական մի տոհմի: Պատմական ոչ մի տեղեկություն չկա այն մասին, որ Մարզպետունի և Պահլավունի

1 Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, էջ 12:

2 Թովմա Արծրունի, էջ 384, ապա տես նաև 216, 230:

որևէ մի սպարապետ թագավորների դեմ բարձրացրել է ապստամբություն, ընդհակառակը, կան բազմաթիվ վկայություններ այդ տոհմերի սպարապետների՝ Բագրատունիների գահին նվիրված լինելու մասին: Պատերազմի ժամանակ ոչ միայն Բագրատունյաց Աշնիի, այլև Վասպուրականի, Սյունիքի, Վանանդի և Տաշիրի բոլոր թագավորների զորքերը ենթարկվում էին երկրի ընդհանուր հրամանատար-սպարապետին:

Հազարապետության պաշտոնի հսկողության տակ էին դրվում երկրի տնտեսության ու հարկերի կանոնավորման իրավունքն ու դեկավարությունը: Բագրատունիների թագավորությանը կից հիմնված էր նաև մարզպանի պաշտոն, որը չկար Արշակունիների ժամանակ: Մարզպանի պաշտոնը սկզբում վարում էին Պահլավունիները[1]: Այս պաշտոնը վարողի պարտականությունը լավ չեն լուսաբանել պատմիչները, բայց դատելով մարզպանների գործունեությունից, երևում է, որ այդ պաշտոնյաները վարել են երկրի արտաքին գործերը և Հայաստանը ներկայացրել են օտար պետությունների առաջ: Այսպես, օրինակ, Պահլավունի Ապլղարիպ իշխանը Կ. Պոլիս է գնում Սմբատ Երկրորդի կողմից հատուկ նպատակով, որպես դեսպան: Պատմիչները հիշատակում են նաև «տանուտիրության» պաշտոնը, որը վարում էր ամենագլուխ նախարարը, որպես թագավորի խնամակալ, վերակացու էր բոլոր նախարարների վրա: Թովմա Արծրունին այս բոլոր պաշտոնները՝ զորավարություն (սպարապետություն), հազարապետություն, մարզպանություն և տանուտիրություն, որակում է «պատիվ» տերմինով[2]:

Բագրատունիների թագավորության ժամանակ հիմնվում է նաև իշխանաց իշխանի պաշտոնը: Այդ պաշտոնավարը պատասխանատու էր թագավորի առաջ բոլոր վասալների կատարած գործերի համար: Իշխանաց իշխանին էին ենթարկվում երկրի մեծ ու փոքր պաշտոնյաները, հարկահավաքները և կարևոր բերդերի բերդապահները: Այս պաշտոնը սկզբում վարում էին թագավորների եղբայրները, 10-րդ դարի երկրորդ

1 Վիմական տարեգիր, էջ 19—21:

2 Թովմա Արծրունի, էջ 218, 346 և 384:

կեսից այն անցնում է Պահլավունիների ձեռքը։ Այսպիսով, Բագրատունիների ժամանակ արքունիքին կից կային հինգ գլխավոր պաշտոններ՝ սպարապետություն, հազարապետություն, մարզպանություն, տանուտիրություն և իշխանաց իշխանություն։ Բացի այս գլխավոր պաշտոններից, կային նաև արքունի գործակալություններ, ինչպես, օրինակ՝ մարզերի պետեր, կուսակալներ, գավառապետներ, քաղաքապետներ, տեղական նշանակություն ունեցող զորագլուխներ[1] և այլն, որոնք կառավարում էին երկրի մարզերն ու գավառները։ Նույնանման պաշտոններ կային նաև վասալ թագավորություններում, հատկապես Վասպուրականում և Սյունիքում։

Բագրատունիների թագավորությանը կից գործում էր նաև թագավորական խորհուրդը, որը կոչվում էր ավագանիների ժողով, բաղկացած խոշոր իշխաններից՝ խորհրդակցական իրավունքով։ Կային նաև խորհրդականներ։ Բայց չնայած ավագանիների խորհրդի, ու խորհրդականների առկայությանը, այնուամենայնիվ, թագավորի իրավունքները բացարձակ էին։ Նա էր վարում արտաքին քաղաքականությունը մարզպանության պաշտոնի միջոցով, կնքում առևտրական ու դիվանագիտական պայմանագրեր, նշանակում դեսպաններ, ընդունում արտաքին պետությունների լիազոր ներկայացուցիչներին։ Եվ վերջապես թագավորի ձեռքին էին գտնվում նաև պատերազմը հայտարարելու ու հաշտություն կնքելու, պետության եկամուտները տնօրինելու, իշխաններին կալվածներ, պաշտոններ և նվերներ շնորհելու, նրանց իրավունքներից, պաշտոններից ու կալվածներից զրկելու իրավունքները։ Այս բոլորը կատարում էին արքունի հրամանով, առանց դատ ու դատաստանի։ Թագավորն իրավունք ուներ իրեն չհնազանդվող նախարարներին ու իշխաններին բնաջնջել, նրանց կալվածները բռնագրավել և այլն։

Բագրատունիների արքունիքը կազմված էր զինվորականներից, զինվորական խորհրդից (տնից), իր թիկնապահներով ու Ոստանիկ գնդով և քաղաքացիական խորհրդից (տնից), իր բազմաթիվ պաշտոնյաներով ու խորհրդականներով։ Այս բո-

[1] Թովմա, էջ 210, 223, 339, 362, 369։

լորը մեծ շուք էին տալիս Բագրատունի արքաներին։ Ժամանակակից պատմագիր Արիստակես Լաստիվերտցին այսպես է նկարագրում Բագրատունիների թագավորների շքեղությունն ու պերճանքը։ Թագավորն երբ քաղաքից դուրս է լինում, նման է առագաստից ելնող փեսայի կամ թե ինչպես տունջկան արուսյակի, որ արարածների գլխից վեր բարձրանալով բոլորի աչքերը դեպի իրեն է քաշում. այսպես նա պաղպաջում էր փայլուն հանդերձներով և մարգարտախառն թագով, հրավիրելով, որ ամեն մարդ իրեն տեսնի և իրեն վրա զարմանա, ոսկեզօծ զարդերով, սպիտակամազ նժույգով, առաջ ընթանալով տեսնողների աչքերը շլանում էին նրա արեգակակերպ ճառագայթներից։ Իսկ զորքերի խառն բազմության առաջ ընթանալով նմանվում էր մեկ մեկու վրա դիզված ծովային ալիքների[1]։

Թագավորը ընդունում էր դեսպաններին, ղեկավարում ավագների խորհրդակցությունները, լսում արքունի խորհրդականներին, իրավաբաններին ու պաշտոնյաներին։

Բագրատունիների տոհմերն իրավունքը որոշ չափով թուլանում է 930—990-ական թվերին, բայց Գագիկ Առաջինի ժամանակ նորից վերականգնվում է, և Հայաստանի բոլոր վասալ թագավորներն ու իշխանները, էմիրներն անխտիր ենթարկվում էին Գագիկ Առաջինի հրամաններին։ Ֆեոդալական իրավունքի սովորույթներն ու նորմերը, ինչպես և թագավորների օրենքները, Բագրատունիների ժամանակ եղել են գրավոր, հավանաբար դրանց բովանդակությունը մտել է Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» երկրորդ մասի ապաջին հատվածի մեջ, որը կոչվում է «Յաղագս դատաստանաց թագաւորաց»։ Անի-Այրարատյան թագավորությունը հանդես էր գալիս համահայկական մասշտաբով և կաթողիկոսական աթոռն այնտեղ էր հաստատվում։ Ճիշտ է, Անի-Այրարատյան թագավորությանն ուղղակի ենթակա մնացին Շիրակի, Այրարատի, Բագրեւանդի (Ալաշկերտ), Գեղամա և Խաչենի, Փառիսոսի մարզերն ու գավառները, բայց Անի-Այրարատյան թագավորները հանդիսանում էին Վասպուրականի, Սյունիքի, Վանանդի, Տաշիր-Զորագետի և արաբական էմիրությունների սուվե-

[1] Արիստակես Լաստիվերտցի, էջ 56—57։

բեններ և կրում էին «շահնշահ, արքայից արքա Հայոց» տիտղոս, և առանց այդ արքայից-արքայի մյուս տեղական հայ թագավորները դահակալելու իրավունք չունեին: Նրանք իրավունք չունեին նաև դիվանագիտական հարաբերություններ հաստատել արտաքին աշխարհի հետ, այդ վերապահված էր միայն Անի-Այրարատյան թագավորությանը, որի թագավորներն օծվում էին, իսկ մյուսները՝ ոչ: Այս բոլորը ցույց են տալիս, որ Անի-Այրարատյան թագավորությունը գործում էր Հայաստանի մասշտաբով:

Հայաստանում հաստատված արաբական էմիրությունների մեծ մասը նույնպես ընդունում էր Անի-Այրարատյան թագավորների սուվերենությունը: Սակայն այդ էմիրությունների մեծագույն մասը 10-րդ դարի 2-րդ կեսին աստիճանաբար վերանում է: Օրինակ, վերանում են Դվինի, Գողթնի, Բերկրիի և Մանազկերտի էմիրությունները, այդ մարզերի հայ բնակչությունը ազատագրվում է օտար տիրապետությունից ու կեղեքումներից: Հայաստանի երբեմնի մայրաքաղաք Դվինը վերջնականապես ազատագրվում է 987 թ. և միանում Անի-Այրարատյան թագավորությանը: Այսպիսով Անի-Այրարատյան թագավորությունը, բացի տեղական լինելուց, նա միաժամանակ թագավորություն էր ամբողջ Հայաստանի համար:

Դատավարությունը

Պետության կարևոր նշանակություն ունեցող օրգաններից մեկը դատարանն է, որի միջոցով տիրող դասակարգը պաշտպանում էր իր շահերը: Դատական գործը, ինչպես նախորդ շրջաններում, նույնպես և Բագրատունիների ժամանակ վարում էին հոգևորականները: Նրանք էին լուծում ժողովրդի, իշխանների, թագավորների ու հոգևորականների միջև եղած վեճերը, կաթողիկոսների, եպիսկոպոսների և թեմական առաջնորդների միջոցով:

Շրջանային թեմական դատարանները քննում էին կրոնական, քրեական, հողային, սեփականատիրության, ժառանգության, ամուսնալուծության և քաղաքացիական այլ խնդիրներ ու հարցեր: Հայ եկեղեցական կանոններում և 11-րդ դարից հետո կազմված դատաստանագրքերում տեղեկություններ կան, որ շրջանային կամ գավառային դատարանների վճիռներից

դժգոհները կարող են բողոքարկել ավագ դատավորին: Այդ նշանակում է, որ բացի շրջանային կամ գավառական դատարաններից, եղել է նաև բարձրագույն ատյան, որ բեկանել կամ հաստատել է գավառական դատարանների վճիռները: Հավանական է, որ այդ բարձրագույն ատյանը կից է եղել արքունիքին:

Գավառական կամ շրջանային թեմական դատարանները զբաղվում էին ժողովրդի վեճերը լուծելով: Կաթողիկոսների վրա էր դրված թագավորների տան անդամների և թագավորների ու ֆեոդալ-իշխանների միջև եղած վեճերի լուծումը: Իսկ եպիսկոպոսները միջամտում ու լուծում էին ֆեոդալ-իշխանների տնային վեճերը:

Պետական ծանր հանցագործությունները քննվում ու լուծում էին գոնում արքունիքին կից բարձրագույն ատյանում, որին հավանաբար նախագահում էր թագավորը: Թեև դատարանների ու դատավարությունների մասին եղել են դրավոր եկեղեցական կանոններ, բայց դատավարությունը մեծ մասամբ վարվել է սովորութային օրենքներով: Բացի այդ, ֆեոդալ-իշխաններին վերապահված էր իրենց ենթական գյուղացիներին դատել: Նրանք շատ հաճախ տեղին-անտեղին և կամ թեփոքր հանցանքների համար պատժում ու տուգանքի էին ենթարկում գյուղացիներին:

Դատարաններն ու օրենքները կրում էին խիստ դասակարգային, դասային բնույթ: Ազնվականներին իրենց գործած հանցանքների համար սովորաբար ենթարկում էին տուգանքի կամ ապաշխարության, այնինչ գյուղացիներին ու քաղաքացիներին ենթարկում էին ծեծի, բանտարկության, պարտադիր աշխատանքի ու տուգանքի: Դա էր հին ու միջին դարերի հայկական դատարանների դասակարգային բնույթը:

Բանակը

Պետության ռազմական ու պաշտպանական միջոցը կազմում էր նրա բանակը: Արաբական տիրապետության ժամանակ հայ ռազմական ուժը խիստ թուլանում է: Խալիֆաթը թույլ էր տալիս հայերին պահել միայն 15000 հոգուց բաղկացած քրիստոնյա զորագունդ: Բայց երբ Հայաստանը ձեռք է բերում ինքնավարություն և Աշոտ Բագրատունին ստանում է իշխանաց իշխանի տիտղոս,

նա անմիջապես բանակի թիվը հասցնում է 40 հազարի, Սըմբատ Ա-ի օրոք բարձրանում է 60 հազարի, Աշոտ Գ-ի ժամանակ հասնում է 80 հազարի, իսկ Գագիկ Ա-ը այն հասցնում է 100 հազարի: Բանակի այդ թիվը մշտապես զենքի տակ չէր, նրա մեծ մասը հավաքվում էր պատերազմի ժամանակ կամ վտանգի դեպքում: Մշտական զորքի թիվը քիչ էր, նա հիմնականում կազմված էր ազատներից, որոնց զբաղմունքն այդ էր: Պատերազմի ժամանակ բանակի մեծ մասը հավաքում էին գյուղացիներից ու քաղաքային բնակչության ցածր խավերից, որոնց վրա էր ծանրանում երկրի պաշտպանությունն արտաքին թշնամիներից:

Հայկական բանակը կազմվում էր թագավորական և իշխանական գնդերից: Արքունի զորքերի թիվը հասնում էր 30—35 հազար զինվորի, մնացածը կազմում էր ֆեոդալ-իշխանների և մանր թագավորների զորագնդերը: Բանակը բաղկացած էր հեծյալ և հետևակ զորամասերից: Հեծելազորը, հայոց այրուձին, կազմում էր բանակի 1/3 մասը և հանդիսանում է բանակի հիմքը: Նա հիմնականում բաղկացած էր ազատներից ու կազմում էր հայոց ծանր ու թեթև այրուձին: Ծանր այրուձին ավելի լավ էր սպառազինված, ձին ու ռազմիկը զրահապատված էին: Բոլոր զինվորներն անխտիր ձախ ձեռքին կրում էին վահաններ: Հետևակը զուրկ էր զրահից ու սաղավարտից, նա ուներ միայն վահան:

Բանակը սպառազինվում էր նետ-աղեղով, նիզակով, գեղարդով (նիզակ), սրով, ավիճով, վաղրով և սակրով: Բանակն ուներ նաև ռահվիրաների գունդ, որի պարտականությունն էր բաց անել ճանապարհները և հսկել նրանց վրա: Խորանապահ գնդի պարտականությունն էր պահպանել բանակի ճամբարը, իսկ ռամկաց գնդի մի մասը ծառայում էր բանակին: Հայկական բանակը ռազմի դաշտում բաժանվում էր աղեղնաձև՝ աջ, ձախ թևերի ու կենտրոնի և վերջապահ, առաջապահ զորամասերի ու ռեզերվ գնդի: Հայաստանի թագավորներն ու իշխանները երկրի պաշտպանության համար կառուցում էին նաև ամրություններ, բերդեր, ամրոցներ և պարիսպներ:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 9—11-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

1. ԹՈՆԴՐԱԿՅԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ

Գյուղացիության շահագործման ուժեղացումը

Օտարերկրյա գավթիչների դեմ մղած համառ ու երկարատև կռիվների ու պատերազմների շնորհիվ 9-րդ դարի վերջին, ինչպես նշել ենք վերևում, երկիրը վերականգնում է իր դարերով կորցրած անկախությունը, բայց հաղթանակի արդյունքները վայելում են աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները: Արաբական խալիֆաթի ծանր լծի թոթափումից հետո աշխատավոր մասսայի շահագործումը տեղական ֆեոդալների ու շահագործողների կողմից չի թեթևանում, այդ պատճառով 9-րդ դարի վերջին և 10-րդ դարի առաջին քառորդին սրվում է ներքին դասակարգային պայքարը: Հայկական պետության վերականգնումից հետո արաբ իշխողներն ու հարկահավաքները հեռանում են Հայաստանից և հայ գյուղացիների անմիջական շահագործողները հանդես են գալիս հայ ֆեոդալները: Այդ պատճառով էլ պայքարը ավելի է դասակարգային սուր բնույթ ստանում:

Բագրատունիների թագավորության ժամանակ հայ ֆեոդալները, ինչպես ցույց ենք տվել նախորդ գլխում, իրենց կալվածները ընդարձակում էին ի հաշիվ գյուղական ազատ հա-

մայնքների, զրկելով նրանց հողից, հափշտակում նրանց տունն ու տեղը, անդաստանները, դնելով նրանց ծանր դրության մեջ։

Աշոտ Առաջինի և Սմբատ Առաջինի թագավորության տարիներին, ինչպես ասված է, երկիրն ապրում է համեմատաբար խաղաղության երկար մի շրջան։ Այն ժամանակաշրջանում Հայաստանի տնտեսական կյանքը բռնում է զարգացման ճանապարհը, որը միայն մի որոշ ժամանակ կանգ է առնում Յուսուֆ ոստիկանի արշավանքների պատճառով։ Աշխատավոր ժողովրդի դրությունն էլ ավելի է վատթարանում ծանր հարկերի գանձման հետևանքով, հարկեր տրվում էին մի կողմից խալիֆներին՝ Ատրպատականի ոստիկանների միջոցով, իսկ մյուս կողմից՝ տեղական ֆեոդալներին ու Բագրատունի թագավորներին։ Սմբատ Առաջինին հաջողվում է հարկն ուղղակի խալիֆին ուղարկել և մի քանի տարի էլ չվճարել։ Սակայն Ատրպատականի Յուսուֆ ոստիկանին հաջողվում է նախկին կարգը վերականգնել և խալիֆի հրամանով նորից Հայաստանից հարկ պահանջել, այն էլ անցած տարիների հարկերի հետ միասին։ Սմբատը Յուսուֆի հետ չընդհարվելու համար ստիպված է լինում համաձայնվել վճարել պահանջված հարկերը և հրամայում է բերքի 1/10-րդի փոխարեն հավաքել 1/5-րդը։ Այդ պատճառով դժգոհություն է առաջ գալիս ոչ միայն աշխատավոր մասսաների, այլև իշխանների միջև։ Ինչպես նշել ենք, այդ շրջանում միաժամանակ ավելանում է առևտրականների և վաշխառուների շահագործումը, որոնց օրըստօրե աճող տոկոսները պարտքի տակ են դնում գյուղացիների, արհեստավորների, նույնիսկ մանր ազնվականների մի մասին և նրանց աստիճանաբար զրկում ունեցվածքից ու հողակտորներից։ Հակասություններն ավելի են սրվում գյուղացիների ու ֆեոդալների միջև նաև նրանով, որ ֆեոդալների մի մասը փորձ է անում գրավել ազատ գյուղացիների հողերը և նրանց հեռացնել հողերից և կամ թե դարձնել կախյալ ճորտեր։ Այդ երևույթն առաջին հերթին տեղի է ունենում վանքերի կողմից։ Ոտնահարվում էին նաև մանր ազնվականների շահերը։

Աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների ու մյուս շահագործողների կողմից կեղեքվող ու հարստահարվող գյուղացիությունը

լուռ ու մունջ չէր կարող տանել այդ ամենը։ Նա ընդվզել ու պայքարել է իրեն հարստահարողների ու շահագործողների դեմ։ Հայ գյուղացիության պայքարը 9—11-րդ դարերում զըլխավորվել է թոնդրակեցիների կողմից։

Սմբատ Զարեհավանցին և թոնգրակեցիների շարժման առաջացումը

Թոնդրակեցիների շարժումը սկիզբ է առել 9-րդ դարի վերջին քաոորդին, Ծաղկոտն գավառի (այժմյան Դիադինի շրջան) Զարեհավան գյուղացի Սմբատի գլխավորությամբ։

874 թ. բյուզանդական կայսրությունը մեծ բանակի միջոցով, Քրիստափոր հայ զորավարի գլխավորությամբ, ամենադաժան կերպով վերջնականապես ճնշում ու վերացնում է պավլիկյանների երկարամյա շարժումը Հայաստանում և Փոքր Ասիայի արևելյան մասում։ Պարտությունից հետո այդ շարժման կողմնակիցների մի մասը սպանվում, մի մասը բռնի կերպով տեղափոխվում է դեպի Բալկանյան երկրները, մյուս մասը զինվորագրվում է կայսերական բանակում, իսկ մի մասն էլ շարժվում է դեպի Հայաստանի խորքերը և նախապայմաններ ստեղծում նոր շարժումների համար։

Թոնդրակյանների շարժման մասին աղբյուրներում պահպանվել են աղքատիկ և կցկտուր տեղեկություններ։ Թոնդրակյանների գրածները մեզ չեն հասել, որովհետև նրանց գրածները անխտիր այրել ու ոչնչացրել են տիրող դասակարգի ներկայացուցիչները։ Թոնդրակյան շարժման մասին մեզ տեղեկություններ են հաղորդում նրա հակառակորդները՝ տենդենցիոզ կերպով, այսինքն, մշտապես մեղադրելով շարժման մասնակիցներին։ Բայց և այնպես աղբյուրների այդ տենդենցիոզ ու կցկտուր տեղեկություններից էլ կարելի է պարզել թոնդրակյան շարժման դաղափարներն ու նպատակները։ Թոնդրակյան շարժման մասին տեղեկություններ են տալիս հայ պատմադիրներից հետևյալները.

Ա. Ասողիկ. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկն իր «Պատմութիւն տիեզերական» աշխատության մեջ։

Երկրորդ. Գրիգոր Նարեկացին, իր Թուղթով առ կճավա վանքի վանահորը, ուր քննադատության է ենթարկում թոնդրակեցիներին։

Երրորդ. Գրիգոր Մագիստրոսը իր մի շարք նամակներում, ուղղված իր ժամանակի ազդեցիկ հոգևորականներին:

Չորրորդ. Արիստակես Լաստիվերտցին իր «Պատմութիւն» աշխատության ԻԲ և ԻԳ գլուխներում, որը թեև խոսում է միայն Հարքի և Մանանաղի թոնդրակյանների երկու կազմակերպությունների մասին, բայց և այնպես որոշ տեղեկություններ է տալիս շարժման ու գաղափարախոսության մասին:

Հինգերորդ. «Բանալի ճշմարտութեան» ձեռագիր վիճակով գտնվող կանոնագիրքը, որ լույս աշխարհ է եկել 1830-ական թվականներին Շիրակ գավառի Արխվալի գյուղում, երբ այդ գյուղի անդամների որոշ մասը մեղադրվել է թոնդրակյան գաղափարներին հետևելու և աղանդին պատկանելու մեջ: «Բանալի ճշմարտության» կանոնագիրքը պատկանել է Արխվալի գյուղի համայնքի բնակիչներին, որոնք եկել և իրենց հետ են բերել Արևմտյան Հայաստանի Խնուս գավառից 1829—1830 թթ. գաղթողների հետ և բնակություն էին հաստատել Շիրակ (Ալեքսանդրապոլի) գավառի Արխվալի գյուղում: «Բանալի ճշմարտության» աշխատությունը հանդիսացել է Արխվալի գյուղի համայնքի դավանանքի կանոնագիրքը, որի հիշատակարանից երևում է, որ արտագրվել է 1781 թվականին մի ոմն Հովհաննես Վահագնունու ձեռքով: «Բանալի ճշմարտության» կանոնագրքի հիմնական մասերը 1880 թ. «Փորձ» ամսագրում հրատարակել է Ալ. Երիցյանը:

Եթե հաշվի առնենք, որ Խնուսը 11-րդ դարի սկզբին հանդիսանում էր թոնդրակյան շարժման գլխավոր կենտրոններից մեկը, անհավանական չի թվում մեզ, որ այդ շարժման հետևորդներն իրենց «Բանալի ճշմարտության» կանոնագրքով պահպանում են իրենց գոյությունը մինչև 19-րդ դարը, իսկ հետո տեղափոխվում են Շիրակի Արխվալի գյուղը: Նրանք անշուշտ վերափոխվելով և հարմարվելով նոր պայմաններին, վերափոխել և խմբագրել են նաև «Բանալի ճշմարտության» կանոնագիրքը:

«Բանալի ճշմարտության» կանոնագիրքը և թե վերը նշված աշխատությունները լրիվ կերպով պատկերացում չեն կարող տալ թոնդրակյանների գործունեության և գաղափարների մասին, որովհետև «Բանալի ճշմարտության» կանոնագիրքը դարերի ընթացքում շատ է փոփոխվել, իսկ ժամանակակից հեղինակներ լինելով պաշտոնական եկեղեցու սպասավորներ և իշխող դասակարգի իդեոլոգներ, չեն ուզեցել տալ նրանց գաղափարները, իսկ մյուս մասն էլ ուղղակի վախեցել է թոնդրակյանների գաղափարները գրի առնելուց:

«Բայց զնոցա մծղնէ զգործն անպատշաճ համարեցաք ընդ գրով արկանել,— գրում է Արիստակես Լաստիվերացին,— քանզի կարի աղտեղի է. եւ զի ոչ միայն ոք պնդակազմ է լսելեօք, բազմաց մեղացն յիշատակ՝ ի խորտանաս, ձգէ զլսօղսն, և ի կատարումն գործոյն իսկ ածէ. վասն այսորիկ և ես խոյս եառու յայնմանէ»[1]:

(«Բայց նրանց մծղնյա գաղրելի գործը անպատշաճ համարեցինք գրի առնել, որովհետև անտեղի է, և ամեն ոք լսելիքով պնդակազմ չէ, շատ մեղքերի հիշատակումը լսողներին գրգռում է և նույնիսկ գործել է տալիս, դրա համար էլ ես հրաժարվեցի նրանցից»):

Ինչպես տեսնում ենք, ժամանակակից պատմագիրը վախեցել է գրի առնել թոնդրակյանների ուսմունքն ու գործունեությունը և դնել հասարակության առաջ, որովհետև այդ ճանապարհով դարձյալ կարող էին թոնդրակյանների գաղափարները մուտք գործել ժողովրդի մեջ, հատկապես գրի չի առնվել թոնդրակյանների ծրագրի սոցիալական մասը:

Թոնդրակյան շարժման սկզբնավորման մասին պատմիչները և ուսումնասիրողները հայտնում են հակասական կարծիքներ: Ուսումնասիրողների մի մասը՝ Մ. Չամչյան[2], Բ. Սարգսյան[3], Լեո[4], և Ա. Հովհաննիսյան[5], հիմնվելով Գրիգոր Մագիստրոսի մի տվյալի վրա, ուր ասում է. «Բայց թողից զայս ամենայն. ասա ինձ, ո՛վ սիրելի, զմանիքեցւոցն որոյ Թոնդրակեցեացն, որ աւելի քան զերկերիւր ամ ապականեալ զաշ-

[1] Արիստակես Լաստիվերացի, էջ 162:

[2] Պատմութիւն Հայոց, հատ. Բ, էջ 884:

[3] Ուսումնասիրութիւն մանիքեա-պաղիկյան-թոնդրակեցիներու աղանդին, էջ 72—74, Վենետիկ, 1893:

[4] Հայոց պատմութիւն, հատ. Բ, էջ 474—479:

[5] Սմբատ Զարեհավանցին, նրա ժամանակն ու ժամանակակիցները, Բամբեր մատենադարանի, 3, էջ 7—30:

խարհս ամենայն...»[1] պնդում է, որ Մագիստրոսի գրած նամակի ժամանակաշրջանից, այսինքն՝ 1050 թվականից հաշվելով 2000 տարի առաջ, նշանակում է Սմբատի հանդես գալը ընկնում է 840—850-ական թվականներին, մոռացության տալով մյուս փաստերն ու քաղաքական հանգամանքները, իսկ մյուս մասը, Օրմանյան[2], Ս. Պողոսյան[3] և ուրիշներ, Բոնդրակյան շարժման սկզբնավորումը համարում են 880—890-ական թվականները, որ մեր կարծիքով վերջինս է ճիշտ։ Այս թեզը ապացուցելու համար մեջ ենք բերում եղած վկայությունները։ Ժամանակագրական կարգով առաջին տեղը պատկանում է Ասողիկին։

«Եւ յետ նորա նստի յաթոռ հայրապետութեան յՅԽԶ թուականին Տէր Հովհաննէս ի Դունայ, ճարտասան և պատմագիր՝ ամս ԻԲ։ Յաւուրս սորա երևեցաւ Սմբատ Բոնդրակաց առաջինն ի Զարեհաւան գեղջէ ի Ծաղկոտն գաւառէ հակառակ ամենայն քրիստոնեական կարգաց»[4]։

Այս մեջբերումից պարզ երևում է, որ Բոնդրակյան շարժման հիմնադիր Սմբատ Զարեհավանցին հանդես է եկել Հովհաննես Հինգերորդ պատմագիր կաթողիկոսի ժամանակ (897—929), այսինքն 890-ական թվականներին։ Այս մասին երկու կարծիք լինել չի կարող, որովհետև պատմագիրը տալիս է նույնիսկ թիվը (897)։

Ասողիկից հետո Բոնդրակյան շարժման սկզբնավորման մասին անուղղակի տեղեկություններ է հաղորդում նաև Գրիգոր Մագիստրոսը, նրա մի հատվածը մենք արդեն մեջ ենք բերել, ուր նշվում է, որ Բոնդրակյանների շարժումը տևել է երկու հարյուր տարի, բայց նա իր մի ուրիշ նամակում գրում է.

«Եւ փոխանակ երկից և երից բողոքելոյ՝ զհարիւր և զեօթանասուն ամ երեքտասան քահանայապետք Հայոց մեծաց, նուչնչափ և Աղուանից և բիւր եպիսկոպոսք և անթիւ քահանայք և սարկաւագունք բողոքեցին ձեզ և ոչ լուաք»[1]։

(«Եվ փոխանակ երկու երեք անգամ բողոքելու, հարյուր յոթանասուն տարի մեծ Հայաստանի տասերեք քահանայապետներ, նույնչափ էլ Աղվանից քահանայապետներ և բյուր եպիսկոպոսներ, անթիվ քահանաներ ու սարկավագներ բողոքեցին ձեզ, բայց չլսեցիք»)։

Ապա սրանից էլ առաջ Մագիստրոսը նշել է. «Պիղծն Սմբատ անիծեալն այն երևեցաւ յաւուրս տեառն Յովհաննէսի և Սմբատայ Բագրատունւոյ»[2]։

Վերջին հատվածից կարելի է եզրակացնել, որ Սմբատը հանդես է եկել Աշոտ Մսակերի որդի Սմբատ խոստովանող Աբլաբաս սպարապետի և Հովհաննես Օձայեցի կաթողիկոսի ժամանակ (833—855), ինչպես նաև Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսի (897—929) և Սմբատ Ա. Բագավորի-նահատակի ժամանակ (890—914)։ Բայց քանի որ Ասողիկը շեշտում է, որ Սմբատը հանդես է եկել պատմագիր Հովհաննես Դրասխանակերտցու ժամանակ, պարզ է, որ Սմբատի երևան գալը համընկնում է 890-ական թվականներին։ Գրիգոր Մագիստրոսի մեջբերած վկայության առաջին մասը, որը նրա՝ Ասորիքի՝ կաթողիկոսին ուղղված նամակի մի կտորն է, նախ հերքում է իր նախորդ տեղեկությունը Բոնդրակյան շարժման երկու հարյուր տարվա տևողության մասին, որը թյուրիմացություն է և ցույց է տալիս, որ շարժումը տևել է ոչ թե 200, այլ 170 տարի, իսկ այդ շարժման դեմ պայքարող 13 կաթողիկոսների անունները, եթե սկսենք Զաքարիա Ա. Զագեցի կաթողիկոսից, որը հաջորդել է Հովհաննես Օձայեցուն, մինչև իրեն Մագիստրոսի ժամանակի կաթողիկոս Պետրոս Գետադարձը, իրոք հերթականությամբ իշխել են 13 քահանայապետներ։ Բայց քանի որ նա Ասորիքի կաթողիկոսին իր նամակը գրել է 1050-ական թվականների սկզբին և (եթե 170 տարի հանենք 1050-ական թվականներից) պարզ է դառնում, որ Բոնդրակյան շարժումը սկիզբ է առել 880-ական թվականներին։

1 Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 65։

2 Ազգապատում, էջ 1068։

3 Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—13-րդ դարերում, էջ 366—379, Երևան, 1956։

4 Ասողիկ, էջ 160։

1 «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ 167, Ալեքսանդրապոլ, 1919։

2 Նույնը, էջ 153։

Որ Թոնդրակյան շարժումը չէր կարող առաջ գալ 840—850-ական թվականներին, Հովհաննես Օվայեցի կաթողիկոսի ժամանակ, այլ առաջ է եկել 880—890-ական թվականներին, դա միաժամանակ երևում է հետևյալ փաստարկումներից.

Առաջին. 840—850-ական թվականներին հայ ժողովուրդը մի շարք աչքի ընկնող իշխանների հետ ազատագրական ապստամբություն էր բարձրացրել արաբական խալիֆաթի դեմ և գոտեմարտի բռնվել արաբ զավթիչների հետ դարերով կորցրած իր անկախությունը վերականգնելու համար: Ուստի դասակարգային ներքին պայքարը սուր բնույթ չուներ Հայաստանում: Այն ժամանակ դեպքում ուղղված էր արտաքին իշխողների դեմ:

Երկրորդ. դասակարգային պայքարն ավելի սուր բնույթ է ստանում այն ժամանակ, երբ արտաքին լուծը թոթափվում է և ներքին շահագործողները կանգնելով իշխանության գլուխ, ավելի ցայտուն կերպով են դրսևորում իրենց շահագործումը, մի հանգամանք, որ Հայաստանում տեղի է ունենում 880—890-ական և ոչ թե 840—850-ական թվականներին: Այստեղից էլ պարզ երևում է, որ Թոդրակյան շարժումը և նրա հիմնադիր Սմբատ Զարեհավանցին հանդես են եկել 880—890-ական թվականներին, և այդ շարժումը տևել է 170 տարի ու հասել է մինչև 1050-ական թվականները: Ուստի ճիշտ չեն Մ. Չամչյանն ու նրա հետևորդները, երբ փորձում են Թոնդրակյան շարժման սկիզբը համարել 840—850-ական թվականները: Այսպիսով, Թոնդրակյան շարժումը կազմակերպվել է 880—890-ական թվականներին Սմբատ Զարեհավանցու գլխավորությամբ:

Սմբատը հավանաբար ծնվել է 850-ական թվականներին պատմական Հայաստանի Ծաղկոտն գավառի Զարեհավան գյուղում: Նրա սոցիալական ծագումը հայտնի չէ, միայն պարզ է, որ նա հոգևորական չի եղել, իսկ եթե ազնվական լիներ, պատմիչները կնշեին այդ հանգամանքը: Քանի որ սկզբնաղբյուրները լռության են մատնում այդ հանգամանքը, դրանից էլ պիտի եզրակացնել, որ նա եղել է ոչ ազնվական: Իր սկզբնական կրթությունը ստացել է տեղում, բայց Մագիստրոսի ասելով նա եղել է նաև Բյուզանդիայում, գուցե և արաբա-

պարսկական երկրներում, ապա վերադառնալով հայրենիք, 880-ական թվականներին իր շուրջն է համախմբում երկրի խորքերում ապաստանող պարտված պավլիկյանների մնացորդներին ու իր հավատարիմներին, կազմում է համայնք և բնակություն է հաստատում Ապահունյաց գավառի Թոնդրակ գյուղում, այդ գյուղի անունով էլ շարժումը կոչվում է Թոնդրակյան: Թոնդրակ գյուղի համայնքը, որը կազմված էր հավատարության սկզբունքի վրա, զինվում է իր ղեկավարի գաղափարներով, և այդ գաղափարները համայնքի անդամների միջոցով տարածվում էին շրջապատի և Այրարատյան նահանգի աշխատավոր բնակչության մեջ և ստանում է մեծ ժողովրդականություն:

Սմբատ Զարեհավանցին թեև աշխարհական էր, բայց հոգևորականներից ավելի լավ գիտեր կրոնական խնդիրները: Նա հավանաբար իմացել է հունարեն, պարսկերեն և արաբերեն լեզուները: Կարդացել է հունական մեծ մտածողների գործերը բնագրերով և զբաղվել է բնական ու փիլիսոփայական գիտություններով, եղել է իր ժամանակի զարգացած մարդկանցից մեկը: Եթե նա զարգացած անձնավորություն չլիներ, չէր կարող կազմակերպել ժողովրդի պայքարը ֆեոդալների դեմ և մշակել Թոնդրակյանների գաղափարախոսությունը: Սմբատ Զարեհավանցու կենսագրության մասին տեղեկություններ համարյա չկան, միայն Գրիգոր Նարեկացին անորոշ կերպով նշում է, որ նրան սպանել է տվել Ապահունիքի արաբ էմիր Ապլվարդը:

Թոնդրակյանների գաղափարները

Աղանդավորական-սոցիալական շարժումները Հայաստանում շատ հաճախ հանդես են եկել որպես տիրող ու շահագործող դասակարգերին ընդդիմադիր հոսանքներ: Այդ շարժումները հանդես են եկել ոչ միայն բացահայտ, այլև հաճախ վեր են ածվել ժողովրդական մեծ ապստամբության: Հայաստանում առաջ եկած աղանդավորական-սոցիալական շարժումներից մեկը հանդիսացել է 9—11-րդ դարերում առաջացած Թոնդրակյան շարժումը: Այդ շարժումը հիմնականում ուղղված էր հայ հոգևոր և աշխարհիկ ֆեոդալների ու վաշխառուական դասերի դեմ, պահանջելով նրանցից տնտեսական,

սոցիալական, քաղաքական և կրոնական ազատություն։ Աղբյուրները թոնդրակյաններին նմանեցնում ու կապում են Մանիքեյա, Մծղնյա և Պավլիկյան աղանդներին, որովհետև նրանց առաջադրած սկզբունքներն ու գաղափարները շատ նման են պավլիկյանների գաղափարներին ու առաջադրած խնդիրներին։

Ինչպես նշել ենք, մեզ ոչինչ չեն հասել թոնդրակյանների գրածներից, ուստի մեջ ենք բերում միայն այդ շարժման հակառակորդների՝ Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Մագիստրոսի և Արիստակես Լաստիվերտցու այդ մասին գրածները։ Մեջ ենք բերում հերթականությամբ.

1. «Թուղթ... Գրիգորի Նարեկացւոյ, զոր գրեաց ի հոյակապն ուխտն կճառայ, վասն կարծեացն անիծելոց թոնրակեանց...»։

«Բազում ինչ աստուածային և առաքելական, ամենայն ինչ ուրացեալ է ի նոցանէ և խափանեալ յաստուածային կարգաց։ Ձեռնադրութիւնն զոր Առաքեալքն ի Քրիստոսէ ընկալան։ Եւ հաղորդութիւն մարմնոյ նորա, զոր ասաց Առաքեալ, եթէ Զհացն Հաղորդութեան ճաշակելով, զնոյն ինքն զԱստուած միացեալ ի մարմնի ընդունիմք և ճաշակեմք, զոր Սմբատ՝ հասարակաց կերակուր՝ զսարսափելին վարդապետաց։ Եւ զծնունդն հոգևոր երկանցն՝ որ ի ջրոյ և Հոգւոյ, ծանուցեալ, թէ որդիս Աստուծոյ գործ է, ջուր ինչ լուալեաց զնոյն նոցին ուսուցք։

Արդ՝ զորս յայսցանէ զնոցա գիտեմք խափանեալս ոչ առաքելական կամ աստուածականս։ Ձձեռադրութեան խորհրդական պաղատանս, զոր ինքն արարիչն ամենայնի (Յիսուս Քրիստոս) խոնարհեալ կրկնեաց։ Թէ զաւազանն ուրացեալ ի նոցանէ, յորում ինքն Քրիստոս մկրտեցաւ։ Թէ զհաղորդութիւն անմահութեան, զոր ինքն Տէրն բոլորից ճաշակեաց։ Թէ զմծղնէական անխտիր պղծութիւնն, զոր Տէրն զհայեցուածն արգիլեալ խոտեաց։ Թէ զնշանն երկրպագեալ, զոր Աստուածն մարդացեալ՝ յուսն իւր բարձեալ կրեաց, իբր զփառս ինքեան և զիշխանութիւն։ Թէ զմարդապաշտ ուրացութիւնն, որ գարշելի է և անիծեալ քան զկռապաշտութիւն։ Թէ զինքաձեռն քամահանաց քահանութիւնն, որ սատանայի է նմանութիւն։ Թէ զպսակին ամուսնութեան անգոսնութիւնն... զպսակն անգոսնեն, և զոր սիրով մերձենան առ յիրեարս, կատարեալ սէր համարին և Աստուծոյ, և հաճոյ Քրիստոսի, թէ Աստուած սէր է, և զսիրով միաւորիլն կամի և ոչ զպսակ...։ Թէ որ զգլխաւոր աղանդին իւրեանց գարշութեան (զգլուխն) յանդգնեալ Քրիստոս անուանեն...»[1]։

(«Աստվածային ու առաքելական շատ բաներ նրանց կողմից ուրացված է, և հրաժարվել են աստվածային կարգերից։ Օրինակ՝ ձեռնադրությունից, որ առաքյալները Քրիստոսից ընդունեցին։ Նաև նրա մարմնի հաղորդությունից, որը առաքյալը համարեց, թե հաղորդության հացը ճաշակելով՝ նույն իրեն աստծուն մարմնի մեջ միացած ենք ընդունում և ճաշակում, որը Սմբատը համարում է հասարակաց կերակուր, որը սարսափելի է վարդապետների համար։ Եվ հոգևոր երկունքի ծընունդը, որ ջրից է և հոգուց իմացրեց, թե աստծու որդին է անում, նույնը նրանց սովորեցրեց իբրև լվանալիքի ջուր։

Արդ՝ սրանցից որոնք, որ նրանց կողմից խափանված ենք ճանաչում, առաքելական կամ աստվածային չէ։ Ծնեռադրության եկեղեցական խորհուրդներին հատուկ պաղատանքից, որը ինքը ամենքի արարիչը (Հիսուս Քրիստոսը) խոնարհվելով կրկնեց։ Թե նրանց կողմից ուրացված ավազանից, որով ինքն Քրիստոսը մկրտվեց։ Թե անմահության հաղորդությունից, որ ինքը բոլորի տերը ճաշակեց։ Թե մծղնեական անխտիր պղծությունը, որին նայելը տերը արգելելով մերժեց։ Թե երկրպագված նշանը, որը մարդացած աստված վերցրած իր ուսին կրեց իբրև իրեն փառք և իշխանություն։ Թե մարդապաշտ ուրացությունը, որ ավելի գարշելի է և անիծված, քան կռապաշտությունը։ Թե իր ձեռքով արված քահանայությունը, որ սատանայի է նման։ Թե ամուսնական պսակի արհամարհանքը... պսակը արհամարհում են, իսկ այն որ սիրով են մոտենում միմյանց, կատարյալ սեր են համարում և աստծուց, և հաճելի Քրիստոսին (ասելով) թե աստված սեր է, և սիրով միավորվելն

[1] «Գիրք թղթոց», էջ 498—499, Վաղարշապատ, 1901 և Բ. Սարգսյան, «Ուսումնասիրություն Մանիքա-Պավլիկյան Թոնդրակեցիներու աղանդին», Վենետիկ, 1893, էջ 108—111։

է կամենում և ոչ թե պսակով... Թե այն, որ իրենց գարշելի աղանդի գլխավորին հանդուգն կերպով Քրիստոս են անվանում»):

2. «Գրիգոր Մագիստրոսի թղթերը»:

«Սմբատն այն և որ զկնի նորա շունք և գայլք առանց քահանայութեան կերպիւ քահանայի, եկեալ ի գաւառէդ Ծաղկոտնէ ի գեղջէ Զարեհաւանէ, եկեալ բնակեցաւ ի Թոնդրակս և ուսուցանել սկսաւ զամէնայն չարիս բոլոր, զոր ինչ և կենցաղումս մտածութիւն կրէ, որ ըստ գործոց և ըստ հաւատոց թերութեանց: Եւ քարոզէր զբոլոր քահանայական ներգործութիւնս ոչնչացուցանել, մանաւանդ եթէ սնոտի վարկանել, և նստէր բազբազանօք իբրև զքահանայապետ. և ոչ իշխէր յայտնի եպիսկոպոսունս իւր ձեռնադրել կամ քահանայս կամ սարկաւագունս կամ օրհնութիւնս իւղոց, այլ ասէր ոչ այլ ինչ է այդ, բայց վասն խաբելոյ ժողովրդեանն, ի գաղտնի լուծելոց եպիսկոպոսացն են յարտաքսելոցն գիշերի զանարժան ձեռնադրութիւն ոչնչացելով առնեն, և զիւղն սրբազան, որ ի կատարապետողէ անտի բաշխի, խառնեալ իմն արհամարհելով զնա, և ծաղր առնելով, կատականս առնեն»[1]:

«..Եւ քարոզութիւն նոցա յերիս ձևս նշանակեալ ցուցանէ: Որք ի չարն կատարելագոյնք են և կարող են ընդունել զմահացու դեղն, այնոցիկ քարոզեն իբրև անյուսութեան ամենևևին և անաստուածութեան իբրև զէպիկուրեանցն, իսկ ոմանց նմանութեամբ Մանիքեցեացն, զորս անիծեն, բայց զնոյն գործեն, իսկ զոմանս իբրև քրիստոնէական աւանդութեամբ ուսուցանեն առ երես և ինքեանք ամենևին ոչ խոստովանէին, բայց զայն ևս այլանդակ իմն կարգաց և կրօնից քրիստոնէից»[2]:

«Որք ասէին, եթէ ոչ եմք նիւթապաշտք այլ աստուածապաշտ. և զխաչ և զկենդանի և զկեաս քահանայի և զպատարագագործութիւն՝ զայսոսիկ ոչինչ համարիմք...»[3]:

[1] «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ 153—154, Ալեքսանդրապոլ, 1910:

[2] Նույնը, էջ 158—159:

[3] Նույնը, էջ 157:

«Եւ, այս ինչ են անօրէնութիւնք չարագործացն այնոցիկ, ոչ պահք նոցա, եթէ ոչ երկնչին, հայտնի և ոչ խորութիւնք արանց ու կանանց և ոչ ընտանեաց, թէպէտև ոչ յայտնապէս համարձակին, և պատուեն և ոչ զմի ինչ՝ ոչ յաստուածայնոց և ոչ յեղելոց, այլ զամենայնն ծաղր առնեն՝ զհին և զնոր օրէնս»[1]:

(«Այն Սմբատը, որին հետևում էին շները և գայլերը, առանց քահանա լինելու, բայց քահանայի կերպարանքով, եկավ Ծաղկոտն գավառի Զարեհավան գյուղից և բնակվեց Թոնդրակում ու սկսեց սովորեցնել այն ամեն տեսակի չարությունները, ինչ որ այս կյանքում միտքը զորում է, այսինքն՝ ըստ գործի և ըստ հավատի բոլոր թերությունները: Քարոզում էր ոչնչացնել քահանայական բոլոր գործողությունները, մանավանդ որ սնոտի էր համարում. նստում էր իբրև քահանայապետ, բայց չէր համարձակվում իրեն համար բացարձակ եպիսկոպոսներ, քահանաներ կամ սարկավագներ ձեռնադրել և կամ յուղ օրհնել, այլ ասում էր այդ ոչ այլ ինչ է, եթե ոչ ժողովրդին խաբելու համար է, գաղտնի լուծում են եպիսկոպոսներին և գիշերում արտաքսում. ձեռնադրությունը ոչընչացնելով անարժան էին համարում, իսկ սրբազան յուղը, որ բաշխվում է արարողապետի կողմից, արհամարհելով ինչ որ ձևով խառնում էին և ծաղր ու ծանակի ենթարկում»:

«...Եվ նրանց քարոզությունը երեք ձևով է հանդես գալի: Նրանք, որոնք չարությամբ ավելի կատարյալ են և կարող են ընդունել մահացու դեղ, նրանց անհուսություն և բոլորովին անաստվածություն են քարոզում էպիկուրյանների նման, իսկ ոմանց էլ մանիքեցիների նման, ինչ որ անիծում են, բայց այն են կատարում: Ոմանց էլ քրիստոնեական ավանդությամբ առերես սովորեցնում են, բայց իրենք չեն ընդունում. բայց այդ էլ քրիստոնեական կրոնի ու կարգերի ինչ որ այլանդակություն է»:

«Ոմանք ասում են, թե մենք նյութապաշտ չենք, այլ աստվածապաշտ ենք, և խաչը, և եկեղեցին և քահանայի գգեստը, և պատարագագործությունը ոչինչ ենք համարում...»:

[1] «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ 160—161:

«Եվ հետևյալներն են այդ չարագործների անօրենությունները, պաս չեն պահում, չեն վախենում, խորություն չեն դնում տղամարդկանց ու կանանց միջև և ոչ էլ ընտանիքների, չնայած բացարձակ չեն համարձակվում, բայց ոչ մի բան չեն հարգում, ոչ աստվածային և ոչ էլ ստեղծված, այլ ամեն ինչ ծաղրում են թե հին և թե նոր օրենքները»)։

3. «Պատմութիւն Արիստակեսայ վարդապետի Լաստիվերացւոյ»։

«Չեկեղեցի և չեկեղեցւոյ կարգաւորութիւն բնաւ ոչ ընդունէին. ոչ զմկրտութիւն, և ոչ զմեծ և զսարսափելի խորհուրդ պատարագին. ոչ զխաչ և ոչ զկարգաւորութիւն պահոց։ Այլ մեք ճշմարիտ հաւատացեալքս սրբոյ երրորդութեանն՝ պինդ կալցուք զխոստովանութիւն անշարժ յուսոյն, զոր ուսաք ի սուրբ հարցն. և ի նոցա աստուածուրաց ժողովոյն ի բաց դարձուացուք զերեսս, անէծս ի վերայ նոցա առաքելով»[1]։

(«Եկեղեցին և նրա կանոնները երբեք չէին ընդունում, ոչ մկրտությունը, և ոչ պատարագի մեծ ու սարսափելի խորհուրդը, և ոչ խաչը և ոչ էլ պահոց օրենքը։ Այլ մենք ճշմարիտ հավատացողներս պինդ ու հաստատուն պահենք սուրբ երրորդության՝ հույսի խոստովանությունը, որ սովորեցինք սուրբ հայրերից և նրեններս հետ դարձննք նրանց աստվածուրաց ժողովից, անեծք թափելով նրանց վրա»)։

Կարևոր ենք համարում մեջ բերել նաև «Բանալի ճշմարտության» կանոնագրքից հոգևոր երարխիայի ժխտման եղած վկայությունը.

«Քահանայ, եպիսկոպոս, վարդապետ, առաքեալ, առաջնորդ և ընտրեալ ոչ են կամ փոքր ի վերայ միմեանց, այլ են հարթ հաւասար»[2]։

Վերոհիշյալ մեջբերումները թեև լրիվ չեն տալիս Սմբատի և նրա հաջորդների քարոզած գաղափարներն ու հետապնդած նպատակները, որովհետև ինչպես տեսնում ենք, մեծ մասը վերաբերում է կրոնական խնդիրներին, բայց և այնպես այդ անորոշ տեղեկություններից էլ կարելի է որոշ գաղափար

[1] «Պատմութիւն Արիստակեսայ Լաստիվերացւոյ», էջ 162, Թիֆլիս, 1919։
[2] «Փորձ» ամսագիր, № 10, էջ 125, 1880։

կազմել Թոնդրակյանների պայքարի ու քարոզած սկզբունքների մասին։

Նախ սկզբնաղբյուրների վերոհիշյալ տեղեկությունները Թոնդրակյաններին կապում են մանիքյա, մծղնյա և պավլիկյանների աղանդների հետ, մեր կարծիքով, դա միանգամայն համապատասխանում է պատմական իրականությանը, որովհետև Թոնդրակյանները պավլիկյանների նման շատ խիստ էին դեպի պաշտոնական եկեղեցին և կողմ էին բռնի հեղաշրջմանը։ Այդ պատճառով Թոնդրակյանների կազմակերպած համայնքները զինվում էին։

Երկրորդ, Գրիգոր Մագիստրոսը նշում է, որ Սմբատ Զարեհավանցին իր ուսմունքը—վարդապետությունը, սովորել է պարսիկ Մջուսիկ բժիշկ և աստղաբաշխ մոգի մոտ. «...Սմբատ անիծեալն այն երևեցաւ յաւուրս տեառն Յովհաննեսի և Սմբատ Բագրատունւոյ, ուսեալ զչար մոլութիւն յումեմնէ պարսկական բժշկէ և յաստղաբաշխէ մոգէ, զոր Մըջուսիկդ կոչէք»[1]։ Ինչպես ասել ենք, կարող է պատահել, որ Սմբատը եղած լինի Պարսկաստանում, Արաբիայում և Բյուզանդիայում, բայց մի բան պարզ է, որ նա իր ուսմունքը, որը հայ հողի ու մտքի ծնունդ է, սովորել է պավլիկյաններից։ Այդ պատճառով էլ Թոնդրակյանների քարոզած գաղափարները իրենց շատ կողմերով նման են մանիքյանների և պավլիկյանների գաղափարներին, բայց կրոնական խնդիրների ժխտման գործում ավելի առաջ էին անցել նրանով, որ մանիքյաններն ընդունում էին հանդերձյալ կյանքը, հոգու անմահությունը, մեղքը, մեղաց պատուհասը և այլն, իսկ Թոնդրակյանները չեն ընդունում։ Պավլիկյաններն ընդունում էին եկեղեցու որոշ խորհուրդները, հոգու անմահությունը, հանդերձյալ կյանքը, քարի աստծու ընձեռնած պարգևները և այլն, այնինչ Թոնդրակյաններն այդ ամենը համարում էին կեղծիք։ Քաղաքական և եկեղեցական օրենքներն ու օրենսդրությունները համարում էին բռնություններ, կողմ էին հավասարության։ Բայց չնայած դրանց, անշուշտ, Թոնդրակյաններն աղդվել են թե՛ նշված աղանդներից և թե՛ Բաբեկի—Խուրամյան շարժման գա-

[1] Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, էջ 153։

ղափարներից։ Հայ աղբյուրների և կղերա-բուրժուական պատմաբանների ու բանասերների նպատակն է եղել ցույց տալ, թե հայ եկեղեցին զերծ է եղել ներքին աղանդներից և նրա դեմ հանդես եկող ընդդիմադիր հոսանքները մշտապես Հայաստան են ներթափանցել դրսից։ Սակայն իրականում Հայաստանը նույնպես հանդիսացել է աղանդավորական-սոցիալական շարժումների հայրենիք, և հայ եկեղեցին նույնպես ենթարկվել է աղանդավորական հոսանքների դիմադրությանը։

Ժամանակակից մատենագիրներից մեջբերված վերոհիշյալ կցկտուր և անորոշ տեղեկություններից երևում է, որ Թոնդրակյաններն իրենց ծրագրի կրոնական մասում ժխտում էին պաշտոնական եկեղեցին և նրա բոլոր ծիսակատարությունները՝ հաղորդություն, մկրտություն, պսակ, խորհրդավոր ընթրիք, պատարագ, խոստովանություն, ապաշխարություն, զոհաբերություն (մատաղ), խունկ ծխել և այլն, համարելով դրանք կեղծ, ժողովրդին խաբելու միջոց։ Ապա ժխտում էին հանդերձյալ կյանքի գոյությունը, մեղքը և դատաստանը։ Թոնդրակյանները ի հակադրություն պաշտոնական եկեղեցու հայրերի, գտնում էին, որ երկնային կամ հանդերձյալ կյանք գոյություն չունի։ Հետևաբար, նրանք ժխտելով հանդերձյալ աշխարհի գոյությունը, գտնում էին, որ միակ կյանքը երկրայինն է։ Մարդը պետք է իր բոլոր բարիքներն ու վայելքները ստանա այդ երկրային ռեալ կյանքից, որից դուրս ուրիշ կյանք գոյություն չունի։ Ահա այս է եղել պատճառը, որ Մագիստրոսը Սմբատ Զարեհավանցուն և նրա հետևորդներին համարել է էպիկուրյաններ։ Այնուհետև ժխտում էին սրբերի պաշտամունքը և նրանց բարեխոսությունը, խաչի պաշտամունքը, Քրիստոսի աստվածային ծագումը, նախախնամությունը, ս. գիրքը, երրորդության գոյությունը, մեռելների հարության առնելը և հոգու անմահությունը։ Մերժում էին նաև հոգևոր երարխիան, քահանայական կարգը, եկեղեցու նվիրատվությունը և հոգևոր հայրերի իշխանությունը ստորինների վրա։ Ապա պահանջում էին, որ եկեղեցուն և հոգևորականներին հարկ և տուրք չվճարել։

Ելնելով վերոհիշյալ խնդիրներից մենք կարող ենք ասել,

որ Թոնդրակյանները պահանջում էին պաշտամունքի ավելի պարզ ձևեր, վերադարձը դեպի հին «առաքելական» եկեղեցին, երբ գոյություն չուներ աստիճանավորում, իսկ համայնքի անդամները հավասար էին. «Ամեն մի կրոնական շարժում,— գրում է Էնգելսը,— ձևական տեսակետից հետադիմական էր, այսինքն վերադարձ էր դեպի հինը, դեպի պարզը»։ Այսպիսով, Թոնդրակյաններն աշխատում էին վերականգնել վաղ շրջանի քրիստոնեությունը, ուր չկային հոգևոր կոչումներ ու աստիճաններ, եկեղեցու ճոխ ու բարդ ծիսակատարություններ, հոգևոր երարխիան, ուր համայնքի բոլոր անդամները ունեին միատեսակ պարտականություններ ու հավասար իրավունք։ Դարձ դեպի հինը թեև հետադիմություն էր, բայց դա միաժամանակ մի միջոց էր պայքար ծավալելու հղփացած հոգևոր վերնախավի դեմ։ Թոնդրակյան համայնքները թեև կազմակերպվում էին վաղ քրիստոնյա համայնքների ձևով, բայց Թոնդրակյան համայնքները նրանց նման պասսիվ չէին, այլ պայքարի կենտրոններ էին հանդիսանում և դուրս էին գալիս ֆեոդալական կարգերի դեմ մարտական պայքարով։

Այսպես, Թոնդրակյանները պաշտոնական եկեղեցու մեկնությունից բոլորովին նոր մեկնաբանություն էին տալիս քրիստոնեական վարդապետությանը, մերժելով նրա բոլոր պաշտամունքներն ու ծիսակատարությունները։ Թոնդրակյանների գաղափարախոսությունը միաժամանակ մի բողոք էր պաշտոնական եկեղեցու և մեծ չափերի հասնող ճգնավորական կյանքի դեմ։

Թոնդրակյաններն իրենց ծրագրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական բաժնում պահանջում էին եկեղեցուն և հոգևորականներին ոչ միայն հարկ ու տուրք չվճարել, այլև եկեղեցին ենթարկել արմատական ռեֆորմների, եկեղեցին, որպես առանձին ինստիտուտ, վերացնել ու նրա ունեցվածքը—գույքը բռնագրավել և բաժանել ժողովրդին։ Ժխտում էին խոշոր սեփականությունը և պահանջում հողի ու գույքի հավասար բաշխումը կազմակերպված համայնքների անդամների միջև։ Ֆեոդալական դասային արտոնությունների վերացում, ճորտ ու կախյալ գյուղացիների ազատություն և երկրում ընդհանուր հավասարության հաստատում, քաղաքական, կրոնական և

ֆողճի ազատություն։ Այնուհետև նրանք պահանջում էին քաղաքացիական ամուսնության, կնոջ իրավունքների հավասարեցում տղամարդուն։ Թոնդրակյանները մերժելով եկեղեցական պսակը, գտնում էին, որ տղամարդու և կնոջ ամուսնությունը պետք է տեղի ունենա ազատ սիրո սկզբունքի վրա։ Այդ պատճառով էլ պաշտոնական եկեղեցու ներկայացուցիչները և մատենագիրները ոչ միայն զրպարտել, այլև հազար ու մի լուտանք են թափել թոնդրակյանների գլխին, վարկաբեկել նրանց ժողովրդի առաջ, իբր թե նրանք կանանց նույնպես համարել են հանրային սեփականություն։ Ապա պահանջում էին տիրող կարգերի տապալումը։ Այն, որ նրանք առհասարակ ժխտում են իշխանությունը, ոչ միայն ուղղված էր եկեղեցու տիրապետության, այլև ֆեոդալական տիրող կարգերի դեմ։ Մագիստրոսի այն դրույթը, որ թոնդրակյաններն իրենց քարոզած գաղափարներով դուրս են գալիս հին ու նոր օրենքների դեմ, չի վերաբերում միայն եկեղեցուն, այլև աշխարհիկ իշխանությանը։

Ինչպես տեսնում ենք, թոնդրակյանների քարոզած գաղափարները, բացի կրոնական խնդիրներից, ընդգրկում են նաև սոցիալ-տնտեսական և քաղաքական հարցերը։ Վերոհիշյալ ծրագիրը բխում էր ոչ միայն գյուղացիության, այլև քաղաքային բնակչության ցածր խավերի շահերից։ Թոնդրակյաններն իրենց վերոհիշյալ ծրագիրը կենսագործելու համար պավլիկյանների նման, առաջ էին քաշում զինվելու և տիրող իրավակարգը բռնի տապալելու մեթոդը։ Թոնդրակյանների կազմակերպած համայնքների կառավարման սիստեմը հայտնի չէ, բայց մի բան պարզ է, որ աղանդապետը և բոլոր պաշտոնյաները ընտրովի էին։ Կանայք նույնպես կարող էին պաշտոն վարել։ Աղանդապետն իր ձեռքին էր պահում զինվորական ու քաղաքացիական բոլոր գործերը։

Թոնդրակյանների պայքարը իր սուր ծայրով առաջին հերթին ուղղվում է տիրող պաշտոնական հայ եկեղեցու և նրա սպասարկու հոգևորականության դեմ։ Դրա պատճառն այն է, որ հայ եկեղեցին ու նրա սպասարկու հոգևորականությունը գնալով տնտեսական ու քաղաքական մեծ ուժ էին դառնում 9—11-րդ դարերում։ Հայտնի է, որ սկսած 5-րդ դարի առաջին քառորդից, հայկական պետության անկումից հետո, հայ նախարարություններին և իշխանություններին համախմբելու, երկրի ներսում որոշ քաղաքական միավորում ստեղծելու և ֆեոդալական անջատ-անջատ իշխանությունների միջև միասնական կապ ստեղծելու դերը, ինչպես միջնադարյան Եվրոպայում, վերապահված էր եկեղեցուն։

«Ֆեոդալական սիստեմի խոշոր ինտեգրացիոնալ կենտրոնը հռոմեական-կաթոլիկ եկեղեցին էր։ Չնայած բոլոր ներքին պատերազմներին, նա միավորում էր ամբողջ ֆեոդալական Արևմտյան Եվրոպան՝ որպես մի մեծ քաղաքական ամբողջություն... Նա ֆեոդալական կարգը շրջապատել էր աստվածային օրհնության լուսապսակով։ Իր սեփական հիերարխիան նա հաստատել էր ֆեոդալական ձևով, և, վերջ ի վերջո, նա ամենախոշոր ֆեոդալական տիրակալն էր, որովհետև նրան էր պատկանում ամբողջ կաթոլիկական հողատիրության առնվազն մի երրորդ մասը։ Նախքան յուրաքանչյուր առանձին երկրում աշխարհիկ ֆեոդալիզմի դեմ պայքարի բռնվելը, անհրաժեշտ էր խորտակել նրա այդ կենտրոնական սրբազան կազմակերպությունը։ ...Ֆեոդալիզմի դեմ մղվող ամեն մի պայքար այն ժամանակ պետք է կրոնական զգեստավորում ընդուներ, ամենից առաջ եկեղեցու դեմ ուղղվեր»[1]։

Էնգելսի այս բնորոշումը թեև վերաբերում է կաթոլիկ եկեղեցու դերին Եվրոպայում, բայց նա միաժամանակ համընկնում է նաև հայ եկեղեցու խաղացած դերին։ Տվյալ դեպքում երկու եկեղեցիների տարբերությունը այն է, որ կաթոլիկ եկեղեցին ուներ ավելի շատ ընդարձակ կալվածներ ու քաղաքական մեծ ուժ, իշխելու Արևմտյան Եվրոպայի բոլոր պետությունների վրա և իր կամքը թելադրել այդ պետությունների բոլոր վեհապետներին, իսկ ինչ վերաբերվում է հայ եկեղեցուն, ապա նա ուներ ավելի փոքր ունեցվածք ու քաղաքական ուժ, բայց և այնպես ձգտում էր իր իրավունքները տարածել Հայաստանի բոլոր նախարարությունների ու իշխանությունների վրա։

Մենք արդեն նշել ենք, որ 10—11-րդ դարերում հայ աշ-

[1] Ֆ. Էնգելս, Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն, էջ 18—19, Երևան, 1953։

խաւաւոր մասսայի դրութիւնը լուրջ կերպով ծանրանում է ոչ միայն աշխարհիկ, այլև հոգևոր ֆեոդալների շահագործման հետևանքով։ Հայ եկեղեցին և նրա սպասարկու հոգևորականները այնքան էին հարստութիւն կուտակել, որ դարձել էին հայ աշխատավոր դասակարգին շահագործող ծավալման կազմակերպութիւններից մեկը, որն այդ պատճառով ենթարկվել է այն բոլոր քաղաքական ու գաղափարական հարձակումներին, որոնք ուղղված էին լինում տիրապետող ու շահագործող դասակարգերի դեմ։

«Ֆեոդալիզմի դեմ ուղղված ռևոլյուցիոն օպոզիցիան նկատվում է ամբողջ միջնադարի ընթացքում,— գրում է Էնգելսը։— Նայած ժամանակի պայմաններին, նա հանդես է գալիս մերթ իբրև միստիկա, մերթ որպես բացորոշ հերետիկոսութիւն, մերթ որպես զինված ապստամբութիւն»[1]։

Հայաստանում գյուղացիների ու կեղեքվող մասսաների ապստամբութիւնները, ընդվզումները և բողոքները տիրող ու շահագործող դասերի դեմ, կրել են կրոնական բնույթ, բայց մշտապես հանդիսացել են որպես հակամարտ դասակարգերի պայքար։

Հայ հոգևոր դասը միատարր չէր, նրա մեջ կային վանքերի կալվածքներից ու հարստութիւններից օգտվող կուսակրոն վանականներ և գյուղական ու քաղաքային քահանաներ ու քարոզիչներ, որոնք զուրկ էին նման իրավունքներից։ Հայաստանի կուսակրոն հոգևորականների երարխիան կազմված էր կաթողիկոսից, եպիսկոպոսներից, վանահայրերից և արեղաներից։ Հայ հոգևորականութեան այդ վերնախավը 5—11-րդ դարերում իր ձեռքում էր կենտրոնացրել վանքային հողային ընդարձակ տարածութիւնները, հարստութիւն և տիրում էր այդ հողերի վրա բնակվող որոշ կախյալ ու ճորտացած վիճակում գտնվող գյուղացիներին։ Այստև չենք խոսում Պետրոս Գետադարձ Արշարունի կաթողիկոսի ժամանակ կաթողիկոսարանի և Դավթուկ եպիսկոպոսի թեմի ընդարձակ կալվածների և հսկայական հարստութիւնների մասին։ Սրանց վրա պետք

[1] Ֆր. Էնգելս, Գերմանական գյուղացիական պատերազմը, էջ 47, Երևան, 1934։

է ավելացնել նաև բանադրանքներն ու անեծքները, հոգեփրկութիւնը, որոնցով դարեր շարունակ հայ հոգևորականութիւնը սպառնալիքներ էր կարդացել հայ շինականների և աշխատավոր մյուս խավերի հասցեին ու մեծ միջոցներ կուտակել այդ միջոցով։ Ահա սրանք էին այն գլխավոր պատճառները, որոնք միջնադարյան Հայաստանում դասակարգային պայքարը ծածկել են կրոնական քողով և այն ուղղել են առաջին հերթին հոգևոր դասի վերնախավի դեմ, որպես շահագործող դասակարգի կազմակերպութիւններից մեկի։

Թոնդրակյանները պայքարելով սոցիալական հավասարութեան համար, իրենց անձնական օրինակով ցույց էին տալիս նվիրվածութիւն, նյութական անշահախնդրութիւն, առաքինի բարքեր և անձնազոհութիւն։ Այսպիսով, Թոնդրակյանները ձգտում էին մի կողմից վերացնել սոցիալական անարդարութիւնը և մյուս կողմից վերակառուցել հասարակական կյանքը հավասար սկզբունքի վրա, կազմակերպած համայնքների միջոցով։ Նրանք համայնքները կազմակերպում էին հավասարութեան սկզբունքի վրա, առանց գույքի և ունեցվածքի տարբերութեան, առանց դասային արտոնութիւնների ու պաշտոնների։

Այսպիսով, ամփոփելով «Թոնդրակյանների գաղափարները» ենթագլուխը, եզրակացնում ենք.

1. Նրանք մերժելով սուրբ հոգու անմահութիւնը, հանդերձյալ կյանքը և ընդունելով միայն երկրային կյանքն ու ժխտելով դրանից դուրս ուրիշ կյանքի գոյութիւնը, կանգնում էին աշխարհը ճանաչելու մատերիալիստական աշխարհայացքի ուղու վրա։

2. Նրանք ժխտելով եկեղեցին, նրա ծիսակատարութիւնները, հիմնած կարգն ու կանոնը, ընդունած օրենքները, ծաղրելով հոգևոր և աշխարհիկ դասերի հին ու նոր օրենքները, կանգնում են եկեղեցին և նրա հոգևոր աստիճանավորութիւնները, երարխիան առհասարակ բացասելու և մերժելու ճանապարհի վրա։

3. Քարոզելով մարդու իրավահավասար իրավունքի գաղափարը, ունեցվածքի հավասար սկզբունքը, մերժելով ֆեոդալական դասային արտոնութիւններն ու օրենք-իրավունք-

ները, թոնդրակյանները կանգնում են հասարակությանը իրավա-տնտեսական տեսակետից հավասար սկզբունքով վերակառուցելու իրավունքի վրա։

2. ԳՅՈՒՂԱՅԻՆԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 10-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ

Գյուղացիական ապստամբությունները Այրարատում

Գյուղացիության շահագործումն ուժեղացնելու հետևանքով թոնդրակյան համայնքների գործունեությունը 10-րդ դարի սկզբին լայն ծավալ է ստանում։ Թոնդրակյաններին հետևում են ոչ միայն գյուղացիները, այլև արհեստավորները, մանր հողատերերը և հոգևոր դասի ցածր խավը։ 10-րդ դարի սկզբին թոնդրակյանների գործունեությունը մեծ ծավալ է ստանում Այրարատյան նահանգում և աստիճանաբար տարածվում է դեպի Սյունյաց նահանգը։

Գյուղացիական ելույթներն ու ապստամբությունները, թոնդրակյանների գաղափարների ազդեցության տակ, սկսելով Ապահունյաց գավառի Թոնդրակ գյուղից, տարածվում են դեպի հյուսիս—Այրարատ նահանգի Ծաղկոտն գավառը և աստիճանաբար բռնում են նաև Այրարատ նահանգի մեծ մասը։ Ապստամբ գյուղացիները թոնդրակյանների գլխավորությամբ ոչ միայն գրավում ու հրդեհում էին եկեղեցիների, վանքերի ու հոգևորականների ունեցվածքը, այլև հարձակվում էին աշխարհիկ կալվածատերերի ունեցվածքի ու դղյակների վրա։ Որ 10-րդ դարի երկրորդ տասնամյակում Այրարատում տեղի է ունեցել գյուղացիական ապստամբություն, երևում է ժամանակակից պատմագիր Հովհաննես կաթողիկոսի հաղորդած հետևյալ վկայությունից.

«Ազնվի նուաղունքն քան զմեծամեծսն ձեռներէց լինել ջանային, և ծառայքն ըստ Սողոմոնի հնարէին, զի զտեարս տրեխաւորեալ՝ ի գետնի գնացուսցեն և ինքեանք ելցեն յերիվարս ահիպարանոցս և առաքուր հարուղս՝ խրոխտացեալք և սոնքացեալք մեծաւ ապստամբութեամբ։ Իսկ թագաւորք մեր և պետք է իշխանք, զորս ի բնե նախարարութիւնքն էին՝ ջանային վարատել և խլել յիւրաքանչիւրոցն բնակութեանց, և ըստ

ախորժից իմն ձեռական և նոր ստեղծանել պայազատս սպասալարրս»[1]։

(«Այսպես, ստորինները աշխատում էին ավելի ձեռներեց լինել քան մեծամեծները, և ծառանները խրոխտալով, փքվելով և մեծ ապստամբություն բարձրացնելով՝ ըստ Սողոմոնի, հնարում էին, որ տերերը տրեխ հագնեն ու գետնի վրա ման գան, իսկ իրենք հեծնում էին ամեն ինչ ոտի տակ տվող երկարավիզ ձիերի վրա։ Իսկ մեր թագավորներին, պետերին և իշխաններին, որոնք բնիկ մեր նախարարություններն էին, աշխատում էին հանել և դուրս քշել յուրաքանչյուրին իր բնակությունից և ըստ իրենց ցանկության կարգել պատահական նոր պայազատներ և սպասալարներ»)։

Մեջ բերված հատվածից պարզ երևում է, որ «նվազունքները»՝ ծառաները, այսինքն՝ գյուղացիները, ավելի ձեռներեց են դարձել, քան մեծամեծները՝ իշխանները։ Նրանք բռնագրավում էին իշխանների ձիերը, հեծնում և ստիպում նրանց ոտքով քայլել իրենց առջևից։ Այնուհետև Հովհաննես պատմագիրը ավելացնում է.

«Այլև եղբայր ընդ եղբօր և ազգայինք ընդ ազգայինս ընդվզեալ ի նախանձ և ի չարակնութիւն և ի գրգռութիւն և ի կատարեալ ատելութիւն ընդ միմեանս բերեին։ Եւ այսպէս հալածագունդ ընդ միմեանս հարեալք՝ հակառակութիւն և ի կռիվ պայքարէին. և միշտ սուր յաղդեր ունենալով՝ բաղում ևս քան զիշնամիսն հեղուին ի միմեանց զարեան ճապաղիս. և առհասարակ զքաղաքս և զգիւղս և զաւանս և զագարակս, այլև զտունս իւրեանց քանդէին ձեռօք իւրանց...»[2]։

(«Այլև եղբայրը եղբոր դեմ և ազգակիցները ազգակիցների դեմ ընդվզելով նախանձ, չարակնություն, գրգռություն և կատարյալ ատելություն էին միմյանց նկատմամբ տածում։ Եվ այսպես բոլորը մի խումբ կազմած միմյանց ընդհարվելով, հակառակվում ու պայքարում էին, և միշտ սուրը կողքներից կախված, ավելի քան թշնամիներին միմյանց արյուն էին թափում, և առհասարակ քաղաքները, գյուղերը, ավանները, ագա-

1 Հովհաննես կաթողիկոս, էջ 258—259։

2 Նույն տեղում։

րակները, այլև իրենց տները իրենց ձեռքերով քանդում էին...»)։ Եվ կամ թե.

«...Եւ ապա խառն ընդ նոսին ևս աւազակք և սրիկայք ելին ի մարտս ընդ երկրի մերում. և բազում ինչ այն էր՝ որ ի նմանէ անցք ընդ աստուածաշէն եկեղեցիս անցանէին յեղծումըն և ի խոպանումն ու յապականումն վարակեալ»[1]։

(«...Եվ ապա նրանց հետ խառնված ավազակները և սրիկաները կռվի ելան մեր երկրում և ամենից շատ անցքեր սրանից աստվածային եկեղեցիների վրա կատարվեցին եղծումով, անպիտանությամբ և ապականությամբ վարվեց»)։

Վերոհիշյալ հատվածներից պարզ երևում է, որ իսկապես 10-րդ դարի երկրորդ տասնամյակում Այրարատ նահանգում ու Տուրուբերանի հյուսիսային շրջաններում տեղի է ունեցել գյուղացիական ապստամբություն, որն ընդգրկել է մի շարք գավառներ, քաղաքներ, գյուղեր և ավաններ։ Բայց կարող է պատահել, որ պատմիչը եղբայրասպան կռիվ ասելով նկատի ունի իշխանների միջև տեղի ունեցած խռովությունները և ոչ թե դասակարգային պայքարը։ Սակայն վերջին հատվածը, ուր նշվում է, թե «ավազակներ» և «սրիկաներ» մարտ էին մղում, պարզ ցույց է տալիս, որ պատմիչը նկատի ունի գյուղացիների պայքարը և անհավանական չի թվում մեզ, որ «սրիկաներ» և «ավազակներ» տերմիններն ասված լինեին թոնդրակյանների հասցեին, որովհետև աղբյուրները երբեք իշխաններին սրիկա կամ ավազակ չեն անվանում։ Այդ տերմինները դերազանցապես գործ են ածվում ցածր դասի նկատմամբ։ Հովհաննես կաթողիկոսի վերոհիշյալ մութ և անորոշ վկայություններից կարելի է եզրակացնել, որ այդ պայքարը Այրարատում եղել է դասակարգային պայքար, ուղղված եկեղեցու, նրա սպասարկու հոգևորականության և իշխանների դեմ։ Հետևաբար, այդ վկայությունները մեր առաջ բաց են անում քաղաքացիական կռվի մի տեսարան, որը կազմակերպել էին թոնդրակեցիները և գյուղացիներին ու քաղաքների արհեստավորներին դուրս բերել տիրողների դեմ։ Նրանք գրոհում էին պաշտոնական եկեղեցու, նրա սպասարկու հոգևորականների և աշխարհիկ

[1] Հովհաննես կաթողիկոս, էջ 256—257։

ֆեոդալների վրա և գրավում նրանց ունեցվածքը։ Ահա այս հանգամանքն է ստիպել հոգևոր պատմիչին, ելնելով իր դասակարգի շահերից, ասելու, որ ապստամբները եղբայրասպան կռիվ են մղում, չեն տարբերում «ազգակիցներին» թշնամիներից և, մշտապես իրենց ազդրերի վրա սրեր կրելով, թշնամիներից ավելի արյան վտակներ էին հոսեցնում։

Հովհաննես պատմագրի նկարագրած այս ապստամբությունը, որը մեծ ծավալ էր ստացել 914 թ., հավանաբար ճընշվել է 915 թ. հայ իշխանների ռազմական ուժերի միջոցով։ Իսկ Այրարատի ապստամբության ճնշումից հետո, ղեկավարների մի մասը, հավանաբար, անցել է Սյունիք՝ գլխավորելու այնտեղի գյուղացիների ապստամբությունը, որը 915—916 թթ. բռնկվել էր Տաթևի վանքի դեմ։

Գյուղացիական ապստամբությունները Սյունիքում

Գյուղացիական ապստամբությունները Սյունիքում ավելի սուր և տևական բնույթ են կրել։ Ստ. Օրբելյանի աշխատության մեջ եղած վավերագրերից երևում է, որ Սյունյաց աշխարհի վանահայրերի և եպիսկոպոսների գործունեությունը ոչ այնքան մտավոր և հոգևոր է եղել, որքան կալվածատիրական-տնտեսական։ Այդ եպիսկոպոսներն ու վանահայրերը մշտապես հոգ էին տանում՝ ընդարձակել և ցանկապատել վանքի կալվածները։ Այդ պատճառով իրենց կալվածները փոխանակելով և կամ ուրիշների սեփականությանը յուրացնելով, ամրողջացնում էին իրենց հողերը։ Բայց այդ գործն այնքան էլ հեշտ չէր։ Նրանք պետք է մի կողմից պայքարեին գյուղացիների, իսկ մյուս կողմից ազնվականների դեմ, որովհետև վերջիններս նույնպես կալվածատերերի շուրջ մեծ վեճեր ունեին եպիսկոպոսների հետ։ Եպիսկոպոսների գլխավոր պայքարն ուղղվում է գյուղացիության դեմ, որովհետև նրանք իրենց հողերի ընդարձակումն ու կլորացումը փաստորեն կատարում էին ազատ «հայրենատեր» գյուղացիների հաշվին, որի հետևանքով, ինչպես ասում է Ջավախիշվիլին, հոտի և հովվապետի միջև առաջ է գալիս «փոխադարձ թշնամություն և պայքար»[1]։

[1] «Նյութեր Հայաստանի սոցիալական շարժումների պատմության համար», Երևան, էջ 12, 1937։

Սյունյաց նահանգի հոգևոր կենտրոնը հանդիսանում էր Տաթևը, որի մինչև հիմա կանգուն մնացած վանքը կառուցվել է 895—906 թվականներին: Այդ վանքի կառուցումը պահանջում էր մեծամեծ ծախսեր, որոնք ընկնում էին շրջապատի աշխատավոր գյուղացիության վրա, որոնք իրենց կոռ ու բեգարով և նյութական միջոցներով կառուցում են այն: Բայց շրջապատի գյուղացիները տանում են այդ ծանրությունն առանց լուրջ տրտունջների: Դժգոհությունները գյուղացիների և եպիսկոպոսների միջև տեղի են ունենում հողի պատճառով: Ինչպես հայտնի է, մանավանդ Բագրատունիների ժամանակ, մեծ իշխանները վանքերին ու եկեղեցիներին հողեր էին նվիրում նրանց վրա ապրող գյուղացիներով:

Ստ. Օրբելյանի վկայությամբ Տաթևի վանքի շինությունն ավարտելուց հետո Բագրատունյաց թագավորությունը և Սյունյաց իշխանությունը մեծ քանակությամբ գյուղեր են նվիրում վանքին իրենց հողերով ու ջրերով, որոնց մի մասը գտնվում էր նրա շուրջը:

Տաթևի վանքին նվիրված գյուղերից հայտնի են Յողունին, Բնունին, Յուրաբերդը, Տանձատափը, Դեղձաձորը, Տամալեկը և Ավերադաշտը[1]: Վերոհիշյալ գյուղերի բնակիչները թեև ենթակա էին Սյունյաց իշխաններին ու Բագրատունյաց թագավորներին, բայց նրանք հանդիսանում էին որպես «հայրենատեր», այսինքն՝ համարվում էին հողի սեփականատեր[2]: Վանքի եպիսկոպոսները ստանալով սույն գյուղերը, որպես նվեր, աշխատում են այդ գյուղերի բնակիչներին տեղափոխել ուրիշ վայրեր և մաքրել վանքի շրջապատը բնակիչներից: Իսկ այդ քաղաքականությունը ձեռնտու չէր գյուղացիներին, նրանք դիմադրում էին և որի հետևանքով պայքար էր սկսվում գյուղացիների և վանքի հոգևորականության միջև, մի պայքար, որը վերջ ի վերջո վերածվում էր ապստամբության: Վանքի գյուղացիները 915 թ. յուրաբերդցիների գլխավորությամբ ապստամբություն են բարձրացնում և զիշերը զինված հարձակում են գործում վանքի վրա, սպանում են վանականներին և կողոպտում վանքի ունեցվածքը: Բայց ապատվում է վանահայր Հովհաննես եպիսկոպոսը, որը այդ օրը բացակայում էր վանքից: Նա իր թողած մի հրովարտակում գրում է. «Զի եհաս մեզ վրատանգ տագնապի ի չար յանաստուած ելուզակացն որ բնակեալ էին ի Յուրայ բերդ անուն քարին. որք յանկարծակի յարուցեալ ի վերայ յոգնաժողով եղբարցն ի գիշերի՝ կողոպտեցին զյարկս ամենայն, և զոմանս սպանին ի ծերոցն»[1]: Այս հատվածը ցույց է տալիս, թե գյուղացիների զայրույթը վանքի և նրա սպասարկու հոգևորականության դեմ որքան ուժեղ է եղել:

Ապստամբ գյուղացիներն իրենց հաշիվները վանքի հետ մաքրելուց ու վանականներին ցիրուցան անելուց հետո նախ փնտրում են Հովհաննես վանահորը, որպեսզի սպանեն, բայց չեն գտնում, ապա հարձակվում են վանականներին հովանավորող ազնվականների վրա: Սյունյաց Սմբատ իշխանը տեղեկանալով այդ դեպքի մասին, անմիջապես իր զինվորական ուժի միջոցով ճնշում է գյուղացիների ապստամբությունը, ցրում է յուրաբերդցիներին ու վերականգնում վանքի և նրա վանականների «ոտնահարված իրավունքները»: Բայց հարցը դրանով չի վերջանում: Հետագայում գյուղացիները նորից վերադառնում են իրենց տեղերը և կրկին անգամ պայքարում վանքի ու նրա նոր վանահոր՝ Հակոբ եպիսկոպոսի դեմ: Սա, որ ավելի ագահ էր, քան իր նախորդը, չի կարողանում պայքարով լուծել հարցը: 930 թ. դիմում է Սյունյաց իշխանին, վերջինս իր ռազմական ուժով զարձյալ ճնշում է գյուղացիների նոր ապստամբությունը, ցրում է նրանց և գյուղն իր հողերով ու ջրերով հանձնում վանքին: Տաթևի վանքի դեմ ակտիվ ու կատաղի պայքար են ծավալում նաև Ավելադաշտ գյուղի բնակիչները, որովհետև վանքի վանահայրը փորձում էր նրանց հողերը ևս գրավել: Բայց գյուղացիները համառ կերպով դիմադրում են ու նեղում վանքի տերերին. «...որք բազում ոճիրս գործէին և յոլով նեղութիւնս հասուցանէին եղբարցն և այլ շրջակայ սահմանացն»[2]: Ինչպես երևում է, ավե-

[1] Ստեփանոս Օրբելյան, էջ 229:
[2] Նույնը, էջ 230:

[1] Ստեփանոս Օրբելյան, էջ 248:
[2] Նույնը, էջ 257:

չաղաշտեցիները նեղություն են տվել ոչ միայն վանքին, այլև շրջակայքին, այսինքն ազնվականներին։ Վանահայրը նորից դիմում է Սյունյաց իշխանին և վերջինի ռազմական ուժով ճնշում է ավելադաշտեցիների ապստամբությունը, ավերում գյուղը, ցրում գյուղացիներին և նրանց հողերն ու ջուրը հանձնում վանքին։ Վերջինի դեմ դուրս են գալիս տամալեկցիները, որոնք, ինչպես Ստ. Օրբելյանն է ասում. «էր և հանդէպ վանիցն տեղի մի ապստամբանոց, որ Տամալէկս կոչէին. և բազում և մեծամեծ վիշաս և նեղութիւնս հասուցեալ էին վանիցն»[1]։ Իսկ Տամալիկ գյուղը տիրելու համար վանահայրը 1000 դահեկան գումար է տալիս Սմբատ իշխանին ու Սոփիա իշխանուհուն, որոնց միջոցով քշել է տալիս գյուղացիներին և այդ ճանապարհով միայն տեր դառնում այդ գյուղի հողերին ու ջրերին։ Յուրաբերդցիները ասստիկ զայրացած նոր վանահոր շարագործությունների վրա, մի օր ճանապարհին դարան են մտնում, բռնում և սպանում են չարագործ Հակոբ եպիսկոպոսին[2], ապա վերստին հարձակվում են վանքի վրա և կողոպտում այն։

Սպանված Հակոբ եպիսկոպոսի փոխարեն վանքի շահերի համար պայքար է մղում նոր վանահայր Գրիգոր եպիսկոպոսը։ Բայց սա նույնպես չի կարողանում սանձահարել ըմբոստ գյուղացիներին։ Վանահայրը դարձյալ դիմում է Սյունյաց Վասակ և Սևադա իշխաններին, ապա նրանց օգնությամբ վերջնականապես ճնշում է գյուղացիների ապստամբությունը, ցրում է նրանց և յուրացնում հողերը։ Այսպիսով, գյուղացիական ապստամբությունները, որոնք 90 տարվա ընթացքում ընդմիջումներով բռնկվում էին Տաթևի վանքի, նրա սպասարկու եպիսկոպոսների և վերջիններ պաշտպան իշխանների դեմ, վերջանում են գյուղացիների պարտությամբ։ Ապստամբները ցրվելով, զրկվում են իրենց հայրենական տուն ու տեղից և հողերից։ Բայց դա միաժամանակ ծանր է նստում իշխողների վրա, որովհետև վանքի հոգևորականների և որոշ իշխանների ունեցվածքը մի քանի անգամ կողոպտվում է, սպանվում

[1] Ստեփանոս Օրբելյան, էջ 270—271։

[2] Նույն տեղը, 250։

են մի շարք վանականներ ու եպիսկոպոսներ։ Այսպիսով, Այրարատի և Սյունիքի գյուղացիական ապստամբությունները թեև ճնշվում են, բայց ստիպում են հայ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներին որոշ չափով մեղմացնել իրենց սանձարձակ շահագործումն ու կամայականությունները։ Բայց խիստ հաճախանք են սկսվում Թոնդրակյան համայնքների դեմ, որպես գյուղացիության գաղափարախոսների։ Այդ պատճառով Թոնդրակյանների շարժումները և նրանց գործունեությունը Հայաստանում միաժամանակ թուլանում են։

3. ԹՈՆԴՐԱԿՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԷՏԱՊԸ

Թոնդրակյան շարժման նոր վերելքը Հարքում

Թոնդրակյանների շարժումները 10-րդ դարի առաջին քառորդին ծանր պարտություն կրելուց հետո միաժամանակ կանգ են առնում։ Նրանք ավելի քան երեք քառորդ դար այլևս ակտիվ գործողություն հանդես չեն բերում, գուցե բերել են, բայց տեղեկություններ չկան։ Միայն հայտնի է, որ նրանց կենտրոնատեղին՝ Թոնդրակը, իր գոյությունը պահպանում էր որպես Թոնդրակյանների ուսմունքի և գլխավոր համայնքի կենտրոն, ուր հերթականությամբ նստում էին նրանց առաջնորդներ Թորոսը, Անանիան, Արքան, Սարգիսը, Կյուրեղը, որոնք թե՛ գաղտնի, թե՛ բացահայտ գլխավորում ու ղեկավարում էին Թոնդրակյանների համայնքների գործունեությունը։ Թոնդրակյան շարժումն ավելի է ուժեղանում Կյուրեղի ժամանակ։

Թոնդրակյան շարժման երկրորդ էտապը տեղի է ունենում 10-րդ դարի վերջին և 11-րդ դարի սկզբին։ Այդ ժամանակաշրջանում հոգևոր և աշխարհիկ ֆեոդալական դասերի շահագործումն ավելի է խորանում։ Հոգևորականներն իրենց՝ «հանդերձյալ աշխարհի» մասին արած քարոզներով և բանադրանքներով զզվեցրել էին գյուղացիներին և արհեստավորներին, նույնիսկ քայքայվող մանր ազնվականներին։ Ահա այս է պատճառը, որ այս անգամ նույնպես աշխատավորների պայքարն առաջին հերթին ուղղվում է եկեղեցու և նրա սպասար-

կու հոգևորականների դեմ: Այս շրջանի թոնդրակյան շարժման գլխավոր ղեկավարը հանդիսանում է Հեսուն, որը նստում էր Թոնդրակ գյուղում և գլխավորում ամբողջ շարժումը: Բայց այս անգամ թոնդրակյանների շարժումները ծավալվում են Հայաստանի այն մարզերում ու գավառներում, որոնք գտնվում էին արաբական էմիրությունների և Բյուզանդիայի տիրապետության տակ:

Պատմական աղբյուրների հավաստի տեղեկությունները ցույց են տալիս, որ թոնդրակյան շարժումները մեծ ծավալով հանդես են եկել Սարգիս կաթողիկոսի ժամանակ (992—1019): Նրանք, բացի Թոնդրակից, նորանոր համայնքներ են կազմակերպում երկրի տարբեր մասերում և հանդես են բերում ակտիվ գործունեություն: Այդ նոր կազմակերպած համայնքների վայրերից հայտնի են Խնուսը՝ Մարդպղի գավառում, Կաշենը և Թուլայը՝ Մանանագի գավառում և ամբողջ Հարք գավառը: Այս վայրերի անունով էլ թոնդրակյանները կոչվում էին նաև խնուսցի, կաշենցի, թուլայցի և այլն: Բայց նրանց կենտրոնը դարձյալ մնում էր Թոնդրակ գյուղը:

Թոնդրակյանների սոցիալական շարժումը գնալով կրում է մասսայական-դասակարգային պայքարի լուրջ բնույթ, ընդգրկելով մի շարք գյուղեր, ավաններ, բերդաքաղաքներ, շրջաններ և գավառներ: Նրանց շարժումը մեծ անուն է հանում այն ժամանակ, երբ 1002 թ. թոնդրակյաններին է հարում Հարք գավառի Հակոբ եպիսկոպոսը, որն ուներ մեծ հարգանք ոչ միայն Հարքում, այլև երկրի մի շարք գավառներում, իր առաքինի վարքի պատճառով: Հակոբ եպիսկոպոսի մուտքը թոնդրակյանների շարքերը նոր երևույթ էր, որովհետև մինչև այդ նրանց շարժմանը չէին հարել բարձր հոգևորականներ, այն էլ պաշտոնյա: Նա թեև իր կապերը չէր խզել պաշտոնական եկեղեցու հետ, բայց իր գավառում այնպիսի կարգադրություններ էր անում, որոնք նման էին թոնդրակյանների գործելակերպին: Հակոբ եպիսկոպոսն իր գործունեությամբ և «քրձազգած պահեցող բոկագնաց» վարքով մեծ ազդեցություն է թողնում ժողովրդի, հոգևոր դասի ցածր խավի և նույնիսկ որոշ իշխանների վրա.

«Յակոբոս եպիսկոպոս ոմն որ ունէր զվերակացութիւն

եկեղեցեաց տանն Հարքայ,— գրում է Արիստակես Լաստիվերացին,— սա ի սկզբան իւրոյ իշխանութեանն առաքինական կերպարանս յանձին ցուցանէր. քրձազգած, պահեցող, բոկագնաց. և ընտրեաց իւր քահանայս, որ յար ընդ ինքեան շրջէին, խոշորազգեստս և անպաճոյճս, հատեալս ի հեշտալի կերակրոց...: Եւ այսու կերպարանօք ի զարմանս շարժեաց զհետաւորս և զմերձաւորս, և ամենայն որ ցանկայր գնա տեսանել, և որք յոյժ վիսացեալք էին ամբարտաւանութեամբ վասն իշխանութեան, այնքան ետուն ի հնազանդութիւն նմա զանձինս, որ թէ և զհոգիս հանել հրամայէր՝ չէր ոք որ ընդդիմանայր, և կամ իշխէր բանալ զբերանն և ճիկ հանել»[1]:

(«Հարք գավառի եկեղեցիների վերակացուն էր Հակոբ անունով մի եպիսկոպոս, որն իր իշխանության սկզբում առաքինի վարք էր ցույց տալիս, հագնում էր քուրձ, պահում պահք, շրջում բոկոտն և իր համար քահանաներ ընտրում, որոնք միշտ իր հետ էին շրջում, հագնում կոշտ ու անպաճույճ շորեր, իրենց զրկում համեղ կերակուրներից...: Եվ այս կերպով զարմացնում էր հեռավորներին ու մերձավորներին և ամեն մարդ ցանկանում էր տեսնել նրան. և որոնք իշխանության շնորհիվ ամբարտավանությամբ շատ էին գոռոզացել, այնքան էին հնազանդվել նրան, որ եթե նրանց հրամայեր հոգիները հանել, ոչ ոք չէր հակառակում և կամ ձայն ու ծպտուն հանել և բերանը բանալ»):

Մեջ բերված վկայությունը ցույց է տալիս, որ Հարք գավառի վերակացու Հակոբի համբավը մեծ է եղել, նա իր ետևից տարել է ամբողջ գավառի բնակչությանը: Ճիշտ է, Լաստիվերացին ավելացնում է, որ «կեղծաւորութիւն էր այն, և ոչ ճշմարտութիւն», բայց այստեղ ոչ մի կեղծավորություն էլ չի եղել: Հակոբը ուղղակի հետևելով թոնդրակյաններին, պաշտպանել է ժողովրդի շահերը, այդ պատճառով էլ նրան ոչ միայն հնազանդվել են, այլև հարգել ու սիրել: Հակոբ եպիսկոպոսն իր քարոզներով ու կարգադրություններով ոչ միայն իր կողմն էր գրավում ռամիկ ժողովրդին, այլև որոշ իշխաններին, որովհետև վերջինների կալվածների մի մասը տարբեր

[1] Արիստակես Լաստիվերացի, էջ 142—143:

հղանակով նույնպես անցնում էր վանքերին: Նա արգելում էր քահանաներին ժամերգություն ու պատարագ կատարելու, ծաղրում էր բարեպաշտական արարողություններ, մեղավորներին թողություն տալը, պատարագների թիվը կրճատում և թույլ է տալիս տարին միայն երեք անգամ պատարագ կատարել, համարյա այն դաղափարներն ու սկզբունքները, որ քարոզում էին Թոնդրակյանները: Արիստակես Լաստիվերտցու ասելով նրա գաղափարները քաղցկեղի նման վարակում էին բոլորին, որպես ապականիչ թույն:

Հակոբ եպիսկոպոսի գործունեության ընթացքը քննելու համար, Տարոնում ժողով է գումարվում, բայց նա ներկայանալով ժողովին հերքում է իր մասին եղած մեղադրանքները և արդարանում, մանավանդ որ գավառի ազնվականները պաշտպանում են նրան[1]: Սակայն դրանից հետո Հակոբ եպիսկոպոսի գործունեությունը կանգ չի առնում: Նա իր հետևորդներով շարունակում է ժողովրդին ոտքի հանել պաշտոնական եկեղեցու դեմ և կազմակերպել է տալիս Թոնդրակյան նոր համայնքներ: Սակայն Հարքի Թոնդրակյանների մեջ շուտով առաջանում է երկպառակություն: Հակոբի հետևորդներից մեկը՝ կարիներցի Եսայի արեղան, իր կողմն է գրավում որոշ մարդկանց, նախ դուրս է գալիս Հակոբի դեմ և, երկրորդ, գնում է Սարգիս կաթողիկոսի մոտ, բողոքում և մեղադրում է Հակոբին, որ նա հեռացել է լուսավորչական «ուղիղ» դավանանքից և դարձել է Թոնդրակեցի: Կաթողիկոսը հաշվի առնելով Հարքի Թոնդրակյանների շարժման վտանգավորությունը, անմիջապես նույն գավառում, իր ղեկավարությամբ, 1004 թ. ժողով է գումարում, Հակոբ եպիսկոպոսի և նրա հետևորդների «աշխարհավեր» գործունեությունը քննելու համար: Ժողովականները պահանջում էին եպիսկոպոսից, որ նա ներկայանա ժողովին և տա բացատրություն: Հակոբը խույս է տալիս և չի ներկայանում: Բայց վերջինս խիստ որոշում է հանում նրա մասին, որպես ժողովրդին «մոլորեցնողի»: Նրան ձերբակալում, նախ զրկում են հոգևոր կոչումից, ապա դատում և ազվեսադրոշմ խարանելով դեմքին՝ ման են ածում փողոցներում

[1] Լաստիվերտցի, էջ 148:

ու հրապարակներում, իսկ վերջում էլ բանտարկում են: Այնուհետև Հարք գավառի և Խնուսի Թոնդրակյան համայնքները ցրում են և հալածում, մի մասին էլ դարձի բերելով, նորից «մկրտում» են: Սրանով էլ վերջանում են Հարքի և նրա շրջակայքի Թոնդրակյանների շարժումները, որոնք հիմնականում ուղղված էին պաշտոնական եկեղեցու դեմ:

Իսկ ինչ վերաբերում է Հակոբին, ապա նրան հաջողվում է փախչել բանտից, գնում է Կ. Պոլիս, փորձ է անում այնտեղ դառնալ հունադավան, բայց, մերժում ստանալով, վերադառնում է Թոնդրակ: Սակայն Թոնդրակեցիներն այս անգամ նրան այլևս չեն ընդունում, որովհետև նա բանտից փախչելուց հետո փաստորեն լքել ու դավաճանել էր նրանց: Հեռանալով Թոնդրակից, նա գնում է Խլաթ, ապա այնտեղից անցնում է Նփրկերտ-Մուֆարղին և մահանում է այնտեղ լքված յուրայիններից՝ Թոնդրակեցիներից:

Թոնդրակեցիների գործունեությունը Մանանադի գավառում

Հարքի և Խնուսի Թոնդրակյանների նկատմամբ գործադրված հալածանքների աղանդավորական-սոցիալական շարժումները Հայաստանում կանգ չեն առնում: 1004—1011 թթ. Թոնդրակյան համայնքներն ավելի ակտիվ են գործում Մանանադի գավառում, հատկապես Շիրնի բերդաքաղաքում, Կաշե և Աղյուս գյուղերում՝ Կունծիկ արեղայի գլխավորությամբ, որին Արիստակես Լաստիվերտցին անվանում է «շնանուն-արեղայ» Աղվանից աշխարհից[1]: Հայաստանի այս գավառը այդ ժամանակ պատկանում էր Բյուզանդիային:

Թոնդրակյանների համայնքները կազմակերպվում են նաև Շիրակում, Մոկսում, Վասպուրականում, նույնիսկ Աղվանից աշխարհում: Աղանդապետներից բացի, Թոնդրակյան համայնքների ղեկավարներ եղել են՝ Հարքի Հակոբը, Մոկաց կճավա վանքի Մուշեղը, Մանանադի Կունծիկը, Շիրակի Ներսեսը, որը ենթարկվում է մահապատժի և ուրիշները:

Կունծիկ արեղայի կազմակերպած համայնքին համակրում ու հարում է մի ազնվական տիկին՝ Հրանուշ անունով,

[1] Լաստիվերտցի, էջ 151:

որի հետ էին միացել նաև երկու քույրերը, ազգականներից Ախնին ու Կամարպն։ Այս երկու քույրերը դառնում են հայտնի քարոզիչներ և կարողանում են իրենց եղբայր ու գավառի կառավարիչ Վրվեռ իշխանին դրավել իրենց կողմը և ծավալել մեծ գործունեություն ոչ միայն Շիրնի բերդաքաղաքում, Կաշենում, Աղյուսում, այլև գավառի մի շարք ուրիշ վայրերում ու Դարանաղի գավառում։ Վերոհիշյալ վայրերում Թոնդրակյաններն այնքան են ուժեղանում, որ փորձեր են անում հարձակվել եկեղեցիների ու նշանավոր սրբավայրերի վրա։ 1011 թ. հարձակվում են Բազմաղբյուր գյուղի Սուրբ խաչ սրբավայրի վրա և կործանում են այն։ Բազմաղբյուրի խաչը հանդիսանում էր Մանանաղի գավառի հոգևոր դասի աշխատավոր բնակչությանը շահագործելու խոշոր կենտրոնը։ Այդ էր պատճառը, որ առաջին հերթին է ենթարկվում կործանման։ Այդ դեպքը մեծ զայրույթ է առաջացնում հոգևորականների և ազնվականների շրջանում, որոնք մի նոր և ավելի մեծ հալածանք են սկսում Թոնդրակյանների դեմ։

Մանանաղի Թոնդրակյան շարժման առաջն առնելու համար գավառի եպիսկոպոս Սամվելը խիստ և անողոք պայքար է սկսում։ Օգտագործելով որոշ ֆեոդալների ռազմական ուժերը, հարձակվում են Թոնդրակյանների կենտրոնատեղիների վրա, անխնա թալանում ու հրկիզում են նրանց բնակավայրերը և ճնշում են այդ վայրերի շարժումները, բնակիչներին դուրս են քշում գյուղերից և այրում նրանց տները։ Նրանք թալանի են ենթարկում նաև իշխան Վրվեռի ունեցվածքը որպես Թոնդրակյաններին հովանավորող։ Այնուհետև, շարժման ակտիվ մասնակիցներից շատերին բռնում են ու ենթարկում տանջանքի, արտաքսման, բանտարկության, և վեց հոգու երեսին էլ Ջերմա գյուղաքաղաքում, որպես պարսավանք, աղվեսադրոշմ խարանելով ազատ են արձակում, որպես ավելի ծանր հանցանք ունեցողների։ Ապա բնակիչներից պահանջում են, որ Թոնդրակյանների հետ հարաբերություն չունենան։ Բայց գործը դրանով չի վերջանում։ Իշխան Վրվեռը, որը նույնպես խիստ տուժել էր, իր շուրջը համախմբելով Թոնդրակյանների մնացորդներին, շարունակում է պայքարը։ Նա

մինչև անգամ բողոքում է բյուզանդական կայսրության Սամվել եպիսկոպոսի չարագործությունների դեմ։

Բյուզանդական կայսրությունը Մանանաղի գավառում տեղի ունեցող պայքարը վերջ տալու համար այնտեղ է ուղարկում իր զորավարներից մեկին՝ Եղիային, որպես դատավոր։ Սա փոխանակ պատժելու հանցավոր եպիսկոպոսին ու նրա հետ միացած չարագործներին, ընդհակառակը, միանում է նրանց հետ և նոր ու ավելի անողոք հալածանք են սկսում Թոնդրակյանների, նրանց թվում նաև ազնվական տիկինների ու իշխան Վրվեռի դեմ։ Վերջինս հազիվ կարողանում է ազատել իր անձը, զրկվելով իր ունեցվածքից, որը թալանել էին եպիսկոպոսի կողմնակիցները։ Այդ դեպքերից հետո սկսվում է ֆեոդալական մութ ուժերի ընդհանուր գրոհը Թոնդրակյանների դեմ Հայաստանի հարավ և արևմտյան բոլոր մարզերում ու գավառներում, մանավանդ որ Թոնդրակյան շարժումը տարածվել էր Հյուսիսային Միջագետքում, Աղձորիքում և Փոքր Ասիայի արևելյան նահանգներում։ Այդ պայքարի ընթացքում իշխող և շահագործող դասակարգերը շարժումը վերջ տալու համար ոչ մի բանի առաջ կանգ չեն առնում։ Նրանք հալածում և պատժում են ոչ միայն մեծերին, այլև մինչև անգամ երեխաներին. (...որպէս և նախքան զմեզ բազում զօրավարք և պետք ի սուր սուսերի մատնեցին զնոսա և անողորմաբար ոչ խնայեցին ի ծերս և մանկունս,— գրում է Գրիգոր Մագիստրոսը,— որպէս արժան էր նաև մեր քահանայապետ ի կիղուսմն դիմաց և դրոշմ աղուէսակերպ...)[1]։

(«Ինչպես և մեղնից առաջ բազմաթիվ զորավարներ և պետեր սրի քաշեցին նրանց և անողորմաբար չխնայեցին ծերերին և երեխաներին, ինչպես արժան էր նաև մեր քահանայապետները կիզում էին նրանց դեմքերը և աղվեսակերպ դրոշմում»)։

Այս վկայությունը նախ ցույց է տալիս, որ շարժումը կրել է մասսայական բնույթ, և, երկրորդ, այն ճնշվել է դաժան ձևերով, առանց խնայելու նույնիսկ ծերերին ու երեխաներին։ Այդ ճնշումներից ու հալածանքներից հետո Թոնդրակ-

[1] Թղթերը, էջ 162։

յանների գրածները գտնելու և այրելու, նրանց կենտրոնատեղիների բնակիչներին կրկին անգամ մկրտելու, ինչպես նաև բանադրանքներ ու թողության թղթեր գրել տալու համար կազմվում են գրաքննական և «մոլորյալներին» մկրտելու հանձնաժողովներ։ Անհավանական չի թվում մեզ, որ Գրիգոր Նարեկացու և նրա ուսուցիչ Անանիա Նարեկացու մեղայական թղթերը գրված լինեն այդ առթիվ, մանավանդ, որ կճավար վանքը նույնպես մեղադրվել է թոնդրակյանների շարժմանը հարելու համար։

Այս հալածանքներից հետո թոնդրակյան շարժումը ավելի քան քառասուն տարի ապրում է տեղատվություն։ Թոնդրակյաններն այլևս ակտիվ գործունեություն հանդես չեն բերում, սղմվում են Թոնդրակում և երկրի խուլ անկյուններում, սպասելով հարմար ժամանակի։ Նրանց շարժման երրորդ էտապը տեղի է ունեցել 1047—1052 թվականներին։

4. ԹՈՆԴՐԱԿՅԱՆՆԵՐԻ ՇԱՐԺՄԱՆ ԵՐՐՈՐԴ ԷՏԱՊԸ

Թոնդրակյան շարժումների նոր վերելքը

1012—1045 թթ. Բյուզանդական կայսրությունը տիրելով Հայաստանի մեծագույն մասին, խոշոր իշխաններին ու նրանց ռազմական ուժերը տեղահան անելու և բնաջնջման քաղաքականություն վարելու հետ միասին, սկսած 1045 թվից վարում էր նաև երկրից ծանր հարկեր դանձելու և հայերի դեմ դավանաբանական հալածանքների քաղաքականություն։ Նույնիսկ Պետրոս Գետադարձ կաթողիկոսը, որ Անին դավաճանորեն հանձնողներից մեկն էր Բյուզանդիային, հալածանքների էր ենթարկվում քաղկեդոնական դավանանքը չընդունելու համար։ Այս հանգամանքները երկրի ներսում աշխատավորության մեջ առաջ են բերում նոր դժգոհություններ, ուղղված Բյուզանդիայի և նրանց կամակատար հայ իշխանների ու հոգևորականների դեմ։ Գյուղացիության այս նոր դժգոհությունները հնարավորություն են տալիս թոնդրակյանների գործունեության ընդարձակմանը։ Նրանք դարձյալ պարարտ հող են գտնում ժողովրդի մեջ, նրանց դժգոհությունները գլխավորելու և կրկին անգամ դուրս բերելու շահագործողների ու տիրապետողների դեմ։

Հարքի, Խնուսի, Մանանաղի, Շիրակի և այլ վայրերի թոնդրակյանները թեև ստացել էին լուրջ հարված, բայց և այնպես պահպանում էին իրենց գոյությունը Թոնդրակում և երկրի այլ մասերում, ինչպես նաև Հյուսիսային Միջագետքում։ 1047—1052 թթ. ժողովուրդը նորից է դժգոհություններ բարձրացնում, թոնդրակյանները դարձյալ անցնում են այդ դժգոհ մասսայի գլուխը և առաջ են բերում նոր շարժումներ ու ապստամբություններ։ Այդպիսով սկսվում է թոնդրակյան շարժումների երրորդ էտապը։

Թոնդրակյանների կենտրոնատեղին դարձյալ հանդիսանում էր Թոնդրակ գյուղը, որին Գրիգոր Մագիստրոսը «շնավան» է կոչում, իսկ աղանդապետին, որ այդ ժամանակ Դադարն էր, անվանում է «շեկ շուն»[1]։ Թոնդրակյան քարոզիչները նորից դուրս են գալիս Թոնդրակից և տարածվում երկրի կենտրոնական, հարավային ու արևմտյան շրջանները և համարձակ կերպով ոտքի են հանում ժողովրդին թե՛ ներքին, և թե՛ արտաքին թշնամիների դեմ։ Թոնդրակյանների գործունեությունը լայն ծավալ է ստանում Այրարատ նահանգի հարավային գավառներում, Խնուսում, կաշենցիներն ուժեղանում են Մանանաղիում, իսկ թուլայլցիները՝ Հյուսիսային Միջագետքում։ Այս վայրերը այդ ժամանակ բոլորն էլ գտնվում էին Բյուզանդիայի տիրապետության տակ, որոնց կառավարիչ դուքսը Վասպուրականի, Բերկրիի, Մանազկերտի, Տարոնի և Հյուսիսային Միջագետքի կուսակալ և զորքերի հրամանատար Վասակի որդի Գրիգոր Պահլավունին (Մագիստրոսը) էր[2], որն ուներ փիլիսոփայի, բժշկի, լեզվաբանի ու աստվածաբանի համբավ։ Թոնդրակյաններն անցնելով դժգոհ գյուղացիության գլուխը, իրենց հին եղանակով նորից հարձակվում են եկեղեցիների, վանքերի, կալվածատերերի դղյակների, պալատների ու բյուզանդական պաշտոնյաների վրա։ 1047—1052 թթ. գյուղացիական ելույթները թոնդրակյանների գլխավորությամբ դնալով սպառնալից բնույթ են ստանում և լուրջ վնաս են հասցնում ոչ միայն հայ, այլև բյուզանդական տիրապետողներին ու շահագործողներին։ Այդ պատճառով բյուզան-

[1] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 166։

[2] Թղթերը, էջ 313։

դական կայսրությունն ուշադրություն է դարձնում վերոհիշյալ վտանգավոր շարժման վրա և հանձնարարում է իր Հյուսիսային Միջագետքի դուքս ու զորքերի հրամանատար Գրիգոր Մագիստրոս Պահլավունուն և հայ իշխաններին, ճնշելու այդ շարժումները։

Թոնդրակյան շարժումներն այս երրորդ էտապում ճեղքվում և բաժանվում են երկու թևի՝ արմատականների և չափավորների։ Չափավորների հոսանքը դեռ հանդես էր եկել շարժման երկրորդ էտապում, երբ նրա մեջ մուտք են գործում հոգևորական բարձր խավի ներկայացուցիչներ։ Նրանց նպատակն էր որոշ բարեփոխումներ կատարելով փրկել պաշտոնական Եկեղեցին մասսաների ընդվզումներից, այնինչ արմատականները պայքարում էին այն ծրագրի կենսագործման համար, որ իր ժամանակին կազմել էր շարժման հիմնադիր Սմբատը։ Չափավորների հոսանքը գնալով հեռանում է թոնդրակյաններից և վերջ ի վերջո բռնում դավաճանության ուղին։ Այդ հոսանքի պարագլուխներ Պողիկարպոսը և Նիկանորան անցնելով թշնամու կողմը, դեռ Գրիգոր Մագիստրոսը Հայաստան չմտած, հայտնում են նրան թոնդրակյանների կենտրոնները ու գործունեության վայրերը։

Գրիգոր Մագիստրոսն օգտվելով չափավորների դավաճանությունից և նրանց ցույց տված օժանդակությունից, 1051 թ. մեծ բանակով Հյուսիսային Միջագետքից մտնում է Հայաստան։ Նա տեղական-բյուզանդական զորավարների, հայ իշխանների ու հոգևորականների գործոն օգնությամբ ձեռնամուխ է լինում թոնդրակյան շարժումների լիկվիդացման գործին։ Նա իր բանակով ուղղակի հարձակվում է Թոնդրակի վրա, որպես այդ շարժման կենտրոնի, որին անվանում է «շնավան» հիմնահատակ կործանում է այն, իսկ բնակիչներին էլ ցրում է։ Այդ մասին նա գրում է.

«Եւ բնակեալք էին Շնավանն այն արք հանդերձիւք կրօնաւորաց և կանանց բազմութիւն... որոց հրամայեցաք տապալել զհիմունսն յարկացն և հրձիգ առնել և զինքեանս հանել ի սահմանաց մերոց»[1]։

[1] Թղթերը, էջ 162։

(«Եւ բնակված էին մարդիկ այն Շնավանում կրոնավորական հանդերձավորությամբ կանանց բազմությամբ... հրամայեցինք հիմնահատակ անել տները և հրդեհել, իսկ նրանց դուրս քշել մեր սահմաններից»)։

Թոնդրակյանների դեկավար Ղազարը դիմում է ասորիների Պետրոս կաթողիկոսին և խնդրում նրանից օգնություն, բայց Գրիգոր Մագիստրոսն էլ իր հերթին մի նամակով դիմում է այդ նույն կաթողիկոսին և խորհուրդ է տալիս նրան, որ չպաշտպանի ու չհովանավորի նրանց. «...մի ողորմիցիս նոցա,— գրում է Մագիստրոսը ասորիների Պետրոս կաթողիկոսին.— և մի միաբանեսցիս, և մի՛ արասցես արժանի տուողեան»[1]։

Այնուհետև, նա նամակ է գրում նաև հայոց կաթողիկոս Պետրոս Գետադարձին, որ նա իր հոգևորականների ու հայ իշխանների միջոցով օգնի իրեն՝ հայտնաբերելու թոնդրակյանների վայրերը և ոչնչացնելու նրանց շարժումները։ Այդ օգնությունը ստացվում է, և Գրիգոր Մագիստրոսը կարողանում է Այրարատի և Տուրուբերանի թոնդրակյանների շարժումները լիկվիդացնել ավելի կարճ ժամանակում։ Դրանից հետո նա բանակով շարժվում է դեպի Թուլայլցիները, որոնք ասորիների հովանավորությամբ հզորանում էին Հյուսիսային Միջագետքում, որը նույնպես ենթակա էր Բյուզանդիային։ Մագիստրոսը համառ պայքարով ճնշում և ցրում է նաև թոնդրակյանների այս ճյուղը Միջագետքում[2] և ոչնչացնում նրանց բնակավայրերը։

Գրիգոր Մագիստրոսը վերջում դառնում է դեպի կաշենցիները, այսինքն Մանանաղի թոնդրակյանները, որոնք նույնպես ակտիվ գործունեություն էին ծավալել Տոփքում և Բարձր Հայքում։ Նա ցրում է նաև այլ վայրերի թոնդրակյաններին ու ոչնչացնում նրանց բնակության վայրերը։ Այսպիսով, Գրիգոր Մագիստրոսը իր բյուզանդական բանակով մի տարի (1051—1052) մնում է Հայաստանում ու հայտնաբերում թոնդրակյանների բոլոր կենտրոնները և անխտիր ավերում։ Դրանով

[1] Թղթերը, էջ 163։
[2] Նույնը, էջ 162։

մահացու հարված է հասցնում Թոնդրակյաններին, որոնք այլևս ակտիվ գործունեություն հանդես չեն բերում Հայաստանում։

Հալածանքի ենթարկվող Թոնդրակյանների մի մասը ցրվում է, փախչում, մի մասը բանտարկվում և աքսորվում է դեպի Փոքր Ասիա, Բուլղարիա ու Թրաքիա, մի մասը դարձի է գալիս, ոմանք էլ թաքնվում են երկրի տարբեր մասերում և դարեր շարունակ պահպանում են իրենց գոյությունը մինչև 19-րդ դարի երկրորդ քառորդը, որի մասին արդեն ասել ենք։

Թոնդրակյանները մասսայաբար աքսորվելով դեպի Բալկանները, սկզբում կենտրոնանում են Դանուբի եզերքին և օգտագործվում են կայսրության սահմանները պաշտպանելու համար, իսկ հետո աստիճանաբար կենտրոնանում են նաև Փիլիպպոլ քաղաքում, որը կենտրոնն էր դարձել աքսորված պավլիկյանների համար։ Այս քաղաքից նրանք իրենց ուսմունքը տարածում են Բուլղարիայում, և այնտեղ նրանց ու պավլիկյանների ազդեցության տակ առաջ է գալիս բոգոմիլությունը։ Բուլղարիայում վերոհիշյալների ուսմունքը ամենից շուտ յուրացնում ու տարածում է Բոգոմիլ երեցը, որն էլ դառնում է բոգոմիլների շարժման հիմնադիրը։

1052 թ. Հարք գավառում տեղի է ունենում եկեղեցական երկրորդ ժողովը, որը որոշում է նորից մկրտել իր ճանապարհից շեղվող Թոնդրակյաններին, որպես «մոլորյալներ»։ Միայն Հարքի Թոնդրակի և Խնուսի շրջաններում բջնեցի եփրեմ եպիսկոպոսի գլխավորությամբ ետ են կանգնում 1000-ից ավելի Թոնդրակեցիներ[1]։ Հարքի ժողովը միաժամանակ կազմել է տալիս գրաքննական նոր ցուցակներ և այդ ցուցակների հիման վրա գտնում և այրում են Թոնդրակյանների գրած գրքերը, ծրագրերը և այլ փաստաթղթերը, որպես «վնասակար» աշխատություններ։ Այնուհետև, գրվում են նոր բանադրանքներ ու թողության թղթեր և նզովում Թոնդրակյաններին։ Այդպիսով, Գրիգոր Մագիստրոսի հալածանքներով վերջանում են Թոնդրակյանների շարժումները Հայաստանում, որոնք ընդհատումներով տևում են ավելի քան 170 տարի։

[1] Թղթերը, էջ 158։

Թոնդրակյան շարժումներին մեծ հարված են հասցնում նաև սելջուկ-թուրքերի արշավանքները, որոնք սկսվել էին այդ ժամանակ։

Թոնդրակյան շարժումների գնահատականը

Թոնդրակյան շարժումները, որոնց մասնակցում էին գյուղացիները և քաղաքի բնակչության ցածր խավը, ինչպես նշել ենք, ճիշտ չեն գնահատվել ու լուսաբանվել կղերա-բուրժուական պատմաբանների ու բանասերների կողմից։ Նրանց նպատակն է եղել ցույց տալ, որ հայ եկեղեցին «անարատ» է, որ նրա դեմ հանդես եկող ընդդիմադիր հոսանքները դրսից են մուտք գործել Հայաստան, որ այդ աղանդավորական շարժումները արդյունք չեն երկրի ներքին հակասությունների, այլ դրսի ազդեցության։ Դրանով նրանք աշխատում են ցույց տալ, որ հայ եկեղեցին երբեք շահագործող հաստատություն չի եղել, այլ եղել է շահագործվողների ու հարստահարվողների «պաշտպան»։ Իսկ Հայաստանում հանդես եկող պավլիկյան, Թոնդրակյան և այլ աղանդավորական-սոցիալական շարժումները կապում են հին մանիքեյան աղանդի հետ ու բխեցնում են նրանից և հազար ու մի լուտանք են թափում այդ աղանդավորների գլխին։

Կղերա-բուրժուական ուսումնասիրողներից ամենակատաղին ներկայացուցիչը Բ. Սարգսյանն է, որն այսպես է բնութագրել Թոնդրակյան ռևոլյուցիոն-սոցիալական շարժումը և նրա ղեկավար Սմբատին.

«Այս բազմահնար կեղծավորս՝ զոր փոտի և պետր. Սիկիլացվո հետ՝ Նարեկացին և Մագիստրոս իսկ միաբերան Դեռրարքրիստոսի կարապետ և նեռն կը կոչեն, ոչ միայն արտաքուստ քրիստոնյա և քրմազգյաց ճգնող կը ձևանայր, այլ նույն իսկ ինքը զինքը լույս, կեանք և ճշմարտություն կանվաճեր, այլովք հանդերձ, բայց ներքսապես ոխերիմ թշնամի էր ամենայն քրիստոնեական օրինաց, և գործով կը ջանայր կործանել զայն։ Աշխարհական մ՝ էր լոկ և եպիսկոպոս կը ձևանայր, Սանդուկեցվոց պէս կ՝ուրանայր հանդերձյալ կյանքն և հոգվո անմահությունը։ Եպիկուրյան թանձր նյութապաշտությամբ կուրանայր աստվածային նախախնամությունն և ինք զինքը բաղդից և բաշխից տեր կ՝անվաներ։ Պեղագիոսեն ավե-

լի շարաչար կ'ուրանայր ոչ միայն հոգվույն սրբո շնորհքները, այլ նույնիսկ հոգվույն աստուծո գոյությունը՝ հափշտակությամբ հանդերձ անոր ստորոգելյաց։ Հեթանոսաբար կուրանայր և կը մերժեր բոլոր եկեղեցվո սուրբ խորհուրդները։ Մարմնասիրությամբ կո՛ւրանայր ամենայն վարդապետություն ուղիղ վարուց և բարոյականի։ Կո՛ւրանայր թէ չկա ոչ մեղք և ոչ ալ պատիժ, ոչ օրենք և ոչ իշխանություն։ Միով բանիվ՝ ամեն բան կարհամարհեր անխղճաբար. ամեն բանի վրա կը ծիծաղեր, և ինչ որ միամիտները խափելու և որսալու համար արտաքսապես ընդունել կ'երևցներ՝ նույնը ներքսապես կը մերժեր»[1]։ Եվ կամ թե. «Անկրոնք և անաստվածք էին, ոչ միայն ի գործնականին, այլև տեսական սկզբամբք»[2]։ Իսկ մի այլ տեղում ավելացնում է. «Հայ հանճարն՝ ասկեց ավելի ահեղ և սարսափելի հրեշ մի չէր կարող ծնանիլ (խոսքը վերաբերվում է Սմբատին։ Հ. Հ.)...։ Սակայն իմ կարծիքով Թոնդրակեցվոց աղանդն իսկապես և բոլորովին հայ մտավոր և բարոյական կյանքի արտաբերություն չէր, այլ զարգացումն այն չար մոլության, զորս զառաջինն ցանեցին Մանի և յաջորդք յուր...»[3]։

Վերոհիշյալ մեջբերումներն էլ բավական են ցույց տալու կղերա-բուրժուական պատմագիրների ու բանասերների բարբաջանքները Թոնդրակեցիների հասցեին։ Ինչպես տեսնում ենք, նրանք հայկական աղանդավորական-սոցիալական շարժումները Հայաստանում համարում են օտարամուտ հոսանքներ, իսկ Սմբատ Զարեհավանցուն և նրա հաջորդների պայծառ գործունեությունը որպես չար ու պիղծ մարդկանց գործունեություն։ Ավելին, կղերա-բուրժուական պատմագրությունը ժխտում է Թոնդրակյանների շարժման սոցիալ-դասակարգային բնույթը։ Իսկ Բ. Սարգսյանի ասելով նրանք «Հին աշխարհի ճշմարիտ ոչնչականներն»[4] են հանդիսացել։

Պատմաբան Լեոն այդ մեծ շարժումը նույնպես համարում է մանիքեության արտահայտությունը Հայաստանում[5] և

1 Բարսեղ Սարգսյան, Ուսումնասիրություն Մանիքյա-Պավղիկյան Թոնդրակեցիներու աղանդին, էջ 62—63, վենետիկ 1893։

2 Նույնը, էջ 66։ 3 Նույնը, էջ 67։ 4 Նույնը, էջ 66։

5 Հայոց պատմություն, հ. Բ, էջ 475, Երևան, 1947։

այդ մեծ շարժման պատմությունը չի համարում քաղաքացիական պատմության անբաժանելի մասը, այլ դրել է արաբական շրջանի կուլտուրական-գրական տեսության գլխի տակ[1]։ Բայց մեծավաստակ դիտնականը խիստ արժեքավորում է այդ շարժումը։ Մենք արդեն ցույց ենք տվել, որ Թոնդրակյանների շարժումները Հայաստանի ներքին կյանքի հակասությունների արդյունք են և մանիքեության ուսմունքը Հայաստանում շատ քիչ արձագանք է գտել։ Ուստի Թոնդրակյանների շարժումները և նրանց ուսմունքը երբեք չի կարելի համարել մանիքեություն, ընդհակառակը, այդ շարժումները սկզբում տեղական բնույթ են կրել, ազդվել են պավլիկյաններից, որոնք նույնպես հայ հասարակության հակասությունների ու մտքի ծնունդ են։ Թոնդրակյանների շարժումներն ու նրանց գաղափարները միայն վերջում են դուրս գալիս Հայաստանի սահմաններից ու տարածվում երկրի շրջապատի մարզերն ու երկրները և մինչև իսկ Բուլղարիա։

Թոնդրակյանների շարժման մասին անհամեմատ ավելի ճիշտ մոտեցում են ունեցել ակադ. Հ. Մանանդյանը[2] և ակադ. Մ. Աբեղյանը[3], որոնք այդ շարժումները համարում են դեմոկրատական ռեակցիա, ուղղված տիրող ու շահագործող դասակարգերի դեմ, բայց խնդրի մեջ չեն խորացել։ Ավելի ընդարձակ է խոսել դոկտոր Ս. Պողոսյանը[4], որն իր աշխատությունների մեջ աշխատել է ցույց տալ, որ այդ մեծ շարժումը հայ ժողովրդի շահագործվող մասսայի պայքարն էր տիրողների դեմ։ Թոնդրակյանների շարժման մասին ուսումնասիրություններ ունեն դոկ. Ա. Հովհաննիսյանը[5] և ուրիշներ,

1 Հայոց պատմություն, էջ 474—479։

2 «Հայաստանի քաղաքներն 10—11-րդ դարերում», էջ 44, 45, Երևան, 1940։

3 «Հայոց հին գրականության պատմություն», հատ. երկրորդ, էջ 10—14, Երևան, 1946։

4 Սասունցի Դավիթ, ժողովածու, Երևանի պետական համալսարանի հրատարակություն, էջ 223—239, Երևան, 1939 և Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում 9—13-րդ դարերում, էջ 374—508, Երևան, 1956։

5 Движение тондракидов в Армении (IX—XI вв.), Вопросы истории, № 10, 1954.

որոնք նույնպես ճիշտ են մեկնաբանել այդ մեծ շարժումը։ Վերջին տասնամյակներում լույս տեսած աշխատությունների հեղինակները հիմնականում ճիշտ են լուսաբանել թոնդրակյան շարժումները և նրանց բնույթը։

Թոնդրակյանների շարժման այս քննությունը ցույց է տալիս, որ Հայաստանը հանդիսացել է Առաջավոր Ասիայի այն երկրներից մեկը, ուր փարթամորեն աճել ու զարգացել են աղանդավորական-սոցիալական շարժումները, որոնք դրսից չեն ներթափանցել Հայաստան, այլ հայ հասարակության կյանքի ներքին հակասությունների հետևանք են, և այդ շարժումների մեջ, պավլիկյաններից հետո ամենամեծն ու երկարատևը եղել է թոնդրակյանների դեմոկրատական շարժումը։ Այդ շարժումը հայ աշխատավոր ժողովրդի ուղղյուղիոն պայքարն էր տիրող պաշտոնական եկեղեցու, նրա սպասարկու հոգևորականության և աշխարհիկ ֆեոդալների դեմ։ Շարժումն իր հաջորդ՝ երրորդ էտապում, ուղղվում է նաև բյուզանդական զավթիչների դեմ, դրանով էլ դուրս է գալիս հայկական շրջանակներից, տարածվում դեպի Բալկաններն ու նպաստում է բոգոմիլների շարժման առաջացմանը։

Թոնդրակյանների շարժումները թեև պարտվում են և պարտության հետևանքով ծանր կորուստներ են կրում, բայց տիրողները շատ հաճախ ստիպված էին լինում կատարել զիջումներ։ Թոնդրակեցիների գաղափարախոսությունը և ուսմունքն իրենց ժամանակի հայ հասարակական մտքի զարգացման բարձր ցուցանիշներ էին։ Այդ գաղափարախոսությունը 9—11-րդ դարերում Հայաստանում հեղափոխիչ դեր է կատարել և նպաստել է հայ հասարակական մտքի զարգացմանը։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԹՈՒԼԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՆԿՈՒՄԸ

1. ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ 1020–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Գահակալական կռիվները և Սենիի թագավորության բաժանումը երկու մասի

Հայկական պետությունը 1020-ական թվականներից սկսած բռնում է իր քայքայման ու թուլացման ճանապարհը։ Այդ քայքայումը պայմանավորված էր մի կողմից երկրի ներսում ստեղծված ներքին հակասություններով, իսկ մյուս կողմից Բյուզանդական կայսրության ակտիվ միջամտության քաղաքականությամբ։ Եթե 9-րդ դարի վերջին և 10-րդ դարի սկզբին Հայաստանի համար լուրջ սպառնալիք էին հանդիսանում շրջապատի արաբական էմիրությունները և խալիֆաթը, որոնց դեմ իր մղած պայքարում հայ ժողովուրդը դուրս է գալիս հաղթանակով, ապա 11-րդ դարում, նախքան սելջուկ-թուրքերի արշավանքները, Հայաստանի վտանգավոր թշնամին հանդիսանում էր Բյուզանդիան, որի դեմ իր մղած պայքարում հայ ժողովուրդը վերջ ի վերջո պարտվում է։

Գագիկ Առաջինի մահից հետո Անիում գահի շուրջ առաջանում են գահակալական կռիվներ, որոնց հետևանքով նորից ինքնուրույնության ճանապարհ են բռնում մանր իշխանությունները, մի հանգամանք, որը շատ խիստ բացասական ազդեցություն է թողնում երկրի քաղաքական հզորության վրա։ Վասպուրականի Արծրունիների թագավորությունը, որը մինչ

այդ սերտորեն կապված էր Անիի Բագրատունիների հետ, այժմ չի կարողանում կողմնորոշել իր դիրքը։

Գագիկ Բագրատունու մահից հետո, Անիում իշխանության գլուխը կանգնում է նրա մեծ որդի, գահաժառանգ Հովհաննես-Սմբատը, որը թուլամորթ անձնավորություն էր և բոլորովին սեր չուներ ռազմական գործի նկատմամբ։ Այս թուլամորթ գահաժառանգը չի կարողանում գլխավորել իր հոր թողած պետությունը և Բագրատունյաց թագավորության հովանավորության ներքո պահել մյուս մանր իշխանությունները։ Հովհաննես-Սմբատի դեմ գահակալական խռովություն է բարձրացնում Գագիկ Առաջինի մյուս որդի Աշոտ Ջորրորդը, որը, ինչպես Ուռհայեցին է ասում. քաջ և անպարտելի հաղթող էր պատերազմներում[1]։ Աշոտը փորձում է գահը գրավել իր թուլամորթ եղբոր ձեռքից։ Բայց անհաջողությունից հետո գնում է Վան և դիմում է Արծրունյաց Սևնեքերիմ թագավորին, որը խոստանում է օգնել նրան։ Դրանով չբավականանալով մեկնում է Բաղդադ, Աբուլ-Աբբաս Ահմիդ էլ-Կադըր-Բիլլահ (911—1041) խալիֆի մոտ ու խնդրում է նրանից օգնություն։ Խալիֆը թեև խոստանում է օգնել, բայց չի կարողանում կատարել իր խոստումը։ Աշոտը վերադառնալով Հայաստան, Ճանապարհին Սևնեքերիմից զորք վերցնելով, հարձակվում է Անիի վրա, նպատակ ունենալով գրավել Բագրատունիների գահը։ Ինչպես տեսնում ենք, Սևնեքերիմը փոխանակ կանխելու Բագրատունիների տոհմի ներքին կռիվները, ընդհակառակը, զորք տալով նպաստում է այդ պայքարին, որից երկիրը, բացի վնասից, ոչ մի օգուտ չի ստանում։

Այդ ներքին պայքարի ժամանակ իշխանները և Անիի մեծամեծները բաժանվում են երկու թևի, մեկը պաշտպանում է Հովհաննես-Սմբատին, իսկ մյուսը՝ Աշոտին։ Այս վերջին թևը պատճառաբանում էր, թե Հովհաննես-Սմբատը թուլամորթ է և չի կարողանում պահպանել երկրի անկախությունը։ Աշոտը Վասպուրականի Սևնեքերիմի և իր կողմնակից իշխանների զորքով շարժվում է Անիի վրա։ Հովհաննես-Սմբատն իր 60000-անոց բանակով և վրաց թագավորի զորքերի օգնությամբ դուրս է գալիս հակառակորդի դեմ, բայց Ախուրյան գետի մոտ տեղի ունեցած կռվում պարտվում է և ետ է շպրտվում դեպի քաղաքի ամուր պարիսպները։ Սակայն Անիի մեծամեծները՝ Պահլավունի Վահրամ և Վասակ իշխանները, Կարսի Աբասը, Վրաց Դուրգեն և Աբխազիայի Գեորգի թագավորները Պետրոս կաթողիկոսի գլխավորությամբ միջամտում են գործին և հաշտեցնում գահաժառանգներին հետևյալ կոմպրոմիսով։ Հովհաննես-Սմբատը ստանում է Անին և նրա շրջակայքի գավառների կառավարումը, իսկ Աշոտին հանձնարարվում է Բագրատունյաց թագավորության ծայրամասերի՝ Վրաստանի և Պարսկաստանի սահմանապահների մարզերի և նահանգների կառավարման իրավունքը. պայմանով, որ Հովհաննես-Սմբատի մահվանից հետո ամբողջ թագավորությունն անցնի Աշոտի ձեռքը։ Բայց այս պայմանից գոհ չի մնում Աշոտը և մշտապես աշխատում էր դավեր լարել Հովհաննես-Սմբատի դեմ։ Նա իր իշխաններից մեկի միջոցով Հովհաննես-Սմբատի դեմ է դրգռում Աբխազիայի Գեորգի թագավորին, որը մեծ դեր էր խաղացել երկու եղբայրների հաշտեցման գործում։ Աշոտի կողմնակից իշխանը բողոքում է, որ Շաթիկ բերդը պատկանում է Աշոտին, բայց Անիի թագավորն անիրավացի գրավել է այն։ Գեորգին այդ իրոք համարում է անիրավություն, զորք է ուղարկում Հովհաննես-Սմբատին հետապնդելու, որը դուրս էր եկել քաղաքից, գիրության պատճառով չի կարողանում ձի նստել ու փախչել, բռնվում է զորքի կողմից ու տարվում Գեորգիի մոտ։ Հովհաննես-Սմբատն իր կալվածներից երեք բերդ զիջում է Գեորգիին, հավանաբար խոստանում է նաև զորքով օգնել նրան բյուզանդական կայսրության դեմ մղվելիք կռիվների ժամանակ և ազատվում ու վերադառնում է Անի։ Այդ դեպքից Աշոտը ոչ մի օգուտ չի ստանում և իր կողմնակիցներով որոշում է դավադրությամբ վերջ տալ եղբոր կյանքին։ Նա Թալին գյուղում ձևանում է հիվանդ և իր մոտ տեսության հրավիրում եղբորը, դավադրաբար ձերբակալում է նրան, ապա հանձնում է Ապիրատ-Հաասանյան Պահլավունի իշխանին, որ հեռացնի Թալինից և մի մութ անկյունում սպանի։ Սակայն Վարդան պատմիչի ասելով, Ապիրատ իշխանը փոխանակ սպանելու, ընդհակառակը,

[1] Ուռհայեցի, ժամանակագրություն, էջ 26։

ուղղակի Անի է տանում և նստեցնում իր գահի վրա։ Դրանով էլ Աշոտի կազմակերպած դավադրությունը ձախողվում է։ Բայց չնայած դրան, Ապիրատ իշխանը դժգոհ մնալով Հովհաննես-Սմբատից և կասկածելով նաև Աշոտից, հեռանում է Անիից իր 12000 զորքով ու ընտանիքով, գնում է Դվին՝ քուրդ Ապուսուար էմիրի մոտ։ Վերջինս թեև սկզբում լավ է ընդունում այս իշխանին, բայց որոշ մարդկանց չարախոսության պատճառով կասկածում է լրտեսության մեջ և սպանել է տալիս։ Իսկ նրա Սարի զորավարը Ապիրատ իշխանի կնոջը, երեխաներին ու զորքին վերցնելով վերադառնում է Անի։ Այսպիսով, երկրի քաղաքական վիճակը նորից ալեկոծվում է ֆեոդալական կենտրոնախույս ուժերի և գահակալական կռիվների հետևանքով։

Թեև Լաստիվերտցին ասում է[1], որ դրանից հետո Աշոտը գնում է Հռոմից-Բյուզանդիայից օգնություն խնդրելու, որպեսզի անցնի Հայաստանի միասնական իշխանության գլուխը, բայց ճիշտ չէ։ Առհասարակ Աշոտը դեմ չ եղել բյուզանդական քաղաքականությանը և չէր կարող դիմել կայսրությանը, իսկ Հովհաննես-Սմբատը, ընդհակառակը, կանգնած էր Բյուզանդիայի կողմը։ Այսպիսով, Աշոտի մղած գահակալական պայքարը վերջ ի վերջո ավարտվում է վերը նշված կոմպրոմիսային պայմանագրով։ Նա բավարարվում է իր ստացած երկրամասերի կառավարումով, սպասելով եղբոր մահվան։

Դելմիկների արշավանքները, Բյուզանդիայի ագրեսիան և Վասպուրականի թագավորության վախճանը

Դելմիկները, որոնք ապրում էին Ատրպատականի մարզերից մեկում 11-րդ դարի առաջին քառորդից, սկսած 1016 թ. թուրք վարձկան զորքերով սիստեմատիկ արշավանքներ են կատարում Վասպուրականի արևելյան շրջանների վրա։ Բայց Սենեքերիմը Անիի թագավոր Գագիկ Առաջինի օգնությամբ մշտապես ետ էր մղում այդ վտանգավոր արշավանքները։ Իսկ 1021 թ. նրանք մի նոր և ավելի մեծ արշավանք են կատարում դեպի Հայաստան։ Սկզբում ուղղություն են վերցնում դեպի Վասպուրական և

[1] Լաստիվերտցի, էջ 11։

լուրջ վնաս են հասցնում երկրին։ Սրանց դեմ դուրս են գալիս Վասպուրականի զորքերը՝ հմուտ զորավար Շապուհի և արքայորդի Դավթի գլխավորությամբ, բայց թշնամու ուժեղ նետահարությունը ստիպում է Վասպուրականի զորքին ետ նահանջել։ Թշնամու զորքի մի մասը հարձակվում է Այրարատի վրա և հասնում է մինչև Նիգ գավառն ու Բջնի բերդը, ասպատակելով իրենց անցած վայրերը։ Այդ ժամանակ Նիգ գավառը և Բջնի բերդը պատկանում էին Պահլավունի Վասակ իշխանին։ Նա տեղեկանալով դելմիկների՝ իր համար միանգամայն անծանոթ, կիսավայրենի արշավանքի մասին, անմիջապես հավաքում է 500 հոգուց բաղկացած մի զորամաս ու դուրս է գալիս այդ անծանոթ հրոսակախմբերի դեմ, Բջնի բերդի պաշտպանությունը հանձնելով իր որդուն՝ Գրիգորին։ Վասակն իր քաջերով ոչ միայն կասեցնում է դելմիկների արշավանքը, այլև լուրջ ջարդ տալով ետ է շպրտում նրանց։ Բայց միայն վերջում, երբ հոգնած հանգստանում է Արագածոտն գավառի Սերկևիլ (Արա) լեռան ստորոտում, մի ժայռի տակ, անզգուշության հետևանքով սպանվում է մի ետ մնացող դելմիկցու կողմից[1]։

Այս կռվում սպանվում են նաև մի շարք ռազմիկներ, որոնց թվում և քաջ զորավար Միհրանը։ Վասակի սպանությունից հետո նրա կալվածների տերը դառնում է Գրիգորը, որի ժամանակ կալվածները տարածվում էին Ապարանից մինչև Սևանա լիճը և Գառնի (Ազատ) գետի ավազանը, կազմում մի ընդարձակ երկրամաս։ Ինչպես տեսնում ենք, Պահլավունիներին հաջողվում է ետ շպրտել դելմիկցիներին, մինչդեռ դժվարանում էին Արծրունիները այն անել Վասպուրականում։ Սենեքերիմի դրությունը գնալով ծանրանում է, մանավանդ որ նրա երկրին Գագիկ Առաջինի մահվանից հետո արևմտյան կողմից լուրջ սպառնալիք էր ստեղծել Բյուզանդիան։

Շուրջ մի դար տևող (923—1020) համեմատաբար խաղաղության ժամանակաշրջանը 11-րդ դարի 1020-ական թվականներից տեղի էր տալիս փոթորիկների ու դեպքերով հա-

[1] Ուռհայեցի, էջ 14։

բուստ նոր դարաշրջանի առաջ։ Արաբական խալիֆաթի ասպիճանական քայքայման ու թուլացման հետևանքով Բյուզանդիան ավելի է ուժեղացնում իր ագրեսիան և սպառնալիքի տակ դնում Անդրկովկասի ժողովուրդների անկախությունը։

Բյուզանդական կայսրության ագրեսիվ քաղաքականությունը դեպի Հայաստան ու Վասպուրական տակավին սկսվում է 10-րդ դարի երկրորդ կեսին, Ջմշկիկ կայսրի օրոք (969—976), իսկ հետո ավելի ուժեղանում է Վասիլ (Բարսեղ) Երկրորդի ժամանակ (976—1025)։ Բյուզանդիան, Հայաստանն ու Վրաստանը նվաճելու համար 11-րդ դարի սկզբում աշխատում էր հենարան ստեղծել Հայաստանի արևմտյան մասերում։ Ինչպես գիտենք, 1000 թ. մահանում է Տայքի Դավիթ Կյուրապաղատը, որն իր մահվանից առաջ երկիրը կտակել էր կայսրությանը։ Վասիլ Երկրորդը մեծ բանակով շտապում է տիրանալ «կտակված երկրին»։ Բայց երբ նա վերադառնում է Տայք, տեղի բնակչությունը, Վրաստանի և Աբխազիայի թագավորների օժանդակությամբ, ապստամբություն է բարձրացնում։ Այդ նշանակում էր, որ Դավիթ Կյուրապաղատի կտակը տեղի է ունեցել բռնի, նույնիսկ առանց երկրի աչքի ընկնող իշխանների համաձայնության։ Բյուզանդիան «կտակների» ճանապարհով աշխատում է նվաճել Հայաստանն ու Վրաստանը։ Նա իր բանակով ճնշում է Տայքի ապստամբությունը, ապա արշավանք է կատարում այնտեղից դեպի Հայաստանի խորքերը, գրավում է Բասենի գավառը և սպառնում է Վասպուրականին։ Սակայն Բագրատունյաց և Արծրունյաց թագավորներն իրենց միացյալ ուժերով ուժեղ դիմադրություն են ցույց տալիս, և կայսերական բանակը կանգ է առնում գրաված վայրերում։

Բյուզանդական կայսրության ագրեսիան ուժեղանում է 1020-ական թվականներին, երբ նա Հայաստանի ռազմական ուժը ոչնչացնելու և իրեն ենթարկելու համար ձեռնամուխ է լինում տեղահանման քաղաքականության։ Կայսրությունը լրտեսներով ողողում է Հայաստանը և ներքին կռիվներ հրահրում իշխանների մեջ, խոստանալով նրանց տալ Փոքր Ասիական երկրներում նոր կալվածներ, եթե տեղափոխվեն այնտեղ։ Հայաստանի իշխանություններից ամենից շուտ Փոքր Ասիա է տեղափոխվում Արծրունյաց թագավորությունը։ Այստեղ թևակ Գուրգենի մահվանից հետո (1003) Սենեքերիմին հաջողվում է իշխել ամբողջ Վասպուրականի վրա (1003—1021), սակայն նրա թագավորությունը շուտով ընկնում է ծանր դրության մեջ, մի կողմից Բյուզանդիայի ճնշման ու հարձակումների, իսկ մյուս կողմից Արևելքից (Պարսկաստանից) արշավող թափառաշրջիկ ցեղերի, հատկապես դելմիկների ասպատակությունների հետևանքով։ Սենեքերիմը սկզբում կարողանում էր դիմադրել այս արշավանքներին, որովհետև Բագրատունյաց թագավորությունն ուժեղ էր և ցույց էր տալիս զինվորական օժանդակություն։ Բայց 1020 թ. Անիի թագավոր Գագիկ Առաջինի մահից հետո նրա դահաժառանգները ոչ միայն չեն կարողանում օգնել, այլև գահի համար կռիվներ են մղում իրար դեմ, որին մասնակցում են նաև Վասպուրականի զորքերը։ Ճիշտ է, Վասպուրականի թագավոր Սենեքերիմը օժանդակելով Աշոտ Ջորրորդին, աշխատում էր Բագրատունյաց գահի վրա նստեցնել ավելի ուժեղ և ձեռնհաս անձնավորության, բայց իր ազդեցությունը չի կարողանում գործադրել և առանց լուրջ խորհելու, նպաստում է գահակալական կռիվների բորբոքմանը։

Վասպուրականի թագավոր Սենեքերիմը նեղվելով Բյուզանդիայի և Ատրպատականի կողմերից կատարվող արշավանքներից և անհրաժեշտ օգնություն չստանալով Անիի թագավորներից, ստիպված է լինում իր որդի Դավթին ուղարկել Կ. Պոլիս կայսրի հետ բանակցություններ վարելու և իրենց իշխանությունը Փոքր Ասիա տեղափոխելու համար։ Կ. Պոլսի արքունիքը վաղուց սպասում էր նման հարմար առիթի, հայկական իշխանություններին վերջ տալու համար։ Դավթի բանակցությունները Կ. Պոլսում վերջանում են նրանով, որ ամբողջ Վասպուրական աշխարհի փոխարեն Արծրունիներին տրվում է Փոքր Ասիայի արևելյան մասում գտնվող Սեբաստիա, Կարիսա և Ավարիա քաղաքները իրենց շրջակա մասերով։ Այս պայմանագրից հետո 1021 թ. աշնանը Սենեքերիմ թագավորը, որը միաժամանակ ստացել էր պատրիկության աստիճան, իր բնատնիքով, բազմաթիվ ազնվականներով ու ժողովրդով տեղափոխվում է իր նոր կալվածները։ Սենեքերի-

մը կայսրին հանձնում է ամբողջ Վասպուրականը, որը մի քանի անգամ մեծ էր, քան իր ստացածը: Ըստ Սամվել Անեցու, Սենեքերիմը Բյուզանդիային է հանձնում 115 վանք, 72 բերդ, 4000 գյուղ և 8 քաղաք[1], ըստ Ուռհայեցու՝ 72 բերդ, 4000 գյուղ և 115 վանք[2], ըստ Սմբատ Սպարապետի՝ 12 բերդ, 4400 գյուղ, և 115 վանք[3]: Ըստ Թովմայի շարունակողի. «Եւ տային փոխանակ քաղաքացն քաղաքս մեծամեծս և փոխանակ բերդիցն բերդս անմատոյցս և գավառս և գեօղս և ագարակս և սուրբ մենաստանս և փոխեցին զհայրենի տունսն իւրեանց Հայկազունքն Արծրունիքն Սենեքերիմ ի թուի հայկազեան տոմարին ՆՀ(1021), և դէմ եդեալ գնացին յաշխարհն Յունաց ԺԹՌ (14000) արամբք, թող զկանայս և զմանկտիս. և արկան ընդ լծով ծառայութեանն Հոռոմոց...»[4]: («...Եվ քաղաքների փոխարեն մեծամեծ քաղաքներ են տալիս, բերդերի փոխարեն անմատույց բերդեր և գավառներ, գյուղեր, ագարակներ, սուրբ մենաստաններ, և փոխեց իրեն հայրենի տները Հայկազուն Արծրունի Սենեքերիմը հայոց թվականության 470(1021), և դիմելով գնաց Հունաստան ԺԹՌ(14000) տղամարդով, չհաշված կանայք և երեխաները, և ենթարկվեց հոռոմներին»):

Այս հատվածից պարզ երևում է, որ բացի կանանցից ու երեխաներից, 14000 մարդ, հավանաբար, կռվող զորք է տարել իր հետ և ընդունել է Բյուզանդիայի լուծը: Իսկ Միքայել Չամչյանն իր հերթին ավելացնում է, որ ընտանիքով, իշխաններով, ազատագունդ զորքով և 400 հազար բնակչությամբ[5], որը կազմում էր Վասպուրականի ժողովրդի մեկ երրորդը, մեկնում է Սեբաստիա: Կեդրենոսի ասելով, Սենեքերիմը կայսրին հանձնել է 10 քաղաք, 1000 գյուղ, 72 բերդ և ապա 400 հազար մարդով անցնում է հունական հողը: Այդ տեղափոխությունը, ըստ Սամվել Անեցու, տեղի է ունեցել 1021 թվականին[1]: Վերոհիշյալ տվյալներից ելնելով, ավելի հավանական պետք է համարել Սամվել Անեցու և Մատթեոս Ուռհայեցու վկայությունները, իսկ ինչ վերաբերվում է Չամչյանի հաղորդած 400000 բնակիչների գաղթին, նախ պետք է ասել, որ նա չի հայտնում աղբյուրը, կարող է այն չափազանցություն լինել, բայց մի բան պարզ է, որ այդ ժամանակ Վասպուրականի թագավորության սահմաններում մեկ ու կես միլիոնից պակաս բնակչություն լինել չէր կարող, երկրորդ, Սենեքերիմն անշուշտ իր հետ Սեբաստիա է տարել ոչ միայն աղնվականներին, այլև մեծ թվով բնակչություն՝ հավանաբար 14000-ից ավելի: Այսպիսով, Սենեքերիմի գաղթով վերջանում է Վասպուրականի Արծրունիների՝ տեղական նշանակություն ունեցող թագավորությունը, որը տևում է 113 տարի, իսկ Վասպուրականը վեր է ածվում մի նահանգի և կցվում է կայսրությանը, որի կառավարիչ կատապան է նշանակվում Կավսիլոս զորավարը: Իսկ եթե Շիրակ-Այրարատյան թագավորությունը ներքին խռովություններով չզբաղվեր և օգնություն ցույց տար Արծրունիներին, Վասպուրականի թագավորությունը տակավին կարող էր պահպանել իր գոյությունը:

Սենեքերիմ Արծրունու վասալ իշխանությունը Փոքր Հայքում—Սեբաստիայում երկար չի տևում: Նա մահանում է 1026 թ., նրա մարմինը բերում են Հայաստան և թաղում Վարագա վանքում, իսկ նրա հաջորդ որդի Դավիթը թեև փորձեր էր անում մեծացնել ու ամրացնել իր իշխանությունը, բայց սա էլ շուտով մահանում է (1036 թ.) անժառանգ, որից հետո իշխանությունն անցնում է նրա եղբայրներ՝ Ատոմի և Աբուսահլի ձեռքը (1036—1079): 1079 թ. կործանվում է նաև Արծրունիների Փոքր Հայքի—Սեբաստիայի իշխանությունը՝ Բյուզանդիայի վարած քաղաքականության հետևանքով: Վասպուրականի անեքսիայով էլ ավելի է ուժեղանում Բյուզանդիայի ագրեսիան Հայաստանի մնացած իշխանությունների նկատմամբ:

---

[1] Սամվել, էջ 104:

[2] Ուռհայեցի, էջ 49:

[3] «Սմբատայ սպարապետի եղբօր Հեթմոյ Առաջնոյ արքայի Հայոց պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպոլիս և Հայոց մեծաց ըստ կարգի ժամանակաց», Մոսկվա, 1856, էջ 27:

[4] Թովմա, էջ 500:

[5] Պատմութիւն Հայոց, հ. Բ, էջ 903:

[1] Սամվել, էջ 104—105:

Բյուզանդիայի ագրեսիայի ուժեղացումը և Հովհաննես-Սմբատի «կտակը»

1021 թվականին, Վասպուրականի Արծրունիների տեղափոխման տարին, Տայքի անեքսիայի պատճառով Աբխազիայի և Վրաստանի Գեորգի թագավորը վրաց Գուրգեն թագավորի հետ միանում և պատերազմ է հայտարարում Բյուզանդական կայսրությանը: Ինչպես գիտենք, Անիի Հովհաննես-Սմբատը խոստացել էր զորքով օգնել Գեորգիին, երբ նա կռվի մեջ մտնի կայսրության հետ: Համաձայն այդ խոստման, հայերը նույնպես մասնակցում են Տայքում մղած կռիվներին: Աբխազավրացական բանակը հայերի օգնությամբ հարձակվում է Տայքի վրա, նպատակ ունենալով վրացական այդ տերիտորիան ազատագրել Բյուզանդիայի ձեռքից: Դաշնակիցների զորքերը սկզբում լուրջ հաջողություններ են ունենում և ազատագրում են Տայքի մեծ մասը: Գեորգին միաժամանակ իր դեսպանի միջոցով աշխատում է իր կողմը գրավել Եգիպտոսի ֆաթիմյան խալիֆ Հաքեմին: Այդ դեպքերը և Վասպուրականի կալվածների տնօրինումը ստիպում են Վասիլ կայսրին, որը արդեն իր հաշիվները մաքրել էր բուլղարների հետ, 1022 թ. մեծ բանակի գլուխն անցած նորից ուղևորվի դեպի Արևելք: Վասիլ կայսրը Գեորգիին ու նրա դաշնակիցներին հանգամանցնելու, խաբելու համար, հայտնում է, որ իբր թե մտադրվել է պատերազմական գործողություններ սկսել Սիրիայի դեմ: Բայց շուտով իր բանակն ուղղում է դեպի արևմտյան Եփրատի վերին հովիտը և կանգ է առնում Կարինի մեծ դաշտում, ապա այնտեղից երեք անգամ դեսպան է ուղարկում դաշնակիցների մոտ և պահանջում է, որ դան իր մոտ և հայտնեն իրենց հպատակությունը:

Հովհաննես-Սմբատից պահանջում է Կարսն ու Անին: Կայսրի այդ ապօրինի պահանջները մնում են անհետևանք: Այդ պատճառով կայսրը հարձակվում է Բասենի Օկում ավանի ու նրա շրջակա գյուղերի վրա և ավերում է, իսկ բնակիչներին բռնի կերպով տեղափոխել է տալիս Խաղտյաց երկիրը՝ Սև ծովի մոտերը: Ի պատասխան դրան, Գեորգին իր հերթին հարձակվում է Բյուզանդիայի ենթակա Ուխտիքի (Օլթի) վրա, ավերում և քարուքանդ է անում նրա դեղեցիկ շենքերը: Բայց կայսրի բանակի հիմնական ուժերի հետ չընդհարվելու համար Կարսի իշխանության տերիտորիայով ետ է քաշվում դեպի Վրաստանի սահմանները: Նրան հետապնդող բյուզանդական առաջապահ զորամասը Ջրլդրի լճի մոտ (Ծովակն Հյուսիսո) կռվի է բռնվում Գեորգիի վրաց-աբխազական զորքերի հետ: Վերջինները Ջրլդրի ճակատամարտում կատարյալ ջարդ են տալիս կայսերական այսպես կոչված «անպարտելի» հին, փորձված զինվորներին և ստիպում են նրանց բռնելու փախուստի ուղին: Սակայն շուտով վրա են հասնում բանակի մյուս զորամասերը, որոնց հարձակման հետևանքով վրաց-աբխազական բանակը այլևս չի կարողանում իր ձեռք բերած հաջողությունները պահպանել, ապա առանց որևէ լուրջ ճակատամարտի ստիպված է լինում շարունակել իր նահանջը դեպի Վրաստանի խորքերը: Իսկ կայսերական բանակը, որը հետապնդում էր նահանջող թշնամուն, անխնա ամայացնում էր անցած ճանապարհի վրա ընկած գյուղերն ու գյուղաքաղաքները: Արիստակես Լաստիվերտցին տխուր գույներով է նկարագրում այն աղետն ու տանջանքը, որ կրում էր վրաց ժողովուրդը վայրենացած բյուզանդացիների կողմից: Սակայն վրա հասնող խիստ ձմռան պատճառով կայսրը ստիպված է լինում դադարեցնել պատերազմը և 1022 թ. վերջին բանակով շարժվում է դեպի Տրապիզոն ու ձմեռում այնտեղ:

Հովհաննես-Սմբատը, որի զորքերը մասնակցել էին Բյուզանդիայի դեմ մղված կռվին, այժմ սաստիկ վախենում էր կայսրությունից: Լքելով իր դաշնակիցներին, նա նամակագրություններով աշխատում է կապվել կայսրի հետ ու «փըրկել» իրեն: Այդ գործում նրան մեծ օգնություն է ցույց տալիս ժամանակի կաթողիկոս Պետրոս Արշարունի Գետադարձը (1019—1058), որը հայտնի բյուզանդամոլ էր: Սրա ժամանակ կաթողիկոսարանն ավելի ազդեցիկ է եղել, քան թուլլ Հովհաննես-Սմբատի թագավորության արքունիքը: Այս էր պատճառը, որ Ուռհայեցին գրում է «եւ չէր նուաստ աթոռ հայրապետութեանն քան թագաւորութեանն հայոց»[1]: Ահա

[1] «Ժամանակագրութիւն», էջ 154:

այս աղդեցիկ և մեծ հեղինակություն ունեցող հոգևոր պետն էր, որին թագավորը, իբրև դեսպան, ուղարկում է Տրապիզոն՝ Վասիլ կայսրի մոտ։ Պետրոս կաթողիկոսը Տրապիզոն է հասնում 1022 թ. դեկտեմբերին, նրան ցույց են տալիս լավ ընդունելություն, նույնիսկ հայերին սիրաշահելու համար 1023 թ. հունվարի 6-ին կայսրը ներկա է լինում հայերի ջրօրհնենքի ծիսակատարությանը, որը տեղի էր ունենում Տրապիզոնի փոքրիկ գետակի վրա Պետրոս կաթողիկոսի գլխավորությամբ, չնայած հայերն ու բյուզանդացիները դավանանքի պատճառով թշնամացած էին։ Այնուհետև, նույն թ. սկզբին կայսրի և կաթողիկոսի միջև տեղի է ունենում բանակցություններ ու կնքվում է մի համաձայնություն, ըստ որի Հովհաննես-Սմբատը խոստանում է իր մահվանից հետո Անին իր շրջակայքով «կտակել» կայսրին։ Ինչպես ասում է Լաստիվերտցին, կաթողիկոսը իր հետ տարել էր Հովհաննես-Սմբատի կտակը, ուր ասվում է. «...եթե գրէ գիր և տուր կտակ թագաւորին. զի յետ իմոյ վախճանին՝ զիմ քաղաքս և զերկիրըս նմա տացե ի ժառանգութիւն»[1]։ Այսպիսով, երկրի աշխարհիկ, հոգևոր պետերը միանալով, դաղտնի դավաճանում են ժողովրդին, մեծամեծներին և արքայորդի Աշոտին, որը Հովհաննես-Սմբատի մահվանից հետո պիտի իշխեր Շիրակ-Այրարատյան ամբողջ թագավորության վրա, Տրապիզոնում վաճառում են Հայաստանը բյուզանդական նենգավոր կայսրին։ Հայ ժողովրդի համար կորստաբեր այս ակտը կսկիծով է դրի առել ժամանակակից պատմագիր Արիստակես Լաստիվերտցին. նա ասում է. «...Անդ եղև Հայոց կորստեան դիր և նամակ...»[2]։ Անշուշտ, այս դավաճանական ակտի համար կայսրը դրամական նվերներով լիուլի պարգևատրում է թե՛ հոգևոր պետին, թե՛ թագավորին։

Սակայն հետաքրքիրն այն է, որ կաթողիկոսը փոխանակ Անի վերադառնալու և թագավորին զեկուցելու իր կատարած չարագործությունների մասին, ուղղակի գնում է Սեբաստիա՝ Սենեքերիմի մոտ և մի քանի տարի մնում այնտեղ։ Այս

[1] Լաստիվերտցի, էջ 17։
[2] Նույն էջը։

փաստը ցույց է տալիս, որ կաթողիկոսը վախեցել է ժողովրդից և իշխաններից իր հայրենադավ արարքի համար։

1023 թ. գարնանը Վասիլն իր բանակով դուրս է գալիս Տրապիզոնից ու նորից շարժվում է դեպի Տայք իր հաշիվները մաքրելու Գեորգիի հետ և իրեն ենթարկելու Վրաստանն ու Աբխազիան։ Սակայն նա դեռ նոր էր սկսել իր կռիվները Տայք-Վրաստանում, երբ Փոքր Ասիայում Վարդ Փոկասի որդի Նիկեփոր Ծուխիդի գլխավորությամբ բռնկվում է մի մեծ ապըստամբություն։ Մակեդոնական դինաստիան, հատկապես Վասիլ Երկրորդը վարում էր խոշոր հողատեր ֆեոդալների ոչընչացման քաղաքականություն, այսինքն՝ թույլ չէր տալիս, որ պարզանա խոշոր հողատիրությունը։ Իսկ մշտական պատերազմների հետևանքով ծանրանում էին պետական հարկերը ժողովրդի վրա, այդ պատճառով խոշոր հողատերերը օգտագործում էին դյուղացիների դժգոհություններն ու ելույթները, դուրս էին գալիս կայսերական կենտրոնաձիգ ու փոքր ժողովուրդներին համախմբող ու միաձուլող իշխանության դեմ։ Այդ ապստամբությունների դրական կողմն այն էր, որ նրանք, որպեսզի սիրաշահեն դյուղացիներին, թեթևացնում էին պետական հարկերը, իսկ մյուս կողմից պաշտպանում փոքր ժողովուրդների ինքնուրույնությունը, որոնց վերացման համար անվերջ պայքար էր մղում Վասիլ Երկրորդը։

Նիկեփոր Ծուխիդի շարժումը շուտով մեծ ծավալ է ստանում Փոքր Ասիայի կենտրոնում։ Նա աշխատում է իր կողմը գրավել նաև հայ-վրաց և Աբխազիայի թագավորներին ու իշխաններին, նույնիսկ Հովհաննես-Սմբատին և Աշոտին[1], որպեսզի տապալի բոլորի համար ատելի կայսերական լուծը։ Վասիլ կայսրը ստիպված է լինում միաժամանակ թողնել վրացա-աբխազական ապստամբության ճնշման խնդիրը և զբաղվել Ծուխիդի շարժման ճնշումով։ Նա ամրանում է Մի բերդում և այնտեղից իր պայքարը կենտրոնացնում այդ վտանգավոր շարժման դեմ։ Ըստ Մ. Ուռհայեցու, Ծուխիդը խոստանում է Սենեքերիմի որդի Դավթին տալ Հայաստանի գահը, եթե նա ակտիվ կերպով օգնի իրեն։ Սակայն Դավիթը հավա-

[1] Սմբատ սպարապետ, էջ 30։

տարիմ է մնում կայսրի հետ կնքած պայմանագրին և դավադրաբար սպանում է Ծովինղին, որի կտրած գլուխն ուղարկում Վասիլին։ Այդ սպանությունից հետո Բյուզանդիան ապստամբությունը ճնշում է ու ցրում առանց մեծ զոհերի։ Իսկ կայսրն էլ Դավիթի հավատարմության համար նրան շնորհում է նոր կալվածներ՝ Կեսարիա, Ծամնդավ և Խարատանեք քաղաքներն իրենց շրջակա գյուղերով[1]։ Արծրունիներին այս մոտիկությունը Վասիլի հետ արդյունք էր նաև բյուզանդամոլ Պետրոս կաթողիկոսի միջամտության։

Նիկեփոր Ծովինղի ապստամբության ճնշումից հետո, կայսրը նորից իր ուշադրությունը դարձնում է Գեորգիի վրա, որն արդեն հետ էր գրավել Տայքը։ Այդ հողի վրա 1023 թ. կեսերին վերսկսվում են պատերազմական գործողությունները Բասեն գավառում, գլխավոր ճակատամարտը տեղի է ունենում Շղթա վայրում, ուր վրացա-աբխազական զորքերը թեև հերոսաբար կռվում են, սակայն վերջում մեծ զոհեր տալով տեղի են տալիս թշնամու գերազանց ուժերի առաջ և բրնում նահանջի ճանապարհը։ Կայսրն իր բանակով հետապնդում է նահանջող զորքերին և նորից ավերում է վրացական գյուղերը և կոտորում բնակիչներին։ Նա յուրաքանչյուր աբխազի գլխի համար հրամայում է վճարել մի դահեկան դրամ։ Ուստի կարճ ժամանակվա ընթացքում իր անցած ճանապարհին ազգաբնակությանը սարսափի մեջ պահելու համար կտրած գլուխներից կույտեր է կազմել տալիս։ Այդպիսով, այս դաժան կայսրը կարծես թե աշխատում էր Վրաստանը դարձնել երկրորդ Բուլղարիա։ Գեորգի թագավորը զգալով, որ առանց հայերի ակտիվ մասնակցության հնարավոր չէ շարունակել պայքարը, իսկ այս երկրորդ կռվի ժամանակ, մանավանդ Տրապիզոնի կտակից հետո հայերը զրեթե չէին մասնակցում Բյուզանդիայի դեմ մղած պատերազմին, առաջարկություն է անում կայսրին և խնդրում հաշտություն։ Վասիլն անմիջապես ընդունում է այդ առաջարկը և կնքում պայմանագիր, ըստ որի Գեորգին կայսրությանն է վերադարձնում Դավիթ Կյուրապաղատի ժառանգությունը, այսինքն՝ Տայքը, և իր որդուն էլ տալիս է պատանդ, իսկ կայսրն էլ իր հերթին դուրս է բերում զորքերը Վրաստանի սահմաններից։ Այնուհետև Բյուզանդական բանակը շրջանցելով Բագրատունիների թագավորության սահմանը, մտնում է Վասպուրական։ Սրանով էլ վերջանում են 1022—1023 թթ. վրաց-բյուզանդական կռիվները, և Տայքը վերջնականապես զավթվում է կայսրության կողմից։

Վասիլ Երկրորդը կարգավորելով Վասպուրականի գործերը, վերածելով Հայաստանի այդ մասը կայսերական մի թեմի, մոտենում է Պարսկաստանի սահմաններին և ահ ու սարսափ է տարածում այդ կողմերի էմիրությունների ու իշխանությունների վրա։ Հեր քաղաքի պետը առանց դիմադրելու հայտնում է իր հպատակությունը, իսկ բյուզանդական բանակն էլ կանգ է առնում այնտեղ։ Սակայն, հանկարծակի սկսած սաստիկ սառնամանիքների հետևանքով նրա բանակը ենթարկվում է մի նոր աղետի, որի հետևանքով 1023 թ. վերջին կայսրը բանակով Վասպուրականի վրայով վերադառնում է Կ. Պոլիս, իսկ 1025 թ. դեկտեմբերին մահանում է 50 տարի թագավորելուց հետո։

Բյուզանդական կայսրության գլուխ 1026—1029 թթ. կանգնում է Վասիլի եղբայր Կոստանդին Ութերորդը, որը, ծեր լինելով, հազիվ երեք տարի կարողանում է իշխել։ Սա չուներ իր նախորդի զինվորական ունակությունը, Բյուզանդական կայսրության նվաճումները դրեթե կանգ են առնում, որովհետև ֆեոդալիզմի զարգացման հետևանքով երկրի մի շարք մարզերում ու թեմերում առաջանում են խռովություններ ու ապստամբություններ։ Ապստամբում է նաև Կավատիլոսին փոխարինող՝ Վասպուրականի թեմի կուսակալ Կամենատը, որի պարտությունից հետո այդ թեմի կառավարիչ է նշանակվում ներքինի Սիմոնը (1026)։

Արիստակես Լաստիվերտցին իր աշխատության 10-րդ գլխում նշում է, որ Կոստանդինը մահվան անկողնում կանչել է տալիս Կ. Պոլսում գտնվող Պետրոս կաթողիկոսի պատվիրակ Կիրակոս քահանային ու նրան հանձնելով Հովհաննես-Սմբատի կտակը ասում է «... Տար զգիրդ և տուր ի թագավորըն Հայոց. և ասա, թե որովհետև հանգոյն ամենայն հոգա-

[1] Մ. Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 51։

ծնաց մահու հրաւէրս և մեզ ժամանեաց, առ զքիր քո և տուր ղթագաւորութիւնդ որդւոյ քո, և որդի քո որդւոց իւրեանց մինչև յաւետեան»[1]: Ապա վերջում պատմիչը բացականչելով շարունակում է. «Ով դառն վաճառոյն այնորիկ. քանի՛ արեանց զանձն պարտական կացոյց. քանի՛ եկեղեցիք ի ձեռն վաճառոյն այնորիկ աւերեցան. քանի՛ դավառք անմարդ, ամայի դարձան, քանի՛ մեծանիստ աւանք մարդաթափ ի բնակչաց եղեն»[2]:

Մեջ բերված հատվածներից վերջինը պարզ ցույց է տալիս, որ երկիրն այդ վիճակին հասցնողը Բյուզանդական կայսրությունն է: Իսկ Լեոն քննելով ժամանակակից պատմագրի մեջ բերված հատվածներից առաջինը, նախ այն համարում է զրույց-ավանդություն և, երկրորդ, գտնում է, որ դժվար թե կայսրությունը նման քայլի դիմեր, որովհետև այդ փաստաթուղթը շատ կարևոր էր իր համար: Ապա նշում է, որ դժվար թե մի պատահական քահանայի տար այդ փաստաթուղթը, այլ ինքն իր սուրհանդակի միջոցով կուղարկեր Անի[3]:

Մենք գտնում ենք, որ Լեոյի այս տեսակետը վիճելի է: Նախ, Կոստանդինի ժամանակ խիստ փոխվել էր քաղաքական դրությունը, և կայսրության ագրեսիան դեպի Հայաստան կանգ էր առել: Երկրորդ, Վասպուրականի կուսակալի ապրստամբությունը ցույց էր տալիս, որ Հայաստանի գրավված մարզերն իրենց ըմբոստություններով կարող էին վտանգել կայսրության շահերը: Երրորդ, Կոստանդին կայսրը գտնվում էր Կ. Պոլսում ապրող հայերի խիստ ազդեցության տակ: Չորրորդ, կտակը ետ տալով, կայսրությունը ձգտում էր սիրաշահել հայերին և ապահովել իր արևելյան սահմանները: Հինգերորդ, Կիրակոս քահանան պատահական մարդ չէր, նա բյուզանդամոլ Պետրոս կաթողիկոսի ներկայացուցիչն էր: Հետևաբար, վերոհիշյալ հանգամանքները մեզ թերում են այն եզրակացության, որ պատմիչի տեղեկությունը պետք է ընդունել հավաստի, որ իրոք Կոստանդին կայսրը լինելով ավելի հեռատես անձնավորություն, ցանկացել է ետ վերադարձնել կտակը ոչ թե մարդասիրական ձգտումներից դրդված, այլ հենց իր կայսրության արևելյան սահմանների պաշտպանության համար: Այս հանգամանքը ճիշտ է նկատել Հ. Գելցերը, երբ գրում է. «Վտանգավոր էր և լավ մտածված պետական քաղաքականություն չէր արևելքում հայկական իշխանությունների միացումը, որ թե ազգով օտար էին և թե կրոնապես բաժան պետություն էին կազմում»[1]:

Այնուհետև, ժամանակակից պատմագիրը ավելացնում է, որ անարժան քահանան Կոնստանդինի տված թուղթը պահում է իր մոտ ավելի քան վեց տարի և նորից մեծ դումարով ծախում է Ռոմանոսի (1029—1034) Պահլագոնացի հաջորդ Միքայել Չորրորդ կայսրին (1034—1041). «Իսկ նորա առեալ զնամակն պահեաց առ իւր մինչև ի ժամանակս Միքայելի թագաւորութեան,— գրում է Արիստակես Լաստիվերտցին,— և վաճառեալ նմա՝ առ գանձ բազում»[2]: Անհավանական չի թվում մեզ, որ Կիրակոս քահանան այդ բոլորը կատարել է Պետրոս կաթողիկոսի խորհուրդներով, և ստացած գանձի մեծ մասը յուրացրել է արծաթասեր ագահ կաթողիկոսը: Միաժամանակ պետք է ընդգծել, որ այս հանգամանքների հետևանքով էր, որ Հովհաննես-Սմբատը, ինչպես կտեսնենք, հալածում էր կաթողիկոսին: Այսպիսով, Հովհաննես-Սմբատի կտակը նորից մրնում է բյուզանդական կայսրների մոտ և ծառայում է որպես պատրվակ, Հայաստանն նրանց ձեռքին խաղալիք դարձնելու համար:

Հայ քաղաքական հոսանքները և նրանց պայքարը

Վասիլ կայսրի մահվանից հետո հայ քաղաքական հոսանքները գնալով ավելի աշխուժանում են: Սենեքերիմ Արծրունու մահով թուլանում է նրա տոհմի ազդեցությունը երկրի որոշ շրջանների վրա: Հակաբյուզանդական քաղաքականություն վարող և Անդրկովկասում մեծ ազդեցություն ունեցող արխածղների թագավոր Գեորգին մահանում է, նրան հաջորդում է նրա որդի Բագրատը: Սեբաս-

[1] Լաստիվերտցի, էջ 53—54:
[2] Նույնը, էջ 54:
[3] Լեո, Հայոց պատմություն, Բ, էջ 679—680:

[1] Ն. Գելցեր, Համառոտութիւն Բյուզանդական կայսրների պատմության, Վաղարշապատ, 1901, էջ 265:
[2] Լաստիվերտցի, էջ 54:

տիայից Անի է վերադառնում Պետրոս կաթողիկոսը։ Անիում հանդես են գալիս երկու նոր քաղաքական խոշոր գործիչներ՝ իշխան Վեստ Սարգիս Սյունեցին, որը վարում էր պետության խնամակալի պաշտոնը թույլ թագավոր Հովհաննես-Սմբատի ժամանակ և Վահրամ Պահլավունին, որը վարում էր սպասալարապետության պաշտոնը, դրսևորելով իր քաղաքական գործունեությունն այդ պաշտոնում։

Սյունյաց Վեստ Սարգիս իշխանը, որն ամուսնացել էր Գրիգոր Բջնեցու աղջկա հետ, սկսած 1020-ական թվականների վերջերից ազդեցիկ դիրք է ձեռք բերում Բագրատունյաց արքունիքում։ Նա նախօրոք ստացել էր «անթիպատ», «պատրիկ» և «արևելից դուքս» տիտղոսները, պատվանունը, «վեստ» տիտղոսը նրա ստացած վերջին աստիճանն էր։ Այս տիտղոսներն ու աստիճանները ցույց են տալիս, որ նա ստացել է Բյուզանդիայից, պարզ է, կայսրության շահերի օգտին գործելու համար։ Հետևաբար, սա և Պետրոս կաթողիկոսը գլխավորում են բյուզանդական օրիենտացիա ունեցող հոսանքը։ Աշոտ Ջորրորդը, թեև Հովհաննես-Սմբատը, որ զայրացել էր կաթողիկոսի վրա, Պահլավունիները, ինչպես նաև Անի քաղաքի մեծամեծները և հատկապես ժողովուրդը, շարունակում են պայքարը Բյուզանդիայի և նրա կամակատարների դեմ։

Վասակ Պահլավունու մահվանից հետո (1021) երկրում ազդեցիկ դիրք է գրավում նրա որդի Գրիգոր Բջնեցին, որը հետագայում կայսրությունից ստանում է «մագիստրոս» աստիճան և հայտնի է նաև Մագիստրոս անունով։ Սա առաջին հերթին նշանավոր է իր գրական-կուլտուրական գործունեությամբ և Բագրատունիների պալատում դաստիարակի դեր է կատարում. նա միաժամանակ հայտնի է իր քաղաքական և ռազմական գործունեությամբ։ Գրիգոր Մագիստրոսը վարել է հակաբյուզանդական քաղաքականություն, դա երևում է նրա գրած թղթերից։ Ճիշտ չէ կարծել, որ Գրիգորին համարում է Վեստ Սարգսի ու կաթողիկոսի գործակից[1]։

Սենեքերիմ Արծրունու մահից հետո, ինչպես ասացինք, Պետրոս կաթողիկոսը Սեբաստիայից վերադառնում է Անի.

[1] Տես, Հայոց պատմ., Բ, էջ 681—689։

բայց նա իր այդ շրջանում տարվա բացակայության պատճառով երկրում ոչ մի համակրանք չէր ստեղծել։ Նույնիսկ նրա հարաբերությունները թագավորի հետ գնալով վատանում են՝ բյուզանդական ձգտումների և գուցե Կիրակոս քահանայի գործերի մեջ խառնվելու համար։ Պետրոս կաթողիկոսի գործունեությունը գնալով ուժեղանում է հօգուտ Բյուզանդիայի, հարելով հատկապես Վեստ Սարգսին։ 1033 թ. երկրաշարժի և արևի խավարման հետևանքով երկրում ուժեղանում են գուշակությունները ու սնոտիապաշտությունները։ Կաթողիկոսը ժամանակին չկարողանալով գուշակել դրանք, ավելի է դցում իր վարքը ժողովրդի աչքին, որով էլ ավելի են սրվում հակասությունները արքունիքում, և կաթողիկոսը ստիպված է լինում նույն թվականին գաղտնի հեռանալ Անիից ու գնալ դեպի Վասպուրական, այսինքն՝ դեպի Բյուզանդիային ենթակա երկրամասը։ Անիում կարող էին նոր կաթողիկոս ընտրել, բայց խուսափում էին հակաթոռ ստեղծելուց, այդ պատճառով բոլոր միջոցները գործադրում են նրա վերադարձի համար։ 1037 թ. կաթողիկոսը վերադառնում է Անի, բայց թագավորի հրամանով ձերբակալվում ու բանտարկվում է Բջնի բերդում։ Բյուզանդական հոսանքը չի կարողանում կասեցնել այդ ակտը։ Սակայն դա բանտարկություն չէր, այլ պատվավոր մի կալանք Գրիգոր Բջնեցու դղյակում։ Դրանից հետո Հովհաննես-Սմբատը Անի է բերել տալիս Սանահինի վանահայր Դիոսկորոսին և օծել է տալիս կաթողիկոս։ Այդ հողի վրա առաջանում են նոր խռովություններ ու երկպառակություններ։ Դրսից դուրս գալու համար թագավորը փորձում է նամակագրությամբ հաշտվել Պետրոս կաթողիկոսի հետ, բայց վերջինս մերժում է, մինչև որ Աղվանից Հովսեփ կաթողիկոսի գլխավորությամբ Անիում ժողով է գումարում և որոշում է հեռացնել Դիոսկորոսին, չհղյալ հայտարարելով նրա ընդունած օրենքները, որից հետո Պետրոսը նորից անցնում է աթոռի գլուխը։ Դա էլ բյուզանդական հոսանքի հաղթանակն էր։

Անիում տեղի ունեցած խռովությունները նոր էին վերջացել, երբ 1040 թ. կեսերին մահանում է Աշոտ Ջորրորդը, որ 20 տարի իշխել էր Անիից դուրս և ոչ մի ժամանակ չէր մտել մայրաքաղաքը, որովհետև թագավորը խիստ երկյուղ էր կրում

Նրանից: Սակայն Բագրատունիների հուշակավոր մայրաքաղաքն իր դռները բաց է անում այդ խիզախ մարդու դիակի առաջ, Բագրատունիների արքայական դամբարանում թաղվելու համար:

Այս ռազմիկ անձնավորության մահով լուրջ հարված է ստանում նաև հայ ռազմական ուժերի մի մասը, որը բռնում է իր կազմալուծման ուղին. «Եւ եղև զկնի մահուանն Աշոտոյ Թուլամորթիացան զօրքն Հայոց և առեցին զարուեստս պատերազմի»[1],— գրում է Ուռհայեցին: Այս հատվածը ցույց է տալիս, որ Աշոտը, որպես զինվորական, մեծ ազդեցություն է ունեցել հայկական զորքի վրա:

Դավիթ Անհողինի պայքարը Ապուլսուար էմիրի դեմ

1040-ական թվականներին Առաջավոր Ասիայի մի շարք երկրների վրա մութ ամպեր են կախվում: Սելջուկ-Թուրքերի արշավանքները տակն ու վրա են անում մի շարք երկրներ, առանձնապես Պարսկաստանը: Այդ դրությունից աշխատում է օգտվել Դվինի էմիր Ապուլսուարը և ընդարձակել իր տիրապետությունը: Ինչպես գիտենք, Զորագետի թագավոր Դավիթ Անհողինը տիրել էր Ուտյաց նահանգի արևմտյան գավառները և մի քանի տարի պայքարի մեջ էր Գանձակում Փաթլուի գլխավորությամբ հաստատված Շեդադյան էմիրության հետ, որի գլխավոր ճյուղը վաղուց էր հաստատվել Դվինում: Ահա այժմ Դվինի Ապուլսուար էմիրի նպատակն էր օգտագործել քաղաքական նպաստավոր պայմանները, ընդարձակել իր էմիրության տիրապետությունը Գանձակի արևմտյան կողմից ի հաշիվ Դավիթ Անհողինի տիրույթների: Կալվածային խնդիրներով հաճախ կռիվներ էին տեղի ունենում այդ երկու իշխանությունների միջև: Որպեսզի վերջ տա այդ վեճերին Դավիթ Անհողինը իր քրոջն ամուսնացնում է Դվինի Ապուլսուար էմիրի հետ: Սակայն այդ ամուսնությունը, որը տեղի էր ունեցել քաղաքական նպատակներով, հարցը չի լուծում, կալվածային վեճերը շարունակվում են նաև հետագայում:

1040 թ. Դվինի քուրդ Ապուլսուարը Գանձակի ճյուղի զոր-

[1] Ուռհայեցի, էջ 79:

քերի հետ, ըստ Ուռհայեցու, 150 000-անոց բանակով[1], որը, անշուշտ, չափազանցություն է, դուրս է գալիս Դավիթ Անհողինի դեմ և պահանջում է նրանից, որ նա իր տիրապետությունների մեծ մասը զիջի իրեն: Դավիթ Անհողինը թշնամու մեծ բանակի դեմ ուներ միայն 10 000-անոց զորամաս, այդ պատճառով միաժամանակ սպասողական դիրք է բռնում: Այդ ընթացքում նա դեսպաններ է ուղարկում Անի Հովհաննես-Սմբատի, աբխազների ու Սյունիքի Կապանի թագավորների մոտ և օգնական զորք է խնդրում, որպեսզի կարողանա նա մղել վտանգավոր թշնամուն, հակառակ դեպքում սպառնում է նրանց, որ ինքը կմիանա Ապուլսուարի հետ և կարշավի նրանց երկրների վրա: Անհողինի պահանջն ու սպառնալիքները տալիս են դրական արդյունք: Աբխազները տալիս են 4000, Անին 4000 և Սյունիքը՝ 2000 զինվոր, որոնք իր զորքերի հետ կազմում են 20.000-անոց մի բանակ, որով ի վիճակի է լինում կռվելու թշնամու հետ:

Դավիթ Անհողինն իր պատերազմին տալիս է նաև կրոնական բնույթ, աշխատելով Անդրկովկասի ժողովուրդներին դուրս հանել Դվին-Գանձակի էմիրության դեմ: Դավթի բանակը ծերունի Հովսեփ կաթողիկոսի գլխավորությամբ լցվում է Աղվանից աշխարհի հոգևորականներով, որոնք ոգևորում էին կռվողներին: Ապուլսուար քուրդ էմիրը իր մեծ ուժերի վրա հենված, նախ ծաղրի է ենթարկում հակառակորդի բանակը և ապա սկսում է պատերազմական գործողություններ: Թշնամին թեև սկզբում ունենում է որոշ հաջողություն, բայց վերջում հայ-վրացա-աբխազական զորքերը, ոգևորված իրենց հայրենիքի պաշտպանությամբ, լուրջ ջարդ են տալիս թշնամու գերազանց ուժերին ու ենթարկում փախուստի: Ճակատամարտը տևում է հինգ օր և ճակատամարտի վայրը ծածկվում է դիակներով: Հակառակորդը թողնելով մեծ ավար ու գերիներ, բազմաթիվ զոհեր, ետ է նահանջում: Դավիթ Անհողինը նորից տիրում է իր կորցրած գավառներին: Այդպիսով, շեդադյանների վտանգավոր մտադրությունները ձախողվում են հայ-վրացա և աղվանական միացյալ ուժերի առաջ:

[1] Ուռհայեցի, էջ 79:

2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԱՆԻՈՒՄ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Քաղաքական ճգնաժամը Անիում

1041 թվականի սկզբին Աշոտ Դ-ից վեց ամիս հետո մահանում է Հովհաննես-Սմբատը և Անին ազատվում է այդ թուլամորթ թագավորից, որն իր 20 տարվա թագավորության ընթացքում իր հոր թողած հզոր պետությունը, որի հետ հաշվի էր նստում Վասիլ Երկրորդ կայսրը, հասցրել էր կործանման եզրին: Բագրատունյաց թագավորության այդ թուլացումը, անշուշտ, միայն թագավորի թուլության հետևանք չէր, այլ հիմնականում ֆեոդալական մասնատվածության ուժեղացման և 1020-ական թվականներից սկսած Բյուզանդական կայսրության ագրեսիվ քաղաքականության արդյունք էր: Հովհաննես-Սմբատի մահով Անիում սկսվում է անիշխանությունը և երկիրը կանգնում է քաղաքական ավելի սուր ճգնաժամի առաջ:

Բագրատունիների միակ օրինավոր ժառանգը Աշոտ Ողորմածի 17-ամյա որդի Գագիկն էր, որ գտնվում էր Անիից դուրս և կրթվել ու դաստիարակվել էր Գրիգոր Բջնեցու հմուտ ձեռքի տակ, Պահլավունիների խիստ ազդեցության ներքո: Քաղաքական այդ ճգնաժամի օրերին Անիում խոշոր դեր էին խաղում քաղաքական չորս գործիչներ՝ Պետրոս կաթողիկոսը, իշխան Վեստ Սարգիսը, Գրիգոր Բջնեցին և նրա հորեղբայր Ծերունի Վահրամ Պահլավունին: Վերջինս զբաղված լինելով ռազմական գործերով, շատ հաճախ չէր մասնակցում երկրի քաղաքական գործերին: Հետևաբար Հովհաննես-Սմբատից հետո Վեստ Սարգիսը, Գրիգոր Բջնեցին և Պետրոս կաթողիկոսը երկիրը կառավարելու համար կազմում են ժամանակավոր կառավարություն:

Սակայն բյուզանդական կայսրը՝ Միքայելը, որին Կիրակոս քահանան վաճառել էր Անիի կտակը, լսելով Հովհաննես-Սմբատի մահը, անմիջապես դեսպան է ուղարկում Անի և պահանջում է, համաձայն Տրապիզոնի դաշինքի-կտակի, կայսրությանը հանձնել Անին՝ իր շրջակայքով: Այսպիսով, Տայքից ու Վասպուրականից հետո, բյուզանդական ագրեսիան

ուղղվում է դեպի Անի-Շիրակյան թագավորություն, մի այնպիսի ժամանակ, երբ սելջուկյան աշխարհակործան արշավանքները բախում էին Հայաստանի դռները և միաժամանակ լուրջ սպառնալիք էին ստեղծում կայսրության համար: Այդ պահանջի հիման վրա Անիում առաջանում են տարաձայնություններ և սրվում է քաղաքական ճգնաժամը: Ավելի է ակտիվանում բյուզանդամոլ հոսանքը, որի զեկավարներն էին Վեստ Սարգիսը և Պետրոս կաթողիկոսը: Սրանցից յուրաքանչյուրն ուներ իր ծրագիրն ու պահանջը: Կաթողիկոսը գտնում էր, որ պետք է Տրապիզոնի դաշինքը (կտակը) հարգել, երկիրը հանձնել Բյուզանդիային և նրա գերիշխանության տակ վարել «ապահով» կյանք: Իսկ Վեստ Սարգիսը իր հերթին փորձում է գրավել Բագրատունիների գահը, բայց դարձյալ երկիրը պահել Բյուզանդիայի հովանավորության ներքո, որպես վասալ իշխանություն: Որ Վեստ Սարգիսը ձգտել է գրավել գահը, պարզ երևում է ժամանակակից պատմագիր Արիստակես Լաստիվերտցու հետևյալ վկայությունից. «Իսկ մի ոմն ի գլխաւոր ազատացն Հայոց Սարգիս անուն՝ եդ շուք անձինն թագաւորել ի վերայ տանն Շիրակայ և որք շուրջ զնովաւ զաւադք. զի զամենայն գանձս գտեալ ի տան թագաւորին Յովհաննիսի՝ յինքն ժողովեաց. վասն զի մահուան նորա նա էր հոգաբարձու նմա»[1]:

Բյուզանդական քաղաքականություն վարող այս գործիչների հետևում կանգնած էին մանր ազնվականներն ու հոգևորականությունը: Բյուզանդական կայսրությունը մինչև 11-րդ դարը վարում էր մանր ազնվականներին հովանավորելու քաղաքականություն՝ ընդդեմ խոշոր ազնվականության: Այդ պատճառով հայ մանր ազնվականների զգալի մասը գնում էր Վեստ Սարգսի հոսանքի հետ: Սակայն սրանց ձգտումների դեմ հանդես է գալիս հայրենասիրական հոսանքը, որի կողմն էր ժողովուրդը, իշխանների մի մասը, Ծերունի սպարապետ Վահրամ Պահլավունու գլխավորությամբ, որն իր ազգատոհմից հավաքել էր 30 իշխան, կանգնել էր զորքի և ժողովրդի գլուխը ու չէր համաձայնվում, որ երկիրն ու քաղաքը հանձ-

[1] Լաստիվերտցի, էջ 54:

նեն օտարներին. «Իսկ Վահրամ այր հզօր ու անուանի, և բարեպաշտութեամբ յոյժ վեհ,— գրում է Լաստիվերտցին,— որպէս թէ ոչ ոք հաւասար նմա Պալհաւ հանդերձ իւրոք ազգակցօք, որդւովք և եղբօրորդւովք իբրև երեսուն ազատք, ոչ միաբանեցան ընդ նմա...»[1], այսինքն՝ չի համաձայնվում Սարգսի հետ և կազմում է 30 հազարանոց բանակ[2], իր հայրենի քաղաքը պաշտպանելու համար: Այս հայրենասեր, երկրի անկախությունը պաշտպանող հոսանքին էր հետևում նաև եռապետության երրորդ անդամ Գրիգոր Բջնեցին, որը նույնպես դեմ էր Սարգսի և կաթողիկոսի բռնած դիրքին: Այդ հոսանքի նպատակն էր պաշտպանել երկրի անկախությունը և թույլ չտալ, որ Բյուզանդիան նվաճի երկիրը, և առաջ քաշել գահի օրինավոր թագաժառանգ Գագիկի թեկնածությունը: Այս պայքարի ընթացքում եռապետությունը քայքայվում է, որովհետև Սարգիսը ձգտում էր փառքի, որպես փառամոլ անձնասիրություն, իսկ Գրիգորը մղվում էր դեպի հայրենասիրություն, կաթողիկոսն էլ բռնում էր չեզոք դիրք, առիթես տուրք տալով հայրենասիրական հոսանքին: Հրապարակը մնում է Վեստ Սարգսի և Վահրամ Պահլավունու հոսանքներին:

Այդ երկու իրար դեմ պայքարող ուղղություններից գնալով ուժեղանում է ծերունի զորավար Վահրամի գլխավորած հոսանքը, որովհետև այս քաջ ու ռազմի զորավարը Վեստ Սարգսի նման երբեք չի մտածել իր անձնական փառքի ու փառասիրության համար: Նրա նպատակն էր անկաշառ կերպով ծառայել հայրենիքին, պահպանել երկրի անկախությունը՝ թագավորությունը, թույլ չտալ, որ օտարները գավթեն Հայաստանը: Ահա այս էր հայրենասեր սպարապետի վեհ իդեալը, հակառակ նրան, ինչ Վեստ Սարգիսը գործում էր, դրա համար էլ ժողովուրդը գնում էր նրա ետևից: Վեստ Սարգիսը Անին Բյուզանդիային տալու անվան տակ աշխատում էր հափշտակել Բագրատունիների գահը և իշխել Անիի և նրա շրջակայքի վրա[3]: Այդ նպատակով նա գրավում է արքունի գանձերը և ամ-

1 Լաստիվերտցի, էջ 54—55:
2 Ուռհայեցի, էջ 85:
3 Լաստիվերտցի, էջ 54:

բանում միջնաբերդում: Դրանով նա, կարծես թե, որոշ չափով հասնում է իր նպատակին, բայց միաժամանակ իրեն վարկաբեկում է անում ժողովրդի առաջ և իր դեմ հանում նաև իր աներոջը՝ Գրիգոր Բջնեցուն: Այսպիսով, ժողովրդի ճնշման տակ բյուզանդական քաղաքականություն վարող հոսանքը թուլանում է և կուչ է գալիս Անիի միջնաբերդում, տիրելով միայն արքունի գանձերին: Թեև այս հոսանքը լուրջ խոովություններ է հանդես բերում Անիում, բայց դեռ կայսրության զորքերը չէին արշավել Շիրակ՝ Անիի վրա, երբ Շիրակ-Անիյան թագավորությանը մի նոր վտանգ էր սպառնում երրորդ հոսանքից, որը նոր էր ձևավորվել Անիում: Այս երրորդ հոսանքը գտնում էր, որ Անիի թագավորությունը պետք է հանձնել Տաշիրքի թագավոր Դավիթ Անհողինին, որը հաղթանակով էր դուրս եկել Դվինի Ապուլսուար էմիրի դեմ մղած պայքարից, այն էլ Անիի և վրացական զորքերի օգնությամբ:

Դավիթ Անհողինը Անին դարձյալ կայսրության թևելադրությամբ էր պահանջում: Դրանով Բյուզանդիան մի նպատակ էր հետապնդում, խոստանալով Անին տալ Գուգարքի թագավորությանը, ձգտում էր կռվեցնել Բագրատունիների այդ երկու ճյուղերին միմյանց դեմ, թուլացնել ռազմապես և ապա միջամտել ու տիրել նրանց հողերը: Դավիթ Անհողինը հենված իր մեծ ուժի և Անիում ստեղծված հոսանքի վրա, որպես Բագրատունի, իրեն հայտարարում է Անիի թագավորության ժառանգ և իր բանակով շարժվում է դեպի Շիրակ, նպատակ ունենալով գրավել այդ թագավորությունը և միացնել իր՝ Գուգարքի իշխանության հետ: Անիի նկատմամբ Դավիթ Անհողինից ավելի մեծ պահանջ կարող էր ներկայացնել նաև Կարսի Բագրատունիների ճյուղը: Այստեղ Աբասին 1029 թ. հաջորդել էր նրա որդի գրասեր Գագիկը, որը ավելի շուտ կողմ լինելով հայրենասիրական հոսանքին, բռնում է չեզոք դիրք և չի խառնվում Անիի գործերին:

Դավիթ Անհողինն իր զորքերով հարձակվելով Շիրակ-Այրարատյան թագավորության վրա, որոշ վնաս է պատճառում երկրին. «Սա յարուցեալ ի վերայ թագաւորութեանն Հայոց և մատնեաց ի սուր և գերութիւն զգաւառս բազումս և գայլ անդադար զօրօք բազմօք յաշխարհն Հայոց.— գրում է Ուռհա-

յեցին,— բազում նեղութեամբ և անթիւ կրակով այրեացն ի զօրաց նորա...»[1]: («Սա հարձակվեց հայոց թագավորության վրա և սրի ու գերության մատնեց բազմաթիվ գավառներ, բազմաթիվ զորքերով եկավ անցավ Հայաստանով... մեծ նեղություններով և անթիվ հրդեհներով այրվեցին նրա զորքերի կողմից...»): Բայց չի կարողանում մոտենա Անիին, որովհետև նրա դեմ դուրս է գալիս սպարապետ Վահրամ Պահլավունին ու ետ մղում նրան: Դրանով պարտվում է նաև երրորդ հոսանքը և այլևս լուրջ վտանգ չի կարողանում սպառնալ Շիրակ-Այրարատյան թագավորությանը:

Երրորդ հոսանքի պարտությունից հետո գլխավոր վտանգը շարունակում է մնալ Վեստ Սարգսի խմբի գործունեությունը, որն արդեն մեծ հույսեր էր կապել կայսրության ռազմական ուժերի հետ: Դավաճան Վեստ Սարգիսը տեսնելով, որ իր դրությունը գնալով ծանրանում է, նամակ է ուղարկում կայսրին, որ զորք ուղարկի և տեր դառնա Հովհաննես-Սմբատի ժառանգությանը, համաձայն Տրապիզոնի կտակի և խոստանում է Անիի դարպասները բաց անել նրա զորքերի առաջ: Այդ հույսով Միքայել կայսրը մեծ բանակ է ուղարկում Շիրակ, Անին գրավելու համար: Այդ բանակը, ըստ Ուռհայեցու[2] և Սմբատ սպարապետի[3], հասնում էր 100000-ի և անարգել կերպով մտնում է Հայաստան, հրի ու սրի մատնելով մի շարք գավառներ, հասնում է մինչև Անի քաղաքը և պաշարում այն: Իշխանաց իշխան Վահրամ Պահլավունին, որը նախօրոք կազմակերպել էր 30.000-անոց բանակ, իր շուրջը համախմբված 30 իշխանների ու Անիի մեծամեծների օգնությամբ ձեռնամուխ է լինում մայրաքաղաքի պաշտպանությանը, ուր ապաստան էին գտել նաև շրջապատի գյուղացիները: Նա հրավիրում է մեծամեծների խորհուրդ, որոշվում է մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանել հայրենի քաղաքը ներքին և արտաքին թշնամիներից և ոտքի հանել քաղաքի ողջ բնակչությանը:

Բագրատունյաց մայրաքաղաքը պաշարող զորոզ բյուզանդական զորքերը, վստահ իրենց մեծ ուժերի վրա, ամեն օր հազար ու մի հայհոյանք և լուտանքներ էին թափում հայերի գլխին: Քաղաքի բնակչությունը սաստիկ զայրացած բյուզանդական զորքերի այդ լկտի վերաբերմունքից, ոտքի է կանգնում և պահանջում ծերունի սպարապետից, որ նա զորքը դուրս բերի քաղաքից և պատասխան տա թշնամուն, որը շատ էր ամբարտավանացել: Ալևոր սպարապետ Վահրամն էլ ավելի է մեծացնում իր բանակը, ամրացնում քաղաքի պարիսպները ու դարպասները, ապա բանակի հիմնական մասով դուրս է գալիս քաղաքի Ծաղկոցաձորի կողմի գաղտնի դռնից և հարձակվում է թշնամու բանակի վրա մի այնպիսի ժամանակ, երբ նրա մեծ մասը զբաղված էր բաբան գործիքի օգնությամբ քաղաքի պարիսպները քանդելով: Հայերի հարձակումով Անիի պարիսպների տակ տեղի է ունենում մեծ ճակատամարտ: Հայերը, որ ձգտում էին մինչև վերջին շունչը կրծքով պաշտպանել իրենց երկրի ու քաղաքի անկախությունը, խիզախորեն զրոհում էին թշնամու զորքերի վրա, ջարդում ու կոտորում նրանց: Անիի կանաչազարդ դաշտերը ծածկվում են դիակների կույտերով, իսկ Ախուրյան գետը ներկվում է արյունով. «...Զօրան ընդ կրունկն դարձուցանէին ի փախուստ և անողորմ ի բերան սրոյ կոտորէին: զնոսա,— ասում է Ուռհայեցին,— և Ախուրեան գետն որ գայր՝ ի յարիւն դարձաւ և ի ձայնէ գաղանացեալ զօրացն Հայոց փախստականքն ոչ կարէին փախչել, այլ կային յիմարեալք և մատնեալք ի ձեռս սրոյ: Եւ անդ էր տեսանել գահեղ և զհեծ օրն ի վերայ զօրացն հոռոմոց, որ ի քան հազարէն հարիւր լինէր մնացեալ»[1]:

(«...Զորքերին կրունկի վրա փախուստի մատնեցին և անողոքաբար սրով կոտորեցին նրանց, և Ախուրյան գետը արյուն դարձավ, հայոց գաղազած զորքերի ձայնից փախչողները չէին կարողանում փախչել, այլ հիմարացած կանգնած սրի էին մատնվում: Այնտեղ պետք էր տեսնել ահավոր և մեծ օրը, որ հասավ հոռոմների զորքերի վրա, որոնց քսան հազարից հարյուրը մնաց»): Այս թիվը կարող է չափազանցված լինել, բայց մի բան պարզ է, որ բյուզանդական բանակը մեծ զոհեր է տվել: Անիի պարիսպների տակ տեղի ունեցած ճա-

1 Ուռհայեցի, էջ 84—85:
2 Նույնը, էջ 85:
3 Սմբատ Սպարապետ, էջ 40:

1 Ժամանակագրութիւն, էջ 85—86:

կատամարտը վերջանում է հայկական զորքերի լիակատար հաղթանակով։ Բյուզանդական կայսրության անբարատավան լեգեոնները Բագրատունիների մայրաքաղաքի պարիսպների տակ թողնում են 20 հազարից ոչ պակաս սպանված ու վիրավոր զինվորներ։ Փախուստի դիմող զորքի մի մասը հայկական զորքերի հալածանքներից շփոթված խեղդվում է Ախուրյան գետում։ Սպարապետ Վահրամը մաքրում է Բագրատունիների թագավորության սահմանները բյուզանդական կայսրության նվաճողական զորքերից։ Այսպիսով, բյուզանդական կայսրության փորձը՝ զենքի միջոցով տիրել Անիին, մատնվում է անհաջողության, իսկ Բագրատունյաց պետությունը պահպանում է իր անկախությունը։

Այնուհետև Բյուզանդիան միաժամանակ ձեռք է քաշում Շիրակ-Այրարատյան թագավորությունից, որի համար շատ զոհեր է տվել։ Իսկ հայրենասիրական հոսանքը Վահրամ Պահլավունու գլխավորությամբ, որին այդ ընթացքում ակտիվ կերպով օգնում էր նաև Գրիգոր Բջնեցին, հաղթանակ տանելով Վեստ Սարգսի, Դավիթ Անհողինի հոսանքների և բյուզանդական զորքերի դեմ, պահանջում է, որ օրինավոր թագաժառանգ Աշոտ Չորրորդի որդի Գագիկին բերել Անի և հռչակել թագավոր։ Ներսունի սպարապետը ժողովրդի պահանջով Անի է բերել տալիս արքայորդուն, որն արդեն 18 տարեկան էր[1], և, ինչպես Սմբատ սպարապետն է ասում. «...էր զարգացեալ և վայելուչ և իմաստուն և հմուտ աստուածային ուսմանց»[2]։ Ապա Գրիգոր Մագիստրոսի գլխավորությամբ քաղաքի մեծամեծներն ու երկրի իշխանները հավաքվում են Անիում և 1042 թ. Գագիկին հռչակում են թագավոր։ Վահրամի, Գրիգորի ու ժողովրդի ճնշման տակ Պետրոս կաթողիկոսն ստիպված է լինում օծել թագավորին։ Այդպիսով, մեկ ու կես տարվա քաղաքական ճգնաժամից հետո հայրենասիրական հոսանքը Պահլավունիների գլխավորությամբ 18-ամյա Գագիկին թագավոր հռչակելով հաղթանակում է։ Պահլավունիների գործունեությունից երևում է, որ եթե Վահրամը գլխավորում է երկրի ռազմական

[1] Ուռհայեցի, էջ 86։

[2] Սմբատ Սպարապետ, էջ 41։

ուժերը, ապա Գրիգոր Բջնեցին իր ձեռքն էր վերցրել երկրի քաղաքական կառավարման գործը։

Անիում տեղի ունեցած այս քաղաքական պայքարի ընթացքում Վասպուրականի Թոռնավան գավառում հետաքրքիր մի դեպք է կատարվում։ Սննեքերիմ Արծրունու հետ Վասպուրականի, ինչպես և Արծրունի բոլոր իշխանները չէին գաղթել, չէր գաղթել նաև Թոռնավան գավառի Արծրունյաց իշխան Խուլ-Խաչիկը, որն իր քաջագործությամբ մեծ անուն էր հանել։ Սակայն մի անգամ, երբ նրա երկու որդիները՝ Հասանն ու Ճնճղուկը, իրենց զորքերով բացակայում էին, Հեր և Սալմաստ գավառների էմիրները հարձակվում են Թոռնավան գավառի վրա։ 70-ամյա Խուլ-Խաչիկը հավիվ կարողանում է զինել 70 հոգու և իր փոքր որդի Իշխանիկի հետ դուրս է գալիս թշնամիների դեմ կռվի։ Հայերը թեև սկզբում ջարդ են տալիս թշնամուն, բայց վերջում անզգուշության հետևանքով պարտվում են, իսկ Խուլ-Խաչիկն ու նրա որդի Իշխանիկն էլ սպանվում են։ Հակառակորդները վերցնելով ավար և գերիներ վերադառնում են իրենց տեղերը։ Սակայն շուտով վրա են հասնում Խուլ-Խաչիկի երկու որդիները՝ Հասանն ու Ճնճղուկը, և իրենց 5000 զինվորներով հարձակվում են Հերի ու Սալմաստի էմիրների վրա, ջարդում են նրանց 15000 զորքին, սպանում են մի շարք աշքի ընկնող էմիրների և լուծում իրենց հոր ու եղբոր վրեժը։ Իսկ սա ցույց է տալիս, որ Վասպուրականի տարբեր գավառներում տակավին կային որոշ ռազմական ուժեր՝ արտաքին թշնամիներին դիմադրելու համար։

Բագրատունյաց թագավորության ժամանակավոր ամրապնդումը

Գագիկ Երկրորդը (1042—1045) թագավոր է դառնում մի այնպիսի ժամանակ, երբ պետությունը գտնվում էր ծանր վիճակում։ Այդ ժամանակաշրջանում իշխանների մեջ Բագրատունիների նեցուկը հանդիսանում էին Պահլավունիները, իսկ կռվող ուժը ժողովուրդը։ Պատանի Գագիկը հանդիսանում էր ոչ միայն իր ժամանակի գիտուն և կրթված մարդկանցից մեկը, այլև իր հոր նման քաջ ռազմիկ էր, վայելում էր զորքերի ու զինվորականների համակրանքը։ Պահլավունիների օգնությամբ նա իր ձեռքն է վերցնում երկրի

ներքին խռովությունները ճնշելու և պետությունն ամրապնդելու գործը։

Գագիկն առաջին հերթին աշխատում է ճնշել Վեստ Սարգսի ըմբոստությունը։ Նա մտնում է միջնաբերդ, գրավում է արքունի գանձերը և ստիպում ըմբոստին հնազանդվել։ Սակայն խռովարարը թեև հպատակություն է հայտնում արքային, բայց շուտով դժում է իր խոստումը, նորից հափշտակում է արքունի գանձերը, փախչում է միջնաբերդից ու ամրանում իր հայրենի կալված Սուրմառի բերդում, որտեղից շարունակում է իր դավադրական խաղերը։ Նա նամակներով կապվում է կայսրի հետ, պահանջում է նրանից, որ նոր բանակ ուղարկի Անին գրավելու համար։ Սակայն Գագիկ երկրորդը փոքրաթիվ զորքով հարձակվում է Սուրմառի բերդի վրա, հաղթում է հակառակորդին և ձերբակալած դավաճանին ու նրա համախոհներին բերում է Անի և բանտարկում միջնաբերդում։ Բայց նենգավոր Վեստ Սարգիսը նորից լեզու է գտնում արքայի հետ և ազատվում բանտից, մի ակտ, որի հետ չի համաձայնվում ժամանակակից պատմագիր Արիստակես Լաստիվերացին և ասում է, փոխանակ զրկելու կյանքից[1], ազատություն է շնորհում ու վերադարձնում իր պաշտոնին։ Այսպիսով, բյուզանդական հոսանքը ոչ միայն ժամանակավորապես պարտվում է, այլև զինաթափ է լինում հայրենասիրական հոսանքի առաջ և երկիրը մեկ ու կես տարվա փոթորիկներից հետո խաղաղվում է։

Միքայել Պափլագոնացի կայսրի մահվանից հետո Բյուզանդիայում իշխանության գլուխը կանգնում է Կոստանդին Թ. Մոնոմախը (1042—1054)։ Նա իր ձեռքը վերցնելով իշխանությունն, իր դեմ տեղի ունեցած ապստամբությունը ճնշելուց հետո, Վեստ Սարգսի խորհրդով նորից դեսպան է ուղարկում Անի և պահանջում է, համաձայն Տրապիզոնի դաշինքի, իրեն զիջել Անին ու նրա շրջակայքը։ Բագրատունի հայրենասեր թագավորը թեև հարգալից պատիվներով է ընդունում կայսերական դեսպանին, բայց մերժում է նրա ապօրինի պահանջը, ասելով, որ իր հայրենի երկիրն ու քաղաքն

[1] Արիստակես Լաստիվերացի, էջ 55։

ուրիշներին տալ չի կարող։ Այն ժամանակ գոռոզ Մոնոմախը բանակ է ուղարկում Հայաստան՝ Անին բռնի կերպով գրավելու համար, բայց հանդիպելով հայերի կատաղի դիմադրությանը, պարտվում և ետ է քաշվում։ Դրանից հետո գոռոզ կայսրը մի նոր և ավելի մեծ բանակ է ուղարկում Հայաստան, Նիկողայոս հայտնի զորավարի գլխավորությամբ։ Նա միաժամանակ տմարդորեն դաշինք է կնքում Դվինի քուրդ Ապուլսուարի հետ, հանում է նրան հայերի դեմ՝ թիկունքից խփելու համար, խոստանալով տալ նրան այն բոլոր հողերը, որոնք նա կգրավի Շիրակ-Այրարատյան թագավորությունից։ Սա ցույց է տալիս, որ քրիստոնյաներին «հովանավորողի» դերում հանդես եկող կայսրությունը իր դիշատիչ քաղաքականությունն առաջ մղելու համար կարող էր դիմել ամեն տեսակի ստորություններ, անգամ իր հողերը Ապուլսուար էմիրին զիջելով, միայն թե միանգամից ոչնչացնել Շիրակ-Այրարատյան թագավորությունը, որն իր գլուխը չէր խոնարհում նենգամիտ կայսեր առաջ։

Բյուզանդիայի այս երրորդ նոր արշավանքը և Ապուլսուարի թշնամությունը Շիրակ-Այրարատյան թագավորության համար ստեղծում են ծանր դրություն։ Դվինի Ապուլսուար էմիրը թեև սկսել էր պատերազմական գործողությունները, բայց Գագիկին ու Պահլավունիներին հաջողվում է առանց լուրջ կռիվների, նվերներ տալով, հաշտվել նրա հետ։ Հայերը հասկացրին քուրդ էմիրին, որ Անիից հետո հերթը հասնում է Դվինին։ Ապա հայկական ամբողջ ուժերը կենտրոնացվում են բյուզանդական բանակի դեմ և փառավոր ջարդ տալով, ետ են շպրտում[1]։ Այսպիսով, Մոնոմախին, չնայած իր գործ դրած բոլոր ջանքերին, չի հաջողվում նվաճել Անին։ Իսկ հայերի այս հաղթական կռիվները ցույց են տալիս, որ մի բուռ շիրակցիներ իրենց հերոսական սխրագործություններով ոչ միայն պաշտպանում են հայրենի երկիրն ու մայրաքաղաքը, այլև սիստեմատիկ ջարդելով մեծ պետության ագրեսոր բանակները, վարկաղուրկ են անում նրան Արևելքում։

[1] Չամչյան, հատ. Բ, էջ 926։

Այնուհետև, Գագիկ Երկրորդը շրջելով իր թագավորության սահմաններում, ճնշում է բոլոր ըմբոստություններն ու ապստամբությունները, վերականգնում է երկրի քաղաքական կարգը և մոտ երեք տարի խաղաղ կառավարում է իր թագավորությունը: Բյուզանդիան ստիպված է լինում ոչ միայն ձեռք քաշել Անիից, այլև ճանաչել Գագիկ Երկրորդի թագավորությունը, ուղարկել նրան թագ ու ծիրանի:

Գագիկ Երկրորդի թագավորության տարիներին Պարսկաստան-Ատրպատականից սկսվում են սելջուկ-թուրքերի սիստեմատիկ արշավանքները դեպի Շիրակ-Այրարատյան թագավորությունը և մեծ վնաս պատճառում երկրին: Ժողովուրդը մշտապես ահ ու սարսափի մեջ էր այդ ավազակաբարո հրոսակներից: Գագիկ Երկրորդը Գրիգոր Բջնեցու ղորքերի օգնությամբ դուրս է գալիս նաև այս վտանգավոր նոր թշնամու դեմ և մի անգամ Հրազդանի ափին տեղի ունեցող ճակատամարտում լուրջ ջարդ է տալիս սելջուկյան հրոսակներին ու հետ շպրտում դեպի Պարսկաստան: Վերցված բազմաթիվ գերիների թվում կային նաև մի շարք զորավար-հրամանատարներ: Այսպիսով, Շիրակ-Այրարատյան թագավորությունը, ինչպես նաև Վասպուրականի իշխանությունը, պատվար էին հանդիսանում կայսրության արևելյան սահմաններում՝ Արևելքից եկող արշավանքների առաջ:

Հայկական պետականության անկումը

Հայկական պետությունը 1040-ական թվականներին կանգնած էր ծանր դրության առաջ, նրա գլխին կախված էր մի կողմից արևելքից եկող սելջուկ-թուրքերի արշավանքների վտանգը և մյուս կողմից Բյուզանդիայի ագրեսիան, որը յուրջ սպառնալիք էր ներկայացնում արևմուտքից, իսկ Անիում բույն դրած Վեստ Սարգիսն ու իր համախոհները իրենց լարած դավերով ոչ պակաս վտանգ էին ներկայացնում Բագրատունյաց դինաստիայի վերջին գահակալի դեմ: Սակայն Բագրատունիների գլխավոր վտանգն այն ժամանակ սպասվում էր Բյուզանդիայից:

Բյուզանդական կառավարությունը տեսնելով զենքով այնքան էլ հեշտ չէ գրավել Անին, Վեստ Սարգսի խորհրդով նախ ճանաչում է Գագիկի թագավորությունը, ապա նրա միջոցով դավեր և ինտրիգներ է կազմակերպում մայրաքաղաքում: Գագիկ Երկրորդը այդ նենգ սյունեցուն հավատալով, բշնամանում է Գրիգոր Բջնեցու հետ: Երկրի ամենածանր րոպեին քաղաքական այդ աչքի ընկնող գործիչների հարաբերությունների սրությունը, որը հետո վերածվում է թշնամության, ծանր հարված էր հայրենասիրական հոսանքին, որովհետև Գրիգոր Բջնեցին ծանրակշիռ դեմք էր, աղդեցություն ուներ երկրում ու մեծ դեր էր խաղացել հայրենասիրական հոսանքի պայքարը կազմակերպելու գործում:

Պատմաբան Լեոն գտնում է, որ Գրիգոր Բջնեցին հայտնի բյուզանդամոլ էր: Նա թեքվում է դեպի հայրենասիրական հոսանքը մի նպատակով, փրկել իր տոհմի պատիվը, որովհետև, եթե իր փեսա Վեստ Սարգիսը ավելի ցածր կարգի իշխան լիներով դրավեր Բագրատունիների դահը, վիրավորական էր իր տոհմի համար: Իսկ երբ Բյուզանդիան հավաստիացնում է նրան, որ դավադիր սյունեցին չի կարող թագավորական թագ ձեռք բերել, այն ժամանակ Գրիգորը նորից բռնում է իր հին բյուզանդամոլ քաղաքականության ուղին, որի հետևանքով էլ սրվում են նրա և թագավորի հարաբերությունները[1]: Բայց մեր կարծիքով Գրիգոր Բջնեցին սկզբից բյուզանդամոլ չի եղել, նա իր քաղաքականությամբ միշտ էլ հետևել է իր հորեղբոր քաղաքական կուրսին, ուստի ճիշտ են այն պատմաբանները, հատկապես Շլյումբերժեը, որոնք գտնում են, որ թագավորի ու Գրիգորի հարաբերությունները սրել է իշխան Վեստ Սարգիսը, համոզելով երիտասարդ թագավորին, որ իբրև թե Գրիգոր Պահլավունին և այդ ճանապարհով թշնամացրել է սանին իր ուսուցչի հետ: Որ թագավորի և Գրիգորի միջև եղել է թշնամություն և Գագիկը հալածել է Բջնեցուն, դա երևում է իր՝ Գրիգորի գրած նամակներից[2]: Սակայն Գագիկը շուտով հասկանում է գործի էությունը և աշխատում է հաշտվել Գրիգոր Բջնեցու հետ: Երբ վերջինը թողնում է Անին և գնում է Բջնի, թագավորը նրա հետևից ուղարկում է Սարգիս վարդա-

1 Հայոց պատմություն, հատ. Բ, էջ 696—697:

2 Թղթերը, էջ 139:

պետին և պահանջում է վերադառնալ Անի և մոռացության տալ անցածը: Բայց Գրիգորը մերժում է և հետո հեռանում Շիրակ-Այրարատյան թագավորության սահմաններից ու գնում Տարոն, որը պատկանում էր Բյուզանդիային: Թագավորի և Գրիգոր իշխանի միջև տեղի ունեցած այս տարաձայնությունը տեղի է ունենում 1044 թ. և ծանր է նստում երկրի վրա: Իսկ ինչ վերաբերում է ծերունի սպարապետ Վահրամին, նա թեև շատ էր սիրում իր եղբոր որդի Գրիգորին, բայց դատապարտում է նրա վարքագիծը և շարունակում մնալ Բագրատունիների պալատում, վարելով զորքերի հրամանատարի պաշտոնը, որպես հայրենիքի հավատարիմ զինվոր:

Բագրատունյաց պալատից Գրիգոր Բջնեցու հեռանալուց հետո դավաճան Վեստ Սարգիսը ավելի համարձակ է սկսում գործել, որովհետև ծերունի սպարապետը չէր խառնվում պալատի ներքին գործերին, ինչպես Գրիգորը: Վեստ Սարգիսը դաշնի կապ է հաստատում բյուզանդական կայսրության հետ և խորհուրդ է տալիս Մոնոմախին, որը արդեն ձեռք էր քաշել Անիից, խորամանկությամբ երիտասարդ թագավորին: կանչել տա Կ. Պոլիս և զրկի իշխանությունից, դնելով նրան և քաղաքացիներին կատարված փաստի առաջ: Կայսրը երկու երկրների միջև եղած վեճերը կարգավորելու, առևտրական և դիվանագիտական պայմանագրեր կնքելու պատրվակով Գագիկին կանչում է Կ. Պոլիս:

Պետք է ընդգծել, որ այդ ժամանակ, մանավանդ Գրիգոր Մագիստրոսի հեռանալուց հետո, հայրենասիրական հոսանքի ազդեցությունը թուլացել էր թագավորի վրա, ընդհակառակը, նա արդեն գտնվում էր շողոքորթ Վեստ Սարգսի, կաթողիկոսի և նրանց հոսանքի ուժեղ ազդեցության ներքո, որոնք աշխատում էին խորտակել թե՛ իրեն, և թե՛ թագավորությունը: Ինչպես տեսնում ենք, թեև Գագիկ թագավորը շատ մեղմ վերաբերմունք է ունեցել դեպի դավադիր իշխանը, սակայն վերջինս չի թողնում հարմար առիթները թագավորին նենգելու և քաղաքական ասպարեզից հեռացնելու համար: Դավաճան իշխանի նպատակն էր վերջ տալ Անի-Շիրակյան թագավորությանը և Բյուզանդիայի օգնությամբ ձեռք բերել մեծ պաշտոն ու կալվածքներ: Իսկ արծաթասեր կաթողիկոսի նպատակն էր երկիրը վաճառելով ձեռք բերել նոր գումարներ:

Գագիկ թագավորը մերժում է կայսրի առաջարկը Կ. Պոլիս մեկնելու մասին, որովհետև երկրի այդ տագնապալից շրջանում դարձյալ Վահրամ Պահլավունին, նրա համախոհները և ժողովրդի ներկայացուցիչները հանդես գալով պահանջում էին թագավորից մերժել կայսրի առաջարկը և չլսել դավադիրների խորհուրդները: Կայսրի առաջարկը մերժելուց հետո թագավորին համոզելու դերն իր վրա է վերցնում հայ հոգևոր պետ Պետրոս կաթողիկոսը: Սա արդեն Գագիկ թագավորի հետ խոսում է երդումներով: Գործադրվում են ներշնչման ամենաբիրտ միջոցները: Կաթողիկոսը տալիս է երդմնագիր, որը գրում է գրիչը պատարագի գինու մեջ թաթախելով: Այս եղանակով, հակառակ Վահրամի հոսանքի ցանկության, դավադիրներին հաջողվում է իրենց երդումներով համոզել թագավորին և ուղարկել Կ. Պոլիս, ինչպես շատ մեղմ կերպով գրում է Լաստիվերտցին. «Քանզի իմաստուն երդնու և անմիտն հաւատայ»[1]:

1045 թ. Գագիկ Երկրորդը հավատալով դավադիրների երդումներին ու խոստումներին, անտեսելով ծերունի Վահրամ սպարապետի խորհուրդները, Անիի 40 բանալիները հանձնում է կաթողիկոսին և մեկնում է Կ. Պոլիս: Կայսրության մայրաքաղաքում Գագիկին ցույց են տալիս լավ ընդունելություն, բայց շուտով նրան պալատ են հրավիրում և առաջը դնում Հովհաննես-Սմբատի չարաբաստիկ «կատակը» ու պահանջում, որ կայսրությանը հանձնի Անին և նրա շրջակայքը: Անփորձ թագավորը նոր է զգում, որ ինքը խակապես ընկել է թակարդը և նոր է հասկանում, որ ճիշտ էին Վահրամն ու նրա համախոհները և նենգ ու խաբեբա էին Վեստ Սարգիսն ու Պետրոս կաթողիկոսը: Նա զայրույթով բողոքում է այդ խարդախության դեմ և չի համաձայնվում իր երկիրը հանձնել օտարին: Սակայն ուշ էր, նա արդեն կտրված էր իր ժողովրդից, որն իր ռազմական ուժերով երեք անգամ ջարդել էր կայսերական զորքերին և պահպանել էր հայ-

---

1 Արիստակես Լաստիվերտցի, էջ 60:

րենիքի անկախությունը։ Իսկ այժմ մենակ, Կ. Պոլսի նենգ ու կախարդ միջավայրում ոչինչ անել չէր կարող, նրա բոլոր բողոքներն ու ըմբոստացումները իզուր են անցնում։ Գագիկին անմիջապես ձերբակալում և աքսորում են Մարմարայի իշխանական կղզիներից մեկը, որպես «պատվավոր» բանտարկյալ։

Կ. Պոլսում Գագիկ թագավորի հետ տեղի ունեցած դեպքերի մասին լուրը շուտով հասնում է Հայաստան։ Անիում տիրում է հուսահատություն, հայրենասիրական հոսանքի շարքերում հանդես են գալիս տատանվողներ։ Այդ հոսանքը աշխատում է նոր հովանավոր կամ թագավոր փնտրել, որովհետև հույս չուներ, որ Գագիկը կարող է ազատվել և վերադառնալ Անի։ Հայրենասիրական հոսանքի մի մասը գտնում էր, որ լավ կլիներ Անիի թագավորությունը հանձնել Դավիթ Անհողինին, մի մասը գտնում էր, որ այն պետք է հանձնել արխազների թագավոր Բագրատին, իսկ մի մասը նույնիսկ համաձայնվում էր հանձնել Դվինի Ապուսուար էմիրին[1]։ Այս ձգտումների դեմ հանդես եկան դավաճանները Պետրոս կաթողիկոսի ու Վեստ Սարգսի գլխավորությամբ, որոնք գտնում էին, որ պետք է Անին հանձնել կայսրությանը։ Կաթողիկոսը և Վեստ Սարգիսն աշխատում էին նոր դավեր, մեթոդներ ու միջոցներ գործադրել ազդելու Կ. Պոլսում բանտարկված թագավորի վրա, որպեսզի նա հրաժարվի գահից և Անին հանձնի Բյուզանդիային, իսկ նրանք աշխատում էին դրանով զինաթափ անել քաղաքացիներին իրենց հետագա պայքարից։

Դավաճան կաթողիկոսը, որը տվյալ դեպքում թագավորի կողմից նշանակվել էր երկրի ղեկավար-խնամակալ, Վեստ Սարգսի խորհրդով գաղտնի բանակցություններ է մղում Բյուզանդիայի արևելյան երկրների ընդհանուր կառավարիչի հետ, որը նստում էր Սամոսատ քաղաքում, խոստանում է Շիրակ-Այրարատյան թագավորությունը հանձնել կայսրությանը, հարցնելով, բայց դրա դիմաց ի՞նչ պետք է ստանար ինքը. «...Գրե,— ասում է Լաստիվերտցին,— թե

[1] Լաստիվերտցի, էջ 61։

Ծանո թագավորին թէ մեզ զինչ հատուցանէ փոխարէնս, և ես տաց զքաղաքս և զայլ ամուրս որ յաշխարհիս են»[1]։

Այս բանակցություններից և կայսրից ստացած խոստումներից հետո դավաճանները այդ նույն Սամոսատի կուսակալի միջոցով Անիի 40 բանալիները և երկրի անունից գրված կեղծ նամակն ուղարկում են Կ. Պոլիս, որ իբր թե Անիի մեծամեծները և երկրի իշխանները համաձայն են Անի քաղաքը Շիրակ գավառով հանձնել կայսրությանը. «...Առաքեցին առ Մոնոմախն զքաղաքին Անւոյ քառասուն բանալիք,— գրում է Սմբատ սպարապետը,— և գիր զկնի, թե ամենայն արևելք քո եղև»[2]։ Վասիլի և Միքայելի հետ տեղի ունեցած վաճառումներից հետո, այս երրորդ վաճառքն էր, որ կատարում էր դավաճան կաթողիկոսն Անին նորանոր շահադիտական առարկա դարձնելու համար։

Մոնոմախ կայսրը ստանալով կեղծ նամակը և Անիի քառասուն բանալիները, աքսորից պալատ է վերադարձնում Գագիկին և նրա առաջ դնելով նամակն ու բանալիները ասում է «...Թե զամենայն արևելք քո ետուն ինձ»[3]։ Իսկ հայրենասեր թագավորը ոչ միայն բողոքում է, այլ զայրույթով պատասխանում է. «... թագավոր Հայոց ես, եմ. և ես ոչ տամ զԱնի քեզ..»[4]։ Ապա վերջումն էլ ավելացնելով ասում է. «Դատ արասցե Քրիստոս ընդ իս և ընդ նենգաւորսն իմ...։ Տեր և թագաւորն ես եմ տանն Հայոց. ահա ես ոչ տայ զՀայք ի ձեռս քո, զի դու զիս խաբէութեամբ ածէր ի Կոստանդնուպոլիս»[5]։ Այսպես, արիասիրտ թագավորը 30 օր անընդհատ բողոքում էր և չէր համաձայնվում իր երկիրն ու թագավորությունը հանձնել բռնակալին։ Սամվել Անեցին անդրադառնալով պատմական վերոհիշյալ դեպքերին, շատ սեղմ ձևով գրում է. «Տեր Պետրոս և Աղատ Սարգիս ու Գրիգոր Բջնեցին նենգեցին զԳագիկ և զԱնի ետուն ի կայսրն Յունաց...»[6]։

[1] Լաստիվերտցի, էջ 62։
[2] Սմբատ Սպարապետ, էջ 46։
[3] Նույն տեղը։
[4] Նույն տեղը։
[5] Ուռհայեցի, էջ 95։
[6] Հավաքմունքն ի գրոց պատմագրոց, էջ 107։

Պատմական աղբյուրների տվյալներից երևում է, որ այս դեպքերի ընթացքում Պոլսումն էր գտնվում Գրիգոր Բջնեցին։ Որոշ ուսումնասիրողներ գտնում են, որ նա այնտեղ էր գնացել Գագիկ թագավորին նենգելու և նրա վրա ճնշում գործադրելու, որպեսզի նա թագավորությունից հրաժարվի։ Բայց մեզ ավելի հավանական է թվում, որ նա Պոլիս է գնացել հայրենասիրական հոսանքի և իր հորեղբայր Վահրամի ազդեցության տակ, Գագիկին օգնելու և նրան Հայաստան վերադարձնելու նպատակով։ Այդ երևում է Պետրոս կաթողիկոսին գրած նամակներից մեկի հետևյալ տողերից «Արդ ե՛կ դու ո՛վ գերակատարդ իմաստից, տե՛ս զիմոյ անտեղի մտածութեանս, յորս անկայ փորձութիւն առաւել քան զպռոմեականն, յորս ոչ բարերջանիկ զոլ նման եհաս հանդես... ի սեփհականն հասուցի հայրենի, զոր ի բազմաց վաճառեալ և ծախեալ և այժ հալածական լեալ փախչիմք, Տեր արասցե զատաստան»[1]։

(«Արդ ե՛կ, ո՛վ դու գերակատարների մեջ ամենակատարյալը, նայիր իմ անտեղի մտածողությանը, որի փորձության մեջ ընկա ավելի քան պռոմեականը, որ երջանիկ չլինելով նա ատյանի կանչվեց... (վնաս) հասցրի սեփական հայրենիքին, որը շատերից վաճառվել և ծախվել է, իսկ այժմ հալածական եղած փախչում ենք, տերը թող զատաստան անի»)։ «Անտեղի մտածութեանս յորս անկայ փորձութիւնս... հալածական լեալ փախչինք» հատկացողությունները ցույց են տալիս, որ, իրոք, Գրիգոր Մագիստրոսը Կ. Պոլսում ենթարկվել է այն վիճակին, ինչ որ Գագիկ Երկրորդը։ Հարցը պարզ է, նա թեև խոովել էր Գագիկ թագավորից ու հեռացել Անիից, սակայն երկրի ծանր դրության ժամանակ, նորից ձեռք է մեկնում իր սանին օգնելու, բայց հաջողություն չի ունեցել և ինքն էլ ընկել է նրա վիճակին ու զրկվել հայրենի ժառանգությունից։ Ուստի ճիշտ չեն Սամվել Անեցին և բոլոր այն ուսումնասիրողները, որոնք Գրիգորին ներկայացնում են որպես դավաճան, բյուզանդամոլ։ Մեջբերված հատվածներից չեն երևում նրա դավաճանությունն ու բյուզանդամոլությունը, այլ ընդհակառակն, նկատվում է, որ նրա կալվածների փոխումը բյուզանդամո-

[1] Թղթերը, էջ 13։

գության արդյունք չէ, այլ կայսրության ճնշման հետևանք, և չի կարելի Գրիգոր Մագիստրոսին դնել Վեստ Սարգսի և Պետրոս կաթողիկոսի կողքին։ Նա նամակի և բանալիների ուղարկմանը մասնակից լինել չէր կարող, որովհետև Անիում չէր գտնվում, իսկ քանի որ նրա հորեղբայր Վահրամը կենդանի էր, դժվար թե նա բռներ դավաճանության ուղին։ Հետևաբար չի կարելի Գրիգոր Մագիստրոսին, Վեստ Սարգսի և կաթողիկոսի նման, դավաճան համարել։

Գագիկ Երկրորդը թեև Պոլսում երկար ժամանակ շարունակում է միայնակ պայքարել ու դիմադրել, բայց վերջ ի վերջո պարտվելով բռնության առաջ, ստիպված է լինում հանձնել իր Շիրակ-Անիյան թագավորությունը կայսրությանը և նրա դիմացը ստանալ Կալոն-Պեղասոն և Պիգա քաղաքներն իրենց շրջակայքով։ Կայսրը սկզբում համաձայնվում է տալ Մելիտինեի շրջանը, բայց հետո մերժում է։ Բացի այդ, Գագիկը պարտավոր էր ամուսնանալ Դավիթ Արծրունու աղջկա հետ և ժառանգել նաև նրա Կեսարիա, Ծամնդավ և Խավարտանեք կալվածները։ Այս կալվածները գտնվում էին Կալոն-Պեղասոն ու Պիգա քաղաքների մոտ, որոնք բոլորն էլ գտնվում էին Կապադովկիայում։ Ապա Գագիկին տրվում է Բոսֆորի ափին մի պալատ և ցմահ թագավորական ռոճիկ։ Նա այլևս Հայաստան չպիտի վերադառնար։

Գագիկ Երկրորդին հետևում է նաև Գրիգոր Մագիստրոսը։ Սա իր հայրենի կալվածները՝ Բջնի, Կայան և Կայծոն բերդերով՝ կայսրության ճնշման տակ հանձնում է Բյուզանդիային և դրա փոխարեն ստանում է Տարոնի կողմերում, Միջագետքի սահմանների մոտ, նոր կալվածներ.

«Իբրև եհաս լեհ ոչ են թողլոց զԳագիկ ի տեղի իւր,— գրում է Արիստակես Լաստիվերտցին,— յառաջ կացեալ տայ զբանալին Բջնոյ զթագաւորն, և զամենայն զիւր հայրենի ժառանգութիւնն. և մեծարեալ ի նմանէ՝ առնու զպատիւ մագիստրոսութեան, և զտեղիս բնակութեան ի սահմանս Միջագետաց գեօղս և քաղաքս, գրով և ոսկի մատանեաւ յաղագ յաղագ մինչև յաւիտեան»[2]։

[1] Վարդան, էջ 133։

[2] Լաստիվերացի, էջ 61։

(«Երբ որ տեսնում է, որ Գագիկին չեն թողնում վերադառնալ իր տեղը, ներկայանում է թագավորին (կայսրին) Բջնիի բանալին և իր հայրենի բոլոր ժառանգությունը հանձնում է նրան, և մեծարվելով ստանում է մագիստրոսության պատիվ ու բնակության տեղ Միջագետքի սահմաններում, գյուղեր և քաղաքներ գրով ու կնիքով ազգե ազգ մինչև հավիտյան»):

Ապա ստանում է նաև Մագիստրոսի աստիճան և նշանակվում է Վասպուրականի, Բերկրիի, Արճեշի, Տարոնի ու Հյուսիսային Միջագետքի դուքս հրամանատար-կուսակալ: Գրիգորի այս քայլը, անշուշտ, դատապարտելի է, քանի որ նա առանց լուրջ ճնշումների, հեռանում է հայրենի երկրից, բայց դավաճանություն չէր, այլ միայն հուսահատության արդյունք, որովհետև առանց թագավորի, ինչպես երևում է մեջբերումից, պայքարը համարում էր անօգուտ: Բայց իր այս արարքը հայրենասեր իշխանը համարում է անտեղի[1]:

Գագիկ երկրորդը թեև բռնության առաջ ստիպված էր եղել հրաժարվել իր հայրենի երկրից ու թագավորությունից, բայց արհամարհում է Բոսֆորի պալատը, թագավորական ոճիկը և գնում է դեպի նոր կալվածները, ամուսնանում է Դավթի աղջկա հետ, կազմակերպում է ռազմական նոր ուժեր, օգտագործելով նաև Արծրունիների զորքերը, աննկուն մարտիկի նման երդվում է, որ մինչև իր կյանքի վերջը պայքարի բյուզանդացիների դեմ հանուն իր հայրենիքի ազատության ու անկախության: Ահա Գագիկ Երկրորդի կարճատև թագավորության տրագիկ վախճանը:

Գագիկի՝ Պոլիս մեկնելուց հետո, Անիում, որպես խնամակալ ղեկավարներ մնացել էին Պետրոս կաթողիկոսը և իշխան Վեստ Սարգիսը, իսկ Վահրամը ղեկավարում էր զինվորական գործը: Պոլսում տեղի ունեցած ողբերգության գույժը դեռ չէր հասել Անի, երբ դավաճանների խորհրդով կայսրը հրամայում է իր Սամոսատի կուսակալ-զորավար Ասիտին[2],

[1] Թղթերը, էջ 13:

[2] Հաստիվերացի, էջ 62:

ըստ Վարդանի, Կատապանին[1] և ըստ Ուռհայեցու[2], Պառկամանոսին, բանակով շարժվել Անիի վրա և գրավել այդ նոր հողերը, որոնք բռնությամբ խլել էր Գագիկ Երկրորդից: Մոնոմախ կայսրը, որը խարդախ ճանապարհով Գագիկի ձեռքից կորզել էր հանձնման ստորագրությունը, կարծում էր, որ նույն ճանապարհով հեշտությամբ տեր կդառնա նաև Անիին: Բայց իզուր, Անիի բնակիչները անմիջապես քաղաքի մեծամեծների և Վահրամ Պահլավունու գլխավորությամբ գործի են անցնում, վերականգնում են բանակը, արհեստավորները լծվում են զենքեր և պաշտպանության միջոցներ պատրաստելու գործին, ամբողջ քաղաքի և շրջապատի բնակչությունը դարձյալ պատրաստվում է կրծքով պաշտպանելու իր հայրենի երկիրն ու քաղաքը բյուզանդական ագրեսիայից, նույնիսկ կանայք սուր են վերցնում կռվելու համար:

Բյուզանդական կայսրության լեգեոնները 1045 թ. չորրորդ անգամ պաշարում են Անի քաղաքը: Հայ ռազմիկները ծերունի սպարապետի հրամանատարությամբ իրենց հերոսական գրոհներով ետ են մղում բյուզանդական զորքերին մայրաքաղաքի պարիսպների տակից, չնայած դավաճանների ակտիվ գործունեությանը: Այնուհետև հայկական զորքը դուրս է գալիս քաղաքից և քշում է Թշնամուն մինչև Ուխտիքի (Օլթիի) և Կարինի կողմերը. «Եւ զայր կին կամէր դնել պահապան աշխարհին Հայոց փոխանակ հզօր քաջին Գագկայ»— գրում է Ուռհայեցին[3],— որովհետև Ասիտը, որ պիտի լիներ Անիի կառավարիչ, ներքինի էր, դրա համար կին է համարում: Այսպիսով, Բյուզանդիայի այս վերջին և չորրորդ փորձը՝ զենքի միջոցով նվաճելու Շիրակ-Այրարատյան թագավորությունը նրա մայրաքաղաք Անիով, նորից մատնվում է անհաջողության: Մենք գտնում ենք, որ Արիստակես Լաստիվերացին այս չորս արշավանքներն է նկատի ունեցել, երբ գրում է «...Աւուրս հետամուտ եղեալ զօրքն Հոռոմոց, չորս անգամ զկնի միմեանց մտին յաշխարհն Հայոց, մինչև մարդաթափ արարին դերկիրն ամենայն սրով և հրով և գերու-

[1] Վարդան, էջ 133:

[2] Ուռհայեցի, էջ 96:

[3] Նույն էջը:

թեամբ»[1], բայց իրենք էլ մշտապես ջարդ ստանալով ետ են շպրտվել։

Ժողովուրդը Կ. Պոլսում կատարված անցքերի մասին դեռ մանրամասն տեղեկություն չուներ։ Նա իր այս պայքարով աշխատում էր հեշտացնել Գագիկի վերադարձը Անի։ Սակայն երբ պարզվում է իրականությունը, որ Գագիկ թագավորը այլևս չի վերադառնալու մայրաքաղաք և նա զոհ է դարձել դավաճանների դավադրությանը, չնայած ծերունի սպարապետի գործադրած ջանքերին, զորքը հուսահատվում և լքվում է, իսկ ժողովուրդն առաջ է բերում մեծ ազմուկ և իրարանցում։ Այդ մասին Ուռհայեցին գրում է. «...Լացին զանտիրանալն ազգին Հայոց. լային և զաթոռ թագաւորութեանն իւրեանց և կոծ եղեալ առ հասարակ լային զթագաւորն իւրեանց զԳագիկ. լային և զամենայն ազգն Բագրատունեաց և անէծս ցավագին կարդային նենգաւորացն Գագկայ»[2]։

Այդ ընդհանուր զայրույթի ժամանակ ժողովուրդը հարձակվում է կաթողիկոսի վրա, դուրս է քշում նրան քաղաքից։ Սակայն ճգնաժամը երկար չի տևում, դավաճանները, հակառակ ծերունի սպարապետի կամքին, համոզում են ժողովրդին, որ փրկության ելք չկա, պետք է ենթարկվել Բյուզանդիային։ Կայսերական բանակը, որը Անիի պարիսպների տակ լուրջ պարտություն էր կրել և կուչ էր եկել իր հրամանատար Ասիտի հետ Արծն քաղաքում, մեծամեծների կողմից հրավիրվում է Անի գալ և տիրել Շիրակ-Այրարատ թագավորությանը։ Այս եղանակով Բյուզանդական զորավարը գրավում է Բագրատունիների հերոս մայրաքաղաքը առանց կռվի, և դրանով էլ վերջ է տրվում Բագրատունյաց դինաստիային Հայաստանում, որը սեղմ կերպով այսպես է բնութագրել Սմբատ Սպարապետը. «Աստանօր բարձաւ թագաւորութիւն Հայոց, և անկաւ տէրութիւն ազգին Բագրատունեաց»[3]։

Այս անցքերը, Լաստիվերտցու ասելով, տեղի են ունեցել 1045 թվականին, այդ թվականն էլ դառնում է Բագրատունյաց Շիրակ-Այրարատյան թագավորության վերջին տարին։ Այս թագավորության անկումով փակվում է հայ ժողովրդի պատմության մի նոր ինքնուրույն շրջանը, որը տևում է ընդամենը 160 տարի (885—1045)։ Չնայած կարճատև մի դարաշրջան էր այդ, բայց և այնպես հայ ժողովրդի գոյավիճակի պահպանման, տնտեսական ու կուլտուրական կյանքի զարգացման համար նշանակալից մի ժամանակաշրջան է հանդիսանում, իր ինքնուրույն և ինքնատիպ կերպարանքով։ Այդ ժամանակաշրջանում հայ ժողովուրդը հնարավորություն է ունենում իր տնտեսությունն ու կուլտուրան զարգացնելու մի նոր աստիճանի և պայմաններ ստեղծելու վաղ վերածնության համար Հայաստանում։

Հայկական ինքնուրույն մանր իշխանությունների աստիճանական վերացումը Հայաստանում, արդյունք էր մի կողմից երկրում մշտապես գոյություն ունեցող ապակենտրոնացած տենդենցների, և այդ հողի վրա առաջացած ներքին պայքարի, իսկ մյուս կողմից սելջուկ-թուրքերի արշավանքների և հատկապես բյուզանդական իմպերիայի ագրեսիայի, մի իմպերիա, որն իր նվաճողական թևերը բաց էր արել ու կուլ էր տալիս մանր ժողովուրդների ինքնուրույն պետական միավորումներն ու նրանց տերիտորիան։

Բյուզանդիայի զորավար Ասիտը տեր դառնալով Անիին և Շիրակ-Այրարատյան թագավորությանը, իր ձեռքն է վերցնում երկրի կառավարման կարևոր պաշտոնները, հայ դավաճան իշխանները որևէ նոր պաշտոն ձեռք չեն բերում։ Իշխան Վեստ Սարգիսը, որը Անիի թագավորության կառավարման պաշտոնը ձեռք բերելու համար վաճառել էր իր հայրենիքը, ոչ միայն չի ստանում, այլև կորցնում է նաև իր նախկին պաշտոնը, որովհետև 1045 թ. հետո պատմիչները ոչ մի տեղեկություն չեն տալիս Վեստ Սարգսի վարած պաշտոնների մասին։ Ավելի հավանական է, որ ժողովրդին սիրաշահելու համար Ասիտը Վեստ Սարգսին արտաքսել է Անիից, իսկ ժողովրդի ազդեցության տակ Վահրամ սպարապետը մնում է իր պաշտոնում, դեկավարելով հայկական ավելի փոքրացած այրուձին։ Բյուզանդական կառավարիչը միայն սկզբում որոշ վարձատրություն և մեծարանք է շնորհում Պետրոս կաթողի-

[1] Լաստիվերտցի, էջ 55—56։
[2] Ուռհայեցի, էջ 97։
[3] Սմբատ Սպարապետ, էջ 47։

կոսին, բայց նրան էլ կրոնական հարցերում շուտով հալածանքների է ենթարկում։

Բյուզանդական տիրապետությունը

Բյուզանդիան և նրա տեղական կառավարիչները Անի-Շիրակյան թագավորությանը զրկում են ինքնուրույնությունից և վեր են ածում կայսրության սովորական մի թեմի, որը կառավարվում էր կայսրության կողմից նշանակված հույն կառավարիչների միջոցով, որոնք հայտնի էին «Արևելքի կատեպան»[1] անունով։ Տեղական տարրերը զրկվել էին բոլոր բարձր պաշտոններից, միայն թույլ էին տալիս նրանց վարել երկրորդական և ստորադրյալ պաշտոններ։ Հայկական տեղական զորքերի մեծ մասը արձակվում է և նրա փոխարեն բերվում են բյուզանդական վարձկան զինվորներ։ Հ. Դևկյերի ասելով, ազատ են արձակվում 50000 հայ և վրացի զինվորներ[2], որոնք իրենց հայրենիքի անվեհեր պաշտպաններն էին։ Այսպիսով, պետական ու զինվորական ապարատները բյուզանդականացվում են։ Անի-Շիրակյան երկրի մի բուռ ժողովրդի ցավերի, տառապանքների և հայ զորքերի ցրման մասին ողբերգական դառն գույներով է նկարագրում դեպքերին ականատես պատմագիր Արիստակես Լաստիվերացին։

«Աշխարհ՝ որ երբեմն ժամանակաւ իբրև զդրախտ անկախիտ առաջի իւր, կանաչագեղ, տերևալից, պտղաբեր, գեղեցկաշուք և երջանիկ անցաւրացն ցուցանիւր. քանզի իշխանք նստէին յիշխանական գահու զուարթահայեաց դիմօք, և զգարնանաբեր ծաղկանոցաց բերեալ զնմանութիւն՝ վառ ի վառ գունովք առաջի կացեալք, ուրախական երգոց և բանից միայն լինէին հանդէսք. ուր և ձայնք փողոցն և ծնծղայիցն և այլ երգեցողական արուեստիցն զլսողացն անձինս լի՛ առնէին ուրախական բերկրանօք...։

Արդ այժմ թագաւորն անկեալ ի պատուոյ, իբրև զգերի կալանաւոր նստի և հեռաբնակ տեղիս. այսպէս և հայրապետական աթոռն ամայացեալ ի բնակողէն՝ ցուցանի տխուր դիմօք իբրև զկնի նորահարսն՝ մնացեալ յայրիութեան։ Հեծելազօրն անդադար շրջեալ ոմն ի Պարս և ոմն ի Յոյնս, և ոմն ի Վիրս։ Սեպուհ գունդն ազատաց ելեալ ի հարչենեաց, անկեալ ի ճոխութենէ, մոռչեն ուր և են իբրև զկորիւն առիւծուցն ի խշտիս իւրեանց։ Արքունական ապարանքն աւերակ ու անմարդի։ Մարդաբնակ աշխարհն թափուր ի բնակչացն։ Ոչ լսի ձայն ուրախութեան ի կութս այգեաց, և ոչ բարեբանութիւն առ կոխօղս հնձանի։ Ոչ խաղան մանկունք առաջի ծնողացն, և ոչ նստին աթոռով ծերք ի հրապարակ։ Ոչ լսի ձայն հարսանեաց, և ոչ զարդարեին առագաստք հարսնարանին։ Պակասեաց այս ամենայն և կորեաւ և ոչ ևս յաւելուցու յառնել... Այժմ յորս փոխեցաւ մեզ ամենայն, և ուրախութեան պատմուճանն այն յարջնազգեստ խորգ փոխեցաւ։ Ո՛ր լսելիք տանիցին զքշուառութեանս մերոյ զպատմութիւն»[1]։

(«Այն աշխարհը, որ մի ժամանակ դրախտ ծառախիտ պարտեզի նման կանաչագեղ, տերևներով լցված, պտղաբեր, դեղեցկաշուք և երջանիկ էր երևում անցորդներին, որովհետև իշխաններն ուրախ դեմքերով նստում էին իշխանական աթոռի վրա, և գարնանային գեղեցիկ ծաղկանոցների նման և կատարում էին ուրախացնող երգերի ու ճառերի հանդեսներ, փողերի, ծնծղաների և ուրիշ երգեցողական գործիքների ձայները լսողներին հոգեկան ուրախությամբ բավականություն էին տալիս։

Արդ, այժմ թագավորն ընկած է պատվից, կալանավոր գերու նման հեռու աշխարհում. այսպես և հայրապետական աթոռը զրկված աթոռակալից, այրի մնացած նորահարս կնոջ նման է երևում տխուր դեմքով։ Հեծելազորն անտեր շրջում էր, որը Պարսկաստանում, որը Հունաստանում և որը Վրաստանում։ Ազնվականների սեպուհ գունդը դուրս գալով հայրենիքից, ընկած էր փառքից, առյուծների ձագերի նման մռնչում են եղած տեղերում։ Արքունական ապարանքներն ավերակ և անմարդաբնակ են։ Մարդկանցով լիքը աշխարհի մեջ մարդ չի մնացել։ Այգիները քաղելու ուրախության ձայնը չի լսվում և ոչ էլ հնձանը կոխողների համար եղած գովեստը։ Ոչ մանուկներն են խաղում ծնողների առաջ

[1] Հ. Դ. Ալիշան, Շիրակ, էջ 70, Վենետիկ, 1888։

[2] Համառոտություն բյուզանդական կայսրների պատմության, էջ 287։

[1] Արիստակես Լաստիվերացի, էջ 56—59։

և ոչ ծերերն են աֆոռով նստում հրապարակներում։ Ոչ հարսանքի ձայն է լսվում և ոչ էլ զարդարվում են հարսների առագաստները։ Այս բոլորը պակասում, կորչում և այլևս չի վերակենդանանում...։ Այժմ ամեն բան մեզ համար փոխվում է տրտմության, և ուրախության այն պատմուճանը փոխվում է մազեղեն սև հանդերձի։ Ո՞ր լսելիքը կարող է տանել մեր այս թշվառության պատմությունը»)։

Այս ընդարձակ մեջբերումը պարզ ցույց է տալիս Բագրատունյաց թագավորության անկումից հետո երկրի ծանր վիճակը։

Բյուզանդական կայսրությունն Անին գրավելուց հետո իր հայացքը սևեռում է Դվինի վրա, ուր ինչպես գիտենք, իշխում էր քուրդ Ապուլսուար էմիրը։ 1047 թ. Անիի կառավարիչ Ասիատը և արևելքի զորքերի ընդհանուր հրամանատար Նիկողայոսը (ըստ հայ պատմագիրների, Կուրտը), որը նույնպես նստում էր Անիում, պատերազմ են սկսում Ապուլսուար էմիրի դեմ։ Բյուզանդական բանակում կային հայկական զորքեր՝ սպարապետ Վահրամ Պահլավունու և նրա որդի Գրիգորիսի գլխավորությամբ ու վրացական զորքեր՝ քաջ զորավար Լիպարիտի ղեկավարությամբ։ Դվինի էմիրը երկյուղ չուներ կայսրության այդ մեծ բանակից, որովհետև շատ անկազմակերպ էր։ Երբ բյուզանդացիները հարձակվում էին Դվինի վրա, Ապուլսուար էմիրը փոխել է տալիս Ազատ գետի հունը և ջրով ողողում է քաղաքի շրջապատի այգիները, իսկ այդ այգիներում նախօրոք սարքած դարաններում տեղավորում է իր զորքը, որը պիտի սպասեր Դվինի աշտարակի ազդանշանին։ Բյուզանդական մեծամիտ և գոռոզ զորավարները արհամարհելով թշնամու ուժը, առանց հետախուզելու արագ շարժվում են դեպի Դվին։ Բայց, երբ մտնում են ջրով լցված այգիները, Ապուլսուար էմիրը Դվինի աշտարակից ազդանշան է տալիս և նրա զորքը սկսում է դարաններից հանկարծակի հետահարել թշնամուն։ Ցեխն ու ջուրը շատ են խանգարում բյուզանդական բանակին, բայց առանց այդ էլ վարձկան զինվորները վատ էին կռվում, որի պատճառով կարճ ժամանակվա ընթացքում զորքերը կրում են մեծ զոհեր և բռնում նահանջի ուղին։

Այս կռվի ժամանակ սպանվում է հայկական փոքրիկ զորագնդի հրամանատար, քաջարի զորավար, 80-ամյա ծերունի Վահրամ Պահլավունին, իր որդի Գրիգորիսի հետ։ Ծերունի սպարապետը միակն էր, որ Բագրատունյաց թագավորության անկումից հետո չի լքում իր ժողովրդին, մնում է երկրում և աշխատում է նորից օգնել նրան։ Տարիներ շարունակ նա կռվել էր բյուզանդացիների դեմ, բայց երբ կայսրությունը տիրում է Շիրակի թագավորությանը, նա մնում է Անիում, թույլ չի տալիս, որ զորքը ամբողջությամբ ցրվի, այլ նրա մի մասը հնարավորության սահմաններում պահում է իր ձեռքի տակ, որպեսզի հարկ եղած դեպքում օգտագործի իր հայրենիքի պաշտպանման համար։ Ահա այս փոքրաթիվ դնդովն էր մասնակցում նա Դվինի կռվին և քաջ Լիպարիտի հետ շատ ավելի լավ են մարտնչում, քան բյուզանդական վարձկան զինվորները, որոնք շուտով լքում են հայերին ու վրացիներին և բռնում նահանջի ճանապարհը։ Դրանից հետո Թշնամին իր պայքարն ուղղում է հայերի դեմ, որի հետևանքով հայկական զորքը տալիս է մեծ զոհեր, որոնց թվում նաև քաջարի սպարապետը, որի զինվորական համբավը, ինչպես ասում է Գրիգոր Մագիստրոսը, հայտնի էր նաև Բյուզանդիայում[1]։ Ծերունի սպարապետի մահը մեծ վիշտ է պատճառում ժողովրդին։

Մոնոմախ կայսրը պարտված զորականներին անմիջապես ետ է կանչում և նրանց փոխարեն ուղարկում է երկու նոր զորավարներ՝ Կոմնենոս Կատակալոնին և Ներքինի Կուրտ Կոստանդինին։ Սրանք անմիջապես պատերազմը վերսկսում են Դվինի էմիրի դեմ, բայց շուտով 1047 թ. սեպտեմբերին կայսրության եվրոպական մասում տեղի է ունենում հայ ազգի Լևոն Թոռնիկի ապստամբությունը, որը լուրջ վտանգ էր ստեղծել Մոնոմախ կայսրի համար։ Այդ պատճառով կայսրն իր բանակը ետ է կանչում Հայաստանից, իսկ Դվինի էմիրը օգտվելով դրանից արշավում է մինչև Անիի դռները։ Բյուզանդացիները ստիպված են լինում անմիջապես հաշտություն կնքել էմիրի հետ, որով Հայաստանում դրությունը մի կերպ խաղաղվում է։

Բյուզանդիայում ապստամբություն բարձրացնող Լևոն

[1] Թղթերը, էջ 42։

Թոռնիկը սերված էր Տարոնի Բագրատունյաց ճյուղից: Տարոնի Թոռնիկ իշխանը 10-րդ դարի կեսերին Բյուզանդիայի վրա դրած քաղաքականության հետևանքով տեղափոխվում է Կ. Պոլիս, որի սերունդը մոռացության տալով իրենց տոհմի հին անունը, կոչվում էին այդ Թոռնիկի անունով: Տարոնի այս Թոռնիկ Բագրատունիներից մեկը Լևոն Թոռնիկն էր, որը բնակություն էր հաստատել Ադրիանուպոլիս քաղաքում, ուր զինվորները կայսրի դեմ նրա գլխավորությամբ բարձրացնում են ապստամբություն և կայսր են հռչակում նրան: Այս ապստամբության հիմնական պատճառը այն էր, որ Մոնոմախ կայսրը նախ ընդունակ չէր զինվորական գործում և այդ պատճառով էլ չէր կապվում բանակի հետ, նա ավելի շուտ զբաղվում էր քաղաքացիական գործերով, աջակցող անելով բանակը, և երկրորդ, նա մշտապես պակասեցնում էր զինվորների ռոճիկներն ու նյութական միջոցները և դրանից ստացված եկամուտները ծախսում կուլտուրական գործերի վրա: Կայսրի այս քաղաքականությունն առաջին հերթին դժգոհություն է առաջացնում մայրաքաղաքի արվարձաններում ապրող զինվորական միավորումների մեջ, առանձնապես Ադրիանուպոլսի զորամասում, որի զեկավարն էր Լևոն Թոռնիկը:

Ապստամբության զեկավար Լևոն Թոռնիկ հայ իշխանը դժգոհելու մի ուրիշ պատճառ էլ ուներ, դա իր տոհմի թագավորության լիկվիդացիան էր Անիում, մի հանգամանք, որ խիստ դժգոհություն էր առաջացրել Բյուզանդիայում եղած ոչ միայն Բագրատունյաց իշխանների, այլև մյուս հայ ազնվականների շրջանում: Լևոն Թոռնիկի նպատակներից մեկն էլ այն էր, որ նա ձգտում էր դրավել կայսերական գահը և Գագիկ երկրորդին վերադարձնել հայրենի երկիրը: Սակայն այս ռազմիկ իշխանը դանդաղում էր իր ձեռնարկած գործում: Նա պաշարելով մայրաքաղաքը, կարող էր հեշտությամբ գրավել այն: Արյունահեղությունից խուսափելու համար երկար ժամանակ սպասում է, որ քաղաքացիները իրենց հրավիրեն քաղաք: Այդ առիթից օգտվելով, Մոնոմախը ժամանակ է շահում, ամրացնում է պարիսպները, մյուս կողմից վրա է հասնում Հայաստանից եկած բանակը, իսկ հետո ճնշում են Լևոն Թոռնիկի այդ ապստամբությունը, Լևոնն էլ բռնվելով կուրացվում է:

Լևոն Թոռնիկի այս ապստամբությունը ճնշելուց հետո կայսրությունն իր՝ Անիի կառավարիչ Կատակալոն Կոմնենոսի միջոցով խաղաղություն է հաստատում Անիի նկատմամբ: Նախ ամբաստանում է Պետրոս կաթողիկոսին և հեռացնում է Անի մայրաքաղաքից, վերջումն էլ ձերբակալել տալով, նրան քեռորդի Խաչիկի հետ ուղարկում է Կ. Պոլիս: Ճիշտ է նկատել պատմաբան Լևոն, որ «Դավաճանին փայփայում ու կաշառում էին, քանի նա հարկավոր էր»[1], իսկ այժմ, երբ արդեն հասել էին իրենց նպատակին, դավաճանի ներկայությունը դառնում է անհանդուրժելի: Պարզ է, որ Բյուզանդիան լիկվիդացնելով երկրի աշխարհիկ իշխանությունը, պիտի վերջ տար նաև հոգևոր իշխանությանը, այսինքն՝ կաթողիկոսությանը և Հայաստանում տարածեր քաղկեդոնական դավանանքը, մի քաղաքականություն, որի տարածմանը շատ վաղուց էին հետամուտ լինում Բյուզանդական կայսրները և Պոլսի հույն պատրիարքները:

Կ. Պոլսում կալանավորված կաթողիկոսին լավ են ընդունում և երեք տարի պահում են այնտեղ, որ չվերադառնա Անի և ապստամբություն չկազմակերպի[2]: Ըստ երևույթին դավաճան կաթողիկոսը նոր էր խելքի եկել, որ իր կատարած գործը իրոք դավաճանություն էր և աշխատում էր ուղղել այն, բայց արդեն ուշ էր: Նրան երեք տարի Կ. Պոլսում պահելուց հետո թույլ չեն տալիս վերադառնա Անի, այլ ուղարկում են Սեբաստիա՝ Սեննեքերիմի ժառանգների մոտ, ուր և մահանում է 1058 թ. բավականին հեռու իր հայրենիքից, որի դեմ այնքան չարագործություններ էր կատարել: Նրանից հետո կաթողիկոս են ձեռնադրում նրա քեռորդի Խաչիկին (1059—1065): Իսկ սրան էլ արգելում են դուրս գալ Անիից, ուր մահանում է կրակծից: Նոր կաթողիկոսի ընտրությունը արգելում են, և միայն Կարսի թագավոր Գագիկի և նրա աղջիկ Մարիամ Բամբիշի համառ պայքարից հետո թույլտվություն են ստանում և կաթողիկոս ընտրում Գրիգոր Մագիստրոսի որդի Գրիգոր Բ. Պահլավունուն, որը մեծ դեր է խաղում երկրի քաղաքական, կրոնական և կուլտուրական կյանքում:

[1] Հայոց պատմություն, հատ. Բ, էջ 710:

[2] Լաստիվերտցի, էջ 89:

Կայսրությունը միաժամանակ ծանր հարկեր է դնում իր տիրապետության ենթակա հայկական իշխանությունների, հատկապես Շիրակի թագավորության ազգաբնակչության վրա: Հույն սովալլուկ հոգևորականներն ու պաշտոնյաները հայկական հարուստ թեմերի ու վանահայրությունների գլուխն անցնելով, ինչպես ասում է Հ. Գելցերը[1], կողոպտում են նրանց հարստությունները և ուղղահավատ միաբնակներին (մոնոֆիզիտներին) ենթարկում խիստ հալածանքների: Կայսրությանը հարկավոր էր լիկվիդացնել նաև հայ ռազմական ուժերը:

Բյուզանդական տեղական կառավարիչ-զորավարները Մոնոմախ կայսրի հրամանով իրենց հերթին քանդում են հայրենի միաբանություններն ու պաշտպանության բոլոր միջոցները: Վահրամ Պահլավունու սպանությունից հետո, հայկական կռվող ուժերն անխտիր ցրվում են, իսկ երկրի բերդերում, ամրոցներում ու քաղաքներում տեղավորվում են հույն կայազորներ: Հայ իշխաններն հեռացվում են իրենց պաշտոններից, մի մասը սրով ու թույնով ոչնչացվում, իսկ մի մասն էլ շղթայակապ Կ. Պոլիս է ուղարկվում: Բյուզանդացիներին չէր ենթարկվում միայն Հարպիկ իշխանը, որը ամրացել էր Արկնի ամրոցում: Բայց սրան էլ մի դավաճանի ձեռքով են սպանում: Այսպիսով, կայսրությունը տիրապետելով Հայաստանի մեծ մասին, մի կողմից կրոնական նոր հալածանքներ է սկսում հայերի նկատմամբ, իսկ մյուս կողմից իշխաններին ու նրանց զորքերին հեռացնելով ու ցրելով, երկիրը ենթարկում է ծանր հարկահանության: Այս հալածանքների ու ծանր հարկերի հետևանքով էր, որ 1047—1051 թթ. երկրում տեղի են ունենում թոնդրակյանների նոր շարժումները, որոնք իրենց սուր ծայրով, ինչպես ասել ենք, ուղղված էին կայսրության և նրա տեղական կառավարիչների դեմ:

Հայ բյուզանդական թշնամությունը գնալով ավելի է խորանում:

Բյուզանդիայի և բյուզանդացիների դեմ երկար ժամանակ կատաղի պայքար է մղում Գագիկ Երկրորդը: Նա գահից զրկվելուց հետո թափառում էր Կապադովկիայում, կազմակերպում հայ ռազմական ուժերը և պայքար էր ծավալում Բյուզանդիայի ու նրա փոքրասիական կառավարիչների դեմ: Նա իր որդի Հովհաննեսին ուղարկում է Անի, այնտեղ քաղաքական նպաստավոր պայմաններ ստեղծելու և իրենց կորցրած անկախությունը վերականգնելու համար: Սակայն այդ ժամանակ Անին կրել էր լուրջ փոփոխություն, հայրենասիրական հոսանքը ստացել էր ծանր հարված, այդ պատճառով Հովհաննեսին չի հաջողվում մեծ թվով մարդիկ հավաքագրել իր շուրջը, ուստի նա շուտով հեռանում է Անիից ու մեկնում Վրաստան: Թշնամությունը հայերի և բյուզանդացիների միջև այնքան էր խորացել, որ Կեսարիայի Մարկոս միտրոպոլիտն իր շան անունը դրել էր «Արմենն»: Գագիկ Երկրորդը իմանալով այդ, իր մի ջոկատով գնում է Կեսարիա, բռնելով նրան, նախ հարցնում է՝ թե շան անունն ինչ է, անպատկառ միտրոպոլիտը նեղն ընկնելով, պատասխանում է, որ փոքր լինելու պատճառով «Արմենն» ենք կոչում: Հայրենասեր թագավորն այլևս չկարողանալով դիմանալ, իր շան հետ նրան դնում է մի պարկի մեջ և այնքան է ծեծում, որ շունը կծոտելով սպանում է իր տիրոջը: Իսկ բյուզանդացիներն էլ, երբ Գագիկ Կիպիսատա ամրոցի տակից անցնում էր, դավադրաբար բռնում են նրան և ամրոց տանում: Թեև Կարսի Գագիկ թագավորը (որը 1065 թ. նույնպես տեղափոխվել էր Փոքր Ասիա, հանձնելով իր Վանանդի երկիրը կայսրությանը) և Սեբաստիայի Արծրունու որդիները փորձ են անում ազատել նրան, բայց հաջողություն չեն ունենում, Կիպիսատա բերդի տերերը, Մանտալյան հույն իշխանները (երեք եղբայրներ) Գագիկ Երկրորդին 1079 թ. կախում են բերդի աշտարակից: Այդ դեպքից քիչ հետո սպանում են նաև նրա երկու որդիներին՝ Դավթին և Հովհաննեսին, ինչպես նաև վերջինի որդի Աշոտին: Այսպիսով, Փոքր Ասիայում վերջ է դրվում Բագրատունյաց տոհմի մնացորդներին, որոնք ձգտում էին վերականգնել իրենց կորցրած թագավորությունը Հայաստանում:

Բացի այդ, բյուզանդական կայսրությունը շուտով վերջ է տալիս նաև Սեբաստիայի Արծրունիներին և Կարսից Փոքր Ասիա տեղափոխված Բագրատունիներին: Այսպիսով, բացի

[1] Հ. Գելցեր, էջ 286:

Վասպուրականի ու Շիրակ-Այրարատյան թագավորություններից, կայսրությանն է միացվում նաև Վանանդ-Կարսի թագավորությունը: Բյուզանդիայի ազդեցությունից ու տիրապետություններից, շնորհիվ իրենց հեռավորության և բնական անառիկության, դուրս են մնում միայն Կյուրիկյան՝ Լոռիի Բագրատունի և Կապանի Սյունյաց թագավորություններն իրենց տերիտորիաներով: Իսկ Հայաստանի գրեթե մնացած բոլոր նահանգներն ու գավառները անցնում են բյուզանդական կայսրության գերիշխանության տակ:

Բյուզանդական կայսրության տիրապետության հետևանքները

Բյուզանդական կայսրությունն իր վարած քաղաքականությամբ կործանում է ոչ միայն Հայաստանի քաղաքական իշխանությունը, այլև՝ իրենը: 9—10-րդ դարերում կայսրության տիրապետություններից Փոքր Ասիայում, հատկապես նրա կենտրոնական և արևելյան նահանգներում ու թեմերում մանր հացահատիկային տնտեսության փոխարեն զարգանում էր անասնապահական խոշոր տնտեսությունը: Հացահատիկային տնտեսությունը գերազանցապես հիմնված էր ազատ գյուղացու աշխատանքի վրա, այնինչ նրան փոխարինող անասնապահության խոշոր տնտեսությունը հիմնված էր ճորտ գյուղացիների և որոշ չափով էլ ստրուկների աշխատանքի վրա: Սոցիալ-տնտեսական այս փոփոխությունները խիստ թուլացնում էին կայսրության տնտեսական և ռազմական դրությունը: Բյուզանդական մի շարք կայսրներ, առանձնապես Վասիլ Երկրորդը, աշխատում էին կասեցնել այդ երևույթը, նրանք ձգտում էին սահմանափակել խոշոր հողատիրության զարգացումը և պաշտպանել մանր կալվածատիրական տնտեսությունը: Բյուզանդական կայսրներն այդ երևույթի առաջն առնելու համար բռնում են Հայաստանի, Վրաստանի և Բուլղարիայի ազգաբնակության տեղահանման ու տեղափոխման քաղաքականության կուրսը: Այդ ճանապարհով նրանք մի կողմից ավելացնում էին ազատ գյուղացիության, իսկ մյուս կողմից զորքի և պաշտոնյաների թիվը:

Մենք արդեն ասել ենք, թե ինչպես Վասպուրականի, Տայքի և Շիրակ-Այրարատյան թագավորությունների գրավման հետևանքով մեծ քանակությամբ հայեր և վրացիներ տեղափոխում են Փոքր Ասիա, որոնց մեջ զգալի թիվ էին կազմում ազնվականներն ու զինվորները: Միջագետք է տեղափոխվում Դրիդոր Մագիստրոսը, իսկ Փոքր Ասիայի արևելյան նահանգներն են տեղափոխվում Կարսում թագավորող Բագրատունյաց ճյուղը: Սրանք իրենց հետ տանում են մեծ թվով ազգաբնակություն, զորք և ազնվականներ: Այս գաղթեցման և բռնի տեղափոխման հետևանքով ամայանում են Հայաստանի և Վրաստանի մի շարք մարզեր և ցրվում են հայ ռազմական ուժերը:

Տեղահանում էին հատկապես հայերին, վրացիներին ու բուլղարներին: Վերջիններին փոխադրում էին Հայաստան, իսկ առաջիններին դեպի Հյուսիսային Միջագետք, Կապադովկիա, Բուլղարիա և այլ շրջաններ: Հայաստանից տեղահանվող ազնվականները հանդիսանում էին հենց երկրի դարավոր ժառանգական հողատերերը: Նրանք մշտապես կապված լինելով իրենց հայրենի երկրի ու միջավայրի հետ, աշխատում էին մի կողմից պաշտպանել իրենց հինավուրց իրավունքները, իսկ մյուս կողմից, հարկ եղած դեպքում, ձեռք բերել անկախություն: Սակայն օտար միջավայրում նրանք կարող էին կալվածներ ու պաշտոններ ձեռք բերել միայն բյուզանդական կայսրներից, ուստի և պիտի ծառայեին կայսրության շահերի համար:

Բյուզանդիան տեր դառնալով Հայաստանի մեծագույն մասին, ցրելով այդ երկրի իշխաններին ու նրանց ռազմական ուժերը, այժմ ինքը պետք է պաշտպաներ Հայաստանի սահմանները կայսրության տարբեր մարզերից հավաքված իր վարձկան զինվորներով, որոնց համար հայկական բարձրավանդակը ո՛չ հայրենիք էր և ո՛չ էլ բնակության վայր: Իսկ երկրի բնիկ տերերը, որոնք ավելի նվիրված կարող էին կռվել իրենց հայրենիքի փրկության համար, ինչպես նշեցինք, տեղահանվել ու փոխադրվել էին բյուզանդական կայսրության տարբեր մասերը. «...Ելին իշխանքն ի հայրենի ժառանգութենէ իւրեանց,— գրում է Լաստիվերտցին,— և եղեն պանդուխտ յօտար երկիր. յորում աւերեցան գաւառք և գնացին յաւար տանն Յունաց»[1]:

[1] Լաստիվերտցի, էջ 51:

Բյուզանդական կայսրության՝ փոքր ժողովուրդներին միաձուլող և կենտրոնացնող այս քաղաքականությունը խիստ բացասաբար է անդրադառնում փոքր ժողովուրդների վրա։ Այդ քաղաքականության հետևանքով նրանք ոչ միայն կորցնում են իրենց անկախությունը, այլև իրենց ռազմական ուժերը, որոնք մի տեսակ պատվար էին Արևելքից եկող արշավանքների առաջ։ Կայսրության այս անհեռատես քաղաքականությունը ծանր է նստում ոչ միայն հայ ժողովրդի, այլև իրենց՝ բյուզանդացիների վրա։ Բյուզանդիայի անհեռատես կայսրներն ու նրանց Հայաստանի պաշտոնյաները բռնել էին հայ ժողովրդին հալածելու քաղաքականության կուրսը մի այնպիսի ժամանակ, երբ սելջուկ-թուրքերի աշխարհավեր արշավանքները բախում էին Հայաստանի դռները Արևելքից, իսկ Վասպուրականի կողմից արդեն բաց էին արել ու մահացու վտանգ էին սպառնում ոչ միայն Հայաստանին, այլև կայսրությանը։ Ճիշտ է նկատել ակադ. Ն. Մանանդյանը, երբ ասում է. «...Որ հայկական բարձրավանդակը, Փոքր Ասիայի ռազմական ու բնական ամենակարևոր դիրքը, Բյուզանդիայի ինքնապաշտպանության այն աքիլլեսյան գարշապարն է, որի ստացած վերքը կարող է մահացու լինել կայսրության ամբողջ օրգանիզմի համար»[1]։

Հռոմեական Արևելյան կայսրությունը քայքայելով Հայաստանի ռազմական ուժերը, ինքը հնարավորություն չի ունենում պաշտպանելու այդ երկիրը սելջուկ-թուրքերի արշավանքներից։ Բյուզանդիան կործանելով հայ ռազմական ուժերը կայսրության արևելյան սահմանապահին, բաց է անում Փոքր Ասիայի դռները Արևելքից եկող հորդաների առաջ։ Բյուզանդական կայսրությունը կործանելով Հայաստանն, իր ձեռքով փորում է իր գերեզմանը, որովհետև Հայաստանը հանդիսանում էր Բյուզանդիայի արևելյան սահմանապահի մեծ պատնեշը։

Սելջուկ-թուրքերը 1048—1071 թթ. ընթացքում նվաճելով և ամայացնելով Հայաստանը, մտնում են նաև Փոքր Ասիա։

[1] Հ. Մանանդյան, Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում, էջ 21, Երևան, 1922։

Նրանք Առաջավոր Ասիայի ու Բյուզանդիայի ժողովուրդների հին քաղաքակրթության ավերակների վրա հիմնում են իրենց բարբարոս պետությունը, մահացու վերք հասցնելով բյուզանդական երբեմնի հզոր իմպերիային ու կուչ բերում նրան Մարմարայի ափերին։ Ահա բյուզանդական իմպերիայի կայսրների ու նրա պաշտոնյաների կողմից փոքր ժողովուրդների, առանձնապես հայերի նկատմամբ վարած անհեռատես քաղաքականության պտուղները։ Հետևաբար չարաշար սխալվում են այն ուսումնասիրողները, որոնք փորձ են անում իշխան Վեստ Սարգսի և Պետրոս կաթողիկոսի վարած բյուզանդամոլ քաղաքականությունը համարել հայերի միակ «փրկության» ուղին սելջուկ-թուրքերի արշավանքների նախօրեին։ Բյուզանդիայի համար, որպես դաշնակից, մեծ դեր կարող էր խաղալ Հայաստանը, որը այդ ժամանակ ուներ մոտավորապես 7—8 միլիոն բնակիչ և տարածվում էր Տիգրիսից մինչև Վրաստանի սահմանները, Եփրատից մինչև Ուրմիա լիճը, Աորպատական աշխարհը, մի ընդարձակ երկիր, որը տարածվում էր կայսրության արևելյան սահմանի վրա և Վրաստանի հետ միասին համախմբվելու դեպքում կարող էր կովող զորք դուրս բերել 200000 զինվորից ավելի, որը կայսերական ուժերի հետ միշտ էլ կարող էր ետ մղել Արևելքից եկող ամեն տեսակի հորդաների արշավանքները և փրկել Հայաստանը, Վրաստանը և կայսրությունը։

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ 8-11-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

1. ԴՊՐՈՑՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դպրոցներ

Գիտության, գրականության և առհասարակ կուլտուրայի զարգացման ու տարածման գործում խոշոր դեր են խաղում դպրոցները, որոնք վերոհիշյալ դարաշրջանում հիմնականում գտնվում էին վանքերին և եկեղեցիներին կից։ 8—11-րդ դարերում, նախորդ դարերի նման, ֆեոդալական Հայաստանի կուլտուրայի կրողները հանդիսանում էին հայ եկեղեցին ու նրա սպասարկու հոգևորականները, իսկ դպրոցներն էլ շարունակում էին մնալ նրանց իրավասության ներքո։ Ճիշտ է, քաղաքների առաջացման ու զարգացման հետևանքով քաղաքներում նույնպես բացվում են դպրոցներ, բայց դրանք ունեին ուսուցման այն ծրագիրը, ինչ որ վանքերին կից եղած դպրոցները։ Ուսուցիչների մեծագույն մասը կազմում էին քահանաներն ու վանականները։ Բայց այս դարաշրջանում հանդես են գալիս նաև աշխարհական, ոչ հոգևորական ուսուցիչներ։ Սակայն ուսուցումը դպրոցներում տարվում էր կրոնական ոգով։

Ուսուցումը միջին դարերում ձևակերպվում է վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում և իր գոյությունը շարունակում է պահպանել ամբողջ միջնադարի ընթացքում և հետագա դարերում։ Դպրոցներում երեխաներին սովորեցնում էին անգիր անել եկեղեցական աղոթքներ, սաղմոսներ և եկեղեցական այլ

դրքեր, դրանից հետո նոր սովորեցնում էին գրել ու կարդալ։ Միջին դարերում սովորելը շատ դժվար գործ էր, բառերը գրում էին կրճատումներով, միայն բաղաձայն տառերով։ Աշակերտները պիտի սովորեին բառեր, այն էլ հիշողությամբ։ Այս տարրական գիտելիքներից հետո նոր միայն սովորեցնում էին «յոթ ազատ արվեստները»։

Եկեղեցին ու նրա սպասարկու իդեոլոգները, որպեսզի կարողանային իրենց նպատակների համար օգտագործել գիտությունները, 4—5-րդ դարերում աշխատեցին ի մի բերել անտիկ աշխարհի գիտելիքները հետևյալ «յոթ ազատ արվեստներ»-ի (Septem artes liberales) մեջ՝ քերականություն, հռետորություն, տրամաբանություն, երկրաչափություն, թվաբանություն, աստղաբաշխություն և երաժշտություն։ Այս «յոթ ազատ արվեստներ»-ի հիման վրա էլ կազմվում էին դասագրքեր, և դրանք էլ կազմել են ամբողջ միջին դարերի ուսուցման հիմքը։

Քերականություն ասելով հիմնականում հասկանում էին անտիկ ու հայերեն լեզուների ուսուցումը և կլասիկ հեղինակների գործերի ընթերցումն ու մեկնաբանումը։ Հռետորության նպատակն էր սովորեցնել լավ գրելու և խոսելու արվեստը։ Տրամաբանությունը՝ փիլիսոփայությունը (իմաստասիրությունը) սովորեցնում էր ճշմարիտ և ուղիղ եղրակացություններ անել, որը համապատասխանում է ֆորմալ լոգիկային։ Թվաբանության նպատակն էր սովորեցնել հաշիվներ, հատկապես քրիստոնեական տոների և տոմարագրության հաշիվները։ Աստղաբաշխությունը զբաղվում էր երկնային լուսատուների շարժումներով։ Երկրաչափությունը ուսուցանում էր եկեղեցական շենքերի կառուցումը սովորեցնելու նպատակով։ Աստղաբաշխության և երկրաչափության մեջ մտնում էին նաև աշխարհագրությունն ու տիեզերագիտությունը։ Երաժշտության նպատակն էր սովորեցնել եկեղեցական երգեր, սաղմոսերգություն, նոտագրություն (խազագիտություն) և ժամերգություն։ Այս «յոթ ազատ արվեստներ»-ը գնալով դառնում էին աստվածաբանության աղախիններ։

Բագրատունյաց թագավորության շրջանում, այսինքն՝ 9—11-րդ դարերում, տնտեսական կյանքի զարգացման, քա-

ղաքների աճման և ապրանք-դրամային տնտեսության առաջացման հետևանքով դպրոցները որոշ չափով առաջադիմում են, և աստիճանաբար կազմակերպվում են բավական թվով բարձրագույն դպրոցներ՝ ճեմարաններ, «համալսարաններ», որոնք ունեին երկու աստիճան։ Առաջին աստիճանում սովորում էին «յոթ ազատ արվեստներ»-ը, իսկ երկրորդ աստիճանում՝ ֆակուլտետներում, սովորում էին աստվածաբանության, փիլիսոփայության, բժշկության, իրավաբանության, քերականության մեկնության և այլ առարկաներ։

Առհասարակ հայերեն գրերի ստեղծումից հետո Սահակի և Մեսրոպի ջանքերով ու Վռամշապուհ թագավորի գործոն օգնությամբ Հայաստանում բացվում են դպրոցներ, որոնք բաժանվում էին երեք աստիճանի։ Մասնավոր դպրոցներ հազարյա չկային։ Առաջին աստիճանի վրա են գտնվում նախնական-տարրական տիպի դպրոցները, որոնց նպատակն էր՝ սովորեցնել գրել ու կարդալ և մի քիչ էլ հաշվել։ Այս դպրոցները բացվում են գյուղերում, ուր մասամբ սովորում էին նաև բնակչության ներքին խավերի երեխաները։ Երկրորդ աստիճանի վրա գտնվում էին հոգևոր եկեղեցական թեմերին կից գավառական քաղաքներում բացված դպրոցները, որոնք մի քիչ ավելի բարձր էին գյուղական դպրոցներից։ Այս երկրորդ աստիճանի դպրոցները պատրաստում էին եկեղեցականներ։ Իսկ երրորդ աստիճանի վրա էր գտնվում Վաղարշապատի դիշերօթիկ դպրոցը, որպես գավառական դպրոցների մայր և առաջին հայագիր բարձրագույն դպրոցը Հայաստանում։ Այս դպրոցը գնալով ձևակերպվում է որպես բարձր տիպի դպրոց—համալսարան, որը պահվում էր թագավորի և կաթողիկոսարանի միջոցներով։ Այսպիսով, 5-րդ դարի առաջին քառորդից Հայաստանում սկիզբ է առնում կանոնավոր դպրոցական ցանց, որի գլուխը կանգնում է Վաղարշապատի բարձրագույն դպրոցը[1]։ Սրա նպատակն էր պատրաստել ուսուցիչներ, քարոզիչներ, գրական մշակներ, թարգմանիչներ, բարձր հոգևորականներ և այլ կարգի մտավորականներ։

[1] Արշակ Ալպոյաճյան, «Պատմություն հայ դպրոցի», էջ 45—181, Կահիրե, 1947։

Սահակն ու Մեսրոպը հայկական դպրոցների տիպերն ու ծրագրերը և առհասարակ դպրոցական գործը Հայաստանում կարգի բերելու համար օգտվում են հունական աշխարհի կրթա-դաստիարակչական ձևերից, առանձնապես ինքնավար Անտիոք քաղաքի կրթական սիստեմից, որ լավ հիմքերի վրա էր դրված 4-րդ դարում։ Անշուշտ, օգտվել են նաև Ամիդի, Եդեսիայի և Կեսարիայի դպրոցների սիստեմներից, որոնց հետ նրանք մոտիկից կապ են ունեցել։ Սակայն, չնայած դրան, հայ գործիչները ստեղծում են հայկական ինքնուրույն դպրոցներ իրենց տիպերով ու ծրագրերով, որոնք իրենց շատ կողմերով տարբերվում են հունականից։ Վաղարշապատի բարձրագույն դպրոցում դասավանդվում էին 7 ազատ արվեստներ՝ երկու բաժնով։ Առաջին բաժնում սովորում էին երեք (եռյակ trivium) առարկաներ՝ քերականություն, ճարտասանություն (հռետորիկա) և իմաստասիրություն (տրամաբանություն dialectique), իսկ երկրորդ բաժնում, ավելի բարձր, սովորում էին քառյակ (cvadrim) առարկաներ՝ թվաբանություն, աստղաբաշխություն, երկրաչափություն և երաժշտություն։ Բայց 5-րդ դարում դասավանդվում էին եռյակ առարկաները և քառյակից միայն երաժշտությունը։ Հետևաբար Հայաստանի նորաբաց հայկական դպրոցներում օտար լեզու սովորում էին միայն Վաղարշապատի դպրոցում։

Հայկական պետության անկումից հետո ժողովրդական դպրոցները աստիճանաբար ղրկվում էին պետական նյութական միջոցներից և 6—9-րդ դարերում գնալով անշքանում են և առաջանում են զգալի թվով առանին դպրոցներ, որոնք մասնավորապես՝ «իսուն յուրյանց», բացում են քահանաները աշակերտների հաշվին, նրանց չափավոր կրթություն տալու համար, իսկ որոշ դպրոցներ պահվում էին նախարարների, եկեղեցիների ու վանքերի նյութական միջոցներով և թեև խիստ անշքանում են, բայց և այնպես վերոհիշյալ ժամանակաշրջանում պահպանում են իրենց գոյությունը։ Վաղարշապատի դպրոցը գնալով վերածվում է «Վարդապետարանի» և 5-րդ դարի վերջին կաթողիկոսական աթոռի հետ տեղափոխվում է Դվին, ուր սովորում են նաև վրացի, աղվան ուսանողներ։ 6-րդ դարի կեսերին այս դպրոցումն է սովորել Պետրոս

Սյունեցի Քերթողը: Վերջինը զարկ է տալիս Սյունյաց դպրոցին, որը սկիզբ էր առել Դվինի հայրապետական դպրոցից: Այս դպրոցը գնալով դառնում է հունական լեզվի ուղղության կենտրոն, երկրորդ բարձրագույն դպրոցը Հայաստանում, ուր սովորում և մշակվում էր հունարեն լեզուն: Սյունյաց դպրոցը սկզբում տեղավորված էր Մաքենացոց վանքում: Այսպիսով, 6—9-րդ դարերում, Հայաստանում կարևոր դեր են խաղում Դվինի հայրապետական և Սյունյաց Մաքենացոց դպրոցները, որոնք մյուս դպրոցներին մատակարարում են կազմակերպիչներ, ուսուցիչներ և ղեկավարում հայ կրթական ու դրական գործերը:

8—9-րդ դարերում արաբների տիրապետության հետևանքով վանքերի կառուցումը և դպրոցների բացումը որոշ չափով կանգ են առնում, բայց 10-րդ դարում, հատկապես Անանիա կաթողիկոսի ժամանակ (946—968) նորից մեծ թվով վանքեր են կառուցվում, իսկ նրանց կից բացվում են դպրոցներ, ծաղկում է վանական կյանքը: Բյուզանդական կայսր Ռոմանոս Լիկաբենոսը (920—945) խիստ հալածանք է սկսում հակաքաղկեդոնականների դեմ, որի պատճառով բազմաթիվ հայ վանականներ, որոնք հունական վանքերի միաբանության անդամներ էին դարձել և բյուզանդական կայսրության սահմաններում զարգացնում էին ուսման գործը, խմբերով հեռանում էին բյուզանդական երկրներից, հաստատվում հայկական փոքրիկ թագավորություններում, և 10-րդ դարում տեղի հայ մտավորականների հետ միասին զարկ են տալիս հայ դպրոցներին ու մշակույթին: Նրանք ոչ միայն շատ վանքեր ունեցող նահանգներում էին հին վանքերը վերանորոգում ու նորերը շինում, այլև վանքեր են կառուցում Բյուզանդիային հնթակա և հետո արաբների տիրապետության տակ անցած Չորրորդ Հայքի, Բարձր Հայքի, ինչպես և Աղձնիքի, Մոկքի ու Գուգարքի ծայրամասային նահանգներում, զուգընթաց զարկ տալով Հայաստանում ուսման, կրթության և գիտության տարածման գործին: Այդպիսով, 10-րդ դարում դպրոցական գործը զգալի ծավալ է ստանում Հայաստանում, և 6—9-րդ դարերի երկու բարձրագույն դպրոցների (Դվինի և Սյունյաց) փոխարեն, մի կողմ թողած Անանիա Շիրակացու՝ կարճ ժամանակվա ընթացքում գործող դպրոցը, 10—11-րդ դարերում գործում են տասից ավելի տարբեր տիպ ու բովանդակություն ունեցող բարձրագույն դպրոցներ:

Հայաստանի բարձրագույն դպրոցների կազմակերպման ու աշխարհիկ գիտությունների զարգացման գործում մեծ դեր է խաղում Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, որը տիրապետում էր հունարեն լեզվին և հին աշխարհի կրթությանը: Նա նախ եղել է Բագրատունիների պալատում ուսուցիչ-դաստիարակ, ապա իր կալվածում՝ Բջնի-Կեչառիսում, հետո էլ Տարոնի ս. Կարապետի վանքում բացել է բարձրագույն դպրոցներ ու կարդացել դասախոսություններ: Դասախոսություններ է կարդացել նաև Անիի, Սանահինի և Կարսի դպրոցներում: Գրիգոր Մագիստրոսն իր նամակներից մեկում մանրամասն խոսում է դպրոցների աստիճանների, ուսման պլանների, ծրագրերի և առարկաների մասին[1]: Ինչպես վերևը նշել ենք, դպրոցներն ու ուսման պլանները բաժանվում են երեք մասի, իսկ Մագիստրոսը բաժանում է երեք աստիճանի: Ըստ նրա պլանի, ուսման առաջին աստիճանում պետք է սովորել գրագիտություն, ս. Գրքի ընթերցանություն և առասպելավարժություն, այսինքն՝ զրույցներ աստվածների, դյուցազունների մասին և առակներ, հետո հոմերական-պլատոնական, արիստոտելական և այլ գրքերի հատվածների ընթերցում: Ուսման երկրորդ աստիճանում պետք է սովորել քառյակ առարկաներ՝ թվաբանություն, երկրաչափություն, աստղաբաշխություն և երաժշտություն: Այս երկրորդ աստիճանի գիտելիքները ձեռք բերելուց հետո նոր պետք է անցնել ուսման երրորդ աստիճանի առարկաները տիրապետելուն, այսինքն ֆակուլտետներում լսել քերականության մեկնություն, աստվածաբանական փիլիսոփայություն (փիլիսոփայություն աստծու մասին), իմաստասիրություն, բժշկություն, իրավաբանություն, եկեղեցական կանոնների և իրավունքի ուսուցում, Պլատոնի, Արիստոտելի, Փիլոնի, Դավիթ Անհաղթի և այլ իմաստասերների աշխատությունների ուսումնասիրություն ու մեկնությունը, Պյութագորասի ուսմունքը և կատարել թարգմանություններ: Ուսման գործը ավե-

[1] Թղթերը, էջ 105:

լի հիշատակելու համար Մագիստրոսը կատարում է հին քերականի մեկնությունը և թարգմանություններ։

9—11-րդ դարերում երկրում իրենց խաղացած դերով աչքի են ընկնում հետևյալ դպրոցները.

Շիրակի դպրեվանքը (այժմյան Լենինականի մոտ), սկիզբ է առել 7-րդ դարում, Կոմիտաս կաթողիկոսի ժամանակ և գործել մոտ 1000 տարի։ 8—9-րդ դարերում թեև որոշ չափով անշքանում է, բայց ծաղկում է 10-րդ դարում ու շարունակում է իր գոյությունը երկար ժամանակ։ Արշարունյաց դպրոցը հաստատված էր Երասխաձորում, որը նույնպես 8—9-րդ դարերում անշքանում է և ծաղկում 10-րդ դարում։ 11-րդ դարում ծաղկում է Բջնի-Կեչառիսի դպրոցը, Գրիգոր Մագիստրոսի ղեկավարությամբ։ 10—11-րդ դարերում ուսման ու գիտության զարգացման գործում մեծ դեր են խաղացել Անիի և Կարսի քաղաքային դպրոցները։ Անիի դպրոցում սովորում էին արտաքին իմաստասիրական, համարողական (թվաբանական), մաթեմատիկական ու բնական գիտությունները և դրանց օրենքների իմացությունը։ Անիի դպրոցում Գրիգոր Մագիստրոսը, Սարգիս վարդապետը և ուրիշ գիտնականներ դասախոսություններ են կարդացել վերոհիշյալ առարկաներից[1] 1020—1044 թվականներին։

Սյունյաց դպրոցը ճյուղավորվելով Դվինի հայրապետական դպրոցից, մեծ վերելք է ապրում Մովսես Քերթող Սյունեցու ժամանակ, ուր մեծ բարձրության վրա էր դրված հունարեն լեզվի ուսուցումը։ Այս դպրոցի աշակերտներից Թեոդորոսը Արագածոտնի սատրոտում կառուցում է վանք, բացում դպրոց և պատրաստում աշակերտներ։ Այս դպրոցում սովորել են նաև Սահակ Ջորափորեցին և Հովհան Օձնեցին, որոնք սկզբում սովորել են Սյունյաց դպրոցում։ Սյունյաց դպրոցը 8—9-րդ դարերում նույնպես կորցնում է իր փայլը, բայց ծաղկում է 10-րդ դարում, երբ տեղափոխվում է Տաթևի վանքը, որի միաբանների թիվը հասնում էր 500 հոգու, որոնց մեջ կային հմուտ փիլիսոփաներ, գրողներ, երաժիշտներ ու նկարիչներ։ Այս դպրոցը, ուր թեև քառյակ առարկաները լրիվ չէին դասավանդ-

[1] Ա. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, էջ 239—240, Երևան, 1958։

վում, բայց մեծ դեր է խաղացել Հայաստանում 6—11-րդ դարերում՝ մտավորականների պատրաստման ու գիտության զարգացման գործում։ Այս դպրոցը պահվում էր Սյունյաց իշխանների ու եպիսկոպոսների միջոցներով։ Դպրոցի վայրը եղել է Մաքենացոց վանքը Գեղարքունի գավառում կամ Շաղատում, իսկ 10-րդ դարում դպրոցը տեղափոխվում է Տաթևի վանքը։ Մաքենացոց դպրոցից 9-րդ դարի երկրորդ կեսին սկիզբ է առնում Սևանի դպրոցը, որը 10—11-րդ դարերում դառնում է կրթության կարևոր կենտրոն, ուր մեծ զարկ են տանում փիլիսոփայական ու աստվածաբանական գիտությունները։ Այս դպրոցումն է եղել ժամանակի գիտուն վարդապետներից Սարգիսը, որի հետ նամակագրական կապ է ունեցել Գրիգոր Մագիստրոսը։ Սյունյաց նահանգի դպրոցներից կարևոր դեր է խաղացել նաև Ցախացքարիվանքի (Ղոշավանք Եղեգնաձորի երդափին գյուղի մոտ) դպրոցը։

10-րդ դարում դպրոցները զարկ են տանում նաև Վասպուրականում, հատկապես Գագիկ Արծրունու ժամանակ։ Կառուցվում են բազմաթիվ վանքեր, որոնց կից բացվում են մի շարք դպրոցներ։ Այդ դպրոցներից կարևոր են Ախթամարի, Փշավանքի, Խոսրով Անձևացու Նորդուզի ս. Նշանի, Նարեկա և Վարագի վանքի դպրոցները, որոնք ունեցել են դպրեվանքի և բարձրագույն դպրոցի աստիճան։ Վերոհիշյալ բոլոր դպրոցներում, առանձնապես Նարեկա դպրոցում դասավանդվում էին հռետորություն, փիլիսոփայություն և աստվածաբանություն, որոնց ուսուցման գործում մեծ դեր է խաղացել դպրոցի ղեկավար Անանիա Նարեկացին։

Տարոնում հիմնած դպրոցներից աչքի են ընկնում ս. Կարապետի (Գլակա) իննականյան ու ս. Առաքելոց (Ղաղարի) վանքերի դպրոցները։ Սասունում կառուցվում է Խնատինի վանքը, և նրան կից բացվում է դպրոց։

Բարձր Հայքում, Կարինի մոտ Հնձոց (Կարմիր) վանքի դպրոցը ծաղկում է 10-րդ դարում Սարգիս վարդապետի օրոք։ Այդ դպրեվանքը երկար ժամանակ պահպանում է իր գոյությունը և հանդիսանում է Բարձր Հայքի լուսավորության կենտրոն։ Իսկ 934 թ. Սիմոն վարդապետը Դերջան գավառում կառուցում է Խլաձորի ս. Գրիգորի վանքն իր դպրոցով։

Վանքերին կից դպրոցներում մեծ տեղ էին հատկացվում կրոնական ուսուցմանը և ս. Գրքի ուսումնասիրությանը: Սակայն այդ չէր կարող բավարարել եղած պահանջը: Քաղաքների և հասարակական-քաղաքական կյանքի զարգացումը ստիպում է դպրոցների ղեկավարներին ընդարձակել գիտելիքների տարածումը աշակերտների մեջ: Այդ գործին ձեռնամուխ են լինում ոչ միայն քաղաքների ու Բջնի-Կեչառիսի դպրոցները, այլև Սյունյաց, Այրարատի և Վասպուրականի վանքային դպրոցները: Խիստ կարիք էր զգացվում աշակերտներին տալ կրական, իմաստասիրական ու գիտական գիտելիքներ, սովորեցնել հունարեն լեզուն, յուրացնել տալ գիտությունները, որովհետև արաբների տիրապետության ժամանակ հունարեն իմացողների թիվը խիստ սահմանափակ էր և հույակ ու քառյակ առարկաները լրիվ չէին դասավանդվում:

Բացի պաշտոնական դպրոցներից, վերոհիշյալ դարաշրջանում բազմանում են նաև «Առանին դպրոցները»: Առանին և առանձնական դպրոցներ ունեին քահանաները իրենց տներում, մինչև անգամ կային վարդապետարանի աստիճանին հավասար դպրոցներ: Այս տիպի դպրոցներում աշակերտները իրենց գիտելիքները ձեռք են բերում մի ուսուցչի միջոցով, իսկ մենաստաններում աշակերտը կցվում էր մի գիտուն մարդու, որի մոտ էլ նա պատրաստվում էր: Այս տիպի ուսումնական հաստատությունները կոչվում էին «Առանին դպրոցներ», որոնց մասին բազմաթիվ տեղեկություններ կան հայ մատենագրության մեջ:

6—11-րդ դարերում հայ կրթական հաստատությունները կոչվում էին «դպրեվանք», ավելի ուշ՝ «վարդապետարան», 10-րդ դարում Անանիա Նարեկացին անվանում է «աշակերտարան», իսկ ուսուցիչները սկզբում կոչվում էին «վարդապետ», հետո՝ «վարժապետ»:

9—11-րդ դարերի հայ դպրոցների մեջ ճեմարանի-համալսարանի աստիճանի վրա էին գտնվում Տարոնի ս. Կարապետի, Աղթամարի, Նարեկա, Սանահին-Հաղպատի, Անիի, Կարսի, Բջնի-Կեչառիսի, Սևանի և Սյունյաց դպրոցները, ուր գրքերի պակասության պատճառով պարապմունքները տեղի էին

ունենում լեկցիոն (դասախոսություն) սիստեմով: Ունկնդիրները գրի էին առնում լեկցիաները և մշակում էին գիտական վիճեռում (դիսպուտներ), որոնք երբեմն սուր բնույթ էին ստանում: Այս ձևով են տարվել հատկապես Բջնի-Կեչառիսի Գրիգոր Մագիստրոսի ճեմարան-համալսարանի պարապմունքները, որը բացվել է 11-րդ դարի առաջին քառորդում Պահլավունիների միջոցներով: Դպրոցների աշակերտների ու ուսանողների թիվը շատ չի եղել, միջին թվով կազմել է 30—70 հոգի: Բարձրագույն դպրոցներում դասախոսների համար մտցված են եղել լիցենցիատի, մագիստրոսի և դոկտորի գիտական աստիճաններ:

Դպրոցներում և ճեմարաններում առարկաների դասավանդումը տարվել է սխոլաստիկ մեթոդներով, ծեծի հարված-ների տակ: Բայց վերոհիշյալ դարաշրջանում սխոլաստիկայի կողքին սկսվում է առաջանալ ու զարգանալ նաև միստիկան: Սխոլաստիկները գտնում էին, որ հավատն ու բանականությունը իրարից չեն բաժանվում և կրոնական դոգմաների ճշմարտությունը կարելի է ապացուցել միայն տրամաբանորեն, իսկ միստիկները, ընդհակառակը, ժխտում էին բանականությունը և գտնում էին, որ ճշմարտության կարելի է հասնել միայն հայեցողության միջոցով, այն էլ աղոթքների միջոցով մարդու ուշադրությունը մշտապես աստծու վրա կենտրոնացնելով, որպեսզի աստվածային շնորհը իջնի նրա վրա:

Միստիկ իդեոլոգիան Հայաստանում սկսում է առաջանալ և ուժեղանալ 10-րդ դարում, այն էլ երկրի հարավային շրջաններում, ուր ուժեղ են եղել թոնդրակյանների շարժումները: Հայաստանում միստիկ իդեոլոգիայի ամենախոշոր ներկայացուցիչը հանդիսանում է Գրիգոր Նարեկացին, Նարեկա դպրոցի սանը, իր «Մատյան ողբերգության» աշխատությամբ: Ֆ. Էնգելսը նշում է, որ միջնադարյան միստիկան մի օպոզիցիոն-ռևոլյուցիոն ուղղություն էր, ուղղված պաշտոնական եկեղեցու տիրող սխոլաստիկ իդեոլոգիայի դեմ[1]: Այս շրջանում սուր պայքար է գնում Հայաստանում այդ երկու ուղղություն-

---

1 Ֆ. Էնգելս, Գերմանական գյուղացիական պատերազմը, էջ 47, Երևան, 1934:

ների միջև, բայց իշխողը հանդիսանում էր սխոլաստիկան, որը նաև խոնարհվում էր հեղինակությունների առաջ, արհամարհում էր փորձը։ Այդպիսի հեղինակություններ էին աստղաբաշխության, աշխարհագրության մեջ Պտղոմեոսը, բնական գիտությունների մեջ Արիստոտելը, բժշկության մեջ Գալեն կամ Գալիանոս բժիշկը և այլն։ Բայց չնայած դրան, Հայաստանի ճեմարաններում, ինչպես նշել ենք, որոշ չափով զարգանում էին բնական գիտությունները՝ մաթեմատիկան, ֆիզիկան, բնագիտությունը, ալքիմիան, աստղաբաշխությունը, երկրաչափությունը և այլն։ Հայերը մեծ քանակությամբ թարգմանում էին անտիկ դրականության գիտական և գեղարվեստական կարևոր երկեր և զարկ տալիս արտաքին գիտություններին։

Այս շրջանում դպրոցները թեև պահվում էին այս կամ այն վանքի և կամ թե որևէ իշխանության հաշվին, բայց նրանք արդեն դարձել էին համահայաստանյան մասշտաբով դպրոցներ, ուր կարող էին սովորել տարբեր վայրերից եկած ուսանողները։ Այսպիսով, Բագրատունյաց թագավորության շրջանի տնտեսական կյանքի զարգացումն իր հետ բերում էր ոչ միայն գիտության, գրականության և արվեստի նոր վերելք, այլև դպրոցական ցանցի ընդարձակում։

Շիրակ-Այրարատյան, Վասպուրականի, Վանանդի, Կյուրիկյան և Սյունիքի թագավորություններում, Պահլավունիների կալվածներում, ինչպես ասված է վերևում, իրար հետևից կառուցվում են նորանոր վանքեր, որոնց կից բացվում են դպրոցներ, որոնք իրենց հերթին դառնում են երկրի կուլտուրական կենտրոններ, ուր հավաքվում են ժամանակի ավելի գիտակ և ընդունակ մարդիկ։ Այդ կուլտուրական կենտրոնները հովանավորում և նյութական միջոցներով ապահովում էին երկրի աչքի ընկնող թագավորներն ու իշխանները։

9—11-րդ դարերի դպրոցներում ու ճեմարաններում են սովորել և կրթություն ստացել ժամանակի գիտնականները, գրող-բանաստեղծները, փիլիսոփաները, պատմաբանները, վանականները և հասարակական գործիչները։ Այդ դպրոցներից են դուրս եկել Հովհաննես Դրասխանակերտցին, Թովմա Արծրունին, Շապուհ Բագրատունին, Գրիգոր Նարեկացին, Մովսես Կաղանկատվացին, Ստեփանոս Ասողիկ Տարոնացին,

Արիստակես Լաստիվերտցին, Գրիգոր Մագիստրոսը, Սարգիս վարդապետը և ուրիշ շատ հասարակական ու կուլտուրայի գործիչներ։

Դպրոցներում մեծ ուշադրություն էին դարձնում նաև արտաքին գիտությունների ուսուցման վրա։ Այդ տիպի դպրոցներն էին Անիի, Կարսի, Բջնի-Կեչառիսի և մասամբ էլ Սյունյաց ու Նարեկա ճեմարանները, որոնք գնալով կրում են աշխարհիկ բնույթ և մեծ տեղ էին տալիս լեզուների ուսուցմանը ու գիտելիքների տիրապետմանը։ Նախորդ դարերում արտաքին գիտությունները մեծ մասամբ սովորում էին դրսի աշխարհում՝ հունա-հռոմեական երկրների գիտության և կուլտուրայի կենտրոններում, իսկ այս շրջանում հիմնականում սովորում էին տեղում։

10-րդ դարի վերջերից Բյուզանդիայի դեմ Հայաստան ունեցած ագրեսիվ քաղաքականությունը հայերի և բյուզանդացիների միջև թշնամություն էր առաջ բերել ոչ միայն քաղաքականության մեջ, այլև գիտության ու կուլտուրայի բնագավառներում։ Կայսրությունը դեռ 6-րդ դարի վերջերից սկսել էր կրոնա-դավանաբանական հալածանքներ հայերի դեմ, բացի այդ, փակվել էին հունական շատ համալսարաններ, այդ հանգամանքների հետևանքով հայ ուսանողները չէին գնում Բյուզանդիոն և կայսրության այլ կուլտուրական կենտրոնները լեզուներ ու գիտություններ սովորելու։ Այդ պատճառով արտաքին գիտություններն ավելի մեծ զարկ են ստանում Հայաստանում, որովհետև հայ դպրոցների առաջ խնդիր էր դրվում լրացնել այդ պակասը տեղում, զարկ տալ լեզուների ուսուցման ու գիտելիքների տիրապետման մեծ գործին։ 9—11-րդ դարերում հայկական դպրոցները պատվով են կատարում այդ խնդիրները, հատկապես Գրիգոր Մագիստրոսի Բջնի-Կեչառիսի ճեմարանը։ Այստեղ հավաքվում էին երկրի տարբեր վայրերից եկած առաջադեմ ուսանողները, ոգևորում գիտությամբ և պայքար էին ծավալում բյուզանդական գիտնականների դեմ՝ իրենց ուսուցչապետ Գրիգորի գլխավորությամբ։

Վանքերին ու դպրոցներին կից աստիճանաբար հիմնադրվում են մատենադարաններ ու գրադարաններ, որոնք

գնալով հարստանում են: Ժամանակի թագավորները, իշխանները և բարձր հոգևորականները ձեռագրեր էին արտագրել տալիս գրիչների միջոցով և նվիրում այս կամ այն գրադարանին: Վանքերի ու դպրոցների ղեկավարները նույնպես բազմացնել էին տալիս ձեռագիր գրքերը, իսկ մեկենասների հովանավորությամբ գրվում էին նոր աշխատություններ: Այս շրջանում նշանավոր էին Սանահին-Հաղպատի, Հոռոմոսի, Աղթամարի, Նարեկա, Վարագա, Անիի և Սյունյաց մատենադարանները: Առանձին գրադարաններ են ունեցել նաև իշխաններն ու բարձր հոգևորականությունը: Նշանավոր են եղել նաև Անիի արքունիքում, կաթողիկոսարանում և Կարսի արքունիքում եղած գրադարանները:

8–11-րդ դարերի կուլտուրայի բնութագրումը

8—11-րդ դարերի կուլտուրայի մասին խոսելիս այն պետք է բաժանել երկու շրջանի՝ արաբական տիրապետության և Բագրատունյաց թագավորության շրջանների: Առաջին շրջանում՝ 8-րդ դարում և 9-րդ դարի առաջին կեսին, ոչ միայն չի զարգանում հայկական կուլտուրան, այլև արաբական ծանր լծի հետևանքով տնտեսական կյանքի անկմանը զուգընթաց անկում է ապրում, առանձնապես ճարտարապետությունը. արաբների տիրապետության շրջանում ոչ մի հուշարձան չի կառուցվել, եղածների մի մասն էլ ավերվել և ոչնչացվել է: Իսկ կուլտուրայի մյուս ճյուղերը նույնպես առանձին զարկ չեն ստանում, բացի մի քանի կրոնական և պատմական երկերի ստեղծումից:

Երկրորդ էտապում, երբ հայ ժողովուրդը վերականգնում է իր կորցրած անկախությունը, նոր ծավալով ու թափով վերելք է ապրում հայկական կուլտուրան՝ իր բոլոր ճյուղերով: Գրականության մեջ առաջ է գալիս ինքնուրույն նոր ժանր՝ գեղարվեստական գրականություն: Աշխարհիկ մոտիվներ են հանդես գալիս կուլտուրայի մեջ, ձևակերպվում է միստիկ իդեոլոգիան. ճարտարապետությունը և արվեստը սկսում են լայն թափով զարգանալ և իրենց արժանի տեղը գրավել ոչ միայն հայկական, այլև միջազգային ճարտարապետության պատմության մեջ:

Այս շրջանի կուլտուրան որոշ չափով կրում է աշխարհիկ

բնույթ, բայց կրոնական իդեոլոգիայի ազդեցությունն ավելի ուժեղ է արտահայտվում գեղարվեստական գրականության ու ճարտարապետության մեջ: Այս շրջանի կուլտուրան հանդիսանում է մարզպանական դարաշրջանի կուլտուրայի աստիճանական զարգացումը: Արհեստների, առևտրի և քաղաքների զարգացումը, քաղաքային կյանքի առաջացումը, որոնք առաջ էին բերել հասարակական կյանքում նոր երևույթներ, իրենց անդրադարձումն են գտել կուլտուրայի մեջ, առաջ բերելով աշխարհիկ մտածելակերպ: Սակայն կուլտուրան հիմնականում գտնվում էր քրիստոնեական կրոնի ազդեցության տակ:

Պատմագրություն: Այս շրջանում գրականության մեջ կարևոր ճյուղը դարձյալ մնում է պատմագրությունը: Այս ժամանակաշրջանի հայ պատմագիրների աշխատությունները լեզվի, որակի, պատմական նյութի վերլուծման, տրամաբանության և հմտության տեսակետից չեն հասնում նախորդ շրջանի պատմագիրների աշխատություններին:

8—11-րդ դարերի պատմագիրների երկերում կրոնական ազդեցությունը անհամեմատ ուժեղ է: Սրանք փոխանակ կատարված դեպքերի քաղաքական ու սոցիալական պատճառներն ու հետևանքները վերլուծելու, հաճախ բավարարվում են աստվածաշնչից կամ մարգարեների ասածներից մեջբերումներ անելով, պատմական երևույթների մեջ ավելի շուտ տեսնում են նախախնամության մատը: Սակայն չնայած դրան, տվյալ շրջանի պատմագիրների աշխատությունները, այնուամենայնիվ, արժեքավոր են ոչ միայն հայ, այլև հարևան վրաց ու աղվան, ինչպես և առաջավոր Ասիայի ժողովուրդների պատմության համար: Նրանք մանրամասն կերպով գրի են առել կատարված դեպքերն ու երևույթները, ժամանակագրությունը և հաղորդում են հարուստ փաստական տվյալներ պատմության վերաբերյալ:

Ղևոնդ Երեց.—8—11-րդ դարերի պատմագիրներից հայտնի է Ղևոնդ Երեցը, որի կենսագրության մասին տեղեկություններ չկան, միայն հայտնի է, որ նա եղել է հոգևորական, ապրել ու գործել է 8-րդ դարում, արաբական խալիֆաթի տիրապետության ամենածանր ժամանակաշրջանում: Հայ պատմագիրների մի մասը նրան անվանում է վարդապետ, իսկ մի մա-

աբ՝ երեց։ Նա իր պատմական աշխատությունը գրել է Աշոտ Մսակերի եղբայր Շապուհ Բագրատունու պատվերով։ Հեղինակն իր այդ աշխատության մեջ մանրամասն նկարագրում է արաբական արշավանքները Հայաստանում, արաբների կատարած ծանր հարկահանությունները և նրանց դեմ բռնկված ժողովրդական ապստամբությունները։ Ղևոնդը համակրում էր Բագրատուններին և դեմ էր Մամիկոնյանների քաղաքականությանը։ Նրա աշխատության լեզուն պարզ է և հագեցված հայրենասիրական գաղափարով։ Ղևոնդի աշխատությունը տպագրվել է մի քանի անգամ։

Շապուհ Բագրատունի.— Բագրատունյաց այս իշխանի գրած պատմության մասին թեև պատմիչները հիշատակում են իրենց աշխատություններում, բայց մինչև մեր ժամանակները այն համարվում էր կորած գործ։ Հայտնաբերվել է միայն 1917 թ. և հրատարակվել է էջմիածնում Գ. Տեր-Մկրտչյանի ու Մեսրոպ Մաշիստրոսի կողմից 1921 թ.։ Հայ իրականության մեջ մինչև 10-րդ դարը, սա առաջին հեղինակն է, որը աշխարհական լինելով հանդերձ, զբաղվել է գրական աշխատանքով, ապրել ու գործել է 9-րդ դարի երկրորդ կեսին և 10-րդ դարի առաջին քառորդին։ Նրա պատմության նյութը կազմել են 7-րդ դարի կեսերից մինչև 10-րդ դարի սկիզբը Հայաստանում տեղի ունեցած քաղաքական անց ու դարձերը։ Բայց ավելի մանրամասն է նկարագրել 9-րդ դարի երկրորդ կեսի քաղաքական դեպքերը, առանձնապես կանգ առնելով Արծրունյաց տոհմի ներսում տեղի ունեցած կռիվների, իշխանների ներքին պայքարի, Սասունի ապստամբության և Բագրատունյաց թագավորության առաջացման վրա։ Աշխատությունը գրված է հիշողության հիման վրա, խոսակցական կենդանի լեզվով, խառնիխուռն, անսիստեմ։

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի.— ապրել ու գործել է 9-րդ դարի երկրորդ կեսին և 10-րդ դարի առաջին երեք տասնամյակներում։ Կաթողիկոս է եղել (897—929) Հայաստանի ամենածանր ժամանակներից մեկում։ Նրա աշխատությունը կոչվում է «Պատմութիւն Հայոց», որը հավանաբար գրել է Աշոտ Երկրորդի (երկաթ) խորհրդով։ Հովհաննեսն իր պատմությունը սկսում է հնագույն շրջանից, կանգ առնելով

հայ ժողովրդի ծագման վրա, ապա համառոտ շարադրում է հայ ժողովրդի պատմությունը մինչև 10-րդ դարի առաջին քառորդը, օգտագործելով իրենից առաջ եղած հայ պատմագիրների գործերը, հատկապես Մովսես Խորենացու աշխատությունը։ Բայց երբեմն հաղորդում է նոր փաստեր, որոնք չկան հին պատմիչների մոտ, այդ առումով հեղինակի գործը լուրջ աղբյուր է նաև հին շրջանի պատմության համար։ Սակայն Դրասխանակերտցու աշխատությունն ավելի արժեքավոր է իր երկրորդ մասով, որն իր մեջ ընդգրկում է 9-րդ դարի երկրորդ կեսի և 10-րդ դարի առաջին քառորդի ժամանակաշրջանի պատմական նյութը։ Նա աշխատության այդ մասը շարադրում է որպես շատ դեպքերի մասնակից ու ականատես և մանրամասն կանգ է առնում Բագրատունյաց պետության առաջացման, Աշոտ Առաջինի, Սմբատ Առաջինի, Աշոտ Երկրորդի գործունեության և Բագրատունիների պետության մղած ազատագրական կռիվների վրա, որոնք հիմնականում ուղղված էին Աստպատականի արաբական էմիրության դեմ։ Բացի այդ, հեղինակն իր աշխատության մեջ շոշափում է հայկական միասնական ուժեղ պետություն ստեղծելու գաղափարը, դեմ է կենտրոնախույս ֆեոդալ-իշխանների ձգտումներին, քարոզում է հայ, վրաց և աղվան ժողովուրդների համերաշխության ու միասնական պայքարի գաղափարն՝ ընդդեմ օտար զավթիչների։ Աշխատության լեզուն խրթին է, ունեցել է մի շարք հրատարակություններ։ Նա պատմական երևույթները մեկնաբանում է իդեալիստորեն, քաղաքական դեպքերի մեջ տեսնում է նախախնամության մատը, պաշտպանում է իշխող դասակարգին ու նրա դեմ եղած ընդվզումները բնութագրում է որպես չարիք։

Թովմա Արծրունի.— ժամանակակից է եղել Հովհաննես Դրասխանակերտցուն։ Նրա աշխատությունը կոչվում է «Պատմութիւն տանն Արծրունեաց», այսինքն՝ գրել է Արծրունյաց տոհմի պատմությունը։ Բայց նրա աշխատության բովանդակությունը դուրս է գալիս իր նյութի սահմաններից և ընդգրկում է ամբողջ Հայաստանն ու Մերձավոր Արևելքը։ Նա իր պատմության վերաբերյալ նյութեր հավաքելու համար շրջել է Հայաստանի մի շարք գավառներ ու քաղաքներ։ Իր պատմու-

թյան նյութը սկսում է հնուց և հասցնում մինչև 920-ական թվականները։ Թովման իր պատմությունը բաժանել է չորս դպրության. բայց իրականում, ըստ նյութի բովանդակության, բաժանվում է երկու մասի՝ առաջինը ընդգրկում է սկզբից մինչև 850 թվականը, որը գրելիս մեծ մասամբ օգտվել է ուրիշներից, երկրորդ մասը՝ 850—920 թթ., որը ավելի արժեքավոր է, որովհետև շարադրված է ականատեսի կողմից։ Թովման իր աշխատությունը շարադրելիս, բացի հայ և օտար աղբյուրներից, օգտագործել է նաև ժողովրդական զրույցներ, առասպելներ և բանահյուսություն։ Նա իր աշխատության առաջին մասում (առաջին և երկրորդ դպրություններ) պատմում է Արծրունյաց տոհմի ծագման առասպելական խառն շրջանը, ապա շարադրում է Հայաստանի, Պարսկաստանի և Արաբիայի պատմությունը, նշելով Արծրունիների խաղացած դերը տարբեր դարաշրջաններում։ Իսկ աշխատության երկրորդ մասում (երրորդ, չորրորդ դպրություններ) նա մանրամասն շարադրում է 850—852 թթ. խութեցիների ապստամբությունը, Բուղայի արշավանքները, Բագրատունիների պետության առաջացումը, Արծրունյաց թագավորության հիմնումը, արաբական էմիրությունների ոտնձգությունները և հայ ժողովրդի նրանց դեմ մղած պայքարը, Ադրբամարի շինարարությունը, երկրի տնտեսական ու կուլտուրական կյանքի զարգացումը։ Թովմայի աշխատությունը թեև նվիրված է Արծրունյաց տոհմի պատմությանը, բայց և այնպես նրա աշխատությունն իր մեջ պարունակում է ոչ միայն Հայաստանի, այլև Առաջավոր Ասիայի երկրների պատմության համար հարուստ պատմական նյութեր։ Դրանով նրա աշխատությունը դուրս է գալիս ոչ միայն իր նեղ տոհմական շրջանակներից, այլև Հայաստանի սահմաններից։ Նա փորձել է շարադրել Առաջավոր Ասիայի ժողովուրդների պատմությունը։ Թովման խիստ գովաբանում ու մեծարում է իր ժողովրդի մղած պայքարն օտարների դեմ և անհամեմատ ավելի ղերծ է կրոնական ազդեցությունից։

Նա իր գիրքը գրել է Դերենիկ և Գագիկ Արծրունիների՝ հոր և որդու պատվերով, որտեղ խիստ պաշտպանում է իր տոհմի իշխաններին և նույնիսկ անտեսում է նրանց դավաճանական արարքները։ Թովմայի աշխատությունը հարուստ է

փաստերով և հայրենասիրական վառ էջերով։ Թովմայի աշխատությունն ունեցել է մի շարք հրատարակություններ։

Ուխտանես եպիսկոպոս.— ապրել ու գործել է 10-րդ դարում։ Նրա գրած «Պատմութիւն հայոց» աշխատությունը բաժանվում է երեք մասի՝ առաջին՝ «Պատմութիւն Հայրապետաց և թագաւորաց Հայոց մերոց», և երկրորդ՝ «Պատմութիւն բաժանման վրաց ի Հայոց» և երրորդ՝ «Յաղագս մկրտութեան ազգին այնմիկ ծադն կոչեցեալ»։ Աշխատության արժեքավոր մասը երկրորդն է։ Ուխտանեսի գիրքը հրատարակվել է 1871 թ., թարգմանվել է ֆրանսերեն, գրքի լեզուն ավելի պարզ է։

Ստեփաննոս Ասողիկ Տարոնեցի.— ապրել ու գործել է 10-րդ դարի երկրորդ կեսին և 11-րդ դարի սկզբին։ Նա թեև ծնվել է Տարոնում, բայց ապրել ու գործել է Շիրակում։ Սրա աշխատությունը, որ կոչվում է «Պատմութիւն Տիեզերական», բաժանվում է երեք մասի։ Հեղինակը իր առաջ խնդիր է դրել շարադրել ոչ միայն հայերի, այլև ընդհանուր ազգերի պատմությունը, հնագույն շրջանից մինչև իր ժամանակ։ Աշխատությունը, որ գրել է Բագրատունյաց թագավոր Գագիկ Առաջինի պատվերով, բաժանվում է երեք մասի, որոնք կոչվում են հանդեսներ։ Առաջին հանդեսում, բացի ներածականից, շարադրել է Եգիպտոսի, Ասորեստանի, Մարաստանի, Հրեաստանի, Պարսկաստանի և Հայաստանի պատմությունը մինչև մեր տարեգրության 4-րդ դարը։

Երկրորդ հանդեսում շարադրել է Սասանյանների, արաբական խալիֆաթի և Բյուզանդիայի 4—9-րդ դարերի պատմությունը։ Երրորդ հանդեսը նվիրել է Հայաստանի 9—10-րդ դարերի պատմության մանրամասն շարադրմանը, կապելով այն ընդհանուր պատմության դեպքերի հետ և շարադրանքը հասցնում է մինչև 1004 թվականը։ Երրորդ հանդեսի պատմական նյութը կազմում է գրքի ավելի արժեքավոր մասը, ուր բացի քաղաքական դեպքերից, հարուստ տեղեկություններ կան նաև տնտեսական, սոցիալական և կուլտուրական խնդիրների մասին։

Ասողիկի գիրքը նորություն էր հայ պատմագիտական գրականության մեջ, ուր հեղինակը փորձ է անում շարադրել

հայ ժողովրդի պատմությունը ընդհանուր պատմության ֆոնի վրա։ Դրա հետևանքով էլ երբեմն ընդհանուր պատմության շարադրանքն ստացվել է ավելի սխեմատիկ, մեծ տեղ է տալիս եկեղեցական, կրոնական ու դավանաբանական հարցերին և աշխատությունը կրում է ժամանակագրության բնույթ։ Բայց դրանք չեն արժեքազրկում սույն աշխատությունը։ Ավելին, հեղինակը դեմ լինելով կենտրոնախույս ուժերի պայքարին, կողմ էր Բագրատունիների գլխավորությամբ հայկական հողերի միավորմանը և ուժեղ հայկական միապետական պետության ստեղծմանը։ Ստեփանոս Ասողիկի աշխատությունն ունեցել է մի քանի հրատարակություններ։ Ասողիկը հայրենասեր հեղինակներից է։

Մովսես Կաղանկատվացի.— *Ուշյալ նահանգի կաղանկատվաց գյուղից է, ապրել ու գործել է 10-րդ դարում, գրել է իր հայրենիքի՝ Աղվանից աշխարհի պատմությունը, սկզբից մինչև 10-րդ դարի կեսը, այսինքն՝ մինչև 944 թվականը, «ռուսիկների»՝ ռուսների կողմից Պարտավ քաղաքի գրավումը։* Աշխատությունը Մովսես Խորենացու նման բաժանել է երեք հատորների։ Առաջին հատորի նյութը քաղել է հայ հին մատենագիրներից, իսկ երկրորդ և երրորդ հատորները ավելի ինքնուրույն են։ Նրանց մեջ կան մի շարք պատմական արժեքավոր տեղեկություններ ոչ միայն Աղվանքի, այլև Հայաստանի մասին։ Մեկ աղբյուրն է հին Աղվանքի, այժմյան Ադրբեջանի հին պատմության համար։ Առանձնապես կարևոր են այն մասերը, ուր խոսում է Աղվանքի Առան, Վաչագան և Ջիհանշիր թագավորների, Միհրրական հարստության (դինաստիայի) իշխանների և խազարների արշավանքների մասին։ Կաղանկատվացու գիրքն ունեցել է մի շարք հրատարակություններ, լեզուն պարզ է, բայց կան խրթին հատվածներ։ Հեղինակը կրոնական խնդիրներին և առասպելաբանություններին մեծ տեղ է տալիս, սակայն աշխատությունը պատմական մեծ արժեք ունի իր հաղորդած հարուստ պատմական փաստերով։

Առիստակես Լաստիվերտցի.— *11-րդ դարի պատմագիր է, ծնվել է Արծն քաղաքի մոտ գտնվող Լաստիվերտ գյուղում (Կարինի շրջանում)։ Պատմության նյութը սկսում է Դավիթ Կյուրապաղատի մահով (1000 թ.) և վերջացնում է Ալփասլանի*

մահով (1072)։ Լաստիվերտցին իր պատմության մեջ նկարագրում է Բագրատունիների թագավորության անկումը, Բյուզանդիայի և սելջուկ-թուրքերի արշավանքները դեպի Հայաստան, երկրի ավերումը և հայ զորքերի անտեր թափառելը օտար երկրներում։ Երկու գլուխ էլ նվիրել է Թոնդրակյաններին շարժմանը։

Արիստակեսի աշխատությունը սիստեմատիկ շարադրանքի բնույթ չի կրում, այլ իրենից ներկայացնում է տարբեր քաղաքական դեպքերի և անց ու դարձերի ժողովածու։ Հեղինակը գտնվելով կրոնական գրականության ու եկեղեցական դոգմաների խիստ ազդեցության տակ, քաղաքական դեպքերի մեջ հաճախ տեսնում է նախախնամության մատը, ս. Գրքի ազդեցությունն է ամեն քայլափոխում նկատվում գրքում և շատ դեպքերում էլ կատարված վատ անցքերը դիտում է որպես մարդկանց գործած մեղքերի աստծու կողմից տրված պատիժ։ Բայց նա առաջին հայ պատմագիրն է, որ հասարակության մեջ տեսնում է հարուստների-շահագործողների ու աղքատների-շահագործվողների իրար հակադիր երկու խմբավորումներ և ելնելով կրոնական որոշ հասկացություններից, համակրում է աղքատներին, խիստ պախարակում, անարգանքի սյունին գամում անկուշտ բռնացողներին ու կեղեքողներին։

Լաստիվերտցին մեծ հայրենասեր է, կողմ է հայ ժողովրդի միասնական պետության պահպանմանն ու ամրապնդմանը։ Նա կսկիծով է գրի առել իր պատմության մատյանում այն կտակը, որ Հովհաննես-Սմբատը Պետրոս կաթողիկոսի միջոցով հանձնել է բյուզանդական կայսր Վասիլ (Բարսեղ) երկրորդին և որպես մեծ հայրենասեր հաճույքով է գրել Բագրատունիների ժամանակ իր հայրենիքի զարգացումն ու բարվոք դրության, քաղաքների մասին, ապա ողբում է նրանց ավերումն ու կործանումը։ Նա միաժամանակ անարգանքի սյունին է գամում հայրենիքի դավաճաններին, որոնց թվում և Պետրոս Գետադարձ կաթողիկոսին։

Արիստակես Լաստիվերտցու աշխատության լեզուն ճոխ է ու հարուստ, այդ տեսակետից համարվում է երկրորդ եղիշեն հայ պատմագրության մեջ։ Նրա պատմությունը հագեցված է

խոր հայրենասիրությամբ և ունեցել է մի շարք հրատարակություններ, թարգմանվել է աշխարհաբար։

Բացի վերոհիշյալ պատմագիրներից, կան նաև մի շարք ուրիշ հեղինակներ, որոնք պատմագրության մեջ առանձին տեղ չեն գրավում։

Հայ պատմագիրները գերազանցապես կանգ են առնում քաղաքական և կրոնական խնդիրների վրա, աչքաթող անելով տնտեսական և սոցիալական հարցերը։ Հայ պատմիչները լինելով սիրող ու շահագործող դասակարգերի ներկայացուցիչներ, վատ են տրամադրված դեպի աշխատավոր ժողովուրդը և նրա ընդվզումները սիրող կարգերի դեմ։

Կրոնա-դավանաբանական գրականություն

7—11-րդ դարերում հայ գրականության մեջ կարևոր տեղ է գրավում կրոնա-դավանաբանական գրականությունը։ Այս ժամանակաշրջանում հորինվել են մեծ քանակությամբ կրոնական բանաստեղծություններ՝ շարականներ, որոնք ունեն գեղարվեստական արժեք։ Ուշագրավ են Սահակ Զորափորեցու (7-րդ դարի երկրորդ կեսի և 8-րդ դարի սկզբի հեղինակ), Հովհան Օձնեցի իմաստասերի (8-րդ դար) և Ստեփանոս Սյունեցու գրած կրոնական բնույթի մի շարք բանաստեղծություններ, որոնք ճանապարհ են հարթում գեղարվեստական գրականության առաջացման համար։

Կրոնական-վարդապետական գրականության մեջ խոշոր տեղ է բռնում վարքագրությունը, որը նկարագրում է ճգնավորական կյանք վարող մարդկանց և կամ թե կրոնի ու դավանանքի համար նահատակվողների գործունեությունը։ Ինչպես, օրինակ, Վահան Գողթնեցու նահատակությունը 737 թ. և նրա շուրջն ստեղծված վարքագրությունը։ Կրոնա-դավանաբանական և փիլիսոփայական գրվածքներով այս շրջանը հարուստ է։ Չկա մի գրող կամ պատմագիր, որ ճառեր ու մեկնաբանություններ գրած չլինի։ Այս տեսակետից առաջին տեղը բռնում է Հովհան Օձնեցի կաթողիկոսը (717—728), որը ծնվել է Տարոնի (Լուսի) Օձուն (Ուզունլար) գյուղում, ապրել ու գործել է 7-րդ դարի երկրորդ կեսին և 8-րդ դարի առաջին քառորդին, նրա գիտական գործունեությունը տեղի է ունենում 8-րդ դարում։ Նա իր կրթությունն ու դաստիարակությունը ստացել է

Արագածոտն գավառի և ս. Աստվածածին վանքի վանահայր Թեոդորոս Քոբենավորից և Սյունյաց Մաքենացոց դպրոցում, բայց իր գիտելիքները մեծ մասամբ նա ձեռք է բերել ինքնակրթությամբ։ Նրա թողած գրական ժառանգությունը հիմնականում եկեղեցական է։ Հայտնի է նա իբրև փիլիսոփա, աստվածաբան, առենաբան և երգիչ։ Կարևոր են նրա երեք ճառերը, որոնցից երևում է նրա հմտությունը աստվածաբանության մեջ։ Ճառերից մեկը 720 թ. Դվինի եկեղեցական ժողովում կարդացած առենախոսություն է, որի միջոցով նա կոչ է անում ժողովականներին հսկել եկեղեցական կարգերի վրա, որպեսզի աղանդավորներն և այլադավան հերձվածները չթափանցեն ժողովրդի մեջ և չվնասեն նրան իրենց ուսմունքներով։ Երկրորդ ճառով «ընդդեմ երևութականաց», պարսավում է քաղկեդոնական-երկաբնակներին, ի պաշտպանություն միաբնակ հայ եկեղեցու։ Երրորդ ճառն ուղղված է պավլիկյանների դեմ։ Օձնեցին հավաքելով եկեղեցական կանոնները, կազմել է մի ժողովածու-օրենսգիրք։ Նա կատարել է նաև թարգմանություններ։ Այս ճառերով և առենաբանությամբ իմաստասեր կաթողիկոսը պաշտպանում է հայ եկեղեցին երկու հակառակորդներից, այսինքն՝ մի կողմից դրսի քաղկեդոնական դավանանքից և այլ հերձվածներից, իսկ մյուս կողմից ներսի աղանդավորական-սոցիալական շարժումներից՝ պավլիկյաններից և այլ ընդդիմադիր առաջավոր հոսանքներից։ Եթե առաջինների դեմ մղած պայքարում հեղինակն իրավացի կերպով պաշտպանում էր հայ եկեղեցու ինքնուրույնությունը հունական եկեղեցու ոտնձգություններից, բայց երկրորդների դեմ մղած պայքարով նա կոիվ էր մղում հայ առաջավոր հոսանքների դեմ, պաշտպանելով պաշտոնական հայ եկեղեցու ռեակցիոն դաղափարները։

8-րդ դարում դավանաբանական-վարդապետական գրվածներով աչքի ընկնող դեր է խաղացել նաև Ստեփանոս Սյունեցին, որը ժամանակակիցն էր Հովհան Օձնեցուն և վերջինի հետևորդն էր։ Նա նախ գրել է երկու թուղթ, մեկն ուղղված է Կ. Պոլսի պատրիարք Գերմանոսին, մյուսը՝ Անտիոքի պատրիարքին, ուր պաշտպանում է հայ եկեղեցու ինքնուրույն իրավունքները և մերժում է քաղկեդոնի դավանանքը։

Այդ տեսակետից ուշագրավ է նրա «Մի Բնութիւն» աշխատությունը: Ստեփանոսն իր մանագիտությամբ եկեղեցական երաժիշտ է եղել,— ասում է Ստ. Օրբելյանը[1]: Նա հայտնի է նաև իր թարգմանություններով, թարգմանել է Դիոնիսիոս Արիսպագացու թղթերը, Կյուրեղ Ալեքսանդրացու «Պարապմանց» անունով գործը, ինչպես նաև հույն նշանավոր փիլիսոփա Նեմեսիոսի մարդակազմությունը, որը մեծ դեր է խաղացել հայ գրականության և գիտական մտքի զարգացման բնագավառներում: Ստեփանոս Սյունեցին սպանվել է 737 թ.:

8-րդ դարի առաջին կեսին նշանավոր է նաև Ստեփանոսի քույր Սահակադուխտ բանաստեղծուհին: Սա եղել է ճգնավոր կույս Գառնի ձորի մի այրում և հորինել է երգեր, մեղեդիներ ու երգել, իհարկե եկեղեցական շրջանակներում: Նրա մոտ էին գնում շատ մարդիկ, հատկապես բաղաձայներ սովորելու համար: Դժբախտաբար այս առաջին հայ կին-երգիչ բանաստեղծուհու գործերից շատ քիչ բան է հասել մեզ: Սահակադուխտին ժամանակակից է եղել նաև երկրորդ կին գրող նահատակ Վահան Գողթնեցու քույր Խոսրովադուխտը, որը իր եղբոր վրա մի ողբ է գրել: Վահան Գողթնեցու նահատակության առիթով մի ողբ է գրել նաև Արտավազդ վարդապետը: Վերոհիշյալ գրվածներով հեղինակները նպատակ են ունեցել կազմակերպել ժողովրդին՝ ընդդեմ արաբ նվաճողների ու շահագործողների, մանավանդ որ այդ ողբերն ու վարքագրություններ մտնում էին ժողովածուների մեջ և կարդացվում էին եկեղեցիներում: Սմբատ սպարապետի (Խաստովանողի) որդի Մուշեղը Քթիշ ամրոցի պարիսպների մոտ Բուղայի արաբական զորքերի դեմ հայ ռազմիկների մղած հերոսական պայքարի ազդեցության տակ գրել է ոտանավորներ՝ հայ մարտիկներին ոգևորելու համար:

10-րդ դարում կրոնա-դավանաբանական գործերի բնագավառում աչքի են ընկնում Նարեկա դպրոցի երեք խոշոր ներկայացուցիչներ: Դրանցից մեկը վանքի ու դպրոցի ղեկավարներից Անանիա Նարեկացին է, որը թուղթ է գրել Բոնդրակեցիների դեմ. մյուսը Խոսրով Անձևացին է, Գրիգոր Նարեկացու հայրը, որը և Անձևյաց գավառի եպիսկոպոսն էր: Սա գրել է ժամագրքի և պատարագի մեկնաբանություններ ժողովրդին ավելի պարզ ու հասկանալի դարձնելու համար: Երրորդը Գրիգոր Նարեկացին է, որ հայտնի է իր «Երգ-երգոց»-ի մեկնությամբ և Բոնդրակեցիների դեմ գրած թղթով: Վերոհիշյալ երեք վանականներն էլ, մեր կարծիքով, հարել են Բոնդրակեցիներին, այդ պատճառով թողության թղթեր են գրել նրանց դեմ:

Կրոնա-դավանաբանական-վարդապետական գրվածների մեջ իրենց ուրույն տեղն են գրավում 11-րդ դարի Սանահինի միաբաններից Անանիա Սանահեցու գործերը: Ամենակարևորը, դա Պետրոս Գետադարձ կաթողիկոսի հրամանով գրված «Բան հակաճառութեան ընդդեմ երկաբնակաց» գործն է, որով հեղինակը հերքում է Քաղկեդոնի ժողովի որոշումները և փրկչի մարմնի ապականիչ համարողների ուսմունքն ու պաշտպանում է հայ եկեղեցու իրավունքները մի այնպիսի ժամանակ, երբ Բյուզանդիան Անին գրավելուց հետո հայ եկեղեցու և հայերի դեմ նոր հալածանքներ էր սկսել:

Կրոնա-դավանաբանական փիլիսոփայական գրականությունը թեև հիմնականում հետապնդում էր հայ եկեղեցու իրավունքների պաշտպանությունը և իր սխոլաստիկ-սնոտիապաշտական ու միստիկ իդեոլոգիայով զենք էր տիրող դասակարգի ձեռքին՝ աշխատավորական մասսային շահագործելու, տգիտության և խավարի մեջ պահելու համար, բայց և այնպես ունի իր արժեքը: Այդ գրականությունը պատմական տեղեկություններ է տալիս տարբեր շրջանների մասին, օժանդակում է պատմական երևույթներն ու խնդիրները ավելի ճիշտ լուսաբանելուն և ցույց է տալիս տվյալ ժամանակաշրջանի հայ հասարակական մտքի զարգացումը: Վարքագրությունը նպաստում էր հայրենասիրական զգացմունքների ուժեղացմանը: Ընդհանուր առմամբ կրոնա-դավանաբանական գրականությունը իր ժամանակի համար ունեցել է նաև քաղաքական նշանակություն, պաշտպանելով հայ եկեղեցու ինքնուրույնությունը Բյուզանդիայի միաձուլող ոտնձգություններից:

Գեղարվեստական գրականություն.— այս շրջանի գրականության մեջ կարևոր տեղ է գրավում գեղարվեստական

[1] Օրբելյան, էջ 138:

գրականությունը, հանձինս Գրիգոր Նարեկացու։ Մինչ այդ գեղարվեստական գրականությունը հանդես չէր գալիս որպես ինքնուրույն գրական ժանր, այն միացած էր պատմագրության հետ և կամ թե դրսևորվում էր կրոնական շարականների ձևով։ Սակայն 10—11-րդ դարերում գեղարվեստական գրականությունը բաժանվում է պատմագրությունից ու կրոնական գործերից և դառնում է ինքնուրույն ճյուղ, հատկապես լիրիկան։ Վանական կյանքը Հայաստանում ծաղկում է 10-րդ դարում։ Քրիստոնեական իդեոլոգիայի համաձայն մարդու իսկական աշխարհը, դա հանդերձյալ, հավիտենական կյանքն էր մահվանից հետո, հետևաբար այս իրական աշխարհում մարմինը պետք է տանջանքի ենթարկել, որպեսզի հոգին գնա արքայություն։ Այստեղ էլ պարզ է, մարդը ինչքան որ իրեն տանջեր քաղցից, ծարավից և ապաշխարեր, այնքան լավ էր հոգու համար։ Մարմնի և հոգու կռիվը, մարմնի ոչնչացումը հոգու համար իրենց արտահայտությունն են գտնում վանական ճգնավորական խստակյաց կյանքի մեջ[1]։

Վանական կյանքի ծաղկումն իր հերթին կապված էր վանքերի շինության հետ։ Բացի հին վանքերից և նրանց վերանորոգումից, ինչպես ասված է վերևում, կառուցվում են մի շարք նոր վանքեր ու սրբավայրեր, որոնք դառնում են եղբայրությունների կամ միաբանությունների կենտրոններ։ Այսպես, Աղթամարի ս. Խաչ վանքը Աղթամար կղզում, Վարագա վանքը, Զորովանքը (Վանի մոտ), Նարեկա վանքը Ռշտունիքում, Ապարանից վանքը Մոկսում, Խլաձորի վանքը Դերջանում, Հնձուց վանքը Կարինում, Կամրջաձորի վանքը Արշարունիքում, Հռոմոսի վանքը և Դպրեվանքը Շիրակում, Մարմաշենի վանքը Կումայրիի մոտ, Մովսեսի վանքը Կարբերդում, Սանահին-Հաղպատը Գուգարքում, Սևանի վանքը Սևանա կղզում, Շողաթափի վանքը Դեղամա գավառում, Յախացաքարի վանքը Վայոց Ձորում և այլն։ Ահա այս վայրերումն էր տեղի ունենում վանական կյանքը, ինչպես Ասողիկն է ասում. «Յայսմ ժամանակի ծաղկեալ պայծառանայր կարգ կրօնաւորական հանդիսից յաշխարհիս Հայոց։ Եւ ի յոլով տեղիս շինեցան եղբայրանոցք, և ժողովեցան միաբանակեացք...»[1]։ («Այն ժամանակ Հայաստանում ծաղկել ու պայծառացել էին կրոնական կարգն ու հանդեսները։ Եվ շատ դեպքերում շինեցին եղբայրանոցներ և հավաքվեցին միաբաններ»)։ Իսկ նույն պատմիչը Սանահին-Հաղպատի մասին գրում է. «Յաւուրս սորա շինեցան կրօնաւորանոցք, ճգնավորականաց տեղիք Սեաւորդեաց աշխարհին, հաւասարակեացք, միաբանականք... որոնց երկոցուցն տեղեացն անուանք Հաղպատ և Սանահին հանդէպ միմեանց, միակրօնք ի տան Աստուծոյ՝ արանց շ-ոց»[2]։ («Սրա օրոք Սևորդաց աշխարհում շինեցին կրոնավորանոցներ, ճգնարաններ, որոնցից երկու տեղերի անուններով Հաղպատ և Սանահին շինված միմյանց հանդեպ, (ուր կային) վանականներ, միաբաններ ասածու տանը միակրոն կերպով թվով 500 մարդ»)։

Բացի այդ, մի շարք վանքեր են շինվում նաև Սյունիքում, որոնց մեջ գլխավորն է Տաթևի վանքը, որի մասին Ստ. Օրբելյանը գրում է. «...Երևելի էր ի մէջ ամենայնի ոչ միայն շինուածովք, այլև պայծառանայր քահանայական և կրօնաւորական դասուք ի չափ 500 եղբարց. լի էր և ծովամատոյց փիլիսոփայիւք երաժշտական երգոց, ճոխ էր և վարժարանն վարդապետական կրթութեամբ. նա և արհեստաւորք նկարչացն և գրողաց անհամեմատք»[3]։ Ահա այս վանական միջավայրում էր հանդես գալիս հայ խոշորագույն քնարերգու Գրիգոր Նարեկացին, որը գեղարվեստական ինքնուրույն ժանրի հիմքն է դնում։

Գրիգոր Նարեկացին ծնվել է մոտավորապես 940—949 թթ. ընթացքում և մահացել է 1003—1011 թթ. շրջանում[4]։ Նարեկացին շատ փոքր հասակից զրկվելով մորից, մեծացել ու կրթվել է Նարեկա վանքում, վանքի վանահայր Անանիա վարդապետի ձեռքի տակ, որը Նարեկացու հոր՝ Խոսրով Անձևացու եղբոր աղջկա որդին էր։ Գրիգոր Նարեկացին իր ժամանակի

[1] Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. Ա., էջ 512, Երևան, 1944։

[1] Ասողիկ, էջ 173։

[2] Նույնը, էջ 181։

[3] Օրբելյան, էջ 226։

[4] Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. Ա, էջ 518—519, Երևան, 1944։

այս գիտուն վանականի մոտ, ինչպես նաև ոչ պակաս գիտուն իր հոր միջոցով, վանքի դպրոցում ձեռք է բերում ժամանակի բարձր կրթություն և զբաղվում է գրական աշխատանքով։ Նրանից մեզ հասել են երեք տեսակի գործեր. 1) տաղեր և գանձեր (ոտանավորներ թվով 25), 2) զուտ կրոնական բնույթի գործեր՝ «Մեկնութիւն երգոց երգոյն», մեկնություններ, ներբողներ, ժուղթ ուղղված թոնդրակյանների դեմ և 3) «Մատեան ողբերգութեան» ամենամեծ երկը «Ի խորոց սրտի խօսք ընդ աստուծոյ» վերնագրով։

Գրիգոր Նարեկացու գրական գործունեությունը բաժանվում է երկու շրջանի։ Առաջին շրջանում նա զբել է աշխարհիկ բովանդակությամբ զանազան տեսակի ոտանավորներ, այսինքն՝ տաղեր ու գանձեր[1], իսկ երկրորդ շրջանում՝ «Մատեան ողբերգութեան» կամ ժողովրդական լեզվով ասած «Նարեկ» մեծ երկը։ Տաղերի ու գանձերի մեջ կրոնական վերնագրերի տակ նա հաճախ նկարագրել է աշխարհիկ կյանքը, երգել է գյուղացու աշխատանքը, բնությունը և սերը, գեղեցկությունը, արժեքավորում է իրական աշխարհը և բարձրացնում մարդուն։ Այսպես, օրինակ, հարության տաղի մեջ տալիս է ջրերի, բույսերի, լեռների, ծառերի ու ծաղիկների նկարագրությունը, վարդավառի տաղում երգում է բնությունը, վարդն ու շուշանը և աշխարհին կյանք տվող արեգակը, իսկ Տիրամոր կամ սուրբ Կույսին նվիրված տաղից պարզ երևում է, որ հեղինակն իր գաղափարը ծածկելու նպատակով ռեալ կնոջ գովքն անելիս, նրան ներկայացրել է Տիրամոր անվան տակ, բայց տաղի բովանդակությունից չի երևում, որ նա նկարագրում է վանքում կամ թե եկեղեցում կախված, դժգույն դեմքով, կմախքացած Մարիամին, այլ Նարեկա գյուղի կարմիր այտերով, հոլանի թևերով կնոջը։ Նույն ձևով է նկարագրում նաև գովքը և այլն։ Այսպիսով, Գրիգոր Նարեկացին առաջին անգամ կրոնական շարականների մեջ մտցնում է նոր մոտիվներ և աշխարհիկ բովանդակություն։ Այս բոլորը նորություններ էին գեղարվեստական գրականության մեջ։ Գրիգոր Նարեկացին իր տաղերով աշխատում է գեղարվեստական գրականությունը անջատել կրոնական ազդեցությունից և նրանով էլ սկզբնավորվում է գրականության աշխարհականացման պրոցեսը։

Գրիգոր Նարեկացու գրական գործունեության սկզբնական շրջանի վրա մեծ ազդեցություն են թողել քաղաքային կյանքի զարգացումը և թոնդրակեցիների շարժումները։ Անհավանական չի թվում մեզ, որ այս աշխարհիկ բովանդակություն ունեցող տաղերը գրված լինեն թոնդրակեցիների դեմոկրատական հայացքների ազդեցության ներքո։ Այս տաղերի մեջ զգացվում է վաղ վերածննդի սաղմերը, որոնց առաջին կրողը հանդիսացել է Նարեկացին։

«Մատեան ողբերգութեան» երկը, որ մի ընդարձակ պոեմ է, բաղկացած 95 գլխից, գրված է 1002—1004 թթ.։ Այդ երկը հագեցված է միստիցիզմով։ Հեղինակն իր այդ երկով հրաժարվում է աշխարհիկ վայելքներից, աշխատելով մարդու ուշադրությունը բևեռել դեպի երկնային «թագավորությունը», որպեսզի մարդը կարողանա աստծու ուշադրությունն իր վրա դարձնել։ «Մատեան ողբերգութեան» պոեմի լեզուն շատ ճոխ է ու հարուստ, պոեմն ունի նկարագրված հոյակապ պատկերներ և չափազանց բարձր արվեստ։ Նա իր այս պոեմով միաժամանակ շատ սուր կերպով քննադատում է իր ժամանակի հասարակության այլանդակ ու հոռի կողմերը, խարազանելով կաշառակեր դատավորներին, տոկոսով ապրող վաշխառուներին, ձրիակեր իշխաններին, ագահ հոգևորականներին, ինչպես նաև հրապարակի վրա դնելով մարդկանց այլանդակություններն ու թերություններ։ Գ. Նարեկացին հատկապես քննադատում, խարազանում ու մերժում է մարդասպանությունը, անբարոյականությունը, ստախոսությունը, քսությունը, ագահությունը, խավարամոլությունը, ագահությունը, շահամոլությունը, անմարդասիրությունը և այլն։ Հենց սա էլ կազմում է նրա պոեմի առավել կողմերից մեկը։ Գրիգոր Նարեկացին, որը հայ գեղարվեստական գրականության, հատկապես լիրիկայի հիմնադիրն է, իր այս պոեմով հանդիսանում է նաև իր ժամանակի համաշխարհային գրականության խոշորագույն ներկայացուցիչներից մեկը։

Բանահյուսություն.— Հայկական բանահյուսությունը շատ հարուստ է և սկիզբ է առել հին դարերից։ Ժողովրդական

[1] Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 464—482։

ստեղծագործությունը հետագայում էլ ավելի է զարգանում։ 10—11-րդ դարերում հայ ժողովուրդը ստեղծում է մի այնպիսի վեպ, որը համաշխարհային վիպական ստեղծագործության խոշորագույն գործերից մեկն է։ Դա «Սասնա Ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» վեպն է, էպոսը։

Այս վեպի պատմական դեպքերի առանցքը կազմել են 8—9-րդ դարերում արաբական խալիֆաթի դեմ բարձրացած ժողովրդական ապստամբությունները և առանձնապես Խութի ապստամբությունը Հովնանի գլխավորությամբ։ Վեպի հերոսների գործողությունների վայրը Հայաստանի լեռնոտ գավառներից Սասունն է։ «Սասնա Ծռեր» վեպը բաղկացած է չորս ճյուղից կամ սերնդից։ Վեպի առաջին ճյուղում պատմվում է տոհմապետ Սանասարի և նրա ծուռ եղբայր Բաղդասարի մասին։ Սրանք էլ կառուցում են իրենց անառիկ ամրոցը և անունը դնում «Սասուն», որ դառնում է արաբների դեմ ժողովրդի մղած պայքարի պատվարը։ Այստեղ են գալիս գյուղացիները թշնամիներից պաշտպանվելու համար։

Սանասարն ու Բաղդասարը, ըստ վեպի, հանդիսանում են Արծրունյաց Գագիկ Թագավորի դուստր Ծովինարի որդիները, որոնք ունեն ծովային ծագում, իրենց «Քուռկիկ Ջալալիով» ու «Ծուռ կնճակով»։ Սանասարի որդի Մհեր Մհերը, որը հանդիսանում է վեպի երկրորդ սերունդը, ժողովրդի համար լավագույն կյանք ստեղծելու նպատակով պայքար է մղել ամեն տեսակ թշնամիների ու գազանների դեմ։ Նրան առյուծի հետ մենամարտելու և բերնից երկու մասի ճեղքելու համար կոչել են «Առյուծ Մհեր»։ Վեպի գլխավոր հերոսը՝ երրորդ սերունդը հանդիսանում է Սանասարի թոռ, Առյուծ Մհերի որդի Դավիթը։ Սրա ժամանակ Սասունի վրա է գալիս Մսրա Մելիքը՝ արաբական խալիֆը, իր բազմահազար զորքով, որը, ինչպես ասում է էպոսը, թիվ ու համար չուներ։ Բայց Դավիթը դուրս է գալիս նրա դեմ, ջարդում է նրա զորքերին և սպանում նրան՝ Մսրա Մելիքին, իսկ զորքի մնացած մասին, որը բռնի կերպով էր բերել կռվի, ասում է՝

«Ամենիդ իրավունք կը տամ.
Ուր տեղն եկեր եք՝ ելեք, գնացեք ձեր տեղ,
Ելեք, գնացեք ու ձեր տները նստեք,

. . . . . .
Մեկ էլ չ'ելնեք ու գաք վեր Սասնա,
Մեկ էլ զենք առնեք մեր դեմ,
Թև որ դուք կռվի գաք վեր մեզ՝
Քառասուն գազ խոր հորում ըլնեք,
Թե ջաղացի ջոջ քարի տակ,
Տ'ելնեն ձեր դեմ Սասնա Դավիթ,
Տ'ելնեն ձեր դեմ Ծուր կնճակին»[1]։

Վեպի չորրորդ ճյուղում պատմվում է Դավթի որդի Պատիկ Մհերի մասին, որը երկրում եղած անարդարության համար մտնում է քարայր՝ ասելով՝ քանի աշխարհում չեն վերջացել բռնությունն ու չարությունը, չի ստեղծվել արդարություն, ինքը դուրս չի գա քարայրից։

Վեպը ստեղծել է բարձր իդեալականացած կերպարներ, որոնց մեջ ժողովուրդը դրսևորել է իր լավագույն իղձերն ու ձգտումները՝ քաջություն, խիզախություն, ազնվություն, անձնազոհություն, նվիրվածություն հայրենիքին, ժողովրդի բարօրության ու արդարության գործի համար պայքարելու պատրաստակամություն ու նվիրվածություն։ Վեպի մեջ գովաբանվում է հերոսությունը և երկրի սահմանների պաշտպանությունը օտարների հարձակումներից, ինչպես նաև սերը դեպի աշխատանքը։ «Սասնա Ծռեր» վեպը հագեցած է հումանիզմի և ինտերնացիոնալիզմի բարձր գաղափարներով։ Նրա մեջ ժողովուրդը դրել է հայրենասիրության ու հայրենիքի պաշտպանության վեհ գաղափարները։ Վեպի մեջ ժողովուրդը դրսևորել է իր դարավոր պայքարի փորձը և բողոքը ընդդեմ բռնության ու իր երազները լավագույն կյանքի մասին։

«Սասնա Ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» էպոսը, որը ձևավորվել է 10—11-րդ դարերում, ունի գեղարվեստական մեծ արժեք, իր ոճի պարզությամբ, պատկերավորությամբ, պատմական իրականությամբ և ռեալիստականությամբ։ 10—11-րդ դարերում հայ գրականության մեջ շատ ուժեղ էր կրոնական աշխարհայեցողությունը, որը քարոզում էր ժողովրդին համակերպվել եղած ծանր դրության հետ, այնինչ «Սասնա

[1] «Սասունցի Դավիթ»—Հայկական ժողովրդական էպոս, էջ 282, Երևան, 1939։

Մոևր» էպոսը, ընդհակառակը, պահանջում է պայքարել այդ ծանր դրությունը փոխելու և լավ կյանք ստեղծելու համար: Հայ ժողովուրդն իր այդ էպոսում արտահայտել է ազատագրական պայքարի մեծ ոգին, ջերմ հայրենասիրությունը, առելությունը դեպի կեղեքիչներն ու բռնակալները և իր ուժերի անպարտելիության գիտակցությունը: Էպոսը միաժամանակ խիստ ծաղրի է ենթարկում բռնակալներին, կեղեքողներին, վատերին ու թուլամորթներին, անկախ նրանց ազգային պատկանելիությունից: Այդ տեսակետից տիպիկ է Կոզբադինի ծաղրը: «Սասնա Մոևր» էպոսը աննման է: Նա ոգևորում է սովետական մարդկանց և դաստիարակում է մեր մատաղ սերնդին հայրենասիրական ոգով: Այդ է պատճառը, որ նա հասկանալի ու հարազատ է ոչ միայն հայ, այլև մյուս ժողովուրդների համար:

«Սասնա Մոևր» էպոսը մշակվել է հայ մի շարք անվանի գրողների կողմից և թարգմանվել է շատ լեզուներով: Էպոսի հավաքման ու մշակման գործում մեծ դեր է կատարել ակադ. Մ. Աբեղյանը:

Գրիգոր Մագիստրոսը և գիտության զարգացումը Հայաստանում

8—11-րդ դարերի ընթացքում պատմական, կրոնա-դավանաբանական և գեղարվեստական գրականությանը զուգընթաց, զարգացել է նաև գիտական միտքը և ստեղծվել որոշ գիտական գրականություն: Անանիա Շիրակացուց հետո շարունակել է զարգանալ աստղաբաշխությունը, մաթեմատիկան, երկրաչափությունը, բժշկությունը, աշխարհագրությունը, ալքիմիան, ինչպես նաև փիլիսոփայությունը: Հովհան Օձնեցուց հետո փիլիսոփայական մտքի ամենախոշոր ներկայացուցիչն այս շրջանում հանդիսանում է Գրիգոր Պահլավունի Բջնեցի Մագիստրոսը: Սակայն մինչև Գրիգոր Մագիստրոսը, հանդես են եկել գիտության մի շարք աչքի ընկնող ներկայացուցիչներ՝ Հովհան Օձնեցին, Ստեփանոս Սյունեցին, Խոսրով Անձևացին, Անանիա Նարեկացին, Հովհաննես Կոգեռն, Սարգիս վարդապետը, Անանիա Սանահնեցին: Գիտությամբ և գրականությամբ են զբաղվել նաև Կարսի Գագիկ թագավորը և Անիի Գագիկ Երկրորդ թագավորը, որպես իմաստասերներ:

Սրանք միաժամանակ հովանավորել են գիտնականներին ու դպրոցներին և օգնել նրանց նյութական միջոցներով:

8—11-րդ դարերում գիտական ինքնուրույն գրականությանը զուգընթաց կատարվել են նաև մի շարք թարգմանություններ: Թարգմանությունների մեջ կարևոր տեղ են բռնում Ստեփանոս Սյունեցու թարգմանությունները, հատկապես նշանավոր է հույն փիլիսոփա Նեմեսիոսի մարդաբանությանը վերաբերող աշխատության թարգմանությունը: Թարգմանություններով հայտնի են նաև բժիշկ Հովհաննեսը և ուրիշները:

Այս շրջանի հայ հասարակական-քաղաքական և գիտական ու գրական գործունեությամբ բացառիկ տեղ է գրավում Գրիգոր Մագիստրոս Պահլավունին կամ Բջնեցին, որը Վասակ Պահլավունու որդին էր: Նա ծնվել է 990 թ. և մահացել 1059 թ. մոտ 69 տարեկան հասակում: Նա ապրել, մեծացել և կրթվել է Անիում, ուր Պահլավունիներն ունեցել են իրենց պալատը: Վայելել է իր հորեղբայր սպարապետ Վահրամ Պահլավունու համակրանքն ու հովանավորությունը: Այս իշխանն ապրելով Անիի նման մի խոշոր կուլտուրական կենտրոնում, մեծ սեր է ունեցել դեպի գիտությունն ու գրականությունը: Փոքր հասակից ծանոթացել է ս. Գրքին և եկեղեցական այլ գրվածքներին, միաժամանակ զբաղվել է արտաքին գիտություններով, հատկապես փիլիսոփայությամբ: Գրիգոր Մագիստրոսը, որը միաժամանակ աչքի ընկնող զորավար էր, իր հոր նման կառուցել է տվել վանքեր ու եկեղեցիներ՝ Բջնիում, Կեչառիսում (Մազկաձորում), Տարոնում և ուրիշ վայրերում: Մենք արդեն նշել ենք, որ այս իշխանը կանգնում է հայրենասիրական հոսանքի կողմը և Գագիկին հռչակում են թագավոր: Այնուհետև 1042—1043 թթ. իր զորքերով օգնում է Գագիկ Երկրորդին սելջուկ-թուրքերի դեմ մղած կռիվների ժամանակ, իսկ 1045 թ. Տարոնից մեկնում է Պոլիս՝ Գագիկ Երկրորդին բերելու և հայ-բյուզանդական կոնֆլիկտը կարգավորելու համար, չնայած, որ ինքը թշնամացած էր թագավորի հետ, բայց նա հայրենասիրական իր պարտքն էր կատարում անփորձ թագավորին դուրս բերելու ծուղակից: Սակայն, ինչպես նշել ենք, ինքն էլ նույնպես ընկնում է ծուղակը:

Մենք արդեն նշել ենք, որ բոլոր ուսյալ աշխարհականների մեջ գիտությամբ փայլում էր Պահլավունի այս իշխանը։ Նա մի կողմից ուրիշներին էր հորդորում, որ բացեն դպրոցներ ու զբաղվեն գիտությամբ, իսկ մյուս կողմից ինքն էր զբաղվում գիտությամբ ու դպրոցներ բաց անելով։ Գրիգոր Մագիստրոսը նախ ուսուցիչ-դաստիարակ է եղել Բագրատունիների պալատում, ապա իր կալվածում Բջնի-Կեչառիսում (Ծաղկաձորում), հետո էլ Տարոնի ս. Կարապետի վանքում բացել է բարձրագույն դպրոցներ և կարդացել է դասախոսություններ։ Նա իր № 45 թղթում[1] մանրամասն տալիս է այն առարկաների ցանկը, որոնք պիտի դասավանդվեն դպրոցներում, ինչպես ցույց ենք տվել դպրոցների մասին շարադրելիս։ Իսկ ծերության շրջանում Միջագետքում պաշտոնավարելիս Գրիգոր Մագիստրոսը զբաղվել է նաև թարգմանություններով։ Թարգմանել է առանձնապես հին հունական փիլիսոփաների գործերը։ Նա իր թարգմանությունների մասին Սարգիս վարդապետին ուղղած նամակում գրում է.

«...Ոչ եմք երբէք դադարեալ ի թարգմանութենէ աս. բազում մատեանս զորս ոչ եմք գտեալ ի մեր լեզուս՝ ղերկուս մատեանսն Պղատոնի, զՏիմէոսի տրամաբանութեանն և զՓեդովնի... և զայլս բազումս յիմաստասիրացն... և զերկրաչափական զԵվկլիդիոսին սկսայ թարգմանել... ոչ դանդաղեցայց։ Եւ կարօտիմք քեզ մերձ էլոյ մեզ օգնականութեան այսպիսում իրողութեանց»[2]։

(«Երբեք չենք դադարել թարգմանելու շատ գրքեր, որոնք չենք գտել մեր լեզվով, օրինակ, Պլատոնի երկու դրքերը, Տիմեոսի տրամաբանությունը և Փեդովնի... և փիլիսոփաների շատ գրքերը... Եվկլիդոսի երկրաչափությունը սկսեցի թարգմանել... չեմ դանդաղի։ Եվ կարիք ենք զգում, որ դու այսպիսի գործերում մեզ օգնության հասնես»)։

Այսպես, հայերեն է թարգմանել Պլատոնի, Արիստոտելի, Փիլոնի աշխատություններից շատերը, Ոլոմպիանոսի «Առակները», Եվկլիդոսի «Երկրաչափությունը» և այլն։

---

[1] Թղթերը, էջ 105։

[2] Նույնը, էջ 66։

Ճիշտ է, Գրիգոր Մագիստրոսը լինելով իր ժամանակի հմուտ աստվածաբան և կրոնամոլ, բայց միաժամանակ հանդիսացել է իր ժամանակի լուսավոր անձնավորություններից մեկը։ Նա չի բավարարվել միայն կրոնական խնդիրներով, այլ վերանորոգել և զարկ է տվել հայերի մեջ հին հունական գիտությունն ու գրականությունը՝ բժշկություն, մաթեմատիկա, երկրաչափություն, և առանձնապես փիլիսոփայության տարածելուն։ 1045 թ. Կ. Պոլսում եղած ժամանակ վեճի է բռնվում արաբական գիտնական-բանաստեղծ Մամուլեի հետ ղուրանի և ս. Գրքի խնդիրների շուրջը, չորս օրվա ընթացքում ս. Գիրքը վերածվում է 1000 տողից բաղկացած ոտանավորի, որը կոչվում է «Հազարատողեան»։

Բացի թարգմանություններից, Գրիգոր Մագիստրոսի ինքնուրույն գործերից մեզ են հասել «Նամականին» կամ «Թուղթք»՝ 80-ի սահմաններում, «Տաղեր», «Դանձեր», «Մեկնութիւն քերականի» և այլն։ Գիտական մտքի տեսակետից կարևոր են «Թղթերը», որոնք ցույց են տալիս նրա հմտությունը աստվածաբանական փիլիսոփայության մեջ։ Լեզուն խրթին է և նույնիսկ կան անհասկանալի գործեր, ինչպես, օրինակ, հույն Կիրակոս դպիրին գրած «Դամագատական»-ը և այլն։ Նա աշխատում է հունական փիլիսոփայությունը հաշտեցնել քրիստոնեական ուսմունքի հետ և վատ է տրամադրվել աշխատավոր ժողովրդի նկատմամբ, համարելով նրան «գռեհիկներ»։ Գրիգոր Մագիստրոսը հատկապես մեծ ուշադրություն է դարձրել 7-րդ դարի Անանիա Շիրակացու գործերի ուսումնասիրության ու նրա գաղափարների տարածման վրա։ Նա մեծ դեր է խաղացել Հայաստանում աշխարհիկ գիտությունների ուսումնասիրության ու զարգացման գործում։

10—11-րդ դարերում հայ փիլիսոփայական միտքը զարգանում էր հակադիր երկու ուղղություններով, մի կողմում տիրող դասակարգի գաղափարախոսությունն էր, որը աշխատում էր հիմնավորել հայ եկեղեցու սկզբունքների ու դավանանքի և շահագործող դասակարգի արատությունների ճշտությունը, իսկ մյուս կողմում պաշտոնական եկեղեցու դավանանքի և ֆեոդալական դասային արատությունների դեմ դուրս եկող դեմոկրատական մտքի հոսանքի զարգացու-

մըն էր, որից գրավոր մեզ ոչինչ չի հասել։ Բայց նրա հակառակորդների տվյալներից երևում է, որ այդ հոսանքը հետևվել է մատերիալիստական փիլիսոփայության ուղղությանը, որի կրողի՝ Սմբատ Զարեհավանցու դեմ այնքան սուր է ճառում Մագիստրոսը։ Այսպիսով, Գրիգոր Մագիստրոսը լինելով փիլիսոփա, թեև հակադրվել է իր ժամանակի հայ մատերիալիստներին, բայց և այնպես զարկ է տվել արտաքին գիտությունների, որոնց միջոցով նախապայմաններ են ստեղծվում վաղ վերածննդի համար, որովհետև վերոհիշյալ դարաշրջանում հետաքրքրություն է սկսվում դեպի բնական գիտությունները, դեպի Անանիա Շիրակացու և հին հունական կրողների գործերը։ Սկիզբ է դրվում դպրոցների, գիտության, գրականության և արվեստի աշխարհականացման աստիճանական պրոցեսին, մարդիկ սկսում են դրսևորել իրենց մտքերը դեպի հասարակական-սոցիալական կյանքը, սերն ու բնությունը, մերժում են ճգնավորությունը, անապատական կյանքը, ոտնահարելով եկեղեցու քարացած դոգմաները։ Այսպիսով, Հայաստանում վաղ վերածննդի սաղմերը Եվրոպայից 3 դար առաջ են սկիզբ առնում։

2. ԱՐՎԵՍՏ

Ճարտարապետություն.— *8—11-րդ դարերի կուլտուրայի կարևոր ճյուղերից մեկն էլ ճարտարապետական արվեստն է*[1], որը 7-րդ դարի վերջին տասնամյակից սկսած մինչև 9-րդ դարի երկրորդ կեսը, մոտ 170 տարի, արաբական խալիֆաթի ծանր լծի և կեղեքումների հետևանքով գտնվում էր իր անկման վիճակում։ Ճարտարապետական արվեստի զարգացումը Հայաստանում սկսվում է 9-րդ դարի երկրորդ կեսից, շնորհիվ այն հանգամանքի, որ այդ ժամանակաշրջանից երկիրը մի կողմից թոթափում է արաբական ծանր լուծը և մյուս կողմից

[1] Այս պարագրաֆը շարադրելիս օգտվել ենք Ճարտարապետ Թ. Թորամանյանի «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության» աշխատությունից, հատ. Ա և Բ, 1942, 1948, Երևան։

տնտեսական կյանքի զարգացման հետևանքով նյութական միջոցներ են կուտակվում քաղաքներում և դղյակներում։ Այդ կուտակումների շնորհիվ կառուցվում են նոր շենքեր և զարգանում է ճարտարապետական արվեստը։ 9-րդ դարի երկրորդ կեսից սկսած հայկական ճարտարապետությունը նոր ուժով և արագ թափով զարգանում է 10—11-րդ դարերում։ Երևան են գալիս մեկը մյուսին գերազանցող ճարտարապետական հոյակապ կոթողներ։ Ինչպես նշել ենք վերևում, այս շրջանին են պատկանում Սևանի, Տաթևի (կառուցել են տվել Սյունյաց իշխանները), Սանահինի, Հաղպատի (շինել է տվել Աշոտ Երրորդի կին Խոսրովանուշ թագուհին), Մարմաշենի, Բջնիի, Ծաղկաձորի (շինել են տվել Պահլավունիները), Արգինայի, Բագնայրի, Հոռոմոսի և այլն վանքերն ու եկեղեցիները։ Կարևոր են Կարսի եկեղեցին, բերդն ու պալատը։ Սակայն այս շրջանի ճարտարապետական արվեստի օջախները հանդիսացել են Անին և Աղթամարը։

10—11-րդ դարերում Անիում և Աղթամարում ստեղծված ճարտարապետական ոճերն ու նորությունները տարածվում են նաև Հայաստանի մյուս մասերում։ Բացի եկեղեցիներից ու վանքերից, կառուցված մյուս շենքերից, աչքի են ընկնում պալատները, դղյակները, ամրոցները, բերդերը, կամուրջները, բաղնիքները, պարիսպները, աշտարակները, ստորերկրյա շենքերը և փակ շուկաները։ Անին 80 տարվա ընթացքում դառնում է ճարտարապետական արվեստի խոշոր կենտրոն։

Անիի հուշարձաններից մեկը, որպես ճարտարապետության հոյակապ կոթող, հանդիսանում է Գագկաշեն եկեղեցին, որը շինել է տվել Գագիկ Առաջինը 1001 թ. և նրա անունով էլ կոչվել է «Գագկաշեն»։ Այս եկեղեցին կառուցվել է Զվարթնոցի ձևով։ Այդ հոյակապ շինության պատուհանների լայն շրջանակների քանդակները ցույց են տալիս արվեստագետի մեծ հմտություն։ Շրջանակներից յուրաքանչյուրը քանդակված է առանձին ձևով, մեկը մյուսից տարբեր։ Այդ շինությունը Անիի հոյակապ հուշարձաններից մեկն է։ Ուշագրավ են նաև Առաքելոց եկեղեցին իր հինգ գմբեթներով ու հոյակապ քանդակներով, Կաթողիկե մայր եկեղեցին իր հոյակապ դրսնով, Ապուղամրենց ս. Գրիգորի եկեղեցին։ Իր ճարտարապե-

տական յուրահատուկ ձևով աչքի է ընկնում Փրկիչ եկեղեցին։

Յուրահատուկ ճարտարապետական արվեստի նմուշ է Հռիփսիանում պարիսպներից դուրս գտնվող, այսպես կոչված Հովվի եկեղեցին (նախընդ ժամը)։ Սա եռահարկ մի մատուռ է, արտաքուստ զարդարված որմնասյուներով, կամարներով և խորշերով։ Հատակագիծը աստղի նման է։ Այս եկեղեցին տեսնողի վրա մեծ տպավորություն է թողնում։ Հոյակապ է նաև Կաթուղիկե եկեղեցին իր գեղաքանդակ դռնով։

Անիի ճարտարապետական հուշարձանների զարդը հանդիսանում է Բագրատունիների պալատը, կառուցված Միջնաբերդում։ Այս պալատն ունեցել է բազմաթիվ սենյակներ և մի շարք ոսկեզօծ դահլիճներ ու գեղաքանդակ սրահներ։ Պալատը բռնել է 3500 քառակուսի մետր տարածություն, ունեցել է նաև իր բաղնիքը երկու բաժանմունքով։ Իր քանդակներով, որմնասյուներով պալատը ճարտարապետական արվեստի մեջ մեծ արժեք է ներկայացնում։ Հետաքրքիր է նաև պալատի դուռը, որը շինվել է մի ամբողջական քարից։

Բացի վերոհիշյալ շենքերից, ճարտարապետական մեծ արժեք ունեն Անիի պարիսպները (2500 մետր երկարությամբ), իրենց բազմաթիվ աշտարակներով և Ախուրյան գետի վրա կառուցված կամարակապ ու հոյակապ կամուրջներով, որոնց կամարներն ունեցել են 25—30 մետր թռիչք։ Այս հուշարձանների մեծագույն մասը կառուցվել են Աշոտ Երրորդի (953—977), Սմբատ Երկրորդի (977—990) և Գագիկ Առաջինի (990—1020) ժամանակներում, իսկ ճարտարապետը եղել է Տրդատը, որը 989 թ. շինել է երկրաշարժից քանդված Պոլսի Այա-Սոֆիա եկեղեցու գմբեթը, որը շենքի հետ միասին մի եզակի կոթող է ճարտարապետության արվեստի պատմության մեջ և մինչև այժմ էլ կանգուն է։

Ճարտարապետական բարձր արվեստով են կառուցվել նաև Վասպուրականի հուշարձանները, առանձնապես աչքի են ընկնում Աղթամարի ս. Խաչ եկեղեցին և Գագիկ Արծրունու պալատը, որի մասին մեծ հիացմունքով է խոսում ժամանակակից պատմիչ Թովմա Արծրունին։ Գագիկ Արծրունու պալատի դահլիճը, Թովմայի ասելով, ունեցել է 40 կանգուն բարձրություն, քառասուն կանգուն երկարություն և քառասուն կան-

գուն լայնություն։ Շինության կառուցման վրա գործադրվել է 200 հազար լիտր երկաթ։ Երկաթի այդքան գործածությունը ցույց է տալիս, որ շենքը կառուցվել է երկաթի ամուր կապաններով։ Պալատը թե՛ դրսից, և թե՛ ներսից զարդարված է եղել նկարներով ու քանդակներով, որմնանկարներով (ֆրեսկոներով) և ռելեֆ փորագրություններով։ Պալատի դահլիճի մասին հետաքրքիր տեղեկություն է հաղորդում ժամանակակից պատմիչ Թովմա Արծրունին։

«Եւ շինուած տաճարին ի հիմանց անտի մինչև զգլուխ նորին ի թռիչս կազմեալ՝ առանց սեան ունի զհաստատութիւն. և է որ արդարև արժանի զարմանալոյ ի վեր քան զմիտս։ Ունի և խորանս կամարակից և անկիւնս և շրջապատս գեղապաճոյճս, անթիւ մատաց և անզննելի աչաց. ունի և գոմբէթս երկնահարթս ոսկեզարդս և լուսաճաճանչս, յոր թէ նայել ոք կամեցի՝ իբր թագաւորի իմն պատիւ առնելով՝ նախ ի բաց առցէ զխոյր գլխոյն, և ապա տանջեալ զպարանոցն հաղիւ թէ նշմարել կարիցէ զպանազան դեղոցն կերպագրութիւնս։ Վասընդի են ի նմա ոսկեզարդ գահոյք, յոյս բազմեալ երևի արքայ նազելի ճոխութեամբ, շուրջ զիւրեաւ ունելով պատանեակս լուսատեսակս, սպասաւորս ուրախութեան, ընդնմին և դասս դուսանաց և խաղս աղջկանց զարմանալոյ արժանիս. անդէն և սուսերամերկաց հոյլք և ըմբշամարտաց պատերազմունք, անդ և դասք առիւծուց՝ այլոց գազանաց. և անդ երամք հաւուց զարդարեալք ի պէսպէս պաճուճանս...»[1]։

(«Շատ զարմանալի է տաճարի հիմքից հետո միաձև կատարն առանց սյունի բարձրանալը։ Ունի կամարակից խորաններ, անկյուններ և գեղապաճույճ շրջապատներ, որոնց ոչ հաշիվ կարելի է գտնել և ոչ էլ նայելով ամբողջ պատկերել։ Լուսաճաճանչ ոսկեզեն երկնահատ մի գմբեթ ունի, որին նայելու համար թագավորին պատիվ տալու նման, նախ պետք է գլխարկը հանել և ապա պարանոցը տանջելով հազիվհազ կարենալ տեսնել գունազարդ նկարներ։

Այնտեղ կան ոսկեզարդ գահեր, վրան բազմած թագավոր՝ շրջապատված լուսապսակ պատանիներով, սրանց հետ նաև նվագածուների խմբեր և աղջիկների հիանալի պարեր։ Սու-

[1] Թովմա, էջ 481—482։

սերամերկների բազմությունն և ըմբիշների կռիվներ, առյուծների և ուրիշ գազանների խմբեր և գույնզգույն պաճուճանքներով զարդարված թռչունների երամներ»):

Պալատից ետ չի մնում նաև Աղթամարի ս. Խաչ եկեղեցին իր բարելեֆներով, քանդակներով, որմնասյուներով: Այն իր հոյակապությամբ այցելուների վրա թողել է և թողնում է մեծ տպավորություն: Այս շինությունների կառուցող ճարտարապետ-վարպետը եղել է Մանվելը՝ Տրդատի ուսուցիչը: Իրենց ճարտարապետական կառուցումներով ետ չեն մնում նաև Նարեկա, Վարագա և Տարոնի վանքերը, նրանց կից կառուցված պալատներն ու բնակելի շենքերը:

Այս շրջանի վանքերի և եկեղեցիների շինությունները կրում են կոմպլեքսային բնույթ, որովհետև վանքերի ու եկեղեցիների շուրջը շինվում են նաև դպրոցներ, գրադարաններ, արհեստանոցներ, շտեմարաններ և բնակելի շենքեր: Ճիշտ է, այդ երևույթը սկիզբ է առել 7-րդ դարում, բայց հատուկ է այս դարաշրջանին:

Վերոհիշյալ հուշարձաններն իրենց վրա կրել են ֆեոդալական դասակարգի իդեոլոգիայի խիստ ազդեցությունը: Այդ շենքերն ունեցել են երկնասլաց դիրք, որը պատկերել է ճգնավորական կյանքի և երկնային կյանքի հասկացողությունը: Վանքերն ու եկեղեցիները հանդիսանում էին քարոզչության վայրեր, որտեղ փառաբանվում էին թագավորների և իշխանների տիրապետությունն ու շահագործման իրավունքի հավերժացումը գյուղացիների վրա:

Սակայն բացի հոգևոր շենքերից և թագավորական-իշխանական պալատ դղյակներից, քաղաքներում կառուցվում են նաև քաղաքացիական շենքեր, որոնք իրենց ճարտարապետական արվեստով աշխարհիկ բնույթ են կրել: Բայց աշխարհիկ այդ արվեստը տակավին բնորոշը չէր այս շրջանի ճարտարապետական արվեստի մեջ: Քաղաքացիական շենքերի մեջ կարևոր և առաջնակարգ տեղ են գրավել բաղնիսները, հիվանդանոցները, իջևան-հյուրանոցները, դպրոցները, գրադարանները, պահեստ-շտեմարանները և հարուստ վաճառականների բնակելի տները: Այդպիսով, թեև թույլ, բայց և այնպես 10—11-րդ դարերում սկսում է զարգանալ քաղաքաշինարարությունը, այսինքն քաղաքացիական ճարտարապետությունը: Այդ զարգացումն ավելի մեծ ծավալ է ստանում Վասպուրականում և Շիրակ-Վանանդում:

Ըստ ճարտարապետ Թորոս Թորամանյանի, հայկական ճարտարապետության երրորդ վերածնունդը տեղի է ունեցել 9—11-րդ դարերում Շիրակում, Վասպուրականում, Սյունիքում և ամբողջ Հայաստանում: Այս շրջանի ճարտարապետության բնորոշ հատկանիշները կազմում են շենքերի արտաքին պատերի աղեղներով ու պսակված որմնասյուներով գեղեցիկ քանդակազարդությունը, սյուների երկարությունը, իր գնդաձև խարխով ու խոյակներով, լուսամուտների՝ ավելի նեղ ու բարձր քանդակազարդերը, շենքերի հոանկյունի խորշերը, պատերի ավելի բարակ (70—80 սանտիմետր), անհամաչափ, զանազան գույներ ունեցող քարերով շարվածքը, քարե տալերով շենքերի կտուրների ծածկվելու բնույթը և աղեղային ոճի տիրապետումը, որը որոշ ուսումնասիրողներ համարում են գոթական, այնինչ հայերի մոտ այդ ոճը հանդես է եկել 7-րդ դարում և տիրապետող է դարձել 10—11-րդ դարերում՝ գոթական ճարտարապետությունից 500 տարի առաջ: Գմբեթաշինարարությունը, որը ինքնուրույն հայկական արվեստ է, հասնում է իր կատարելագործությանը: Այս հոյակապ հուշարձանների կառուցման հաջողությունը կապված է նաև շինությունների՝ քարի և կրի հետ, որոնցով շատ հարուստ է Հայաստանը, և հայերը քարի ու կրի գործածությունը ժառանգել են իրենց նախորդ՝ ուրարտացիներից:

Հայ և վրաց ժողովուրդները, որոնք թվով մեծ չեն եղել, բայց միջնադարյան խավարում բորբոքում էին իրենց քաղաքակրթության լուսավոր ջահը, կառուցում էին գեղարվեստական անմահ կոթողներ ու պայքարում տգիտության և խավարի դեմ: Բյուզանդիան, որը բաղկացած էր 64 նահանգից—թեմից, մարդկությանը տվել է միայն Այա-Սոֆիան, իսկ Հայաստանը և նրա հարևան երկիր Վրաստանը, որոնցից ամեն մեկը Բյուզանդիայի նահանգներից մեկի չափ հազիվ լիներին, մարդկությանը տվել են ոչ պակաս Այա-Սոֆիաներ: Բյուզանդական ճարտարապետությունը հետևանք է Արևմուտքի և Արևելքի ճարտարապետական արվեստների փոխադարձ ներ-

թափանցման, որի մեջ մեծ դեր են խաղացել նաև հայերը: Ուստի այդ արվեստը չէր կարող իր լուրջ ազդեցությունը թողնել հայկական ճարտարապետական արվեստի վրա: Արաբական արվեստի ազդեցությունը նույնպես թույլ է եղել, չնայած նրա երկարամյա տիրապետությանը, ընդհակառակը, նկատում ենք, որ հայկական պայտաձև աղեղները և կամարները, որոնք հայ արվեստի պարծանքներն են, ազդել են արաբական ճարտարապետության վրա:

Հայկական ճարտարապետական արվեստը,— ասում է Թ. Թորամանյանը,— չընթացավ Արևմուտքի ուղիով, այլ գնաց ավելի շուտ Արևելքի շավիղով: Նա ընդունեց միայն վերջինի պարզությունը և արտաքին վեհությունը, բայց մերժեց նրա ահեղատեսիլ ոճը և արևմուտքի շռայլ ճոխությունը: Բայց ստեղծեց անհամաչափ դասավորությամբ, ուղիղ ու կոր գծերով ներդաշնակ, միմյանց մեջ ձուլելու բարձր արվեստով, պարզ ու հաստատուն, բազմադարյան կյանք ունեցող հուշարձաններ:

9—11-րդ դարերի ճարտարապետությունը շարունակությունն ու զարգացումն էր կազմում 5—7-րդ դարերի հայկական ճարտարապետական արվեստի, մի ճարտարապետություն, որն իր ինքնուրույնությամբ արժանի տեղ է գրավում համաշխարհային ճարտարապետության արվեստի պատմության մեջ: Սակայն հայկական այդ ծաղկող ճարտարապետությունը չէր կարող կղզիանալ և իր ազդեցությունը չթողնել հարևան երկրների ճարտարապետական արվեստի վրա: Իրոք, 10—11-րդ դարերում հայկական ճարտարապետական արվեստը դուրս է գալիս երկրի սահմաններից և իր ազդեցությունն է թողնում ոչ միայն արաբա-բյուզանդական աշխարհի վրա, այլև հասնում է հեռավոր Եվրոպա և օժանդակում գոթական ճարտարապետության ծննդին: Այսպիսին է հայկական ճարտարապետության նշանակությունը ընդհանուր ճարտարապետության պատմության համար:

Քանդակագործություն, նկարչություն, թատրոն և երաժշտություն

9—11-րդ դարերի հայկական կուլտուրայի մեջ աչքի ընկնող դեր է խաղացել քանդակագործական, նկարչական, թատերական և երաժշտական արվեստը:

Քանդակագործությունը գերազանցապես կապված է եղել ճարտարապետական արվեստի զարգացման հետ: Վերևում հիշատակված շենքերի մեծագույն մասն ունեցել է քանդակներ և բարելիեֆներ թե՛ ներսից և թե՛ դրսից, որոնք մի շարք հուշարձանների վրա պահպանվել են մինչև այսօր և իրենց ներքուստ ցույց են տալիս քանդակագործության արվեստի զարգացման բարձր աստիճան:

Փորագիր քանդակների մեծ մասը կապված է եղել գյուղատնտեսական աշխատանքների հետ: Այդ քանդակները պատկերել են ոչխարի, այծի, կովի, եզան, թռչունների, զանազան վայրի կենդանիների, խաղողի, նռան, տանձի, ցորենի հասկի ոճավորված տեսքը: Այս շրջանի քանդակագործական արվեստի նմուշ կարելի է համարել Գագիկ Առաջինի արձանը, որը ակադեմիկոս Ն. Մառը պեղումների ժամանակ գտել է Գագկաշեն եկեղեցու մոտ: Այդ արձանի բարձրությունը հավասար է եղել մեկ մետր 20-սմ-ի: Արձանի ղլխին փաթաթված է եղել Բաղդադի խալիֆայական պատվանշան, արքայական սպիտակ չալմա, իսկ ձեռքին բռնած է եղել եկեղեցու մոդելը: Քանդակագործը Գագիկի արձանի վրա գործադրել է իր բոլոր ջանքերը, դեմքն ու հագուստը մոտեցնելով բնականին: Արձանի հագուստը, տարազը ցույց է տալիս այդ ժամանակաշրջանի թագավորների հագած հագուստեղենը: Գագիկ Առաջինի այս արձանն Անդրկովկասում թե՛ իր մեծությամբ, և թե՛ իր գեղարվեստական արժեքով, իր տեսակի մեջ միակն է եղել:

Կենդանիների, խաղողի, նռան և մարդկանց քանդակներից կազմված գոտիներ կան Աղթամարի ս. Խաչ եկեղեցու վրա: Այս եկեղեցու դրսի պատի վրա քանդակվել է նաև հուշարձանը շինել տվող Գագիկ Արծրունու քանդակ-արձանը: Ս. Խաչ եկեղեցու վրա կա այգեգործության մշակույթի ամբողջ պրոցեսը, սկսած որթի տնկումից մինչև այգեկութն ու գինու պատրաստումը: Այս հուշարձանն իր բարձրաքանդակների տեսակի մեջ եզակի տեղ է գրավում վերոհիշյալ դարաշրջանի շենքերի մեջ: Քանդակագործության մեջ կարևոր տեղ են բռնում նաև Սևանի փայտե խոյակը և Տաթևի ճոճվող սյունը: Այս շրջանում սկիզբ են առնում խաչքարի քանդակները:

ճարտարապետության ոճն ավելի ռելիեֆ դարձնելու և գեղեցկացնելու համար զարդաքանդակներին տալիս էին ուրախ տեսք։

Քանդակագործությանը զուգընթաց զարգացել են նաև որմնանկարչությունն ու մանրանկարչությունը։ Արվեստի այս ճյուղը կապված է ձեռագիր գրքերի զարդանկարման հետ։ 9—11-րդ դարերից մեզ հասած ձեռագիր աշխատությունների մեջ նկարչական և մանրանկարչական բարձր արվեստի տեսակետից նմուշներ շատ կան։ Ուշագրավ են ՀՍՍՌ Երևանի Ջեռագրատունը (Մատենադարան) պահվող 10-րդ դարից մեզ հասած փղոսկրյա կազմով ավետարանի նկարներն ու մանրանկարները, որոնք հիացմունք են պատճառում իրենց վառ, ոսկյա գույներով։ Նկարչական և մանրանկարչական արվեստի տեսակետից կարևոր են նաև 902 թ. Մլէ թագուհու ավետարանը և 11-րդ դարի առաջին կեսից մեզ հասած ձեռագրերը։ 9—11-րդ դարերում զարգացել է նաև որմնանկարչությունը (ֆրեսկո)։ Արվեստի այս ճյուղը կապված էր շենքերի ներսը զարդարելու հետ։ Որմնանկարներով զարդարված են եղել Անիի, Աղթամարի թագավորական պալատները, իշխանական դղյակները և որոշ մեծատունների բնակելի տները։ Աղթամարի պալատի որմնանկարները, ինչպես տեսանք, նկարագրել է Թովմա Արծրունին։

Հետաքրքրական է, որ շատ ձեռագիր գրքերի լուսանցքները զարդարված են բարձր արվեստի մանրանկարներով։ Այդ ձեռագրերից շատերը ունեն նաև գեղազարդ նկարներ, առաջին էջի ճակատի վրա խորաններ և այլն։ 10—11-րդ դարերում աշխարհիկ գաղափարներն ամենից առաջ հանդես են գալիս նկարչական արվեստի մեջ։ Նկարիչների ընտրած սյուժեների մեջ մեծ տեղ են գրավում հովվի, գառնարածի նկարները։ Նկարչական արվեստի մեջ մտնում է բարդ կոմպոզիցիա։ Այս շրջանի նկարչական և մանրանկարչական արվեստի կենտրոնները եղել են Աղթամարը, Նորավանքը, Անին և այլն։

Այս շրջանի հայկական մանրանկարչության մեջ նկատվում է երկու ուղղություն։ Առաջին ուղղությունը կապված է ժողովրդական ստեղծագործության հետ և արտահայտում է աշխարհիկ-դեմոկրատական գաղափարները, իսկ երկրորդ

ուղղությունը արտահայտում է խոշոր ֆեոդալների ու հոգևորականների գաղափարները և բխում է նրանց ճաշակից։ Այս երկրորդ ուղղության ներկայացուցիչներն ավելի շուտ մեծ ուշադրություն են դարձնում նկարների արտաքին շքեղության ու ձևի վրա։ 9—11-րդ դարերում թեև իշխող դերը պատկանում էր երկրորդին, բայց զարգացման տենդենցը կապված էր առաջինի հետ։

9—11-րդ դարերի հայկական նկարչական արվեստն ունի բազմաթիվ նմուշներ, որոնք կարող են իրենց պատվավոր տեղը գրավել արվեստների պատմության մեջ։

9—11-րդ դարերում պաշտոնական թատրոն գոյություն չի ունեցել Հայաստանում, ինչպես նախաքրիստոնեական շրջանում, բայց այս էպոխայում շարունակել է գործել ժողովրդական թատրոնը, որն ավելի շուտ միմոսային բնույթ է ունեցել, առանց բեմի ու դեկորացիաների։ Դերակատարները հագնում էին կոմիկական զգեստներ, դիմակներ և հանդես գալով ժողովրդի առաջ, զվարճացնում էին դիտողներին և շատ հաճախ էլ ծաղրի ենթարկում ֆեոդալական դասակարգի ներկայացուցիչներին։ Նման ներկայացումներ տեղի էին ունենում տոն օրերին ուխտատեղյաց վայրերում, բարեկենդանին, մեծ պասից մեկ շաբաթ առաջ։ Նկեղեցին, ինչպես առաջ, նույնպես և այս շրջանում շարունակում էր պայքարել ժողովրդական թատրոնի դեմ. բայց, չկարողանալով կանխել, ստիպված է լինում եկեղեցական արարողությունները հարմարեցնել ժողովրդի պահանջին, տալով եկեղեցական արարողություններին նաև թատերական հանդիսավորություն։

Խորով Անձևացին իր «Մեկնութիւն ժամանակագրութեան» գրքում ողբում է դարաշրջանի (10-րդ դար) վատ բարքերը նրա համար, որ մարդիկ փոխանակ եկեղեցի գնալու, հաճախում են թատրոն։ Ժողովրդական թատերական արվեստին դեմ է եղել նաև նրա որդի Գրիգոր Նարեկացին։ Հայ պատմիչներից Թովմա Արծրունին ցանկություն է հայտնել լսել տղբերդականների ճարտասանությունը. «... երկարագոյնս վասն սորա աճեցուցանել հարկաւոր է զողբերգականացս ճարտասանութիւն»[1]։ Իսկ Արիստակես Լաստիվերտցին խոսելով իր ժա-

[1] Թովմա, Դ, ԺԱ։

մանակի (11-րդ դար) Հայաստանի ծանր վիճակի մասին, այնուհետև կարոտով է հիշում այն օրերը, երբ Անի քաղաքում. «...Ուրախական երգոց և բանից միայն լինէին հանդէսք, ուր և ձայնք փողոցն և ծնծղայիցն և այլ երգեցողական արվեստիցըն զլսողացն անձինս լի առնէին ուրախական բերկրանօք»[1]:

Այս հատվածը ցույց է տալիս, որ Անիում գոյություն է ունեցել թատրոն, բայց միայն քաղաքի բնակչության բարձր խավերի համար, ուր հաճախել են քաղաքացիները՝ թե՛ տղամարդիկ և թե՛ կանայք: Բացի այդ, քաղաքի փողոցներում ու հրապարակներում ծաղրածու գուսաններն իրենց խաղերով ու խեղկատակություններով զվարճացնում էին քաղաքի բնակչության նաև ցածր խավերին: Այս տիպի թատրոնները կոչվում էին շրջիկ, իսկ թագավորների պալատներում տեղի ունեցած ներկայացումներն էլ՝ թագավորական թատրոն: Այսպիսով, 9—11-րդ դարերում գոյություն է ունեցել թատրոնի երեք տիպ՝ արհուեստ, խաղահային և շրջիկ: Դերասանները համապատասխան ներկայացումների ժամանակ կրում էին դիմակներ և հագնում զգեստներ:

Ողբերգակ դերասանները, պատմական ողբերգությունների հետ միասին մոնոլոգներով, դիալոգներով շատ հաճախ հանդես էին բերում նաև իրենց ժամանակի հասարակական-քաղաքական կյանքի լավ ու վատ կողմերը, ծաղրի էին ենթարկում քաղաքացիների վատ արարքները, մերկացնում էին իշխանների ու հոգևորականների այլանդակ բարքերը: Այդ է պատճառը, որ հայ պատմիչները գուսանների ասածները համարում են բամբասանքներ ու դատարկաբանություններ: Այս ծաղրածուներին հայ նկարիչները պատկերել են ձեռագիր գրքերի լուսանկարներում և գրքերի սկզբնատառերում: Եկեղեցին, ինչպես նշել ենք, որպեսզի ժողովրդական թատրոնի առաջն առնի, իր արարողության մեջ մտցնում է խաղ, ճոխ երաժշտություն, կենդանի խոսք, այսինքն՝ քարող, բեմ, վարդույր, փոխասացություն, քշոց ծնծղա, զանգակներ[2] և

[1] Հատիվերացի, էջ 56:

[2] Գ. Հանոյան, Թատրոնը հին Հայաստանում, էջ 66—111, Երևան, 1941:

այլն: Բայց այս բոլորը եկեղեցին կատարում էր խորհրդավոր ու միստիկ ձևով, կապված աստծու, քրիստոսի և սրբերի կյանքի ավանդությունների հետ, այնինչ ժողովրդական թատրոնում կատարվում էին ուրախ երգեր, կապված ազգային հերոսական անցյալի ու ժողովրդի սխրագործությունների հետ: Դրա համար էլ թատրոնները դիտելու գնում էին շատ ավելի մարդիկ, քան եկեղեցիները:

9—11-րդ դարերում քաղաքների և քաղաքային կյանքի զարգացումը նպաստել են նաև գուսանական երգի զարգացմանը: Երգն ու երաժշտությունը անջատվելով պրոզայից, բռնում են իրենց զարգացման ինքնուրույն ուղիները՝ եկեղեցական և ժողովրդական: Վերոհիշյալ դարերում, ինչպես նշել ենք, ծաղկում է վանական կյանքը: Վանքերը գնալով նաև դառնում են դիտության և երաժշտության կենտրոններ: Այս շրջանում է, որ մեծ ծավալ են ստանում շարականները, դանձերն ու տաղերը, ժամագրքերը, պատարագները և մեղեդիները: Աստիճանաբար երաժշտության կենտրոն են դառնում Նարեկի, Խլաձորի, Կամրջաձորի, Հնձուց, Դպրեվանքի, Ցախքացքարի, Տանձուտի և Տաթևի վանքեր, իսկ եկեղեցական երաժիշտներից առավել աչքի են ընկնում Սահակ Զորափորեցին, Հովհան Օձնեցին, Ստեփանոս Սյունեցին, Խոսրով Անձևացին, Պետրոս Գետադարձը, Գրիգոր Մագիստրոսը և ուրիշները: 8-րդ դարում իր երաժշտական ունակություններով, ինչպես նշել ենք, մեծ դեր է խաղացել նաև Սահակադուխտ կույսը իր հորինած երգերով ու մեղեդիներով: Սրա մոտ երաժշտություն են սովորում շատ մարդիկ:

Այս շրջանում, բացի խմբային համաչնական երգից, հանդես է գալիս նաև եկեղեցական մեներգը—սոլոն, որը նոր դարագլուխ է կազմում եկեղեցական երաժշտության մեջ: Երաժիշտ Սպիրիդոն Մելիքյանը գտնում է, որ հայ եկեղեցական երաժշտությունը կրել է բյուզանդական ազդեցություն[1]: Գամմաները արդյունք են հունական երաժշտության ազդեցության: Ճիշտ է, հայ եկեղեցական երաժշտությունն ազդվել է

[1] Սպիրիդոն Մելիքյան, Ուրվագիծ հայ երաժշտության պատմության, էջ 23—24, Երևան, 1935:

հունականից, բայց նա ավելի շուտ ինքնուրույն երաժշտություն է: Իսկ նոտագրությունը հայ եկեղեցական երաժշտության մեջ սկսվում է գործածվել 11—12-րդ դարերից:

Եկեղեցական երաժշտությանը զուգընթաց զարգանում է նաև ժողովրդական երաժշտությունը: Ժողովրդական երգերից հայտնի են խրախճանքի (քեֆի), առագաստի (հարսանիքի), գովքի (աշխատանքի), պարի, և այլ երգեր: Այս երգերի կատարողները կոչվել են գուսաններ և վարձակներ (կին երգիչներ): Սրանք միջին դարերում նույն դերն են խաղացել, ինչ որ հին Հունաստանում միմոսները (ծաղրածուներ): Գուսաններն ու վարձակները պարում, նվագում և երգում էին: Նրանց երգերի հիմքը կազմել են սերն ու գինին, զուրկ ճգնավորական կյանքից, հոգու ու մարմնի պայքարից և եկեղեցու երկյուղից: Այս երաժիշտները խիստ կերպով ծաղրի էին ենթարկում հոգևորականներին նրա համար, որ նրանք թաքուն սիրում են, բայց միաժամանակ սերը մեղք են համարում: Այսպիսով, եկեղեցական երգերն ու շարականները տարբերվում են աշխարհիկ գուսանական սիրո երգերից թե՛ իրենց բովանդակությամբ, և թե՛ տաղաչափական ձևերով: Այս սկզբունքային տարբերության հետևանքով էր, որ եկեղեցու հայրերը միշտ էլ բողոքել ու հալածել են գուսաններին, որպես հեթանոսական շրջանի մնացորդներ: Սակայն ժողովրդական երաժշտությունը միշտ էլ թագավորների պալատների, իշխանների դղյակների, քաղաքների և գյուղաքաղաքների կենցաղի անբաժանելի մասն էր կազմում: Այս պրոցեսը ուժեղ չափով հանդես է գալիս 9—11-րդ դարերում: Այսպիսով, միջին դարերում, որպես հակոտնյա, իրար դեմ են կանգնում ու պայքարում մի կողմից եկեղեցին իր սպասարկու հոգևորականներով, որոնք գինվում են քրիստոնեական սխոլաստիկ գաղափարներով, ճգնավորական աշխարհայացքով, իսկ մյուս կողմից ժողովրդական երաժշտությունն իր աշխարհիկ գաղափարներով և իրական մարդով: Այս է եղել պատճառը, որ եկեղեցին շատ չի կարողացել օգտագործել ժողովրդական երգերի եղանակները: Ուստի երգը ամբողջ միջին դարերում, չնայած հոգևոր հայրերի դաժան հալածանքներին, եկեղեցական երգին հակառակ, միշտ էլ գոյություն է ունեցել ժողովրդի մեջ: Այս շրջանում է

ստեղծվել «Սասնա Ծռեր» վեպը, որի որոշ կտորները երգվել են:

Այս շրջանի հայկական կուլտուրան սերտ կերպով կապված է եղել հարևան վրաց-աղվանն և Առաջավոր Ասիայի ժողովուրդների կուլտուրայի հետ: Այն գտնվել է այդ ժողովուրդների կուլտուրայի փոխհարաբերության մեջ, որովհետև հայ ժողովուրդը կտրված ու մեկուսացված չի եղել իր շրջապատի ժողովուրդներից ոչ միայն տնտեսապես ու քաղաքականապես, այլև կուլտուրական փոխհարաբերություններով: Այդ երևույթն ավելի ուժեղ չափով դրսևորվել է վրացա-աղվանական և կովկասյան ժողովուրդների կուլտուրայի մեջ: Ուստի ճիշտ չեն այն ուսումնասիրողները, որոնք գտնում են, թե հայկական կուլտուրան ու արվեստը կազմակերպվել ու զարգացել են միայն ասորա-քաղդեական, իրանական, հունա-հռոմեական և բյուզանդա-արաբական արվեստների ազդեցության տակ: Ճիշտ չեն նաև այն ուսումնասիրողները, որոնք հայկական կուլտուրան ու արվեստը կտրում են շրջապատից, անտեսում են նրանց՝ հարևան ժողովուրդների կուլտուրայի ու արվեստի հետ ունեցած սերտ կապը: Դրանով նրանք հանդես են բերում տեղական նեղ, ազգային սահմանափակվածություն: Որ հարևան և Առաջավոր Ասիայի ժողովուրդների կուլտուրան ու արվեստը թողել են իրենց ազդեցությունը հայ ժողովրդի կուլտուրայի ու արվեստի վրա, դա անժխտելի փաստ է, բայց այդ ազդեցությունը չպետք է գերագնահատել ու դիտել որպես միակողմանի երևույթ, այլ պետք է ընդունել, որ այդ երևույթը տեղի է ունեցել փոխադարձ ներթափանցման ճանապարհով, կրած ազդեցությունը հայ ժողովուրդի կուլտուրայի և արվեստի մեջ յուրացվելու և մերվելու միջոցով: Հետևաբար, այս շրջանի հայկական կուլտուրան հարստացել է շնորհիվ այն բանի, որ նա վրաց-աղվանական և արաբա-բյուզանդական կուլտուրայի ու արվեստի տարրերը յուրացրել և իր մեջ է ներծծել: Անշուշտ, վերոհիշյալ ժողովուրդների կուլտուրայի ու արվեստի վրա իրենց ազդեցությունն են թողել նաև հայկական կուլտուրան ու արվեստը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5

Գլուխ առաջին
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

1. Հայաստանի անկախության վերականգնումը 9

Գլուխ երկրորդ
ՊԱՅՔԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Աշոտ Առաջինը և նրա վարած քաղաքականությունը . . . 35
2. Հայ ժողովրդի պայքարը Աստրպատականի արաբ էմիրության դեմ 38
3. Հայաստանի ազատագրումը արաբական զավթիչներից . . . 64

Գլուխ երրորդ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԸ

1. Հայաստանի քաղաքական դրությունը 920—950-ական թվականներին 87
2. Բագրատունյաց թագավորության մասնատումը և վասալ նոր իշխանությունների հիմնումը 95
3. Պայքար կենտրոնացած իշխանության համար Գագիկ Առաջինի օրոք 113

Գլուխ չորրորդ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ 9—11-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

1. Ֆեոդալական կալվածատիրությունը, երարխիան և գյուղացիության իրավա-քաղաքական դրությունը 127
2. Գյուղատնտեսություն և քաղաքներ 144
3. Հայաստանի պետական-վարչական կարգը 9—11-րդ դարերում . 199

Գլուխ հինգերորդ
ԳՅՈՒՂԱՅԻՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 9—11-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

1. Ռոնդրակյան շարժումների սկիզբը 207
2. Գյուղացիական ապստամբությունները 10-րդ դարի առաջին քառորդին 228
3. Ռոնդրակյան շարժման երկրորդ էտապը 235
4. Ռոնդրակյանների շարժման երրորդ էտապը 242

Գլուխ վեցերորդ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԹՈՒԼԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՆԿՈՒՄԸ

1. Բյուզանդական կայսրության քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ 1020-ական թվականներին 251
2. Քաղաքական ճգնաժամը Անիում և Հայկական պետականության անկումը 272

Գլուխ յոթերորդ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈԼՈՆԻԱՆ 8—11-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

1. Դպրոցներ և գրականություն 306
2. Արվեստ 340

ՀԱՅԿ U.S.S.R. ... ՀԱՅԱՍՏԱՆԻ ... ГРАДАРАН Библиотека

Խմբագիր՝ Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Նկարիչ՝ Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Գեղ. խմբագիր՝ Գ. ԽՈՒԴԻԿՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Վ. ԳԱՎԱՍՅԱՆ
Վերստուգող սրբագրիչ՝ Ռ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՍՏԱՒԳՎԱԾ Է 1971 Թ.

ՎՖ 01225 *Պատվեր 2158* *Տիրաժ 5000*

Հանձնված է արտադրության 30/IX 1959 թ.։
Ստորագրված է տպագրության 23/II 1960 թ.։
Թուղթ՝ 84×108¹/₃₂, տպագր. 22,25 մամ.=18,25 պայմ. մամ.,
հրատ. 16,2 մամ.։
Գինը՝ 5 ռ. 25 կ.։

Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների և պոլիգրաֆպատրաստությունների Գլխավոր վարչության № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փողոց № 65։

С 961-07

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
121	19 վ	բանակով	բռնակալ
212	3 վ	2000	200
242	17 վ	1012—1045	1021—1045
			2158